

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

(ՀԱՅ-ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

ԵՐԵՎԱՆ - 2010

9(47.925)

F-21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԾՎԻ ԲԱՆԶՈՒՆՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ.
ՀԱՅ-ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(սկզբից մինչև մեր օրերը)

4260

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԿԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇՄՐ
54



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
54

Handwritten signature



ԵՐԵՎԱՆ - 2010

ՀՏԳ-941(479.25):008
ԳՄԳ-63.3 (2Հ)+71
Բ 216

Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով

Տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայկական գաղթօջախների և սփյուռքի բաժինը

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյան
Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր Է. Մելքոնյան,
պատմ. գիտ. թեկնածու Հ. Ալեքսանյան

Բախշինյան Արծվի

Բ 216 Հայությունը սկանդինավյան երկրներում: Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը). - Եր., Պատմ. ինստ., 2010.- 280 էջ:

Աշխատությունը ներկայացնում է հայերի և սկանդինավյան ժողովուրդների միջև եղած բազմադարյան կապերը, Սկանդինավիայի երկրների հայ համայնքների պատմությունը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԳ-63.3 (2Հ)+71

ISBN 978-99941-73-41-9

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Սկանդինավյան երկրները¹, որոնք արդեն հարյուր տարուց ավելի է իրավամբ համարվում են մարդկային քաղաքակրթության ներկա փուլի բարձրակետ², հատկապես վերջին տասնամյակներին են սկսել դեպի իրենց ձգել տարբեր երկրների հայերի, որոնց պարբերական արտագաղթերի շնորհիվ այդ երկրներում ստեղծվել են հայկական նոր համայնքներ: Մակայն հյուսիս-եվրոպական ժողովուրդների հետ հայ ժողովուրդն ունեցել է պատմական և մշակութային ամենատարբեր հարաբերություններ, որոնք հասնում են մինչև վաղ միջնադար և նույնիսկ ավելի վաղ շրջան:

1992 թվականին, Հայաստանի Հանրապետության հռչակումից արդեն երկու տարի անց, սկանդինավյան երկրները ճանաչել են նորակազմ հանրապետությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ: Այդ ժամանակաշրջանից հայ-սկանդինավյան հարաբերությունները նոր փուլ են մտել: Նկատի ունենալով այս հանգամանքը և այդ երկրներում XXI դարի սկզբին հայ բնակիչների թվի աճը՝ միանգամայն տեղին ենք համարում համալիր մի ուսումնասիրությամբ անդրադառնալ այդ երկրների հետ հայ ժողովրդի ունեցած վաղնջական և արդիական, հեռու և մոտ, առաջնային և երկրորդական ամենատարբեր հարաբերությունների պատմությանը՝ հայ գաղթավայրերի պատմության և հայ ժողովրդի՝ տարբեր երկրների

¹ Ինչպես ամբողջ աշխարհում, մենք ևս սկանդինավյան երկրներ ասելով նկատի ունենք ոչ միայն Սկանդինավյան թերակղզու երկրները՝ Եվեդիան և Նորվեգիան, այլ Դանիան, Ֆինլանդիան և Իսլանդիան:

² Այս ճշմարտությունն արդեն հարյուր տարի առաջ փաստել են նաև հայ գրողները: «Բանի քանի անգամ ճամբորդած եմ Սկանսիանական երկիրները, և կը կարծեմ թե արդի քաղաքակրթութեան գագաթնակետին վրայ կը գտնուին անոնք, մասնաւոր Շվեդ» (Լևոն Բաշալեան, *Նորավեպեր և պատմութիւններ*, Փարիզ, 1944, էջ 253): «Հոլանդա, Դանիա, Նորվեգիա, սեա այն երկիրները, որոնց մոտ ոչ միայն մենք, այլ նույնիսկ Ֆրանսան կարող է շատ բան տորվիլ» (Կոստան Չարյան, Հոլանդական սուպավորություններ, *Արագած*, 1.12.1926, ք. 22-23, էջ 14): «Ժողովուրդների նպատակը մշակոյթն է, իսկ մշակոյթը խորութիւն է եւ ոչ տարածութիւն: Այսօր, ամենից լաւ կազմակերպուած, ամենից քաղաքակրթուած ժողովուրդները Հիսիսային երկիրների փոքրիկ ազգերն են: Նորվեկիան այնքան աղքատ է, ինչքան Հայաստանը, բայց տեսէր...» (Կոստան Չարեան, *Նարը լեռան վրայ*, Անրիիաս, 2002, էջ 447):

հետ ունեցած պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունների ընդհանուր համատեքստում:

Քանի որ սկանդինավյան երկրներում անցյալում չեն եղել հայկական համայնքներ, հայ գաղթավայրերի պատմությանը վերաբերող աշխատություններում¹ հիշատակություն չկա այդ երկրների հետ հայության կապերի մասին: Միայն վերջերս հրատարակված Հրաչյա Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» աշխատության մի փոքր գլուխն է «Շվեդ-Նորվեգիան»², որտեղ նշված է հայ-շվեդական պատմական կապերի ընդամենը երեք փոքր դրվագ: Առանձին հիշվում է նաև Իսլանդիային վերաբերող դրվագը, սակայն սխալմամբ՝ «Իռլանտա» ձևով³:

Հայ-սկանդինավյան առնչություններով զբաղվել են հատուկենտ շվեդ հեղինակներ: Գրանք, սակայն, նրանց աշխատություններում կրել են դրվագային բնույթ: Այսպես, շվեդ պատմաբան Թուրե Արնեն (1879–1968) իր «Շվեդները և Արևելքի երկրները» աշխատության մեջ⁴ հիշատակել է հայ ժողովրդի հետ Շվեդիայի և շվեդ ժողովրդի ունեցած մի շարք առնչությունները՝ միջին դարերից մինչև XX դարի սկիզբը: Հայ-շվեդական կապերին առնչվող առանձին իրողությունների անդրադարձել է նաև ժամանակակից շվեդ աստվածաբան, Ուփսալայի համալսարանի պրոֆեսոր Յորան Գունները՝ իր, Էրիք Լինդբերգի և այլ հեղինակների խմբագրությամբ լույս տեսած «Արարատի կարոտը» գրքում (1985) ընդգրկված իր հոդվածներում և Ինգվար Սվանբերգի ու Հարալդ Ռունբլոմի խմբագրությամբ լույս տեսած «Բազմամշակույթ Շվեդիան» գրքի (1988) հայերին վերաբերող հատվածում⁵: Հայ մամուլի վկայությամբ, 1966-ին շվեդաբնակ ճարտարապետ Պիեռ Տեր-Հակոբյանը Հռոմի Լևոնյան վարժարանում բանախոսել է «Հայե-

¹ Արշակ Ալպոյաճեան, *Պատմորին հայ գաղթականության. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը*, հ. Ա-Գ, Գահիրե, 1955–1961: Աշոտ Արքահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, Բ, Երևան, 1967: Առաջին աղբյուրը հիշատակել է միայն Իսլանդիայի հետ կապված միջնադարյան դրվագը:

² Հրաչյա Աճառյան, *Հայ գաղթականության պատմություն*, Երևան, 2002, էջ 743-744:

³ Նույն տեղում, էջ 753:

⁴ Ture J. Arne. *Svenskarna och Österlandet*, Stockholm, 1952.

⁵ Göran Gunner, Eric Lindberg (eds.), *Längtan till Ararat*, Göteborg, 1985, s. 208-276; *Det mångkulturella Sverige*, red. I. Svanberg, H. Runblom, Stockholm, 1988, s. 20-23.

րի ազդեցությունը շվեդների վրա» թեմայով¹: Նա մի ամբողջական աշխատություն է գրել այդ թեմայով ֆրանսերեն լեզվով, որը, սակայն, մնացել է անտիպ (տես հետագա շարադրանքում):

1996–1997 թվականներին որպես Ուփսալայի համալսարանի աֆրոասիական լեզուների ինստիտուտի թոշակառու և հրավիրյալ գիտաաշխատող ապրելով և աշխատելով Շվեդիայում՝ մենք ձեռնամուխ եղանք հայ-սկանդինավյան և մասնավորապես հայ-շվեդական պատմական և մշակութային առնչությունների վերաբերյալ հավաքչական աշխատանքի: Առկա նյութերը հաճախ վերաբերում էին ոչ շատ էական, երկրորդական նշանակության իրողությունների, սակայն միանգամայն նորություն էին մեր պատմագիտության համար, և շատ տվյալներ երբևէ չէին շրջանառվել մեր գիտական աշխատություններում: Մեր աշխատությունը գրելիս պրպտումներ ենք կատարել Ուփսալայի համալսարանի գրադարանի տպագիր և ձեռագիր նյութերի բաժիններում, Հայաստանի գրադարաններում և արխիվներում, հետագայում նաև՝ Թրոմսյոյի (Նորվեգիա) քաղաքային գրադարանում: Գրադարանա-արխիվային աշխատանքին զուգակցել ենք նաև այսպես կոչված դաշտային աշխատանքը՝ հանդիպումներ ունենալով և կապեր հաստատելով Շվեդիայի հայկական կազմակերպությունների և անհատների հետ: Մենք պատասխանատու էինք զգում սույն նյութով մանրամասն զբաղվելիս և որպես տվյալ թեմայով գիտական աշխատանք կատարելու առաջին քայլը՝ «տերը» դառնալ այն ինֆորմացիայի, որը մեծ մասամբ և անհրաժեշտ խորությամբ մնում էր հայ պատմաբանների համար անմատչելի՝ հեռավորության և հատկապես անձանոթ լեզուներով գրված լինելու պատճառով: Մեզ մղում էր մի գիտակցություն, որը հետագայում պետք է դիպուկ կերպով ձևակերպված տեսնեինք հայ պատմաբանի կողմից, ըստ որի հայ գաղթավայրերի պատմությունն ուսումնասիրելիս «Նկատի պետք է առնել, որ տվյալ գաղութի կյանքը հետազոտողից բացի, ուրիշ հեղինակ չի վիճակի չի լինի կատարելու այդ բանը»²:

¹ Հայերու ազդեցութիւնը շուեդներու վրայ, *Յաւաջ*, Փարիզ, 24.02.1966:

² Վլադիմիր Բարխուդարյան, *Պատմագիտության հարցեր*, Երևան, 2008, էջ 58:

Մեր պրպտումների արդյունքներով Սկանդինավիայի և մասնավորապես Շվեդիայի հետ հայության ունեցած կապերի վերաբերյալ հողվածներով և հրապարակումներով հանդես ենք եկել 1996-ից սկսած: Դրանք լույս են տեսել հայերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով, ինչպես գիտական, այնպես էլ հանրամատչելի մամուլում¹ (մասնավորապես՝ Ուփսալայի հայալեզու «Նոր հորիզոն»-ում): 2003 թվականին Երևանում սահմանափակ տպաքանակով լույս տեսավ սույն մենագրության առաջին տարբերակը՝ «Հայաստան-Սկանդինավիա. պատմամշակութային առնչություններ» խորագրով: 2006-ին անգլերենով հրատարակեցինք «Հայաստան-Շվեդիա. պատմական և մշակութային կապեր» գրքույկը²: Այս ժամանակաշրջանից էլ մեր հրապարակումները դարձել են սկզբնաղբյուր համանման հրատարակությունների համար: Այսպես, սկանդինավյան երկրների հայկական համայնքներին և հայ-սկանդինավյան առնչություններին վերաբերող բաժինները Հայկական հանրագիտարանի հրատարակչության տպագրած «Հայ Սփյուռք» հանրագիտարանում՝ մեծ մասամբ վերցված են մեր աշխատություններից³:

¹ Տե՛ս Հայ-շվեդական առնչությունների պատմությունից, Հյուսիսափայլ տարեգիրք, Ուփսալա, 1996, էջ 262-274: Հայ-շվեդական առնչություններ, հրատարակություն «Հյուսիսափայլ» տարեգրքի, Ուփսալա, 1997, 28 էջ: «Տաս ամիս Շիեցոց երկրում» հոդվածաշարը, Ազդակ, Պէյրուք, 20.05.1998-23.06.1998: Из истории армяно-шведских отношений, Палитра, Ереван, 1998, н. 4-5, стр. 18-20; н. 6-7, стр. 23-24. Հայ-շվեդական առնչություններ, Աշխարհի գույները, Շվեդիա, Երևան, 1999, էջ 43-58: Հայ-սկանդինավյան առնչություններ, վաղ միջնադարից մինչև XVIII դար, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1998, ք. 3, էջ 102-112: Armenian studies in Sweden (a brief outlook), Armenian mind, vol. III, N 2, 1999, p. 350-357. Armenian-Scandinavian relations from the early Middle centuries to the eighteenth century, Journal of Society of Armenian Studies 11 (2000), p. 65-79. Scandinavian-Armenian Bibliography, Idem, p. 81-100. Suède et Arménie: des liens historiques: de Vikings à la reconnaissance du génocide, France-Arménie, N 217; Decembre, 2001, p. 22-23. Верой и правдой армяне на службе у шведских королей, Урарту, 2002, н. 15, և այլն:

² Artsvi Bakhchinyan, Armenia-Sweden: Historical and Cultural Relations, Yerevan, 2006.

³ Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003 (Դանիա՝ էջ 148, Նորվեգիա՝ էջ 420-421, Շվեդիա՝ էջ 422-427, Ֆինլանդիա՝ էջ 620-621): Նյու Յորքում լույս տեսնող «ՀԲԸՄ նորություններ» անգլերեն ամսագրի 2000 թվականի փետրվարյան համարում լույս են տեսել հայ-շվեդական անցյալի կապերին նվիրված հոդված և ռեպորտաժներ շվեդահայ համայնքից: AGBU News, 2000, N 2, էջ 3-9: «Շվեդիա. պատմական հայկական արձատներ» հոդվածում (էջ 3-4) հեղինակը՝ ոմն Դեյվիդ Չեյնյան, գրեթե

2009 թվականի հունվարից որպես գիտաշխատող աշխատանքի անցնելով ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի հայկական գաղթավայրերի և Սփյուռքի բաժնում՝ ուսումնասիրության առարկա դարձրինք «Հայերը սկանդինավյան երկրներում» թեման: Մեր ձեռքի տակ եղած նյութը ենթարկեցինք լրամշակման, կատարեցինք մի շարք ճշտումներ և լրացումներ¹:

Սույն ուսումնասիրությունը ներառում է ոչ միայն այդ երկրների հայ համայնքների մասին տեղեկություններ, այլև աշխարհի տարբեր երկրների հայերի՝ սկանդինավյան իրակառության հետ ունեցած մոտ և հեռու կապերը, ինչպես նաև գրական-մշակութային կապերի պատմությունը, որը ներկայացնում է քննվող առնչությունների մի կարևոր երեսակը: Եղած նյութի բնույթից ելնելով՝ նմանատիպ աշխատությունը առավելապես նկարագրական և փաստագրական բնույթի է, քան վերլուծական: Սկանդինավյան երկրների հետ հայության աղերսները հաճախ չափազանց մասնավոր բնույթի են, կապված են առավելապես առանձին անհատների գործունեության հետ, ուստիև աշխատության մեջ բերված մի շարք փաստեր և տվյալներ կարող են թվալ երկրորդական նշանակության և անգամ ոչ կարևոր: Սակայն նկատի առնելով նյութի ընդգրկման ոչ մեծ ծավալը՝ հարկ ենք համարել նշել թեկուզ հեռավոր առնչությունները՝ գիտակցելով, որ նաև նման մանր և աննշան փաստերից է ամբողջանում ընդհանուր պատկերը:

լիովին օգտվել է մեր՝ իր խնդրանքով իրեն ուղարկած անգլերեն անտիպ աշխատությունից՝ առանց նշելու աղբյուրը:

¹ Հատկապես խորացրինք Շվեդիայի և Նոր Ջուլայի հայ առևտրականների մասին գրույթը: Այս թեմայով զեկուցմամբ հանդես ենք եկել 2003-ի նոյեմբերին Քալիֆորնիայի համալսարանում պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի կազմակերպած «Պատմական հայ բնակավայրեր» թեմայով միջազգային գիտաժողովների շարքի՝ Նոր Ջուլայի նվիրված հանդիպմանը:

ՇՓՈՒՄՆԵՐ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Վաղնջական առնչություններ և վարկածներ: Պատմական մի շարք աղբյուրներ տեղեկություններ են հաղորդում միջնադարում հայ ժողովրդի և հայոց քաղաքակրթության՝ սկանդինավյան իրականության հետ ունեցած ամենատարբեր առնչությունների մասին: Տարբեր հետազոտողներ գանազան առիթներով հայ-սկանդինավյան հնագույն կապերի վերաբերյալ որոշ հիշատակումներ են կատարել՝ առաջարկել վարկածներ, սակայն գործը չի հասել նույնիսկ մի ամբողջական հոդվածի: Ինչպես արդեն նշվեց, շվեդաբնակ ճարտարապետ Պիեռ Տեր-Հակոբյանը, հիմնվելով իր կատարած հետազոտությունների վրա, փորձել է ապացուցել, որ միջնադարում հայ ժողովուրդը և հայ մշակույթը որոշակի ազդեցություն են ունեցել շվեդականի վրա: Նա մասնավորապես նշել է, որ շվեդները հայերից են փոխառել գորգի, ասեղնագործության և բանվածքի արվեստը, շվեդական երաժշտությունն ազդվել է հայկականից, իսկ շվեդերենը հայերենից փոխառել է որոշ բառեր (ինչպես, էրիկը՝ ամուսին): Նա նշել է, որ արդեն VII դարում շվեդական ճարտարապետության վրա նկատելի է հայկականի ազդեցությունը¹: Տեր-Հակոբյանը գրել է, որ Բյուզանդիա ճամփորդած շատ շվեդներ ամուսնացել են հայուհիների հետ և իրենց հետ տարել Շվեդիա, և որ աղբյուրները վկայում են Շվեդիայում ապրած մի քանի հայ կանանց անուններ, որոնք կերպաս են գործել և պատրաստել ոսկյա զավաթներ: X–XI դարերից հայտնի է շվեդական մի լեզենդ, թե ինչպես շվեդ նավատեր Պետրուսը, լսելով Հայաստանի իշխանուհու գեղեցկության մասին, հեռվից սիրահարվել է նրան, եկել Հայոց երկիր և բազում արկածներից հետո ամուսնացել նրա հետ: Կա վկայություն նաև այն մասին, որ երկու հայ եպիսկոպոս քարոզել են Շվեդիայում: Մուրադյան ազգանունով մեկը XVII դարում միջնորդ է հանդիսացել Ռուսաստանի և Շվեդիայի թագավորների միջև և այդ ծառայության հա-

մար ստացել շվեդական ազնվական տիտղոս: Դեմիքոյան ազգանունով մեկն էլ շահել է Շվեդիայի թագավորի համակրանքը... Բացառությամբ վերջին տեղեկության՝ շվեդական աղբյուրներ քննելիս մեզ չի հաջողվել գտնել նմանատիպ վկայություններ, իսկ վերոնշյալ Մուրադյանը իրականում դիվանագետ Մուրազա դ'Օստոնն է, որը, սակայն, իրականում միջնորդ չի հանդիսացել Ռուսաստանի և Շվեդիայի թագավորների միջև: Մյուս կողմից մամուլի սույն հաղորդագրությունը հուշում է, որ Տեր-Հակոբյանի այս վկայակոչումները մեծ մասամբ կարող են սոսկ ենթադրություններ լինել...

Հյուսիսային Եվրոպայի ժողովուրդները պատահական կապեր են ունեցել հայության և նրա մշակույթի հետ թե՛ իրենց երկրներում և թե՛ Արևելքում տակավին վաղ միջնադարից: Առաջին հայացքից անհավանական է թվում միջին դարերում նման շփումների առկայությունը միմյանցից այնքան հեռու գտնվող ժողովուրդների միջև: Սակայն ինչպես նկատել է ուկրաինացի պատմաբան Յարոսլավ Դաշկևիչը միջնադարյան Իսլանդիայում հայ քարոզիչներին նվիրած իր ուսումնասիրության մեջ, «Իրական տարածությունը Հայաստանի և Սկանդինավիայի միջև այնքան հեռու չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից»¹: Եվ իսկապես. ի վերջո, հայերը և սկանդինավցիները, լինելով հնդեվրոպական ժողովուրդներ, պատկանում են միևնույն պատմաաշխարհագրական միջավայրին և ունեցել են դեռևս վաղ անցյալից եկող լեզվամշակութային որոշ ընդհանրություններ: Առկա նմանությունները լեզվի, դիցաբանության, մարդաբանության բնագավառում առավելապես արդյունք են ոչ միայն եղած պատահական և մակերեսային շփումների, այլև ընդհանուր ցեղային նկարագրի: Բերենք մի քանի օրինակ:

Դեռևս 1920-ական թվականներին եվրոպական մարդաբանները եկել են այն եզրակացության, որ Բրիտանիայի կղզիներում և Սկանդինավյան թերակղզու որոշ շրջաններում և Դանիայում բնակչության որոշ մասում նշմարվում է տվյալ տարածաշրջաններին արտաբնապես, խառնվածքով և նույնիսկ արյան բաղադրությամբ խորթ մարդաբանա-

¹ Նմանություններ կարելի է տեսնել, օրինակ, Շվեդիայի հարավում գտնվող Հալմաբադի եկեղեցու և Էջմիածնի Մայր տաճարի միջև:

¹ Yaroslav R. Dachkévitich, "Les Arméniens en Island (XIe siècle)," *Revue des études Arménienne*, no 20, (Paris) (1986–1987), p. 327.

կան մի տիպ: Այս երևույթի վերաբերյալ շվեդ ուսումնասիրող Բ. Լյունդմանը 1957-ին հրատարակած մի ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ վերոհիշյալ մարդաբանական տիպը և արյան բաղադրությունը բնորոշ է Փոքր Ասիա թերակղզուց դեպի Հյուսիսասյան ծովն ընկած մի շարք ծովափնյա շրջանների բնակչությանը, այդ թվում՝ հայերին, ինչը վկայում է հնագույն ժամանակներում Մերձավոր Արևելքից դեպի Արևմտյան Եվրոպա տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի մասին: Ըստ Լյունդմանի, այս «արմենոիդները» նախ հաստատվել են Կիպրոսում, որտեղից էլ ցրվել են Եվրոպայի գանազան անկյունները, այդ թվում՝ Յուտլանդիա թերակղզին (հարավային Դանիա): Այդ տեղաշարժերը կարող էին տեղի ունենալ մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջում, և դա համարվել է ոչ թե բնակչության գանգվածային արտագաղթ, այլ ավելի գործնական նպատակ հետապնդող քայլ՝ մետաղամշակության և զարգացած արհեստների և առևտրի ավանդներ ունեցող ժողովրդի կողմից մետաղների պաշարներով հարուստ շրջանների գաղութացում: Այս տեսությունը մնում է որպես վարկած, որը, սակայն ճիշտ չի լինի գանց առնել¹: Հօգուտ այս փաստի է խոսում նաև հնագիտական ապացույցը, որ դանիական երկաթի դարի վրա նկատելի է քրակիական և անատոլիական ուժեղ ազդեցություն: Մյուս կողմից էլ պատմությանը քաջ հայտնի և հատկապես վերջին տարիներին շրջանառվող այն վկայությունը, որ «Անգլո-սաքսոնական ժամանակագրության» (գրված մ. թ. 891) մի ձեռագիր սկսվում է մի տեղեկությամբ,

որ Բրիտանիա կղզու առաջին բնակիչները՝ բրետոնները, համաձայն մի ձեռագրի, գաղթել են Հայաստանից¹:

Այս հնարավոր տեղաշարժերով թերևս կարելի է բացատրել հայ և սկանդինավյան դիցարանների միջև եղած որոշ հեռավոր նմանություններ: Հայ-սկանդինավյան առասպելաբանական կապերը պետք է դիտարկել ընդհանուր հնդեվրոպական համատեքստում: Պատմաբան Գրիգոր Արեշյանը զուգահեռներ է անցկացրել Թրիպլեթում (Կուր-Արաքսի հովիտ) գտնված արծաթե գավաթի (հայտնի որպես կորուխաշյան) վրա պատկերված շան դիմակներով խնջույքի տեսարանի և հին սկանդինավյան «Էդդայի» դրվագներից մեկի միջև, որտեղ Վալհալայում դիմակավորված Օդին աստվածը խրախճանում է տիեզերական ծառի տակ՝ շան (գայլի) դիմակներով ռազմիկների հոգիների հետ, որոնք Օդինի հետ խմում են միևնույն՝ անմահության ըմպելիքը: Սա հնդեվրոպական դիպաշար է, որ եղել է նաև Հայաստանում²: Ըստ Արեշյանի՝ մ. թ. ա. երկրորդ հազարամյակում Կուր-Արաքսի հովտում ապրած ժողովուրդները կրել են հնդեվրոպացիների հոգևոր մշակույթի առանձին տարրեր³:

Առհասարակ, հայ և սկանդինավյան դիցարանական առնչությունների հարցը քիչ ուսումնասիրված ոլորտ է, որ հետաքրքրական անակնկալներ է բացում: Չխորանալով երկու դիցարաններում տարբեր աստվածությունների՝ գործառույթներով միմյանց նման լինելու իրողության մեջ⁴, նշենք, որ տակավին Ղևոնդ Ալիշանը նմանություններ է մատնանշել զույգ դիցարանների աստվածներից երկուսի անունների մեջ: Առաջինը հայոց Նանե դիցուհին է, որի անունը զուգադրվում է սկանդինավյան դիցարանի Նաննա աստվածուհու՝ գարնան, զար-

¹ B. Lundman, The problem of ancient Oriental shipping on the North Sea, *Journal of Near Eastern Studies*, vol. 16, 1957, p. 105-117. Տե՛ս Արամ Քոսյան, Արմենոիդները Արևմտյան Եվրոպայում, *Իրան-մամէ*, Երևան, 1993, ք. 3, էջ 13: Հարկ է նշել, որ հայերի և սկանդինավյանների մարդաբանական որոշ նմանությունները սոսկ բացատրվում են նրանց միևնույն մարդաբանական տիպին (եվրոպեոիդ) պատկանելու հանգամանքով: Ֆրիտյոֆ Նանսենն իր ուղեգրական նոթերում նշել է, որ Հայաստանում հանդիպել է ամենատարբեր տիպերի՝ «զուտ հայկական թուխ տիպից... մինչև նորդիկ տիպերը»: Նա հիշել է մի երիտասարդի, որը տեսքով կարող էր լինել սկանդինավյացի, և նրան նմանեցրել է Նորվեգիայում աշխատող շվեդ երկարուղայինի կամ գրանիտագործի (տե՛ս Fridtjof Nansen, *Armenia and the Near East*, New York, 1928, p. 138): Այս մասին տե՛ս նաև Արտաշես Արեղյանի «Նորդիկ տիպեր հայոց մեջ» հոդվածը (*Artasches Abeghian, ed., Armeniertum-Ariertum*, Berlin, 1934, S. 11-15):

¹ <http://www.britam.org/origin.html>

² Անտուան Մեյեի կարծիքով՝ այս դիպաշարը Հայաստանում բնիկ չի եղել, փոխառվել է Իրանից (տե՛ս Անտուան Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Երևան, 1978, էջ 638-639):

³ Г. Е. Арешян, Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия до н. э., *Вестник древней истории*, Москва, 1988, н. 4, стр. 97.

⁴ «Տաղիին, ուրարտական գործի առաջնորդն է և սկննալոս ռազմական հատկանիշներ ունի, ինչպես, ասենք, սկանդինավյան գերագույն աստված Օդինը» (Արմեն Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը (Կ. Ֆ. Լենան-Հաուպտի ծննդյան 140-ամյակի առթիվ), *Պատմաբանասիրական հանդես*, 2002, ք. 2, էջ 257):

քոնքի աստվածություն Բալդրի կնոջ անվանը: «Սկանդինավեան ազգերն ալ ունէին դիցուհի մի՝ Նաննա կին Բալտերայ, որդոյ Ողինոսի (Օղինի – Ա. Բ.), որ իրենց Ապոլոնն համարուէր, ըստ այսմ՝ մերձաւոր յունական Աքենասայ, որ կոյս էր, իմաստութեան և գիտութեան և արիութեան ազդող»¹: Ալիշանը հիշել է նաև գերմանա-սկանդինավյան դիցարանի ռազմի և ամպրոպի աստվածութեան՝ Թորին կամ Թուռին (Tyr կամ Thor), որի անունն էլ նման է հայոց դպրութեան աստված Տիրի անվանը²: Թորը, որը հյուսիսային եվրոպացիների համար (հատկապես վիկինգյան դարաշրջանի վերջում) համընդհանուր գործածություն է ունեցել, որոշ նմանություններ ունի նաև հայոց դիցարանի ամպրոպի, կայծակի ու որոտի աստվածութեան՝ Վահագնի հետ: Երկուսն էլ Երկրի որդիներն են. հուր հեր ունեցող Վահագնը նույնպես «բոց ունէր մօրուս», իսկ հին իսլանդական սագաներում Թորը նույնպես պատկերվում է որպես շիկահեր կարմրամորուք դյուցազուն: Թե՛ Վահագնը և թե՛ Թորը մարտնչում են օձաձև հրեշների հետ (հայկական «վիշապ» և սկանդինավյան «Jormungandr» կամ «Midgardsormr»):

Մեկ այլ օրինակ: Շվեդ արևելագետ Սթիգ Վիքանդերը նշել է, որ զոհաբերված հորթի ոսկորից խաղողի վազի առաջանալու մասին հայկական ավանդությունն առնչություններ ունի «սկանդինավյան կամ հյուսիսային դիցաբանության հետ»³: Այս նյութի շուրջ նա մի նախնական հոդված է հրատարակել շվեդական ազգագրական հանդեսում: Ըստ հայկական ավանդության՝ Նոյը (այլ տարբերակով՝ Աբրահամը) զոհաբերում է իր հորթը իրեն հյուր եկած Աստծուն (այլ տարբերակով՝ հրեշտակին), որը հետո հարություն է տալիս կենդանուն: Սակայն նրա

մի ոսկորը մնում է, որը քաղում են այգում. դրանից որթատունկ է աճում, և սկիզբ է առնում խաղողագործությունն ու գինեգործությունը¹:

Թեև Վիքանդերն իր վերոհիշյալ նամակում չի նշել, թե սույն առասպելը սկանդինավյան դիցաբանության ո՞ր դրվագի հետ է առնչվում, սակայն նմանատիպ սյուժե գտնում ենք XIII դարի իսլանդացի գրող Սնորրի Սթուրլուսոնի (ապրել է մոտ 1178-1241 թթ.) մոտ 1220-ին գրված «Կրտսեր Էդդա» վիպասքում («Gylfaginning» բաժնում, որը սկանդինավյան դիցաբանության հիմնական աղբյուրն է)՝ սկանդինավյան դիցարանի ամպրոպի աստված Թորի կառքի առընչությամբ: Թորը Սկանդինավիայի ամենից համբավավոր և ժողովրդականություն վայելող աստվածությունն էր, որը հյուսիսային եվրոպացիների համար (հատկապես վիկինգյան դարաշրջանի վերջում) համընդհանուր գործածություն է ունեցել: Թորի մարտակառքին լծված են եղել երկու այծ՝ Թանգոյոստրը (Tandgjostr/Tanngjostr/Tanngjostr, բառացի՝ «ատամ կրճտացնող») և Թանգրիսնիրը (Tandgrisner/Tanngrisner/Tanngrisnir, բառացի՝ «ատամով աղացող»), որոնք վարել են Թորի կախարդական կառքը երկնքով մեկ՝ առաջացնելով ամպրոպ, կայծակ և անձրև: Այդ այծերին կարող էին մորթել և ուտել անհաշիվ անգամներ, որոնց ամեն անգամ մորթվելուց հետո Թորը հարություն էր տալիս՝ հայկական ավանդավեալի հորթի նման²:

¹ Այս ավանդության տարբերակներ տես հետևյալ աղբյուրներում՝ Dr. Artashes Abeghian, *Neuarmenische Grammatik: ost- und westarmenisch, mit Lesestücken und einem Wörterverzeichnis: im Anhang, Deklinations- und Konjugationstabellen des Altarmenischen, nebst, Erläuterungen*, Berlin-Leipzig, 1936, SS. 176-177. Հայկական հին ասանդավեպ մք, *Ճաստագրք*, Ստամբուլ, 1950, Սեպտեմբերի 22, էջ 7: Սարգիս Հարությունյան, *Հայ հին վիպաշխարհը*, Երևան, 1987, էջ 26: Վերծիմե Սվազլեան, *Պոսասիայոց բանահյուսութիւնը*, Երևան, 2000, էջ 96:

² Ի դեպ, հայերեն որթ և հորթ բառերի միջև առկա նմանությունը թերևս կարելի է բացատրել սույն առասպելով: Լեզվաբանության մեջ հայերեն «որթ» (խաղողի տունկ) բառը ստուգաբանվում է որպես հորթ բառից ծագած: «Որթը» նաև հոմանիշ է «հորթ» բառին: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ այն բնիկ հայերեն բառ է, որի նախածնը եղել է *portha, որից էլ ծագում է հայերեն որդի՝ «զավակ, զարմ, սերունդ» բառը (Հրաչյա Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հատոր 3, Երևան, 1977, էջ 578-579): Նա անողղակիորեն ընդունել է հայերեն հորթ-որթ գույգի կապը լատիներեն vitulus «հորթ» և vitis «որթ» բառերի հետ՝ առանց բացատրելու հնչյունական տարբերությունները: Տեղից է նշել, որ սույն արմատների մեկ կամ մյուս տարբերակները թեև առկա են ռոմանական լեզուներում, սակայն հնչյունալից և իմաստային նույն զուգահեռները առկա են միայն պորտուգալերենում (vitelo «հորթ» և videira «որթ») և

¹ Ղևոնդ Ալիշան, *Հին հասարկ կամ հեթանոսական կրօնը Հայոց*, Վենետիկ, 1895, էջ 277-279:

² Նույն տեղում, էջ 288:

³ Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆոնդ 426, ցուցակ 1, գործ 1150, վավերագիր 2: Տես սույն վավերագրի հրատարակումը մեր կողմից (Artsvi Bakhchinyan, Stig Wikander's letter to Charles Vertanes, *Journal of Society of Armenian Studies*, 11 (2000), p. 171-173).

Այսպիսով, տարածության միմյանցից հեռու երկու ժողովուրդների առասպելաբանական սույն նմանությունները կարող են լինել թե՛ որպես համընդհանուր ժողովրդական-դիցաբանական մտածողության արդյունք, թե՛ որպես անմիջական փոխազդեցության հետևանք՝ նկատի ունենալով վերոհիշյալ վարկածը Փոքր Ասիայից Հյուսիսային Եվրոպա տեղի ունեցած բնակչության տեղաշարժերի վերաբերյալ:

Նույն կերպ միջնադարյան այս թույլ փոխշփումների արդյունք չենք կարող համարել սկանդինավյան լեզուների և հայերենի մի շարք բառարմատների միջև եղած նմանությունները, որոնք էլ հետևանք են ոչ թե անմիջական կամ միջնորդավորված փոխառությունների, այլ մեկ ընդհանուր՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու իրողության¹:

Ուշագրավ է, որ անգամ հնդեվրոպական լեզվաընտանիքին չպատկանող ֆիններենը և ֆիննական մշակույթը որոշ ընդհանրություններ ունեն հնդեվրոպական հայկականի հետ: Կարելաֆիննական «Կալլալա» էպոսի սկիզբը՝ հերոսուհու հղիանալը ջրից, հիշեցնում է «Մասնա ծներ» դրամատիկ հերոսուհու Ծովմարի հետ կապված համանման դրվագը: Որոշ գիտնականներ կարծիք են հայտնել, որ մ.թ.ա. IV հազարամյակում ուգրաֆիննական ցեղերն ապրել են հնդեվրոպացիների հարևանությամբ և նրանցից բառեր են փոխառել, ինչպես՝ հնդեվրոպական *wed* (հայերեն՝ գետ) և ֆիններեն *verte* (նոր ֆիններեն՝ *joki*), հնդեվրոպական *mer* (հայերեն՝ մեռնել) և ֆիններեն *marras* («մեռած, մահ»), հնդեվրոպական *orbho* (հայերեն՝ որբ) և ֆիններեն *orpo* և այլն: «Հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Առաջավոր Ասիայում գտնվելու կողմնակիցները այսպիսի ընդհանրությունները փորձում են բացատրել որպես ֆիննաուգրական ցեղերի՝ հնդեվրոպա-

ցիներից բաժանված հնդեվրոպական ցեղերի հետ շփվելու հետևանք»,– գրել է լեզվաբան Գևորգ Ջահուկյանը¹: Նրանից առաջ նման տեսակետներ արտահայտել են նաև ֆինն գիտնականները, ինչպես, ականավոր լեզվաբան Էմիլ Նեստոր Սետայայան (1864–1935), որը հեղինակ է նախաֆիններենի վերաբերյալ կապիտալ աշխատության (E. N. Setälä, *Yhteisumalainen äännehistoria*, 1890–1891) և ֆիններենի առաջին քերականության: Ինչպես վկայել է շվեդարձակ մի հայ հեղինակ, «Սկանդինավիայի հեղինակավոր լեզվագետ գիտնականներ (...պրոֆեսոր Սետելա և նրա աշակերտները) պնդում են, թե հայոց լեզուն ունեցած է իր ազդեցությունը ֆին լեզվի վրա, և հնդկաեվրոպական թափանցումը ֆին լեզվում կատարված է հայերենի միջոցով»²:

Ուգրաֆիննական լեզուների և մշակույթի՝ հնդեվրոպականի հետ ունեցած առնչությունների հարցը վաղուց դարձել է ուսումնասիրության առարկա: Անցյալ դարում տարբեր ազգությունների գիտնականներ (Ն. Անդերսոն, Օ. Կեպպեն) անդրադարձել են այդ խնդրին: Բարոն Ռ. Ռ. Շտակելբերգը «Իրանա-ֆիննական լեզվական առնչություններ» հոդվածում ուգրաֆիննական լեզուների 58 բառ համեմատել է իրանական լեզուների, նաև հայերենի հետ:³ Հնդեվրոպական փոխառությունները Շտակելբերգը բացատրել է արևելյան ֆինների՝ թյուրքական ցեղերի (բաշկիր, չուվաշ, թաթար) կողքին ապրելու և նրանցից պարսկական փոխառյալ բառեր վերցնելու հանգամանքով: Նա վերջնական կարծիք չի հայտնել հնդեվրոպական և ուգրաֆիննական լեզուների նախնական առնչությունների մասին, սակայն մեծաթիվ լեզվական և քերականական նմանությունները հուշում են, որ դրանք չեն

¹ Գևորգ Ջահուկյան, *Չրոյցներ լեզվի մասին*, Երևան, 1992, էջ 21:

² Ս. Լորելի, Միլզա Ֆարալի Ախունդ-Չաղի, *Պայքար*, 27.11.1952:

³ Շտակելբերգը նմանություններ է տեսել մասնավորապես գիրյաներեն և հայերեն մի շարք բառերի միջև՝ *borla* – փետուր, *ծօժ* – պոչ, *бус* – փոշի, *вѣсна* – վառ, *зарлакъны* – զոռ, *ѳксн*, *eksei* – իշխան, *морг* – մարդ, *пан* – պան (տեր, այգեպան), *сус* – սու (ծով), *шеп* – շեն, *вор* – սուգ, *шолж* – սուր, ինչպես նաև վոտյակերեն *ердзи* – արծիվ և ֆիններեն *waski* – սուկի (P. P. Штакельберг, *Ирано-финские лексикальные отношения*, Москва, 1893, стр. 4-11): Շտակելբերգի քերած բառացանկում մենք գտանք բառեր, որոնք նույնպես նման են հայերեն որոշ բառերի, ինչպես ֆիններեն *kurki* – կոռնկ, մորդվներեն *miri* – մարդ, վոգուլերեն *чax* – աղ, մարիերեն *пуаш* – փչել, չերենխերեն *гър* – բուր: Ֆիններենում *sa/sc* բառը երրորդ դեմքի դերանուն է, նույնն է հայերենում, իսկ մենք-ը՝ *mek*, դուք՝ *tek*³: Գրական ֆիններենում (նաև հունգարերենում) առկա է *k* հոգնակիակերտ մասնիկը, նույնն է գրաբարում:

իտալերենում (*vitello* «հորթ» և *vite* «որթ»), տես Վահան Մարգարյան, Լատիներեն-հայերեն մի զուգահեռի շորք (լատիներեն *vitis*, *vitulus* և հայերեն *որթ*, *հորթ*), *Ռոմանական բանասիրության հանդես* 2, Երևան, 2004, էջ 26):

¹ Հրայր Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» հայոց բառարմատները ընկել է նաև սկանդինավյան հին և նոր լեզուների համեմատությամբ (տես Հրայր Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Երևան, 1971–1979): Ըվեդ հայագետ լեզվաբան Էվալդ Լիդենն իր աշխատություններում նույնպես հայերեն բառերը ստուգաբանել է սկանդինավյան լեզուների միջոցով (տես Ewald Lidén, *Armenische Studien*, Göteborg, 1906; *Armeniaca*, Göteborg, 1933):

կարող պատահականությունների արդյունք լինել: Գիտնականի ենթադրությամբ այդ լեզվական փոխանցումները կատարվել են սկյութների միջոցով (որոնց նա համարել է իրանցիներ), որոնք այլ հնդեվրոպական ժողովուրդների հետ ինչ-որ ժամանակ հասել են Եվրոպա և հարավային Ռուսիայում խառնվել Արևելքից անընդհատ գաղթած ոչ հնդեվրոպական ցեղերի հետ¹: Չի բացառվում, որ Շտակեյբերգի ակնարկած հնդեվրոպական ժողովուրդների մեջ նաև հայեր եղած լինեն²:

Նախնական պատմական առնչություններ: Հայ մատենագրության մեջ սկանդինավյան աշխարհին վերաբերող առաջին վկայությունը գտնում ենք Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում»։ «Օվկիանոսում, Մարմատիայի և Գերմանիայի հանդեպ գտնվում է մի այլ կղզի և, որ կոչվում է Սկանդե: Այստեղ ապրում են գոթերը և բազմաթիվ այլ ժողովուրդներ: Այս կղզուց այն կողմ այլևս նավագնացություն գոյություն չունի, և ոչ մի մարդ դեռ չի հասել որևէ տեղ, այդ պատճառով էլ այն կոչվում է Անծանոթ ծով»³: Շիրակացին Սկանդե կղզին հիշատակել է ևս մեկ անգամ. «Արջնային կողմում՝ Դակիա մեծ երկիրն է, ուր բնակվում է սլավոնական քսանհինգ ցեղախումբ, սրանց տեղը կոչվում ստան գոթերը՝ գալով Սկանդի լողուց, որը կոչվում է գերմանական Եմիա»⁴: Ամերիկացի հայագետ Ռոբերտ Հյուսենը ենթադրել է, որ Շիրակացու հիշատակած Սկանդեն հավանաբար հարավային Նորվե-

¹ P. P. Штакельберг, *Ирано-финские...*, стр. 14.

² Ի դեպ, միջին դարերում ուրաֆինական ցեղերից հայերի հետ առնչվել են պեչենեգները, որոնք հայ մատենագիտության մեջ հիշվում են «պեծինակ» կամ «պածինակ» ձևով: Ոմանք նրանց համարում են բյուրբակյան ցեղ, ոմանք՝ ուրաֆինական: Բանաստեղծ Գրիգոր Տղան իր «Ողբ Երուսաղեմի» վիպերգում մի շարք ազգերի շարքում հիշել է «Պեծինակն և Պետևին...» (Գրիգոր Տղա, *Բանաստեղծություններ և պոեմներ*, աշխ. Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 268: Ֆրանսիացի հայագետ Էդուար Գյուլորիեն վերոհիշյալ պոեմի ֆրանսերեն թարգմանության մեջ չի հասկացել, որ նկատի են առնված պեչենեգները, ուստիև թարգմանել է Bedzinag (Ed. Dulaurier, *Recueil des historiens...*, նույն տեղում): Պեչենեգները մասնակցել են 1071 թվականի Մանազկերտի ճակատամարտին, ինչպես վկայված է Մատթեոս Ուտիայեցու երկում («Մարտի թեժ պահին ուզերն (սկյութները - Ա. Բ.) ու պածինակներն անցան սուրբանի կողմը», տես Մատթեոս Ուտիայեցի, *Ժամանակագրություն*, Երևան, 1973, էջ 133):

³ Անանիա Շիրակացի, *Մատենագրություն*, Երևան, 1979, էջ 266:

⁴ Նույն տեղում, էջ 273:

գիան կամ Շվեդիան է¹, իսկ նրա նշած գոթերը փաստորեն վիկինգների առաջին հիշատակությունն է հայ մատենագիտության մեջ:

Մի քանի հայ և օտարազգի ուսումնասիրողներ հայկական հասկանական ազդեցություն են տեսել սկանդինավյան հնագույն մշակույթի որոշ նմուշների վրա: Ըստ իսլանդացի պատմաբան Մագնուս Մար Լարուսսոնի՝ արևելյան ազդեցությունը Նորվեգիայի և Շվեդիայի մշակույթի վրա նկատելի է XI դարի կեսերից²: Սակայն հայերի շփումները հյուսիս-եվրոպական ժողովուրդների հետ և նրանց վրա մշակութային հնարավոր ազդեցությունը վերաբերում են XI դարից ավելի վաղ շրջանի:

Սկանդինավյան քաղաքակրթության վրա հայկական հնագույն ազդեցության առաջին արտահայտությունը վերաբերում է ռունական արձանագրություններին, որոնք ստեղծվել են V-VI դարերում՝ Նորվեգիայի, Շվեդիայի, Դանիայի, մասամբ նաև՝ Գերմանիայի և Անգլիայի տարածքներում:

Գեռնա 1899 թվականին նորվեգացի լեզվաբան-հայագետ Մոֆուս Բուգգեն առաջադրել է ֆութարք (futarkgw) անունով հայտնի հին ռունական այբուբենի վրա հայոց լեզվի հնարավոր ազդեցության մասին վարկածը՝ այդ տառախումբը բացատրելով հայերեն, որպես փութատառք (արագագրության տառեր): Նրա տեսությունը զարգացրել է Ներսես Ալիկյանը, փորձելով ապացուցել, որ ֆութարքն իրականում ոչ թե այբուբեն է, այլ գոթատառ գրաբար մաղթանք: Որ իբր «ալանգոթ» Բենիամին երեցը դիմել է 420 թվականին Կոստանդնուպոլսում գտնվող Մեսրոպ Մաշտոցին գոթերի համար գիր ստեղծել, վերջինս կատարել է նրա խնդրանքը, հորինել գոթական այբուբենը հունականի հիման վրա և տվել ֆութարք օրինանքի բանաձևը: Ալիկյանը ֆութարքը վերծանել է այսպես. «Փութաբարութ օրինել ՋԲԻԻՍՏՈՍ ՏԵՐ ԷՄԱՆՈՒԷԼ ընդ մեզ Աստուած յախտեանս յախտենից»³:

¹ *The Geography of Ananias of Širak (Ašxarhac'oyc')*: the Long and the Short Recensions; Introduced, Translated and Commentary by Robert R. Hewsen, Wiesbaden, 1992, p. 45.

² Magnús Már Lárusson, On the so-called Armenian bishops, *Studia Islandica*, Reykjavik, 1960, N. 18, s. 37.

³ Ն. Ներսես Ալիկյան, *Ս. Մաշտոց վարդապետ*, Վիեննա, 1949, էջ 409-429:



Ալիմյանի այս բավական շինծու տեսությունը հետագայում համոզիչ կերպով հերքել են Արտաշես Մարտիրոսյանը¹ և Լևոն Խաչերյանը²:

Ճարտարապետության մասնագետ Արմեն Մանուկյանը հայկական խաչքարային մշակույթին նվիրված ուսումնասիրության մեջ հիշատակել է ռունական արձանագրությունների և խաչքարերի միջև առկա նմանությունների մասին: Ըստ նրա, Արևելքից և մասնավորապես Հայաստանից բնակչության որոշակի հոսք է տեղի ունեցել Արևմտյան Եվրոպայի տարբեր շրջաններ, և դրանցով կարելի է բացատրել ռունական արձանագրությունների վրա եղած արևելյան տարրերի ակնհայտ առկայությունը³:

Նորվեգացի քննախույզ Ֆրիտյոֆ Նանսենն իր «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» գրքում նշել է, որ որոշ նմանություններ են նկատվում «մեր շիրմաքմբերի և տապանաքարերի (ինչպես օրինակ Բոհուսլենում և Բլեքինգեում) և հայկական գերեզմանոցների և շիրմաքարերի միջև»⁴:

Այս փոխանցումներն իրականացրել են նորմանները, վիկինգներն ու վարյագները՝ սկանդինավյան ժողովուրդների նախնիները, որոնք իրենց արշավանքների շնորհիվ կապեր են հաստատել ոչ միայն Արևմտյան Եվրոպայի, Բալթիկայի ու սլավոնական, այլև Մերձավոր Արևելքի ժողովուրդների, որոնց թվում և հայերի հետ:

¹ Արտաշես Մարտիրոսյան, *Մաշտոց*, Երևան, 1982, էջ 336: Հեղինակը Սոֆուս Բուզգեին սխալմամբ ներկայացրել է որպես «շվեդացի» (էջ 335): Ֆուրարրի և մասնավորապես գորթական Աստվածաշնչի մեջ նկատվող որոշ հայկականությունը կամ հայկական ազդեցության հետքերը Բուզգեն բացատրում է գործերի լուսավորիչ, Աստվածաշնչի գործերն արգզանիչ Վուլֆիլայի (Ուլֆիլա) կապաղովկյան արձաններով. նրա տատին և պապին 257-ին գործերը գերեզմաններ են Կապաղովկիայից, որտեղ հունախոս բնակչության կողքին ապրել են նաև շատ հայեր (տե՛ս Ֆրիտյոֆ Նանսեն, *Խարված ժողովուրդ*, Երևան, 2000, էջ 230): Արտաշես Մարտիրոսյանը չի բացառել նաև Վուլֆիլայի հավանական հայ ծագումը, հավանաբար առանց իմանալու, որ նման վարկածներ առաջ են քաշվել տակավին 1920-1930-ականներին (տե՛ս *Յառաջ*, 15.10.1933):

² Լ. Գ. Խաչերյան, *Հայ դպրութան պատմությունը՝ քննական տեսությանը*, հ. 2, Անթիլիաս, 2000, էջ 308-314:

³ Armen Manoukian, Morphology, structure, and architectural significance of khachkars, in *Khachkar (croci di pietra)*, Documents of Armenian Architecture 2, Milano, 1969, p. 10.

⁴ Fridtjof Nansen, *Armenia and the Near East*, New York, 1976, p. 274.

Հայերը և վիկինգները: Սկանդինավյանների նախնիները պատմության մեջ մասնավորապես հայտնի են դեպի Արևմուտք և Արևելք կատարած իրենց արշավանքներով¹: IX-X դարերում «ջրային մեծ ճանապարհը» Վուլգա գետով Սկանդինավիան կապել է Միջին Ասիայի, Կովկասի և Իրանի հետ, իսկ X դարից սկսած՝ Ռուսիայի, Բյուզանդիայի և Միջին Արևելքի հետ: Եվ չնայած նշված բոլոր երկրներում վաղ միջնադարից բնակվել են հայեր, սակայն վիկինգները հայությանը մեծ մասամբ առնչվել են Փոքր Ասիայում և Կոստանդնուպոլսում. վերջինս նրանք անվանել են Միքլագորդ կամ Միքլիգորդուր (Մեծ քարաք): Հաստատվելով այնտեղ՝ սկանդինավյանները զբաղվել են առևտրով և արհեստներ ուսանելով՝ խառնելով իրենց հյուսիսային լեզուն Արևելքի բազմալեզու ժխորին: 850 թվականից սկսած վիկինգները, սլավոնական ցեղերի հետ համախմբված, մի քանի արշավանք են կատարել դեպի Բյուզանդական կայսրություն և Կովկաս (860, 862, 913-914, 944, 969, 1030-1033, 1048-1050 թվականներ)²: Մոտ 914 թվականին վարյագները Վուլգա գետի և Կասպից ծովի ուղիով ներթափանցել են Հայաստանի հյուսիսային շրջանները, զբաղվել վաճառականությամբ, երբեմն՝ ավարառությամբ: Նրանք ճանապարհին կողոպտել են խաղաղ բնակիչներին և վերադարձել իրենց երկրները՝ հա-

¹ Կոստան Զարյանն իր «Արվեստի պատմության» մեջ «Քարթրոսների արվեստը» գլխում ունի «Սկանդինավյան հնությունները» ենթալեռնագիր, որի ներքո գրել է հետևյալը. «Չնայած որ սկանդինավյան Վիկինգները, [որ] Վարենգների անվան տակ կազմակերպեցին ռական քառուղ, և Նորման անվան տակ քարտրանդ արին Արևմտյան ժովափը Ֆրանսիայի Հյուսիսում տեղավորվելուց առաջ, բողած են կողոպտողների և ծովահենների անուն, այսօր թվում է, որ նրանց քաղաքակրթությունը նվազ զարգացած չէր, քան այն տարրերինը, որոնց նրանք կողոպտում էին: Ընդհանրապես կոչված Վարենգների ճամբային, որ Նովգորոդի և Կիևի վրայով հասան մինչև Պոլիս, նրանք անտարակույս չլիման մեջ էին Բյուզանդական արվեստի հետ: Մյուս կողմից էլ՝ նրանք հաճախ գնում էին Անգլիա և Ֆրանսիա, ուր հռոմեական արվեստի որոշ հիշատակներ դեռ մնացել էին: Կատաղի նավարկուներ՝ նրանք թաղվում էին իրենց նավակների մեջ: Նորվեգիայում գտնված այդպիսի մի գերեզմանի մեջ դեռ մնացել են բազմաթիվ զարդեր, զենքեր, մետաղե առարկաներ, որոնք բնորոշում են այդ մարդկանց ճաշակը» (Կոստան Զարյան, *Դեպի Արարատ*, Երևան, 2001, էջ 155-156):

² Самвел Маркарян, По поводу личности предводителя дружины викингов на Кавказе в XI веке, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, 2000, p. 1, էջ 150:

բուստ ավարով¹: 988 թվականին Կիևյան Ռուսիայի մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչը պետականորեն ընդունել է քրիստոնեությունը և ամուսնացել Բյուզանդիայի Մակեդոնական (հայկական) հարքստության ներկայացուցիչ Վասիլ Բ Բուլղարասպան կայսեր (գահակալել է 976–1025 թթ.) քրոջ՝ արքայադուստր Աննայի հետ: Ի նշանավորումն Վլադիմիրն իր աներորդուն է տրամադրել վարյագներից և ռուսներից բաղկացած վեց հազարանոց մի զորագունդ, որը Կոստանդնուպոլիս է հասել նույն թվականի ապրիլից հետո²: XI դարի բյուզանդական բանակը լեցուն է եղել անգլո-սաքսոն, ռուս, նորվեգացի, իսլանդացի և դանիացի վարձկաններով³: Հատկանշական է, որ հյուսիսցիների այդ զունդը, որ գոյատևել է մինչև XIII դարի սկիզբը, 1000 թվականին Վասիլ Բ Բուլղարասպանի ղեկավարությամբ նվաճել է Տայքը, եղել Տիգրանակերտում, հասել մինչ Արարատ լեռը և Վրաստանի սահմանը⁴:

Բյուզանդական բանակում վարձված ռուս-սկանդինավցի զինվորները՝ վարյագները (վարանգներ), հայ մատենագրության մեջ հիշվել են «վրանգը» ձևով, մինչ առհասարակ նորմաններին տրվել են «ֆրանկը» կամ «ռուզիկը» անունները: Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում ֆրանկներ ասել են եվրոպացիներին ընդհանրապես, ուստիև սկանդինավցիներն էլ հայերի համար ֆրանկ էին: Իսկ ռուզիկ, որ նշանակում է ռուս, անվանվել են այն պատճառով, որ սկանդինավցիները ռուսների հետ միասին են հայտնվել Այսրկովկասում կամ Բյուզանդիայում:

Անանիա Շիրակացուց հետո սկանդինավցիների վերաբերյալ հայ մատենագիրների առաջին հիշատակությունների հանդիպում ենք Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհին» երկի՝ Մովսես Դասխուրանցու կատարած հավելումներում, որտեղ հիշա-

տակված են հյուսիսային ցեղի արշավանքն Այսրկովկաս և Պարտավ քաղաքի կողոպուտը: Պարտավը (Բերդա) գտնվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Առանձակ Ուտիք գավառում և 462-ից եղել է Հայոց Արևելից կողմանց (Արցախ, Ուտիք) մայրաքաղաքը: Այնուհետև Պարտավը դարձել է Աղվանքի մայրաքաղաքը: «Ընդ նոյն ժամանակս բախի ի կողմանցն հիւսիսոյ այլադէմ, օտարանշան ազգ իմն, զոր Ռուզիկ կոչեն, որք ոչ աւելի քան զերիս ժամանակս ընթանալով իբրև զմրիկ ընդ համատարած աշխարհածով ելիցն Կասպից՝ յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղուանից Պարտաւ, ոչ ուստեք լեալ կարողութիւն ընդդիմակայել նոցա, և ի սուր սուսերի մատնեալ զքաղաքն՝ թափեցին յինքնանս զվայելչութիւն ամենայն կազմութեան բնակչացն և նոյն ինքն սաւարն պաշարեալ զնոսա՝ ոչ ինչ կարէր վնասել, զի անյաղթելի էին զօրութեամբ: Իսկ կանացն քաղաքիս հնար իմացեալ՝ բաժակ մահու արքուցանէին Ռուզացն, որոց իմացեալ զդաւաճանութիւնն՝ անխընայ կոտորէին զկանայսն և զմանկունս նոցա: Եւ կացեալ ի մնա ամիսս Ջ, թափուր և ունայն զքաղաքն թողուին, և մնացեալքն զանգիտող ձևով զնացին յաշխարհն իւրեանց բազմազան աւարաւ»¹: Այս մասին հաղորդում են նաև արաբական աղբյուրները՝ Իբն Միսքավեյխը², Աբու-լ-Ֆիդայի ժամանակագրությունը («Հիջրի 332 թվականին (943–944) մի խումբ ռուսներ ծովից անցան և Կուր գետով հասան մինչև Պարտավ քաղաքը, որին տիրեցին... ապա նավերով վերադարձան դեպի իրենց երկիրը»³) և Իբն ալ-Աթիրը⁴: Ռուս պատմաբան Ն. Յա. Պոլովոյը արաբական, բյուզանդական, սլավոնական և հայկական աղբյուրների համադրությամբ ապացուցել է, որ ռուսները և

¹ Մովսես Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 338:

² Տե՛ս նույն տեղում, էջ ԻԷ: Այս մասին տե՛ս նաև T. J. Arne, *Rus' erövning av Berda'a år 943. Ibn Miskaweichs berättelse om ett vikingatåg*, Fornvännen, 1932, էջ 213; L. Մեյխրսթր-Բեկ, Հին Ռուսիա և հայերը, *Լեզվի ինստիտուտի գիտական աշխատություններ*, քիվ 1, 1946, էջ 116-117:

³ Աբու-լ-Ֆիդայի ժամանակագրությունը, *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, կազմ. Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 214:

⁴ Նույն տեղում, էջ 252:

¹ David Marshall Lang, *Armenia, cradle of civilization*, London, 1970, p. 179.

² Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, *Բյուզանդական աղբյուրներ*, Գ, Հովհաննես Սկիլիցես, Երևան, 1979, էջ 277: Սկիլիցեսը վարյագներին համարել է կելտական ցեղ, որ վարձով ծառայում էին հռոմայեցիների բանակում (էջ 183):

³ Բյուզանդական զորքում եղած վարյագների գնդի մասին տե՛ս Հ. Գեյցեր, *Համաստություն քիզանդական կայսրերի պատմութեան*, Վաղարշապատ, 1901, էջ 274-275:

⁴ H. R. Ellis Davidson, *The Viking Road to Byzantium*, London, 1976, p. 241-243.

նրանց դաշնակից վարյագներն ու պեչենեգները Պարտավը գրավել են 943 թվականի աշնանը և թողել են 944-ի գարնանը¹:

Պատմական այս վկայությունը հիմք է տվել շվեդ գիտնականներին ենթադրելու, որ Շվեդիայի տարածքում գտնված որոշ հնագիտական առարկաներ հավանաբար հայկական ծագում ունեն: Տակավին 1848-ին շվեդ հնագետ Կառլ Յուհան Թուրներբը (1807–1877) նշել է, որ Շվեդիայում կատարված պեղումների ժամանակ գտնվել են ապարանջաններ և մանյակներ, որոնք հավանաբար «եկել են Հայաստանի Բերդա գյուղից»²: Շվեդիայում գտնված այլ հնություններ Թուրներբը հնարավոր է հասարել, որ ստեղծվել են հայոց Դվին մայրաքաղաքում:

XI–XII դարերի պատմիչ Մատթեոս Ռոտհայեցին վրաց Դավիթ Բ Շինարար թագավորի բանակում հիշատակել է «ֆրանկներին»: Ըստ նրա, Դավթի զորքում եղել են «հինգ հարյուր արևն և հարյուր ֆրանկ»³: Պատմաբան Սուրեն Երենյանը հիմնավորապես ապացուցել է, որ Ռոտհայեցին «ֆրանկ» ցեղանվամբ նկատի է ունեցել ոչ թե առհասարակ եվրոպացիներին, այլ մասնավորապես վարյագներին (ֆրանկ-վոանգ մասնությունից ելնելով), այսինքն՝ իրականում պետք է Ռոտհայեցու տողը կարդալ «յազգէն Ալանաց արս հինգ հարիւր և վառանգ հարիւր»⁴: Նա նաև նշել է, որ հայ քարոզիչը և վաճառականը ոչ հազվադեպ մասնակից են եղել վարանգ-վիկինգների՝ այն ժամանակվա «աշխարհի ծայրը» կատարած ուղևորություններին և որ հայերը սերտ կապերի մեջ են եղել ոչ միայն ռուսների, այլև նրանց ցեղակից նորման-վիկինգների հետ. մի փաստ, որ արտացոլվել է XI դարի որոշ սկալդերի երգերում⁵:

Նույն հարցին վերաբերող ռուսմնասիրությամբ հանդես է եկել նաև պատմաբան Կարեն Յուզբաշյանը՝ XI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցու առնչությամբ, որի «Պատմության» մեջ հիշա-

տակված է 1054 թվականին սելջուկ Տուրքիլ բեկի դեմ մղված ճակատամարտում բյուզանդական բանակում մարտնչող «փրանկների» գունդը¹: Լաստիվերտցու երկի ձեռագրերից մեկում «փրանկքի» փոխարեն գրված է «վրանգք», ուստիև Յուզբաշյանը զարգացրել է այն դրույթը, որ իրականում պատմիչը նկատի է ունեցել վարյագներին, եթե անգամ այս հատուկ զորագնդի կորիզը կազմել են ոչ թե սկանդինավցիները, այլ ռուսները, սլավոնները²:

Մեր ենթադրությամբ՝ նույն վարյագներն են նաև X դարի հեղինակ Շապուհ Բագրատունուն վերագրվող «Պատմության» մեջ հիշվող ֆրանկները: Ըստ այդ աղբյուրի, Բյուզանդիայի Հերակլես կայսրը միաբանել է «զարքն Հայոց և զՎրաց և զԱղուանից, զՄիջագետաց և Յունաց և զՓոսանկաց»³:

XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական...» աշխատության մեջ հիշատակել է 1049 թվականին Բասենի Արջիովիտ զավառում սելջուկ-թուրքերի դեմ վրաց էրիսթավ Լիսյարիտ Բագվաշիի մղած ճակատամարտի մասին, որին մասնակցել է նաև վիկինգների բանակը⁴:

Հայերը և վարյագները միմյանց ճանաչել են որպես վարձկան զինվորներ բյուզանդական բանակում և մեկտեղ կռվել տարբեր երկրներում: Բյուզանդիայի կայսր և պատմիչ Կոստանդին VII Ծիրանածինը նշել է, որ հայազգի կայսր Ռոմանոս Ա Լակաբենոսի օրոք (920–944 թթ.) նրա զորքում, ի թիվս այլ ազգությունների, կռվել են նաև հայեր և ֆրանգանացիներ⁵, որ ենթադրյալ վարյագներն են: 1038 թվականին Բյուզանդիայի կայսր Միքայել Գ-ն Սիցիլիա է ուղարկել հայերից,

¹ Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցոյ, Թիֆլիս, 1912, էջ 78:

² Տե՛ս Կարեն Յուզբաշյան, Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մի տարբերակի մասին. վրանգք և ոչ վրանգք, *Բանբեր Մասենադարանի*, 1958, ք. IV, էջ 77-82: Նույնի, Варяги и прочия в сочинении Аристакеса Ластивертни, *Византийский восточник*, 1958, ք. XVI, էջ 14-28.

³ Պատմութիւն Անանուն գրուցագրի կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Երևան, 1971, էջ 59:

⁴ Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Միւնեցոյ, Թիֆլիս, 1910, էջ 373-375, տե՛ս Самуил Маркарян, По поводу..., էջ 151:

⁵ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, *Բյուզանդական աղբյուրներ*, Բ. Կոստանդին Ծիրանածին, Երևան, 1970, էջ 147, 307:

¹ А. А. Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, стр. 213.

² Carolus Johannes Tornberg, *Numi suffici regii numophilacti holmiensisquos omnes in terra Suecia reportos*; Uppsaliae, 1848, p. XXIV.

³ Մատթեոս Ռոտհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 234:

⁴ С. Еремян, Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках, *Научные труды Ереванского государственного университета*, т. XXIII, Ереван, 1946, стр. 390.

⁵ Նույն տեղում, էջ 389-390:

վարյագներից և Իտալիայի նորմաններից կազմված մի ընտրյալ զորք¹: Հայերը և վարյագները մասնակցել են 1071 թվականի օգոստոսի 19-ին Մանազկերտի նշանավոր ճակատամարտին², որը տեղի է ունեցել բյուզանդական և սելջուկ-թուրքական բանակների միջև, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի Մանազկերտ քաղաքում:

Հայերը ճանաչել են նաև Սիցիլիայի նորմանական կայսրության բնակիչներին: 1081-ին նորմանների դեմ կռվել է բյուզանդական բանակի հայազգի զործիչ Գրիգոր Բակուրյանը: XII դարում բյուզանդական ռազմական զործիչ Անդրոնիկոս Կոմնենոսի հետ Կիլիկյան Հայաստան է եկել Մանուել Ա կայսեր փեսա, այրի Հովհաննես Կեսարը (որը նորմանական ծագում ուներ)՝ Անտիոքի Ռայմոնդ Պուատյեի այրու հետ ամուսնանալու նպատակով, որը, սակայն, չի կայացել³:

Մատթեոս Ուռհայեցին, նկարագրելով մոտ 1072–1073 թվականների իրադարձությունները, հիշել է իշխան Փիլարտոս Վարաժնունու և Ադրիանապոլսի Թոռնիկ անունով հայ պատրիկի միջև մղված ճակատամարտի մասին: «Փիլարտոսի հետ էր ֆրանկների կոմս Ռմբադատը՝ ութ հարյուր հոգով: Թոռնիկն ափսոսաց, որ իր հետևակազորը ետ ուղարկեց... Թոռնիկն ամենից շատ ֆրանկներից էր վախենում, դրա համար կարգադրեց. «Այնպես արեք, որ մի գունդ գնա ֆրանկների դեմ»: Եվ ահա Ռմբադատն իր զորքով եկավ և բախվեց Թոռնիկի գնդի ճակատին, ճեղքեց այն և ներս խրվեց: Թոռնիկն իր զինվորներին ձայն տվեց, և բոլորը միասին շրջապատելով նրանց, բոլոր իշխաններին՝ հազար հինգ հարյուր հոգու գերեցին, բռնեցին նրանց կոմսին, իսկ Փիլարտոսին և նրա բոլոր զինվորներին փախուստի մատնեցին: Այդ օրը ֆրանկների և այլ քրիստոնյաների մեծ կոտորած եղավ: Թոռնիկը և հայոց բոլոր զինվորները մեծ ավարով գնացին Սասուն, իսկ Փիլարտոսը փախստական ու խայտառակված մտավ Խարբերդ: Այս [դեպքը] տեղի ունեցավ Անձիտ գավառի Ալելուա դաշտում»⁴: Ենթադրվում

է, որ Ռմբադատը եղել է Rousset de Bailleul-ը՝ Բյուզանդիայում ծառայած մի նորման զործիչ¹:

Հաշվի առնելով հայերի՝ վիկինգների և վարյագների հետ ունեցած շփումները, սույն գլխի սկզբում հիշված հայկական ազդեցությունը դառնում է միանգամայն հնարավոր: Ֆրանսիացի ուսումնասիրող Ժորժ Գյուբյուիտը նշել է Ասիայից Եվրոպա մշակույթի փոխանցման երեք ազդակ, որոնցից առաջինը համարել է «Շուտեմն իջած գերման ցեղերն: Նոքա անցնում են հարաւային Գերմանիայէն և կանգ առնում են Մև ծովի ափերի վերայ, Գաղղիա, Սպանիա և Իտալիա մտնելէն առաջ: Այս բարբարոսները ճոխապաճոյճ զարդարուած, ինչպէս ցոյց տալիս են Կլունիի գանձերն և Մետալիաներու հաւաքածոյն, իրենց ետևից ամուս են Հայեր, որոնց հանդիպելիս են լինում Կոստանդնուպոլսում կամ Փոքր Ասիայում»²:

Պատմաբան Թուրե Արնեն Շվեդիայի և Արևելքի առնչություններին նվիրված իր հնագիտական աշխատության մեջ (Արևելք ասելով նա նկատի է ունեցել գլխավորապես Ռուսաստանը) հիշատակել է շվեդական տարածքում հայտնաբերված հնագիտական մի շարք առարկաների՝ Հայաստանում պատրաստված լինելու իրողությունը: Նա շվեդական հնությունների մի շարք տարրեր համեմատել է նաև հայ միջնադարյան արվեստի համանման տարրերի հետ³: Գրանց՝ Հյուսիսում հայտնվելու հնարավոր ուղին համարել է փոխանցումը «Հայաստանից և Պարսկաստանից... խազարներին և բուլղարներին (նկատի ունի Կամա-Վոլգայի բուլղարներին – Ա. Բ.), որոնց միջոցով էլ հասել են Ռուսաստան և Սկանդինավիա»⁴: Հարկ է նկատել, որ Սկանդինավիայի տարածքում պեղվել են ոչ միայն ենթադրաբար Հայաստանում ստեղծված առարկաներ, այլև փոքրասիական, պարսկական, անգամ

¹ Նույն տեղում, էջ 330:

² *Revue des arts asiatiques*, Paris, 1925, N. 1, տես Գերոգ Դիսքիտ, Արևելք և քրիստոնեական արուեստը, *Բազմալեզու*, Վենետիկ, 1927, p. 2, էջ 47: Նույն հատվածի մեկ այլ հայերեն թարգմանությունը տես Պ. Մ., Օտար կարծիքներ հայ արուեստին մասին, *Նասասարդ*, Բ. շրջան, Պուրբէշ, 1925, էջ 168:

³ Ture J. Arne, *La Suède et l'Orient*, Uppsala, 1914, pp. 160, 216. Նույն թեմային Արնեն անդրադարձել է նաև «Շվեդական հողում գտնված մի քանի արևելյան առարկաներ» աշխատության մեջ (տես Ture J. Arne, *Några orientalska föremål funna i svensk jord*, Stockholm, 1924):

⁴ Ture J. Arne. *La Suède et l'Orient*, p. 182.

¹ Mats G. Larson, *Väringar: nordbor hos Kejsaren i Mikligård*, Stockholm, 1991, s. 48.

² Նույն տեղում, էջ 82:

³ Ա. Ա. Բոգոյան, *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը*, Երևան, 1988, էջ 131:

⁴ Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 137:

չինական ծագում ունեցող հնություններ: Ողջ Շվեդիայի տարածքում և Գոթլանդ կղզում պեղվել են հազարավոր արևելյան դրամներ: Բազմաթիվ ասիական ծագմամբ առարկաներ են գտնվել Բիլբրիի գերեզմաններում¹:

Մեկ այլ արևելագետ՝ Ֆրեդերիկ Մարթինը, շվեդական Մորա բնակավայրում (Դալարնա շրջան) գտել է հայկական գորգի մի կտոր՝ բերված Հայաստանից, որ կարող է լինել XI դարից կամ ավելի վաղ շրջանից²: Ամերիկացի արվեստաբան Արթուր Ափհամ Փոփն իր «Հայկական վիշապագորգերի առասպելը» հոդվածում նմանություններ է գտել հայկական մի գորգի թռչնազարդի և Շվեդիայում գտնված կարպետի թռչունի հետ³:

Ֆրանսիացի հետազոտող, ճարտարապետության պատմաբան Օգյուստ Շուազին իր «Ճարտարապետության պատմություն» երկհատոր աշխատության մեջ նշել է, որ հայ ճարտարապետության զարգացման բարձրագույն շրջանը եղել է XI–XII դարերը, իսկ հետագայում այդ արվեստը տարածվել է դեպի հյուսիս՝ Ռուսաստան, սկանդինավյան երկրներ, Իռլանդիա⁴... Մեկ այլ ֆրանսիացի հետազոտող՝ Լեկույեն, նշել է, որ քառաբսիդ, ամփոփ հատակագիծը, որի նախնական օրինակներն են Էջմիածնի Կաթողիկեն և Բագարանի եկեղեցին, «ներշնչել է քրիստոնեական աշխարհի բազմաթիվ եկեղեցիների, դրանց շարքում Ռուսաստանի կաթողիկենները, սկանդինավյան եկեղեցիները...»⁵: Սակայն արդյո՞ք այդ շփումները միակողմանի են եղել: Հայ ուսումնասիրողներից մեկը նշել է, որ եթե այդ «Հյուսիսականները» որևիցե ազդեցություն թողած լինեին հայերի վրա, հայերը գործնականորեն պահած կլինեին այդ հիշատակը: «Նորտիք սկիսական հրոսակները Վրկանաց լեռներեն անցան և խուժեցին Հայաստան...

¹ История Швеции, ред. А. С. Кан и др., Москва, 1974, стр. 66.

² Ture J. Arne, *La Suède et l'Orient*, p. 215.

³ Arthur Upham Pope, *The Myth of Armenian Dragon Carpets*, *Jahrbuch der Asiatischen Kunst*, Berlin, 1925, s. 149.

⁴ Արմեն Չարյան, Շուազի Օգյուստ, *Հայկական սովետական հանրագիտարան*, հ. 8, Երևան, 1982, էջ 593:

⁵ Տե՛ս Արմեն Չարյան, *Հայկական ճարտարապետության տարածումը և Լեռնարդ դա Վինչիի հայկական վարկածը*, Երևան, 1994, էջ 78:

անոնց շփումը ոչ մեկ կերպով չէ կարողացած յեղափոխել Հայոց քրիստոնեական ճարտարապետությունը»¹:

Վերոհիշյալ Օգյուստ Շուազին մեկ այլ առիթով գրել է, որ հայ արվեստն անցել է ծովը և տարածվել հարավային Ռուսիո և Դանուբյան գավառներում, որ հայկական ազդեցությունը հասել է մինչև Սկանդինավյան երկրներ, սակայն այնտեղ էլ կանգ չի առել²: Շուազին հավանաբար նկատի ունի, որ հայկական տարրը ներթափանցել է Սկանդինավիայից ավելի հյուսիս՝ Իսլանդիա: Դա եղել է երեք հայ կրոնավորների շնորհիվ, որոնց մասին վկայել է երկու հին իսլանդական աղբյուր: XII դարի իսլանդացի պատմիչ Արի Ֆրոդ Թորգիլսոնի «Գիրք իսլանդացիների մասին» աշխատությունում, գրված 1122–1133 թթ. միջև³, հիշված են Իսլանդիա ժամանած երեք «hermskir» (այսինքն՝ հայ) եպիսկոպոսների անուններ՝ Պետրոս, Աբրահամ և Ստեփանոս: Նրանք մոտավորապես 1020–1030 թվականներին ժամանել են Իսլանդիա իրենց երկու girskir (հույն) ընկերների հետ և քարոզել են քրիստոնեություն: Նրանց պատվիրանները նվազ խիստ են եղել, քան Իսլանդիայի եպիսկոպոս Իսլեիֆ Գիզուրասոնինը (1056–1080), ուստիև շատ իսլանդացիներ հետևել են նրանց: Այնուհետև Նորվեգիայի Ադալբերտ արքեպիսկոպոսը հատուկ հրամանով արգելել է հայ կրոնավորների սրբազնագործումը: Ենթադրվում է, որ նրանց ճանաչել է իսլանդական լուսավորիչ, Իսլանդիայի գրականության հիմնադիր Ռուդոլֆ եպիսկոպոսը: Մյուս կողմից հին իսլանդական օրենքների գրքում (Grágás) նշված է, որ իսլանդացիներին թույլ է տրվում մասնակցել ոչ լատիներեն քարոզող եպիսկոպոսների կամ քահանաների ծիսակատարություններին, լինեն նրանք hermskir (հայ) կամ girskir (հույն):

Արի Ֆրոդի գիրքը XIX դարի վերջից քարգնանվել է ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուներով, որոնցում «էրմսկիր»-ը միշտ քարգնանվել է որպես հայ, քանի որ հին իսլանդերենում Հայաստանը կոչվել է Էրմ-

¹ Հ. Գ. Նահապետեան, Քրիստոնեական ճարտարապետություն. պատմական հետազոտություններ, *Բազմավեպ*, 1933, ք. 6, էջ 247:

² Պ. Մ. Օտար կարծիքներ..., էջ 168:

³ Տե՛ս ֆրանսերեն քարգնանությունը՝ Ari Thorgilsson, *Le livre des Islandais*, Brussels, 1898.

լանդ: Մակայն 1960-ին իսլանդացի պատմաբան Մագնուս Մար Լա-րուսսոնը կասկածի է առել երեք կրոնավորների հայ լինելու իրողությունը՝ համարելով նրանց Բալթիկայի հարավ-արևելքում գտնվող Էրմ-լանդ բնակավայրից: Այս տեսակետը հերքել են հայ-իսլանդական միջնադարյան այս դրվագը համակողմանիորեն ուսումնասիրած ուկրաինացի Յարոսլավ Դաշկևիչը և ռուս Ֆ. Բ. Ուսպենսկին¹: Վերջինս փորձել է ապացուցել, որ իսլանդական օրենսգրքում հիշատակված «Էրմսկիրը» և «գերսկիրը» իրականում ոչ թե էթնիկական, այլ դավանաբանական նշանակություն ունի, այսինքն՝ նկատի են առնվել հայա-դավանները և հունադավաններն առհասարակ: Մեկ այլ հետազոտող՝ Մարգարեթ Բորմարը, ենթադրել է, որ հայ քարոզիչները հավանաբար եղել են 1093-ին հարավային Գերմանիայի Նիդեռնբուրգ քաղաքում վախճանված և հետագայում սրբացված հայ եպիսկոպոս Գրիգորի խմբից²:

Երեք հայ կրոնավորների գործունեությունն Իսլանդիայում այդ երկրի հետ հայ ժողովրդի ունեցած միակ միջնադարյան առնչությունն է, եթե հաշվի չառնենք նաև հետևյալը. XII–XIII դարերի հայազգի հերոս Հանտոնացի Բյովեի մասին ասպետական վեպն ունեցել է տարբերակներ եվրոպական մի քանի երկրներում, նաև Իսլանդիայում³:

Թերևս ավելի ուշ ժամանակահատվածում հայերը հասել են մինչև Ամերիկա մայրցամաքին հարող Գրենլանդիա կղզին, որը X դարի սկզբին պատկանել է Նորվեգիային, այնուհետև անցել Դանիայի տիրապետության տակ: Հիրավի անակնկալ էր XVII դարի սկզբի մի դանիական սկզբնաղբյուրում (հեղինակ՝ Կլաուս Բրիստոֆերսեն Լիս-քանդեր) գտնել հիշատակություն Գրենլանդիա հասած հայերի մասին: Ըստ Լիսքանդերի՝ նրանք փոթորիկից հալածվել և ընկել են Հյու-

սիսային Մառուցյալ օվկիանոս, հասել Գրենլանդիա, որտեղից վերադարձել են Նորվեգիա: Ըստ նրա՝ հայերը «տրամաբանություն և դատողություն էին ստացել, և իրենց ժողովրդին Հայաստանից դուրս են առաջնորդել՝ հին ժամանակներում այս հողերը (Գրենլանդիան – Ա. Բ.) գրավելու համար»¹: Վաղ միջնադարում հայերի՝ Գրենլանդիան գրավելու ծրագիրը չափազանց արտառոց է թվում, ուստիև Լիսքանդերի սույն վկայությունը թերևս առասպելների շարքն է պետք դասել...

Այստեղ հիշենք ևս մեկ այլ ուշագրավ տվյալ: XIII դարի հեղինակ Հովհաննես Երզնկացին «Նորին դարձեալ յաղագս երկնի» աշխատության 36-րդ էջում (տպագրվել է 1792-ին, Նոր Նախիջևանում) գրել է հյուսիսային երկրների կլիմայի մասին՝ ճշգրտորեն տալով քննադատական գիշերների նկարագրությունը՝ դրանք տևում են սեպտեմբերի 22-ից մինչև մարտի 21-ը, որ այնտեղ կես տարի ամառ է, կես տարի՝ ձմեռ: «Նման ճշգրիտ և պարզ պատկերացում բարեխառն գոտու հյուսիսային երկրների վերաբերյալ XIII դարի հեղինակ Հովհաննես Երզնկացին կարող էր ունենալ՝ լավ ծանոթ լինելով առևտրականների ճանապարհներին, որոնք հասնում էին մինչև Ուրալյան լեռնաշղթայի երկրամասը: Բայց և այնպես մեզ համար կարևորն այն է, որ Հովհաննես Երզնկացին կարողացել է ըմբռնել ոչ միայն այդ երկրներում տիրող պայմանները, այլ նաև տվել է ավելի հյուսիս ընկած Արկտիկական և քննադատական երկրամասերում տիրող պայմանների ճշգրիտ և իրական պատկերն ու նրա գիտական բացատրությունը, թեև սրա մասին նա ճանապարհորդական նկարագրությունից ոչինչ վերցնել չէր կարող»²:

Եթե բացառենք Իսլանդիայի հետ կապված XI դարի վերոհիշյալ դրվագը, ապա հայ ժողովրդի առնչությունները բուն սկանդինավյան ժողովուրդների և երկրների (առավելապես Շվեդիայի) հետ սկիզբ են առել XIV դարում:

¹ Yaroslav R. Dachkévitsh, Idem, p. 321-336. Սույն հոդվածի ռուսերեն տարբերակը լույս է տեսել *Скандинавский сборник* ժողովածուում (вып. 33, Таллин, 1990, стр. 87-97): Ֆ. Բ. Ուսպենսկու «Նշումներ 13-րդ դարում Իսլանդիայում հայերի հարցի մասին» հոդվածը լույս է տեսել Նորվեգիայում, ռուսերեն լեզվով (*"Scando-Slavica"*, հատոր 46 (2000)):

² Margaret Cormack, Irish and Armenian Ecclesiastics in Medieval Iceland, *West Over Sea: Studies in Scandinavian Sea-Borne Expansion and Settlement Before 1300*, ed. Beverley Ballin Smith, Simon Taylor and Gareth Williams, 2007, p. 232-233.

³ Г. Л. Карагезян, *Армения и армяне по французской литературе XI-XIV веков*, Ереван, 1988, стр. 27.

¹ Claus Christoffersen Lyskander, *Dett Grønlandske chronica*, Copenhagen, 1608., s. 21.

² Լ. Սեմյոնով, Չեռագրական հին տեղեկություններ Արկտիկայի մասին, *ՀՍՍՌ Ժողովուրդների կից պետական ծեղագրատուն (Մատենադարան)*, գիտական նյութերի ժողովածու, p. 1, Երևան, 1941, էջ 73-74:

«Իսլանդական ժամանակագրություն մինչև 1578» ժողովածուում ինը անգամ հիշվել է Հայաստանը¹ և մեկ անգամ՝ հայոց թագավոր Արաբանեսը: Այստեղ գտնում ենք նաև ժլատ մի վկայություն այն մասին, թե ինչպես 1315 թվականին Նորվեգիայի թագավոր Հաաքոնի կյանքի վերջին տարիներին նրա մոտ ժամանել է Հայաստանից դեսպան՝ թանկարժեք նվերներով²: Սույն թվականը վերաբերում է Կիլիկյան Հայաստանի թագավորության ժամանակաշրջանին, երբ գահակալում էր Օշին թագավորը (1308–1320): Ցավոք, լրացուցիչ տվյալներ, թե ո՞վ է եղել այդ դեսպանը և ի՞նչ առաքելությամբ է հասել Եվրոպայի հյուսիս, պակասում են :

Սկանդինավյան երկրներն իրենց անուններով հայ իրականության մեջ հայտնի դարձան XVI դարից սկսած: Հայ ճանապարհորդ-մատենագիր Փիրգատե Ղափանեցին 1568 թվականին այցելել է Արևմտյան Եվրոպայի խոշոր երկրները, այդ թվում՝ Սկանդինավիա: Իսպանիայից նա ծովով անցել է Անգլիա՝ «Ինկլեզաց երկիրն», ապա՝ Հյուսիսային Եվրոպայի երկրները՝ իր «Ուղեգրության» մեջ տալով որոշ տեղեկություններ դրանց մասին. «Դենմարքայ երկիրն, Իշկոցաց երկիրն, Շիվեցոց երկիրն. Դ. թագաւորի երկիր այ. Քրիստոս կայ հաւատան՝ ծինուտն, չարչարան, խաչելութիւն, հարձումն, զամեն տղէն կինքէն մեռուննուն, էն տղայ կինուր կիտյան, էն եկեղեցին երէցն Գ. դիրբայ կանի անունն Հաւր և Որդու և Հոգին սրբուն. Պատարաքնին չեն հաւատալ ընդ Քրիստոս. մէկ դիրբայ խաչիլաւ ամեն սորա որոց զի հաւատան, սուրբ Մարիամայ, սուրբն պարէխուս չեն ասիլ, խաչ չեն անիլ. դարիբին խիստ հարբիք կանեն, Քրիստոսայ ծինունդին ժԵ աւր ութուրէք զը պահեն. պենիլ չեն. գուտեն, խիմեն, ուրախութիւն անին»³: Այսբանով սպառվում են Փիրգատեի տեղեկությունները իր այցելած երկրների մասին. միայն պետք է ավստասլ, որ ի տարբերություն այլ միջնադարյան հայ ճանապարհորդների, որոնք իրենց այցելած երկրների և ժողովուրդների մասին թողել են ընդարձակ տեղեկություններ և հետաքրքրաշարժ դիտարկումներ ու վկայություններ, Փիրգատե Ղափանեցին բավարարվել է սոսկ վերոբերյալով: Ուշագրավ են Դա-

միային և Շիվեցոց տված նրա անունները՝ Դենմարքա և Շիվեցոց երկրներ (իսկ նրա հիշած Իշկոցաց երկիրը Շոթլանդիան է):

Ամստերդամում 1695-ին լույս տեսած կիսագնդերի առաջին հայերեն քարտեզում՝ «Համատարած աշխարհացույց»-ում, պատկերված է նաև Սկանդինավյան թերակղզին, Իսլանդիան և Գրենլանդիա կղզու մի մասը: Նույն Ամստերդամում 1699-ին լույս տեսած Դուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի...» գրքում աշխարհի լեզուներն ու լեզվաընտանիքները քվելիս նշված է, որ «Դօշի (գերմանական – Ա. Բ.) լեզուէն առաջ եկաւ արլենանի, ինգլիզի, ֆրանսեզի, դանիմարքեզի, շուէթի եւ նորվեջի լեզուն»¹: Նույն աշխատության մեջ Հյուսիսային Եվրոպայի երկրների շարքում հիշվում են «Դանիմարքն, Նորվեջն, Շուէթն»²:

XVIII դարում թարգմանիչ և տպագրիչ Հովհաննես Անկյուրացու՝ լատիներենից կատարած «Աշխարհացույցի» («Թարգմանութիւնք») ձեռագրում սկանդինավյան երկրներից հիշվել է միայն Դանիան: Մի գլուխը կոչվում է «Վասն Տանիու, որ է հիւսիսային Ալամանու (Գերմանիայի – Ա. Բ.) բաժին մի»³: Նույն դարում գրված մի հայերեն ձեռագրում տեղ գտած «Բառգիրք յատուկ անուանց» գրքում հիշատակվում է Գրենլանդիա կղզին. «Է տեղի ինչ ի Հին Գրենլանդիայ, ի ծովեզերին, ի Գ.Ն լայնութան եւ ի ԿԵ երկայնութան հիւսիսոյ»⁴: Իսկ արդեն XIX դարի սկզբին, 1802 թվականին, Ստեփանոս Ազոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» աշխատության Եվրոպային նվիրված հատորում առանձին բաժիններով և դրանք կազմող ենթագլուխներով ներկայացված են սկանդինավյան երկրները՝ «Դանիք կամ Տանիմարքա», «Նորվեկիա» (ներառյալ «Իսլանտիա», «Կրենլանտիա» և մյուս կղզիները) և «Շվետք կամ Սվեցիա» (ներառյալ «Ֆինլանտիա» գավառը)⁵:

¹ Դուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ՝ կշոյ՝ թոյ եւ դրամից բոլոր աշխարհի*, 1699, Ամստերդամ, էջ 50:

² Նույն տեղում, էջ 52:

³ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հատոր Բ, Երևան, 2004, էջ 1274:

⁴ Նույն տեղում, էջ 334:

⁵ *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկիոյ և Ամերիկոյ*: Աշխատասիրութեամբ Գերայաստի Տեառն Տեառն Ստեփաննոսի Գիլվեր Ազոնց Վարդապետի... մասն նրկորդ, հատոր Ա, 1802, Վենետիկ, էջ 486-630:

¹ Islandske Annaler indtil 1578, udgivne for det norske historiske Kildeskriftfond, Christiania, 1888, s. 52, 145, 150, 343, 386, 392, 393, 488.

² Նույն տեղում, էջ 150: Sbu նաև O. A. Øverland, *Illustreret Norges historie*, bind 3, Christiania, 1888, էջ 710:

³ Ուղևորութիւն Փիրգատեի Ղափանեցոյ, *Բազմապէս*, 1882, ք. 4, էջ 318:

ԳԼՈՒԽ Բ

ՇՓՈՒՄՆԵՐ XVIII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Ջուղահայ առևտուրը: Հայ-սկանդինավյան առնչությունների հաջորդ փուլը վերաբերում է արդեն ուշ միջնադարին և արտահայտվում է փոխայցելությունների ձևով: Այդ կապերի պատմության առաջին նշանակալից դրվագը կապված է հայ առևտրականների եվրոպական գործունեության, այդ թվում՝ սկանդինավյան երկրների հետ:

Սույն նյութն ամենասերտ առնչությունն ունի Ռուսաստանի հետ ջուղահայ վաճառականների տևական և լայն առևտրական հարաբերությունների իրողությանը: Այս թեման վաղուց անտի եղել է ինչպես հայ, այնպես էլ ռուս ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում (Գևոնդ Ալիշան, Հայկ Տեր-Աստվածատրյանց, Շուշանիկ Խաչիկյան, Վահան Բայրուրյան, Մ. Վ. Ֆելսներ, Ն. Գ. Կուկանովա)¹, և նշված բոլոր հեղինակներն էլ այս կամ այն չափով անդրադարձել են հյուսիս-եվրոպական երկրների հետ ջուղահայության ունեցած առնչություններին: Ջուղահայ առևտրի մասին արժեքավոր աշխատություններով հանդես են եկել և հարցին այս կամ այն չափով անդրադարձել են նաև Հարություն Տեր-Հովհանյանցը, Լեոն, Հարություն Քյուրտյանը, Արշակ Ալպոյաճյանը, Ժ. Անանյանը, Ռոբերտո Կյուլպենկյանը և ուրիշներ: Սույն խնդրին հիմնականում թուրքիկ անդրադարձել են նաև սկանդին-

¹ Տե՛ս Հայկ Տեր-Աստվածատրյանց, *Հայ վաճառականության Ռուսիայում*, Պարիզ, 1906: Մ. В. Фехнер, *Торговля русского государства со странами Востока в 16 веке*, Москва, 1952: Н. Г. Куканова, *Роль армянского купечества в развитии русско-иранской торговли в последней трети 17 в.*, *Краткие сообщения Института Народов Азии*, 30, 1961: Н. Г. Куканова, *Очерки по истории русско-иранских торговых отношений в 17-первом половине 19 в.*, Саранск, 1977: В. А. Байбуртян, *Армянская колония Новой Джульфы в 17 веке (роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях)*, Ереван, 1969: Շուշանիկ Խաչիկյան, 1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագիրը և Նոր Ջուղայի ինքնավար մարմինները, *Հայկազեան հայագիտական հանդես*, Պէրոս, հատոր Ը, 1980, էջ 259-288: Նույնի, *Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ 17-18-րդ դարերում*, Երևան, 1988: Ռ. Վ. Կյուլպենկյան, *Հայ-պորտուգալական հարաբերություններ*, Երևան, 1986, էջ 311-330: Վահան Բայրուրյան, *Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում*, Թեհրան, 1996, էջ 139-193:

նավցի, մասնավորապես շվեդ ուսումնասիրողները (Թուրե Արնե, Էյնար Էքեգորդ, Արահամ Վիլհելմ աֆ Սիլլեն):

XVI դարի վերջին և XVII դարի սկզբին անկախ պետականությունը վաղուց կորցրած հայ ժողովրդի մեջ անսպասելիորեն զարգացում է ապրել վաճառական դասը, կամ, ինչպես ընդունված է ասել, առևտրական խոջայությունը՝ Իրանի վաճառական դասի ընտրանին: Գրան նպաստել են մի շարք հանգամանքներ՝ Արևելք-Արևմուտք բաղաբական-տնտեսական կապերի ուժեղացումը, եվրոպական և ասիական երկրների միջև առևտրական միջնորդների անհրաժեշտությունը (իսկ որպես միջնորդներ բավականաչափ հարմար են եղել Արևելքի ամենատարբեր ծայրերում բնակվող քրիստոնյա հայերը), վերջապես՝ վաղնջական ժամանակներից առևտրական ավանդույթների առկայությունը հայության մոտ: Արևելյան բռնատիրության պայմաններում առևտուրը, ինչպես նշել է Լեոն, «միակն էր, որ բաց էր մնում նրա (այսինքն՝ հայի – Ա. Բ.) առջև, այս աշխարհի մեջ փառքի, վայելքի, տիրապետության հնարավորություն էր տալիս որոշ չափով»¹:

Հայ վաճառականների կատարած առևտրի կարևորությունը եվրոպական տնտեսության և կենցաղի համար հատկապես նշանակալի է այն առումով, որ նրանք արտահանել են այնպիսի արժեքավոր ապրանքատեսակ, ինչպիսին իրանական մետաքսն էր: Հիշենք, որ հայերը մետաքսի առևտրում նոր չեն եղել: Ամբողջ աշխարհում հարգի այս ապրանքատեսակը, որ հիշատակել են տակավին Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին, հայերն աշխարհին են հասցրել անհիշելի ժամանակներից ընդհուպ մինչև Ի դարի սկիզբը: Հայերը մետաքսը ոչ միայն արտածել են Եվրոպայից մինչև Չինաստան և Ֆիլիպիններ, այլև արտադրել են: Նորջուղայեցիների ունեցած մասնավոր առնչությունը մետաքսագործությանը պատահական չէ, քանի որ այն փոխանցվել է սերնդեսերունդ: Անգլիացի ճանապարհորդ Արթուր Էդուարդսը 1566 թվականին տեղեկացրել է, որ մի հայկական գյուղ տարեկան 400 կամ 500 ջորիի բեռ մետաքս է տանում Հալեպ: Ըստ Հարություն Քյուրտյանի՝ հիշված գյուղը հայ առևտրական կենտրոն

¹ Լեո, *Նրկերի ժողովածու*, հ. 3, Երևան, 1969, էջ 150:

հին Ջուղան է¹: Ինչպես վկայել է ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավեռնիեն՝ Շահ Աբբաս Ա-ն, բռնագաղթեցնելով հայերին Սպահան, նրանց ձեռքն է տվել մետաքսի առևտրի իրականացումը՝ ապրանքներ փոխ տալով: Ողջ XVII հարյուրամյակի ընթացքում հայերն առաջնային դիրք են ունեցել այս ապրանքատեսակի արտահանման գործում, իրանական մետաքսի առևտրում միջնորդ դեր են կատարել Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի երկրների միջև: XVIII դարի կեսերին հայերի տեսակարար կշիռը մետաքսի ներմուծման գործում 70 տոկոսից չի իջել, որն ավելի բարձր է եղել, քան այլ ազգերի վաճառականների ներմուծումը²:

Նոր Ջուղայի հայ առևտրականների եվրոպական գործունեության վերաբերյալ վկայություններ կան ինչպես հայ, այնպես էլ եվրոպական աղբյուրներում, մասնավորապես՝ ճանապարհորդների ուղեգրություններում: Ինչ վերաբերում է Հյուսիսային Եվրոպայի հետ կատարած առևտրին, ապա այս մասին հայկական սկզբնաղբյուրներ գրեթե չկան, այլ դարձյալ Արևելքում ճամփորդած եվրոպացիների նոթերը և եվրոպական արքունիքներին հղված պաշտոնական գրագրություններն են որոշ ինֆորմացիա պարունակում դրա վերաբերյալ:

Նոր Ջուղայի հայ առևտրականներն Արևմտյան Եվրոպա և մասնավորապես հյուսիս-եվրոպական պետություններ նախապես հասել են Օսմանյան կայսրության ճանապարհով: Հայ վաճառականների՝ Սկանդինավիայի հետ ունեցած առաջին հիշատակությունը հանդիպում ենք իտալացի դիվանագետ Վինչենցո Գ'Ալեսսանդրիի նոթերում, սակայն դրանք եղել են լեհահայ վաճառականները: Գ'Ալեսսանդրին 1571 թվականին գրված իր ուղեգրական նոթերում հիշել է, որ լեհաքնակ հայ խոջաները Իրանից տարբեր ապրանքներ (մասնավորապես միտկալ) ցամաքային ճանապարհով հասցրել են Թավրիզից Կոստանդնուպոլիս, որտեղից արտահանել են Բուդղանիա, այսինքն՝

¹ Ցարոսին Քիրտեան, *Նիսիեր հայ վաճառականության պատմության համար. հում մետաքսի վաճառականությունը և հայերը* (առանձնատիպ Բոսթոնի «Հայրենիքից», առանց թվականի նշան), էջ 11:

² Ժ. Անանյան, *Հայ վաճառականությունը Ռուսաստանում* (17-րդ դ. վերջ – 19-րդ դ. սկիզբ), *Էջեր հայ գաղթավայրերի պատմության*, խմբ. Վ. Բարխուդարյան, Զ. Եկավյան, Երևան, 1996, էջ 196:

Մոլդովա, ապա Լեհաստանի վրայով արտածել Գանիա և Շվեդիա: Ըստ այս հեղինակի՝ չնայած մեծ ծախսերին, հայերի ստացած շահույթը շատ քիչ է եղել, «հակառակ այքը առնված վտանգի, ինչպես պատմեցին ինձ մի քանի հայեր, որոնց ես հանդիպեցի Թավրիզում, և հետո Տրապիզոնում»¹: Իսկ նորջուղայեցիների՝ Շվեդիա ապրանքներ արտահանելու վերաբերյալ եվրոպացիներից թերևս առաջինը վկայել է ֆրանսիացի կրոնավոր Ռաֆայել դյու Մանը (1613–1696), որը 1644 թվականին հրատարակած «Պարսկաստանի պետությունը» աշխատության մեջ հիշել է, որ իրանահայ առևտրականներն ապրանքներ են արտահանել Մոսկվա, Շվեդիա, Լեհաստան և Գերմանիա²:

Նոր Ջուղայում գործել է «Հայ առևտրական ընկերություն», որին էլ պարսից շահը տվել է իրանական հում մետաքսն արտահանելու մեծաշնորհը: Տասնամյակներ շարունակ այս ընկերությունը միտկալը Եվրոպա է արտահանել Օսմանյան կայսրության ճանապարհներով՝ վճարելով բարձր մաքսատուրքեր: Առհասարակ, մեկ դարից ավելի, 1560-1670-ական թվականներին ավանդական առևտրական ուղիները Սև և Կասպից ծովերի վրայով դեպի Հյուսիս մեծ նշանակություն են ունեցել եվրոպական, հատկապես անգլիական առևտրի համար: Այնուհետև Անգլիան և Հոլանդիան ուղղակի ծովային ճանապարհներ են հաստատել օսմանյան տարածքներով. արդյունքում՝ Արևելք-Արևմուտք կապերում ռուսական երթուղիները դարձել են պակաս նշանակալից: Սակայն ԺԷ դարի երկրորդ կեսին Ռուսաստանի հետ կապը դարձյալ ուշադրության է արժանացել թե՛ եվրոպացիների և թե՛ հայերի կողմից: Այսպես, 1670-ականներին հոլանդացիները հաջողեցրել են ռուսական կառավարությունից իրավունք ստանալ իրենց տարածքներով առևտուր անել Հայաստանի և Պարսկաստանի հետ³: Իրենց հերթին ջուղահայերը փորձել են գտնել արևելյան ապրանքները Եվրոպա հասցնելու առևտրական այլ, ավելի հարմար ուղիներ՝ նախընտրելով Ռուսաստանը: Տարեցուտարի Եվրոպայում մեծացել է պարսկական և

¹ Հովի. Հակոբյան, *Ուղեգրություններ*, I, Երևան, 1932, էջ 348:

² Stu John Garswell, *New Julfa: the Armenian Churches and Other Buildings*, Oxford, 1968, էջ 76-77:

³ Einar Ekegård, *Studier i svensk handelspolitik under den tidigare frihetstiden*, Uppsala, 1924, s. 86.

հնդկական ապրանքների պահանջը, հատկապես հում և մշակված մետաքսի, որը չէին կարող բավարարել օսմանյան և սիրիական նավահանգիստները և Օսմանյան կայսրության երկար ու վտանգավոր ճանապարհները: Լեանտական առևտուրը մեծ դժվարությունների է հանդիպել և ապահով չէր պատերազմների ու ծովահենների պատճառով: Օսմանյան իշխանությունների տարածայնությունները դժվարացրել են քարավաններով կատարվող առևտուրը Պարսկաստանից Օսմանյան կայսրություն և Միջերկրական ծով, ուստի Ռուսաստանով ճանապարհը թեև մի քիչ երկար, սակայն ավելի ապահով էր: Մյուս կողմից, իր հերթին, ԺԷ դարի կեսին Շվեդիան որոշակի հետաքրքրություն է ցուցաբերել Արևելքի երկրների և մասնավորապես՝ Պարսկաստանի նկատմամբ, ինչպես նաև զնայով մեծացել և ուժեղացել է առևտրական քաղաքականությունը Շվեդիայի ու Ռուսաստանի միջև: Պարսկաստանն էլ իր հերթին, թշնամաբար տրամադրված լինելով իր մրցակից Օսմանյան կայսրության հանդեպ, հետաքրքրված էր Ռուսաստանի և նրա միջնորդությամբ՝ Արևմտյան Եվրոպայի հետ առևտրական հարբերություններ հաստատելու հարցով:

Նոր Ջուդայի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչներից առաջինը խոջա Ջաքար Շեհրիմանյանն էր, որ 1660 թվականին մեկնել է Մոսկվա՝ Ռուսաստանի ճանապարհով Եվրոպայի հետ առևտրի վերաբերյալ բանակցելու նպատակով: Նրանից վեց տարի անց՝ 1666 թվականին, Մոսկվա բանակցությունների են մեկնել Նոր Ջուդայի հայ առևտրական ընկերության երկու այլ գործակալներ՝ Գրիգոր Լուսիկովը (Գրիգոր Մատթեոսյան Լուսիկյան-Լուսիկենց) և Ստեփան Ռամադանսկին (Ստեփան Մովսիսյան Ըռամադյանենց), որոնց ուղեկցել են քառասուն հայ վաճառականներ և արհեստավորներ: Այս անձինք եղել են Նոր Ջուդայի ինքնավար մարմինների կողմից լիազորված բանագնացներ¹: Նրանք Մոսկվայում պարսկական ապրանքների համար տարանցիկ ճանապարհի իրավունք են խնդրել՝ ռուսական քաղաքների վրայով Արխանգելսկ, որից հետո Սպիտակ կամ Հյուսիսային ծովերով՝ Սկանդինավիա և Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներ հասցնելու նպատակով:

¹ Ե. Խաչիկյան, Նոր Ջուդայի հայ վաճառականությունը..., էջ 25:

Ռուսիայի ցար Ալեքսեյ Միխայլովիչը 1667 թվականի մայիսի 31-ին հատուկ շնորհագրով հայերին իրավունք է տվել Կասպից ծովի և Վոլգայի ճանապարհով հում մետաքսը Եվրոպա հասցնելու, Ռուսաստանի ճանապարհով մտնելու Շվեդիա և այնտեղից՝ այլ եվրոպական երկրներ: Սույն շնորհագիրն ըստ էության ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռուս-իրանական առևտրական պայմանագիր¹: Ինչպես այս առնչությամբ իրավագիտորեն նկատել է պատմաբան Վ. Ոսկանյանը, ռուսական կողմը շահագրգռված էր «ռուսական առևտրի մեջ ներգրավելու հարուստ, դյուրաշարժ, փորձառու և ռիսկի զնացող հայ վաճառականներին, որոնք հավասարապես լավ գիտեին տնտեսությունն ու առևտուրը, լեզուն և բարբերը ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի՝ Իտալիայից մինչև Շվեդիա, Թուրքիայից մինչև Հնդկաստան»²:

Այսպիսով, հայ վաճառականներն այլևս կարիք չեն ունեցել օսմանյան ուղիներով անցնելու: Մակայն 1667 թվականի համաձայնագիրը չի իրագործվել՝ նույն տարի բռնկված Ստեփան Ռազինի գյուղացիական ապստամբության պատճառով, որը մինչև 1670 թվականը փակել է կասպյան և վոլգյան ճանապարհները: Ջուդահայ առևտրականների և Ռուսիայի միջև առևտրական նոր համաձայնագիր է ստորագրվել 1673 թվականի փետրվարի 7-ին, և 1676-ի հուլիսի 17-ին ռուսական կառավարությունը թույլատրել է հայ վաճառականներին գործադրելու տրված արտոնությունը՝ պարսկական ապրանքներն ազատորեն Ռուսիայի ճանապարհով Արխանգելսկ քաղաքով Եվրոպա փոխադրել: Ահա այս արտոնագիրն էլ մեծապես նպաստել է Ռուսաստանի հետ հայ վաճառականության առևտրի բարգավաճմանը: Ինչպես ցույց է տվել պատմաբան Վահան Բայրուրյանը՝ 1676-ից մինչև 1686 թվականն ընկած շրջանում հայ առևտրականների այցելությունների կեսից ավելին ընկել է Ռուսաստանի արևմտյան շրջաններին, ինչն ապացուցում է, որ ռուսական կառավարության հետ առևտրական պայմանագիր կնքելիս հայ վաճառականների գլխավոր նպատակը

¹ Վահան Բայրուրյան, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը..., էջ 158:
² В. Восканян, Ново-торговый Устав и договор с Армянской торговой компанией в 1667 г., *Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտություններ*, 1947, ք. 6, էջ 43:

եղել է առևտուրը Շվեդիայի, Հոլանդիայի և արևմտաեվրոպական մյուս պետությունների հետ¹:

Նոր Ջուդայի հայ վաճառականները մետաքսեղենը և մյուս ապրանքները ճամփա են հանել Սպահանից ցամաքի ճանապարհով դեպի Թավրիզ, այնտեղից՝ Շամախի, որտեղից մուտք են գործել Կասպից ծով և նրա վրայով փոխադրել Աստրախան: Այնուհետև Աստրախանից վեր, Վոլգա գետով, ապա Կոստրոմայի տարածքով ապրանքները հասցվել են նախ Մոսկվա և այնտեղից էլ՝ Արխանգելսկ: Սպիտակ ծովում էլ ապրանքները բեռնավորվել են ռուսական կամ շվեդական նավերի վրա և ծովային ճանապարհով ուղևորվել դեպի եվրոպական երկրներ: Երբեմն առևտրականներն ընտրել են ցամաքային ուղին՝ դեպի Արևմուտք անցնելով ուղղակի ներկայիս Ֆինլանդիայի տարածքով և Սկանդինավյան թերակղզու վրայով: Ինչպես երևաց, սա եղել է առևտրական մեծ ճանապարհ, որն, ըստ Պետերբուրգի հայ գաղթօջախի հետազոտող Ավգուստին Նիկիտինի, վաղ ժամանակներից կոչվել է «հայկական»: Այդ ճանապարհը հայերին ավելի հայտնի էր, նախքան Իվան Ահեղ կայսրը թույլ կտար անգլիացիներին մուտք գործել Ռուսաստան²: Եվ իսկապես, եթե իրանա-ռուսական առևտրում հայ առևտրականներից բացի մասնակցություն են ունեցել նաև որոշ պարսիկներ և ազերիներ, Ռուսաստանի վրայով Արևմտյան Եվրոպայի հետ տարանցիկ առևտրով զբաղվել են բացառապես հայ վաճառականներ³: Կարճ ժամանակահատվածում պարսկահայ վաճառականների Կասպ-Վոլգյան ճանապարհը ձեռք է բերել միջազգային առևտրական նշանակություն:

«Հայկական ճանապարհի» վերաբերյալ մի շարք տվյալներ կան Ամստերդամում 1699-ին լույս տեսած Դուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի...» վաճառականներին հասցեագրված ուղեցույց-գրքում, որտեղ հեղինակը մասնավորապես նշել է այդ ճանապարհին գտնվող քաղաքներում տարանցիկ առևտրականներից գանձվող մաքսերի չափերը. «Ով ուզէ ապրիշում տանել

Մոսկովն. ի Հաշտարխան (sic) կու կշոեն. մէկ փութին մին թուման՝ 6000 դիան կու հաբեն. 1000 դիանին՝ 50 դիան գոմրուկ կառուն: Մէկ փութի փողի ջամն լինի՝ 800 դիան: Հաշթարխանու մինչև ի Մոսկովն՝ մին փութին 1000 դիան քիրայ կառնուն: ...Մոսկովու մինչև յ'Արխանցկայ՝ մին փութին 300 դիան քիրայ առնուն»¹: «Մարդամու թէ գնաս Արխանցկայ՝ Նովգորոյ, Էսմոլենցկայ, որ գնա ի Մոսկովն, այս 3 տեղեայս գոմրուկ չես տալ. ամա մին փութին 500 դիան քիրա կառնուն մինչև ի Մոսկովն. սապէս Մոսկովէն չորի Հաշթարխան, էլ գոմրուկ չկայ, միայն նավի (sic) քիրայ կու տաս չորի Նիագովայ, որպէս Մոսկովի Թագաւորի հրաման է եղած»²: Դուկաս Վանանդեցին, քվարկելով աշխարհի երկրները, նշել է նաև թագավորների նստավայրերը. «Գանիմարքին ի Կոպնիագ, Շուեթին՝ ի Ըստօքսլ»³, նաև սկանդինավյան երկրներին պատկանող կղզիները. «Բալթիկ կամ Տանձկայ ծովումն ունի Ջէյլանդ, Գօրլանդ, Օյլանդ»⁴:

Ջուդայեցի առևտրականները Ռուսաստանից մուտք են գործել նախ Շվեդիա, ապա իջել Դանիա, Հոլանդիա, Գերմանիա և եվրոպական մյուս երկրները: Նրանք վերադարձել են նույն ճանապարհով՝ Ամստերդամի և Ստոկհոլմի վրայով Ռուսաստան, այնտեղից Իրան՝ իրենց հետ տանելով եվրոպական ապրանքներ: Չի կարելի կարծել, թե բոլորովին անվտանգ է եղել այս երկար ճանապարհը. հայ առևտրականները ցամաքում ենթարկվել են տարբեր կիսաքոչվոր ցեղերի, իսկ Հյուսիսային և Բալթիկ ծովերում՝ ծովահենների հարձակումներին, ճանապարհին կրել ռուսաստանյան դաժան կլիմայի հետ կապված գանգան փորձություններ և դժվարություններ, գանձվող մաքսատուրքերն էլ եղել են բարձր, ռուսական մաքսատներում հաճախ անօրինություններ են կատարվել: Բացի այդ, Ռուսաստանի հարավում բռնկվող գյուղացիական խռովությունները նույնպես խոչընդոտել են առևտրին:

¹ Դուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի, որ է գիտութիւն ամենայն տեսակ կշոց, չափոց և դրամոց, որով բոլոր աշխարհի վաճառականութիւն վարի*, Ամստերդամ, 1699, էջ 37-38:

² Նույն տեղում, էջ 38-39:

³ Նույն տեղում, էջ 53:

⁴ Նույն տեղում, էջ 52:

¹ Նույն տեղում, էջ 173:

² Архиепископ Августин (Никитин), Армянская христианская община Петербурга, *Нева*, Санкт Петербург, 1996, н. 10, стр. 234.

³ Վահան Բայրութիան, *Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը...*, էջ 177:

Բնական է, որ նման հարուստ քարավանների անցումը ցանկացած երկրի համար շահավետ կլիներ, ուստիև ինչպես ռուսական, այնպես էլ շվեդական արքունիքները ցանկացել են դեպի իրենց երկիրը գրավել հայերի առևտրական ուղին՝ ձգտելով հայ վաճառականների հետ արևելյան առևտրի մենաշնորհը իրենց դարձնել: Այդ հարցում մասնավոր շահագրգռվածություն է ունեցել նաև Շվեդիան, որի քաղաքավոր Կառլ XI-ը Արխանգելսկով անցնող ճանապարհը համարել է շափազանց երկար և անուղղակի և քննել է ջուղայեցիների առևտուրը Սկանդինավիայի ճանապարհով փոխադրելու հարցը: Այն դեպքում, երբ Արխանգելսկ հնարավոր էր կատարել տարին ընդամենը մեկ ուղևորություն, ապա Բալթիկ ծովի նավահանգիստներից մեկով հնարավոր կլիներ իրականացնելու մեկից ավելի ճանապարհորդություն: Բացի այդ, հայերը Միջերկրական ծովով առևտուր կատարել են Հոլանդիայի հետ, որ նշանակալից կորուստներ է ունեցել ֆրանսիական ծովահենության պատճառով, ուստիև Հոլանդիա մուտք գործելը Բալթիկ ծովի ճանապարհով պիտի որ ավելի հարմար թվար:

Շվեդիայի Առևտրական խորհուրդը 1679 թվականին հոլանդական ծագումով գեներալ-լեյտենանտ Լյուդվիգ Ֆաբրիցիուսին (1648–1729) ընտրել է որպես պարսկական առաքելության ղեկավար, որը փորձելու էր Մոսկվայում բանակցել հայերի առևտուրը Բալթիկ ծովով իրականացնելու հարցի շուրջ: Հենց սկզբից էլ այս նախաձեռնությունն արժանացել է ռուսական իշխանությունների համաձայնությանը, որոնք չէին կարող ուղղակիորեն մերժել երկկողմանի առևտուրը, որովհետև ինչպես պարսկական, այնպես էլ շվեդական հպատակները պայմանագրային իրավունք են ունեցել ռուսական տարածքներով առևտուր իրականացնելու: Սակայն ռուսներն, այնուամենայնիվ, ցանկացել են, որ առևտրական ուղին լինի ավանդական ճանապարհով՝ ռուսական ամենակարևոր առևտրական նավահանգիստ Արխանգելսկի վրայով: Դա ամենևին էլ չէր բարելավում շվեդական առևտրի իրականացումը, հետևաբար Շվեդիայի քաղաքավոր Կառլ XI-ը 1683-ին Ֆաբրիցիուսին ուղարկել է մեկ այլ փորձ կատարելու, այս անգամ՝ որպես շվեդական ղեսպանորդ: Ֆաբրիցիուսի ղեկավարությամբ մի պատվիրակություն ճանապարհ է ընկել Իրան՝ հայ առևտրականների

հետ բանակցելու պարսկական առևտրի ուղին Շվեդիայի ճանապարհով փոխելու վերաբերյալ: Ռուսաստանում Ֆաբրիցիուսը ստացել է կառավարության համաձայնությունը՝ հայ վաճառականներին Արևմրտյան Եվրոպա մեկնելու թույլտվություն տալ Նովոգորոդից կամ Նարվայից (Ֆիննական ծոցից ութ մղոն հեռավորության վրա գտնվող նավահանգիստ, որն այդ ժամանակ շվեդական տարածք է եղել): Ֆաբրիցիուսին հանձնարարվել է նաև ուսումնասիրել այն ուժերը, որոնք կապված էին Ռուսաստանում որոշակի շրջանների հետ, որոնք փորձում են սահմանափակել շվեդ-պարսկական առևտրական ծրագրերը:

Ժամանելով Իրան՝ Ֆաբրիցիուսը Սպահանում բանակցել է Մուլեյման շահի (իշխել է 1666–1694 թթ.) հետ: Հետագայում գրած «Իմ կատարած երեք ուղևորությունների համառոտ զեկուցում. 1679–1682» հուշագրության մեջ Ֆաբրիցիուսը մասնավորապես հիշել է, թե ինչպես Նոր Ջուղայում «...ինձ մոտ եկավ հայերի ավագը և հաղորդեց, որ մեծ վեզիրից հրահանգ է ստացել՝ քննարկելու և ինձ հետ խորհրդակցելու, թե ինչպես լավագույն ձևով Ռուսաստանի միջոցով պարսկական առևտուրն ուղղորդել Շվեդիա, և գործի մեծ կարևորության պատճառով նրան պետք կլինի այդ քննարկմանը կանչել ամենահարուստ վաճառականներից մի քանիսին: Մի քանի օր անց ավագը բանբերի միջոցով ինձ հարցրեց, թե արդյոք ես պատվի չե՞մ արժանացնի իրենց՝ գալով նշանակված գրույցին: Ես առանց հապաղելու թոա թամբի վրա: Երբ գնացի ավագի մոտ, այնտեղ գտնվում էին մոտ 20 հոգի հնագույն և ամենահարուստ վաճառականներից: Երկար խոնարհումներից հետո ավագն ինձ խնդրեց նստել բազկաթռռին, իսկ ինքը և բոլոր մյուսները նստեցին հատակին: Ապա ավագը կանգնեց, խաչակնքեց և ասաց. «Տե՛ր Մուլեյմանի հրամանով մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի պարոն ղեսպանորդից իմանանք, թե ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով մեր բանակցությունները կարող են մեզ հասցնել Շվեդիայի հետ առևտրի, քանի որ մենք հիշում ենք մեզ հասցված մեծ կորուստը, երբ մեր ընկերակիցները մի քանի տարի առաջ պատրաստվում էին մեկնել Ռուսաստան և ապա Արխանգելսկով՝ Հոլանդիա, և նրանց դժբախտությունը պատահեց. ֆրանսիացիներն ամբողջովին ջախջախեցին նավատորմը

և տարան Դյունկերկ, ինչը մեզ անհատուցելի վնաս պատճառեց, քանի որ բեռը կազմված էր 400 հակ լավագույն մետաքսից, որի հետևանքով մեր ընկերակիցները զգուշանում են իրենց ապրանքները Ռուսաստան կամ նրա միջով ուղարկել»։ Մրան ես պատասխանեցի, որ եղածը չես շտկի, պետք չէր տեղի տալ ռուսների, հոլանդացիների և անգլիացիների պայմաններին, քանի որ նրանց համար լավագույն ճանապարհը գնում է Նովոբորոդից Նարվա կամ Ռևել և հետո Լյուբեկ՝ Բալթիկ ծովով, մանավանդ որ ցարը գրավոր խոստացել է թույլատրել նրանց երկկողմանիորեն տեղափոխել ապրանքներն իր տիրույթներով և վաճառել դրանք՝ ապահովագրելով ջրի, կրակի և նման անհաջողությունների դեպքերից, որ կարող են պատահել ինչ-որ տեղ նրա հողում։ Դրա համար էլ նրանք կարող են օգտվել այդ երաշխիքից և պակաս բան չեն կարող սպասել Շվեդիայի թագավորից։ Ժամանելով Նարվա՝ նրանց նավերով կապահովեն մյուս օտարերկրացիներից շուտ, սակայն ապրանքները, որոնք սպասում են Ստոկհոլմում, նրանք պետք է առաջին հերթին ուղարկեն այնտեղ։ Դրա հետ մեկտեղ ես նրանց թագավորի անունից խոստացա, որ երկու տարի նրանք առևտուր կանեն առանց մաքսի։ Ամեն դեպքում ստիպված էի երկար համոզել այդ մարդկանց, և ոչ այնքան պարսիկներին, որքան հիշածս եվրոպացիներին։ Նրանք հավատացնում էին, որ իբր շվեդներն այնպիսի մարդիկ են, որոնք միայն լավ կարող են սուսեր բանեցնել, ոչինչ չեն հասկանում առևտրական գործերից և դրա հետ մեկտեղ՝ հազվադեպ են իրենց խոսքի տերը լինում։ ...Ես փորձեցի իմանալ պարոն հայերից, թե ով է այդպես վատ արտահայտվել շվեդների մասին, որոնց կոկորդը ես կկտրեի։ Բայց քանի որ այդ մարդիկ հին ժամանակներից գործմական հարաբերություններ են ունեցել միմյանց հետ, ինձ ոչինչ չհաջողվեց պարզել։ Սակայն ես զեկուցեցի մեծ վեզիրին, որ չնայած հայ վաճառականները բավական հակված են առևտուրն իրականացնել շվեդական նահանգներով, ամեն դեպքում նրանց ինչ-որ գրպարտիչ վախեցրել է, այդ պատճառով ես պատրաստ եմ որպես պատանդ մնալ այնքան ժամանակ, մինչև որ նրանք կվերադառնան իրենց ուղևորությունից։ Ի պատասխան մեծ վեզիրն ասաց, որ դա մեծագույն անարդարություն կլինի, քանի որ իմ ամենատրոմած թագավորն իր տիրոջը և

պարսից տիրակալին գրել է, որ ինձ լիովին վստահեմ իմ բոլոր ձեռնարկումներում, ուստիև վաճառականները պետք է օրհնվեն և իմ ուղեկցությամբ մեկնեն Շվեդիա»¹։

Այսպիսով, առաջին նորջուղայեցի հայ վաճառականները 1687 թվականի սեպտեմբերին ոտք են դրել Շվեդիայի մայրաքաղաք՝ Լյուդվիգ Ֆարրիցիուսի ընկերակցությամբ։ Շվեդական աղբյուրում նրանց անունները հիշված են որպես Anusch Wettersson, Sephir Nersisson, Melikna Anuschsson և Narita Paulsson af Siaherinof Anuschsson։ Միևայս հայերին Կառլ XI թագավորը և շվեդ հասարակությունն արժանացրել են բարեհաճ ընդունելության։ Թագավորական հատուկ հանձնաժողովը բանակցություններ է վարել նրանց հետ։ Հատկանշական է, որ եթե ռուսները հաճախ խոչընդոտել են հայերին (այս այցի ժամանակ նրանք ստիպել են Ֆարրիցիուսին մետաքսը բավական էժան գնով վաճառել), ապա շվեդներն ավելի բարեհաճ են եղել։ Այս նույն ուղևորության ընթացքում դժվարություններ են ծագել Շվեդիայում մետաքսի մեծ քանակի համար գնորդ գտնելու գործում. այնժամ հայերին մեծ օժանդակություն է ցույց տվել Ստոկհոլմի քաղաքապետը, որը գնել է ամբողջ ապրանքը։

1687 թվականի սեպտեմբերի 27-ին Ստոկհոլմում վերոհիշյալ չորս հայ վաճառականները պայմանագիր են կնքել Շվեդիայի արքունիքի հետ և նախնական պայմանավորվածության համաձայն՝ ձեռք բերել երկու տարվա ազատ առևտրի իրավունք։ Պայմանագրի շարադրանքի ձեռագիրը (վեց էջ) պահվում է Ստոկհոլմի Թագավորական գրադարանում²։ Գոյություն ունի նաև սույն վկայագրի ֆրանսերեն քարգամությունը, որից կարելի է ենթադրել, որ հայ առևտրականները շվեդների հետ հաղորդակցվել են ֆրանսերենով, քանի որ այն տա-

¹ Людвиг Фабрициус, Краткая реляция о трех совершенных мною путешествиях, [1679—1682], *Восточная литература* (<http://www.vostlit.info/Texts/rus5/Fabricius/frameset1.htm>), 2009, стр. 148-149. Ֆարրիցիուսի առաքելության մասին տես Շ. Շեֆերի առաջաբանը Ռաֆայել դյու Մանի ուղեգրության հրատարակության մեջ (*Estat de la Perse en 1660 par P. Raphaël du Mans*, Paris, 1890, p. LIX):

² Afshandling med de hitkomne armenianiske köpmän, 17 Sept 1697. Kungliga Bibliotek Stockholm, Nominalkatalog, Armenien, Engestränd, B.11.1.7. (nr. 26). Վկայագիրը մեզ սիրահոժար տրամադրել է Արամ Հելսթրադիուս Քյոթթյանը (Ստոկհոլմ)։

րածված լեզու է եղել XVII դարի Շվեդիայում: Ըստ այս պայմանագրի՝ հայերին իրավունք է տրվել սեփական առևտրական կենտրոններն ունենալ Ստոկհոլմում և Նարվայում: Շվեդական արքունիքի օժանդակությամբ Նարվայում հայերի համար նախատեսվել է կառուցվել առևտրական տուն, որի հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև հայ վաճառականների կարիքները պարտավորվել են հոգալ շվեդական իշխանությունները: Հայերին իրավունք է տրվել մուծել երկու տոկոս մաքս՝ պարսկական և մեկ տոկոս մաքս՝ եվրոպական ապրանքների համար, ընդ որում, Նարվայում գնված և Պարսկաստան տարվող ապրանքների համար մաքս չպիտի գանձվեր երեք տարի և ավելի ժամանակով¹: Այսպիսով, Արխանգելսկի վրայով կատարվող պարսկական արտահանության դիմաց աճել է Նովգորոդի վրայով տեղի ունեցող արտահանումը:

Ովքե՞ր են եղել այս չորս հայ վաճառականները, որոնց հետ կնքվել է սույն պայմանագիրը: Շվեդական աղբյուրում հիշված Անուշ Վեթերսոնի և Մեֆիր Ներսիսոնի անունները ռուսական աղբյուրում հիշված են Անուշ Վարդանով (Վարդանյան) և Սաֆար Վասիլ ձևերով: Բանի որ վերջինիս անունը շվեդական աղբյուրում նշված է Ներսիսոն, կարելի է ենթադրել, որ նրա ազգանունը եղել է Ներսեսյան, ոչ Բարսեղյան: Մելիքնա Անուշովը հավանաբար եղել է Մելիք Անուշյան, իսկ Պաուլսոնը՝ Պողոսյան: Հայտնի է, որ Անուշ Վարդանովը և Սաֆար Վասիլը 1688 թվականի օգոստոսին Շվեդիայից բերած իրենց ապրանքները Մոսկվայից Աստրախան տանելու թույլտվություն են խնդրել: Վարդանովն ունեցել է հիմնականում կտորեղեն և հայելիներ, Վասիլը, մահուդից և հայելիներից բացի՝ նաև մեծ քանակությամբ մանր ապրանքներ (դանակներ և պատառաքաղներ, կողպեքներ, թանաքամաններ, ասեղներ), ինչպես նաև 50 գիրք²: Ի դեպ, հետագայում, 1710 թվականի մարտի 13-ին, Սաֆար Վասիլը խնդրագիր է ներկայացրել ռուսաց կայսր Պետրոս Մեծին՝ խնդրելով իրեն տրամադրել հարմար վայրեր՝ Ռուսաստանում մետաքսագործությունը զարգացնե-

լու նպատակով: Նա նաև թույլտվություն է խնդրել Իրանից հրավիրել մետաքսագործ արհեստավորների: Պետրոս Մեծը բավարարել է այդ խնդրանքը, և այդպիսով Սաֆար Վասիլը հիմնադրել է ռուսական մետաքսագործության առաջին գործարանը Թերեքում¹: Հետաքրքիր է, որ Վասիլը հետագայում ևս, ջուղահայ առևտրի ավարտից հետո էլ որոշ առնչություններ է ունեցել Շվեդիայի հետ: Պետրոս Մեծն ընդառաջել է Վասիլի և այլ հայ վաճառականների խնդրանքը՝ ապրանքների արտահանման նպատակով Արխանգելսկի փոխարեն օգտագործել Նովգորոդ և Ռուգոդև նավահանգիստները, թույլատրել է ապրանքներ արտահանել ու ներմուծել ինչպիսի նավերով որ ցանկանան, թեկուզև դրանք լինեն հակառակորդի՝ շվեդական²:

1697 թվականի կեսին Լյուդվիգ Ֆաբրիցիուսը մեկ այլ պատվիրակության հետ երկրորդ անգամ է ուղևորվել Պարսկաստան, հանդիպումներ ունեցել Հուսեյն Ա շահի (1694–1722) հետ, քննարկել շվեդ-պարսկական տնտեսական հարաբերությունների հետագա հեռանկարները և 1699-ի կեսին վերադարձել է Շվեդիա:

Նովգորոդյան ճանապարհի բացումից հետո հայ վաճառականներն ընդլայնել են Եվրոպա ներմուծվող ապրանքների տեսականին՝ միտկալից և իրանական արտադրության ավանդական ապրանքատեսակներից բացի տանելով հնդկական և այլ արևելյան ապրանքներ՝ զենքեր, թամբեր, համեմունքներ, ներկեր, ուղտի բուրդ, այլ կտորեղեն, քանկարժեք քարեր, մասնավորապես՝ զմրուխտ և մարգարիտ:

Կարևոր է գիտակցել սույն տնտեսական կապերի քաղաքական նշանակությունը: Իրանի և եվրոպական երկրների միջև հաստատված առևտուրը հետապնդել է նաև այլ նպատակներ: Ըստ ռուս ուսումնասիրող Ջևակիին՝ Արխանգելսկը Նարվայով փոխարինելու գործում Ռուսաստանի համաձայնությունը պայմանավորված է եղել նաև այն հույսով, թե Իրանն անհրաժեշտության դեպքում հանդես կգա Օսմանյան կայսրության դեմ: Բացի այդ Ռուսաստանը միացել էր եվրոպական երկրների հակաօսմանյան դաշինքին՝ «Սրբազան լիգային», այդ պարագաներում «Մոսկվայում հայերի առևտուրը Շվեդիայի հետ դիտ-

¹ Einar Ekegård, *Studier i svensk handelspolitik...*, s. 87-92. Ture J. Arne, *Svenskarna och Österlandet*, Stockholm, 1952, s. 59-60.

² *Армяно-русские отношения. Сборник документов, т. I, Армяно-русские отношения в XVII веке*, ред. В. А. Парсамян, Ереван, 1953, стр. 197.

¹ Վահան Բայրուրդեան, *Համաշխարհային առևտուրը և իրանահայտիներ...*, էջ 183:

² Նույն տեղում, էջ 185:

վում էր որպես Ռուսաստանի կապերը այդ երկրի հետ ամրապնդող կարևորագույն քաղաքական քայլ: Բնավ պատահական չէ, որ հակասամանյան դաշինքի մեջ Ռուսաստանի մտնելուն նախորդեց հայերին Նովոգորոդի վրայով Շվեդիա մեկնելու իրավունքի տրամադրումը¹:

Հատկապես 1696–1697 թվականներին հայ վաճառականների տարբեր խմբեր Շվեդիա անցնելու խնդրանքով մի շարք դիմումներ են հղել Պետրոս Մեծ կայսերը²: Ռուսական սկզբնաղբյուրներում պահպանվել են Շվեդիայի հետ առևտուր կատարած մի շարք հայ վաճառականների անունները, որոնք տրված են ռուսական ձևերով՝ ազգանունների «յան» վերջավորությունը փոխարինվել է «ով»-ով, աստվածաշնչյան անունները քարգմանվել են ռուսերեն, իսկ երբեմն անունները, համաձայն ռուս իրականության մեջ ընդունված կարգի՝ խնդրագրերում հիշատակվել են փոքրացուցիչ-նվաստացուցիչ ձևերով:

Առաջին ջողահայ առևտրականներից մեկը, որի անունը հիշված է վավերագրերում, եղել է Սիմեոն Ավդայանը, որը 1676–1692 թվականներին Իրանից մետաքսեղեն է տարել Շվեդիա և եվրոպական այլ երկրներ ու վերադարձել նոր ապրանքներով: Նորջուղայեցի Պյոտր և Բոգդան Ամիրով (Պետրոս և Աստվածատուր Ամիրյան) եղբայրները, որոնք լայն առևտրական կապեր են ունեցել Հնդկաստանի վաճառաչաի քաղաքների հետ, 1688-ին Մոսկվա, ապա՝ Շվեդիա և Հոլանդիա են տարել պարսկական և հնդկական ապրանքների մեծ քանակություն (մետաքս, գոհարեղեն, գորգեր): Մոսկվայի Հին վավերագրերի կենտրոնական պետական արխիվում պահպանվող թիվ 100 ֆոնդում (վերնագրված «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ») մի շարք ռուսալեզու նյութեր են պահպանվում, մեծ մասամբ հայ վաճառականների՝ ռուսաց ցարերին հղված խնդրագրեր, որոնցում թույլտվություն է խնդրվում Շվեդիա տանել պարսկական ապրանքները և կամ Աստրախանի ճանապարհով Իրան հասցնել Շվեդիայի ուղիով իրենց բերած եվրոպական ապրանքանին: Այդ փաստաթղթերում Շվեդիան մեծ մասամբ հիշված է «Свейский рубеж» անվամբ:

¹ Նույն տեղում, էջ 174-175:

² *Армяно-русские отношения...*, стр. 196–197, 209, 213–224, 237–243, 246.

Նշված վավերագրերը լույս են տեսել 1953 թվականին Երևանում հրատարակված «Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում» ռուսերեն ժողովածուում:

Հիշատակենք պատմության մեջ մնացած այլ նորջուղայեցի հայ վաճառականների անուններ, որոնք ճանապարհորդել են Շվեդիայում: 1690 թվականին Շվեդիա են մեկնել և վեց տարի անց, 1696-ի մարտին ապրանքներով հայրենիք են վերադարձել առևտրականներ Դավիդ Իվանիսովը (Դավիթ Հովհաննիսյան), Ավետիք Մարտիրովը (Մարտիրոսյան), Աղաջան Ավեդիկովը (Ավետիքյան) և Վասկա Մակարևը (Բարսեղ Մակարյան)¹: 1691-ին 538 փութ և 25 ֆունտ ապրանքով Շվեդիայից Մոսկվա են վերադարձել հայեր Յակով Դավիդովը (Հակոբ Դավթյան) և Գրիգոր Բոգդանովը (Աստվածատրյան կամ Բողդանյանց)՝ որդու հետ: 1692-ի հունվարի 21-ին, ապա փետրվարի 4-ին Ռուսաստանի ճանապարհով ուղիղ Շվեդիա է գնացել առևտրական Ստեփան Թոփչյանը՝ 13 ուղեկիցների հետ: Նույն թվականի մայիսի 6-ին նրանց ընկերակցել են Թումայանցը, Նիկողայոս Սիմոնյանցը, Սիմեոն Բողդանյանցը և վերոհիշյալ Գրիգոր Բոգդանովը: Նոյեմբերի 22-ին Շվեդիա են մեկնել Հակոբ Մերզովը և վերոհիշյալ Մաֆար Վասիլևը²: 1696-ի փետրվարին Պետրոս Մեծին խնդրագիր են հղել մի խումբ հայ առևտրականներ. նրանց անունները տրված են նվաստացուցիչ ձևերով (քարգմանաբար տալիս ենք հայկական հավանական տարբերակները): Նրանցից են եղել վերոհիշյալ Յակով Դավիդովը, Գրիգորի Դավիդովը (Գրիգոր Դավթյան) իր եղբայրներ Տավելկայի (Թավաքալ), Բաղումի և որդու՝ Նազարկայի (Նազար) հետ, Նիկոլայ Տարասովը (Նիկողայոս Թորոսյան) և իր եղբայր Չաբեչկան (Միրզաբեկ Թորոսյան), Նիկիտա (Միկիտկա) Բոգդանովը (Մկրտիչ Աստվածատրյան կամ Բողդանյան) և իր որդիներ Պետրուշկան և Պաշկան (Պետրոս և Պողոս), Մարտին Վասիլևը (Բարսեղյան կամ Ներսիսյան) և իր եղբայր Սիմասկան (Միմաս), Սիմանկա Ավանիսովը կամ Իվանովը (Սիման Հովհաննիսյան) և իր որդի Լաչինկան (Խաչիկ), Առակիմ-

¹ Նույն տեղում, էջ 226-229:

² *Պատմություն Նոր Ջուղայու որ յԱպսխան, աշխատասիրելի ի պ. Յարութիւն տէր Յովհաննեանց*, հատոր Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 176: Ա. Ալաօյաճեան, *Պատմություն հայ գաղթականության...*, հատոր Գ, Գահիրե, 1961, էջ 198:

կա կամ Ռակել Պետրովը (Առաքել Պետրոսյան) և իր որդի Ջախարկան (Ջաքար), Բոգդաշկա Իվանովը (Աստվածատուր Հովհաննիսյան) և իր որդի Դավիդկան (Դավիթ), Իսայ Խրիստաֆորովը (Եսայի Քրիստաֆորյան) և իր որդի Իվանը (Հովհաննես), ինչպես նաև Բանամենտուրա Դավիդովը (Դավթյան), Կասպար Անդրեևը (Անդրեասյան), Պավել Ստեպանովը (Պողոս Ստեփանյան), Սաֆար Բասկակովը, Յարաչկա Սագակովը (Ծառա Սահակյան), Սավկա (Սավելի) Սերգեևը (Մարգսյան), Խաչիկ Սիխայլովը (Սիբայելյան), Մատվեյ Մունչեբեկովը և այլք, ովքեր մանրամասնորեն նշել են իրենց բերած ապրանքները և խնդրել տեղափոխել դրանք Շվեդիա¹: 1697-ի հունվարի 31-ին Մոսկվա են ժամանել և Շվեդիա մեկնելու թույլտվություն խնդրել հուն մետաքս և այլ ապրանքներ արտահանող տասնչորս ջուղահայեր՝ Բաղդասար Գրիգորևը (Գրիգորյան) և իր որդի Գրիշկան (Գրիգոր), Արուսիակո Գրիգորևը (Հարություն Գրիգորյան) և իր եղբայր Կայուցկան (Գալո՞ւստ), Ստենկա Բարուժանովը (Ստեփան Բարուջանյան կամ Բարաջանյան) և իր եղբայր Ատամխանկան (Ադամխան), Մանացականկո Գրիգորևը (Մնացական Գրիգորյան) և իր որդի Մանասկան (Մանաս), Բարուժկո Սեմյոնովը (Սիմոնյան) և իր որդի Ավանիսկան (Հովհաննես), ինչպես նաև Ավետիք Պետրովը (Պետրոսյան), Գրիշկա Արաստակեսովը (Գրիգոր Արիստակեսյան), Ավանիսկա Մելեկսեդեկովը (Հովհաննես Մելիքսեդեկյան) և Ազազարկո Գրիգորևը (Ազազար Գրիգորյան)²: 1696-ին մի խումբ հայ առևտրականներ Շվեդիա են հասցրել 1794 փութ մետաքս, իսկ դրանից երեք տարի անց, 1697-ին, վաճառականների մի այլ խումբ բերել է 873 փութ մետաքս: Էստոնիայի կենտրոնական պետական արխիվում պահվող մի փաստաթուղթ էլ վկայում է, որ 1696-ին իրանահայ առևտրականների մի խումբ 67,300 փութ մետաքս է բերել Շվեդիա, որն այնուհետ տարել են Լյուբեկ³: 1697 թվականին Շվեդիայից Մոսկվա են վերադարձել հայ առևտրականներ Բունամերտուր (sic) Դավիդովը, Մատվեյ որդի Չեբեկովը,

Ավետ Սավելովը և Միրզաբեյ Լուկասովը (Դուկասյան)⁴: Ցավոք, բոլոր նշված վավերագրերը սոսկ գործնական գրություններ են, որոնցում բացակայում են այս վաճառականների՝ հյուսիսային Եվրոպայում կատարած ուղևորությունների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ և հետաքրքիր մանրամասներ:

Հարկ է նկատել, որ ոչ բոլոր ջուղահայ առևտրականներն են կողմ եղել առևտուրը Սկանդինավիայով իրականացնելուն: Նրանցից է եղել նաև երիտասարդ արկածախնդիր վաճառական, ջուղահայ առևտրական կապիտալի գործակալ Ֆիլիպ Սանին (Ֆիլիպ դը Ջադլի կամ Ջադլու)⁵: 1695 թվականին նա հայտնվել է Շվեդիայում, ներկայացել որպես կոմս Ֆիլիպ դը Սանիս և շահել Կառլ XI թագավորի համակրանքը: Նա ամուսնացել է Ստոկհոլմի արքունիքից մի հարուստ օրիորդի հետ, որը եղել է պալատական թոշակառու: Ֆիլիպ Սանին ձգտել է վերջ տալ Շվեդիայի հետ հայ վաճառականների սկսած առևտրին՝ պատճառաբանելով շվեդական պետության բարձր մաքսերը և այն հանգամանքը, որ իբր Շվեդիայի թագավորը կրոնական ազատություն չի տալիս հայերին⁶: Մինչդեռ նման տեղեկություն մեզ չի հանդիպել որևէ աղբյուրում: Սանին ձգտել է ջուղահայոց առևտուրը շեղել Մերձբալթիկայի և Լեհաստանի ուղղությամբ: Կուռլանդիայի (Մերձբալթիկայի) դքսին նա առաջարկել է թույլատրել օգտվել իր երկրի ճանապարհից, մասնավորապես՝ Լիեպո (Լիեպայա) քաղաքից, որը Ռիգայից հետո եղել է Լատվիայի ամենակարևոր նավահանգիստը: Պատա-

¹ Նույն տեղում, էջ 246:

² Սանիի մասին մանրամասն տես Ռոբերտո Կյուպենկյանի «Ջուղայեցի հայ վաճառական Ֆիլիպ տը Ջադլի և պարսկահայ առևտուրին հաստատումը մերձբալթյան երկրներում 1696 թ.» հոդվածը. Ռ. Վ. Կյուպենկյան, *Հայ-պորտուգալական հարաբերություններ*, էջ 311-330:

Ի դեպ, Սանիի մասին XVIII դարի ուս պատմաբան Նիկոլայ Բանտիշ-Կամենսկին մի տեղ նշել է, որ նա եղել է Շահ Աբբասի և մի հայ հարճի զավակը, որին հոր մահից հետո մայրն ուղարկել է Եվրոպա՝ կրթություն ստանալու: Նա ապրել է Անգլիայում, Ֆրանսիայում, արժանացել կոմսի աստիճանի: 1695-ի նոյեմբերին Շվեդիայից ժամանել է Մոսկվա՝ իր ունեցվածքի հարցերով Իրան մեկնելու թույլտվություն ստանալու, սակայն 1695-ի մայիսին հետ է ուղարկվել Շվեդիա (տես http://www.vashaktiv.ru/texts/f/fabricius_rel.php): 1697-ին երկրորդ անգամ է եղել Մոսկվայում որպես լեհական գործակալ:

³ Ռ. Վ. Կյուպենկյան, *Հայ-պորտուգալական հարաբերություններ*, էջ 338:

¹ *Армяно-русские отношения*, стр. 213-224.

² Նույն տեղում, էջ 237-243:

³ *History of Sweden*, p. 225.

հական չէ, որ Լյուդվիգ Ֆաբրիցիուսը 1697-ի իր ուղևորության ժամանակ կատարած գրառումներում նշել է հետևյալը. «Այնուհետև ինձ հանձնարարված էր ամեն կերպ խանգարել հայտնի արկածախնդիր կոմս ֆոն Մանիսի անամոթ մտադրությունը, քանի որ նա մտածում է կտրել պարսկական առևտուրը Եվեդիայի հետ և ուղղել այն Լեհաստան»¹:

1696 թվականին Մանին պայմանագիր է կնքել Լիվոնիայի, Կուռլանդիայի և Սեկալենի դքսի հետ: Պորտուգալահայ պատմաբան Ռոբերտո Կյուլպենկյանը հրատարակել է Կուռլանդիայի դքսին Ֆիլիպ դը Չադլիի հիշատակագիրը, որտեղ մասնավորապես ասված է. «Ծանոթ է, որ պարսիկները արդեն քանի մը տարի է վեր սկսած են Ռուսիո ճամփով կատարել իրենց առևտուրը Եվրոպայի հետ, և հիմա ամենին հայտնի պարսիկ վաճառականները որոշած են շարունակել իրենց առևտուրը Եվրոպայի հետ Ռուսիայեն անցնելով, թողնելով Թուրքիո ճամփաները, որոնք շատ երկար են, վտանգավոր և դժվար, վասնզի հիմա պարսիկ վաճառականները կփնտրեն կարճ և հանգստավետ ուղի մը, որ Ռուսիայեն սկսելով զիրենք տանի նավահանգիստ մը իրենց ապրանքներով և այնտեղեն կուզեն շարունակել իրենց առևտուրը ավելի հեռու Եվրոպայի մեջ, Պրանտըպուրկի, Տանցիկի, Տանըմարքայի և կամ Հոլանտայի և եվրոպական ուրիշ վայրերում մեջ: Որոշած են բռնել ճամփան Մոսկվայեն Սմոլենք կամ Պեսքի (Պսկովի² – Ա. Բ.) և անկե ցամաքի ճամփով Լիվանիո մեջեն Վիթեպսք քաղաքը և Վիթեպսքեն Տվինա գետին վրա մինչև Տուպենահ, և անկե ցամաքի և ծովի ճամփով մինչև այստեղ Միթո (Կուռլանդիայի նախկին մայրաքաղաքը, այժմ Ելգավա – Ա. Բ.), հետո Լիպոյեն ավելի հեռու ամբողջ Եվրոպա...»²: Սույն վավերագրում Ֆիլիպ Մանին մանրամասնություններ է հաղորդել Լիեպոյի նավահանգստից եվրոպական տարբեր երկրներ, նաև Սկանդինավիա գնացող նավերի փոխադրավարձերի վերաբերյալ, մասնավորապես հիշելով, որ մինչև Լյուբեկ, Կուպենհագեն և Հելսինգֆորս յուրաքանչյուր հակի կամ սնդուկի համար անհրաժեշտ է

վճարել մեկ դիքսդալ¹: 1696-ի սեպտեմբերի 18-ին Կուռլանդիայի դուքս Յրեդերիկ Կազիմիրը ստորագրել է 22 կետից բաղկացած մի փաստաթուղթ, որտեղ իր պատրաստակամությունն է հայտնել պարսիկ (այսինքն՝ պարսկահայ) առևտրականներին զիջելու մի քանի հարմարավետ տներ մերձբալթյան տարբեր քաղաքներում և թույլատրել անհրաժեշտ նյութերի հայթայթումն իրենց գործունեության համար, խոստացել Կրոպիենի դոյակում տրամադրել անհրաժեշտ նկուղներ և սենյակներ նրանց քանկարժեք ապրանքների համար, մինչև որ Լիեպոյում կկառուցվի հատուկ այդ նպատակով շտեմարան: Նա մաքս է դրել բոլոր ապրանքների վրա՝ բացառյալ գոհարեղենը և մարգարիտը: Դուքսը խոստացել է պաշտպանության տակ վերցնել հայ վաճառականներին՝ գերծ պահելով ամեն վտանգից և բռնությունից, պայմանով, որ նրանք էլ իրենց խաղաղ պահեն: Կարևոր է, որ Մերձբալթիկայում ջուդահայերին մի քանի ազատություն է շնորհվել (ինչպես՝ կրոնական), տեղի բնակչության հետ գործառնություններ կատարելու արտոնություններ և բալթյան քաղաքներում բնակություն հաստատելու իրավունք: Առևտրականներին իրավունք է տրվել նաև հիմնելու գործարաններ՝ վայելելով մյուս հպատակների հետ հավասար պայմաններ: Մեծածախ վաճառականներին, սույն փաստաթղթի վեցերորդ կետով, շնորհվել է ամեն կարգի մաքսից և տուրքից ազատություն: Չորս տարի ազատ առևտրից հետո վաճառականները պարտավոր էին տարբեր մաքսեր վճարել՝ երկու տոկոս ծովի ճանապարհով եկած և մեկ տոկոս՝ ծովով և ցամաքով եկած ապրանքների համար: Ֆիլիպ դը Չադլին սույն հավաստագրի ներքո ստորագրել է՝ ողջ ջուդահայ առևտրականների անունից հանդիսավորապես խոստանալով հարգել նշված բոլոր կետերը: Մի հետաքրքիր մանրամասն ևս. եթե ռուսական վավերագրում ջուդահայ վաճառականները հիշված են որպես հայեր, ապա վերոնշյալ փաստաթղթերում նրանք հիշում են որպես պարսիկներ, սակայն աներկբա է, որ խոսքը Նոր Զուդայի հայերի մասին է:

Ահա նման փաստաթղթի ստորագրմանն է հասել հայորդի Ֆիլիպ դը Մանին, որի ջանքերի շնորհիվ Մերձբալթիկայի երկրներում նույնպես նորջուդայեցի առևտրականները որոշ գործունեություն են

¹ Людвиг Фабрициус, Краткая реляция..., стр. 153.

² Ռ. Վ. Կյուլպենկյան, Հայ-պորտուգալական հարաբերություններ, էջ 331-332:

¹ Նույն տեղում, էջ 333-334:

ծավալել: Ի դեպ, այս տարածաշրջանը բոլորովին անճանոթ չի եղել հայերին. մինչ ջուղահայերը Մերձբալթիկայում առևտրական սերտ գործունեություն են ծավալել Լոհմի հայ վաճառականները: Պատմաբան Վահան Բայրուրյանի ենթադրությամբ՝ մերձբալթյան երկրներում գործող հայ վաճառականների թիվը մեծ է եղել¹: Հիշենք նաև, որ Շվեդիայում, Մերձբալթիկայում ու մի քանի այլ երկրներում գործած հայորդի Ֆիլիպ դը Սանիի հետագա կյանքն անցել է Իրանում, որտեղ նա մահմեդականություն է ընդունել և դառնալով այնտեղ ուղարկված ֆրանսիացի գործակալների նենգ խաղերի զոհը, 1707 թվականին գլխատվել է Երևանի խանի հրամանով:

Իրանի հայ առևտրականների՝ Սկանդինավիայի և Եվրոպայի հետ ունեցած առևտուրն ընդհատվել է 1700 թվականին՝ սկսված և մինչև 1721-ը տևած ռուս-շվեդական պատերազմի հետևանքով (Շվեդիայի դեմ պատերազմի են ելել նաև Ռուսաստանի հետ դաշնակցած Դանիա-Նորվեգիան և Սաքսոնիան (հետագայում միացել են Հանովերը և Պրուսիան). առևտուր, որ շահեկան էր երկու կողմի համար էլ: Այդուհանդերձ, պատմաբանների գնահատմամբ, ջուղահայ վաճառականների համար ռուսաստանյան առևտուրը եղել է որպես ձեռնառու տարանցիկ ճանապարհ, ոչ շուկա. այն ցեղ է եղել արևելյան ապրանքների համար, և որքան էլ օսմանյան ճանապարհները վտանգավոր լինեին՝ իրանա-եվրոպական առևտրի հիմնական մասը դարձյալ իրականացվել է Օսմանյան կայսրության միջոցով՝ հաշվի առնելով առկա բազմաթիվ, վաղուց արդեն յուրացված առևտրական ուղիները²:

Ավելի ուշ՝ 1737-ին, Շվեդիան պաշտոնապես առևտրական հարաբերություններ է հաստատել Օսմանյան կայսրության հետ³: Քանի որ օսմանյան վաճառականների մի զգալի մասը եղել են հայեր, անհիմն չէ ենթադրել, որ այդ ժամանակաշրջանից սկսած հայ առևտրականներ այցելած լինեն Շվեդիա:

Թեև Նոր Զուղայի առևտուրը Շվեդիայի հետ դադարել էր, սակայն Արևելքում ճանապարհորդած շվեդները հանդիպել են նրանց:

Այսպես, 1711–1712 թվականներին Փոքր Ասիայում և Եգիպտոսում ճամփորդած Ուփսալայի համալսարանի արևելագիտության ուսուցչապետ Միքայել Օլոֆսոն Էնեմանը (1676–1714) հետագայում իր ճանապարհորդական նոթերում հիշատակել է Իրանից Օսմանյան կայսրություն կատարվող մետաքսի առևտրի մասին, որ իրականացրել են հայերը, գրելով՝ «Ինչ վերաբերում է առևտրականներին, ապա նրանք առուժախի մեծ վարպետներ են. միաժամանակ գնելու և վաճառելու, հատկապես մետաքսի և Պարսկաստանից ու Հայաստանից բերվող այլ ապրանքների», իսկ տողատակին հավելել է հետևյալը. «Պարսկաստանից Զմյուռնիա են բերում նուրբ և կոշտ մետաքս, նուրբը կոշվում է սերբասի (կերպաս), շատ մեծաքանակ և արժեքավոր, 8-ից 10 կոտ ոսկով, որով նրանք գնում են հագուստ և ապրանքի դիմաց վճարվում են դրամով կամ հագուստով, երբեմն վերցնելով 3 մաս հագուստ և մեկ մաս դրամական վճար»⁴:

Յավոք, Սկանդինավիա ճամփորդած հայ վաճառականներից մեզ օրագրություններ չեն հասել, որոնցում հետաքրքրական տեղեկություններ կարող էին լինել այդ երկրների, իրենց վտանգաշատ և արկածալից ճանապարհորդությունների վերաբերյալ: Սակայն թե ինչ պայմաններում են նրանք հաղթահարել այդ տասնյակ հազարավոր մղոնները, հիշատակել է ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավեռնիեն. «Եվ արդարև, հայերը առևտուրի այնքան հարմար են, խնայող և շատ ժուժկալ ժողովուրդ մըն են, որ չեն գիտեր թե իրենց առաքինութենե՞ն է թե իրենց ազահութենե: Երբ անոնք երկար ճամբու կը սկսին, իրենց հետ կը տանին միայն գաթայ, չորցած եզան միս (նկատի ունի քաստորման – Ա. Բ.), սոխ, հալած իւղ, ալիւր, զինի և չորցած մրգեղեն: Անոնք թարմ ուտելիք երբեք չեն գներ, բացի լեռնային երկիրներու մէջ, երբ գառան կամ ուլի թարմ մսի կը հանդիպին ասժան գնով: Անոնք բոլորն ալ ունին ձուկ որսալու ասեղ, զոր կը գործածեն իրենց հանդիպած լճակին կամ գետին մէջ: Այս պաշարին փոխադրութիւնը իրենց քիչ կ'արժէ: Երբ իրենց մնալիք մէկ քաղաքը կը հասնին, հինգ կամ վեցը մէկտեղ կը խմբակցին և պարապ սենեակի մը

¹ Վահան Բայրուրյան, *Համաշխարհային առևտուրը և իրանահայտրիւնը...*, էջ 177:

² Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք 2, Երևան, 1959, էջ 448:

³ *История Швеции*, стр. 266, 292.

⁴ Michael Eneman, *Resa i Orienten 1711–1712, utgifven af K. U. Nylander: Första delen, Mindre Asien och Egyptien. Senare delen, Sinai Halfön och Palestina*, Uppsala, 1889, s. 44.

մէջ կը բնակին, զոր իրենք կը կահաւորեն, իւրաքանչիւրը իր անկողինով, ծածկոցով, խոհանոցի իրերով և այսպէս մեծ խնայողութիւն կ'ընեն: Երբ քրիստոնեայ երկրի մէջ կը ճամբորդեն, իրենց հետ կը կրեն սաֆրօն, պղպեղ, մշկընկոյզ և ուրիշ համեմներ, որոնք փոքր քաղաքներու մէջ կը փոխանակեն հացի, գինիի, կարագի, պանիրի, կաթնեղէններու և ուրիշ ուտեստներու հետ, զոր խեղճ կիներէ կը խնդրեն: Երբ քրիստոնեայ երկիրներէ կը դառնան, իրենց հետ կը բերեն ամէն տեսակ փերեզակային ապրանքներ, ձեռքէ տունէ տուն ծախուելիք Նիւրըմպէրկի և Վենետիկի իրեր, կեղծ մարգարիտներ և ատոնց նման ուրիշ իրեր, զոր իրենց ճամբու ընթացքին բնիկներուն հետ ուտեստի հետ կը փոխանակեն»¹: Այս նկարագրութիւնից դժվար չէ պատկերացնել Հյուսիսի կլիմային անսովոր, սակայն ուղևորութիւնների ընթացքում թրծված հայ վաճառականներին՝ իրենց արևելյան զգեստներով, գլուխները փաթոցներով ծածկած, ինչպես ցույց են տալիս այդ ժամանակների փորագրանկարները, մետաքսի և այլ ապրանքների իրենց հակերը ռուսական տափաստաններով քարշ տալիս, Բալթիկ ծովով մավարկելիս, պատկերացնել նրանց տարաշխարհիկ կերպարանքները ֆիննական լճերում ձուկ որսալիս կամ իրենց մոտի համեմունքները շվեդ և դանիացի գեղջկուհիների հետ սննդամթերքով փոխանակելիս...

Ի՞նչ նշանակություն ունեցավ ջուղահայերի առևտուրը Հյուսիսային Եվրոպայի հետ: Նախ և առաջ հարկ է նշել այն ընդհանուր կարևորությունը, որ առհասարակ ունեցել են հայ ժողովրդի առևտրատնտեսական կապերն Արևմուտքի հետ, որն էր՝ մի կողմից արևելյան ապրանքատեսակների լայն շրջանառությունը Եվրոպայի ամենատարբեր անկյուններում, մյուս կողմից՝ Արևելքի զանազան շրջաններում եվրոպական ապրանքների ի հայտ գալը: Արևելյան ապրանքների տեսականին տեղում նշել ենք, իսկ եվրոպական ապրանքներից հայ վաճառականները ներմուծել են եղևնեղևի և անգլիական մահուդ, ճենապակյա ամանեղեն, մոմակալներ, մկրատներ, սաք, ներկեր, մորթեղեն, արհեստական զարդեղեն, կապար, խաղաթղթեր, հեռադիտակներ, գերմանական սափորներ, ժամացույցներ, ակնոց-

ներ, սպասք, կերպարվեստի իրեր, գրքեր¹: Այս թվարկումը բավական է՝ ըմբռնելու համար, թե արևելյան ժողովուրդների կենցաղում նման առարկաների մուտք գործելն ինչ նշանակություն կարող էր ունենալ: Եվրոպայի ծայր հյուսիս հասած արևելյան ապրանքների շնորհիվ երբեմնի ռազմատենչ վիկիզների հետնորդները ծանոթացել են Արևելքում ստեղծված մշակույթի հետ: Միտկալը մուտք է գործել շվեդական և դանիական իրականություն. հյուսիս-եվրոպական երկրներում, որոնցում հագուստի մշակույթը բարձր զարգացում չի ունեցել մինչ այդ, արևելյան կտորեղենների գործածության շնորհիվ որոշակի նրբագեղություն և ճաշակ են ձեռք բերել: Հատկապես ազնվականության և մինչև անգամ արքունիքի ամենահարգի զգեստները սկսել են կարվել պարսկական հարգի մետաքսից. ԺԷ-ԺԹ դարերի շվեդական գեղանկարչության մեջ պատկերված դիմանկարների հագուստ-կապուստից նկատելի է հայերի արտահանած մետաքսե զգեստների առկայությունը: Ծվեդիա ներմուծվող ապրանքները թվարկելիս շվեդական առևտրի պատմության հետազոտող Աբրահամ Վիլհելմ աֆ Սիլլենը նշել է նաև «Ռուսաստանի և Ռիգայի վրայով հայերի կողմից ներմուծվող պարսկական մետաքսը», որից հայերը տեղում պատրաստել և վաճառել են նուրբ, գեղեցիկ գլխաշորեր²:

Հարկ է նշել նաև, որ պարսկահայերի և Հյուսիսային Եվրոպայի երկրների միջև հաստատված կապերի շնորհիվ հայերի և սկանդինավյան ժողովուրդների թեկուզ փոքր հատվածներ ինչ-որ չափով պատկերացում են կազմել մեկմեկու վերաբերյալ: Կարևոր է նշել, որ թեև պաշտոնական գրագրություններում հայ առևտրականները, ինչպես նշեցինք, երբեմն որպես «պարսիկներ» են ներկայացվել, սակայն սկանդինավցիներին հայտնի է եղել, որ նրանք հայեր են և քրիստոնյաներ. շվեդական աղբյուրներում մշտապես շեշտվում է «հայ-պարսկական առևտուր» (armenisk-persisk handel) ձևը: Ավելին, այն ժամանակ, երբ վաղուցվանից Հայաստանը գոյություն չուներ որպես պետական միավորում, որոշ շվեդական աղբյուրներ Պարսկաստանի հետ միասին

¹ Յարութին Քիւրտեան, *Նիւրբեր հայ վաճառականութեան պատմութեան համար*, էջ 24-25:

¹ Այս մասին տես նաև՝ *Estat de la Perse en 1660* par P. Raphaël du Mans, Paris, 1890, էջ 332:

² Abraham Wilhelm af Sillén, *Svenska handelns och näringsarnes historia under de tre Carlarnes*, Upsala, 1871, s. 158, 165.

գործածել են նաև Հայաստան եզրը, անշուշտ՝ աշխարհագրական իմաստով:

Այսպես, Իրան կատարած Ֆարրիցիուսի առաքելության ուղղակի հետևանք էր մշակութային այնպիսի կարևոր իրադարձությունը, որպիսին էր 1723 թվականին Ստոկհոլմում Մովսես Խորենացու «Պատմության» համառոտ տարբերակի հրատարակությունը լատիներեն լեզվով, որի մասին խոսք կլինի հետագա շարադրանքի մեջ:

Վերջում նշենք, որ շվեդական արխիվներում, անշուշտ, լրացուցիչ նյութեր կլինեն Շվեդիա եկած հայ առևտրականների վերաբերյալ: Նմանատիպ նյութեր, անկասկած, կլինեն նաև Գանիայի արխիվներում, որոնց ուսումնասիրումը և վերհանումը նոր լույս կարող է սփռել Նոր Ջուդայի հայ առևտրականների և Հյուսիսային Եվրոպայի երկրների միջև եղած առնչությունների պատմության վրա:

Շվեդիայի առաջին հայ բնակիչները

Ժամանակագրական կարգով Շվեդիայում հաստատված առաջին հայը, որի անունը մեզ հասել է, XVII դարում ապրած լեհահայ ազնվական Ջակարիաշ Գամոցկին էր Լեմբերգ (այժմ՝ Լվով) քաղաքից: Նրա կյանքը և գործունեությունը հանգամանորեն ուսումնասիրել է շվեդաբնակ լեհ թուրքագետ Էլֆրետա Շվիեցիցկան¹: Շվեդ-լեհական պատերազմի ժամանակ Գամոցկին գերի է ընկել Շվեդիայի Կառլ X թագավորին: Անցնելով շվեդների կողմը՝ նա ծառայել է որպես դիվանագետ-թարգման, 1665 թվականին այցելել կազակների ղեկավար Բոգդան Խմելնիցկուն: Վերջինիս պահանջով Գամոցկին իր թագավորի անունից երդումով խոստացել է, որ Շվեդիայի թագավորը և նրա զորքերն այլևս Լեհաստան չեն խուժի²: Ենթադրվում է, որ նա դիվանագիտական առաքելությամբ եղել է նաև Օսմանյան կայսրություն-

նում: Պահպանվել է Գամոցկու փորագրանկարը՝ պատկերված Ստոկհոլմում 1672 թվականին, զինվորական շքերթի ժամանակ:

Առաջին հայերը, որ եկել և հավանաբար մնացել են Շվեդիայում, եղել են մի խումբ զինվորականներ: Երբ 1709-ին շվեդ-ռուսական պատերազմի ժամանակ Պոլտավայի ճակատամարտում Կառլ XII-ի զորքը պարտվել է ռուսներից, Շվեդիայի թագավորը մեկնել է Կոստանդնուպոլիս և օսմանյան սուլթանի հետ հակառուսական դաշինք կազմելու նպատակով մնացել այնտեղ հինգ տարի շարունակ: Այստեղ նա պարտքով գումար է վերցրել տեղի հայ դրամատերերից: 1714-ին Կառլը վերադարձել է Շվեդիա, իսկ նրան հետևել է 60-70 մարդուց բաղկացած մի զորաբանակ: Այդ խումբը Շվեդիա է եկել կոմս Աբսել Սփարեի ղեկավարությամբ և կազմված է եղել հայերից, հույներից, հրեաներից, արաբներից և թուրքերից¹: Խմբի մի մասը հաստատվել է Շվեդիայում, ամուսնություններ կնքել և ձուլվել շվեդական հասարակության մեջ: Շվեդական աղբյուրներում հիշվում է տիկին Ինգա Բրիթա Հեզը (1775-1842) Վենեթսուրգից, որը եղել է այդ հայերից մեկի թոռնուհին: Հայտնի է, որ նա վաղ հասակում գրկվել է ծնողներից, որդեգրվել Հալբերգ ընտանիքի կողմից, բնակվել է Յոնշտիմգում, որպես սպասուհի ծառայել մի մորթեգործի մոտ, ամուսնացել նրա որդու հետ, եղել չափազանց ուշիմ, ուսումնասեր, աշխույժ խառնվածքի տեր անձնավորություն, շվեդներին ոչ բնորոշ սև աչքերով և մի փոքր անսովոր շվեդերեն առոգանությամբ, ունեցել է չորս զավակ, զբաղվել տնտեսությամբ:

Օսմանյան մայրաքաղաքում Կառլ XII-ի երկարաժամկետ մնալու անմիջական հետևանքը եղել է այն, որ Բարձր Դռան հետ հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ, որոնք մշտական են դարձել 1730-ական թվականներին²: Եվ այս ժամանակաշրջանից սկսած՝ մի շարք հայեր դարձել են սկանդինավյան երկրների դիվանա-

¹ Elżbieta Świącicka, Zachariasz Gamocki. A Polish Nobelman in Swedish Service, *Allvarlig debatt och rolig lek. En festskrift tillägnad Andrzej Nils Ugglä*, Uppsala Univesitet, 2000, p. 78-95.

² *Материали до историј Галичини*, т. 3, Львів, 1913, стр. 150, 154, տե՛ս ԼՋ. Օ. Գալուսյան, Армяне на дипломатической службе в Рече Посполитой в XVII в., *Պատմա-բանասիրական հանդես*, 1971, ր. 2, էջ 256: Տե՛ս նաև Ռաֆայել Համբարձումյան, *Սաղոկ Բարոնը լեհահայոց պատմության ուսումնասիրող*, Երևան, 1998, էջ 104:

¹ Walther Björkman, Die Schwedisch-Türkischen Beziehungen bis 1800, *Festschrift Georg Jacob*, Leipzig, 1932, S. 17.

² XVIII դարում Կոստանդնուպոլսում շվեդական դիվանագիտական ներկայացուցչության մասին տե՛ս Åsa Karlsson, Centrum för kundkap och kontakter: den svenska legationen i Konstantinopel under 1700-talet, *Dragomanen*, N 4, Stockholm, 2000, էջ 13-31:

գիտական ներկայացուցիչներ Օսմանյան կայսրությունում և նրան պատկանող Եգիպտոսում: 1721 թվականին Կոստանդնուպոլսի շվեդական դեսպանատան ղրագոման (թարգման) և նշանակվել թարգմանիչ, Իսահակ Նյուտոնի փիլիսոփայական մի աշխատությունը հայերեն թարգմանած Հակոբ Դամճիողլուն (Դամճյան)¹: Ավելի ուշ, մեկ այլ հայորդի՝ Յոհաննես Մուրաջան կամ Ժան Մուրաջան (1721–1787), եղել է Չնյուտնիայի շվեդական հյուպատոսարանի առաջին թարգմանը: Նրա իսկական անուն-ազգանունը եղել է Հովհաննես Մուրատճայան, իսկ շվեդական աղբյուրներում հանդիպում է Ivannes Muradja կամ Mouradgea ձևերով: Ուիսալայի համալսարանի գրադարանում պահվում է նրա ինքնագիր ֆրանսերեն մի խնդրագիրը՝ ուղղված հավանաբար Շվեդիայի թագավորին: Ուշագրավ է, որ այն կրում է նաև հայերեն ստորագրություն, որտեղ նա հիշվում է որպես շվեդների թարգմանի հայր («Ես Յոհաննես Մուրատճայան հայկազնեան Հայր Իգնատիսի թարգմանի Շրվետաց»)՝

Շվեդիայի դիվանագիտության պատմության մեջ կարևոր հետք են թողել Ժան Մուրաջայի որդին՝ Իգնատիոս Մուրաջա դ'Օսսոնը (1740–1807) և թողը՝ քաղաքական գործիչ և արևելագետ Աբրահամ Կոնստանտին դ'Օսսոնը (1789–1851), որոնց կենսագրությունները մշտապես տեղ են գտնում շվեդ ականավոր գործիչներին նվիրված կենսագրական տեղեկատուներում²:

Օսմանյան կայսրությունում Շվեդիայի գործերի հավատարմատար և դեսպանորդ Չելեպի Իգնատիոս Մուրատճայանը, հայտնի իբրև Մուրաջա Դ'Օսսոն (Mouradgea d'Ohsson), XVIII դարի պատմագրության խոշոր դեմքերից է: Ծնվել է Կոստանդնուպոլսի Բերա

քաղաքում, որդին է վերոհիշյալ զմյուտնիացի Հովհաննես (Ժան) Մուրաջայի և ֆրանսուհի Լյուսի Կլեր Պաժիի: 1780-ին ստացել է շվեդական ազնվական ասպետի տիտղոս և անվանել իրեն Դ'Օսսոն՝ իր հորեղբայր Թոսունի անունից (շվեդական ասպետների համայնքում կրել է 2171 թիվը): Նա 1763-ից ծառայել է Կոստանդնուպոլսի շվեդական դիվանագիտական ներկայացուցչությունում որպես առաջին և երկրորդ թարգման (մինչև 1775-ը), որպես հյուպատոսարանի քարտուղար, գործերի հավատարմատար (1795), արտակարգ և լիազոր ներկայացուցիչ և Կոստանդնուպոլսում շվեդական դեսպանորդ կամ դիվանագիտական առաքելության ղեկավար (1795–1799): 1774-ին ամուսնացել է հայուհի Եվա Խուլելիի (Կուլելի, 1754–1782) հետ, որն օսմանյան սուլթանի դրամապետ Աբրահամ Խուլելի փաշայի դուստրն էր: 1784-ից հետո Մուրաջա դ'Օսսոնը բնակվել է Փարիզում, որտեղ ամուսնացել է երկրորդ անգամ՝ Ամելի Բայար դը Վուրիկուրի հետ, որը մի ֆրանսիացի ռազմական գործչի դուստր էր: Հանգստի է անցել 1805-ին:

Իգնատիոս Մուրաջան ակտիվ կապերի մեջ է եղել Բարձր Դռան հետ, ակտիվորեն մասնակցել է 1780-ին Օսմանյան կայսրության և Իսպանիայի միջև առևտրական կապերի հաստատմանը: Եվրոպական և արևելյան մի քանի լեզվի տիրապետող այս պատմաբանը տարիներ շարունակ պրպտումներ է կատարել Եվրոպայի և Կոստանդնուպոլսի արխիվներում՝ նյութեր հավաքելով Օսմանյան կայսրության պատմությանը, վարչական կառուցվածքին, հարկային համակարգին, օրենսդրական դրույթներին, սուլթանական արքունիքին, կրոնին և բարքերին նվիրված մի աշխատության շուրջ: Նրա քսանամյա աշխատանքի արդյունքն է եղել «Ընդհանուր պատկեր Օսմանյան կայսրության...» ծավալուն ֆրանսերեն աշխատությունը, որի առաջին հատորը լույս է տեսել 1787-ին, երկրորդը՝ 1790-ին, Փարիզում, M*** d'Ohsson գրչանվամբ³: Այն պատկերագրոված է 137 բարձրարվեստ փորագրանկարներով: Այս աշխատությունը թարգմանաբար լույս է

¹ Պիմեն Զարդարեան, 250 տարի առաջ հայ ուսանող մը Բարիզի մեջ, *Երջանիկ տարեգիրք*, Իսթանբուլ, 1950, էջ 115-119: Նրա անունը մեզ հանդիպել է ընդամենը մեկ շվեդական աղբյուրում, Jamjoglu ձևով (տե՛ս Karl Vilhelm Zeterstéen, *Turkiska studier i Sverige*, Lychnos, 1941, էջ 17):

² Ուիսալայի համալսարանի գրադարան (Քարոլինա Ռեդիփիվա), Չեռագրերի բաժին, Գուստավ թագավորի ձեռագրերի հավաքածու, հ. II, F420, N 92:

³ Այս գործիչներն ընդգրկվել են նաև Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական քառաբանում» (հ. Ա, Երևան, 1973, էջ 294-295, հանդես են բերված Դ'Օհսոնը ձևով և Մուրաջայի ազգանունը սխալմամբ նշված է Թոսունյան) և Հայկական սովետական հանրագիտարանում (հ. 12, Երևան, 1986, էջ 566-567, հանդես են բերված Օսսոն ազգանվամբ):

¹ *Tableau général de l'Empire ottoman, divisé en deux parties, dont l'une comprend la Législation mahométane, l'autre, l'Histoire de l'Empire Ottoman...* par m. de M*** d'Ohsson, t. 1-3, Paris, 1787-1820. Այլ աղբյուրներ գրքի հրատարակման թվականները սխալմամբ նշում են 1778-1824, 7 հատորով:

տեսել գերմաներեն (Վիեննա, 1788–1793), անգլերեն (Ֆիլադելֆիա, 1788. այսպիսով նա առաջին հայազգի հեղինակն է, որի աշխատությունը լույս է տեսել Ամերիկայի Միացյալ Նահանգներում) և ռուսերեն (Մամկտ Պետերբուրգ, 1795): Աշխատությունը բարձր է գնահատել սուլթան Սելիմը, որն առատորեն պարգևատրել է հեղինակին: 1792-ից հետո դ'Օստոնը շարունակել է աշխատել օսմանյան արխիվներում՝ գրելով երրորդ հատորը, որ հետմահու՝ 1820-ին, հրատարակել է որդին:

Այս հանրագիտակ աշխատությունը մնում է մի անփոխարինելի աղբյուր XVIII դարի Օսմանյան կայսրության վերաբերյալ: Մի նամակում դ'Օստոնն իրեն անվանել է «Օսմանյան կայսրության ջահը»: Իսկապես, նրա աշխատության շնորհիվ Եվրոպան առաջին անգամ բազմակողմանիորեն, առանց որևէ նախապաշարումների տեղեկացավ Օսմանյան կայսրության և նրա բնակիչների (հատկապես մահմեդականների) մասին: Հայերի մասին դ'Օստոնը գրել է. «Հայերը շատ հաճախ նվիրվում են առևտրին. հենց նրանք և ոչ թե մահմեդականներն են կազմակերպում հարուստ քարավանները: Ամեն տարի հայերն ուղևորվում են Ասիայի տարբեր շրջանները, որ այնտեղ տարածեն աշխարհի չորս կողմերի ապրանքները»¹: Ի դեպ, աշխատությունը չի վրիպել հայ պատմաբանների ուշադրությունից:² Իսկ 2002-ին Ստամբուլում լույս է տեսել «Կայսրության ջահը» ծավալուն գիրքը, որն ընդգրկում է տարբեր ազգությունների գիտնականների անգլերեն և թուրքերեն 11 հոդված՝ Մուրաջա դ'Օստոնի և նրա Օսմանյան կայսրության վերաբերյալ գրքի մասին³:

Իզնասիուս Մուրաջա դ'Օստոնը 1804-ին հրատարակել է «Պատմական պատկեր Արևելքի» ուսումնասիրությունը՝ M*** D*** ծածկանվամբ,⁴ որը նույնպես թարգմանաբար հրատարակվել է գերմաներեն (Դանցիգ, 1806): Վկայություն կա, որ նա ուսումնասիրու-

յուն է գրել Իրանի հայերի մասին, սակայն թվում է այս տեղեկությունը բյուրիմացության արդյունք է¹:

Հետաքրքիր է, որ Մուրաջա դ'Օստոնը, թեև հեռացած հայությունից, ծանոթ է եղել հայ բանասեր, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Դուկաս Ինճիճյանին: Այս մասին վերջինս վկայել է իր աշխատություններից մեկում՝ գրելով նաև հետևյալը դ'Օստոնի մասին. «...Մուրատնան բուն ստամպուլցի էր հայու ցեղեն. որոնց յատուկ տունն էր Պէյոզլու սր. Անտոնայ ժամին քովինը, որ ետքը Լոռէնցո ճէրրահին ձեռքը անցաւ. բայց իր հայութիւնը զոցելով գրքին ճակատը միայն ասպետ Օստոնի զինքը կը կոչէ, որով ոմանք երոպացոցմէ չի-հասկընալով իր ազգը, իրենց գրքին մէջը յոյն կըկոչեն զինքը: Ասիկայ Ստանպուլէն Ֆրէնկիստան երթալով հոն սորվեցաւ ուսումը. ետքը աղէկեալ տաճկերէն սորվելով Շվէտի դեսպանի թարգման (թերճիման) եղաւ, Շվէտ գնաց՝ Օստոնի ասպետութեան պատիւը առաւ. մէյ մըն ալ երբ որ դարձաւ նորէն գնաց՝ ինքը Շվէտի դեսպան եկաւ Ստանպուլ. լմնալէն ետեւ նորէն գնաց դուրսը մեռաւ: Անչափ սէր ունէր կարդալու գրելու՝ որ ո՛րչափ զբաղեալ ըլլար թագաւորական գործքերու մէջ՝ ամմէն օր 7 ժամ գրելու կարդալու հետ կ'ըլլար աւելի զիշեր առեն, ինչպէս որ ինքը մեզի կը պատմէր»²: Այստեղից կարելի է եզրակացնել, որ դ'Օստոնը հավանաբար այցելել է Վենետիկի Մխիթարյան միաբանություն և ծանոթություն հաստատել միաբանների հետ...

Ինչպես և Ինճիճյանն է վկայել՝ դ'Օստոնը, լինելով շվեդական պաշտոնյա, ընդամենը երկու անգամ է այցելել Ստոկհոլմ՝ 1790 և 1801 թվականներին, վերջին անգամ որդու՝ Աբրահամ Կոնստանտինի հետ, որը հետևել է հորը՝ որպես դիվանագետ և պատմաբան:

Աբրահամ Կոնստանտին դ'Օստոնը կոստալիտի տիպիկ ներկայացուցիչ էր: Ծնված լինելով Օսմանյան կայսրությունում, հայ կաթոլիկ ընտանիքում՝ նախնական կրթությունն ստացել է ֆրանսիական

¹ Նույն տեղում, հ. 3, էջ 204:

² Տե՛ս Մ. Կ. Չուպյան, *Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների*, գիրք Ա, Քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 61-62:

³ *The Torch of the Empire*, "Yapi Kredi Kültür SanatYayinerlik Ticaret ve Sanayi," İstanbul, 2002.

⁴ *Tableau historique de l'Orient...* par le chevalier M*** D***, t. 1-2, Paris, 1804.

¹ Gunnar Jarring, Ignatius Mouradgea d'Ohsson, *Svenskt biografiskt lexikon*, band 25, Stockholm, 1985–1987, s. 753-755.

² Դուկաս վարդապետ Ինճիճյան, *Դարապատում, որ է աշխարհամար կամ ընդհանուր պատմություն քաղաքական, եկեղեցական, ուսումնական և արտեստական, Վենետիկ, 1828*, էջ 428: Դ'Օստոնի մասին տես նաև՝ H. Cordier, *Un interprète du general Brune (Mouradja d'Ohsson) et la fin d'École des Jeunes de langues*. Paris, 1911:

մասնավոր դպրոցում և ուսումը շարունակել Վիեննայի կաղետական դպրոցում: Հետագայում ծառայել է շվեդական դիվանագիտությանը Ֆրանսիայում, Իսպանիայում, Հոլանդիայում և Գերմանիայում, եղել եվրոպական մոնղոլագիտության հիմնադիրը, ամուսնացել հոլանդացի քարոնուհի Լովիսա Սիդոնիա Սիլտենա վան Գրովեստինի (1804–1875) հետ և վախճանվել Բեռլինում:

Ուսում ստանալով նախ Ավստրիայում, ապա Կոստանդնուպոլսում՝ Աբրահամ Կոնստանտինը մեկնել է Շվեդիա և 1798-ին մեկ ուսումնական շրջան սովորել է Ուփսալայի համալսարանում՝ դառնալով նրա առաջին հայազգի ուսանողը: Աբրահամ Կոնստանտինի շվեդական ուսումնառությունը ներառել է համաշխարհային գրականություն, Շվեդիայի պատմություն, հյուսիս-եվրոպական դիցաբանություն և պատմություն, սկանդինավյան աշխարհագրություն, շվեդական մշակույթ, առևտուր և մինչև անգամ՝ պարաբեստ: 1799-ից դ՛Օստենն անցել է դիվանագիտական ծառայության, որը համընկել է Եվրոպայի ճգնաժամի՝ նապոլեոնյան դարաշրջանի հետ: 1805–1808 թվականներին Ֆրանսիայում, Իսպանիայում և Պրուսիայում աշխատելուց հետո (Փարիզում որպես Շվեդիայի դիվանագիտական ներկայացուցչության կցորդ, Մադրիդում և Պրուսիայում՝ հանձնախմբի քարտուղար) նա ուղեկցել է քաղաքական գործիչ Ֆոն Բրինքմանին Մեմել կատարած ուղևորության ժամանակ: Շուտով նա վերադարձել է Սևիլիա, ծառայել որպես տեղի ազգային խունտայի հանձնախմբի քարտուղար: Երկու տարի անց դ՛Օստենը Փարիզում աշխատել է որպես դիվանագիտական ներկայացուցչության քարտուղար, ապա՝ գործերի հավատարմատար (1811–1812), դիվանագիտական գործակալ՝ դուքս Մերլենբերգի մոտ ուղարկված հատուկ առաքելության ժամանակ և 1814–1816-ին՝ Շվեդիայի թագաժառանգ արքայազնի գրասենյակի քարտուղար: 1815-ին հրաժարվել է կաթոլիկությունից և ընդունել է լյութերականություն: Սրանից հետո նա նշանակվել է Շվեդիայի դեսպանորդ Հասագայում (1816–1834) և Բեռլինում (1834–1850):

Տակավին 1793–1798 թվականներին, երբ Աբրահամ Կոնստանտինը հոր հետ բնակվելիս է եղել Կոստանդնուպոլսում, ուսանել է մի քանի արևելյան լեզուներ: Այնուհետև, 1801–1804 թվականներին նա

Փարիզում ուսումնասիրել է որոշ արևելյան ձեռագրեր և գնել դրանցից շատերը:

Եվրոպական մոնղոլագիտության հիմնադիր դ՛Օստենի «Մոնղոլների պատմությունը Չինգիզ խանից մինչև Լենկթեմուր» քառահատոր ֆրանսերեն աշխատությունը եվրոպական լեզվով առաջին խոշոր ուսումնասիրությունն է մոնղոլների պատմության վերաբերյալ¹: Այն չափազանց կարևոր էր իր ժամանակի համար: Հեղինակը մոնղոլագիտության մեջ առաջին անգամ օգտագործել է արաբական, պարսկական և օսմանյան աղբյուրներ (Ռաշիդ ադ Դիև, Ջուվեյնի), կան վկայություններ, որ նա օգտագործել է նաև ռուսական, լեհական, լատինական, պարսկական, վրացական ու նաև հայկական ժամանակագրություններ: Դ՛Օստենը նշել է Հայաստանում մոնղոլական լծի, Կիլիկյան Հայաստանի հետ մոնղոլների հարաբերությունների, Հեթում Ա թագավորի՝ մոնղոլաց երկիր կատարած առաքելության և այլ պատմական իրողությունների մասին²: Եվրոպական մոնղոլագիտության մյուս կարևոր աշխատությունները՝ Յ. ֆոն Համներ-Փուրգսբալի, Էրդմանի և Հաուտրթի հեղինակությամբ գրվել են դ՛Օստենի ուսումնասիրությունից հետո: Աբրահամ Կոնստանտին դ՛Օստենը ֆրանսերեն է թարգմանել նաև X դարի արաբ ճանապարհորդ Աբու ալ-Բասիմի ուղեգրությունը, որ հրատարակվել է 1828-ին, Փարիզում³: Այստեղ վկայություններ կան նաև հայ ժողովրդի մասին:

Այս դիվանագետ-պատմաբանը նաև հետաքրքրություններ է ունեցել կենսաբանության և քիմիայի նկատմամբ: Նա շվեդ գիտնական Յոնս Յակոբ Բերգելիուսի (1779–1848) մտերիմ ընկերն է եղել: Դ՛Օստենը 1805-ին աշխատել է նրա տարրալուծարանում որպես ընթերակա, կատարել հանքանյութերի վերլուծություններ և հետազո-

¹ A. C. d'Ohsson, *Histoire des Mongols, depuis Tchinguiz-Khan jusqu'a Timour Bey ou Tamerlan, avec une carte de l'Asie au XIIIe siècle*, t. 1-2, Paris, 1824. Սեկ այլ հրատարակություն լույս է տեսել 4 հատորով, Լահեյում և Ամստերդամում, 1834-1835 թվականներին (տե՛ս հաջորդ հղումը):

² A. C. d'Ohsson, *Histoire des Mongols, depuis Tchinguiz-Khan jusqu'a Timour Bey ou Tamerlan, avec une carte de l'Asie au XIIIe siècle*, t. 3, La Hay-Amsterdam, 1835, p. 337-338.

³ *Des peuples du Caucase et des pays au nord de la Mer Noire et de la Mer Caspienne, dans la dixième siecle, ou voyage d'Abou-el-Cassim*, Paris, 1828.

տություն գրել կանաչ սպաթների մասին: Այս աշխատությունը հրատարակվել է Շվեդական ակադեմիայի գիտական աշխատությունների ժողովածուում¹: Բերգելիուսի օժանդակությամբ էլ դ'Օստոնը 1817-ին դարձել է Շվեդիայի Գիտությունների ակադեմիայի անդամ: Նույն 1817-ին նրանք հանդիպել են Փարիզում, և դ'Օստոնը դիվանագիտական հմտությամբ լուծել է Բերգելիուսի և ֆրանսիացի քիմիկոս Գեյ-Լյուսակի միջև եղած տարաձայնությունը: Մի քանի տարի անց Բերգելիուսին կրկին հանդիպելով Փարիզում՝ դ'Օստոնը նրան առաջարկել է ֆրանսերեն թարգմանել երկու գլուխ նրա նոր լույս տեսած քիմիայի դասագրքից: Երբ Արրահամ Կոնստանտինը Ստոկհոլմ է մեկնել 1821-ին, Բերգելիուսը խնդրել է «փոքրիկ դ'Օստոնին» աշխատել իր տարրալուծարանում: Շվեդիայի Գիտությունների ակադեմիայում պահվում է Բերգելիուսին դ'Օստոնի գրած ավելի քան 70 նամակ:

Արրահամ դ'Օստոնը 1817-ին դարձել է Շվեդիայի Գիտությունների ակադեմիայի անդամ, 1823-ին՝ Գրականության և արվեստի ակադեմիայի, իսկ 1828-ից՝ գիտական ընկերության պատվավոր անդամ Ուփսալայում: Կյանքի վերջին տարիներն անցել են Բեռլինում, որտեղ նրա տունը բազմաթիվ քաղաքական գործիչների և արվեստագետների հանդիպման վայր է եղել: Իր գրադարանը նա կտակել է Լուդվիգի համալսարանին (300 գիրք և 17 արևելյան ձեռագրեր)²:

Հիշենք նաև, որ դ'Օստոնի քույրը՝ Լյուսի Կլեր Մուրաջա դ'Օստոնը (1778-?), 1798-ից ամուսնացած է եղել շվեդ դիվանագետ Նիլս Գուստավ Պալինի (1765-1842) հետ, որը 1805-1824 թվականներին եղել է Շվեդիայի դեսպանը Կոստանդնուպոլսում: Ամուսնու մահից հետո տիկին Պալինը բնակվել է Ստոկհոլմում³: Հավանաբար նա եղել է Շվեդիայի մայրաքաղաքի առաջին հայազգի բնակիչը: Ունեցել է վեց զավակ: Նրանցից Ամալիա Պալինն ամուսնացել է Իսպանիայի դեսպանորդ Խոսե Մորենո ի Լանդարուրիի (մահացել է 1862-ին, Ստոկ-

հոլմում) հետ, իսկ որդիներից Ռոբերտ Պալինը եղել է շվեդական բանակի կապիտան¹:

XIX դար

Այս հարյուրամյակում ժամանակ առ ժամանակ Շվեդիայի քաղաքացիությունում պատահականորեն հայտնվել են հատուկներտ հայեր: Նրանցից ոմանք շահել են շվեդական արքունիքի վատահությունը և նշանակվել պաշտոնների: Հաշվի առնելով նրանց չափազանց գունագեղ անձնավորություններ լինելու իրողությունը՝ ավելորդ չենք համարում կենտրոնանալ այդ անձանց հետաքրքրաշարժ կենսագրությունների վրա:

Ալեքսանդրիայում բնակված հայ առևտրական Ջովաննի դ'Անաստագին (1770-1857) 1828-1857 թվականներին եղել է Շվեդիայի և Նորվեգիայի գերագույն հյուպատոսը Եգիպտոսում: Նա ծնվել է Դամասկոսում: Իսկական անունը հայտնի չէ (հավանաբար՝ Հովհաննես): Նրա հայրը Նապոլեոն Բոնապարտի՝ Եգիպտոս կատարած արշավանքի ժամանակ՝ 1788-1799 թվականներին ուղևորվել է Եգիպտոս, և այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը պատերազմ է հայտարարել Ֆրանսիային, դարձել է ֆրանսիական բանակի մատակարար: Դեռատի որդին ուղեկցել է հորը և օգնել նրան: Սակայն Նապոլեոնի պարտությունը և ֆրանսիական զորքերի հեռանալը Անաստագիի հորը հասցրել են սնանկության, և նա շուտով մահացել է: Ընտանիքի հոգսն ընկել է Հովհաննեսի վրա: Նա սկսել է զբաղվել առևտրով: 1825 թվականի նախօրեին նա արդեն եղել է Ալեքսանդրիայի նշանավոր և ազդեցիկ վաճառականներից մեկը, վայելել Եգիպտոսի տիրակալ Մուհամեդ Ալիի բարեհաճությունը:

Դ'Անաստագիի անունը հայտնի է եգիպտագիտությանը, քանի որ նա առաջինն է հայտնաբերել, գնել և եվրոպական տարբեր թանգարանների վաճառել հին եգիպտական մշակույթի բազմաթիվ առար-

¹ C. D'Ohsson, *Kort öfversigt af chemiens historia ifrån de äldsta tider. Taf. hållit vid præsidii nedläggande uti Kongl. Vetenskaps-academien*, den 5 april 1826. Sthlm, P. A. Norstedt & söner, 1826.

² See *Svenskt biografisk lexikon*, b. XI, Stockholm, 1945, s. 340-345.

³ Ture J. Arne, *Svenskarna och Österlandet*, s. 79.

¹ Դ'Օստոնի սերունդների մասին մանրամասն տես՝ *Semi-Gotha Från Ghetton till Riddarhuset En studie i förjudningen av det ledande, svenska överskiktet med förord av Elof Eriksson*, Stockholm, 1939, էջ 153-155:

կաներ: Գ՝Անաստագին անձամբ պեղումներով չի գրառվել, այլ վարձել է գործակալներ, որոնք շրջել են ողջ Եգիպտոսով և չնչին գումարներով ձեռք բերել հնագիտական առարկաներ: Նրա հայթայթած հին եօչիպտական հնություններից մի քանիսը պահվում են Ստոկհոլմի, Լոնդոնի, Փարիզի, Ամստերդամի, Լեյդենի, Բրյուսելի և Պետերբուրգի քանդարաններում: Բրիտանական քանդարանում 1839 թվականից պահվում են դ՛Անաստագիի անունը կրող ինը մեծարժեք պապիրուսներ:

Նա մտերիմ է եղել եգիպտաբանության հիմնադիր Ժան-Ֆրանսուա Շամպոլյոնի հետ: Նրանք ծանոթացել են դեռևս 1824-ին, Իտալիայում: Եգիպտական հնությունների իր հավաքածուի որոշ առարկաների մակագրությունները դ՛Անաստագին վերծանել է Շամպոլյոնի հիերոգլիֆների համակարգով¹: Ժան-Ֆրանսուա Շամպոլյոնի «Եգիպտոսը. նամակներ և ճամփորդության օրագիր (1828–1829)» ուղեգրության մեջ² որոշ տվյալներ կան դ՛Անաստագիի վերաբերյալ, որին մի տեղ նա հիշել է որպես Շվեդիայի հյուպատոսի: Ֆրանսիացի գիտնականն իր օրագրում նշել է, որ 1828-ի օգոստոսի 18-ին, երբ ժամանել է Ալեքսանդրիա, իրեն դիմավորողների մեջ եղել է նաև Ջովաննի դ՛Անաստագին³: Երկու օր անց Շամպոլյոնն այցելել է դ՛Անաստագիին: Օգոստոսի 20-ի գրառման մեջ նա հետևյալն է գրել դ՛Անաստագիի մասին. «Սա հաճելի արտաքինով և սրտաբաց շարժումներով մի տղամարդ է, որ գերազանց համբավ ունի իր ազնվության շնորհիվ: Նա մեծ առևտուր է անում, և Ալեքսանդրիայի տասներկու շինություններից առնվազն վեցը նրանն են: Պարոն դ՛Անաստագին, հայկական ծագումով, բավական մեծ վստահություն ունի փաշայի մոտ և հատկապես իր հայրենակից նախարար Պողոսի մոտ (նկատի ունի պետական գործիչ Պողոս Յուսուֆյանին (1768–1844) – Ա. Բ.): Շվեդիայի այս հյուպատոսը մեզ ընդունեց իր դիվանում, և արևելյան սովորություն-

նից հետո, որ ընդունել են ֆրանսիացիները... մեզ մատուցեց ծխամորձ և սուրճ»¹: Օգոստոսի 24-ի գրառման մեջ Շամպոլյոնը նշել է, որ դ՛Անաստագին իրեն շռայլորեն բարեհաճ վերաբերմունք է ցույց տվել և որը «բոլոր կողմերից հարգարժան մի անձ է»²: Երկու օր անց էլ նշել է, որ հատկապես դ՛Անաստագին, մեծապես հոգ է տանում իրենց³:

1847-ին Թեհրան է ժամանել շվեդ բժիշկ Կոնրադ Ֆագերգրենը (1818–1879): Որոշ ժամանակ աշխատել է պարսից շահի համար, սակայն նրա մահից հետո տեղափոխվել է Շիրազ: Այստեղ ամուսնացել է շիրազցի հայ վաճառականի դստեր հետ, որը նրան պարզել է 16 դուստր: Նրանցից չորսը վաղ են մահացել: Ամենամեծ դուստրը հետագայում ամուսնացել է արկածալից կյանք ունեցած գեներալ, Իրանում Շվեդիայի և Նորվեգիայի գլխավոր հյուպատոս Ալբերտ Հուստում-Շինդլերի հետ⁴: Գուստրերից մեկն էլ ամուսնացել է մի հայ վաճառականի հետ: Ֆագերգրենն ինքը մահացել է Շիրազում:

1867–1872 թվականներին Շվեդիայում է քնակվել Օհան Գեմիրճյանը (1836–1877), հայտնի նաև Հաբիբ բեյ անունով: Իր տարաշխարհիկ անունով, արտաքինով և գործունեությամբ շվեդական հասարակության ուշադրությունը գրաված այս գործչին հարկ է ներկայացնել որոշ մանրամասնությամբ: Ծնվել է Կահիրեում, Ստեփան բեյ Գեմիրճյանի և Փեմբեի (Օհան Թերզիի դստեր) ընտանիքում: Ստեփան բեյը (մահ. 1860) 1849–1859 թվականներին եղել է Եգիպտոսի արտաքին գործերի նախարարը և օգնել է Ֆերդինանդ Լեսեպսին Սուեզի ջրանցքի բացման ժամանակ: Օհանը 1844–1853 թվականներին ապրել է Ֆրանսիայում, ուսանել Ստանիսլաս քոլեջում և Վերսալում: Երկու տարի էլ ապրել է Անգլիայում, որտեղ շարունակել է ուսումը և Եգիպտոս է վերադարձել 1855-ին: Այստեղ 1859-ին նա ամուսնացել է Արուս Արազյանի հետ: Ըստ Շվեդիայի թագավորի բժիշկ Էդուարդ Էդ-

¹ *Who was who in Egyptologie*, London, 1972, p. 8. Նիկոլայ Պետրովսկի, Հին եգիպտական կամ «Բուտենյովի պապիրուսը, *Գարուն*, 1982, p. 2, էջ 58-59: Տես նաև Յուրի Կարապետյան, Ջովաննի Անաստագիի առեղծվածը, *Հայաստանի հանրապետություն*, 14.06.1997:

² *L'Égypte de Jean-François Champollion: lettres et journaux du voyage (1828–1829)*, Paris, 2001.

³ Նույն տեղում, էջ 44:

¹ Նույն տեղում, էջ 46:

² Նույն տեղում, էջ 51:

³ Նույն տեղում, էջ 52:

⁴ Bahram Sohrabi, *Early Swedish Travellers to Persia, Iranian Studies*, vol. 38, no. 4, December 2005, p. 641-660.

հովի հիշողությունների՝ Օհան Գեմիրճյանը Շվեդ-Նորվեգիայի թագաժառանգ Ավգուստի հետ ծանոթացել է վերջինիս Եգիպտոս կատարած ճանապարհորդության ժամանակ, որին օգնել է Նեղոսի ջրերում կոկորդիլոս որսալիս: Օհանը 1866-ին եկել է Շվեդիա՝ որպես Եգիպտոսի խղիվ Իսմայիլ փաշայի դեսպանորդ: Նա Շվեդիայի Կառլ XV թագավորին ընծայել է երկու բերքերական նժույգ¹: Հաստատվելով Ստոկհոլմում՝ 1867-ին Գեմիրճյանն ստացել է շվեդական քաղաքացիություն: Շահելով թագավորի համակրանքը՝ նա դարձել է արքունի ախոռապետ: 1871-ին ընդունել է ավետարանչականություն-լյութերականություն²:

Ժամանակի հայ մամուլը գրել է Գեմիրճյանի մասին: «Շուեթի վեհա. թագաւորին Մեծ Ախոռապետ մոսի Տեմիրժիօնը, նոյն տէրութեան պատերազմական ֆոէկաթով մը յԵգիպտոս հասեր և մատուցեր է բարձրա. Խըտիվին, վսեմա. Նուպար փաշային և մէկ երկու եգիպտական գլխաւոր պաշտօնատարաց շքանշանները՝ զորս յանձնած էր իրեն Շուեթի վեհապետը: Ուրախ սրտի իմացանք և կը փութամբ ծանուցանելու մեր ընթերցողաց, թէ յիշեալ մեծաստիճան պաշտօնատարը՝ որ սիրելի եղած է յաշս Շուեթի թագաւորին, Հայ է ազգաւ, Հայաստանեայց Ս. եկեղեցոյ հաւատարիմ զաւակ և անունն ալ Տեմիրճեան է, զոր լրագիրները սխալմամբ Տեմիրժիօն գրած են»³:

Հատկանշական է, որ Օհան Գեմիրճյանի ջանքերով է, որ 1870-ին Եգիպտոս է հրավիրվել նորվեգացի հռչակավոր թատերագիր Հենրիկ Իբսենը, որտեղ նա մասնակցել է Սուեզի ջրանցքի բացմանը՝ իբրև Նորվեգիայի ներկայացուցիչ: Այդ առթիվ Իբսենը պարզևատրվել է Եգիպտոսի խղիվի կողմից: Գեմիրճյանը այդ պարզևն իր հետ բերել է Շվեդիա: Պահպանվել է Իբսենի՝ Օհան Գեմիրճյանին 1870 թվականի նոյեմբերի 23-ին Գրեզդենից գրած նամակը, որտեղ նա մասնավորապես նշել է. «Եգիպտոսում իմ կեցությունը կյանքիս ամենահետաքրքիր ու ամենաուսանելի օրերն են եղել, և երբեք չպիտի մոռանամ

¹ *Det mångkulturella Sverige...*, s. 20.

² Solna Kyrkoarkiv (Sverige), B35, Protokoll, Hållna i kyrkostämmor och kyrko skolrådssammanträden 7/10 1863-26/12 1881 K IIa 1:1, KI, 3, C 32.

³ «Մանգումեի էֆրեաթ», 1870, ք. 1105, տե՛ս *Արարատ*, 1870, ք. Թ, հունվար, Բ տարի, էջ 232:

այն ծառայությունը, որ դուք ինձ մատուցեցիք. չպիտի մոռանամ նաև բոլոր այն վայելքը, որ պարտական եմ Ձեզ»¹:

Ժամանակակիցներն Օհան Գեմիրճյանին հիշել են որպես բնավորությամբ շատ ճկուն և հաճոյախոս մարդու: Նա ծանոթություններ է ունեցել եվրոպական բարձր շրջաններում: Ենթադրվում է, որ Օհան Գեմիրճյանը մեծ ազդեցություն է ունեցել Կառլ XV-ի վրա: Որպես շվեդական արքունիքի ներկայացուցիչ նա մասնակցել է մի շարք պետական հանդիպումների, այդ թվում՝ 1869-ին Սուեզի ջրանցքի բացմանը²: Նա բնակվել է Ստոկհոլմից ոչ հեռու՝ Օվեր-Յարվա բնակավայրում (Ուլրիքսդալի մոտ): Ենթադրվում է, որ այնտեղ գտնվող արևելյան ոճի մատուղը, որի վրա առկա են հայ ճարտարապետության տարրեր, կառուցել է Օհան Գեմիրճյանը կամ նրա եղբայրներից մեկը, որտեղ հանդիսություններ են կազմակերպվել թագավորի համար: (Այս շինությունը շվեդները երբեմն մամուլում կոչել են «մահմեդական մատուռ», ինչն անհեթեթություն է): Ժամանակակիցների վկայությամբ՝ Գեմիրճյանն արևելյան շունչ է ներմուծել շվեդական արքունիք, որի համար վաստակել է շվեդ պալատականների թշնամանքը: Կարծիք կա նաև, որ թագավորի վրա Գեմիրճյանի ազդեցությունն այնքան ուժեղ է եղել, որ նա ամուսնության ծրագիր է ներկայացրել Կառլին: Նրա առաջարկած թեկնածուն եղել է լեհ կոմսուհի Մարիա Կրասինսկան, սակայն ծրագիրը չի իրականացել:

Գեմիրճյանը հրատարակել է երկու ֆրանսերեն և մեկ շվեդերեն աշխատություն: Առաջին երկուսը վերաբերում են Արևելքի հետ եվրոպական երկրների ունեցած առևտրական կապերին, երրորդը Ֆրանսիայի թագավոր Հենրի V-ի մասին է³: Նա պարզևատրվել է մոտ մեկ

¹ *Յուսաջ*, 7.05.2006:

² Հատկանշական է, որ Սուեզի ջրանցքի կառուցման աշխատանքներին մասնակցել են բազմաթիվ հայ բանվորներ, միայն 65 հոգի՝ մշեցիներ: Նրանցից ոմանք մահացել և բաղվել են տեղի լատինական գերեզմանատանը (տե՛ս Տիմոթեոս ծ. վ. Սափրիչեան, *Երկարամեայ պանդխտություն ի Հայեջիստան*, հատոր 1. Երուսաղեմ, 1871, էջ 8, 10):

³ Ohan Demirgian, *L'Egypte. la Suede et la Norvege, aperçu commercial*, Le Caire, 1868. *Om de förenade konungarikenas framtida handelsförhållanden med af Seende å de nya kommunikationerna*, Stockholm, 1870. *Henri V roi de France (le Comte de Chambord) avec une lettre du prince*, Paris, 1873.

տասնյակ շքանշաններով՝ շվեդական «Վասա», ֆրանսիական, բելգիական, պարսկական, իսպանական, օսմանյան և այլն:

Կառլ XV-ի մահից հետո (1872) Դեմիդյանը տեղափոխվել է Ֆրանսիա: Շվեդ քաղաքական գործիչներն արշավ են սկսել նրա դեմ: Եվրոպական բարձր հասարակությունը երես է քեքել նրանից, ինչը շատ ծանր է տարել Դեմիդյանը: Նա վախճանվել է 1877-ին, Մարսելում՝ 41 տարեկանում, քվարտության մեջ: Շվեդական աղբյուրները նրան բախտախնդիր և քծնող են ներկայացնում, սակայն կարծում ենք, որ այս ակամավոր գործչին պետք է գնահատել ըստ արժանվույն¹...

1882–1903 թվականներին Շվեդիայի մայրաքաղաքում բնակվել է հայ բանասիրության երախտավոր դեմքերից Նորայր Բյուզանդացին (Ստեփան Գազեզյան Ճիզմեճյան, 1844–1916): 1866-ին Վենետիկի Մխիթարյան միաբանությունում ձեռնադրվել է քահանա: Հետագայում հրաժեշտ է տվել հոգևոր կոչմանը և 1881-ին ամուսնացել շվեդաբնակ օրիորդ, Շվեդիայի արքունի լուսանկարիչ Սելմա Յակոբսոնի հետ: Սելման թեև ազգությամբ հրեա էր՝ ամուսնությունից հետո վերանկրտվել է Կոստանդնուպոլսի հայկական եկեղեցում և վերանվանվել Սաթենիկ: Այդ ամուսնության պատճառով լուսանկարչուհու հարազատները խզել են նրա հետ բոլոր կապերը: Բյուզանդացին 1885-ին ընդունել է Շվեդիայի հպատակություն: Շվեդիայում ապրած տարիներին Նորայր Բյուզանդացին ի տարբերություն ժամանակի բանասերների մեծ մասի՝ զբաղվել է միմիայն բանասիրական աշխատանքով, ստեղծել 130-ի չափ մեծ ու փոքր լեզվագիտական, բնագրագիտական, աղբյուրագիտական մեծարժեք աշխատություններ: Բավական է նշել, որ հայ դասական մատենագիրների գործերի հրատարակություններում նա կատարել է 10 հազարից ավելի բնագրագիտական ուղղումներ: Իր ֆրանսերեն-հայերեն բառարանը («Բառագիրք ի գաղղիերեն լեզուի ի հայերեն, հետևողութեամբ բառարանացն Էմիլ Լիթթեի և Գաղղիական Ակադեմիայի») հրատարակվել է 1884-ին,

Կոստանդնուպոլսում, Սելմա Յակոբսոն-Նորայրի հովանավորությամբ և ընծայվել նրան¹: Բյուզանդացու կենդանության օրոք լույս են տեսել նրա մի քանի այլ ուսումնասիրություններ², որոնցից «Հայկական բառարանութիւնք, ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութեան բառից»-ը (տպագրված իր ծախսով, Կոստանդնուպոլսում) 1882-ին արժանացել է Իզմիրյան գրական մրցանակին³: Ստոկհոլմում 1887-ին Բյուզանդացին հրատարակել է առաջին հայալեզու պարբերականը՝ Սկանդինավիայում՝ «Քննատք» խմորատիպ հանդեսը⁴, որի հրատարակումը երկրորդ պրակից հետո դադարեցրել է: Սուլթան Համիդի կազմակերպած հայկական ջարդերի առթիվ 1894-ին Բյուզանդացին հողվածներ է տպագրել Ստոկհոլմի «Աֆրոնբլադեթ» և «Սվենսքա դագբլադեթ» պարբերաթերթերում: Նա Շվեդիայից թղթակցել է հայ մամուլին, մասնավորապես՝ Կոստանդնուպոլսի («Փունջ», «Մասիս», «Լոյս»), Փարիզի («Բանատք»), Թիֆլիսի («Լումայ», «Մշակ», «Արծազանք»), Վիեննայի («Հանդէս ամսօրեայ»), Վենետիկի («Բազմավեպ»), Մոսկվայի և Չնյուռնիայի ամսագրերին և թերթերին: Թղթակցել է հայ և օտարազգի բազմաթիվ գիտնականների հետ, եղել Արևելագետների միջազգային միության անդամ:

1899-ին վախճանվել է Սելմա Յակոբսոն-Նորայրը: 1904-ին Նորայր Բյուզանդացին տեղափոխվել է Վենետիկ՝ պատճառաբանելով Ստոկհոլմի խիստ կլիման և իր բացած խանութի սնանկացումը: 1910 թվականին կազմել է իր կտակը՝ նշելով, որ եթե երեք տարում իր ձե-

¹ Այս հանգամանքն է նկատի ունեցել Հովհաննես Թումանյանը՝ իր «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածում գրելով հետևյալը. «Նորայր Բյուզանդի պես մի գիտնական հայ ազգի լեզուն ուսումնասիրում է հենված մի օտարուհու օժանդակության վրա ու միշտ անտես առնված հայությունից և զայրությով ցանկանում է իր գրվածքները ոչնչացնել» (Հովհաննես Թումանյան, *Երկերի ժողովածու չորս հատորով*, հատոր 4, Երևան, 1969, էջ 263-264):

² *Հայկական բառարանութիւնք, ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութեան բառից*, Կ.Պոլիս, 1880: *Կորիւն վարդապետ և նորին բարգմանութիւնք*, Տփղիս, 1900:

³ Մարտիրոս Մինասեան, Նորայր Բյուզանդացու կեանքը, հրատարակությունների և դիանի ցանկը, *Բազմավեպ*, ք. 1-4, 1983, էջ 46:

⁴ *Քննատք ինքնագրութիւն Նորայրի*. «Ռրբան կարեմ՝ զայն առնին», պրակ 1, Ստոկհոլմ, տպարան Կառլսոնի, 1887, 64 էջ, պրակ 2, տպարան Գերմանոսի, 1887, 63 էջ:

¹ Օհան Դեմիդյանի մասին տես Barbro Strandman, *Över-Järva: en gammal solnagårds historia*, Solna, 1969, էջ 26-33:

ռագրերը 200 հազար քրոնով գնող չգտնվի՝ ինքն այրելու է: Ժամանակի մասունքն իրավամբ «վայրի» է համարել այդ կտակը, այն դեպքում, երբ հայ գիտական հասարակությունն օր օրի սպասել է նրա աշխատությունների լույսընծայմանը¹: Թեև արխիվի գնորդ չի գտնվել՝ Բյուզանդացին, այնուամենայնիվ, չի ոչնչացրել այն: Նա վախճանվել է Վենետիկում և թաղվել Ստոկհոլմում՝ 90 հազար շվեդական քրոն գումար կտակելով (իր արխիվի և գրադարանի հետ մեկտեղ) «Ֆրեդրիկա Բրեմեր» շվեդ կանանց բարեգործական միությանը: Նրա արխիվը և գրադարանի մի մասը տարիներ շարունակ մնացել են Գյոթեբորգի համալսարանի նկուղներում: 1927-ին Եգիպտոսի հայության առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսը Կահիրեի շվեդական դեսպանի միջնորդությամբ խնդրել է իրենց առաջնորդարանին հանձնել Նորայր Բյուզանդացու՝ Ստոկհոլմում մնացած ֆրանսերեն-հայերեն բառարանի օրինակները՝ հասույթը հատկացնելու համար Կահիրեի հայ որբուհիների: Շվեդ կանանց ընկերությունը հանձնել է ողջ բառարանները (հազար օրինակ, ստանալով 5000 եգիպտական դահեկան՝ իրր ծախս մինչև Կահիրե փոխադրության և վարձ մթերումի): Այդ առթիվ եգիպտական դեսպանը, որ հաջողեցրել է այդ գործը, իր կողմից 10 եգիպտական ոսկի է նվիրել հայ որբուհիներին, դրանից բացի՝ ևս 10 ոսկի Կահիրեի նորակառույց հայկական եկեղեցուն²: Հետագայում Բյուզանդացու արխիվի հիմնական մասը կարգավորել է խորհրդային վտարանդի Մուրեն Երզնկյան-Լորելին: Ամերիկահայ Ազգային խորհրդի դրամական օժանդակությամբ Ուփսալայի համալսարանը միկրոթապավենների է վերածել Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի» և «Տաղարան միջնադարեան քնարերգութեան» ուսումնասիրությունները և նվիրաբերել Ամերիկահայ ազգային խորհրդին, մյուս օրինակը՝ Երևան, Գիտությունների ակադեմիային³:

¹ *Ժամանակ*, 15.01.1910: Տես նաև՝ նույն տեղում, 30.12.1910:

² *Հայրենիք*, 14.08.1927:

³ Տես մեր հրատարակումը՝ Նյութեր Նորայր Բյուզանդացու արխիվի վերաբերյալ, *Բանբեր Երևանի համալսարանի*, 2003, ք. 2, էջ 104-109:

Մի խումբ շվեդ միսիոներներ XIX դարի վերջերից քարոզական գործունեություն են ծավալել Ռուսաստանի, Իրանի և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում: Եթե Արևմտյան Հայաստանում քարոզական գործունեություն մեծ մասամբ ծավալել էին ամերիկացիները, ապա շվեդները գործել են մասնավորապես Այսրկովկասի հայաշատ շրջաններում: Նրանցից առաջ արդեն նմանատիպ գործունեություն որոշ չափով սկսել էին շվեյցարացի քարոզիչներ՝ բողոքականության կողմը դարձնելով ոչ մեծ թվով հայերի, հիմնականում անգրագետ և կիսագրագետ խավին¹: Ընդհանրապես եվրոպացի քարոզիչների գործունեությունը հաշտ աչքով չի դիտվել հայության շրջանում, քանի որ այն պառակտում է մտցրել հասարակության մեջ: Մուրացանը 1883-ին հրատարակել է «Հայ բողոքականի ընտանիքը» վեպը, որը թանձր գույներով պատկերում է լյութերականություն ընդունած մի հայ արհեստավորի ընտանիքի կործանումը: Ամերիկացիները, 1830-ականներին հայտնվելով Օսմանյան կայսրությունում, նախապես նպատակ են ունեցել մահմեդականներին դարձի բերել, սակայն նրանց շրջանում հաջողության չհասնելով՝ ստիպված են եղել իրենց առաքելության արդարացումը գտնել քրիստոնյաների մեջ բողոքականություն քարոզելով: «Անիրաւ նախատինք մըն էր Միսիոնարներու կողմէ՝ մեր եկեղեցիին քրիստոնէական էութիւնը ուրանալ և գալ քրիստոնէութիւն քարոզել քրիստոնէայ հայ ժողովուրդին», – գրել է Ռուբեն Չարդարյանը²:

Շվեդական քարոզական Կազմակերպությունը (“Missionsförbundet”), որ բողոքական քրիստոնյաների միություն էր, 1870-ականներից սկսել է իր ներկայացուցիչներին ուղարկել աշխարհի տարբեր երկրներ՝ բողոքականություն քարոզելու: Եթե իրենց գործունեության սկզբում նրանք այդ գործին հատկացրել են 68 հազար

¹ Ավետարանական քարոզիչները թուցիկ հիշվել են հայ գրականության մեջ: Շիրվանզադեի «Նամուս» պիեսի հերոսներից բողոքական Մարտիրոսը հիշում է Բագելից եկած քարոզիչներին (Ալեքսանդր Շիրվանզադե, *Նամուս*, Կ.Պոլիս, 1921, էջ 76):

² Ռ. Չարդարյան, Հայաստան և օտար միսիոնարներ, *Բազմիկ*, Ֆիլիպե, 12.11.1905:

քրոն և ունեցել են ընդամենը 6 քարոզիչ, ապա 1900-ականների վերջին նրանց ծախսը կազմել է 700 հազար քրոն և ունեցել են 326 միսիոներներ¹: Շվեդական Զարոզչական Կազմակերպությունը 30 տարուց ավելի հատուկ ուշադրություն է նվիրել հայերի հետ տարվող աշխատանքներին, որոնց մասին պարբերաբար հաղորդումներ են տպագրվել շվեդ քարոզիչների պարբերականներում: Արդեն 1904-ին շվեդական հանրագիտարանը գրել է այդ մասին², իսկ 1907-ին առաջին գիրքն է տպագրվել՝ նվիրված հայոց մեջ շվեդների քարոզչական գործունեությանը³:

1886-ի օգոստոսին Կովկաս են այցելել առաջին շվեդ քարոզիչները՝ Լարս Էրիք Հոգբերգը (1859–1924) և Նիլս Ֆրեդրիք Հոյերը (1857–1925), Շամսախում այցելել են Այսրկովկասի առաջին ավետարանչական քարոզիչներից մեկին՝ Մարգիս Համբարձումյանին (Համբարձումով), որը 1860-ականներից աշխատել է Բազելի քարոզիչների հետ⁴:

Հոյերը սկսել է աշխատել Թիֆլիսում՝ հայերի, ռուսների և քաթարների (ազերիների) մեջ, ուսանել հայոց լեզուն: Հոգբերգն այցելել է Հայաստան, գործել Պարսկաստանի Ղարադաղ շրջանի հայերի մեջ, 1889-ին Թավրիզում բացել ավետարանչական դպրոց: Նրա առաջին երեք աշակերտներից մեկը հայ է եղել:⁵ Հետագայում Հոգբերգն իր հուշերում հայերին հիշել է որպես մի «մտավորական ժողովրդի, որոնք կրում են հարյուրամյակների ճնշումը»⁶:

¹ *Բարի լուր*, 15.02.1909, էջ 63:

² *Nordisk familjebok: konversationslexikon och realencyclopedia*, b. 2, Stockholm, 1904, s. 19.

³ Axel Ihermark, Anton Karlgren, *Bilder ur missionshistorien jämte missionshistoriska öfversiktier på uppdrag af studenmissionsföreningen i Uppsala*, Lund, 1907.

⁴ Svenska missionsförbundet. Yttre missionen. Red. av T. Anderson, Stockholm, 1928, s. 22. Ի դեպ, Մարգիս Համբարձումյանի դպրոցում որոշ ժամանակ սովորել է Ալեքսանդր Շիրվանզադեն. «Այց տարեկան էի, երբ մի օր, առանց իմ ծնողներին հարցնելու, վազեցի մեր դրացի Մարգիս վարպետի ուսումնարանը: ...Մարգիսը բողոքականների պարագլուխն էր: Դա մի հեզահամբույր ծերունի էր, քարձրահասակ, առույգ, ժպտուն: ...Նա հարզված էր աճներից, նույնիսկ ոչ բողոքականներից» (Ալեքսանդր Շիրվանզադե, *Երկեր հինգ հատորով*, հ. 5, Երևան, 1988, էջ 10):

⁵ L. E. Högborg, *En missionsars minnen: självbiografi*, Stockholm, 1924, s. 46.

⁶ L. E. Högborg, *Bland Persiens Muhammedaner*, Stockholm, 1920, s. 244.

Բողոքական քարոզիչ, աստվածաբան և թարգմանիչ Արքահան Ամիրխանյանցը (1838–1913), որ թարգմանել է Աստվածաշունչն արևելահայերեն և թուրքերեն, կատարելապես տիրապետել է գրաբարին և աշխարհաբարին, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, եբրայերեն, հունարեն, գերմաներեն, անգլերեն, ռուսերեն, շվեդերեն և բուլղարերեն լեզուներին: 1886 թվականից սկսած՝ Թիֆլիսի Ելիզավետսկայա փողոցի իր տանը հանդիպումներ է կազմակերպել օտարազգի, այդ թվում և շվեդ քարոզիչների հետ: Շվեդերեն լեզուն երբեմն խառնվել է Ամիրխանյանցի տանը հնչող բազմալեզվության մեջ: Ռուս կառավարության հրամանով 1888-ի գարնանն Արքահան Ամիրխանյանցը իր ավետարանչական գործունեության համար ձերբակալվել և աքսորվել է Սիբիր¹: Լարս Էրիք Հոգբերգը նրան այցելել է Օրենբուրգում և գրել նրա մասին իր հուշերում²: Սակայն արդեն 1889-ին Ամիրխանյանցը Ստոկհոլմում էր, որտեղ նա մասնակցել է արևելագետների համաժողովին՝ զեկուցում կարդալով թուրքական չաղաբայի լեզվի մասին³: 1889-ին ընտանիքով հաստատվել է Հելսինկիում, իսկ 1894-ին ընտանիքի հետ միասին ստացել է ֆիննական քաղաքացիություն: 1893-ի փետրվարի 25-ին Ամիրխանյանցը դասախոսություն է կարդացել Հայաստանի մասին Հելսինկիի Աշխարհագրական ընկերակցությունում և գիրք է հրատարակել մահմեդականների մեջ քարոզչական գործունեության մասին: 1896-ին Ամիրխանյանցը տեղափոխվել է Բուդաբիա՝ օգնելու համիդյան կոտորածներից մազապուրծ հայ գաղթականներին: Վառնայում բացել է սեփական դպրոց: Այստեղ 1909-ին նրա թարգմանությամբ հայերեն լույս է տեսել Ղուրանը, որը բարձր է գնահատել Ավետիք Իսահակյանը⁴:

Շվեդական միսիոներական միության հովանավորությամբ Քրիստինեհամնսի շվեդ բողոքականների դպրոցում 1886–1888 թվականներին ուսանել է շուշեցի Մարգար Տեր-Ասատրյանը (Մարգարա

¹ E. John Larsson, *Vid Ararats fot*, Stockholm, 1919, s. 43.

² L. E. Högborg, *Skuggor och dagrar från missionsarbetet i Ryssland*, Stockholm, 1914, s. 306–313.

³ K. U. Nylander, *Orientalistkongressen i Stockholm-Kristiana: några skildringar från utlandet*, Upsala, 1890, s. 119.

⁴ *Հորիզոն*, Թիֆլիս, 22.10.1909, տե՛ս Լևոն Կիրակոսյան, Ավետիք Իսահակյանը և Ղուրանը, *Իրան-նամե*, 1993, ք. 3, էջ 23:

Ասատրով, ծն. 1868) և Էրզրումցի Հովհաննես Ավետարանյանը (ծն. 1861): Վերջինս Շուրքի անունով մի մոլեռանդ մասնագետական մոլլա էր, բուրք դալիք բայբուրթցի Էմինի թոռը, որ կապվել է ավետարանչականների հետ, ընդունել քրիստոնեություն, 1882 կամ 1884 թվականին եկել է Թիֆլիս և մկրտվել Աբրահամ Ամիրխանյանցի ձեռամբ¹: Տեր-Ասատրոյանը հետագայում աշխատել է Հայաստանի տարբեր շրջաններում: 1908-ին կրկին այցելել է Շվեդիա, Բաքվի «Բարի լուր»-ում և Բոսթոնի «Կոչնակում» հրատարակել իր «Ճանապարհորդական տպատրուքիս մասին»²: Լև Տոլստոյի 80-ամյակի առթիվ հոդված է հրատարակել շվեդական մամուլում: Իսկ Ավետարանյանը Շվեդիայում աստվածաբանություն և լեզուներ ուսանելուց հետո վերադարձել է Կովկաս, այնուհետև աշխատել է հիմնականում Միջին Ասիայում³:

Շվեդ քարոզիչ Հոլիերի նախաձեռնությամբ 1887-ի հուլիսին հիմնվել է Թիֆլիսի Հայ Ավետարանչական Միությունը: Մի փոքր ուշ, դարձյալ շվեդների հովանավորությամբ, կազմվել է Շամախու Լյութերական Ընկերությունը: Տարբեր վայրերում քարոզչական գործունեություն են ծավալել նրանց ներկայացուցիչ հայերը՝ Մարգիս Լևոնյանը (Կարս, Կարսի մարզի Ղարաղալա գյուղ, Ալեքսանդրապոլ), Ջոհրաբ Մարգսյանը (Երևան և Էջմիածին), Աբրահամ Մելիք-Ջեհանյանը (Հյուսիսային Կովկաս և Միջին Ասիա), Իս. Մարկոսյանը (Շուշի), Պատվական Թառայանը (Բաքու), Եսայի Թումանյանը, ազգությամբ

յամբ ասորի Մարգիս Մողղոսի Էյվազը (Աշխաբադ և Բուխարա), Գրիգոր Գևորգյանը (Օսմանյան կայսրության տարբեր վայրեր և Բուլղարիա), Սմբատ Բաղդասարյանը (Ռումինիա) և ուրիշներ¹: Քարոզիչ Յո. Է. Լունդալը նրանց բնութագրել է որպես «չափազանց բարեպաշտ և շնորհալի մարդիկ», բազմալեզվագետներ. նրանցից Տեր-Ասատրոյանը, Ջեհանյանը և Պատվական Թառայանը մայրենիից բացի տիրապետել են ռուսերեն, շվեդերեն, գերմաներեն, անգլերեն և թուրքերեն լեզուներին²: Ի դեպ, Թառայանը Բաքվում XX դարի սկզբին հրատարակել է «Բարի լուր» հայերեն և «Ռադոստոնայա վեստ» ռուսերեն ավետարանչական ամսագրերը, որտեղ հրատարակվել են կարճ թարգմանություններ նաև շվեդերենից: Տեր-Ասատրոյանը, Ջեհանյանը և Ավետարանյանը, ինչպես նաև ասորի Էյվազը պարբերաբար թղթակցություններ և նամակներ են ուղարկել շվեդական «Ավենսքա մորոնրադեր» և «Միսիոնսֆորբյունդեր» պարբերականներին (գրված գրագետ շվեդերենով և հաճախ՝ բավական վերամբարձ ոճով)³: Տեր-Ասատրոյանը հրատարակել է 21 նամակ-թղթակցություն (1891–1920), Ջեհանյանը՝ 11 (1895–1910), իսկ Ավետարանյանը վեց (1889–1891)⁴: Քարոզչական գործունեության լուսաբանումից բացի այս անձինք իրենց թղթակցություններում ներկայացրել են նաև Հայաստանի իրավիճակը: «Միսիոնսֆորբյունդերի» էջերում բավական հաճախ է հղովվել Հայաստանի և հայ ժողովրդի անունը՝ ինչպես հայ թղթակիցների, այնպես էլ Այսրկովկաս և Հայաստան այցելող շվեդ միսիոներների թղթակցությունների շնորհիվ:

Մի շարք շվեդ քարոզիչներ երկարատև աշխատել են հայերի մեջ, պարբերաբար իրենց թղթակցություններն ուղարկելով «Միս-

¹ Ավետարանյանի դարձի պատմությունը մանրամասն տես՝ Պատմության Յովհաննես կոչումով Շուրքի, Վառնա, 1899:

² Տե՛ս Մ. Տ. Ա., Ճանապարհորդական տպատրուքիս մասին, *Կոչնակ*, Պոսթըն, ք. 31, 1.08.1908, էջ 488-490, ք. 34, 29.08.1908, էջ 547-549, ք. 44, 31.10.1908:

³ Քաշգար քաղաքում Ավետարանյանը Նոր կտակարանը բարգմանել է տեղական լեզվով և տպագրել է Գերմանիայում (*Պատմության Յովհաննես կոչումով Շուրքի*, էջ 112): Ուղեգրական բնույթի թղթակցություններով աշխատակցել է շվեդական և գերմանական քարոզչական մամուլին (տես օրինակ, Hovhannes Avctarian, Strödda drag från det religiösa lifvet i Orienten, *Missionsförbundet*, 1.01.1898, էջ 8-11: J. Awetarian, Von Bulgarien nach Persien, Berlin, *Deutsche Orient Mission*, 1902), հանդես եկել նաև գերմաներեն առանձին գրքերով (J. Awetarian, *Von Bulgarien nach Persien*, Berlin, *Deutsche Orient Mission*, 1902. J. Awetarian, Geschichte eines Muhammedanes der Christ wurde von ihm selbst erzählt, Potsdam, *Deutsche Orient Mission*, 1905), որոնցում խոսել է նաև հայ ժողովրդի մասին: Հիրավի, սա բացառիկ մի դեպք է, երբ մի կրոնամուլ մոլլա ընդունել է քրիստոնեություն և դառնալով հավատացյալ քահանա նվիրվել Հիսուսի ուսմունքի քարոզչությանը:

¹ *Missionsförbundet*, 15.07.1898, s. 211; 01.09.1909, s. 17.

² *Svenska missionsförbundet...*, s. 31.

³ Տե՛ս օրինակ, Ս. Մողղոսի Էյվազի (*Missionsförbundet*, 15.12.1899), Հ. Ավետարանյանի (նույն տեղում, 01.01.1900, s. 7-11), Մ. Տեր-Ասատրոյանի (նույն տեղում, 01.01.1898, s. 8-11, 15.02.1908, s. 4, 01.06.1909, s. 167-168), Ա. Ջեհանյանի (նույն տեղում, 01.10.1909, s. 277-278, 15.04.1909, s. 119-120) թղթակցությունները: Հատկապես արժեքավոր են հայ կյանքը ներկայացնող Ջեհանյանի «Քարոզչությունը Կովկասում» ընդհանուր խորագրով լույս տեսած հոդվածները (նույն տեղում, 15.12.1908, s. 381-383; 01.10.1909, s. 323-324).

⁴ Տե՛ս Göran Gunner, Eric Lindberg, *Längtan till...*, էջ 261:

սխոնսֆորբյունդեթին»։ Նրանցից նախ և առաջ հիշենք Էլին Աննա Շառլոտա Սյունդվալին (1853–1921), որը 1888-ից սկսած 30 տարի աշխատել է Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Արարատյան դաշտավայրի գյուղերում և Արցախում։ Մի քանի անգամ եղել է Թիֆլիսում, Վանում և այլուր։ Սյունդվալը հիանալի տիրապետել է հայերենին և հաճախ կրել է հայկական զգեստներ։ Բազմիցս օգնություն է ցույց տվել Մեծ եղեռնից մազապուրծ հայ որբերին, աշխատել Սալմաստի (Իրան) Հաֆթվան հայկական գյուղի որբանոցում՝ երբեմն գրելով իր գործունեության մասին շվեդ ավետարանչական մամուլում։ Ակտիվորեն համագործակցել է ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց հանձնախմբին։ Էլին Սյունդվալը եղել է Շվեդական քարոզչական կազմակերպության՝ Այսրկովկասում աշխատած վերջին գործիչը։ Վախճանվել և թաղվել է Երևանում¹։

Աստվածաբան քահանա Փեր Փերսոնը (1867–1953) Ուիսալայում 1896 թվականին հրատարակել է «Հայերը և նրանց կարիքները» 24 էջանոց գրքույկը, որտեղ վիճակագրական տվյալներ կան դարավերջին Արևմտյան Հայաստանի հայության վերաբերյալ²։ Էրիք Յոն Լարսոնը (ծն. 1857) նույնպես աշխատել է հայերի հետ Օսմանյան կայսրությունում, Իրանում և Կովկասում։ Նա հեղինակ է երկու նշանակալից գրքույկների՝ թուրքերի կազմակերպած հայկական կոտորածների վերաբերյալ³։ Մոտ 1910 թվականին նա գրել է «Արարատ» քանաստեղծությունը⁴։ Օլգա Մուրերզը (ծն. 1880) հայերի հետ աշխատել է Թիֆլիսում և այլուր, 1909-ին։ Նրա «Հայ կանանց և երեխաների մեջ» հոդվածն ընդգրկվել է Էրիք Յոն Լարսոնի «Արարատի փեշերին»

¹ Sten U. S. Larsson, *Vid Ararats...*, էջ 135, *Svenska missionsförbundet. Yttre missionen...*, էջ 31: Հայաստանի վերաբերյալ նրա մի քանի մամուլներից տես *Missionsförbundet*, 1.05.1915, էջ 138, 15.09.1915, էջ 284, 15.11.1915, էջ 348:

² Per Pehrsson, *Armenierna och deras nöd*, Uppsala, 1896. Այս գրքույկի մասին Նորայր Բյուզանդացին 1897-ի հունվարի 16-ին Լևոն Մանթյանցին հղված մամուլում գրել է. «Ի նպաստ հայոց հրատարակեցա շվեդերեն brochure մի, Armenierna och deras nöd» (սխալմամբ հրատարակվել էր «Armeniernas och d. - ras (sic) nöd». տես Վ. Վարդանյան, Նորայր Բյուզանդացու մամուլները, *Լրագրի հասարակական գիտությունների*, Երևան, 1980, ք. 3, էջ 100): Հավանաբար Բյուզանդացին եղել է գրքույկի հովանավորը, քանի որ որպես հեղինակ նշվում է միայն Փերսոնի անունը:

³ John Larsson, *Förföljeserna och blodbadet i Armenien särskild från år 1894 till år 1897*. Helsingborg, 1897; E. John Larsson, *Vid Ararats...*

⁴ Առաջին անգամ տպագրվել է՝ Rohat Alakom, *Svensk-kurdiska kontakter...*, էջ 128:

գրքում¹։ Մի քանի տարի անց Մուրերզը գերմաներենից շվեդերեն է քարզմանել Մ. Փիրանյանի գրքույկը հայոց եղեռնի մասին²։

Քարոզիչ Վիլհելմ Մարվեն (1858–1948) մի քանի անգամ այցելել է Ռուսական կայսրություն և եղել Հայաստանում (Երևան, Էջմիածին, Արարատ, Շուշի)։ Նա 1902-ին շվեդ ուսուցչուհի Մարիա Անտոլմի և անգլուհի տիկին Ֆրենչի հետ այցելել է Անիի ավերակներ։ Մարվեն հայերի հետ իր հանդիպումների մասին գրել է շվեդ քարոզչական մամուլում և իր «Ռուսաստանի ժողովուրդների մոտ» եռաշաբաթ գրքում³։ «Հայերը, - գրել է նա, - հրաշալի և զարգացած ազգ են։ Նրանք խելոք և ձեռներեց վաճառականներ են, շատերը բարձր դիրք են զբաղում և աշխատում են համայնքում բոլորի կյանքը բարելավել։ ...Նրանց տները հաճելի են, ընտանեկան կյանքն ավանդապահ է։ Նրանց երեխաները սովորաբար շատ լավ դաստիարակված են։ Հայկական և թաթարական (ազերիական - Ա. Բ.) գյուղերը միմյանցից այնքան տարբեր են, որքան Կոնգոյում տարբեր են քարոզիչների ապրելատեղը և հեթանոսական գյուղը»⁴։

Հեշտ չի եղել շվեդ քարոզիչների կյանքը Հայաստանում։ Նրանց ճնշել են տեղական իշխանությունները և եկեղեցին։ Հայտնի է, որ մի անգամ Իզդիրում տեղական քահանայի դրոմամբ խուզարկել են մի շվեդ միսիոներուհու բնակարանը, որը մանուկներին իր տանը գրել-կարդալ է սովորեցրել՝ Ավետարանի հետ միասին⁵։

Կարևոր է նշել, որ թեև շվեդ քարոզիչների հայկական գործունեությունը տևել է 30 տարուց ավելի, նրանք ոչ մի նշանակալից ազդեցություն չեն թողել հայ իրականության վրա։

Այլ շփումներ

Շվեդ արդյունաբերող Լյուդվիգ Նորբլյ (1831–1888) առաջինն է եղել, որ Բաքումից նավթ է արտահանել Եվրոպա՝ 1881-ին։ Եղորդ՝ Ռո-

¹ E. John Larsson, *Vid Ararats...*, s. 110-118.

² M. Piranjan, *Blod och tårar. Armeniernas lidanden i Turkiet*, Stockholm, 1918.

³ Wilhelm Sarwe, *Bland Rysslands folk: i missionens och Röda Korsets tjänst 1882-1922*. Է 1, Stockholm, Svenska missionsförbundet, 1927, d. 2, Stockholm, 1928, d. 3, Stockholm, 1929.

⁴ *Missionsförbundet*, 01.12.1909, s. 341.

⁵ Sten U. S. U., Նամակներ Կովկասից, *Կոչնակ*, 26.03.1910, էջ 299:

բերտ Նոբելի (1829–1890) հետ Բարվում հիմնադրելով «Նոբել եղբայրների նավթային ընկերությունը»՝ նրանք առևտրական կապերի մեջ են եղել հայ նավթարդյունաբերողների, երկրաբանների ու ճարտարագետների հետ: Նրանցից և Ռոբշիլդից հետո Բարվի մնացած առաջնակարգ նավթային ֆիրմաները պատկանել են հայ արդյունաբերողների՝ Մանթաշյանին, Ծովիանյանին, Խաչատրյանին¹: Հայտնի է, որ Նոբելների գլխավոր երկրարանն է եղել հայորդի Սամսոն Ապրեսովը (1874–1969)²: «Շուտը Նոբելն է, որ ստեղծել է Բարում, հայերը զիջանել են իրանց ունեցածը օտար ֆիրմաների և այսօր դրսուսն էլ շուտն է պարծենում այդ նախից հարիւր տեսակ ձեռքեր քաշելով», – գրել է հայ մամուլը 1915-ին³: Սակայն ըստ նորօրյա հետազոտողի, «բացարձակ բյուրիմացություն է այն կարծիքը, թե Նոբել եղբայրներն են եղել Բարվի նավթարդյունաբերության «հայրերը»: Նրանք Բարու ոտք են դրել 1875 թվականին և իսկապես մեծ ներդրում են ունեցել արդյունահանումը եվրոպական, համաշխարհային չափանիշների մակարդակին բարձրացնելու գործում», մինչդեռ նրանցից առաջ, տակավին 1850–1854 թվականներին հայերն էին սկսել նավթահանքերի վարձակալումը, որ մեծապես առաջ մղվեց վաճառական Հովհաննես Միրզյանի (Միրզոն) օրոք՝ հատկապես 1871-ից սկսած⁴:

1897-ին Ստոկհոլմում կայացած արվեստագիտական արդյունաբերական միջազգային ցուցահանդեսին Ռուսաստանի տաղավարում իրենց արտադրանքն են ներկայացրել նաև հայ գործարարները: Հատկապես աչքի են ընկել նավթի գործարանատեր Տեր-Հակոբյանը Նիժնի Նովգորոդից և պետերբուրգցի առևտրական Գյանջյանը, որը, կովկասյան տարագ հագած, իր որդու և դստեր հետ վաճառել է արևելյան ապրանքներ՝ գորգեր, ոսկեղեն, արծաթեղեն, մետաքսեղեն⁵: Յու-

¹ Արդեն 1883-ին հայ մամուլում Ս. Տեր-Մարտիրոսյանը երևանից զգուշացրել է օտար կապիտալիզմի տիրապետության վտանգի մասին՝ օրինակ բերելով Նոբելներիին. «Թող Երևանի վաճառականը աչքի առաջ ունենա Նոբել և ընկ., որը իր ձեռքն է գցել այժմ Բագուի ամբողջ նախագործությունը և իր ձեռքին է այժմ Բագուի տեղական նախագործարանի բախտը» (*Մշակ*, 27.10.1883):

² М. Гольд, Главный геолог Новелы, *Элитарная газета*, 16.08.1997.

³ *Տարագ*, Թիֆլիս, 1915, ք. 1, էջ 6:

⁴ Տե՛ս Խաչատուր Դադայան, Բարվի հայկական նավթը, *Ազգ.* Երևան, 6.12.2001, էջ 5:

⁵ *Արձագանք*, 6.08.1897:

ցահանդեսին մասնակցել է Թիֆլիսի «Արձագանքի» թղթակից Ս. Ա.-ն, որը թղթակցությունից բացի գրել է մի ընդարձակ հոդված Ստոկհոլմ քաղաքի մասին¹: Ի դեպ, Ստոկհոլմի ցուցահանդեսին մասնակցած կովկասյան արդյունաբերող Հ. Էնֆիաճյանն արժանացել է արծաթե մեդալի՝ իր արտադրած ծխախոտի համար²:

Հայ-շվեդական տնտեսական կապերի մասին խոսելիս նշենք նաև, որ XIX դարի վերջին Հալեպի հայ կանանց ձեռակերտ վարագույրները, գլխաշորերը, թաշկինակներն արտահանվել են մի շարք եվրոպական երկրներ, նաև Շվեդիա³:

¹ Տե՛ս *Արձագանք*, 19.09.1897:

² *Արձագանք*, 10.09.1897:

³ Հ. Խ. Թովուզյան, *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946)*, Երևան, 1986, էջ 575:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայագիտությունը Սկանդինավիայում

Շվեդիայում, Գանիայում և Նորվեգիայում եղել են հայագետներ և տարբեր բնագավառների գիտնականներ, որոնք այս կամ այն չափով հետաքրքրվել են հայոց պատմությամբ, գրականությամբ և մշակույթով¹:

Սկանդինավիայում հայագիտության հիմնադրման թվականը և հայ-շվեդական գրական կապերին վերաբերող առաջին տարեթիվը կարելի է համարել 1723-ը, երբ Ստոկհոլմում լույս է տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համառոտության լատիներեն թարգմանությունը²: Այն կատարել է շվեդ արևելագետ, փիլիսոփա, Ուփսալայի համալսարանի դասախոս Հենրիկ Բրենները (1669–1732): Երիտասարդ գիտնականը եղել է 1697-ին Լյուդվիգ Ֆարրիցիուսի գլխավորած Պարսկաստան մեկնած շվեդական պատվիրակության մեջ, որին մասնակցել է հավանաբար որպես թարգման: Նոր Ջուդայում նա որոշ չափով սովորել է հայոց լեզուն, շփվել տեղի հայ ընտանիքների և հոգևորականների հետ: Բրենները Ջուդայում ծանոթացել է դոմինիկյան կրոնավոր Հովհաննես Բարդուղիմեոսի հետ, որը Սպահանում 1699 թվականին համառոտ շարադրել է Մովսես Խորենացու «Պատմության» առաջին երկու գիրքը: Բրենները Բարդուղիմեոսին մասամբ օգնել է թարգմանությունը կատարելիս և հետագայում գրել է ամբող-

¹ Տե՛ս Արտաշես Արեղեան, Սկանդինավիան հայագետներ, *Համազգային տարեգիրք*, Գահիրե, 1936, էջ 248-254: Հեղինակը մեծ մասամբ խոսել է Հենրիկ Բրենների և Սոֆյուս Բուզգեի մասին, հիշել նաև շվեդներ, իր աշակերտ Սթիգ Վիքանդերին, Էվալդ Լիդենին, Փեթերսոնի, Շարպանտիեն, Նիբերգին, դանիացիներ Քայ Բարրին, Հուլեր Փեդերսենին, Օգե Սեյեր Բենեդիկտանին և Ինգերորգ Մարիա Սիբին (վերջինս մի վիսպական ստեղծագործություն է գրել Քարեն Եփիեի մասին):

² *Epitome commentariorum Moysis Armeni de origine et regibus Armenorum et Parthorum, item series principum Iberiae et Georgiae, cum notis et observationibus Henrici Brenneri. Accessit ejusdem Epistola ad... Ericum Benzelum de praesenti statu quarundam gentium Orientalium.* Stockholm: Horn, 1723. 108 p.

ջական ծանոթագրություններ: Շվեդիա վերադառնալու ճանապարհին (ի դեպ, Հայաստանի և Կովկասի ճանապարհով), 1700 թվականին Բրենները լրտեսության կեղծ մեղադրանքով ձերբակալվել է Ռուսաստանում, քանի որ այդ ժամանակ բռնկվել է ռուս-շվեդական պատերազմը Կառլ XII-ի և Պետրոս Մեծի միջև: Նա ռուսական տարբեր քանտերում մնացել է մինչև 1721-ը, այսինքն՝ մինչև ռուս-շվեդական հաշտության կնքումը (հայտնի որպես Նիշտադյան պայմանագիր՝ 1721-ի օգոստոսի 30-ին): Վերադառնալով Ստոկհոլմ 1722-ի սկզբին՝ Բրենները աստվածաբանության դոկտոր Էրիք Բենգելիուսի հորդորով տպագրել է Խորենացու լատիներեն համառոտությունը¹: Այսպիսով, շվեդ Հենրիկ Բրենները առաջին եվրոպացի խորենացիագետն է²:

Նույն ժամանակահատվածում Ուփսալայի համալսարանում շվեդ ականավոր աստվածաբան, եպիսկոպոս Ուլոֆ Յելսիուսը (Օլավ Յելսի, 1670–1756) լատիներեն գիտաթեզ է գրել հայ եկեղեցու մասին³:

Տակավին 1818 թվականին դանիացի լեզվաբան Ռասմուս Ռասկը (1787–1832), կանխելով գերմանացի հայագետ Հյուբշմանին, առաջ է քաշել հայերենի՝ իրանական լեզու լինելու իրողությունը: Հետագայում՝ 1826-ին, հրաժարվել է այդ տեսակետից և Ավեստային նվիրված մի ակնարկում, գերմանացի լեզվաբան Հայնրիխ Հյուբշմանից առաջ, նշել է հայերենի անկախ դիրքը: Սակայն քանի որ Դանիայից դուրս

¹ *Epitome commentariorum Moysis Armeni de origine et regibus Armenorum et Parthorum, item series principum Iberiae et Georgiae, cum notis et observationibus Henrici Brenneri. Accessit ejusdem Epistola ad... Ericum Benzelum de praesenti statu quarundam gentium Orientalium.* Stockholm, 1723. Տե՛ս մասնավորապես գրքի առաջին մասը (“Breve commentariolum de origine nationis Armenorum”, էջ 1-23, “Notae ad commentariolum de origine Armenorum”, էջ 49-74):

² Բրենների մասին մանրամասն տե՛ս Պետրոս Յովհաննիսյան, Հենրիկուս Բրենները և Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» լատիներեն համառոտագրության առաջին թարգմանությունը, *Հայկազան հայագիտական հանդես*, հ. ԺԹ, Պէյրոս, 1999, էջ 123-140: Տե՛ս նաև Բրենների նամակը Բենգելիուսին՝ Գոհար Մուրադյանի թարգմանությամբ և ծանոթագրություններով (Ուշ միջնադարի շվեդ հեղինակը Կովկասի և Ռուսաստանի ժողովուրդների մասին, *Իրան-նամե*, 1995, ք. 6, 1996, ք. 1, էջ 22-29):

³ Olav Celsi, *Dissertatio de hodierno statu Ecclesiae Armenorum*, 1726, Upsalae.

դանիերեն շատ քչերն էին կարդում՝ Ռասկի այդ տեսությունը լայն տարածում չի գտել¹:

Նույն ժամանակահատվածում Հելսինկիի համալսարանի դասախոսներից քահանա Իվար Ուրիք Վալլենիուսը (1793–1834) հետաքրքրվել է հայոց լեզվով²:

Հայ եկեղեցու հանդեպ շվեդների հետաքրքրությունը շարունակվել է հաջորդ հարյուրամյակում ևս: Շվեդական համալսարանական մյուս քաղաքում՝ Լունդում 1843 թվականին լեզվաբան Յուհաննես Էռնստ Ռիցը (1815–1868) և դոկտոր Ֆերդինանդ Լյուդովիկ Բորգսթրյոմը հրատարակել են Գրիգոր Լուսավորչի վարքը՝ միջնադարյան շվեդական աղբյուրների հիման վրա³:

1860-ին շվեդ բանասեր Գուստավ Էդվարդ Քլեմմինգը (1823–1893) հրատարակել է շվեդական թարգմանական հնագույն հուշարձաններից մեկը՝ կարդինալ Բոնավենտուրայի (1221–1274) խորհրդածությունները քրիստոնեության վերաբերյալ և Միմեոն Մետաֆրաստեսի «Հայ սուրբ Գրիգորի կյանքը և մահատակությունը» շվեդերեն թարգմանությունը, կատարված XIII դարում⁴:

Նորայր Բյուզանդացու վկայությամբ՝ հայերենով հետաքրքրվել է Ուփսալայի համալսարանի արևելագետ, նույն համալսարանի սեմական լեզուների ուսուցչապետ Կառլ Չեստերստենը (1866–1953), որը հողված է գրել Հենրիկ Բրենների մասին⁵:

Եվրոպական լեզվաբանության մեջ շվեդ գիտնականներն առաջիններից են եղել, որ շեշտել են հայերենի կարևորությունը համեմատական լեզվաբանության համար: Շվեդ ամենահայտնի լեզվաբաններից մեկը՝ Էվարդ Լիդենը (1862–1939), եղել է նաև հայագետ, հեղինակել է «Հայկական հետազոտություններ» (1906), «Մի ներդրում հայերենի հնչյունաբանության մեջ» (1911) և «Արմենիակա» (1933) գերմաներեն աշխատությունները, նաև «Մի ներդրում հայերենի հնչյունաբանության և բառակազմության մեջ» աշխատությունը շվեդերեն (1912): Լիդենը փորձել է հայերեն բառերը ստուգաբանել շվեդերենի, իսլանդերենի, նորվեգերենի և դանիերենի համեմատությամբ:

Լունդի (Շվեդիա) համալսարանի պրոֆեսոր Հերբերթ Փեթերսոնը (1881–1927) իր «Արիական և հայկական ուսումնասիրություններ» գերմաներեն աշխատության մեջ հնդեվրոպական լեզուների 85 բառ համեմատել է նաև հայերենի հետ, տվել 13 հայերեն բառերի ստուգաբանությունը¹: Ուփսալայի համալսարանի պրոֆեսոր, արևելագետ իրանագետ Հենրիկ Սամուել Նիքերգը (1889–1974) 1926-ին «Մոնդ օրինետալ» հանդեսում հրատարակած պահլավերենի մասին հոդվածում ստուգաբանել է նաև հայերեն բառեր, իսկ հին Իրանի կրոնի վերաբերյալ աշխատության մեջ օգտվել Եզնիկ Կողբացուց²: Նա ծանոթ է եղել հայ գրականությանը, գնահատել Արշակ Չոպանյանի «Լարդե-նիք Հայաստանի» ֆրանսերեն հատորները:

Ուփսալայի համալսարանի պրոֆեսորներ Յեռ Վիդենգրենը (1907–1996) և Սթիգ Վիքանդերը (1908–1983) տիրապետել են գրաբարին: Վիքանդերը եղել է ականավոր գիտնական Արտաշես Արեղյանի ուսանողը: Հեղինակ է հայ-իրանական ուսումնասիրություններ ընդգրկող մի մենագրության³: Նա որոշ ժամանակ գրաբար է դասավանդել Ուփսալայի համալսարանում: Վիդենգրենը հեղինակ է հին իրա-

¹ Ռոբերտ Ա. Ֆոուքս, Հայնրիխ Հյուբշմանը՝ հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի իսկական տեղը որոշողը, *Իրան-մամե*, 1993, p. 6, էջ 6:

² Ivar A. Heikel, *Helsingfors universitet 1640–1940*, Helsingfors, 1940, s. 401.

³ Johannes Ernestus Rietz, Ferdinandus Ludovicus Borgström, eds. *Scriptores suecici medi aevi cultum culturamque respicientes*, vol. 1, *Vita S. Gregorii Armeniensis*, Lundae, 1843.

⁴ *Bonaventuras betraktelser öfver Christi Lefverne: Legenden om Gregorius af Armenien*, efter gamla handskriffter utgifna af G. E. Klemming, Stockholm, 1860. Այս երկը Գրիգոր Լուսավորչի վարքն է կատարված Ազաթանգեղոսի հունարեն բնագրի Բոլլանդյանների հրատարակությունից (տես Արսեն Դազիկյան, *Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կենսի*, հատոր Ա, Վենետիկ, 1909, էջ 17): Շվեդաբնակ բանասեր Նորայր Բյուզանդացին իր նամակներից մեկում ակնարկել է, որ մտադիր է իր հրատարակած «Զննատեղ» հանդեսում հողված գրել «Շվեդական Ազաթանգեղի վրա» (Վ. Վարդանյան, Նորայր Բյուզանդացու նամակները Սուրբա Պարոյանին, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1976, p. 11, էջ 94). հավանաբար նա նկատի է ունեցել Քլեմմինգի հրատարակությունը:

⁵ K. V. Zetterstéen, *Svensk Biografisk Lexikon*, sjätte bandet, Stockholm, 1926, s. 214–217.

¹ Herbert Petersson, *Arische und Armenische Studien*, Lund, 1920.

² Henrik Samuel Nyberg, *Hilfsbüch des Pehlevi, Pehleviwörter und Glossar*, Upsala, 1931; *Die religionen des alten Iran*, Leipzig, 1938.

³ Stig Wikander, *Feuerpriester in Kleinasien und Iran*. Lund, 1946; *Problemes irano-arméniens*, Lund, 1948.

նական կրոնի մասին աշխատության, որտեղ անդրադարձել է նաև հայոց պատմությանը¹:

Ուփսալայի համալսարանի արևելագիտական մասնաճյուղում լույս են տեսել նաև ոչ շվեդ գիտնականների հայագիտական երկեր, այդ թվում՝ իտալացի Ա. Չանոլլիի և հայ Պոլ Էսաբալի (Էսաբալյան)²:

Գյոթերորգի համալսարանի սանսկրիտի և համեմատական լեզվաբանության պրոֆեսոր Յալմար Ֆրիսը (ծն. 1900) նույնպես զբաղվել է հայերենի ստուգաբանությամբ: Իր «*Etyma Armeniaca*» գրքում նա տվել է ութ հայերեն բառի ստուգաբանությունը³: Հայագիտական հետաքրքրություններ են ունեցել նաև երեք այլ շվեդ գիտնականներ՝ Ուփսալայի համալսարանի ուսուցչապետ Կառլ Հելլեն Ռոբերտ Թուսենտ Շարպանտիեն (1884–1935), համեմատական լեզվաբանության մասնագետ պրոֆեսոր Թուրե Թուրբյորնսոնը (1864–1948) և սլավոնիստ Գունար Գունարսոնը (1899–1987)⁴:

Հայաստանով հետաքրքրվել են ոչ միայն շվեդ բանասերներ, այլև աստվածաբաններ, պատմաբաններ, արվեստաբաններ, աշխարհագրագետներ: Շվեդ արևելագետ և արվեստաբան Ֆրեդրիք Մարթինը (1868–1933) զբաղվել է հայկական գորգերով, դրանց մասին խոսել իր «Արևելյան գորգերի պատմությունը մինչև 1800 թվականը» անգլերեն աշխատության մեջ⁵: Նա է առաջինը գրել 1680 թվականին ստեղծված և արվեստաբանության մեջ հայտնի «Գոհար» գորգի մասին (թեև գորգը նկարագրել է նաև Նորայր Բյուզանդացին⁶): Մարթինը նաև առաջին գիտնականներից էր (Ֆ. Սարրեի հետ), որը 1910-ի Մյունխենի ցուցահանդեսում ուշադրություն է դարձրել մի խումբ հայ-

կական գորգերի վրա, որոնք ենթադրվում էին որպես հայկական և անվանել է դրանք վիշապագորգեր¹:

Ազգագրագետ Նիքոլաս Ֆոքքերը (ծն. 1908) արևելյան գորգերին նվիրված իր աշխատության մեջ² ներառել է նաև Հայաստանի և Կովկասի հայկական շրջանների գորգերը: Նա հայկական է համարել Արցախի գորգերը՝ նրանց մեջ առանձնացնելով Չելաբերդ և Խնձորենսկ գյուղերինը (թեև վերջինս Սյունիքում է), իսկ Լոռվա և Սևանի գորգերը համարել Դազախի խմբից: Ֆոքքերի սույն տիպաբանությունը բավական վիճելի է: Այս բնագավառի մեկ այլ մասնագետ՝ Քնյուր Լարսոնը (ծն. 1903), գրելով Արցախի գորգերի մասին, երբեք չի նշել դրանց՝ հայ արվեստին պատկանելիության մասին, իսկ Օսմանյան կայսրության տարածքում գտնվող հայկական քաղաքներում ստեղծված մի շարք գորգեր համարել է թուրքական³:

1948 թվականին «Ուփսալայի համալսարանի աշխարհագրության ինստիտուտի տեղեկագրերի» թիվ 59-ը Յոն Ֆրյոդինի «Թրքահայաստան և Քրդստան» աշխատությունն է՝ հրատարակված քարտեզներով և լուսանկարներով⁴:

Արդի շվեդ գիտնականներից հայկական խնդիրների նկատմամբ հետաքրքրություններ ունեն հետևյալ անձինք. Ուփսալայի համալսարանի երկու աստվածաբան պրոֆեսորներ Անդերս Հյուլթգորդը (ծն. 1936) և Յորան Գունենը (ծն. 1950) հետաքրքրվել են նաև հայ իրականությամբ: Առաջինի հոդվածներից կարող ենք հանդիպել «*Aarhus Armeniaca*» և «Դասական հայ մշակույթը. ազդեցություններ և ստեղծագործականություն» անգլերեն ժողովածուներում (1982)⁵: Յո-

¹ Geo Widengren, *Die Religionen Irans*. Stuttgart, 1965.

² Shu A. Zanolli, La pena escatologica del gelo in documenti della letteratura armena, *Le Monde Oriental*, Uppsala, 1924, no 17. Paul Essabal, Armenian *hariwr* 'Hundred. *Orientalia Suecana*, no 13, 1964, p. 84-87.

³ Hjalmar Frisk, *Etyma Armeniaca*, Göteborg, 1944.

⁴ S. Lorelli, Armenisk kultur och svensk forskning, *Svenska Dagbladet*, Stockholm, 23.01.1951.

⁵ F. R. Martin, *A History of Oriental carpets before 1800*, London, 1908.

⁶ A. S., Les Tapis Arméniens, *Revue des études arméniennes*, tome I, 1920, p. 123.

¹ Mania Ghazaryan, *Armenian Carpets*, Moscow, 1985, p. 57.

² Nikolas Fokker, *Kaukasiska mattor av igår*, Stockholm, 1979, s. 42-45.

³ Knut Larsson, *Orientaliska mattor*, Stockholm, 1991, s. 125-142.

⁴ Jon Frödin, Turkiska Armenien och Kurdistan, *Meddelanden från Uppsala universitets geografiska institution*, Uppsala, Ser. A, N. 59, 1948.

⁵ Anders Hultgård, *L'éschatologie des Douze Patriarches*, vol. II, composition de l'ouvrage, textes et traductions, Uppsala, 1982; Artavazd – demon eller frälsare? *Religionsvetenskapliga studier*, Religio 12, Lund, 1983, s. 107-116.

րան Գունները գրել է մասնավորապես հայ գաղթօջախների (նաև Շվեդիայի) մասին¹:

Լունդի համալսարանի խորհրդագիտության և պատմության դոցենտ Քլաս Յորան Կառլսոնը (ծն. 1955) վերլուծական աշխատություն է գրել խորհրդային Հայաստանի վերջին տարիների մասին², հանդես եկել Հայաստանի նորագույն պատմությանը վերաբերող հողվածներով³: Լունդի համալսարանի պատմության բաժնում բակալավրիատի թեզ է գրել Մարիա Կառլսոնը արևմտյան գիտնականների կողմից հայոց ցեղասպանության ուրացման վերաբերյալ կենտրոնանալով հատկապես 1894–1896 թ. համիդյան ջարդերի, 1915-ի Մեծ եղեռնի և 1919–1923 թթ. ետպատերազմյան շրջանի գործողությունների վրա:

Ուփսալայի համալսարանի դասական լեզուների ինստիտուտի դոցենտ Էվա Բալիցկա Վիտակովսկան իր «Թաչելությունն առանց խաչյալի եթովպական արվեստում» աշխատության մեջ⁴ գուգահեռներ է անցկացրել հայ միջնադարյան արվեստի հետ: Նույն համալսարանի աֆրո-ասիական լեզուների ինստիտուտի դասախոս թուրքագետ Էլժբետա Շվիեցիցկան ուսումնասիրել է XVII դարում Իտալիայում բնակված տպագրիչ Հովհաննես Անկյուրացու (Ջուաննի Մոլինո) գործուներությունը⁵:

Շվեդ հետազոտող Ուֆ Բյորքլունդն ուսումնասիրություն է նվիրել հայ Սփյուռքին, որը լույս է տեսել 2001-ին Ստոկհոլմում հրատարակված «Մի քանի կալվածք մեկից. հանրային անտրոպոլոգները դաշտային հետազոտությունների մասին» հողվածների ժողովածու-

¹ Sbu, օրինակ, Göran Gunner, Armenierna – ett folk i Diaspora, *Nord Nytt*, 20, 1984, էջ 58-62 և այլն:

² Klass-Göran Karlsson, *Armenien: från berget Ararat till det berginga Karabach*, Göteborg, 1990.

³ Sbu օրինակ *Gamla folk och nya stater: det upplösta Sovjetimperiet*, ed. S. Gustavsson, I. Svanberg, Stockholm, 1992, էջ 296-305:

⁴ Sbu Ewa Balicka-Witakowska, *La crucifixion sans crucifié dans l'art éthiopien: l'iconographie lochrétienne de l'antiquité tardive*. Bibliotheca Nubica et Aethiopica 4. Warsaw-Wiesbaden, 1997: Sbu այս գիրքը մեր ուսերեն ներկայացմամբ («Բանբեր երևանի համալսարանի», 1998, թ. 2, էջ 211-212):

⁵ Sbu Elzbieta Świącicka, *Interpreter Yovhannes Ankiwraç'i also called Giovanni Molino, Studia in honorem Stanisłai Stachowski Dicata*, vol. XXXVI, Folia Orientalia, Krakow 2000, էջ 329-342.

ում¹: Այնտեղ նա մասնավորապես պատմել է գրող Վահե Օշականի մասին²:

Հայագիտությամբ մասնակի հետաքրքրվող հատուկնտ գիտնականներ կան նաև սկանդինավյան մյուս երկրներում: Նորվեգիայի հայագետներից է լեզվաբան Սոֆուս Բուգգեն (1833–1907), որն ուսումնասիրություններ է կատարել հայերենի և էտրուսկերենի համեմատական քննության, հայերենի ստուգաբանության, գոթերենի վրա հայերենի ունեցած հնարավոր ազդեցության վերաբերյալ³, ինչպես նաև հայագետ-վրացագետ Հանս Ֆոգբը, որը հեղինակ է գրաբարի շարահյուսության, կովկասյան լեզուների փոխառնչություններին նվիրված աշխատությունների⁴: Նորվեգացի լեզվաբան Էրլինգ Ռավնեսը նույնպես զբաղվել է գրաբարի քերականությամբ⁵:

Գանիացի հայագետներից են լեզվաբան Հոլգեր Փեդերսենը (զբաղվել է գրաբարի դերանուններով⁶), պատմաբան Ա. Քրիսթենսենը, Իես Փեթեր Ասմուսենը (զբաղվել է Իրենեսու Լյուգլյունացու երկերով, որոնք պահպանվել են հայերեն թարգմանություններով)⁷: Օրիու-

¹ Ulf Björklund, *Att studera en diaspora: den armeniska forskningsringen som fält, Flera fält i ett. Socialantropologer om translokala fältstudier*, red. Ulf Hannerz, Stockholm, 2001, s. 86-107.

² Մույն հատվածը մեր կատարած հայերեն թարգմանությամբ տե՛ս *Յանսը*, 16-17.02.2003: Sbu նաև U. Björklund, 'Armenians of Athens and Istanbul: the Armenian Diaspora and the "Transnational" Nation', *Global Networks: A Journal of Transnational Affairs*. 3 (3) (2003), էջ 337-354:

³ Sophus Bugge, *Etruskisch und Armenisch Sprachvergleichende Forschungen*, Christiana, 1890. Beiträge zur etymologischen der armenischen Sprache, Christiana: In *Commission bei J. Dybwad*, 1898. Über den Einfluss der armenischen Sprache auf die Gothische, *Zeitschrift für armenische Philologie*, Marburg, 1, N 2, 1902. *Das Verhältnis der Etrusker zu den Indogermanen und der vorgriechischen Bevölkerung Kleinasien und Griechenlands*, Sprachliche Untersuchungen, Strasburg, 1909.

⁴ Sbu օրինակ Hans Vogt, *Les deux thèmes verbaux de l'arménien classique. Etudes sur la traduction des Evangiles*, *Nordisk Tidskrift for Sprogvidenskap*, IV, 1930. *Les groupes nominaux en arménien et géorgien anciens*, նույն տեղում, V, 1932; *Etudes sur la syntaxe de l'arménien classique*, նույն տեղում, VIII, 1937. *Armenia et Caucasiq du Sud*, նույն տեղում, IX, 1938. *La parenté des langues du Caucase*, նույն տեղում, XII, 1942 և այլն:

⁵ Erling Ravnæs, *The Chronology of the Sound Changes from Proto-Indo-European to Classical Armenian*. Oslo, 1991.

⁶ Holger Pedersen, *Les pronoms démonstratifs de l'ancien armenien: Avec un appendice sur les alternances vocaliques indo-europeennes*. Copenhagen, 1905.

⁷ Jes Peter Asmussen, *Irenaeus' bevis for den apostolske forkyndelse: oversaettelse fra armenisk*. Copenhagen: G. E. C. Gad's, 1970.

սի համալսարանում 1982-ին կայացել է հայագիտական գիտաժողով և լույս է տեսել զեկուցումների ժողովածու¹: Հատկապես հայկական միջ-նադարյան բանասիրական հետաքրքրություններ ունի Օրիուսի համալսարանի ուսուցչապետ, բանասեր-պատմաբան Հեննինգ Յ. Լեմանը²: Այսրկովկասի հանրապետությունների նորագույն պատմությամբ հետաքրքրվել են նաև դանիացի պատմաբաններ Թուրբեն Հանսենը, Մյորեն Թեյսենը և Լեմա Հյոգլյունը³: Օրիուսի համալսարանում գործել է հայագիտական կենտրոն, որը հրատարակել է մի քանի գիտական աշխատություն: Հայ մշակույթով հետաքրքրվել է նաև դանիացի բանասեր Սվեն Նեստորը, որը Հայաստանից ստացել է համապատասխան գրականություն: Ի դեպ, XIX դարից Կոպենհագենի կենտրոնական գրադարանում պահվում է հայերեն մի ձեռագիր՝ Codex Armenicus⁴:

Հայկական ցեղասպանության և մասնավորապես դանիական արխիվներում հայկական հարցին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրմամբ է զբաղվում Մաթիաս Բյորնյունը⁵:

¹ Aarhus Armeniaca, *Acta Jutlantica*, Humanities series 56; *Acta Jutlandica* 57, Aarhus, 1982.

² Henning J. Lehmann, *Per piscatores: studies in the Armenian version of a collection of homilies by Eusebius of Emesa and Severian of Gabala*, Aarhus, 1975; նույնի, *Armenierne: kultur og historie* [Viby:] Centrum, 1984; Henning J. Lehmann, J. J. S. Weitenberg (eds.), *Armenian texts, tasks and tools*, *Acta Jutlandica* 69:1; Humanities Series 68. Aarhus, 1993.

³ Torben Hansen, Søren Theisen. Transkaukasien: Armenien, Aserbajdsjan og Georgien: en landebeskrivelse. *Publikationer fra Det Sikkerheds- og nedrustningspolitiske Udvalg 107*, Copenhagen, 1995. Lena Høglund, *Armenien Aserbajdsjan*, Copenhagen, 1996.

⁴ Այս մասին հիշատակել է արևելագետ Էմիլ Դիլոնը Քերոլին Պատկանյանին գրած նամակում. տե՛ս Մատենադարան, Պատկանյանների խոնդ, բրդապանակ 146, վավերագիր 72:

⁵ M. Bjørnlund, When the Cannons Talk, the Diplomats Must be Silent – A Danish diplomat in Constantinople during the Armenian genocide, *Genocide Studies and Prevention*, Vol. 1, No. 2, Fall 2006, pp. 197-223. Before the Armenian Genocide: Danish Missionary and Rescue Operations in the Ottoman Empire, 1900-1914, *Haigazian Armenological Review*, 2006, pp. 141-156. M. Bjørnlund et al, “¿Que es el Genocidio? En la búsqueda de un denominador común entre definiciones jurídicas y no jurídicas,” *Genocidio: La administración de la muerte en la modernidad*, red. Daniel Feierstein, Caseros: Universidad Nacional de Tres de Febrero 2005, pp. 17-48. M. Bjørnlund & Torben Jørgensen, “Hvad er folkemord?” *Historie & Samfundsfag: Folkemord og didaktik*, Vol. 43, No. 4, December 2004, pp. 5-10. M. Bjørnlund, “Seksuel vold under det armenske folkedrab,” www.historie-nu.dk, december 2006. Scandinavia and the Armenian Genocide, *The Armenian Weekly*, 26.04.2008.

Օսլոյի համալսարանի մի խումբ ուսանողներ նախաձեռնել են «Etter Lemkin» («Լեմկինից հետո») վերտառությամբ հանդես՝ նվիրված ցեղասպանության և բռնության խնդիրներին: Այստեղ հաճախ ներկայացվում են հայոց ցեղասպանությանն առնչվող հողվածներ: Մասնավորապես 2009 թվականի առաջին հատորը (թիվ 1) նվիրված էր «Ցեղասպանության ուրացումը և նրա հանդեպ ռեակցիաները» թեմային: Այստեղ նորվեգացի հեղինակներ Մադա Դահլ Գյեֆսենը և Անյա Վեդե Սվեենը քննարկել են թուրքերի կողմից հայոց ցեղասպանության ուրացման խնդիրը, քննադատել նորվեգացի փիլիսոփա Ռագնար Նաեսին, որը վիճարկում է ցեղասպանություն եզրի գործածումը հայոց եղեռնի առնչությամբ:

Ֆինն պատմաբան, քաղաքագետ, արևելագետ-կովկասագետ Անտերո Լեյցինգերին, որը զբաղվում է XX դարի Կովկասի ժողովուրդների նորագույն պատմության, նաև Ֆինլանդիայի գաղթականների հարցերով, իր աշխատություններում անդրադարձել է նաև հայ ժողովրդին: Նրա խմբագրությամբ լույս է տեսել «Կովկասը և արատավոր դաշինքը» ժողովածուն¹:

Իսլանդացի հեղինակ Արեվիուս Նիլսոնը (1910–1992) հանդես է եկել «Փրկության դարեր. հայկական եկեղեցին» գրքով²: Իսլանդիայի համալսարանից Ինգվիլդորգ Թորիսդոթթիրը (ծն. 1969) ուսումնասիրում է Վիլյամ Մարոյանի ստեղծագործությունը և նրա հայկական առնչությունների պատմությունը: 2009-ին Հերման Թոր Թրախնսոնը (ծն. 1985) բեկնածուական ատենախոսություն է գրել «1915–1917 թթ. հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը» թեմայով՝ իսլանդերեն լեզվով:

Այստեղ նշենք, որ Շվեդիայի տարբեր թանգարաններում և գրադարաններում պահվում են հայ մշակույթի որոշ արժեքներ: Ուփսալայի համալսարանի նշանավոր գրադարանում (Քարոլինա Ռեդիվիվա) պահվում են նաև հայերեն ձեռագրեր: Դրանց մասին առաջին անգամ

¹ *Caucasus and an unholy alliance*: edited by Antero Leitzinger, Vantaa, 1997. Այս գրքի Արա Մանուկյանի գրախոսությունը տե՛ս Հայկազեան հայագիտական հանդես, ԺԷ, 1997, էջ 567-573:

² Arctius Nielsson, Å bjargi aldanna: armenska kirkjan, Reykjavik, 1976.

վկայել և նկարագրել է ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը¹։ XI դարում արաբերենից թարգմանված բժշկական մի գիրք՝ արտագրված 1652-ին, XV–XVI դարերում ընդօրինակված Գրիգոր Տաթևացու աշխատություններից մեկը (854 էջ), XVII դարի ձեռագիր մի մատյան (289 էջ), որտեղ ընդգրկված են վկայաբանական և այլ բնույթի երկեր և 1681-ին Կոստանդնուպոլսում ստեղծված մի հմայիլ՝ գրված և նկարագրված թղթե գլանի վրա²։ Մրանցից առաջինը ձեռք է բերել Օսմանյան կայսրությունում շվեդական հյուպատոս Ֆ. Վ. Մփիեգելթալը 1890-ին, Չմյուտնիայում։ Մյուսները շվեդ արևելագետ Ֆրեդրիք Մարթինը ձեռք է բերել 1894–1895 թվականներին Արևելք կատարած իր ճանապարհորդության ընթացքում։ Ենթադրվում է, որ Մարթինը դրանք գնել է Կոստանդնուպոլսում, հայտնի հավաքող Տիգրան խան Քելեկյանից։ Հետագայում Մարթինը հիշել է Քելեկյանին իր հուշերում³։

Բժշկական ձեռագիրն արտագրվել է Գիարբեքիրում, առաջին մասը XI դարի գրչագիր է, որին հետևում է Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունից մի հատված։ Ձեռագրի ամենաարժեքավոր մասը Ծաղկազարդի վերաբերյալ ճառի մի հատված է՝ գրված բամբակե թղթի վրա, որ կարող է լինել XII–XIII դարերի։ Այս ձեռագրի ստացման մասին ծանուցել է շվեդական մամուլը,⁴ իսկ գիտական նկարագրությունը կատարել է Նորայր Բյուզանդացին⁵։

Կա նաև 13 էջից բաղկացած մի տետրակ՝ փիլիսոփայական բնույթի մի գործ, որ կրում է «Երբեակ թուրք Առեալ ՚ի լոկոյ լուտոյ բա-

¹ Frederic Macler, Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suede..., *Nouvelles archives des missions scientifiques et litteraires*, 22, 1917–1924, Paris, p. 454–467.

² Այս հմայիլն ուսումնասիրել է Ուիսալայի համալսարանի դոցենտ Էվա Բալիցկա Վիտակովսկան (տե՛ս Ewa Balicka-Witakowska, En armenisk magisk rulle i Uppsala universitetsbibliotek. *Bysantiska salskapet bulletin*, Uppsala, 15, էջ 25–32):

³ F. R. Martin, *Sett, hört och känt*, Stockholm, 1933, p. 68–69.

⁴ *Aftonbladet*, 9.06.1891.

⁵ Այս ձեռագրի մասին տե՛ս նրա նամակները, ուղղված Կառլ Չեռեքստենին (Վարազդատ Վարդանյան, Արծվի Վարդանյան, Նորայր Բյուզանդացու անտիպ նամակներից, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1979, p. 5, էջ 95) և Գրիգորիս Գալենդրյայանին (Նորայր Ն. Բիզանդացի, *Նամակներ Վիեննայի Միսիթաբեաններին*, հրատ. սլատր. Մարտիրոս Մինասեան, Պէյրոս, 1992, էջ 34–36):

նին ՚ի վերայ արտաքին պաշտօնի, ՚ի վերայ անմահութեան բանական հոգոյ և ՚ի վերայ շատ անձնիշխանութեան» վերտառությունը և գրված է 1813-ի մարտի 20-ին, Կոստանդնուպոլսում։

Քարոլինա Ռեդիվիվայում կա նաև հայերին վերաբերող մեկ այլ ձեռագիր՝ պարսկերեն–թուրքերեն բառարան, հայերեն նշումներով, որ կատարել է Չմյուտնիայում Իտալիայի դեսպանատան հայագի թարգման Գ. Գալլոն։ Բառարանը թվագրված է՝ 1681։

Այս ձեռագիր գրքերից բացի գրադարանում պահվում են նաև 1666-ին Ամստերդամում լույս տեսած հայերեն Աստվածաշունչը, ինչպես նաև նոր և նորագույն հրատարակություններ (ի դեպ, հայերեն և հայագիտական գրքերի ներկայանալի հավաքածու ունի նաև Ուիսալայի համալսարանի աֆրո-ասիական լեզուների ինստիտուտի գրադարանը)։ Քարոլինա Ռեդիվիվայի հայերեն գրականությունը մեծացել է այն բանից հետո, երբ համալսարանը փարիզաբնակ մտավորական Վարդան Պաստակյանից գնել է նրա հարուստ գրադարանը¹։

Մասնագետները հայկական են համարում Ստոկհոլմի պատմության թանգարանում պահվող թռչնագարդ գորգը և Գյոթեբորգի թանգարանի դեկորատիվ արվեստի և արհեստների թանգարանում պահվող թռչնագարդ գորգի կտորները²։ Ստոկհոլմի Ազգային թանգարանում պահվում է նաև մեկ այլ հայկական գորգ՝ գործված XVII դարում³։

Գրական վաղ կապերը

Հայ-սկանդինավյան գրական կապերը ներառում են փոխադարձ թեմաների արտացոլման սակավաթիվ դեպքերը և թարգմանությունները։ Սույն գլխում մենք նպատակ չունենք գրականագիտական վերլուծություն կատարել, այլ պարզապես ներկայացնել հայ և օտարալեզու աղբյուրներից միավոր առ միավոր ժողոված տեղեկությունները՝ որպես ատաղձ սույն թեմայով կատարելիք մանրամասն վերլուծական ուսումնասիրության։

¹ Այս գրադարանի մասին տե՛ս Lousavan Hatamian, *Pastakians armenologiska bibliotek, Borås*, 1992:

² Mania Ghazaryan, *Armenian Carpets*, p. 30.

³ Նույն տեղում, էջ 80:

Շվեդիա: Նախորդ շարադրանքում նշվեցին հայ մատենագրության մեջ սկանդինավյան երկրների հիշատակումներ և մասնավորապես շվեդ հեղինակների ուղեգրություններում հայ ժողովրդի մասին հիշատակություններ, որոնք ինչ-որ չափով վերաբերում են նաև գրական առնչություններին:

Ինչպես նշվեց, XI դարի որոշ սկալդերի երգերում հիշվել են հայերը. մեր պրպտումների ժամանակ, ցավոք, մեզ չեն հանդիպել այդ երգերը:

Երկրորդ վարկածը վերաբերում է XII դարի հայ բանաստեղծ Գրիգոր Տղայի (1133–1194) ստեղծագործությանը: Վերջինիս «Ահա ձայնեմ ձայն ողբազին» սկսվածքով վիպերգում (հայտնի որպես «Ողբ Երուսաղեմի») հիշատակված են եվրոպական մի շարք երկրներ և ժողովուրդներ, որոնց անունները թվարկում է մահմեդականներից գրավված անձնավորված Երուսաղեմը: Նա ողբում է, որ Եվրոպայից շատերը կարող էին օգնության հասնել, սակայն այդպես էլ ոչ որ չի սատարել իրեն («Եւ ոչ որ չհասաւ ինձ ի թիկին»), և անունների երկար շարքը նա եզրափակում է հետևյալներով. «Ոչ Յտօռն և Պօլանին¹...»: Վիպերգի ֆրանսերեն թարգմանիչ Էդուար Դյուպրիեն այս տողը թարգմանել է «ոչ շվեդները, ոչ լեհերը» (“Ni le Suédois ou le Polonais”²): Իսկ թե որտեղից է ֆրանսիացի հայագետը գտել, որ «Յտօռն»-ը շվեդներն են՝ առաջմ մեզ ստույգ հայտնի չէ: Թերևս կարելի է մնանություն տեսնել Ստոկհոլմ քաղաքի անվան առաջին վանկի և «Յտօռնի», ինչպես նաև սկանդինավյան դիցաբանության Թոր աստծու անվան միջև...

Եթե հաշվի չառնենք վերոնշյալ երկու վարկածները, ապա հայ-շվեդական գրական առնչությունների առաջին ժամանակաշրջանը պետք է համարել XVI դարը: Արդեն նշվեց, որ XVI դարի ճանապարհորդ-մատենագիր Փիրգատե Ղափանեցին 1587-ին այցելել է եվրոպական մի շարք երկրներ, նաև՝ Շվեդիա և Դանիա:

¹ Գրիգոր Տղա, *Բանաստեղծություններ և պոեմներ*, էջ 268:

² Ed. Dulaurier, *Recueil des historiens des croisades documents arméniens*, Paris, LXIX, 1869, p. 282. Վիպերգի հրատարակիչ Ասատուր Մնացականյանը հատորի անվանացանկում (Գրիգոր Տղա, *Բանաստեղծություններ և պոեմներ*, էջ 450. «Յտօռն»-ի դիմաց գրել է «շեդացիներ».) անշուշտ վրիպակ է, պիտի լինի շվեդացիներ):

Հաջորդ հայ հեղինակը, որ հիշատակել է Շվեդիան, Սիմեոն Լեհացին (1584–1637) է: Լեհ-շվեդական պատերազմի առիթով նա մի քանի անգամ տարբեր գրություններում տվել է հյուսիսային այդ երկրի և ժողովրդի անունը: 1635-ին գրած իր «Տարեգրության» մեջ «Արշաւանք Վլատիսլաւ քագաւորի ի վրայ Շվետու» գլխում Լեհացին մասնավորապես նշել է. «Ի թին Ռ-ՉԴ, ապրիլ ԺԵ. գնաց Վլատիսլաւն ի վերայ Շվետու քագում գօրօք և ԾՌ- խագախով. որ ապստամբել էր վարդուց յետէ ի հօրէն... եւ որչափ անհաւատ կան՝ միաբան եղեն. զի եւ Շվետն անհաւատիցն է»¹: Տվյալ դեպքում «անհաւատը» պետք է հասկանալ այն, որ շվեդները լյութերական էին: Այս բնորոշումը Լեհացին մի քանի անգամ օգտագործել է շվեդների առումով, նկատի ունենալով, որ նրանք լեհերի հակառակորդն էին: 1629-ին Լվովում գրված մի Ռսկեփորիկի հիշատակարանում Լեհացին դարձյալ «անհաւատ» է կոչել շվեդներին («...անհաւատ ուրացողն որ կոչի Շվետ»²): Նույն հեղինակը 1636-ին գրած «Մեկնութիւն Հնգամատենին» գրքի հիշատակարանում, պատմելով Լեհաստանի Վլադիսլավ քագավորի ժամանակների մասին, մասնավորապես նշել է. «Իսկ երկրորդում ամի նորա քագաւորութեանն կրկին ապստամբեցաւ ոմն անհաւատ չար Շվետն, ոմնելով քագում լութեր իշխանք և մեծամեծ պարոնայք...»³: Շարունակելով իր խոսքը Չիզմունդ (Սիզիզմունդ) քագավորի մասին, Լեհացին գրել է, որ նա «քագում գօրօք և անթիւ հեծելովք գնացեալ ի վերայ նոցա՝ յաղթեաց գօրութեամբ Քրիստոսի և էառ ԺԵ քաղաք մեծ և անուանի և տիրեաց երկրին Շվետու և Իֆլանտի»⁴: Վերջին տեղանունն ամենայն հավանականությամբ Ֆինլանդիան է: Նույն ձեռագրում Շվե-

¹ Սիմեոն դպրի *Լեհացոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք*, ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսես վ. Ալիքեան, Վիեննա, 1936, էջ 377:

² Նույն տեղում, էջ 398: Տե՛ս նաև Սմբատ Տէր-Աւետիսեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Չուղայի Ամենափրկիչ վանքի*, հատոր Ա, Վիեննա, 1970, էջ 665:

³ *Հայերէն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ (1621–1640 թվականներ)*, հոդ Բ, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 648:

⁴ Նույն տեղում: Տես նաև՝ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Միշտոցի անուան մատենադարանի*, հատոր Դ, Երևան, 2008, էջ 16:

դիան հիշատակվել է ևս մեկ անգամ՝ հոլովված «Շվեդոս» ձևով («Երբ զամ Շվեդոս պատերազմեն ի յաթոս իմ ի Վարշով...»¹):

Նույն ժամանակ լեհահայ հեղինակ Հովհաննես Կամենացին իր «Պատմութիւն պատերազմին Խոթինոս» աշխատության մեջ քերել է Միգիզմունդ (Ձիգմունդ) թագավորի ճառն իր իշխանների առաջ, որտեղ այն ժողովուրդների թվում, որոնց դեմ կռվել են լեհերը, հիշվում են նաև շվեդները. «Եւ այժմ դուք՝ փառատր որդիքդ արքունի և ժառանգք հայրենեաց, յիշեցէք զգերաշուքի համբաւ գովելի գործոց նախնեացն ձերոց, թէ որքան զօրութիւնս, քանի քաջութիւնս, քանի յաղթութիւնս ընկալան ընդդէմ բազմազոյն ներհակաց օտար և ընտանի թշնամեաց՝ երբեմն ընդ Գրիժագաց և երբեմն Շուեուաց, երբեմն Սարակինոսաց և երբեմն Նետոդաց...»²:

Շվեդիան ծանոթ անուն է եղել նաև հայ ազատագրական շարժման գործիչ Իսրայել Օրու համար, որն Իրանում իր հավաքած տեղեկությունների հիման վրա գրված ծանուցագրերում մի քանի անգամ հիշել է շվեդ թագավորին և դեսպանին:³

Շվեդները երեք անգամ հիշվել են Հովսեփ արքեպիսկոպոս Արղուսյանի՝ տեր Ստեփանին հղած նամակներում, որոնցում նա շարադրել է Ռուսաստանի վերջին իրադարձությունները: 1788-ի նոյեմբերի 21-ին նա Աստրախանից հղած նամակում գրել է. «Երևանցի պ. Ստեփանն Տէր Սահակեան դեռ առ մեծ իշխանն է, Շուեքքն առ սոցա կռիւ քացին, ապա բազում անգամ յաղթեցեալք նկուն եղեն նոքա և ոչնչացան»⁴: Ակնարկված է ռուս-շվեդական պատերազմում շվեդների պարտությունը: Նույն անձնավորությանը 1789-ի սեպտեմբերի 24-ին գրած նամակում նշել է, որ ռուսները հաղթող են ծովում թե ցամաքում, «ի վերայ Թուրքաց, նոյնպես և ՚ի վերայ Շուեքացն»⁵: Նույնպես 1791-ի ապրիլի 4-ին Գուկաս կաթողիկոսը Հովսեփ Արղուսյանին գրած նամա-

¹ Նույն տեղում, էջ 652: Տես նաև՝ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, նույն տեղում, էջ 21:

² Յովհաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինոս, աշխատասիրութեամբ Հ. Անայանի, Երևան, 1964, էջ 43:

³ Армяно-русские отношения. Сборник документов, т. II, Армяно-русские отношения в первой трети XVIII века, под ред. А. Иоаннисяна, Ереван, 1964, стр. 311.

⁴ Գիւտ Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 81:

⁵ Նույն տեղում, էջ 96:

կում հիշել է, որ «Ձեկուցեալ էիր և զոմանց Աստուածայաջող յաղթութեանց զօրաց բարեբախտ Կայսերուհոյն առ Շուեքսն...»¹:

Հայաստանը շվեդ հեղինակների ուղեգրություններում և հակառակը

Առաջին շվեդը, որ Արևելքում կատարած ճանապարհորդության ընթացքում շփվել է հայերի հետ, եղել է XVII դարի հեղինակ Բենգթ Բենգսոն Օքսենսթիերման (1591–1643, հայտնի որպես Ճանապարհորդ Բենգթ): Նա երկու ուղևորություն է կատարել Արևելք, եղել Պարսկաստան այցելած առաջին շվեդը, որը գրել է առաջին շվեդերեն ուղեգրական գրքերից մեկը՝ տպագրված 1644-ին: 1613-ին ուղևորվել է Սուրբ Երկիր, 1616–1620 թվականներին ճամփորդություն կատարել Կոստանդնուպոլսի միջոցով Պարսկաստան, Բաղդադ և Բաբելոն: Օքսենսթիերման 1618-ին Հայաստանով հասել է Երուսաղեմ², ապա ուրբով, արաբական անապատներով՝ մինչև Եգիպտոս: Ցավոք, ճանապարհորդի նոթերը չափազանց հակիրճ են, նա սոսկ հիշատակել է իր այցելած երկրները, առանց մանրամասնություններ հարդղելու:

Մեկ այլ շվեդ ճանապարհորդ-մատենագիր՝ Նիլս Մաքսոն Շիոփինգը, 1654–1656 թվականներին եղել է մի շարք ասիական երկրներում, նաև Հայաստանում, տեսել Արարատ լեռը և իր ուղեգրության մեջ բնութագրել որոշ արևելյան ազգերի: Նրա ուղեգրությունն առաջին անգամ հրատարակվել է 1667-ին, Վիսինգսթրոմում: Հայերի մասին Շիոփինգը գրել է հետևյալը. «Հայերը քաջ հայտնի են, մի կողմից իրենց մշտապես քրիստոնյա մնալով, մյուս կողմից՝ իրենց առաքինության, անկեղծության և բոլոր մարդկանց հանդեպ հավատարմության պատճառով»³:

XVIII դարում շվեդ-օսմանյան պետական-դիվանագիտական առնչությունների աշխուժացման պատճառով մի շարք շվեդներ ճանապարհորդություններ են կատարել դեպի Օսմանյան կայսրություն և

¹ Նույն տեղում, էջ 125:

² *Lijkpredikan öfwer, then ädle och högwälborne herre, herr Bengt Oxenstierna... Så och en kort relation, om then salige herrens stora förfarenheet, och widt kring om werlden giorda reesor.* (Stockholm), Henrich Keyser, 1644, s. 12.

³ Ture J. Arne, *Svenskarna och Österlandet*, Stockholm, 1952, s. 156, 159.

գրել ուղեգրություններ: Ուփսալայի համալսարանի արևելագիտության ուսուցչապետ Միքայել Օլոֆսոն Էնենմանը (1676–1714) 1711–1712 թվականներին ճանապարհորդել է Փոքր Ասիայում և Եգիպտոսում: «Ուղևորություն Արևելքում...» նոթերում նա բազմիցս հիշատակել է տարբեր վայրերում իր հանդիպած հայերին և նկարագրել որոշ հայկական շինություններ: Բերենք հայերին վերաբերող ամենաընդարձակ հատվածը.

«Հայերը... հպատակ են, կառուցում են և ապրում են այստեղ և իրենց լավ են դրսևորում, եթե ոչ ավելի լավ, քան մյուս հույները, որովհետև նրանք ավելի հանգիստ են և պակաս խորամանկ են թվում, և ավելի շատ են տառապել թուրքերից: ...[Հայաստանը] նրանց հայրենիքն է, որի ժողովուրդն ապրում է շատ խիստ և դժվարին կյանքով, և եթե մարդ ցանկանա նշել նրանց պասի ուտելիքների մի առանձնահատկություն, ապա իսկապես նրանք իրենց ենթարկում են շատ ծանր պահեցողության, միաժամանակ ամբողջությամբ տրվում են Աստծուն տրվող ծառայության արարողությունների արտաքին դրսևորումներին: Նրանք այստեղ կառուցել են մի մեծ և գեղեցիկ եկեղեցի և բարելավել են այն մեծ հրդեհից հետո¹, դրա հատակը ծածկված է փոքրիկ գեղեցիկ թուրքական գորգիկներով, այն նպատակով, որ հայերը թուրքական սովորության համաձայն կոշիկներ են հետներն առնում և դրանցով մտնում իրենց եկեղեցին, իրենց պահում են թուրքերի նման, այնպես որ շուտով գնալով ավելի կնամանվեին թուրքերին, եթե եկեղեցում չունենային խորան և պատկերներ: Եկեղեցին կրում է սուրբ Ստեփանոսի անունը, որի պատերին նկարներ են կախված՝ խորանից վեր կամ աջ: Եկեղեցու դռան վերևում նույնպես սուրբ Ստեփանոսի և Երրորդության պատկերներն են: Առաջինը Հոր նկարն է՝ ծերունու տեսքով և եռաձայր պապական թագով, Ուրդին՝ խաչով և Սուրբ Հոգին՝ աղավաղ տեսքով: Ինչ վերաբերում է եկեղեցական արարողությանը, այն իրականացվում է լիակատար ազատությամբ: Նրանք այստեղ ունեն ութ

¹ Իրականում Ջմյունիայի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցին վերակառուցվել է 1689-ին՝ 1688-ի երկրաշարժի ավերածությունից հետո: Այս վանքի մասին մանրամասն տես Յակոբ վ. Քոսեան, *Հայրի Ջմյունիա և ի շրջակայս*, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 45-77: Այժմ վանքը գործածում են որպես պահեստ (տես *Հայրենիքի ծայր*, Երևան, 7.11.1990):

քահանա, որոնցից ամենատարեցը լուծում է նրանց մեջ հնարավոր տարաձայնություններն ու վեճերը: Նրանք առաջնորդվում են թուրքական օրենքներով, միայն թե իմ կարծիքով նրանք դրան քիչ են դիմում իրենց հարցերով: Նրանք խոսում են առաջին հերթին թուրքերեն և հազվադեպ են տիրապետում այլ լեզուների՝ բացի թուրքերենից և հայերենից, որը նրանց մայրենի լեզուն է, որով իրականացվում է ժամերգությունը և որը նրանք սովորաբար հասկանում են: Աստծո խոսքը, գրքերը, որոնցով նրանք կատարում են պատարագը, տպագրված են Վենետիկում և Մարսելում և այլ պապական վայրերում: Այդպիսով կարելի է մտածել, և ես ինքս էլ նկատել եմ, թե որքան սերտ են նրանք կապված այդ կաթոլիկներին: Ամենատարեց քահանայի անունն Իսահակ է, միջին տարիքի մի մարդ, խաղաղ, պարզ, միամիտ և կենսորախ, այդպես մյուսներն էլ մոտեցան ինձ, առնվազն իմ հանդեպ ամենայն սիրալիրություն ցուցաբերեցին, ինչպես եկեղեցում այնպես էլ տանը, որի կողքին նրանց սեփական դատարանն է և գլխավորը, որի մոտ նրանք գնում են վիճելի հարցեր ունենալիս: Նրանք ունեն որոշ ավագներ, որոնց կանչում են խիստ անհրաժեշտության դեպքում, որոնք առաջին հերթին լուծում են մահացածների դրամական և սեփականության գործարքները, որին նրանք վերաբերվում են ամենայն ազնվությամբ և կարգուկանոնով, նույնքան լավ իրենց գործարքներում ինչպես հայերի, այնպես էլ այլոց՝ եվրոպացիների, հույների, հրեաների և ցանկացած ուրիշների հետ: Այսպիսով նրանք դրսևորում են գեղեցիկ կարգուկանոն և պարզություն:

Նրանց կանայք մնում են տանը և հազվադեպ են դուրս գալիս, միայն եկեղեցի կամ նման անխուսափելի գործերով, որտեղ և միշտ գնում են ծածկված դեմքով, թրթուհիների նման և ընդհանրապես իրենց պահում են շատ առաքինի և ազնիվ: Հետո, երբ նրանց մեջ մտավ ծածկված դեմքով դուրս գալու սովորույթը, նրանք այլևս երբեք չեն ցանկանում հրաժարվել դրանից, որքան էլ որ թուրք դադիները շատ անգամներ բռնում են նրանց (ասելով, որ ոչ մի քրիստոնյա իրավունք չունի դեմքը ծածկելու, քանի որ դա միայն թուրքերի պահվածքն

է) և չեն վերադարձնում, մինչև որ գլխագին չեն ստանում, որը հույները և հայերը սիրով տալիս են իրենց կանանց ազատելու համար»¹:

Ընենանը 1711-ին Ռուսսալա աստվածաբան Յոհաննես Շուլթին հղած նամակում գրել է, որ հայկական եկեղեցին բարոյաբլված է, որ հայ քահանաները չգիտեն տարբերությունը Եվտիբոսի ու Դիոսկուրոսի միջև: Նա հիշել է հայ տպագրությունը, նշել, որ կաթովիկները լավ են տրամադրված հայերի հանդեպ և հրատարակել են նրանց եկեղեցական գրքերը, ինչպես օրինակ նրանց պատարագը Վենետիկում, 1690-ին: Պաղեստինին վերաբերող գլխում նա հիշատակել է Երուսաղեմի հայերին, նրանց եկեղեցին և իջևանատունը («եկեղեցին շատ գեղեցիկ է, կառուցվել է եվրոպացի քրիստոնյաների կողմից, մեծ է, բարձր, լուսավոր և լավ զարդարված»), Հայֆայի հայկական իջևանատունը, Եգիպտոսին վերաբերող գլուխներում՝ Կահիրեի, Ալեքսանդրիայի և Սկալանովա (այժմ՝ Բուշադասի) փոքր քաղաքի հայ բնակիչներին²: Իսկ իր մեկ այլ աշխատության մեջ (որ անտիպ էր այդ ժամանակ)՝ «Ճանապարհորդություն Թուրքիայում. Բենդերից մինչև Կոստանդնուպոլիս», Ընենանը նկարագրել է Կոստանդնուպոլիսի հայերին:

Հավանաբար Ընենանին է նկատի ունեցել ֆրանսիացի հայագետ Գլյոմ դը Վիլֆրուան (1690–1777), որն իր մի գրության մեջ նշելով աշխարհագրության իմացության կարևորության մասին՝ որևէ ժողովրդի մշակույթի ուսումնասիրման գործում, հայտնել է հետևյալ կարծիքը. «Ցանկալի է և նույնիսկ անհրաժեշտ, որ շվեդացի այն ազնվական ճանապարհորդը, որն այժմ Կ.Պոլսում սպասում է հարմար ժամանակին՝ անցնելու համար Հայաստան, մասնավոր հակում ունենա այդ գիտության հանդեպ»³:

Ընենանից մի քանի տասնամյակ անց՝ 1749–1752 թվականներին, նույն ուղեորն է կրկնել Ռուսսալայի համալսարանի շրջանավարտ, երիտասարդ բուսաբան և բժիշկ Ֆրեդրիք Հասելքուիսթը

(1722–1752): Չմյուռնիայում նա ծանոթացել է մի քանի հայերի հետ (Ռուսսալայի համալսարանի գրադարանում պահվող նրա արխիվում կա ոմն Պոլ Չուերաքի հայերեն հիշատակագիրը, գրառված նրա արժանապատիվով): Հետմահու՝ 1757 թվականին, Ստոկհոլմում լույս տեսած իր «Iter Palaestinum կամ Ճանապարհորդություն Սուրբ Երկիր 1749–1752 թվականներին, նկարագրությամբ» գրքում նա մանրամասն նկարագրել է հայ եկեղեցու ծիսակատարություններից մեկը, ինչպես նաև Երուսաղեմի հայկական եկեղեցին¹: Ավելորդ չէ մեջբերել հայերի մասին նրա կարծիքը. «Մենք չենք ակնկալում թուրքական ճարտարապետության մեջ գտնել հետքերն այն փառահեղության, որ տակավին երևում են հին եգիպտացիների, հույների կամ արաբների մոտ: Թուրքը չգիտի, թե ինչպես է պետք քարը հարմար կերպով գետեղել, շատ ավելի քիչ է նրա պատ շինելու կարողությունը: Հայերն են նրանց ճարտարապետները: Սրանք բնական հակում ունեն դեպի այս արվեստը: Եվ օժանդակված այն բոլորով, ինչ որ տեսել են Արևելքում իրենց ուղևորությունների ընթացքում՝ կառուցում են այնքան լավ, որքան որ կարելի է ակնկալել մի ժողովրդից, որ իր ողջ իմացությամբ կարծես թե պարտական է բնությանը: Եթե այս մարդիկ (հայերը) կարողանան Եվրոպա ուղևորվել և այնտեղ զարգացնել իրենց կարողությունները, մենք գուցե Արևմուտքում ունենանք բոլոր օգտակար շինությունների մեջ վարպետներ, որոնք հավանաբար մրցեն հների հետ և անցնեն նրանից շատերին»²:

Կոստանդնուպոլսում Եվեղիայի դեսպան կոմս Կառլ Գուստավ Լուվենհիելդը (1790–1858) բազմիցս շփվել է մի շարք հայերի հետ և գրել նրանց մասին իր հիշողություններում: Նա մտերիմ է եղել օսմանյան բանկիր, հայ կաթոլիկ սարքաֆ Ագուբ Թըրնգըր-օղլուի (Հակոբ Թըրնկըրյան) ընտանիքի հետ: Իր հուշերում Լուվենհիելդը երբեմն կատարել է ուշագրավ դիտարկումներ հայերի մասին, օրինակ. «Նրանք

¹ Michael Eneman, *Resa i Orienten 1711–1712*, utgivfen af K. U. Nylander. Första delen, Mindre Asien och Egyptien. Senare delen, Sinai Halfön och Palestina, Uppsala, 1889, p. 43-45.

² Նույն տեղում, էջ 123, 157, 183, 236-237:

³ Բեռնար Ուրիե, Հայագիտության սկզբնավորումը Ֆրանսիայում, *Էքզիստիվ*, Վարշապատ, 1999, հունվար, էջ 79:

¹ Հասելքուիսթի հուշագրի՝ հայերին վերաբերող հատվածները մենք բարձրագույն կերպով ենք հայ գիտական մամուլում նրա մասին ընդարձակ առաջաբանով հանդերձ (տես՝ Արմուի Բալախինևան, Շուրի ճանապարհորդ Ֆրեդրիք Հասելքուիսթը հայերի մասին, *Հայկազեան հայագիտական հանդես*, հատոր ԻԶ, Պեյրուք, 2006, էջ 251-262):

² Fredrick Hasselquist, *Voyages and travels in the Levant, in the years 1749, 1750, 1751, 1752*, London, 1766, p. 101.

(հայերը – Ա. Բ.) սովորաբար պարզամիտ են, չհաշված այն դեպքերը, որտեղ դրան կա: Նրանք համեստ են ուտելու և խմելու մեջ, քաշված են և ազնիվ: Վախը և անտարբերությունն այս ազգի բնութագրական կողմերից են»¹: Երբեմն էլ նրա տպավորությունները մակերեսային են, նույնիսկ սխալ, ինչպես՝ «Հայերը երբեք չեն մոտենում եվրոպացիներին և չեն մասնակցում հանրային կյանքին» կամ «Նրանց (հայերի–Ա. Բ.) սովորությունները շատ նման են թուրքերին»²:

Շվեդ ռազմական գործիչ Կառլ Պետեր ֆոն Հեյդենսթամը 1815–1817 թվականներին որպես սպա ծառայել է պարսկական բանակում: Կոստանդնուպոլսից Պարսկաստան մեկնելիս նա այցելել է Վան և Կարս քաղաքները, իր զեկուցագրերում հիշել Էրզրումն ու Երևանը³:

Շվեդ կին գրող Ֆրեդրիկա Բրեմերը (1801–1865) «Կյանքը Հին երկրում» գրքում (1860–1862) նկարագրել է իր ուղևորությունը մի քանի արևելյան երկրներ, այդ թվում՝ Օսմանյան կայսրություն: Նա մասնավորապես հիշատակել է Արարատ լեռը՝ Նոյյան տապանի ավանդության առնչությամբ: Բրեմերը մի առիթով նկատել է, որ ոչ միայն քաղաքական պայմանները, այլև կլիման է հայ ժողովրդին դեմ: «Բնության կործանիչ բնույթը թվում է միացել է բարբարոսներին: Երկրաշարժները կրկին ու կրկին ցնցել են Հայկական լեռնաշխարհը... Վերջերս ամբողջ Էրզրումը երկրաշարժի է ենթարկվել, և ողջ բնակչությունը փախուստի է մատնվել»⁴: Գավանանքով բողոքական Ֆրեդրիկա Բրեմերը անդրադարձել է նաև ամերիկյան բողոքական քարոզիչների՝ Կոստանդնուպոլսի հայերի մեջ ծավալված գործունեությանը՝ հարկ համարելով նշել, որ Ավետարանը հաջողություն է գտել հայերի մեջ⁵:

Գրող-ճանապարհորդ Մվեն Անդերս Հեդինը (1865–1952) նույնպես ճանփորդել է մի քանի ասիական երկրներում: Կովկաս և Իրան կատարած իր առաջին ուղևորության ժամանակ նա հանդիպել է մի շարք հայերի և գրել նրանց մասին իր նոթերում: Նա մասնավորապես

նկարագրել և նկարել է մի ծեր բաքվեցի հայի՝ Գրիկորով ազգանվամբ, որը զբաղվել է Ռիզայից շվեդական պուճի ներմուծմամբ, և այդ պատճառով էլ Բաքվի նավթահանքերում աշխատող շվեդները նրան անվանել են «շվեդական հյուպատոս»¹: Իսկ հայ կանանց մասին Հեդինը գրել է հետևյալը. «Հայուհիները շատ գեղեցիկ և հաճելի են: Նրանք լավ կազմվածք ունեն, դեմքերը սպիտակ են, աչքերը և մազերը՝ սև... Մինչ անհնար է մի բառ լսել պարսկուհիներից, հայուհիները բաց և շփվող են օտարերկրացիների հետ, երբեմն նրանք կարողանում են հաղորդակցվել ֆրանսերենով»²: Հեդինը Հայաստանում եղել է նաև Հնդկաստան կատարած իր ճանապարհորդության ընթացքում, երկիրը նկարագրել 1910-ին հրատարակած իր նոթերում³:

Հայերի մասին բազմաթիվ հիշատակություններ կան նաև Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի հայաբնակ շրջաններում գործած շվեդ բողոքական քարոզիչների գրքերում և հուշագրություններում: Այստեղ հիշենք միայն վերոհիշյալ Վիլհելմ Սարվեին, որը Ռուսական կայսրություն կատարած իր մի շարք ուղևորությունների ընթացքում եղել է նաև Հայաստանում ու տարբեր հայաբնակ շրջաններում և իր «Ռուսաստանի ժողովուրդների մեջ» եռահատոր գրքում լայնորեն անդրադարձել է հայ ժողովրդին՝ գետեղելով նաև հայերի և հայկական շինությունների լուսանկարներ: Գրքում կան հայ անձնավորությունների և հայկական կառույցների բազմաթիվ լուսանկարներ: Որոշ զլուխներ նվիրված են բացառապես հայերին: «Հայկական Հռոմը» զլուխը վերաբերում է Էջմիածնին և Սարվեի հանդիպումներին հայ եկեղեցականների հետ. նա հանդիպել է Գալուստ Տեր-Մկրտչյանին և դրվատալից տողեր նվիրել ակամավոր հայագետին⁴: «Հայ փախստականները» զլխում Սարվեն նշել է, որ 1895–1897 թվականների կոտորածներից հետո Հայաստանում 120 հազար փախստականներ կան: Քյորփալու բնակավայրում Սարվեն հյուրընկալվել է մի հայ

¹ Greve Carl Gustaf Löwenhielms Minnen, II, Stockholm, 1927, s.12-13.

² Նույն տեղում, էջ 42:

³ C. P. von Heidenstam, Några underrättelser – samlade under en resa ifrån Turkiet till Persien af en svensk officer, Uppsala, 1825, s. 55-56.

⁴ Fredrika Bremer, *Lifvet i Gamla världen*, fjerde delen, Stockholm, 1861, s. 238.

⁵ Նույն տեղում:

¹ Sven Hedin, *Genom Persien, Mesopotamien och Kaukasien. Reseminnen*, Stockholm, 1887, s. 19-20.

² Նույն տեղում, էջ 312-313:

³ Sven Hedin, *Overland to India*, London, 1910.

⁴ Wilhelm Sarwe, *Bland Rysslands folk: i missionens och Röda Korsets tjänst 1882–1922*, d. 1, Stockholm, s. 243-244.

ընտանիքում և մանրամասն նկարագրել նրանց տունը և կենցաղը (քարե կամ կավե շինությունները, երդիկը, թոնիրը, որը նա սխալմամբ «պոռնիկ» է անվանել) և հայկական խոհանոցը՝ չմոռանալով գովաբանել նաև հայ ընտանիքի նիստուկացն ու ավանդույթները¹:

Բաղկանյան պատերազմի ժամանակ (1912–1913) Կոստանդնուպոլսում գտնվող շվեդ ռազմական թղթակից Ֆիլիպ ֆոն Շվերինը հետազայում իր հիշողություններում անդրադարձել է նաև հայերին²:

Ինչ վերաբերում է հայ մտավորականների ուղևորություններին Շվեդիա, ապա դրանք ավելի հազվադեպ են պատահել, քանի որ նրանցից քչերին է բախտ վիճակվել այցելել սկանդինավյան երկրներ: Մինչդեռ շատերն են երազել տեսնել հյուսիսային երկրները³: Առհասարակ Շվեդիան, լինելով համեմատաբար հեռավոր երկիր, մեծ մասամբ քիչ ծանոթ, եթե ոչ անծանոթ է մնացել հայ մտավորականությանը: Տարբեր ժամանակներում Շվեդիայում հյուրընկալվել են գեղա նկարիչ Հովհաննես Այվազովսկին, բանասեր Կարապետ Եզյանցը, խմբագիր Արգար Հովհաննիսյանը, բողոքական քարոզիչ, թարգմանիչ Աբրահամ Ամիրխանյանցը, թատերագիր Ալեքսանդր Աբելյանը, արվեստաբան Գարեգին Լևոնյանը⁴, քաղաքական գործիչ Մարտ Նազարբեկյանը (1916-ին), «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանը, որն անգլո-հայկական ընկերության հիմնադիր ուսուցչապետ Հակոբյանի հետ 1915-ին մասնակցել է Կոպենհագենում կայացած Բալթյան ցուցահանդեսին, այնուհետև՝ Մալմյոյում կայացած հանդիսավոր ընդունելությանը:

¹ Նույն տեղում, էջ 252-253:

² Philip von Schwerin, *I flät med turkarne. Minnen från Balkankriget*, Stockholm, 1913, s. 161.

³ «Յուցակազմով են Շվեդիա, Նորվեգիա և Ֆինլանդիա գնալու, չգիտեմ կհաջողվի՞՞ գնալ, թե՞ ոչ: Բայց որ իմանայիր ինչպե՞ս են ուզում: Չէ՞ որ դա իմ վաղուցվա երազն է»,- գրել է Վահան Տերյանը 1907-ի մի նամակում (Վահան Տերյան, *Երկեր չորս հատորով*, հատոր 2, Երևան, 1975, էջ 222): Նույնը և Ավետիք Իսահակյանը. «Հայրս երազում էր հյուսիսային երկրների մասին, ցանկանում էր լինել Նորվեգիայում ու Շվեդիայում» (Վիգեն Իսահակյան, *Հայրս*, Երևան, 2000, էջ 201):

⁴ Գ. Լևոնյանի «Աշխարհե-աշխարհ կամ 20,000 վերստ Երոզայում» գրքի (Թիֆլիս, 1914) առաջին հատորում ծանուցվել է, որ երկրորդ հատորում ընդգրկվելու է նաև «Շվեդիա – Ստոքհոլմ, Ուպսալա, Մալմո, Տիլբորգ» կատարած ուղևորության նկարագրությունը: Լևոնյանի գրքի երկրորդ հատորը լույս չի տեսել:

XX դարի սկզբին Գանիա և Շվեդիա է այցելել նաև հայ քեմի ապագա մեծ ողբերգուն՝ Վահրամ Փափազյանը (1888-1968), որն իր «Հետադարձ հայացք» հուշագրքում հետևյալ խոսքերն է գրել այդ երկրի մասին. «Ստոկհոլմը իր համաչափությամբ և կլիմայով նույնքան սառն է, որքան Ալբիոնը, բայց երկիրը լինելով լեռնային և անտառապատ, մարդն այնտեղ ավելի զգայուն է թվում, հետևաբար և ավելի ատակ թատրոնի արվեստին, թեև շատ աղքատ՝ փոքրիշատե վարպետ դերասաններից: ...Շվեդիան, անսահման հարուստ իր ընտիր կովերով, աղքատ է դերասաններով, թեև սիրում է արվեստը, որքան թույլ են տալիս այդ՝ նրա կաթնատնտեսական հոգսերը»¹: Արվեստագետ Փափազյանի բնորոշումը դիպուկ և ճշգրիտ է XX դարի սկզբի շվեդական թատրոնի վերաբերյալ, որն այն ժամանակ տակավին չի ունեցել բարձրակարգ թատերարվեստ և դերասաններ: Իսկ Փափազյանը Ստոկհոլմ էր գործուղվել Միլանի թատերական ակադեմիայից՝ դիտելու այնտեղ հյուրախաղերով գտնվող ռուս դերասան Պավել Օռլյոնովի խաղը²:

Շվեդական արվեստի մասին հիացմունքով չի խոսել նաև տասնամյակներ անց Շվեդիա այցելած ռուսական թատրոնի հայազգի գործիչ Ռուբեն Միմոնովը: Մոսկվայի «Standard» հայերեն պարբերականում տպագրած «Նոր թատրոնի և Մոսկվայի հայ դրամ. ստուդիայի մասին» նրա հոդվածը թեև ընդհանուր առմամբ բուշխիկյան ոգով է գրված, սակայն շվեդական արվեստի մասին նրա կարծիքը հազիվ թե չափազանցված լինի. «Շվեդիայում, որ ազատ էր մնացել Եվրոպայում կատարված համաշխարհային ցնցումներից և որտեղ տիրում է կուշտ գոհունակությունը – արվեստը գտնվում է խիստ անկար վիճակում: Գյոթերորգում կայացած համաշխարհային արդյունաբերական ցուցահանդեսին նկարչական և քանդակագործական թանգարանի հատկապես կառուցած շենքը ոչնչի պետք չէր: Նկարչական մասը ևս արժանի չէր ոչ մի ուշադրության: Տկլոր կանանց մարմիններ ու բյուստեր, մատյուր-մորտիկներ և պեյզաժիկներ: Եղած թատրոններից ամենամեծ հաջողությունը վայելում է այսպես կոչված «րևյուն», ուր թեթև կեր-

¹ Վահրամ Փափազյան, *Երկեր 5 հատորով*, հատոր 1, Երևան, 1979, էջ 132-133:

² Նույն տեղում, էջ 141:

պով ծաղրվում է «քարի» թագավորը, քննվում են քաղաքի փոքրիկ բամբասանքները և ռեկլամ են անում Շվեդական առևտրական խոշոր ֆիրմաները»¹:

Անցած հարյուրամյակի սկզբին Շվեդիայում եղել և հետագայում այդ երկրի մասին գրել է նաև մեկ այլ պոլսահայ Վահրամ Փափազյան՝ միայն թե որպես մարզիկ (վազող): Մեկ այլ հայ մարմնամարզիկի՝ Մկրտիչ Մկրյանի (հնգամարտ և սկավառակի նետում) հետ միասին 1912 թվականի հունիսին նա մասնակցել է Ստոկհոլմում կայացած օլիմպիական խաղերին²: Փափազյանի և Մկրյանի մասնակցությունը ստոկհոլմյան օլիմպիադային ապահովելու համար համահայկական հանգանակություն է տեղի ունեցել: Պոլսահայությունը իր ներկայացուցչին ուղարկելով Շվեդիա՝ կարևորել է քաղաքակիրթ երկրում հայ անվան բարձրացման և հայության հանրահռչակեցման հարցը՝ անկախ իր մարզիկի ձեռքբերումից: Այդ առթիվ Պոլսի «Մարմնամարզ» պարբերականը գրել է. «Թող Փափազեան նոյն իսկ վերջին էլնէ, բայց հոն իբր հայ ներկայացուի, կարեւորը մեծ ազգերու այդ հասարոյթին մէջ հայ անուան յիշատակուիլն է. իրաւ է, հայ անունը գրեթէ երեսուն տարիներէ ի վեր Եւրոպայի շրջանը ըրաւ իբր կողոպտուող, սպաննուող, բռնաբարուող ազգի անուն, իբր արցունքի եւ արեան հոմանիշ, շատեր մեղքցան մեր վրայ, բայց մեզ մոռցան, ու հիմա, ժամանակն է, որ կրկին մեր անունը իրենց շրթունքներուն վրայ արտաբերուի»³:

Ստոկհոլմի օլիմպիադայում հայ մարզիկները մրցանակային տեղեր չեն զբաղեցրել, սակայն նրանց շնորհիվ Ստոկհոլմում ծածանվել է նաև օսմանյան դրոշը: Շվեդիայի օլիմպիադայի մասին Փափազյանը թղթակցություններ է ուղարկել Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթին: Շվեդական մամուլը մի քանի անգամ հրատարակել է նրա և հատկապես գեղամարմին Մկրյանի լուսանկարները՝ հիշելով նրանց

¹ «Standard», 1924, p. 1, էջ 15-16:

² Gustaf G:son Uggla, *Olympiska spelen i Stockholm*, Stockholm, 1912, p. 386-388, 397-400. Փափազյանի և Մկրյանի մասնակցության մասին մանրամասն տես Հայկ Դեմոյան, *Հայկական սպորտը և մարմնակրթությունը. Օսմանյան կայսրությունում*, Երևան, 2009, էջ 113-125:

³ *Մարմնամարզ*, Կ. Պոլիս, 15.01.1912, p. 2:

ազգությունը: 1962-ին լույս տեսած իր հուշագրքում Փափազյանը հիշել է Շվեդիայի իրականությունից ստացած իր տպավորությունների մասին¹:

Արձակագիր Լևոն Բաշալյանը 1914-ին և հետագա տարիներին այցելել է Ֆինլանդիա և Շվեդիա, մասնավորապես Շվեդիայի հյուսիսային մասը՝ Լապլանդիա: Իր «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմի ատեն» ակնարկում նա բարձր կարծիք է հայտնել հյուսիս-եվրոպական քաղաքակրթության մասին: Բաշալյանի դիտարկումները ևս դիպուկ են և առանց չափազանցումների. «Կը յիշեմ որ, ճամբուն երկայնքը, բրդեղէններուն մէջ պարփակուած աղջնակներ, որոնք դպրոց կ'երթային, մեզ կը բարևէին արքունիքի վայել խոնարհութեամբ մը, ծնրադրութեան սիրուն շարժումի մէջ դնելով իրենց բոլոր ծաղկատի շնորհը: ...Մարդկային բարձրագոյն առաքինութիւնն ունին. նախ, ան որուն մէջ կը բովանդակուին բոլոր միա բարեմասնութիւնները, - մաքրութիւնը: Ամէն բան մաքուր է հոն, և ամէն մարդ մաքուր է: ... Բայց միայն արտաքին մաքրութիւնը չէ Շվեդիոյ յատկանիշը: Ընդհանուր բարեկարգութիւնը, ընկերային դասակարգերուն միջև տիրող համերաշխութիւնը, անհատներուն ծայրագոյն պարկեշտութիւնը և բարեկրթութիւնը, ամենուն ալ խորին գիտակցութիւնը (ոչ) այնքան իրենց պարտքին, որքան իրենց իրատուքին, գիտութեան ընձեռած բարիքներուն թափանցումը ընկերային բոլոր խաւերուն մէջ, այն արդիւնքն առաջ բերած են, որ ընկերաբաններուն երազած մտատիպարին իրականացումը կը կարծես տեսնել ամէն քայլիդ»²:

Մեր օրերում շվեդահայության կյանքին վերաբերող վեպ է գրել սիյուրբահայ գրող Հայկ Նազգաշյանը: «Անմար կրակ» վեպը (որպես թերթն լույս է տեսել 1987-1988 թվականներին Բեյրութի «Շիրակ» ամսագրում) պատկերում է Շվեդիայում բնակվող Եթովպիայից գաղթած հայուհի Սիվվայի և նրա շվեդ ամուսին Կառլի համատեղ կյանքը, երկու մշակույթների՝ հաճախ կոնֆլիկտային փոխհարաբերությունները:

¹ Վահրամ Փափազեան, *Մեր, սեր, սեր*, Պոլսոթ, 1962, էջ 55-59:

² Լևոն Բաշալյան, *Նորավեպեր և պատմուածքներ*, Փարիզ, 1944, էջ 253-254:

Հայ գրականությունը շվեդերեն և հակառակը: Հայ գրականությունը շվեդերեն և շվեդ գրականությունը հայերեն թարգմանվել են սակավադեպ, տարերայնորեն և գրեթե միշտ՝ միջնորդ լեզվից: Հետաքրքիր մի օրինաչափությամբ շվեդերեն առավել հաճախ հնչել են արևելահայ գրողների գործերը, իսկ շվեդ հեղինակները ևս մեծ մասամբ թարգմանվել են արևելահայերեն: Այստեղ թերևս նշանակություն է ունեցել Շվեդիայի առավել սերտ առնչությունները Ռուսաստանի հետ:

Արդեն նշվեց 1723-ին Ստոկհոլմում Հենրիկ Բրեննեի կողմից հրատարակված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համառոտության մասին, որի լեզուն թեև լատիներեն է, սակայն այդ տարեթիվը կարելի է համարել նաև Շվեդիայում հայ գրականության թարգմանության սկիզբը: Իսկ 1726-ին հրատարակված շվեդ աստվածաբան Օլաֆ Յելսիի հայ եկեղեցուն նվիրված լատիներեն աշխատության մեջ¹ կան մեջբերումներ Ազաթանգեղոսից և Մովսես Խորենացուց, ինչպես նաև մի հատված Ներսես Շնորհալու Թաղես առաքյալին նվիրված բանաստեղծությունից²: Ի դեպ, որոշ անուններ Յելսին ներկայացրել է սխալ ձևերով. օրինակ, Լուսավորիչ գրելու փոխարարեն գրել է Ս[ուրբ] Սավորիչ³ և այլն:

Շվեդերեն լեզվով հայ գրականությունից թարգմանված առաջին մնուշը, որքան կարողացել ենք պարզել, Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» ստեղծագործությունն է: Շվեդ բանաստեղծ և թարգմանիչ Կառլ Ավգուստ Նիկանդերը (1799–1839) 1829-ին այցելել է Վենետիկ և Սուրբ Ղազար կղզում ծանոթացել Մխիթարյան միաբանների հետ: Վերջիններիս պատվերով Նիկանդերը շվեդերեն է թարգմանել (ամենայն հավանականությամբ լատիներենից) Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթքը: Նույն թվականին այս թարգմանությունն առանձին գրքույկով լույս է տեսել Սուրբ Ղազարում⁴ հետազայում մշտապես տեղ գտնելով «Հավատով խոստովանիմ»-ի

¹ Dr. Olav Celsi, *Dissertatio Academica de hodierno statu Ecclesiae Armenorum*, Upsalae, 1726.

² Նույն տեղում, էջ 2:

³ Նույն տեղում, էջ 22-26:

⁴ *Armeniska patriarken S. Niersis Clajensis böner*, öfversatte på svenska språket af Karl August Nicander, 1829, Venedig, på ön San Lazzaro.

թարգմանվելու հրատարակություններում¹: Այս թարգմանվելու հրատարակություններում Շնորհալու աղոթքը լույս է տեսել նաև նորվեգերեն, դանիերեն, իսլանդերեն և ֆիններեն:

Սկանդինավյան լեզուներով հայկական պատարագի «Որ օրինես զայնոսիկ» աղոթքը Վիեննայի Մխիթարյանների տպարանում հախ լույս է տեսել 1837-ին, 25 լեզվով, ապա 1893-ին՝ 50 լեզվով: 1893-ի ժողովածուի համար Նորայր Բյուզանդացու օժանդակությամբ լատիներենից թարգմանվել են իսլանդերեն, դանիերեն, նորվեգերեն, սամերեն և ֆիններեն²:

Հայերենից շվեդերեն կատարված հաջորդ թարգմանությունները վերաբերում են XX հարյուրամյակի կեսին: Ուր տարբեր լեզուներից շվեդերեն թարգմանող գրող, ինքնուս թարգմանիչ, 50-ից ավելի գիրք թարգմանած Արթուր Մազնուստը (1902–1975) հասուն տարիքում սովորել է հայերեն: Սկսած 1950-ից նա Հայաստանից ստացել է մամուլ և գրականություն (շուրջ 50), պարբերաբար շվեդական մամուլում հանդես եկել թարգմանություններով: 1948-ին «Յենթլանդս ֆոլքբլադ» թերթին տված հարցազրույցում նա ասել է. «Ես սիրահարված եմ հայ գրականությանը» և նշել, որ «հրաշալի և բարձր զարգացած հին մշակույթ ունեցող հայերի դասական հարուստ գրականությունը պետք է ճանաչվի Շվեդիայում»: Շվեդական «Հորիզոն» ամսագրում 1972-ին հրատարակվել է Թումանյանի, Իսահակյանի և Դեմիրճյանի բանաստեղծությունների մի ընտրանի՝ Արթուր Մազնուստի թարգմանությամբ, որ բավական հաջող են և լավ են հնչում շվեդերեն: Շվեդական կենտրոնական «Վի» («Մենք») ամսագրի թղթակիցը հարցազրույց է տպագրել Մազնուստի հետ՝ «Հայաստանի արևն Իթերոնի վրա» վերտառությամբ, որտեղ մեջբերել է թարգմանչի կարծիքը հայ գրականության մասին. «Հայերն ունեն այնպիսի բարձր և նշանակալից գրականություն, որի մասին, սակայն, այս մեծ աշխարհը շատ քիչ պատկերացում ունի: Այն իր վրա կրում է ազգայնականության մեծ կնիք, ինչը բնական է հազարամյակների ընթացքում ամեն կողմից հալա-

¹ Տե՛ս օրինակ *Preces sancti Nersis Clajensis armenorum patriarcae, trigida tribus linguis editae*, Venetiis, in insula S. Lazari, 1862, էջ 139-152:

² Նորայր Բյուզանդացի, *Նամակներ Վիեննայի Մխիթարեաններին*, էջ 37:

ծանրների գոհ դարձած հայարտ ժողովրդի համար: Մակայն այդ գրականության վրա առկա է նաև հայկական բնավորության մեղմությունն ու վեհությունը: Երբեմն կարելի է նկատել ռուս գրականության ազդեցություն, սակայն հայ գրողները կանգնած են իրենց ուրույն բարձր աստիճանին. Թումանյան, Աբովյան, Պարոնյան...»¹: Մագնուսոնի բազում թարգմանություններ այդպես էլ մնացել են անտիպ և պահվում են Ուփսալայի համալսարանի գրադարանում:

Ինչպես նշել է Սուրեն Երզնկյանն Արշակ Չոպանյանին գրած մի նամակում, 1940-ականների վերջին շվեդական «Վի» ամսագրում հրատարակվել է Գրիգոր Զոհրապի նովելներից մեկը²:

Սկանդինավյան լեզուներից հայ գրականության միակ ժողովածուն հրատարակվել է շվեդերենով: Այն իրականացրել է 1968 թվականին գրող-թարգմանիչ Կառլ Էլոֆ Սվեննինգը (1904–1984), որի թարգմանությամբ և խմբագրությամբ լույս է տեսել «Պատմվածագիրներ Հայաստանից» ժողովածուն³: Գիրքը հրատարակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի օժանդակությամբ: Այնտեղ ընդգրկված են Պարոնյանի, Զոհրապի, Օտյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Թումանյանի, Իսահակյանի, Զորյանի և այլ գրողների արձակ ստեղծագործություններ: Թեև նշված չէ, սակայն թարգմանությունները կատարված են միջնորդ լեզուներից (ռուսերենից և ֆրանսերենից): Սվեննինգը հայ գրականությամբ սկսել է զբաղվել 1963-ից՝ որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչ այցելելով տարբեր երկրներ և ծանոթանալով տեղի գրականությանը⁴: Ի դեպ, Սվեննինգի թարգմանությամբ լույս են տեսել նաև Թումանյանի և Զորյանի մի քանի պատմվածքները, հատվածներ «Մասունցի Գավիթ» էպոսից և նմուշներ ժամանակակից բանաստեղծներից: Հատկանշական է, որ Թումանյանի «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքը գետեղվել է

¹ Armeniens sol över Yterån, *Vi*, 1954, Januari, s. 26.

² Տե՛ս Ս. Լորելլի նամակն Ա. Չոպանյանին, Գրականության և արվեստի բանգարան, Արշակ Չոպանյանի ֆոնդ, 1 բաժին, քիվ 2866, էջ 4: Տե՛ս սույն նամակի մեր հրատարակումը՝ Ս. Լորելլի նամակներն Արշակ Չոպանյանին, *Հայկական հայագիտական հանդես*, ԺԹ, 1998, էջ 338:

³ *Berrättare från Armenien*, urval inledning, ingresser och översättning av Carl Elof Svenning, Lindigö, 1968.

⁴ Սվեննինգի՝ հայ գրականության հետ ունեցած առնչությունների մասին մանրամասն տե՛ս՝ Ռոպերտ Շեպենան, *Ինքնակենսագրություն. յուշեր և գործունեություն*, Հալեպ, 1999, էջ 369-373:

շվեդական տարրական դպրոցի աշակերտների համար կազմված ժողովածուներում⁵: 1967-ին Սվեննինգը կնոջ՝ պատմաբան Ռայնհիլդի հետ այցելել է Հայաստան: Ըստ նրա, «...դարավոր բարձր մշակույթ ունեցող հայ ժողովուրդն արժանի է ավելի խոր ճանաչման: Ես կարծում եմ, որ Հայաստանը Ասիայի և Եվրոպայի միջև ընկած մշակութային այն կամուրջն է, որի վրայով պետք է անցնի ամեն մի զարգացած մտավորական՝ ըստ արժանվույն գնահատելու համար հայ ժողովրդի անցյալի ու ներկայի հարուստ մշակույթը, արվեստը, գրականությունը»⁶: Մրանից բացի, Սվեննինգը հայ ժողովրդի մասին գրել է «Լայնախոհ, մեղմասիրտ, օժանդակող ժողովուրդը» բանաստեղծությունը⁷:

Դարձյալ միջնորդ լեզվից (ռուսերեն) է կատարվել Կարեն Սիմոնյանի «Ցտեսություն, Նաթանայել» մանկապատանեկան ֆանտաստիկ վեպի շվեդերեն թարգմանությունը, որ հրատարակվել է 1979-ին⁸:

Ստոկհոլմի և Մոսկվայի հրատարակչությունները 1989-ին լույս են ընծայել նախկին խորհրդային երկրների ժողովուրդների հեքիաթների երկհատոր ժողովածու: «Հեքիաթներ Անդրկովկասից» հատորում ընդգրկված է «Ալո-Դինոն և խոսող Հագարան բլրուլը» հայկական հեքիաթը⁹:

Ստոկհոլմաբնակ Փոլ Մինասյանը թարգմանական փորձեր է կատարել Հովհաննես Թումանյանից և Եղիշե Չարենցից, որոնք տպագրվել են Շվեդիայում լույս տեսած հայերեն ոչ պրոֆեսիոնալ հրատարակչություններում՝ «Չարենց» օրացույցում և «Հյուսիսափայլ» տարեգրքում: Չարենցից կատարված թարգմանությունները նա իրականացրել է շվեդ բանաստեղծ Ուլե Հեպերի հետ, որը շվեդական կենտրոնական օրաթերթերից մեկում հոդված է հրատարակել հայ բանաստեղծի մասին¹⁰:

⁵ *Գրական քերթ*, Երևան, 12.06.1964:

⁶ Գորգեն Հովհան, *Հանուն վսեմ գաղափարի*, Երևան, 1982, էջ 77-78:

⁷ Անգլերեն թարգմանությունը տե՛ս՝ *Armenians in Australia and New Zealand*, compiled by Aramais Mirzaian, Sydney, 1966, էջ 11:

⁸ Karen Simonjan, *På återseende, Natanael!* Övers. från den ryskan Torsten M. Nilsson, Bromma, 1979.

⁹ *Folksagor från SSSR: folksagor från Transkaukasien*, Stockholm, 1989, s. 52-96.

¹⁰ Ole Hessler, En näsdruk i Jerevan, *Dagens nyheter*, Stockholm, 09.09.1990.

Ստոկհոլմում 1993-ին լույս է տեսել Շվեդիայում բնակվող ազգային փոքրամասնությունների ժողովրդական և մանկական երգերի ու բանաստեղծությունների ժողովածու՝ բնագրերով և շվեդերեն թարգմանություններով: Հայ մանկագրությունը ներկայացվել է Յուրի Մահակյանի «Կատուն լուսանկարչատանը» բանաստեղծությամբ¹: Հաջորդ տարի շվեդական «Արթես» գրական ամսագրում հրատարակվել են Մահակյանի վեց բանաստեղծությունները՝ Կարինե Օքերման Սարգսյանի թարգմանությամբ²:

Տարբեր շվեդերեն գրքերում դիպվածաբար տեղ են գտել հայ գրականության որոշ նմուշներ: Այսպես, Սուրեն Երզնկյանի կովկասյան գրքերից մեկում առկա է «Համբալի երգը»³: Գյոթեբորգում 1985-ին հրատարակված մի խումբ շվեդ հեղինակների «Կարոտ առ Արարատ. գիրք Հայաստանի և հայ ինքնության մասին» ժողովածուում⁴ ընդհանուր շարադրանքի մեջ տեղ են գտել որոշ նմուշներ հայ գրականությունից. երկու Գողթան երգերի՝ Վահագնի երգի (էջ 124) և Արտաշեսի անեծքի (էջ 148), Փոքր Մհերի երգի վերջին հինգ տողերի (էջ 149) ազատ թարգմանությունները, ինչպես նաև «Խորհուրդ խորին» շարականը (էջ 183) և Գևորգ Էմինի մի քերթվածը (էջ 57):

Այլ գրական կապեր

Հայ իրականության մեջ շվեդ գրականության հանդեպ հետաքրքրությունը սկսվել է XIX դարի վերջերից: Մակայն դեռևս 1853-ին Ղևոնդ Ալիշանը, մի առիթով խոսելով ընդհանուր սկանդինավյան գրականության մասին, անդրադարձել է նաև շվեդ գրականությանը, վկայակոչել գրողներ Հուլբերգի (1684–1754), Էվալդի, Ինգեմանի և այլոց անունները, հիշատակել XVII դարում Զրիստինա թագուհու կողմից իմաստասիրության ճաշակի ներմուծումը և ավելացրել. «Ի քերթութեան Սուետք զհետ երթային գաղղիական ոճոյ, մինչ Կուսալուս Գ.

և ճեմարանն Սուետիոյ և յետ նոցա Պէլման զարթուցին զոգի ազգային բանաստեղծութեան»¹:

Դեռևս 1830-ին Խաչատուր Աբովյանն իր Դորպատյան օրագրում Լայպցիգի գրական թերթից արտագրել է Շվեդիայի թագավոր Կառլ Յուհաննեսի դատողությունները հայրենիքի, պետական կռավարման, միապետի և հպատակների պարտականությունների մասին, որոնցից հատվածներ է թարգմանել հայերեն «Ձրոյց մեծիմաստ թագաւորին Շվեդիոյ Կառլի Յովհաննու. 1825. Շտոքհոլմ» վերնագրով²: Ըստ արվյանագետ Պիոն Հակոբյանի՝ Շվեդիայի թագավորի դատողությունները համապատասխանել են լուսավորված միապետի արվյանական ըմբռնումներին³:

Սկանդինավոսիները, որպես հյուսիսից գեղեցկուհիներ, իրենց խարսիշագեղ և կապուտաշյա արտաքինով ռոմանտիկ հերոսուհու իղեալ էին, որոնցով պիտի որ այնքան հափշտակվեին հարավցի հայ երիտասարդները: Այդ իսկ պատճառով հայ գրականության մեջ հայ սիրահար հերոսի կողքին երբեմն հանդիպում ենք սկանդինավցի գեղեցկուհուն: Լևոն Շանթի «Կինը» վիպակի հերոսուհին ֆիննուհի Մարգարետ Ստեկընն է: Օննիկ Չիֆթե-Մարաֆի «Միամիտի մը արկածները» վեպի հերոսը, որ Եվրոպայում թափառելիս սիրարկածներ է ունենում տարբեր ազգերի կանանց հետ, Հռոմում հանդիպում է մի երեսնամյա նորվեգուհու, մի «հյուսիսայգի», որը սիրահարվում է նրան, սակայն սերը մնում է անպատասխան: Մամուլում լույս տեսած Պարզև ստորագրությամբ «Հյուսիսի սեր» պատմվածքի հերոսուհին դանիուհի Հելենն է, որին սիրահարվում է հայ հերոսը⁴:

Մեզ հայտնի առաջին շվեդ հեղինակը, որի գործը թարգմանաբար լույս է տեսել հայերեն, Կ. Լեոպարդի «Նմանողութիւն» բանաստեղծությունն է, տպագրված 1888-ին, Թիֆլիսի «Աղբիւր» հանդեսում (1888, թ. 10, էջ 373, թարգմ. Ա. Մ. Ե. Պ.): Իսկ Աննա-Շառլոտա Էդ-

¹ Juri Sahakjan, Katten hos fotografen, *I denna vida värld*, en antologi av Gunilla Lundgren och Siv Widerberg, Stockholm, 1993, s. 15.

² Juri Sahakjan, *Sex dikter, Artes*, Stockholm, 1994, s. 115-118.

³ I. Ragusa, *Kaukasien min fosterjord*, Helsingfors, 1944, s. 83.

⁴ Gunner Görän, Lindberg Eric m. fl., *Längtan till Ararat: en bok om Armenien och Armenisk identitet*, Götheborg, 1985.

¹ *Քաղաքական աշխարհագրութիւն նկարագրոյց պատկերոք*, հասարեաց հ. Ղևոնդ մարգ. Ալիշանեան, Վենետիկ, 1853, էջ 437:

² Խաչատուր Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով*, հ. 6, Երևան, 1955, էջ 51-56:

³ Պիոն Հակոբյան, *Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը*, Երևան, 1967, էջ 564-565:

⁴ Պարզև, Հիսիսի սեր, *Հայրենիք*, 7-9.10.1931:

գրեն-Լեֆիլերն առաջին շվեդ հեղինակն է, որի ստեղծագործությունը տպագրվել է հայերեն առանձին գրքով, 1891-ին¹: Թիֆլիսի «Աղբիւր» հանդեսում լույս են տեսել գործեր Ռ. Գուստավսոնից և Կ. Լեոպարդից²: Խորհրդային տարիներին՝ 1920–1980 թվականներին շվեդ գրականությունից հայերեն թարգմանվել է ինը անուն գիրք (երկուսը վերահրատարակություն), բոլորն էլ ռուսերենից: Երկուական գործ թարգմանվել է Աստրիդ Լինդգրենից, երկուական՝ Փեր Վալյոյից³: 1980-ից հետո էլ առանձին գրքեր են լույս տեսել Լինդգրենից և Փեր Լագերկվիստից (հատկանշական է «Գաճաճը» վեպը և այլ վիպակներ ու պատմվածքներ ընդգրկող ստվար հատորը, տպագրված 1990-ին), իսկ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում ներկայացվել է Լինդգրենի «Երկարագուլպա Պեպպին»⁴:

Անցյալում հայերեն ամենից հաճախ թարգմանվել են շվեդ գրականության դասականներ Ավգուստ Սթրինդբերգը և Սելմա Լագերլյոֆը, որոնց ստեղծագործություններից տպագրվել են ինչպես մասնույժ⁵, այնպես էլ առանձին գրքերով: Ա. Սթրինդբերգն առաջին անգամ հայերեն թարգմանվել է 1895-ին՝ «Խղճի խայթոցներ» պատմվածքը «Մուրճ» հանդեսում: Նրա նշանավոր «Հայր» պիեսը լույս է տեսել Բաքվում, 1904-ին⁶ և 1912–1922 թվականներին ներկայացվել է արևելահայ և արևմտահայ բեմերում: Նույն գործը Գևորգ Կառվարենցի թարգմանությամբ տպագրվել է նաև 1922-ին, Կոստանդնուպոլսում: Սթրինդբերգին և առհասարակ շվեդ գրականությանը երբեմն անդրա-

¹ Աննա-Շառլոտա Էդգրեն-Լեֆիլեր, *Մրցում են հասարակության հետ*, Թիֆլիս, 1891:

² Կ. Լեոպարդ, Տիտոսի արկածները (շուեդական հեքիաթ), Թիֆլիս, 1896, ք. 12, էջ 436-443: Ռ. Գուստավսոն, Կառլոս թագաւորը, Թիֆլիս, 1896, ք. 12, էջ 507-510: Նույնի, Անտոնի հպարտություն, նույն տեղում, 1899, ք. 3, էջ 178-181 (վերջին երկուսի թարգմանիչը՝ Հովհ. Արոյան):

³ *Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն, 1920–1980* (մատենագիտություն), կազմ. Լ. Մ. Ջաբլյան և ուրիշներ, Երևան, 1983, էջ 561-562:

⁴ Աստրիդ Լինդգրենի մասին մանրամասն տե՛ս մեր «Աստրիդը, որ բնակվում էր Ստոկհոլմում» հոդվածը, *Գարուն*, 2001, ք. 5-6, էջ 86-87:

⁵ Տես Ավգուստ Սթրինդբերգ, Մեր եւ հաց, *Հայրենիք*, 11-14.10.1928:

⁶ Ա. Սթրինդբերգ, *Հայր*, Թիֆլիս, 1904:

դարձել է նաև հայ քննադատական միտքը¹: Նրա մասին հայերեն հոդվածով հանդես է եկել դանիտի գրող Ինգա Նալբանդյանը²:

1908-ին Թիֆլիսի հայ բեմում ներկայացվել է շվեդ հեղինակ Յալմար Բերգսթրյոմի «Կյանքի ձայնը» թատերախաղը: Վերջինիս «Կարեն Բորնեման» պիեսի առաջին արարը լույս է տեսել Նյու Յորքի «Նաուսարդ» հանդեսում (1922, ք. 7, էջ 424-444)՝ Նվարդ Սիրաքյանի թարգմանությամբ:

Թիֆլիսի «Լուսան» 1910-ին հրատարակել է Սելմա Լագերլյոֆի «Լեգենդներ Քրիստոսի մասին» վիպակը³, որի վերաբերյալ ծանուցել է, թե այն «արժանացել է թե իր հայրենիքում և թե Ռուսաստանում այնպիսի մի ընդունելութեան, որպիսին քիչ աշխատութիւնների է բաժին ընկնում»⁴: Դրանից հետո մեկ անգամ չէ, որ հայերեն թարգմանությամբ լույս են տեսել Լագերլյոֆի ստեղծագործությունները (արևելահայերեն թե արևմտահայերեն)⁵, և շվեդ ակնավոր արձակագրուհու հանդեպ հետաքրքրությունը շարունակվում է մինչև օրս: Ուշագրավ է նաև, որ Սելմա Լագերլյոֆը որպես գործող անձ է հանդես բերվել Ռաֆայել Չարդարյանի «Երկու առասպել» արձակ բանաստեղծության մեջ, որն իբրև թե երևացել է հեղինակի դաստիարակչական բնույթի մի երազի մեջ⁶:

Հատկանշական է, որ արդեն 1912-ին կատարվել է առաջին համեմատական վերլուծությունը հայ և շվեդ գրականությունների միջև:

¹ Տես Մ. Շամտանճեան, Շուեդական քննադատություն, *Ճաղիկ*, Կ. Պոլիս, 1904, ք. 17, էջ 23-24: Գրականական շրջաններում, *Մարտ*, Մոսկուա, 1912, ք. 3, էջ 9-10: Ծիրկաթին, Շուեդական գրականություն (ասուլիս «Յարդգող»ի), *Յառաջ*, 10.05.1929:

² Ինկա Մ. Նալբանդեան, Շուեդական գրականություն. Աուկուսթ Սթրինդուպի, *Ազատամարտ (յաւելուած)*, 22.04.1912, 27.04.1912:

³ Սելմա Լագերլոֆ, Լեգենդներ Քրիստոսի մասին, Թիֆլիս, 1910, ք. 2, էջ 13-19 («Մուրք գիշեր»), ք. 3, էջ 35-42 («Կայսրի տեսիլք»), ք. 4, էջ 63-73 («Իմաստունների ջրհորը»):

⁴ *Լուսնայ*, 1910, ք. 2, էջ 13:

⁵ Սելմա Լագերլոֆ, *Կարմրավզիկը*, Թիֆլիս, 1911: Հարսանական քայլեր, *Օշական*, Փարիզ, 1920, ք. 2, էջ 39-42: Տուարծիկի բոյնը, *Բազմավէպ*, 1930, մարտ, թիվ 3, էջ 118-122: Բեթղեմեան աստղը (հեքիաթ-պիես), *Յառաջ*, 22.05.1932: Նույնի, Նազարեթին մեջ, *Արեւիկ*, 3.02.1933: Ուրուականի ձագը, *Հայ խօսնակ մարդկանց*, 1933, ք. 2, էջ 27-29: Սելմա Լակերոֆ, Տօպոլիքի մշակը, Թիֆլիս, 1910: Վերջին Գրքերն, *Հայաստանի կոչնակ*, 5.04.1947, էջ 324-325:

⁶ Ռաֆայել Չարդարեան, Երկու առասպել, *Անահիտ*, 1931, յունար-սպիլի, ք. 5-6, էջ 151:

Ատրուշան ծածկանվամբ հանդես եկած Ս. Երեմյանը «Հորիզոն» պարբերականում հրատարակել է «Լակերլեոֆ և Իսահակեան» գրախոսությունը, որտեղ կատարել է շվեդ արձակագրուհու «Բուդրա» գրվածքի և Իսահակյանի համանուն ավանդության համեմատությունը¹: Հետագայում հայ-սկանդինավյան գրական տիպաբանական առնչությունների վերաբերյալ ավելի ծավալուն հոդվածով հանդես է եկել Ս. Լորելյին²: Սույն հոդվածում, սակայն, նա առավելապես խոսել է հայ գրողների վրա նորվեգական գրականության ազդեցության մասին, իսկ շվեդ հեղինակներից կենտրոնացել է Պեր Լագերկվիստի վրա: Հայ գրական մամուլը երբեմն անդրադարձել է սկանդինավյան գրականության նորություններին:³

Եթե հաշվի չառնենք դարասկզբին Բաքվի «Բարի լուր» բողոքական պարբերականում հրատարակված շվեդերենից կատարված կրոնական-քարոշայնական բնույթի պատմվածքների թարգմանությունները⁴, որոնք հատուկ գեղարվեստական արժեք չունեն, ապա անցյալում բնագրից շվեդական գրականության միակ հայերեն թարգմանիչը մնում է Ս. Լորելյին (Սուրեն Երզնկյան), որն էլ, սակայն, թարգմանել է սոսկ հատվածներ վեպերից և հրատարակել է դրանք մամուլում: Նա մասնավորապես թարգմանել է հատվածներ շվեդ գրականության դասական Պեր Լագերկվիստի «Գաճաճը» և «Բարաբբաս» վեպերից⁵: Առաջինի թարգմանությունը և իր «Սկանդինավյան գրականության միջազգային ազդեցությունը» հոդվածի ֆրանսերեն թարգմանությունը

¹ Ատրուշան, Լակերլեոֆ և Իսահակեան, *Հորիզոն*, 1912, ք. 146:

² Ս. Լորելյին, Սկանդինավյան գրականության միջազգային ազդեցությունը, *Նոր գիր*, Նիւ Եորք, 1949-1950, ձմեռ, ք. 4 (52), էջ 212-219:

³ Տե՛ս *Պայքար*, Երևան, 1923, ք. 6-7, էջ 21, 24:

⁴ Տիրոջ հետքերը (շուեդերենից), *Բարի լուր*, Բաքու, 15.01.1906, ք. 2, էջ 29-31: Կառլ Լիննեյն և իր Աստուածաշունչը (մանուկների համար), նույն տեղում, 15.04.1906, ք. 8, էջ 125-12: Երկնի պրինցը (իրական պատմություն շուեդ հաւատացեալ Յան Սվենսոնի մասին), նույն տեղում, 01.06.1906, էջ 172-175: Կարևոր ընտրություններ (պատմուածք), նույն տեղում, 15.01.1912, էջ 23-30:

⁵ Պեր Լագերկվիստ, Բերնարդո (հատված «Գաճաճ»-ից), *Նոր գիր*, նշված թիվը, էջ 193-210: «Բարաբբասի» թարգմանության հատվածը տե՛ս *Անի*, Պէյրուք, փետրվար, 1951, Դ տարի, թիվ 10 (46), էջ 575-577: Լագերկվիստը հայերեն թարգմանվել է նաև միջնորդ լեզուներից, տե՛ս նրա «Երգ և պայքար», «Հայրենիք» և «Պայքարեն յետոյ» բանաստեղծությունները, *Նոր գիր*, նշված թիվը, էջ 211-212, «Հայրիկը և ես», թարգմ. Վ. Վ., *Անի*, նշված թիվը, էջ 577-579 և այլն:

Լորելյին ուղարկել է Լագերկվիստին, որը թարգմանչին հղած իր շնորհակալական նամակում նշել է. «Ինձ համար մեծ, չափազանց մեծ պատիւ է արժանանալ ուշադրության այդքան գեղեցիկ ձևով, և այս նոր ապացոյցը հայերիդ հետաքրքրության՝ ես գնահատում եմ շատ բարձր»¹: Ս. Լորելյին Լագերկվիստի երկերի մասին հանդես է եկել նաև առանձին վերլուծական հոդվածով², առանձին անդրադարձել է նաև Ավգուստ Սթրինդբերգի գրականությանը³:

Հայ մամուլում շվեդերենից կատարած թարգմանություններով հանդես են եկել նաև նորվեգերենի մասնագետ Արտաշես Յայլոյանը, Արման Մուրադյանը և Ֆելիքս Ֆարմանյանը. վերջինս թարգմանում է նաև դանիերենից և նորվեգերենից:

Շվեդերենից հայերեն թարգմանված առաջին գիրքը ժամանակակից շվեդ հեղինակ Յան Գիյույի գրական գլուխգործոցը համարվող եռահատոր պատմավեպն է Արն Մագնուսսոնի մասին⁴, որ թարգմանել է շվեդաբնակ Ռոզաննա Շումեցը (Այվազյան): Ի դեպ, գրքի երրորդ հատորում՝ «Ավարտված ճամփաների երկիրը», առկա են նաև հայ կերպարներ՝ Մարկոս և Հակոբ Վախտյան եղբայրները, ովքեր իրենց մասնագիտական հմտություններն են կիրառում՝ լույս և գիտելիքներ սփռելով միջնադարում տակավին խսվար Հյուսիսում:

Վերջում ավելացնենք, որ տողերիս հեղինակը ևս գործնականում զբաղվել է հայ-շվեդական գրական առնչությունների թարմացմամբ, ընթերցողի ուշադրությանն է ներկայացրել շվեդ գրականությունից հայերեն և հայերենից շվեդերեն կատարած առաջին թարգմանությունները: Ուիսալայի «Նոր հորիզոն» ամսագրում լույս ենք ընծայել տարբեր հայ գրողներից (միջնադարյան անհայտ հեղինակ, Ջահրատ, Ռաֆայել Ջարդարյան, Լևոն-Ջավեն Սյուրմեյան, Լուսինե Սեյրանյան, Ավագ Եփրեմյան) շվեդերեն կատարած թարգմանական

¹ Ս. Լորելյին, Սկանդինավյան արձագանգներ, *Նոր գիր*, 1950, ամառ, ք. 2, էջ 123:

² Ս. Լորելյին, Սկանդինավյան արդի մեծագույն գրողը. Պեր Լագերկվիստ, *Անի*, նշված թիվը, էջ 572-575:

³ Ս. Լորելյին, Ավգուստ Սթրինդբերգ, *Նոր գիր*, աշուն, 1949, ք. 3, էջ 153-159:

⁴ Յան Գիյու, *Ճանապարհի դեպի Երուսաղեմ. Տաճարական ասպետը, Ավարտված ճամփաների երկիրը*, Երևան, 2002-2004:

փորձեր¹: 2000 թվականին «Գարուն» ամսագիրը հրատարակեց Շվեդիային նվիրված հատուկ մի համար, որտեղ շվեդ հեղինակներից (Հարի Մարթինսոն, Թումաս Թրանսթրյուներ, Պ. Ս. Երսիլդ և այլք) կատարած չափածո և արձակ թարգմանություններով հանդես են եկել Աշխեն Բախչինյանը, Կարո Հակոբյանը և տողերիս հեղինակը:

Հայկական թեման շվեդ գրականության մեջ

1848-ին Վերսյոյում լույս է տեսել 16 էջանոց մի գրքույկ, որն ընդգրկում է «Պելլե Բոցմանի հազվագյուտ, անսովոր և զվարճալի պատմությունը, թե ինչպես նա շատ արկածներից հետո սկսեց ծառայել հայոց թագավորին» վերնագրով հեքիաթը²: Ցավոք, մանրամասներ մեզ հայտնի չեն այս ստեղծագործության մասին: Նույն ստեղծագործությունը 1920 թվականին հրատարակվել է մի փոքր այլ վերտառությամբ՝ «12 հետաքրքրաշարժ պատմություն. Պելլե Բոցմանը, որը մի մեծ ավազակախմբից փրկում է Հայաստանի թագավորի աղջկան, ամուսնանում նրա հետ և թագավորի մահից հետո դառնում է հզոր և հարգարժան ռեգենտ նույն թագավորությունում: Անկրկնելի խորամանկը»³:

Շվեդ գրականության դասական Պեր Լագերկվիստի՝ 1950-ին հրատարակած «Բարաբբաս» վեպում⁴, որի գործողությունները կատարվում են մեր թվարկության առաջին դարում, առկա է հայ ստրուկ Մահակի կերպարը, մի «բարձրահասակ, շատ նիհար մարդ», որը վեպի գլխավոր հերոսին ուսուցանում է քրիստոնեության տարրերը: Այս

¹ Zahrad, Ahmed Efendi gatan; Agge; Tomtes skägg; Kvinnan som rensar linsen, *Նոր հորիզոն*, Uppsala, 1998, N 1-2, s. 1. Kostan Zarian, Gästen, նույն տեղում, 1998, N 3, s. 1. Losine Sejranean, "Innan någonting fanns det nakenhet"; En dikt av tre delar, նույն տեղում, 1998, N 4, s. 3. Leon-Zaven Surmelian, Å, Tystnad, նույն տեղում, 1999, N 2, s. 1. Rafael Zardaryan, Två legender, նույն տեղում, s. 2. Ode (1400-talet armenisk dikt)⁴ med. Eric Papazian, նույն տեղում, 2003, N 1, s. 7. Avag Jcpremian, Diktcr, նույն տեղում, 2001, N 1, s. 4.

² *En sällsynt, märkvärdig och lustig historia on Pelle Båtsman: huruledes han efter mångahanda äfventyr blef upptagen till konung i Armenien.* Wexjö, 1848.

³ *12 Roliga historier: Pelle Båtsman, vilken, sedan han från ett stort rövareband räddadt konungens av Armenien dotter, blev med henne förmäld, samt efter konungens död blev en mäktig och aktad regent över samma rike. Mästertjuven. En fiffig utan like.* 1920.

⁴ Per Lagerqvist, *Barabbas*, Stockholm, 1950.

կերպարի մասին հեղինակը Ս. Լորելլին գրած իր վերոհիշյալ նամակում նշել է, որ այդ կերպարը ստեղծել է «խորը համակրանքով... դա մի մարդ է, որը ընտրուած է մարմնացնելու համար շատ տառապանք, և ինձ թուաց բնական, թե նա պիտի լինի մի հայ, պատկանող այն ժողովրդին՝ որ ամբողջ աշխարհը գիտե, թե կրել է այնքան տառապանք»¹:

Հայ-շվեդական առնչությունների վերաբերյալ պրպտումներ կատարելիս մեծագույն անակնկալներից մեկը եղավ այն, որ շվեդ գրող և կինոթեմատիկ, գիտաֆանտաստիկ ժանրի հեղինակ Սեմ Ջ. Լունդվալը (ծնված 1940-ին) գրել է հայկական թեմայով երկու վեպ: Առաջինը կոչվում է «Նախաճաշ ավերակներում» (1988, «Frukost bland ruinerna»), իսկ երկրորդը՝ «Վասյա Ամբարցուրյան. գրոսանք լաբիրինթոսում» (1990, «Vasja Ambartsurian, en promenad i labirinterna»): Վերջինը ներկայացնում է Վասյա Ամբարցուրյան անունով մի հայուհու արկածները XIX դարի վերջին, տարբեր երկրներում, իսկ առաջինը պատկերում է Վասյայի ծոռնուհու՝ Նենա Ալիուևա Միրզոյանի կյանքը: Հիրավի խիստ արտառոց է հայության հետ սերտ կապեր չունեցող մի երկրում գտնել հայկական թեմայով գրված երկու սովոր վեպ և այն էլ՝ գիտաֆանտաստիկ ժանրով...

Իր հայապատում վեպերը Լունդվալը հրատարակել է հակառակ հերթականությամբ. նախ լույս է տեսել ծոռան, ապա՝ նախատառի մասին գրքերը: «Նախաճաշ ավերակներում» գրքի երկու զուխն է նվիրված Հայաստանին: Ապագայում կատարվող այս վեպի հերոսուհու Ալիուևա ազգանունը Լունդվալն անշուշտ վերցրել է Ստալինի դստեր ազգանունից: Այս վեպում ամենից զարմանալին այն է, որ շվեդ հեղինակը պատկերել է ապագա միացյալ Հայաստանը, որտեղ ընդգրկված են ներկայիս Թուրքիայի տարածքում հայտնված հայկական հողերը: Միայն քանի բնորոշ հատված. «Նենան հիշեց հավերժ ձգվող երկաթուղին Միջին Ասիայից մինչև Եվրոպա: Երզրումը բավական քաղաքակրթված էր, այնտեղ համալսարան կար, և ժողովուրդը խոսում էր հայերեն: Հետո եկավ Անատոլիան և իսկական Թուրքիան, որ դեռ մնացել էր միջնադարում: Նենան ազգությամբ հայ է. հայերի

¹ Ս. Լորելլի, Սկանդինավեան արձագանգներ, նույն տեղում:

համար բուրքերը և նրանց հայդուկ քրդերը սատանայից և գազանից վատ են:

– Ես չգիտեմ ինչ են այնտեղ քո հնարավորությունները, – ասաց Մարիաննան (Նենայի ընկերուհին, որ ապրում է Մագնիտոգորսկում – Ա. Բ.), – բայց հիմա այն Հայկական ԽՍՀ-ն է և Անատոլիական ԽՍՀ-ն՝ ընդհուպ մինչև Բոսֆորը: Կարմիր բանակն ազատագրեց ողջ Փոքր Ասիան 1930-ական թվականներին» (էջ 165):

Գնացքով ճամփորդող Նենայի ճանապարհն անցնում է հայկական Տավրոսի լեռնաշղթայով, Վանա լճով, հասնում է Երևան, Սևանա լիճ, որտեղից կտրուկ թեքվելով հյուսիս-արևելք՝ հասնում է Կիրովական և Թիֆլիս: Ահա այսպես հայոց պատմությունն ու աշխարհագրությունը խառնվում են շվեդ գրողի երևակայական գրքում: «Ուրմիայից գնացքը նրան հասցրեց մինչև Վանա լիճ և Վան՝ հայոց հնագույն քաղաքը, որտեղից մի ժամանակ դուրս էր եկել նրա հորական տատի պապը: Հիմա նա Տավրոսի լեռներում է, Վանա լճի արևելյան մասում: Պարզ եղանակին մարդ կարող է տեսնել Արարատն Արևելքում»: Նենան հանդիպում է մի հայ քահանայի, նրանց խոսակցության մեջ շվեդ գրողը գործածել է «քահանա», «ողջույն», «օրհնյա տեր», «խաղաղություն», «ծառա եմ, սրբազան հայր», «խորհուրդ խորին» և այլ հայերեն բառեր:

Առաջին հայկական վեպին անմիջապես հետևել է երկրորդը, որտեղ սակայն, գործողությունները կատարվում են անցյալում, ավելի ստույգ՝ XIX դարի վերջին, XX դարի սկզբին, իսկ հերոսուհին «ծնվել է 1881 թվականի հունվարի 28-ին ըստ հուլիանոսյան օրացույցի, որը տակավին օգտագործվում էր Հայաստանում և փետրվարի 9-ին՝ ըստ գրիգորյան ժամանակագրության, որ օգտագործվում էր Եվրոպայում»: Նենայի նախատատի՝ Վասյա Ամբարցուրյանի մասին վեպը շատ ավելի հետաքրքիր է¹:

¹ Հերոսուհու անունը հեղինակը հավանաբար կազմել է՝ ելնելով Վիկտոր Համբարձումյանի անունից: Ահա ինչ է գրել նրա մասին Լուրդվալը. «Վասյան ապրում էր անդրկովկասյան լեռնաշղթայում, հայկական փոքրիկ Չիր բնակավայրում, Զոռ գետի ափին: Դա մի հայկական անկլավ էր՝ բոլոր կողմերից շրջապատված աղբյուրներից: Կա մի հայկական անկլավ էր՝ բոլոր կողմերից: Երբ Վասյան 14 տարեկան էր, 300 հազար հայ սպանվեց բուրբակյան ջոկատների կողմից քրդական

Շվեդ գրող Հերման Լիդբլադը 2003-ին երատարակել է «Կուկոր-դիլուսը» քրիչերը, որի գլխավոր հերոսը՝ Ջորջ Սալոբեն, բեյրութցի հայ գործարար միլիարդատեր է: Վեպի մյուս հերոսները՝ շվեդներ Մարթին և Մարիա Լագերֆելթները, մեկնում են Բեյրութ՝ աշխատելու նրա առևտրի տանը:

հրոսակախմբերի օգնությամբ: Կոտորածները շարունակվեցին, մինչև որ Թուրքիան իրագործեց հայկական հարցի իր վերջնական որոշումը՝ բոլոր հայերին սպանելով իրենց երկրի մի մասում: Այդ ժամանակ Վասյան վաղուց բողբ էր իր դժբախտ հայրենիքը: ...Չիրը գտնվում էր մի կետում, որտեղ միանում էին ռուսական մահաճակատը Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Այստեղ կոտորածներ չեն եղել, զոհն առայժմ: Մահմեդական աղբյուրներից, որ կիսով չափ բուրբեր էին և հետևաբար՝ կիսով չափ կենդանիներ, հնարավորության դեպքում մշտապես խաբել են՝ հարձակվելու համար հայկական անկլավի վրա: ...Վասյան 13 կամ 14 տարեկան էր, երբ հայրը նրան տարել է Սանահինի վանքը՝ լեռների վրա: Շատ եկեղեցիներ և վանքեր կան այդ տարածքում, և դրանց մի մասը՝ Օծունը, Հաղպատը, Խորակերտը և Սանահինը, մոտավորապես հազար տարեկան են: Ծանր, զանգվածեղ շինություններ, կառուցված դեղնաշագանակադույն և օրրայի տուֆից, որ թվում է, նույն տարիքն ունեն հողի հետ: Եկեղեցիների մեծամասնությունը կառուցվել է հեքանոս աստվածների՝ Արամազդի և Անահիտի, Սիհրի և Տիրի տաճարների հիման վրա, որոնք բոլորովին չեն մոռացվել: Անահիտը տակավին կնոջ ամենատարածված անուններից է Հայաստանում: Սանահինի վանքը կառուցվել է արաբագործ Անահիտ Տիկնոջ հնագույն տաճարի հիման վրա, բեռ մարդիկ բարյացակամորեն չեն խոսում այդ մասին»: Այնուհետև Լուրդվալը մանրամասն նկարագրում է Սանահինի վանքը՝ իրր կառուցված լճի ափին, հիշատակում սրածայր զանգակատունը, գրատունը, և թե ինչպես մի ցահել, անմոռու սարկավազ գրոսնում է Վասյայի ու նրա հոր հետ և պատմություններ անում հին ժամանակներից: Այնուհետև հեղինակը ներկայացնում է դրվագներ Վասյայի մանկությունից, նրա այցելությունները հայկական այլ հնավայրեր և: Գործողությունները հետագայում զարգանում են աշխարհի տարբեր ծայրերում. Վասյան բռնող ափսոսով այցելում է Արամիա, հետո նրան տեսնում ենք Ֆրանսիայում, որտեղ նա համագործակցում է աշխարհի առաջին կինոբեմադրիչներից Ժորժ Մելիեսի հետ...

Նամակով դիմելով Լուրդվալին՝ մենք հարցրինք նրա հայկական հետաքրքրությունների աղբյուրը: Գրողից ստացանք 1997-ի ապրիլի 29 թվակիր մի մամակ, որտեղ նա գրել է մասնավորապես հետևյալը. «Ցավում եմ ասել, որ ես երբևէ չեմ եղել Հայաստանում: Իմ ինֆորմացիան այս վեպերի համար եկել է Վրաստանում ապրող մի ռուս ընկերոջից և իմ կարդացածներից: Ես հետաքրքրվում եմ Հայաստանի հին և անհանգիստ պատմությամբ և ողջ իմ իմացածը ես ներդրել եմ այս վեպերի թեմայի մեջ, չնայած որ իմ իմացությունը շատ սահմանափակ է: Բայց և այնպես ես հայ մշակույթով հիացող եմ՝ հեռվից, և այս երկու վեպերը կարող են դիտվել որպես մի տեսակի համեստ մեծարանք: ...Այս երկու վեպերը սիրո աշխատանքներ էին ինձ համար, և ես հաճույքով եմ հիշում իմ աշխատանքը դրանք գրելիս: Դրանք գրվել են մի ժամանակ, երբ այստեղ շատ քիչ գիտեին Հայաստանի մասին, և արժանահավատ ինֆորմացիա գտնելը դյուրին չէր: Ես միայն հույս ունեմ, որ շատ սխալներ թույլ չեմ տվել»:

Հայտնի է, որ բազմաթիվ հայ հեղինակներ արտահայտվել են օտար լեզուներով: Ըվեդերենը բացառություն չի կազմում, քեև շվեդագիր հայ հեղինակներից ոչ մեկը մուտք չի գործել շվեդական գրականության: Տակավին 1880-ական թվականներին Ֆինլանդիայում հրատարակվող «Էվանգելիակ քրիստենդոմ» շվեդերեն պարբերականում հոդվածներով հանդես է եկել բողոքական քարոզիչ Աբրահամ Ամիրխանյանը¹: Ինչպես նշվեց, այլ բողոքական հայեր ևս թղթակցել են շվեդ բողոքական մամուլին: Ըվեդահայ նոր սերնդի մեջ հանդես են եկել արդեն իրենց համար առաջին լեզու դարձած շվեդերենով գրական փորձեր կատարողներ: Ըվեդաբնակ Մարինե Վարդանյանը Երևանի «Կանչ» պատանեկան թերթում քարզանաբար հրատարակել է իր որդու՝ 11-ամյա Վահան Վարդանյանի «Գորիլյա Կոկոն և նրա որդի Օկոն» շվեդերեն գրված պատմվածքը²: Ուփսալայի Գրեների շրջանի գրադարանի 1997-ին կազմակերպած բանաստեղծության մրցույթի գրքույկում տեղ է գտել նաև 13-ամյա Լեռնիկ Աբնուսի «Երգն ինձ տալիս է» բանաստեղծությունը³: Ուփսալայում հրատարակվող «Նոր հորիզոն» հայերեն-շվեդերեն ամսագրում հրատարակվել է շվեդերեն բանաստեղծություն Նարինե Հակոբյանի հեղինակությամբ⁴: 1998-ին Վեսթերոսի դեռահասների մեջ լավագույն բանաստեղծության մրցույթում հաղթել է Արմինե Քանաթանյանը⁵:

Մշակութային կապեր

Կերպարվեստի մեջ հայերի և շվեդների ունեցած պատահական, սակայն հետաքրքիր առնչությունները սկսվում են XIX դարից: 1858 թվականին օսմանյան արքունի հայագրի նկարիչ և դիվանագետ Մեպուհ Մանասը (Մանասե) Ըվեդ-Նորվեգիայի կայսրուհուն է նվիրել իր աշխատանքներից մեկը՝ Աբդուլ Մեջիդ սուլթանի դիմանկարը⁶:

¹ Մշակ, Թիֆլիս, 8.03.1913:

² Կանչ, Երևան, 26.07.1995:

³ Lernik Abnous, En sång den gav mig, *Naturen, kärleken och ensamheten i Gränby*, förord av Lousia Hatamian, [1997, Uppsala, s. 18].

⁴ Narine Hakobian, Förlorad kärlek, *Nor horizon*, 1997, N 2, s. 3.

⁵ Նոր հորիզոն, 1998, N 4, էջ 1:

⁶ Մանյա Նազարյան, *Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում. գեղանկարչություն*, Երևան, 1974, էջ 137:

1887 թվականի հուլիսի սկզբին Ըվեդիա է այցելել հռչակավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին (1817–1900). դա նկարչի առաջին և միակ ճանապարհորդությունն էր Սկանդինավիա: Այս ժողորության մասին առաջինը գրել է պատմաբան Վարդան Գրիգորյանը՝ հիմնվելով Նորայր Բյուզանդացու՝ Մատենադարանում պահվող ամտիպ մամականու վրա¹: Այվազովսկուն Ըվեդիա կատարած ուղևորությանն ուղեկցել են կինը՝ Աննա Բուռնազյանը և քրոջորդին՝ Լևոն Մազիրյանը: Ստոկհոլմի Թեոդոր Բլանչի գեղարվեստի սրահում բացվել է Այվազովսկու քսան աշխատանքից կազմված ցուցահանդեսը: Մինչ այդ ոչ մի հայ կամ ռուս նկարիչ չէր ունեցել ցուցահանդես Ըվեդիայում: Նորայր Բյուզանդացու մամակներից երևում է, որ Այվազովսկին Ստոկհոլմում մնացել է վեց օր՝ հունիսի 30-ից մինչև հուլիսի 5-ը, իսկ նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը գործել է երկու ամիս: Ըվեդները մեծ հիացմունքով են ընդունել Այվազովսկու ծովանկարները: Նորայր Բյուզանդացին իր մամակներից մեկում վկայել է, որ «Armenien (Հայաստան) և Armenier, Armenisk (հայ) բառերն Ստոքհոլմի թե՛ լրագրաց և թե՛ խօսակցութեանց մեջ բնական յուրվուեցան ի պատճառս Այվազովսկեայ», իսկ Կոստանդնուպոլսի «Փունջ» թերթին (հուլիսի 18) ուղղած իր թղթակցության մեջ նշել է, որ Այվազովսկու ցուցահանդեսի առթիվ շվեդական մամուլը ոչ միայն մեծ գովեստով էր խոսում նրա արվեստի մասին, «այլև այլ հետաքրքրական յօդուածներ կը հրատարակեն զՀայոց»²: Նկարիչը և իր կինը հուլիսի 4-ին հյուրընկալվել են Բյուզանդացու տանը, որտեղ վերջինիս կինը՝ Մելմա Յակոբսոնը, լուսանկարել է Այվազովսկուն և նրա հարազատներին: Գեղանկարիչը հիացել է Ըվեդիայի ծովափնյա տեսարաններով և ստեղծել նոր ծովանկարներ:

Իր հրապարակումը Վարդան Գրիգորյանն ավարտել է՝ նշելով, որ հետաքրքիր կլիներ ձեռք բերել Ստոկհոլմի թերթերում Այվազովսկուն ծնած ժողովրդի և նրա հայրենիքի մասին «ընդհանուր հետաքրքրությանը հագուրդ տալու համար» տպագրված նյութերը: Դրանք

¹ Վարդան Գրիգորյան, Հովհաննես Այվազովսկին Ստոկհոլմում, *Սովետական արվեստ*, Երևան, 1964, ք. 12, էջ 46-50:

² Ստոքհոլմի լուրեր, *Փունջ*, Կ. Պոլիս, 18.07.1887, տե՛ս նախորդ աղբյուրը, էջ 50:

հայտնաբերելու նպատակով մենք 1887 թվականի Ստոկհոլմի գլխավոր քերթերի հուլիսյան համարներում երկարատև փնտրտուքներ կատարեցինք, սակայն գտանք միմիայն լուրեր Այվազովսկու ցուցահանդեսի մասին (որոնցից մեկում նա ռուս էր նշված): Հայտնաբերեցինք միայն հետևյալ մանրամասները. որ Այվազովսկու ցուցահանդեսը բացվել է Ստոկհոլմի թագավորական գրոսայգում գտնվող Թեոդոր Բլանշի գեղարվեստի սրահում¹, որ «Գրանդ հոթելի» իր լուսամուտից նկարիչը մի քանի էտյուդներ է արել Բալթիկ ծովի լուսնալույսով ողողված տեսարանից՝ մեծ կտավ ստեղծելու մտադրությամբ² և որ Այվազովսկու ցուցահանդեսը Ստոկհոլմից բացի բացվել է նաև Գյոթեբորգում³:

Ի դեպ, Այվազովսկուց հետո, 1890-ականներին Շվեդիա, Ռուսիա և Նորվեգիա է այցելել մեկ այլ հայ ծովանկարիչ՝ Վարդան Մախոխյանը (1869–1937), որն այդ ժամանակ ուսանելիս է եղել Բեռլինի Գեղարվեստի ակադեմիայում: Բալթիկ ծովի սկանդինավյան ափերին Մախոխյանը մոտիկից հաղորդվել է ծովի տարերքին, հրապուրվել և պատկերել Բոռնհոլմ կղզու ժայռոտ եզերքները, նորվեգական ծովանկարներ⁴:

Հավանաբար Շվեդիայի և Նորվեգիայի մասնավոր հավաքածուներում կան մեկ այլ խոշոր հայ նկարչի՝ Մարտիրոս Սարյանի որոշ էտյուդներ: Ինչպես վկայում է Վիգեն Իսահակյանի հուշագիրքը՝ Վենետիկում, Լիդոյի լողափին, Սարյանը գմայլվել է լողորդուհիների գեղեցկությամբ, որոնք «եկել էին հյուսիսային երկրներից՝ Նորվեգիայից, Շվեդիայից, եկել էին Իտալիա արև և սերենադներ որոնելու: Սարյանը... մի կողմ էր մնում, նորից վերցնում գծատետրը և էսքիզներ անում, ընծայում էր նրանց, նրանք էլ բարեհաճում էին ընդունել՝ առանց իմանալու, թե ինչ գանձ էին ստանում: Շատ տարիներ հետո հայրս և Սարյանը պիտի հիշեին այս երջանիկ օրերը և այն գեղեցիկ ջրահարսերին»⁵:

¹ *Aftonbladet*, Stockholm, 08.07.1887.

² *Svenska Dagbladet*, 4.07.1887.

³ *Stockholms dagblad*, Stockholm, 16.07.1887.

⁴ Արա Հակոբյան, *Ծովանկարիչ Վարդան Մախոխյան*, Երևան, 2004, էջ 22:

⁵ Վիգեն Իսահակյան, *Հայրս*, էջ 138:

Շվեդիայում և Նորվեգիայում ճանապարհորդել է լոնդոնաբնակ հայ նկարչուհի և գրող Չապել Պոյանյանը (1872–1957), հասել մինչև Լապլանդիա, կատարել մի շարք նկարներ: Նա որոշ չափով տիրապետել է շվեդերեն և նորվեգերեն լեզուներին:

Ժամանակ առ ժամանակ տարերայնորեն Շվեդիայում ցուցադրվել են տարբեր հայ նկարիչների գործեր: 1930 թվականին Ստոկհոլմում կայացած խորհրդային կերպարվեստի ցուցահանդեսում ցուցադրվել է Սեդրակ Առաքելյանի՝ փշատաքաղի թեմայով երկու նկար¹: 1930–1931 թվականներին Մարգիս Խաչատուրյանի ընդօրինակած պարսկական և հնդկական պալատների որմնանկարների ընդօրինակությունները ցուցադրվել են աշխարհի մի շարք քաղաքներում, նաև Ստոկհոլմում²: Ֆրանսահայ նկարիչ Հարություն Թորոսյանի (ծն. 1933) կտավներից է «Շվեդացի պարմանուհին»:

Հայ-շվեդական կերպարվեստի կապերի վերջին շտրիխն է երևանցի ավանգարդիստ նկարիչներ Ազատ Սարգսյանի և Հարություն Միմոնյանի մասնակցությամբ 1999-ի նոյեմբերին Ստոկհոլմում կայացած «Պատից հետո» Արևելյան Եվրոպայի նկարիչների ցուցահանդեսին՝ նվիրված Բեռլինի պատի փլուզման 10-ամյակին: Ազատ Սարգսյանը հանդես է եկել ինքնատիպ մի ակցիայով՝ պառկելով ցուցահանդեսի նախամուտքին, հագին սև վերնաշապիկ, որի վրա գրված է անգլերեն «Ողջույն»: Նրա այս անսովոր ողջագուրումն այցելուների հետ նշեցին ցուցահանդեսը լուսաբանած գրեթե բոլոր շվեդական և այլ երկրների պարբերականները: Ի դեպ, Ազատ Սարգսյանը ներկայումս բնակվում է Ստոկհոլմում: Այստեղ է բնակվում նաև մեկ այլ հայաստանցի կոնցեպտուալիստ արվեստագետ՝ Կարո Մկրտչյանը:

Ռուսիա

Հայ իրականության հետ ուշագրավ առնչություն է ունեցել ռուսական գրականության համեստ դեմքերից մեկը՝ Թոր Լանգեն (1851–1915): Նա ծնվել է Կոպենհագենում, մահացել Ուկրաինայի Հանագով-

¹ *Sovjetkonst*, Galleri Modern, Stockholm, Mars-April, 1930, տես Գարրիել Գյուրջյան, *Սեդրակ Առաքելյան*, Երևան, 1963, էջ 23–24:

² Մանյա Ղազարյան, *Հայ կերպարվեստը...*, էջ 20:

կա գյուղում¹: 1887–1906 թվականներին եղել է Դանիայի հյուպատոսը Մոսկվայում: Չուգահեռաբար աշխատել է Լազարյան ճեմարանում, որտեղ ծանոթացել և բարեկամացել է Սմբատ Շահագիզի հետ, որից մի քանի բանաստեղծություն թարգմանել է դանիերեն՝ օգտվելով ուսերեն հրատարակություններից: 1887-ին հրատարակել է «Մեկ ամիս Արևելքում» դանիերեն գիրքը: Թեև նա բուսաբանության դոկտոր էր, սակայն տիրապետելով 16 լեզվի, լազարյանցիներին դասավանդել է դասական լեզուներ: Հատկանշական է, որ նա եղել է Վահան Տերյանի ուսուցիչներից, և ժամանակակիցների վկայությամբ՝ հին հունարենի դասերին աշակերտներին ծանոթացնում էր ֆրանսիական սինվոլիստական բանաստեղծությանը՝ առաջարկելով անգիրներ սովորել Վեռլենից, Բողերից, Մալարմեից: Ի դեպ, Տերյանը նրա հետ միասին թարգմանություններ է կատարել հին հունարենից: Լանգեն ինքն էլ դանիերեն է թարգմանել անտիկ (հույն) և ռուս հեղինակների, առանձին գրքերով Կոպենհագենում հրատարակել Մոփոկլեսի «Էդիպ արքան» (1897) և «Հին հունական քնարերգությունը» (1903): Հատկանշական է, որ Լանգեն իր հայրենիքը համարել է ոչ թե Դանիան, որտեղ ապրել է 28 տարի, այլ Լազարյան ճեմարանը, որտեղ դասավանդել է 35 տարի²:

Գրականագետ Կամսար Գրիգորյանը հրատարակել է Թոր Լանգեի ձեռագրերում գտնված «Ծաղիկները ձյունի մեջ (հայկական մոտիվ)» բանաստեղծությունը³: Բանաստեղծությունը (որը տրված է արձակ շարադրանքով) գրվել է 1893-ին և վկայում է առ հայ պոեզիան Թոր Լանգեի հետաքրքրության մասին:

Հոչակավոր հեքիաթասաց Հանս Քրիստիան Անդերսենը (1805–1875) 1842-ին հրատարակած «Բանաստեղծի շուկան» գրքում ներկայացրել է Կոստանդնուպոլիս կատարած իր ուղևորությունը, որի ժամանակ նա որոշ չափով առնչվել է հայերին, նշել, որ մի հայ ծերունու ուղեկցությամբ գնացել է տեսնելու Բերայի պտտվող դերվիշներ-

քին¹: 1893-ին Օսմանյան կայսրությունում ճանապարհորդած դանիացի բանասեր, իսլամագետ Յոհաննես Օսթրյուփը (1867–1938) նույնպես հանդիպել է հայերի և իր ուղեգրության մեջ մի քանի էջ է նվիրել նրանց²:

Դանիական գրականության մեջ հետաքրքիր երևույթ է Ինգա Նալբանդյանը (26.07.1879, Վեդբեք– 22.03.1929, Կոպենհագեն): Ծնյալ Ինգա Հենրիետ Լյուսինդա Քոլլին, նա 1895-ին ավարտել է միջնագույն դպրոցը և տեղափոխվել Շվեյցարիա, որտեղ ծանոթացել է Լոզանի հայկական վարժարանի տնօրեն, «Գիտություն» գիտական պարբերականի խմբագիր, քիմիկոս, փիլիսոփայության դոկտոր Մարտիրոս Նալբանդյանի (14.05.1872, Սեբաստիա–15.08.1916, Կոստանդնուպոլիս) հետ: Ինգա Քոլլինը և Մարտիրոս Նալբանդյանն ամուսնացել են 1904-ի հունիսի 2-ին Կոպենհագենում և ունեցել երեք զավակ: Նրանք 1909-ին տեղափոխվել են Կոստանդնուպոլիս, որտեղ Մարտիրոսը դասավանդել է հայկական վարժարանում: Ամուսնու մահից հետո, 1916-ին, Ինգան զավակներին ուղարկել է Դանիա³:

Ինգա Նալբանդյանը Նիլս Էլլինգեր (Niels Ellinger) ծածկանվամբ 1903 թվականին հրատարակել է իր առաջին հողվածը հայ բանաստեղծության մասին⁴: Նույն գրական անունով 1905-ին տպագրել է ինքնուրույն և թարգմանական բանաստեղծությունների ժողովածու՝ «Կոհակերգ» («Թևավոր երգեր») վերնագրով: Այս հատորի առաջին մասն ընդգրկում է քնարական քերթվածներ, երկրորդը՝ Նորվեգիա կատարած ճանապարհորդության և այնտեղ բնակության վերաբերյալ է: Ապա հետևում է «Շլեզվիգ» հայրենասիրական բանաստեղծությունների շարքը: Գործող մասը կոչվում է «Գաղթական երգեր», իսկ հինգերորդը՝ «Հայկական բանաստեղծություններն» են, որոնք նա թարգմանել էր ամուսնու օժանդակությամբ («Ո՛հ ինչ անուշ», «Մայրիկս», «Իմ սիրելի զավակունքս», «Հարսանեկան երգեր», «Միրո երգեր», «Մահ

¹ Տե՛ս Յես (sic) Ասմունեն, Հանս Քրիստիան Անդերսենը և Չալալդոյին Ռոսնի պտտվող դերվիշները, *Իրան-նամե*, ք. 2, 1993, էջ 11:

² Տես Johannes Østrup, *Växlande horisont: skildringar och intryck från en ridt genom Öknen och Mindre Asien*. Stockholm, 1894, էջ 250-253:

³ *Dansk biografisk leksikon*, b. XVI, 1939, Köbenhavn, ss. 504-505.

⁴ Niels Ellinger, *Armeniske digte... Vuggesand för vår modern Armenien*, *Dansk tidsskrift*, 1903.

¹ Կենսագրությունը տե՛ս *Dansk biografisk leksikon*, b. XIII, 1939, Köbenhavn, էջ 591.

² Տե՛ս Պորոս Մակինցյանի առաջաբանը Վահան Տերյանի երկերի առաջին հատորում, Կ. Պոլիս, 1922, էջ XXVI-XXVII:

³ Տես *Սովետական Հայաստան*, 1957, ք. 9, էջ 36:

բաջորդվում», «Ազատն Աստված», «Մայր Արար», «Օրոր Մայր Հայաստանի»): Ժողովածուի վեցերորդ մասը Նալբանդյան ամուսինների՝ մինչև ձուլված բանաստեղծություններն են: «Անոց արժեքին և գեղեցկության մեկ մեծ մասը կը պատկանի «Հայկական բանաստեղծութիւններուն», որոնց մեջ գերագոյն քնարերգական շեշտը կը գտնուի (որ մեզի ծանօթ է Սողոմոնի Երգ Երգոցէն) և ուր մարդ յուզմամբ կը տեսնէ տխրութիւնը, առանձնութիւնը, դժբախտութիւնն այն նահատակ ժողովուրդին, որուն միացած է երիտասարդ հեղինակուիին», - գրել է դանիական թերթերից մեկը¹:

Իր առաջին արձակ գործերը Նալբանդյանը լույս է ընծայել 1913-ին՝ «Երեխաներ, դանիացի մոր նվիրած» վերնագրով, որին հետևել է «Մանկություն. գիրք երեխաների մասին» (1915) ժողովածուն: Հայերի կրած տառապանքներն առաջին աշխարհամարտի տարիներին ներկայացված են Նալբանդյանի՝ 1917-ին տպագրած պատմվածքների ժողովածուներում՝ «Մեծ վիշտը», «Ձոռերը» (կամ «Փորձություն կրածները») և «Բաց տարածություն»: Այստեղ իր իսկ ակնառեսի պատմություններ են հայոց կրած փորձությունների: Այնուհետև Ինգա Նալբանդյանը հրատարակել է «Մարի» (1925), «Փայլուն կամուրջը» (1926) և «Առանց երեխա մնալու» (1927) գրքերը: Նրա «Գիշերը. պատկերներ հայոց նահատակությունից» գիրքը թարգմանաբար լույս է տեսել շվեդերեն (1917) և ֆրանսերեն (1918): Հայկական թեմաներով պատմվածքների մեկ այլ ժողովածու էլ՝ «Եղբորդ արյունն է աղաղակում» վերտառությամբ, նույնպես հրատարակվել է ֆրանսերեն: Այս հրատարակությունից էլ երեք պատմվածք 1923-ին թարգմանաբար լույս են տեսել հայերեն²: Մեր օրերում դանիերենից թարգմանաբար լույս է տեսել Ինգա Նալբանդյանի «Մեծ վիշտը» վեպից մի հատված (թարգմանիչ՝ Հասմիկ Կյուրեղյան)³:

Ինգա Նալբանդյանը 1919-ին անգլիական մամուլում հանդես է եկել բաց նամակով ուղղված աշխարհի կանանց՝ կոչ անելով աջակ-

ցել հայկական հարցի դրական լուծմանը: Իսկ երբ 1922-ին Հայ հեղափոխական դաշնակցության 62 անդամներ ձերբակալվել են Պետրոգավիդսկում (Կարելիա), այդ խնդրով նա հատուկ հանդիպում է ունեցել Չիչերինի հետ⁴:

Ինգա Նալբանդյանը կապերի մեջ է եղել հայ ժողովրդի շվեդ բարեկամ Նաթանայել Բեսքովի հետ⁵: Որդին՝ Սվեն Նալբանդյանը, եղել է Դանիայի տնտեսական նախարարության խորհրդական⁶:

Մեր ժամանակներում Հայաստան այցելած դանիացի բանաստեղծ Էսկե Կ. Մատիեսենը գրել է բանաստեղծություն Երևանի մասին⁴: Աթենքաբնակ դանիուհի գրող և լրագրող Դանի Կյարսգորը հեղինակել է հայ ժողովրդի մշակույթը և պատմությունը ներկայացնող երկու գիրք՝ «Ի՞նչ արեցինք» և «Կրկի՞ն», որոնք արձագանք են գտել նաև հայ մամուլում⁵:

Հայ-դանիական գրական կապերն առկա են նաև թարգմանության ասպարեզում: Հայերեն ամենից շատ թարգմանված դանիացի հեղինակը բնականաբար Հանս Բրիստիան Անդերսենն է, որի ժողովրդականություն վայելող հեքիաթները սկսած 1890-ից միջնորդ լեզուներից թարգմանվել և լույս են տեսել հայ մամուլում և առանձին գրքույկներով: Դրանք մեծ տարածում են գտել ընթերցողների շրջանում և որոշ ազդեցություն ունեցել հայ գրողների վրա: Թիֆլիսում լույս են տեսել Անդերսենի «Անճոռնի բաղիկը» (1894), «Վայրի կարապները» (1895 և 1911), «Մոխակի երգը» (1911) հեքիաթներն առանձին գրքույկներով: Միայն «Աղբիւր» պատանեկան հանդեսում լույս է տեսել Անդերսենից 15 գործ, իսկ 1931–1972 թվականներին Խորհրդային Հայաստանում լույս է տեսել անդերսենյան հեքիաթներն ընդգրկող 20 անուն մեծ ու փոքր գիրք: Հայ բեմում 1907-ին ներկայացվել է Անդերսենի «Իռլանտան», իսկ հայ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը մանկական բալետ է գրել «Ձյունե թագուհին» հեքիաթի հիման վրա:

¹ Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ՊՖոնդ 430, ցուցակ 1, գործ 1307:

² Բեսքովի՝ Նալբանդյանին գրած երկու նամակը մենք թարգմանաբար հրատարակել ենք «Հայկագեան հայագիտական հանդեսում» (հատոր ԺԹ, 1999, էջ 397-399), որտեղ շվեդ գործիչը խոսում է իր հայկական ձեռնարկների վերաբերյալ:

³ Նրա մասին տե՛ս *Սիփիոս*, Պէյրոս, 24.10.1971:

⁴ Գևորգ Էմին, *Գիրք թարգմանությանց*, Երևան, 1984, էջ 69:

⁵ Տե՛ս *Արմենիա*, Բուենոս Այրես, 11.02.1984:

¹ *Հանդես ամսօրեայ*, Ի տարի, 1906, էջ 160:

² *Նա ասարդ*, Ա շրջան, Բ պրակ, 1923, Պուրբշ, էջ 40-47: Տես նաև՝ Տիկ. Ինկա Նալպանտեան, Անոր ծերացած ձեռքը, Ծերուկ Սիիրան աղան, Մորիին (պատմվածքներ), *Նաասարդ*, 1923, Հոկտեմբեր, էջ 46-47:

³ Տես «Հայաստանի հանրապետություն», 23.04.2005:

Դանիացի գրողներից հայերեն քարգմանվել են նաև Գեորգ Բրանդեսը¹ («Բանաստեղծը և հերոսը», 1898), Մարտին Անդերսեն Նեքսեն («Պեյլն նվաճող»), Մարիուս Դալսգորը («Փարոսի հսկիչի տղան»), Հանս Լունգվյու Եփսենը («Հույս: Ժպիտը»), Հանս Շերֆիգը («Բուռուս Օլցիտանուսը կամ Ութաչքանի կարիճը»), Իենա Սիգսգորը («Պալլեն մենակ է աշխարհում») և ուրիշներ:

Ավետիք Իսահակյանը 1938-ին գերմաներենից քարգմանել է «Պարոն Թիդմանը. դանիական հին ժողովրդական երգ»: Այստեղ պատմվում է, թե ինչպես գյուղերգարդի գյուղացիները սպանելով պատժում են նոր հարկեր նշանակող կալվածատիրոջը: Դանիական երգի քարգմանության դրդապատճառը ստալինյան բռնապետության մեջ գտնվող Հայաստան նոր ներգաղթած Ավետիք Իսահակյանի կողմից բացատրվում է նրա սոցիալական բովանդակությամբ ու նաև այն հանգամանքով, որ այն շատ է հավանել և գերմաներեն քարգմանել Ֆրիդրիխ Էնգելսը²:

Կա վկայություն, որ Կոստան Չարյանն այցելել է Դանիա և գրել ուղեգրություն, որտեղ քսան-երեսուն էջի սահմաններում խոսել է դանիացի նշանավոր փիլիսոփա Սյորեն Կիերկեգորի մասին³: Մեր ժամանակներում էլ հայ գրողներից Դանիա են այցելել Թորոս Թորանյանը, որ գրել է «Դանիական հողին վրա» ակնարկը⁴, Կարայիս Սուրենյանը, որն իր այցելության և Դանիայի մասին առհասարակ հանգամանորեն պատմել է «Մամա Յակոբսենի առակը» էսեում⁵:

Գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի՝ 1909-ին ստեղծած կտավներից է «Դանիացի քանդակագործ Ռաֆայելի դիմանկարը», որը

¹ Բրանդեսի մահվանը 1927 թվականին անդրադարձել է խորհրդահայ մամուլը՝ չնչելով նրա հայկական հետաքրքրությունների և կրատարակած հայանպաստ գրքույկի մասին (տես Գր. Չուրաբյան, Գեորգ Բրանդես, *Խորհրդային Հայաստան*, 10.07.1927):

² Ավետիք Իսահակյան, *Երկերի ժողովածու վեց հատորով*, հ. 2, Երևան, 1974, էջ 287, 326-327:

³ Կոստան Չարյան, *Դեպի Արարատ*, Երևան, 2001, էջ 397:

⁴ Թորոս Թորանյան, *Ուր կտանին ճամփաները*, Երևան, 1978, էջ 55-61:

⁵ Կարայիս Սուրենյան, *Հին պատմություն*, Երևան, 1999, էջ 149-189:

բարձր է գնահատել Կոստան Չարյանը¹: Իսկ ֆրանսաբնակ նկարիչ Բյուզանդ Թոփալյանը ստեղծել է «Դանիացի աղջիկը» նկարը²:

Ավելացնենք նաև, որ մոսկվացի կինոգործիչ, հայ մուլտիպլիկացիայի հիմնադիր Լև Ատամանովը (1905-1986) դանիացի նշանավոր ծաղրանկարիչ Հերլուֆ Բիդսթրոմի գործերի հիման վրա ստեղծել է «Նստարան» բազմանկարը և «Մեր ուժը կպատի» շարժանկար-որմագրը:

Հայ-դանիական կապերին անմիջականորեն չառնչվող, սակայն իր գոյությամբ ուշագրավ մի երևույթ է գերմանացի երաժշտաստեղծ Ռայնհարդթ Քայգերի (1674-1739) «Հայը Կոպենհագենում» օպերան՝ ըստ Ֆրիդրիխ Շիլլերի «Ոգետեսը» վիպակի: Այս օպերան ներկայացվել է 1722 թվականին:

Նորվեգիա

«Հայ-նորվեգական գրական կապերը» խորագրին ուսումնասիրության կարոտ մի ուշագրավ գրականագիտական թեմա է, որի մի քանի հիմնական գծերը մենք կրենք այստեղ:

XIX դարի վերջից նորվեգական գրականությունը հիմնականում գերմաներենից և ռուսերենից քարգմանվել է հայերեն: 1893-ին արևելահայ մամուլում լույս է տեսել նորվեգացի հեղինակ Հեգենսթերնի մի էսեն³: Նորվեգերենից հայերեն գեղարվեստական գրականության քարգմանության առաջին փորձը վերաբերում է 1914-ին⁴:

1890-ականներից սկսած՝ հայ բեմը հասկապես Թիֆլիսում և Բարվում բազմիցս ներկայացրել է նորվեգացի մեծամուն գրող Հենրիկ Իբսենի (1828-1906) պիեսները («Ուրվականներ», «Նորա», «Կառուցող Սոլմես», «Բրանդ», «Երբ մենք՝ մեռածներս հարություն առնենք», «Հեղդա Գարլեր», «Ծովի տիկինը», «Դոկտոր Շտոկման կամ Ժողովրդի

¹ Կոստան Չարյան, *Նավատոմար*, Երևան, 1999, էջ 47: Հայաստանի ազգային պատկերասրահի կատալոգում այդ նկարը սխալմամբ կոչվել է «Շվեդացի քանդակագործի դիմանկար» (*Հայաստանի Պետական Պատկերասրահ. գեղանկարի, քանդակի, գրաֆիկայի կատալոգ*, Երևան, 1965, էջ 104):

² Նկարի վերատպությունը տես *Սովետական Հայաստան*, 1961, ք. 7, էջ 21:

³ Հեգենսթերն, Բայց և այնպես կաննում են մարդու գնալ, *Արձագանք*, 1.01.1893:

⁴ Կուսրավ Կիտի, Կին մը (նորավեպ), բարգմ. նորվեգերենից Մ. Թ. Փափագեան, *Շանր*, 1-14.09.1912, էջ 74-77:

բշնամին», «Հասարակության նեցուկները»), որոնք հաճախ լույս են տեսել առանձին գրքերով¹ կամ մամուլում²: Հետագայում, խորհրդային տարիներին բեմադրվել են «Պեր Գյունտ» երաժշտա-դրամատիկական կոմպոզիցիան՝ Գրիգի երաժշտությամբ (1950 և 1953): Հայ քննադատական միտքը բազմաթիվ էջեր է նվիրել նրան, մամուլում հրատարակվել են նաև եվրոպական լավագույն քննադատների հոդվածներն Իբսենի մասին³: Իբսենի պիեսները, հատկապես «Նորան», որոշակի ազդեցություն են ունեցել հայ թատերագրության, մասնավորապես Շիրվանզադեի ստեղծագործության վրա:

Ի դեպ, Իբսենին մեկ անգամ տեսել և նրա մասին մանրամասն գրել է Կոստան Ջարյանը: Վեներիկի մի պանդոկում պատահաբար

¹ Հենրիկ Իբսեն, *Դորտոր Շտոկհոլմի կամ Ժողովրդի բշնամին*, քարգմ. Ս. Հախումեան, Թիֆլիս, 1891: *Նորս*, քարգմ. Տիրուխի Կոստանեան, Թիֆլիս, 1892, 1898: Ուրուականներ, քարգմ. Մ. Շամտանճեան, *Մասիս*, 1899, ք. 12, էջ 385-390, ք. 13-14, էջ 419-426, ք. 15, էջ 461-466, ք. 16-17, էջ 510-516, ք. 18, էջ 567-568: *Հասարակության նեցուկները*, Թիֆլիս, 1904: *Հեղադ Գարլեր*, Թիֆլիս, 1907: *Ուրուականներ*, քարգմ. Մարտիրոս Յարուբխեանց, Թիֆլիս, 1912: *Շոկոլոն տիկինը*, Պոսթրն, 1920: *Պիեսներ*, Երևան, 1968: *Պեր Գյունտ*, Երևան, 1969: Իբսենի հայերեն թարգմանությունների՝ 1892-1969 թթ. ժամանակաշրջանն ընդգրկող ցանկը, հայ թատրոնում Իբսենի գործերի բեմադրությունների և հայ հեղինակների՝ Իբսենի մասին մամուլում լույս տեսած հոդվածների մատենագիտությունը տես՝ *Յառաջ*, 7.05.2006: Տես նաև այս համարում՝ Արբի Յովհաննիսեան, «Հենրիք Իպսեն. կամատր արտրեալը» և Ժորժ Փիթրոյեթի, «Իպսեն – Ibsen» հոդուածները:

² Հենրիկ Իբսեն, *Երբ մենք՝ մտածներս սրափուներ*, քարգմ. Յովհաննես Բոզիյեան, *Լումայ*, Թիֆլիս, 1906, ք. 5-6, էջ 93-115, ք. 7-8, էջ 59-80: Ծարտարապետ Սոլոնես, քարգմ. Սիրայել Շամտանճեան, *Ոստան*, Կ.Պոլիս, 1912, ք. 5, էջ 137-207: Ծոն Գարբիլե Բորքման, քարգմ. Ս. Թախառական, *Փիւնիկ*, Պոսթրն, 1918, ք. 10, էջ 606-623: Պրանտ, քարգմ. Հայկ Պարիկեան, *Արև*, Գահիրե, 19.08.1968:

³ Տես օրինակ, Հենրիկոս Իպսեն, *Բազմավեպ*, 1871, ք. 11, էջ 334-336: Արշակ Չօպանեան, «Տոկտոր Շտոկհոլման» (Փարիզում), *Հայրենիք*, 21.11.1893: Նույնի, Հենրիք Իբսենը և իր «Ժան Գարբիլե Բորքմանը», *Մուրճ*, 1897, ք. 11-12, էջ 1562-1588: Երուանդ Պալեան, Հենրիկ Իբսեն, *Տարագ*, 1893, ք. 44, էջ 674-678: Տ. Ա., Կի՞ն թե՞ պէ՞ս [Հ. Իբսենի «Նորան»], *Արևիկ*, 26.04.1894: Նույնի, Հենրիկ Իպսենի «Շտ դարձողները», նույն տեղում, 10.05.1894: Մինաս, Նորվեգիայի գրականության [Բեռլինում և Հ. Իբսեն], *Նոր դար*, 30.04.1896, 1.05.1896, 4.05.1896: Տ., «Ժողովրդի բշնամին», *Մտրիանդակ*, Կ.Պոլիս, 16.11.1899: Մինաս Բերբերեան, Հենրիկ Իբսեն, *Նոր դար*, Թիֆլիս, 19-20.11.1899: Միք. Շամտանճեան, Հենրիկ Իբսեն, *Մասիս*, 1899, ք. 13-14, էջ 410-417, ք. 11-12, էջ 1483-1486: Ա. Նաւարեան, Հանրիք Իբսեն, *Արևելեան մամուլ*, 1904, ք. 30, էջ 721-724, ք. 31, էջ 750-755, ք. 33, էջ 801-804, ք. 36, էջ 871-875, ք. 40, էջ 966-969, ք. 41, էջ 994-996, ք. 45, էջ 1096-1099, ք. 48, էջ 1167-1171: Հ. Իբսեն, *Բազմավեպ*, 1905, ք. 1, էջ 34-35: Միշել Տէլին, Իպսենի կեանքն, *Մտրիանդակ*, Կ.Պոլիս, 9.06.1906: Արիստոմ, Իպսենի կեանքը, *Ազատամարտ յանդրամ*, 1910, ք. 14, էջ 218-222: Իբսեն և Տոկտոր, *Մշակ*, 30.03.1910:

տեսնելով հռչակավոր գրողին՝ «Նորվեգեան ծովափի ժայռոտ ամառա-քեան խատուրիները ճակատի վրայ և ֆիորդների մէջ ընկած թափառական աստղերի փայլը աչքերի մէջ», Ջարյանը գեղարվեստական ոճով ներկայացրել է Իբսենյան ատրան, իբր թե նրա հերոս Պեր Գյունտի ստվերը հետևում է իրեն և գրույցի բռնվում իր հետ¹: Կա նաև վկայութ-յուն, որ թատերագիր Ալեքսանդր Աբելյանը, որը տիրապետել է շվեդե-րենին, մամակագրական կապ է ունեցել Հենրիկ Իբսենի հետ²:

Հատկանշական է նաև, որ Իբսենի մահվան առթիվ դանիացի ա-կանավոր գրող Գեորգ Բրանդեսի հոդվածը երկու անգամ (համառոտ և ընդարձակ տարբերակներով) թարգմանաբար լույս է տեսել հայերեն³:

Նորվեգական արձակի խոշոր դեմք Բյորնսթրեմնե Բյորնսոնը (1832-1910) նույնպես գտնվել է հայ մտավորականության ուշադրութ-յան կենտրոնում: Գեռես 1881-ին Թիֆլիսում Հ. Թիգլիանյանի թարգմա-նությամբ լույս է տեսել Բյորն Բյորնսոնի «Սնանկություն» թատերա-խաղը, որին հետևել են «Միակնություն և բազմակնություն» վեպը՝ առանձին գրքով (թարգմանիչ՝ Արշ. Եղիզարյան, Բաքու, 1895), ինչպես նաև թարգմանություններ մամուլում⁴: Բյորնսոնի ստեղծագործությանը քաջ ծանոթ է եղել Արշակ Չոպանյանը, որը գրախոսել է նրա «Սնան-կությունը»⁵, արժեքավորել նոր ժամանակներում նորվեգական գրակա-նության մեծ նշանակությունը՝ վերլուծելով Իբսենի և Բյորնսոնի ստեղ-ծագործությունը⁶: Նա քննադատել է ֆրանսիացի մտավորականների պահպանողական վերաբերմունքը մյուս ազգությունների գրական մե-ծությունների, այդ թվում՝ Իբսենի և Բյորնսոնի նկատմամբ⁷:

Հայ բեմում 1907-ին ներկայացվել է Բյորնսոնի «Նորապասակներ» թատերախաղը, որը հաջորդ տարի լույս է տեսել առանձին գրքով

¹ Կոստան Ջարեան, *Երկեր*, էջ 599-602:

² Տես *Աղբիւրի ախումբը*, Թիֆլիս, թիվ XXV, սրակ 3, 1883-1908, էջ 54:

³ Կեռոկ Պրանտես, Հենրիք Իպսեն, *Մասիս*, Կ.Պոլիս, 1906, ք. 21, էջ 326-327: Գ. Բրանդես, Հենրիկոս Իբսեն, *Ազատամարտ*, 1907, ք. 4, էջ 361-372:

⁴ Տես Հրաչայի այգին, *Աղբիւր*, 1896, ք. 10, էջ 242-248, Մեր ուժերից վեր, *Լումայ*, 1904, ք. 4, էջ 201-225, թարգմանիչ՝ Ն. Տեր-Յովհաննիսեանց, Պիերնստերնե Պիերնսըն, Հայրե-քարգմ. Նշան Տեր-Պետրոսեան, *Հայրենիք* 2.08.1936:

⁵ Ա. Չօպանեան, Բարիզեան բրոնիկ, *Հայրենիք*, 11.11.1893:

⁶ Ա. Չօպանեան, Բարիզեան բրոնիկ: Մարդկային կարողութենէն դեռ ի վեր, *Հայրենիք*, 17.02.1894:

⁷ Ա. Չօպանեան, Բարիզեան բրոնիկ: Իպսեն ու «բշնամին», *Հայրենիք*, 19.11.1893:

(Թիֆլիս, Թարգմանիչ՝ Հովհ. Տեր-Մարտիրոսյան): Բյուրնսոնի «Արմե» վեպը Թարգմանաբար որպես թերթոն լույս է տեսել «Ոստան» հանդեսում, 1919–1920 թվականներին¹: Հրատարակչները պատճառաբանել են, թե ինչու են ընտրել հենց այս վեպը, «որովհետև այդ հերոսը, որքան բոլորովին հիասթափին ժողովուրդի միջավայրէն տիպար մը, սակայն շատ մը նմանութիւններ կը ներկայացնէ հայ աշուղին հետ, որ իր պզտիկ երգերը կը շինէ, լեռնէ լեռ և գիւղէ գիւղ կը թափառի, սէրը կը զարթնու իր մէջ, որ շարժման մէջ կը դնէ զինքը ու յետոյ տարիներ վերջ կը վերադառնայ իր հողին յանդարտ տխրութեան»²: «Նորվեգիայի Հյուսիս» հոշակված Բյուրնսոնի ստեղծագործությանն անդրադարձել է հայ քննադատական միտքը³, ինչպես նաև Թարգմանվել է դանիացի Գեորգ Բրանդեսի հոդվածը Բյուրնսոնի վերաբերյալ⁴: Ի դեպ, նրա մահվան առթիվ Պոլսի «Ազատամարտ» թերթի հավելվածում հոդվածով հանդես է եկել դանիուհի գրող Ինգա Նալբանդյանը⁵:

Իբսենից և Բյուրնսոնից բացի հայ գրականության մեջ իր տեղն է գտել նաև Բնյուֆ Համսունը (1859–1952), որի ստեղծագործությունները թե՛ հրատարակվել են առանձին գրքերով և մամուլում՝ Հայաստանում և Սփյուռքում⁶, թե՛ բեմադրվել (1911-ին Թիֆլիսում՝ «Կյանքի

ճանկերում»), թե՛ լույս են տեսել քննադատական-վերլուծական հոդվածներ¹: Իսկ հայ գրականագիտությունը Համսունի պոեզիայի ազդեցությունն է տեսել Վահան Տերյանի ստեղծագործության, մասնավորապես նրա վերջին շրջանի գործերի վրա²: Մեր օրերում Աղասի Այվազյանը գրել է «Կնուտ Համսունի երկու ոճական սխալը» պատմվածքը, որտեղ ներկայացրել է նորվեգացի գրողի հանդիպումները նախ սուրբան Արդու Համիդի, ապա, տասնամյակներ անց՝ Ադոլֆ Հիլդերի հետ: Մահից երկու տարի առաջ ծերունագարդ գրողը հիշում է, որ Թուրքիայի բռնակալի հետ զրուցելիս ինքը վրիպել է՝ գործածելով «ժայ» բառը, իսկ գերմանական ֆաշիզմի պարագլուխի հետ զրույցում էլ՝ «իրեա» բառը: «Ինչպես կարելի էր մի սխալը երկու անգամ թույլ տալ»³: (Նկատենք սակայն, որ Կոստանդնուպոլիս այցելած Համսունն իր գրություններից մեկում բացասաբար է հիշել իրեն հանդիպած հայերին):

Նորվեգական գրականությանից կատարված այլ Թարգմանություններից կարող ենք հիշել «Այսպես են աշխարհիս բաները (նորվեկեան առասպել)»⁴, կին գրող Սիգրիդ Ընսեթի «Քրիստին Լավրանդաբլը» պատմվածքը (Թարգմանիչ՝ Հեղինե Դավթյան, հանդես է եկել նաև հեղինակի մասին հոդվածով⁵), Տոուրի Բերգսոնի «Պարզեր»⁶: Նորվեգական գրականության սիրահար է եղել արձակագիր Վազգեն Շուշանյանը, որն իր «Օրագրում» հիշում է, թե ինչպես մի ծանոթ ֆրանսուհի իր ազդեցությամբ սկսել է սկանդինավյան հեղինակներին ընթերցել, հիշվում են Սիգրիդ Ընսեթի, Համսունի և այլոց անունները⁷:

¹ Պիտոնդերնե Պիտոնդերն, Առնե, *Ոստան*, Կ. Պոլիս, 1919, էջ 260-264, 306-312, 379-388, 441-448, 536-546, 595-599, 672-678, 753-765, 833-844, 938-945:

² Նույն տեղում, էջ 260:

³ Տե՛ս Ջ. Ումիկեան, Բեռնսոնը որպես գրող և քաղաքական գործիչ, *Նոր-Պար*, Թիֆլիս, 1884, ք. 65-67: Լ. Բարայան, Բեռնսոնը Բեռնսոն, նույն տեղում, 1892, ք. 206-207: «Մանկութիւնը», *Հայրենիք*, 10.05.1894: Ե. Թովչեան, Բեռնսոնի և Իբսենի վերջին դրամաները, *Սուրճ*, 1901, ք. 6, էջ 159-168: Նույնի, Բեռնսոն իբրև գրական և հասարակական գործիչ, նույն տեղում, 1901, ք. 10, էջ 97-112: Պարոյր Բ. Բէշեան, Պիտոնդերնե Պիտոնսոն, *Բիզանդիոն*, Կ. Պոլիս, 1903, ք. 2201: Վ. Փափագեան, Բեռնսոնը Բեռնսոն, *Տարագ*, Թիֆլիս, 1904, ք. 10, էջ 81: Բեռնսոնը Բեռնսոն, *Մշակ*, 23.04.1910: Ինգա Նալբանդեան, Պիտոնդերնե Պիտոնսոն (1832–1910), Ռ. Չարդարեանի *Ստորագծե ժողովածու*ում, 1911, Կ. Պոլիս, էջ 326-330: Մ. Յ. Բարթիկեան, Պիտոնդերնե Պիտոնսոն, *Ատրուշան*, Չմյուռնիս, 1919, ք. 1, էջ 12-14, ք. 2, էջ 29-31: Արմենակ Սարմապեան, Պիտոնդերնե Պիտոնսոն, *Կեանք և արուեստ*, Ա տարի, 1931, էջ 70-73:

⁴ Սկանդինավական գրականութիւն, *Հայրենիք*, 22.01.1895:

⁵ Ինկա Նալբանդեան, Պիտոնդերնե Պիտոնսոն: Ակնարկ մը իր կեանքին և գործերուն վրայ, *Ազատամարտ յանդերձ*, 10.07.1910, էջ 5-8, 17.07.1910, էջ 26-29:

⁶ Կնուտ Համսուն, Մէրը, Թարգմ.՝ Ջ. Մեսեան, *Հորիզոն*, 30.11.1913: Կնուտ Համսուն, *Երկրի կյուրերը*, Թարգմ. է. Տեր-Մարտիրոսյան, Երևան, 1923: *Վիկտորիա*, Թեհրան,

1955: *Պան*, Թարգմ. Ավ. Իսահակյան, Երևան, 1971: *Սով*, Թարգմ. Ա. Յայրոյան, Երևան, 1995:

¹ Տե՛ս օրինակ, Մ. Ազեան, Կ. Համսունի 50-ամեակը, *Մշակ*, 20.07.1910: Ջիանշիր, Կնուտ Համսուն. ծննդեան 50-ամեակի առթիւ, *Գեղարուեստ*, Թիֆլիս, ք. 4, 1911, էջ 229-231: Խ. Բ., Ինչպէ՛ս է հասկանում սերը Կնուտ Համսունը, *Ընկեր*, Թիֆլիս, 24.10.1911: Ա. Գուլոյեան, Կնուտ Համսուն (դասախօսութիւն Իվ. Ի. Այխենվայրի), *Հորիզոն*, 1912, ք. 209 (թերթոն): Համսուն, *Նաւասարդ*, Ա շրջան, Բ պրակ, 1923, Պոսթիչ, էջ 120-122:

² Տե՛ս Վ. Մենակ, Վահան Տերեան (քննական տեսութիւն), *Գեղարուեստ*, 1917, ք. 6, էջ 240:

³ Աղասի Այվազյան, *Ընտիր երկեր*, Երևան, 2001, էջ 161:

⁴ *Արեւելք*, 8.08.1933:

⁵ *Նոր գիր*, 1943–1944, ք. 4, էջ 194–199:

⁶ *Գարուն*, 1971, ք. 10, էջ 87-90:

⁷ Վազգէն Շուշանեան, *Օրագիր*, Երևան, 1999, էջ 142, 327:

Հայերեն թարգմանվել են ոչ միայն նորվեգացի գրողների, այլև գիտնականների որոշ արժեքավոր հոդվածներ¹:

Խորհրդային տարիներին ռուսերենից կատարված թարգմանություններով հրատարակվել են Իբսենի պիեսները և Համսունի վեպերն ընդգրկող երկուական գիրք, ինչպես նաև մեկական վեպեր Մինքեն Հոփից, Թուրբորգ Նեդրեստից և Վեգարդ Վիգերյուստից: Հատկապես մեծ է վաղամեռիկ թարգմանիչ Արտաշես Յայրյանի դերը բնագրից նորվեգական գրականության, մասնավորապես Քնյուք Համսունի ստեղծագործությունների թարգմանության գործում:

Հայ գրողներից առաջինը նորվեգերեն թարգմանվել է Ռուբեն Զարդարյանը («Երեք հայկական հեքիաթ»՝ «Մամբիդեն» պարբերականում²), մեր օրերում՝ Հրանտ Մաքևոսյանը («Գոմեշը»³):

Հայ-նորվեգական մշակութային կապեր առկա են նաև թատերական ոլորտում: Դրանց սկիզբը կարելի է համարել Վահրամ Փափազյանի ելույթն Օսլոյում (հավանաբար՝ 1920-ականների վերջին): Նա ֆրանսերենով կատարել է Օթելլոյի դերը, իսկ Դեզդեմոնա խաղացել է Իրմա Նիլսոնը⁴: Փափազյանի խաղը բարձր է գնահատել նորվեգական մամուլը, որը հայ դերասանի Օթելլոյին համեմատել է իտալացի հռչակավոր ողբերգու Մավլինիի Մավրի կերպավորման հետ⁵:

Իր հուշագրքում Վահրամ Փափազյանը Նորվեգիայի մասին գրել է հետևյալը. «Նույն անվերջանալի անտառները, սառած լճակները, որոնք նայում են քեզ վագոնի պատուհանից մեռած աչքերի նման,

նայեր՝ խելագար պառավների կանչվոտոցներով, և հսկա մարդիկ՝ երեխայի միամիտ, կապույտ աչքերով. այդպես էր վիկինգների երկիրը, ուր հասա ես հաջորդ օրը վերջալույսին, երբ հիվանդոտ արևը գունաթափ ու խունացած հովիարի նման իր ճառագայթներն էր ամփոփում ձյունապատ հորիզոնների հետևում: Այդ Նորվեգիան էր: Եվ չիսսկացա, թե ինչպես այդքան անհամբույր բնության մեջ ապրում էր ու զգում այդքան հյուրասեր մի ժողովուրդ: Հյուրասեր է նորվեգացին... ի բնե գեղազետ և արվեստասեր և իր կենցաղի շատ կողմերով դանիացիներին է հիշեցնում: Ծաղիկների սիրահար նորվեգացին ստեղծել է իր մայրաքաղաքն ուղիղ, հանգստացնող գծերով և իր նախկին ճարտարապետության հիմքը կազմող գոթական ոճը տարիների ընթացքում անզգալաբար ենթարկել է երբեմն ծայրահեղության հասցնող արդիականության, որով նորացած մի հին է Օսլոն: Եվ իրավ, գոթական աշխարհայացքի անխարդախ արդիականացումն են այդ գեղեցիկ քաղաքի բոլոր հիշատակարանները, մանավանդ Յուպլալը, նախկին արքայանիստ պալատը, պառլամենտն այսօր, ուր դիտող աչքը կարող է կարդալ, որպես գրքում, նորվեգացու պատմական անցյալը, ինչպես և նրա ապագայի ձգտումները՝ իր ներկայով շաղկապված»¹:

1955-ին Երևան են այցելել և Մունդուկյանի անվան ու այլ թատրոնների բեմադրությունները դիտել են նորվեգական պետական թատրոնի տնօրեն Ֆրից ֆոն դեր Լիպպեն, բեմադրիչ Թորմոտ Մրոգեսթադը, դերասանուհի Գերդա Գրիգը, պետական խորհրդի նախագահ, թատերական քննադատ Պաուլ Գյեսդալը և ուրիշներ²: Իրենց հերթին, Երևանի Մունդուկյան թատրոնի բեմադրած «Դոկտոր Շտոկմանը» ներկայացվել է 1991-ին Օսլոյում և արժանացել նորվեգական, շվեդական, անգլիական և իռլանդական մամուլի դրվատիքին:

Հետաքրքիր է այն զուգահեռը, որ ոմանք անց են կացրել Կոմիտասի և նորվեգացի մեծանուն կոմպոզիտոր Գրիգի միջև: «Հայ մեղեդիներ կան, որ Պինդարոսի երգերուն հետ կարելի է բաղդատել: Կոմիտաս վարդապետը ոչ միայն հայ, այլև միջազգային երաժշտութեան

¹ Տե՛ս, օրինակ, Ալֆ Սոմմըրֆելտ, Լեզուարանութիւնը ընկերային գիտութիւն մըն է, *Անդաստան*, ք. 6-7, Փարիզ, 1957, էջ 136-150:

² Rouben Zartarian, Tre armeniske eventyr, *Samtiden*, [Oslo, 1897], p. 250-255, տե՛ս *Հանդես ամսօրեայ*, 1897, ք. 12, էջ 374:

³ Grant Matevosjan, Bøffelkua, *Tolv noveller fra Sovjet-Unionen*, ed. Ingvild Broch og Ellinor Kolstad, Oslo, 1974.

⁴ Ըստ Փափազյանի՝ Իրմա Նիլսոնը եղել է «կինոյի հայտնի աստղ Աստա Նիլսոնի քրոջ աղջիկը, որը մնաց նորվեգական բեմերի վրա մինչև իր առաջացյալ տարիքը» (Վահրամ Փափազյան, *Երկեր 5 հատորով*, հատոր 2, Երևան, 1981, էջ 183), որը ճշմարտաման չի թվում: Նախ, կինոդերասանուհու ազգանունը եղել է ոչ թե Նիլսոն, այլ Նիլսեն, ապա՝ նա ոչ թե նորվեգուհի է եղել, այլ դանիուհի, բացի այդ՝ հազիվ թե նրա քրոջ աղջիկը կրեր նույն ազգանունը:

⁵ Նույն տեղում, էջ 184: Փափազյանն իրեն դրվատած մամուլի ամունը հիշել է որպես «Ռիտինգ», անվանելով այն «կիսապաշտոնական պարբերական», սակայն այդ բառը նորվեգերենում անճանաչ է:

¹ Վահրամ Փափազյան, *Երկեր 5 հատորով*, հատոր 2, Երևան, 1981, էջ 182-183:

² *Մովսեսյան արվեստ*, 1955, ք. 2, էջ 53:

մեծ վարպետներէն մէկն է: Վարդապետը հայ երաժշտութեան հայրն է: Հայոց Կրիկն է ան», – ասել է Պետերբուրգի և Մոսկվայի թատրոնների երգահան Հարդմանը, որը 1920-ին այցելել է Հայաստան¹: 1925-ին Հայաստան է այցելել Ֆրիտյոֆ Նանսենը (ի դեպ, նրա հետ ժամանած հանձնախմբում եղել է ևս մեկ նորվեգացի՝ կապիտան Վ. Քվիսլինգը), Երևանում լսել է Գրիգի սուլ-միմոր կոնցերտը և հետագայում իր ուղեգրության մեջ գրել է. «Ինձ ասացին, որ Հայաստանում Գրիգը շատ է ընդունված և ազգակցական կապ կա նրա ու հայկական երաժշտության մեջ: Նկատի ունենալով նոր հնչած հայկական երաժշտությունը՝ դա կարելի է մասամբ ընդունել»²: Տարիներ անց, 1962-ին, Հայաստան այցելած նորվեգացի կոմպոզիտոր Բլաուս Էգգեին (1906–1979) Կոմիտասին որպես «մեր Գրիգն» է ներկայացրել գրող Կարայիս Սուրենյանը, իսկ Էգգեն, լսելով կոմիտասյան երգերը, դրանք նմանեցրել է Նորվեգիայի լեռնային երգերին³: 1990-ին նորվեգական Օփիտեյիտ ավանում կայացած Քնյուֆ Համսունին նվիրված փառատոնին մասնակցել է երևանցի երաժշտաստեղծ Էդուարդ Սաղոյանը, իսկ Գրիգի ծննդավայր Բերգենում 1999-ին նշվել է Տիգրան Մանսուրյանի 60-ամյա հոբելյանը:

Ռուսաստանցի կինոբեմադրիչ Սերգեյ Միրայեյանը Նորվեգիայի հետ համատեղ նկարահանել է Ֆրիտյոֆ Նանսենին նվիրված «Ընդամենը մեկ կյանք» ֆիլմը, որտեղ հանդես են բերված նաև երեք հայ գաղթականի կերպարներ: Իրենց հերթին 1985-ին «Երևան» ստուդիայում Յուրի և Ռուբեն Երզնկյանները նկարահանել են «Ամնահուրյան անձնագիր» վավերագրական շարժանկարը՝ նվիրված Ֆրիտյոֆ Նանսենին:

Իսլանդիա

Իսլանդիայի մասին հայ իրականությունում առաջին անգամ գրվել է Ստեփանոս Ազոնցի՝ առաջին գլխում հիշված 1802 թվականին լույս տեսած աշխարհագրական աշխատության մեջ: Երկրորդ անգամ

Իսլանդիան հավանաբար հիշատակվել է 1853-ին, Ղևոնդ Ալիշանի կազմած վերոհիշյալ «Քաղաքական աշխարհագրություն նկարագրոյց պատկերոյք» հատորում (Իսլանտա ձևով, մայրաքաղաքը՝ Ռայքեալիք): Այս գրության մեջ իսլանդական գրականության մասին ասվել է մասնավորապես հետևյալը. «Բագում ինչ ի նախնի աւանդութեանց Իսլանտացոց որ սակաս անուանին՝ մնայ ցարդ ի գիրս. յորս նշանատր է հին Էտտա քերթուած հիստեալ ի ԺԱ դարս սկանտինաւեան առասպելաբանութեամբ և Էտտա յետորդ, փոփոխութիւն առաջնոյն՝ գրեալ ի 1200 Սնորրոյ-Սդուրլետոնայ՝ որ ար և Պատմութիւն երկրի անուանի յոյժ»¹:

1899-ին «Աղբիւր» հանդեսում լույս է տեսել Օլաֆ Կառլաքսենի «Իսլանդական գրույցը»²: Ավետիք Իսահակյանի «Վիկինգների կյանքից» պատմվածքի գործողությունները կատարվում են Իսլանդ կղզում, հերոսներն են քաջ վիկինգ Բողդիլն, նրա կինը՝ գեղեցիկ Գուրդունը՝ Օսվիֆուրի դուստրը³: 1941-ին Նյու Յորքի հայ մամուլում Հովհաննես Պասլյանը հանդես է եկել Իսլանդիայի մասին ընդարձակ ճանաչողական բնույթի հոդվածով, որի վերջում նշել է. «Կ'ըստի թէ դարեր առաջ երեք Հայ վարդապետներ այս կղզին այցելած են: Չեմ գիտեր, թէ ո՞րքան ստոյգ է ասիկա»⁴: Հայերեն լեզվով երեքական գիրք է հրատարակվել իսլանդական գրականությունից՝ անշուշտ ռուսերենից թարգմանված: Գրանք են՝ Հալդոր Լաքսնեսի «Ինքնուրույն մարդիկ» (1967) և «Իսլանդական զանգը» (1989), նաև «Իսլանդական նովելներ» ժողովածուն (1985): Ի դեպ, իսլանդացի նշանավոր արձակագիր, Նորեյլան մրցանակի դափնեկիր Հալդոր Կիլյան Լաքսնեսի մասին մեկից ավելի անգամ գրվել է հայ մամուլում⁵: Սովխունցի հայ գրող Հակոբ Գուրունյանը «Յուլակը» պատմվածքում ներկայացրել է, թե ինչպես մի հայ պատանի, լսելով Իսլանդիայի Խեյմաեյ կղզում հրաբխի ժայթքման

¹ Հայրենիք, 10.08.1920:

² Ֆրիտյոֆ Նանսեն, *Խարված ժողովուրդ*, էջ 186:

³ Կարայիս Սուրենյան, *Բնիկ ո՞րտեղացի ես*, Երևան, 1969, էջ 62-63:

¹ Ղևոնդ Ալիշանեան, *Քաղաքական աշխարհագրութիւն...*, էջ 427:

² Տե՛ս Աղբիւր, 1899, ք. 9, էջ 436-447, ք. 10, էջ 480-483, ք. 11, էջ 530-542, ք. 12, էջ 591-599:

³ Ավետիք Իսահակյան, *Երկերի ժողովածու վեց հատորով*, Երևան, 1975, հ. 3, էջ 433-436:

⁴ Յովհ. Գ. Պասլեան, Իսլանտա, *Հայաստանի կոչնակ*, 6.09.1941, դջ 872:

⁵ Տե՛ս, օրինակ, *Չարթոնք*, 22.11.1955:

մասին, այնքան է տպավորվում, որ երազում տեսնում է, թե ինչպես է թռչում այդ կղզին և փրկում մի իսլանդացի տղայի¹:

Այլ երկրների հայազգի արվեստագետներ ևս պատահական առնչություններ են ունեցել այս կղզի-պետության հետ: Հայտնի է, որ Վիլյամ Սարոյանն այցելել է Իսլանդիա և զեկուցում կարդացել Ռեյկյավիկում: Տարբեր ժամանակներում Սարոյանը թարգմանվել է իսլանդերեն մոտ մեկ տասնյակի հասնող տարբեր սերունդների թարգմանիչների կողմից, որոնց մեջ և վերոհիշյալ Հալդոր Լաքսնետը: Երկու անգամ Իսլանդիայի ռադիոյով Սարոյանի մասին տրվել են հաղորդումներ (հեղինակներ՝ Ինգիբյորգ Թորիսդոթթիր, Գիլդիլ Էլիասսոն): Ինգիբյորգ Թորիսդոթթիրի նախաձեռնությամբ 2008-ին Սարոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Ռեյկյավիկի Իսլանդիայի համալսարանի Վիգդիս Ֆիննրոգադոթթիրի անվան օտար լեզուների ինստիտուտում կայացել է Ռիլյամ Սարոյանին նվիրված սեմինար, որի ժամանակ ելույթներ են ունեցել սփյուռքահայ բանասեր, սարոյանագետ Տիգրան Գույումճյանը (Ֆրեզնո-Փարիզ), Գիլդիլ Էլիասսոնը և Սարոյանի թարգմանիչ Օսթար Արնի Օսթարսոնը:

Անգլիարենակ բենադրիչ Հովհաննես Փիլիկյանը բենադրություն է իրականացրել Իսլանդիայի Ազգային թատրոնում, որը համարվել է շրջադարձային իսլանդական թատրոնի պատմության մեջ: Ֆրանսահայ կինոբենադրիչ Մելիք Օհանյանը ֆիլմ է նկարահանել Իսլանդիայի մոտակա մի փոքր կղզում, իր իսկ խոստովանությամբ՝ իր հայկական ծագման մասին: Հայազգի ֆրանսիական ծովագնաց, օվկիանոսագետ-գրող Անիտա Կոնտի-Գարագոչյանը (1900–1997) ճանապարհորդել է նաև Իսլանդիայում և Գրենլանդիայում²: Հիշենք նաև Մոսկվայում բնակվող իսլանդական գրականության գիտակ Խաչատուրյանցին:

1976-ին Ռեյկյավիկում «ԺՄՀՄ-Իսլանդիա» ընկերության շրջանակներում տեղի են ունեցել Հայաստանի արվեստի օրեր, ցուցադրվել են «Հայկական ազգային կիրառական արվեստ», «Թատերական նկարչություն», «Նկարում են Հայաստանի երեխաները» ցուցահան-

դեսները, հանդես են եկել հայ արվեստագետները (թավջութակահարուհի Մեդեա Արրահամյան, պարող Ռուդոլֆ Խառատյան և այլք): Հայաստանի անկախացումից հետո էլ ավելի են քչացել փոխայցեբայությունները: 2007-ին Իսլանդիայում համերգներով հանդես է եկել հայ զաշնակահար Արմեն Բաբախանյանը:

Ֆինլանդիա

Ֆինների և հայերի հետ եղած բոլոր մասնավոր շփումների դեպքերն առնչվում են արևելահայ իրականությանը և մեծ մասամբ՝ մշակույթին:

XIX դարի վերջից այս երկիր են այցելել հատուկեմտ հայ մտավորականներ: Մի քանի տարի Ֆինլանդիայում է բնակվել վերոհիշյալ քողոքական քարոզիչ, թարգմանիչ Արրահամ Ամիրխանյանցը (1838–1913), որը 1888-ին կնոջ՝ Ազապիի և յոթ զավակների հետ միասին հաստատվել է Հելսինկիում: Այստեղ նա զարմանալի ջերմ ընդունելության է արժանացել՝ շնորհիվ իր քարոզների և անկեղծ քրիստոնեական կենսաձևի: Բարոզիչը հողվածներով հանդես է եկել Ֆինլանդիայի քրիստոնեական մամուլում: Սակայն երկրի խոնավ կլիման պատճառ է դարձել Ամիրխանյանցի երկու զավակների մահվան, ուստի նա ընտանիքով տեղափոխվել է Բուլղարիա՝... Նրա որդիներից կոմպոզիտոր Նաբան Ամիրխանյանցը (1872–1949) ուսանել է Հելսինկիի երաժշտանոցում՝ դառնալով Ֆինլանդիայում ուսանած առաջին հայորդին: Նա քաջածանոթ է եղել ֆիններենին և շվեդերենին: Ամիրխանյանցը կազմել է շվեդական և նորվեգական երգչախմբեր, գրել շուրջ երկու հարյուր աշխարհիկ և հոգևոր երգեր (նաև՝ շվեդ բանաստեղծների տեքստերով):

Ֆիններեն լեզվին տիրապետել է նաև հայազգի ռուսագիր բանաստեղծ Ալեքսանդր Վերմիլզը (1879–1919):

¹ Հակոբ Գուրունյան, *Անտառի շուկլը*, Երևան, 1979, էջ 96-100:
² *Le Monde*, 15–16.XII.1996.

¹ Մ. Ա. (Մարգար Ասատրյան), Տիկին Ազաբի Ամիրխանեանց, *Հայաստանի կոչնակ*, 1922, էջ 1653–1654:

Արևելահայ մամուլը երբեմն հրատարակել է ֆինն գրականության մասին հոդվածներ¹ և թարգմանություններ (կատարված ռուսերենից): Հայերեն թարգմանված առաջին ֆիննական հեղինակը թերևս Ջ. Տոպելիուսն է, որից երեք պատմվածք է լույս տեսել 1900-ին Թիֆլիսի «Աղբիւր» հանդեսում²: Հատուկեմտ ֆինն հեղինակների գործեր լույս են տեսել նաև առանձին գրքույկներով, ինչպես՝ Ինգման Սանտեբրի «Անայոչ հորթը» (Բարո, 1903), Ալպի Էբոյի «Հրեշտակի խոստումը» (Ալեքսյու, 1906): Ուշագրավ է, որ նույն ժամանակահատվածում առաջին փորձն է կատարվել ֆիններին ծանոթացնելու համար հայ գրականությանը: 1907-ին Հելսինկիի նշանավոր ամսագրերից «Վալվոյայում» արևելահայ գրական գործիչ Մինաս Բերբերյանի նախածնունդով լույս է տեսել «Պատկերներ Հայաստանից» նյութը: Լուսանկարներով և քարտեզներով օժտված այդ ընդարձակ հոդվածի առաջին մասը ներկայացրել է հայության վիճակը, արևմտահայության կոտորածներն ականատեսների վկայություններով, Հայկական հարցը³: Երկրորդ մասը հայ գրականության համառոտ ակնարկ է՝ հայ գրողների լուսանկարներով⁴: Ֆիններեն թարգմանությամբ տրված են նաև Ավետիս Ահարոնյանի «Կովի դաշտում» պատմվածքը և Վրթանես Փափագյանի «Լուր-դա-Լուրը»⁵:

Հելսինկիի համալսարանի գրադարանում գոյություն ունի 3290 հայերեն գիրք, մեծ մասամբ՝ լեզվագիտական գրականություն և գեղարվեստական գրքեր: Նշենք, որ այնտեղ պահվում է նաև տաս հնատիպ հայերեն գիրք և 1850-1917 թվականներին հրատարակված 20 անուն մամուլ: Այս գրադարանի մասին մագիստրոս Թոր Էրիք Էրիքսոնը գրել է մի աշխատություն⁶: Այն սոսկ նկարագրական նյութ չէ, այլ

¹ Տե՛ս *Մորճ*, Թիֆլիս, 1901, ք. 8, էջ 66-86, ք. 9, էջ 50-71, 1906, ք. 2, էջ 23-52, ք. 6, էջ 68-80:

² Ջ. Տոպելիուս, Հայրենիք, թարգմ. Հ. Տերտրեան, *Աղբիւր*, 1900, ք. 3, էջ 117-122: Արեգակի շարիքը, թարգմ. Վ. Արշակունի, նույն տեղում, ք. 5-6, էջ 214-224: Մրջիւնը բժշկի մօտ, թարգմ. Մ. Չոհրաբեան, նույն տեղում, ք. 12, էջ 458-463:

³ Minas Berberian, *Kuvauksia Armeniasta, Valvoja*, Helsinki, 1907, ք. 77-94.

⁴ Նույն տեղում, էջ 617-629:

⁵ Avetis Aharonian, *Taistotantereella*, նույն տեղում, էջ 630-635: Vrtanes Papisian, *Lur-dalur. Legenda kurdilaiselämästä*, նույն տեղում, էջ 635-640:

⁶ Tor Erik Eriksson, *Die armenische Büchersammlung der Universitätsbibliothek zu Helsinki*. Helsinki, Helsingin Yliopiston Kirjaston Julkaisuja, 1955.

հայոց լեզվի և գրականության մի համառոտ ակնարկ: Թերևս Հելսինկիի համալսարանի գրադարանում պահվում են նաև հայերեն ձեռագրեր. հավանաբար դրանց է վերաբերում տակավին 1898-1899 թվականներին «Ֆինսքս մուզեում» ամսագրում լույս տեսած Յուհան Յակոբ Թիքքանենի «Երեք հայկական մանրանկարչական ձեռագրեր» աշխատությունը¹:

Ֆինլանդիային և ֆինն ժողովրդին հայ մամուլը հաճախ է անդրադարձել հատկապես XX դարի սկզբին, երբ այդ երկրում նույնպես ծավալվել է հեղափոխական շարժում, իսկ 1906-ին՝ տեղի ունեցավ Մվեաբորգի ապստամբությունը: «Մշակ» թերթի խմբագիր, հրապարակախոս Հակոբ Առաքելյանը հանդես եկավ «Ի՞նչ է ֆինլանդական խնդիրը» ծավալուն հոդվածով²: Այս հետաքրքրությունը պատահական չէ, քանի որ պատմական այդ ժամանակահատվածում թե՛ ֆինները, թե՛ հայերը գտնվել են միևնույն կայսրության՝ Ռուսաստանի կազմում:

Այս շրջանին են վերաբերում մի շարք հայերի այցելությունները Ֆինլանդիա: 1899-ին քիֆլիսցի Բ. Օհանյանն այցելել է Ֆինլանդիա, Վիբորգ կատարած այցելության մասին գրել «Մշակ»-ում (թիվ 157): 1901 թվականին «Մուրճ» ամսագրում լույս է տեսել նրա «Հազար լճերի և կղզիների երկրում» ուղեգրությունը³, որտեղ հեղինակը մանրամասն պատմել է Ֆինլանդիայի արդյունաբերության, գյուղատնտեսության, Հելսինկիի, մամուլի, ժողովրդական սովորությունների, լեզվի և գրականության մասին: 1913-ին Ֆինլանդիայում է եղել և այդ երկրի մասին ծավալուն հոդված գրել խմբագիր Հիպիրիկ Չոլախյանը՝ մանրամասն ներկայացնելով այդ երկրի տնտեսությունը, արդյունաբերությունը, ժողովրդին⁴:

XX դարի առաջին կեսին հայ մտավորականներից Ֆինլանդիա այցելել են նաև Ալեքսանդր Արեւյանը, Գարեգին Լևոնյանը, Լևոն Բաշալյանը (որը հիշել է այդ երկիրն իր «Թուրքահայատակի մը արկած»

¹ Johan Jakob Tikkanen, *Tre armeniska miniatyrhandskrifter. Finskt Museum*, n. 9-12, 1899, Helsingfors, Centraltryckeri, s. 65-91.

² Տես այդ հոդվածի արևմտահայերեն վերաշարադրանքը՝ *Ժամանակ*, 10.08.1910:

³ *Մորճ*, Թիֆլիս, 1901, ք. 8, էջ 66-86, ք. 9, էջ 50-71:

⁴ Հիպիրիկ, Ֆինլանդիայում, *Հորիզոն*, 31.07, 3, 24, 28.08, 5.09.1913:

ները մեծ պատերազմի ատեն» ակնարկում), Ստեփան Շահումյանը, Վահան Տերյանը, բեմադրիչ Աննա Բուրադյանը, ինչպես նաև դերասան Վահրամ Փափազյանը: «Ահեղի ձյունախառն փոթորկի միջից գնացքը տարավ ինձ ու իմ իմպրեսարիոյին դեպի հյուսիս: Սառած պատուհանների հետևից անցնում էին ու անցնում անտառներ, անտառներ, դարձյալ անտառներ հսկա եղևնիների, որոնց՝ ձյունից ծանրացած ճյուղերը տարածվել էին քների նման...»: Այսպես է բնութագրել Վահրամ Փափազյանը Ֆինլանդիան՝ անվերջանալի անտառների և սառած լճակների երկիրը, որի ժողովրդին համարել է «մտամոխի ու աշխատող», որոնք «եթե շատ կողմերով հիշեցնում էին Հյուսիսային Եվրոպայի ժողովուրդներին, ապա ոչ մեկը իմ տեսած բոլոր ժողովուրդներից չէր հիշեցնում ֆիններին իրենց մաքրասիրությամբ...»¹: Փափազյանը Հելսինկիում «Օթելլոյի» չորս ներկայացում է տվել ֆինն դերասանների հետ՝ իր հուշերում մասնավորապես հիշելով Դեզդեմոնայի դերակատար Կլարա Կայինեին (վերջինիս հիշել որպես «սառած մի պուպրիկ»):

Ֆինն գրականության և մշակույթի հետ շփումներն էլ ավելի պատահական բնույթ են ունեցել: Ֆինն գրող Յուհաննի Ահոյի մի պատմվածքը հայերեն է թարգմանել Ալեքսանդր Ծատուրյանը², իսկ Եղիշե Դուրյանը մշակել է մի ֆիննական գրույց³: Փանոս Թերլեմեզյանի կտավներից է «Ֆինլանդացի պատանին», իսկ ֆրանսաբնակ գեղանկարիչ Հովհաննես Ալիսազյանը մի քանի անգամ վրձնել է Ֆինլանդիայի խստաշունչ բնապատկերները:

1920-ականներին Ֆինլանդիա է այցելել Լևոն Նայիրցի ծածկանունով հանդես եկող մի հայ բանաստեղծ, որը Հելսինկիում գրել է «Ծանոթ շվեդուհուն», «Ֆինլանդիային» և «Ջութակահարուհի Մ. Ն.-ին» բանաստեղծությունները⁴: Գրական կապերի մասին խոսելիս

եղենը նաև, որ ֆիններեն լույս է տեսել Շիրվանզադեի «Քառս» վեպը¹ («Ալ ոսկու քաղաքը» վերնագրով) Յուհաննի Կոնկկայի թարգմանությամբ և պատմվածքներ Վախթանգ Անանյանից (երկուսն էլ՝ ուսերեցից): Ռուսերենից է թարգմանվել նաև կարելաֆիննական «Կալալա» էպոսը (թարգմանիչ՝ Հմայակ Սիրաս): 1949-ին «Կալալայի» առաջին տպագրության 100-ամյա հոբելյանի առթիվ Ավետիք Իսահակյանը գրել է «Կարել-ֆիննական ազգային էպոսը» հոդվածը²: 1962-ին ֆինն և Ֆինլանդիայի շվեդ գրողների միությունների հրավերով Ֆինլանդիա է այցելել հայ գրողների պատվիրակությունը՝ բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանի նախագահությամբ: Ավելորդ չէ հիշել, որ ժամանակակից ֆիննաշվեդ գրականության ներկայացուցիչներից է ԱՄՆ-ում բնակվող տիկին Սթինա Խաչատուրյանը, որը գրում է շվեդերեն և անգլերեն, և ի դեպ, հեղինակ է նաև հայապատում մի գրքի...

1958-ին Երևանում հյուրընկալվել են ֆինլանդացի գրողներ՝ քննադատ Յառլ Ռուֆ Տալվիստը, բանաստեղծ, արձակագիր Ռալֆ Պարլանդը, բանաստեղծ Յալմար Կրուկֆորշը, վիպասան Լեո Օդրեն և Մարիա Լիզա Վարտիոն³:

Ժամանակակից ֆիննաբնակ շվեդագիր գրող Իրմելին Սանդման Լիլիուսը (ծն. 1936) հեղինակել է երկու մանկապատանեկան վիպակներ, որոնց գործողությունները կատարվում են Կովկասում⁴: «Կապիտան Գոյունսբեդը» և «Գորզը Կարսից» ստեղծագործությունների հերոսները՝ Աննա Լիման և Դեմինը, այցելում են Կարս և Ալեքսանդրապոլ, հիշատակվում են Արարատ լեռը, Արփաչայ գետը, Ջելալօղլին (որպես քաղաք), Ղզըլախախս գյուղը: Կա նաև մի հայ հերոս՝ կապիտանի հարևան Սկրտիչը: Նկատենք սակայն, որ երկու գործերում էլ հեղինակը երբևէ չի նշել «Հայաստան», «հայ» բառերը:

1981 թվականից ֆինն լուսանկարիչ Ռայնե Լամպինյենը զբաղվում է հայ ճարտարապետական հուշարձանների լուսանկարչությամբ:

¹ Alexander Širvanzade, Mustan kullan kaupunki. Suom. J. Konkka, Hämeclinna, Karisto, 1956.

² Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 262-266:

³ Տես *Արև*, 4.08.1958:

⁴ Irmelin Sandman Lilius, *Kapten Grunnstedt*, Stockholm, 1974; *Mattan från Kars*, Stockholm, 1989.

¹ Վահրամ Փափազյան, *Երկեր 5 հատորով*, հատոր 2, Երևան, 1981, էջ 181-182:

² Իսահաննի Ահո, Ծերունի հոր խօսքը, *Հորիզոն*, 21.07.1913:

³ Եղիշե Դուրեան, Արջուն գրույցը (Ֆինլանդիայի մէջ), *Ամենուն տարեցոյցը*, 1914, էջ 68:

⁴ Տես *Հայրենիք* անսագիր, 1924, դեկտեմբեր, էջ 30, 1934, նոյեմբեր, էջ 54-55:

յամբ: Հայ ժողովրդի պատմությամբ և ակառագրով մեծապես հետաքրքրված այս արվեստագետը 1986-ին Երևանում կայացած հայ արվեստի միջազգային գիտաժողովում ներկայացրել է «Հայկական ճարտարապետություն» ցուցահանդեսը, որ ընդգրկել է Արևմտյան Հայաստանում և Հայկական ԽՍՀ-ում նրա կատարած մի շարք լուսանկարներ¹:

2000 թվականին Երևանի «Գարուն» ամսագրի երրորդ համարը «Համաստեղություն» բաժինը նվիրեց Ֆինլանդիային: Ֆիններենից կատարված քարգմանություններով հանդես եկան Երևանում բնակվող ֆիննուհի Սվետլանա Հագերթը (ամուսնու՝ Նելսոն Ալեքսանյանի համագործակցությամբ), Կարինե Աբոյանը, Կարինե Խաչատրյանը և Լիլիթ Ստեփանյանը: Մեր խնդրանքով հատուկ այդ թողարկման համար ֆինն կինոգետ Հելենա Իուլանենը գրեց «Ֆիննական կինոն գոյություն ունի» հոդվածը:

Ժամանակակից ֆինն երգչուհի Սինի Տուոմիսալուն 2008-ին Սանկտ Պետերբուրգում թողարկել է ձայնասկավառակ, որտեղ ընդգրկված են նաև Աոնո Բաբաջանյանի երգերը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ ԵՎ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՆ

Օսմանյան կայսրության լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ սկանդինավյան պետություններում ուշադրություն են դարձրել տակավին XIX դարի վերջից: Թեև արևմտաեվրոպական մյուս երկրների համեմատ հեռավոր սկանդինավյան երկրները սակավ տեղեկացված են եղել Հայկական հարցի վերաբերյալ, այդուհանդերձ հետաքրքրությունը հայության հանդեպ այստեղ ունեցել է տարբեր դրսևորումներ, և այսօր հյուսիս-եվրոպական երկրների տպագիր և ձեռագիր սկզբնաղբյուրները նույնպես հարուստ նյութ են տրամադրում հայոց ցեղասպանության վերաբերյալ: Սկանդինավյան երկրների և Հայ դատի պատմությունը գլխավորապես առնչվում է նորվեգացի բենեռախույզ, հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենի (1861–1930) գործունեությանը: Մենք չենք անդրադառնալու այդ հարցին, որը հանրածանոթ և ուսումնասիրված է հայ պատմագրության մեջ¹: Սկանդինավյան երկրների՝ արևմտահայության ողբերգությանը ներգրավված լինելն արտահայտվել է նախ՝ հայության մեջ գործած մի շարք միսիոներուհիների առկայությամբ, Օսմանյան կայսրությունում գործած սկանդինավյան քաղաքական գործիչների՝ հայոց կոտորածների մասին հաշվետվությունների և ականատեսների վկայությունների ձևով, ինչպես նաև 1910-ականների վերջին սկանդինավյան պետություններում սկսված հայանպաստ շարժմամբ՝ ի դեմս հասարակական գործիչների Հայաստանին ուղղված որոշ ջանքերի և սկանդինավյան լեզուներով եղած բազմաթիվ հրատարակությունների: Առավելապես անդրադառնալու ենք Շվեդիային, որը հատկապես ակտիվ է եղել Հայկական հարցում:

Սկանդինավյան երկրների և հայկական ցեղասպանության թեման մանրամասնորեն անդրադարձել են դանիացի պատմաբան Մաթիաս Բյորնկյունդն իր «Սկանդինավիան և հայկական ցեղասպանութ-

¹ Սովետական Հայաստան, 1986, ք. 2, էջ 14:

¹ Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, Երևան, 1977:

յունը» հողվածում¹ և Շվեդիայի հայկական միությունների համադրող կենտրոնի այդ ժամանակվա նախագահ, www.armenica.org ինֆորմացիոն կայքէջի գլխավոր խմբագիր Վահագն Ավետյանը, որը 2008-ին հայոց ցեղասպանության մասին մագիստրոսական թեզ է պաշտպանել Ուփսալայի համալսարանի պատմության բաժնում²: Վերջինս շվեդական արխիվներում ուսումնասիրել է Ուփսալայի համալսարանի գրադարանում պահվող 1915–1923 թթ. գրված մոտ 80 արխիվային փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ Շվեդիան, արևմտյան այլ երկրների պես, տեղյակ լինելով հանդերձ հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում կիրառվող ցեղասպանությանը, նախընտրել է չմիջամտել: Ուշագրավ է նաև, որ տակավին 1910-ականներին, երբ ցեղասպանություն եզրը տակավին չէր շրջանառվում, շվեդ գործիչները գործածել են այն: Շվեդ քաղաքական գործիչ Յալմար Բրանթինգը 1917-ի իր մի ելույթում Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածները բնութագրել է որպես «կազմակերպված և սխտեմատիկաբար իրագործված ցեղասպանություն» և օգտագործել «folk-mord» տերմինը, որ բառացի ազգասպանություն է նշանակում: Նմանապես դանիացի Օգե Մեյեր Բեներդիկտսենը 1925-ին հրատարակած իր գրքում օգտագործել է «folkemord» եզրը:

Սկանդինավյան երկրներում սկսած 1890-ականների կեսից՝ համիդյան կոտորածների ժամանակ, մամուլը և հասարակությունը տեղեկացնում էր հայ ժողովրդին բաժին ընկած սարսափների մասին: Մասնավորապես շվեդ հասարակությունը մոտիկից տեղեկացել է հայ ժողովրդին բաժին ընկած այդ ողբերգությանը՝ շնորհիվ ստոկհոլմաբնակ բանասեր Նորայր Բյուզանդացու, որն այդ հարցի շուրջ մի քանի հոդված է հրատարակել «Աֆթոնըլադեթ»³ և «Ստոկհոլմս դագբլադ» օրա-

¹ M. Bjørnlund, Scandinavia and the Armenian Genocide, *The Armenian Weekly*, 26.04.2008.

² Vahagn Avedian, *The Armenian Genocide 1915: From a Neutral Small State's Perspective: Sweden, Master Thesis Paper in History, Uppsala, 2008.*

³ Norayr N. de Byzance, *Blodblad i Minoere-Asien, Afionbladet*, 14.11.1894; *Om de nyaste blodbaden i Armenien, Afionbladet*, 21.11.1894; *Slutet av en nation, Afionbladet*, 19.12.1894. Վերջին երկու հոդվածների հայերեն թարգմանությունները տես՝ Երևանի Գրականության և արվեստի բանագրան (այսուհետ՝ ԳԱԹ), Արգար Հովհաննիսյանի

թերթերում՝ մանրամասն ներկայացնելով կոտորածների իրողությունը և շվեդ հասարակությանը կոչ անելով սատար կանգնել հայ որբերին ու այրիներին: 1896-ին Բյուզանդացին հանդես է եկել հայ ժողովրդի մասին բանախոսություններով. մասնավորապես նույն թվականի հոկտեմբերի 21-ին կարդացել է հայերի զանգվածային ջարդերի վերաբերյալ ֆրանսերեն զեկուցում, որը տպագրվել է շվեդական մամուլում¹: Բյուզանդացու՝ հայությանը սատարելու կոչին արձագանքել են տասնյակ շվեդներ, որոնք նվիրատվություններ են կատարել հայ կարոտյալների հիմնադրամին. 1896-ի հունիսին «Ստոկհոլմս դագբլադ»-ում տպագրվել է նվիրատուների ցանկը, իսկ հավաքած գումարը կազմել է 1983 քրոն 75 օրե²: Հայ կարոտյալների օգտին շվեդների հավաքած ընդհանուր գումարը 1897-ի սկզբին կազմել է հինգ հազար ֆրանկից ավելի³: Հոդվածներից ստացած 2000 քրոն հոնոլարը Բյուզանդացին ուղարկել է Լոնդոն՝ Ուեսթմինսթերի դքսին՝ հայ այրիների և որբերի հիմնադրամի համար⁴:

1896-ից սկսած նորվեգական և դանիական մամուլում ևս լույս են տեսել հոդվածներ հայ ժողովրդի մասին (ինչպես՝ «Լուսաբանություններ Հայկական հարցի վերաբերյալ»⁵): Դանիայում հայության վերաբերյալ առաջին հրատարակություններից են Գ. Գոդեի «Հալածանք-

Ֆոնդ, քիվ 57: Վերջին հոդվածը լույս է տեսել նաև ֆրանսիական «Le signal» թերթում (26–27.12.1894):

¹ Տե՛ս Նորայր Բյուզանդացի, *Նամակներ Վիեննայի Մյսիքաբեաններին*, էջ 65:

² *Stockholms dagblad*, 1.VI.1896.

³ Նպաստներ Շվեդիայից, *Մուրճ*, Թիֆլիս, 1897, ք. 1, էջ 162:

⁴ Ռ. Ս. Նագարյան, Ա. Գ. Տեր-Աբրահամյան, Նորայր Բյուզանդացու անտիպ մամուլներից, *Պատմաբանասիրական հանդես*, 1974, ք. 3, էջ 239: Իր գործունեության վերաբերյալ Նորայր Բյուզանդացին հայ մամուլին հղած մամուլում մասնավորապես գրել է. «Ես հրատարակեցի երկու յօդուած Սասնոյ քստմնելի կոտորածին առքիս քաղաքիս «Aftonbladet» լրագրի մէջ 1894 նոյեմբերի եւ դեկտեմբերի: Հրատարակեցի ուրիշ ընդարձակ յօդուած մի Հայաստանի եւ Թուրքիոյ Հայոց մասին անցեալ տարուայ յունուարին «Stockholms Dagblad» լրագրի մէջ չորս անգամով: Համառօտիս բանախօսեցի ես... Այս ամեն բանախօսութեանց եւ յօդուածոց արդիւնքն եղաւ ստանալ գՇուեւոացոց համակրութիւնն մեզ համար, եւ զիւրեանց դրամական նպաստատրութիւնն: Մինչեւ ցարդ հաւարուեցաւ Շուեդի մէջ 5000 ֆրանկէ աւելի» (*Արձագանք*, 10.01.1897):

⁵ Նորայր Բյուզանդացի, *Նամակներ Վիեննայի Մյսիքաբեաններին*, նույն տեղում:

ները Հայաստանում»¹ և Հ. Լարսենի «Արյան և արցունքի երկրից. ճանապարհորդական նոթեր Հայաստանից»² գրքույկները: Ի դեպ, Լարսենը հետագա տարիներին էլ հանդես է եկել հայության վերաբերյալ գրքույկներով³: Հայոց վիճակի մասին հաճախ տեղեկություններ է տվել 1896-ին հիմնադրված «Զրիսթելիզթ դագբլադ» օրաթերթը:

1897-ից սկսած շվեդերեն ինքնուրույն կամ բարգմանված մի շարք հրատարակություններ են ասպարեզ իջել, որ ներկայացրել են հայկական կոտորածները⁴: «Նուրդիսքա օրեթսքիբլիութեք» մատենաշարով լույս է տեսել Մարիա Անհոլմի «Մահապարտ ժողովրդի ասքը»⁵: Հեղինակը երկու անգամ եղել է Արևելյան Հայաստանում, այցելել դպրոցներ և եկեղեցիներ: Այս և ուրիշ գրքույկների շնորհիվ շվեդները XX դարի սկզբին քաջատեղյակ են դարձել հայ ժողովրդի կրած փորձություններին: Ինչպես վկայել է 1912-ին Ստոկհոլմի օլիմպիական խաղերին մասնակցած պոլսահայ մարզիկ Վահրամ Փափագյանը, «Շուետացիներու կողմէ հայերուս հանդէպ ցոյց տուած ջերմ վերաբերմունքը մեզի զարմանք կը պատճառէր: Ուր կ'երթայինք, «գուր հերոս, ազնուական ազգ մըն եք, յաճախ մենք ալ մասնակից եղած ենք ձեր տառապանքներուն», կը կրկնէին»⁶:

1903-ին Կոպենհագենում լույս է տեսել պոլսահայ ֆրանսագիր քանաստեղծ Պիեռ Անմեյանի «Սկանդինավյան տեսիլներ» ֆրանսերեն քանաստեղծությունների ժողովածուն⁷, որոնցից շատերը նվիրված են հայկական հարցի հանդեպ հետաքրքրություն ունեցած սկանդինավցիներին (ինչպես՝ Բյորնսթյերնե Բյորնսոնին): Նույն թվականին

¹ G. Godet, *Forfølgelserne i Armenien*. Ed. Carl Joh. Tolstrup. Köbenhavn, 1897.

² H. Larsen, *Fra Blodets og Tararnes Land. En Rejseberetning fra Armenien*, Köbenhavn, 1900.

³ H. Larsen, *Blodets og Taararnes Land i Europa. En Orientreise*. Aarhus, [1922]; *Et Folk i Nød: Træk af Armeniernes Trængsler*. Herning, 1934; *Falden blandt Røvere: Armenierne paa Apostelen Paulus' Vege: en Orientreise*. [1925].

⁴ Թարգմանական գրքույկներից տես՝ *Det döende Armenien*. Örebro, 1897; M. och O., *Min broders blod: en berättelse om de Kristnas lidanden i Armenien*, Stockholm, 1902; Elisabet Franke, *Hagob och hans små vänner: berättelse från Armenien*, Stockholm, 1909; G. Hawkins, *Turkarnas skräckvälde i Armenien. Fruktsvärdas ankla gelsor av den amerikanska kommissionen*, Stockholm, 1915.

⁵ Maria Anholm, *Det dödsdömda folkets saga*, Stockholm, 1906.

⁶ Վահրամ Փափագյան, *Մէր, սէր, սէր*, էջ 59:

⁷ Pierre Anmeghian, *Visions Scandinaves*, København, 1903.

Կոպենհագենում տպագրվել է Թուրքիայում բնակվող իսլամացած շվեդ գրող Ալի Նուրի Բեյի (Գուստավ Նուրինգ, 1861–1937) «Արդու Համիդը երգիծանկարներում» գիրքը¹, որն ընդգրկում է կարմիր Սուլթանին պատկերող երգիծանկարներ և բանաստեղծություններ, որոնք, ի թիվս այլ երևույթների, դատապարտում են նաև հայոց ջարդերը:

Սկանդինավյան հասարակության մեջ արդեն այս ժամանակահատվածում եղել են մարդիկ, որոնք պաշտպանել են սուլթանին և ժխտել կամ նվազեցրել իրադարձությունները՝ հաճախ օգտագործելով հակահայկական ստերեոտիպեր²: Սակայն մարդու իրավունքների պաշտպանության և քրիստոնեական համերաշխության դիրքերից սկանդինավյան հասարակության մեջ ձևավորված հանրային կարծիքը հիմնականում եղել է հայամետ, անհատները և կազմակերպությունները դատապարտել են վայրագությունները և կոչ արել տարբեր միություններին օգնության ձեռք մեկնել: Իրենց հեղինակավոր ձայնն են քարձրացրել այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են դանիացի գրող և քննադատ Գեորգ Բրանդեսը (1903-ին Ժնևում տպագրած «Հայաստանը և Եվրոպան» գերմաներեն և ֆրանսերեն գրքով³), նորվեգացի գրող Բյորնսթյերնե Բյորնսոնը, եպիսկոպոս, Գանիայի մշակույթի նախարար Հ. Վ. Սթիրը, որը 1897-ին նշավակել է Արդու Համիդի «բնաջնջման սրբազան պատերազմը», ինչպես նաև Շվեդիայի թագավորական ընտանիքի անդամները՝ նորին մեծություններ արքայադուստր Ինգեբորգը⁴ և արքայազն Գուստավը (հետագայում՝ Գուստավ V թագավոր), որը հայտարարել է, թե միջազգային հանրությունը պետք է սատարի «ղծբախտ հայ ժողովրդին»⁵:

Սկանդինավցիներից առաջինը հայ գաղթականներին օգնության ձեռք են մեկնել արդեն տարածաշրջանում գտնվող ավետարանչական քարոզիչները: Պարսկաստանում գործած շվեդ միսիոներ Նիլս Ֆրեդրիք Հոլյերը (1857–1925) մեծապես օգնել է Օսմանյան կայսրու-

¹ Ali Nouri Bey, *Abdul-Hamid i Karikatur: Interioorer fra Yildiz-Kiosk*, København, 1903.

² Matthias Bjørnlund, *Scandinavia and the Armenian Genocide*, նույն տեղում:

³ Georg Brandes *Armenien und Europa*, Geneva, 1903.

⁴ Paul Desfeuilles, *Le mouvement proarménien en Scandinavie, La Voix de l'Arménie*, N 2, 15.I.1918, p. 55.

⁵ "Social-Demokraten," Stockholm, 26.III.1917, տես՝ Marika Stiernstedt, *Armeniernas fruktsvärdas läge*, Stockholm, 1917, էջ 136:

յունից փախած և Իրան ապաստանած հայ գաղթականներին: Նրան օժանդակել է գերմանացի քահանա Հանս Ֆիշերը: Ի դեպ, Հոյերին տարբեր անձինք (ընդամին՝ շվեդական Քարոզչական կազմակերպությունը) քննադատել են՝ իր ուշադրության մեծ մասը հայ գաղթականների վրա բեռելու համար: Նկատենք, որ այս շվեդ քարոզիչը եղել է ոչ այնքան քարոզիչ, որքան ճշմարիտ մարդասեր և ավելին՝ ազատագրական պայքարի ջատագով: Նա նպատակ է ունեցել կազմել հայերի, քրդերի և ազգային այլ փոքրամասնությունների ճակատ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության. այդ առթիվ Կոստանդնուպոլսում հանդիպել է Հակոբ անունով մի հայ հեղափոխականի և մի քուրդ շեյխի: Հոյերի մասին վկայել են, որ նա «ուր էլ որ գնում էր, հանդիպում էր հայերի, քրդերի կամ այլ ազգության մարդկանց, կոչ անում նրանց ապստամբել իրենց իշխանությունների դեմ և ազգային անկախություն ձեռք բերել: Այդ պարագայում նա խոստանում էր օգնության հասնել նրանց»¹:

Արդեն 1897-ին Օսմանյան կայսրությունում հայության վիճակի և համիդյան կոտորածների մասին շվեդերեն գրքույկով («Հալածանքներ և արյունահեղություն Հայաստանում» վերնագրով) հանդես է եկել Արևելյան Հայաստանում միսիոներական բազմամյա աշխատանք կատարած Էրիք Յոն Լարսոնը²: Համիդյան կոտորածների վերաբերյալ վկայություններ է թողել նաև մեկ այլ շվեդ քարոզիչ՝ Ն. Վերները, շվեդական միսիոներական կազմակերպությանը հղած թղթակցության մեջ³:

Դանիայում հայանպաստ շարժման ակտիվիստներից է եղել գրող, լեզվաբան Օգե Մեյեր Բենեդիկտսենը (1866–1927) Շառլոտենլյունդից: Հոր կողմից դանիական հրեա, մոր կողմից իսլանդացի Բենեդիկտսենը 1897-ին ճանապարհորդել է Արևելյան և Արևմտյան Հայաստանում, եղել Երևանում⁴, Պարսկաստանի հայաբնակ վայրերում, ականատես եղել համիդյան կոտորածների հետևանքներին: Նա գրել է երկու գիրք հայության մասին (մեկը ներկայացնում է հայ ժողովրդի

պատմությունը սկզբից մինչև 1925 թվականը)¹: Հրեական ծագումով մեկ այլ դանիացի մտավորականի՝ ակադավոր գրող Գեորգ Բրանդե-սի հետ մեկտեղ նա հիմնել է «Դանսկե արմենիերվեններ» («Հայերի դանիացի բարեկամներ») կազմակերպությունը: Վերջինս, ի թիվս այլ դանիական մտավորականների, նույնպես գրավոր դատապարտել է Արևմուտքի անտարբերությունը հայոց կոտորածների հանդեպ:

1897-ի մարտի 14-ին Բաթումի դանիական հյուպատոսը նամակ է ստացել Դանիայի թագուհուց, որտեղ հայտնվել է, որ Դանիայում թագուհու հովանավորությամբ հաստատվել է ընկերություն՝ հայերին օժանդակելու նպատակով: Ընկերությունը այդ թվականի դրությամբ արդեն հավաքած է ունեցել 14 հազար ռուբլին համարժեք դրամ, որից 5000 ռուբլին Թիֆլիս է ուղարկել մի քահանայի անունով՝ այդ գումարը գաղթականների վիճակը հոգացող որևէ հաստատության հանձնելու նպատակով: Թագուհին միաժամանակ խնդրել է Բաթումի հյուպատոսին իրեն շտապ տեղեկություններ հաղորդել քաղաքի հայ գաղթականների մասին²: Նույն թվականի ապրիլին Կովկասի Հայ Բարեգործական ընկերությունը Դանիայից ստացել է 10 հազար ռուբլի՝ հոգուտ Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականների³:

XX դարի սկզբին Դանիայում և Նորվեգիայում մի շարք մտավորականներ և քաղաքական գործիչներ պահանջել են միջազգային համաժողով հրավիրել հայկական հարցի կապակցությամբ: Ֆրանսիացի մեծանուն գրող Անատոլ Ֆրանսը 1902 թվականի հուլիսի 10-ին հանդես է եկել «Բրյուսելի վեհաժողովը» հռովածով, որտեղ բերել է հետևյալ վկայությունը. «Դանիայում մի շարք պառլամենտականներ, համալսարանի դասախոսներ և քարձրաստիճան հոգևորականներ, նկատի ունենալով հայ ժողովրդին սպառնացող մեծ վտանգը, առաջարկել են բոլոր քաղաքակիրթ ազգերի մասնակցությամբ հիմնել «գուտ մարդկային, առանց քաղաքական բնույթի» մի միություն՝

¹ John Hultvall, *Mission och vision i Orienten*, Stockholm, 1991, s. 150.

² John Larsson, *Förföljeserna och blodbadet i Armenien*, Helsingborg, 1897.

³ N. Werner, *Blodbadet i Armenien och de svenska missionsvänera*, *Missionsförbundet*, 15.02.1898, s. 56.

⁴ Տես *Արձագանք*, 7.09.1897:

¹ Åge Meyer Benedictsens, *Armenien. Et folks liv og kamp gennem to aartusinder*, København, 1925; *Armenien: en folkeskabne*, København, 1927

² *Արձագանք*, 10.01.1897:

³ *Արձագանք*, 27.04.1897:

պաշտպանելու համար այդ մահամերձ ժողովրդին»¹: Այնուհետև նշվում է, որ այդ նախաձեռնության հիման վրա ապրիլի 5-ին Փարիզում կայացել է միջազգային կոնգրես, որին ներկա է գտնվել նաև Գեորգ Բրանդտը:

Մեծ է հատկապես արևմտահայ կարոտյալների շրջանակներում գործունեություն ծավալած սկանդինավցի միսիոներուհիների ավանդը: Գանիուհի, շվեդուհի և նորվեգուհի այդ միսիոներները, որոնք ուսուցչիներ էին, գթության քույրեր, հանրային գործիչներ, թողած ապահով կյանքը, իրենց կյանքն առավել կամ պակաս չափով նվիրեցին հայ ժողովրդի որբերին ու այրիներին՝ նրանց համար տարբեր երկրներում ապահովելով ֆիզիկական պաշտպանություն, աշխատանք և ուսում: Արձակագիր Կարպիս Սուրենյանը 1983-ին Կոպենհագենում գրողների միջազգային հանդիպման ժամանակ կարդացած զեկույցում, հիշելով սկանդինավցի միսիոներուհիների աշխատանքը հայոց մեջ, նրանց տվել է հետևյալ դիպուկ բնորոշումը. «Նեղմիտ միսիոներներ չէին այդ բարեպաշտ կանայք, լայնախոհ, լայնասիրտ և գործնական մարդասիրությունն էր մղում նրանց: Մովորեցին հայոց լեզուն, հարազատացան հայ մարդկանց ու նրանց կենցաղին, նրանց ճակատագրին, հաղթահարելով բոլոր դժվարությունները»²: Միսիոներուհիների լայնախոհության ապացույցներից է այն, որ նրանք նպատակ չեն ունեցել դավանափոխ անել հայերին, մինչև անգամ իրենք են դավանափոխ եղել՝ ընդունելով հայ լուսավորչականություն (ինչպես՝ Քարեն Եփիեմ), իրենց հաստատություններում հավասարապես տեղ տվել ավետարանչական և լուսավորչական քահանաների: Ամենաանլուր մարդկային տառապանքներին և ողբերգությանն ակամատես այդ եվրոպուհիներն իրենց մեջ ուժ գտան շարունակելու իրենց առաքելությունը՝ գրիչ վերցնելով և սերունդներին ի պահ հանձնելով իրենց տեսածները, ուստիև պատահական չէ, որ օսմանյան իշխանությունները

¹ Գորգեն Հովման, Անատոլ Ֆրանսը և հայերը, *Մովետական գրականություն*, Երևան, 1969, ք. 6, էջ 143-144: Հեղինակը Ֆրանսի խոսքերը մեջբերել է «Պրո Արմենիա» պարբերականի 1902 թվականի հունվարի 10-ի համարից, մինչդեռ շարադրանքում նշել է հուլիսի 10-ը:

² Կարպիս Սուրենյան, *Հին պատմություն*, Երևան, 1999, էջ 167:

հանախ խոչընդոտել են նրանց՝ թույլ չտալով ազատորեն տեղաշարժվել:

Ինչպես նշվեց, եվրոպական մամուլը, լայնորեն արձագանքելով համիդյան ջարդերին, հանրային մեծ կարծիք է ստեղծել, ուստիև եվրոպայի բարեգործական մի շարք կազմակերպություններ լծվել են կոտորածներից աուժողներին օգնելու գործին: Ստոկհոլմում 1894-ին ուսուցչուհի Ֆրեդրա Համմարը (1847-1927) և բարոնուհի Ջիզբիդ Քուրքը հիմնել են «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպությունը: Համիդյան կոտորածների տարիներին նրանք կազմակերպել են բանախոսություններ՝ շվեդ հասարակությանը տեղյակ պահելով հայերին հասած փորձությունների մասին: Ֆրեդրա Համմարը մեկնել է Դանիա և այնտեղի կին հասարակական գործիչներին պատմել է, որ ինքը մի տեսիլք է ունեցել, թե ինչպես տառապող կանանց քազմությունը ձեռք է երկարել դեպի քարոզչական երկրներ՝ օգնություն աղերսելով: Մի քանի տարի է պահանջվել, մինչև որ 1900-ին վերջապես հիմնվել է Դանիայի տիկնանց միությունը, որը հայրենակցուհիներին կոչ է արել զորավիզ լինել իրենց հայ քույրերին: Միության շրջանակներում ստեղծվել է հայանպաստ վարչությունը, որի ղեկավարը 23 տարի շարունակ՝ 1900-1923 թվականներին, եղել է կոմսուհի Վանդա Չեմբերլեյն Օքսհոլմը: (Հետագայում այս պաշտոնը վարել են Օքսհոլմի դուստրը՝ Էլզա Վինդը 1940-1966-ին և թոռնուհին՝ քույր Քիրսթեն Վինդը՝ 1966-1989-ին): Այս միությունը սկսել է կազմակերպել հանգանակություններ և Գերմանական նպաստամատույց օգնության միջոցով օժանդակել Խարբերդի, Մարաշի, Վանի և Մուշի գերմանական որբանոցներին: Ավելի ուշ, Շվեդ կանանց քարոզչական ընկերությունը գերմանական և դանիական միությունների հետ մեծապես օգնել է Հունաստան տարագրված հայ գաղթականներին: 1902-ին էլ հիմնվել է «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության նորվեգական մասնաճյուղը: Այս երեք կազմակերպությունները գործել են որպես անկախ հասարակական միություններ՝ սերտորեն համագործակցելով համանման գերմանական և ամերիկյան ընկերությունների հետ:

Դանիայի տիկնանց միությունն առաջինը հայության մեջ աշխատելու է ուղարկել բույր Քրիսթա Համմերին: Վերջինս 1901-ին մեկնել է Խարբերդ և Մեզրե, օգնել որբերին, խնամել հիվանդներին, սովորել է հայերեն: 1903-ին Մեզրեում բացել է «Էմմաուս» դանիական որբանոցը, որը մաս է կազմել Գերմանական օգնության միության կենտրոնին, իսկ որբերը վայելել են սկանդինավյան երկրներից, նաև Ֆինլանդիայից անհատների և կազմակերպությունների հովանավորությունը: Սակայն Համմերի առաքելությունը կարճ է տևել. հիվանդներից վարակվելով ժանտախտով՝ նա մահացել է 1903-ին: Նրա գործն «Էմմաուսում» շարունակել են երկու այլ դանիուհիներ՝ հիվանդապահուհի օրիորդ Բլեբը և Վիլհելմին Գրյունհագենը (հետագայում նրան որոշ ժամանակ օգնել է դուստրը՝ Ջիգրիդ Գրյունհագենը):

20 տարուց ավելի հայերի մեջ գործող, հայերենին քաջահմուտ դանիուհի Ենսինե Օրցը 1904-ից գործել է Խարբերդում և Մալաթիայում, որտեղ բացել է ձեռագործի մասնավոր դպրոց¹: Պատերազմի ժամանակ վերադարձել է Դանիա, 1922-ին հաստատվել Հունաստանում: Մալոնիկում բացել է ձեռագործի դպրոց, որտեղ սովորել են 75 հայ որբուհիներ և աշխատել 30-ից ավելի հայ կանայք: Այն ունեցել է նախակրթարան՝ 150 հայ փոքրիկներով, որոնք նրան անվանել են «սիրելի մայր»: Որբերի մեջ կտրոնով հացի համակարգն է մտցրել: «Դանիայի ճարտարարվեստի առաքելություն Մալոնիկում» կազմակերպության մարմնի անդամներից Յ. Յ. Քիլդսիգի հետ միասին այցելել է Մալոնիկ, այստեղ հիմնել «Դանիայի ճարտարարվեստի առաքելություն հայոց մեջ» կազմակերպությունը և դարձել նրա ղեկավարը: 1927-ին նրա մասին հոդված է լույս տեսել Դանիայի Լեմվիա քաղաքի «Թեսալոնիկ» թերթում, որի շնորհիվ ղեկտեմբերին 19,451.10 դանիական կրոն (5200 դոլար) է հավաքվել նրա կազմակերպության համար: 1928-ին այցելել է ԱՄՆ, Բոսթոնում եղել «Հայրենիքի» խմբագրությունում, նպատակ ունենալով ԱՄՆ-ի հայ և օտար շրջանակներում շա-

¹ Մարի Ճեյքոպսոն, *Օրագրություն. 1907-1919, Խարբերդ*, Անիլիաս, 1979, էջ ԺԹ-Ի:

հագրաբնություն առաջացնել ի նպաստ իր հիմնադրած հաստատության¹:

Շվեդական քարոզչական ընկերությունը 1901 թվականին Քրիսթա Համմերի հետ աշխատելու նպատակով Ալմա Յուհանսոնին (1880-1974) ուղարկել է Մուշ և Մեզրե, որտեղ վերջինս մնացել է մինչև 1915-ի դեկտեմբերը²: Այս առաքինի և անձնուրաց, հայերենին քաջագիտակ շվեդուհին աշխատել է Մեզրեի և Մուշի գերմանական միսիոներական հաստատությունում և որբանոցում: 1915-ի վերջին նա վերադարձել է Շվեդիա, ապա 1920-ին վերոհիշյալ Վիլհելմին Գրյունհագենի հետ մեկնել է Կոստանդնուպոլիս, Սկյուտարում և Մաթրիզյուում օգնություն ցույց տվել հայ որբերին (մինչև 1922-ը), իսկ 1923-1941 թվականներին աշխատել է Մալոնիկի շվեդական նպատամատույց հաստատությունում: Մալոնիկում Յուհանսոնը բացել է մանուֆակտուրա՝ 200-ից ավելի հայ կնոջ ապահովելով աշխատանքով և եկամտով, իսկ Խարիլաոսում (Հունաստան) հայկական մանկապարտեզ է հիմնել: Տնօրինել է նաև Բեշ-Չինար և Խարման Զոյյ գաղթականացները: 1941-ին Ալմա Յուհանսոնը վերադարձել է Շվեդիա, սակայն կապ է պահպանել իր հայ բարեկամների հետ, որոնք նրան մամակներ են ուղարկել՝ կոչելով նրան «Միրելի մայրիկ»: Գրել է երկու գրքույկ՝ «Մի արքայալ ժողովուրդ» և «Հայ արքայականների կյանքը»³: Դրանք 1979-ին ստոկհոլմաբնակ Պետրոս Ջարդարյանը քարգմանել է հայերեն և հրատարակել նախ Փարիզի «Աշխարհ» պարբերականում, ապա առանձին գրքույկով՝ ֆրանսաբնակ պատմաբան Արթուր Բեյլերյանի առաջաբանով⁴: Արդեն 1920-ին դանիուհի

¹ Մ. Վ., Դանեմարկական ճարտարարվեստի առաքելությունը Սելանիկի մեջ. տեսակցութիւն մը օր. ԵՆՍԵՆԻ (sic) Էօրցի հետ, *Հայրենիք*, 24.05.1928:

² Լիպարիտ Ազատան, *Հայ որբերը Մեծ եղեռնի*, Լուս Անճըլէս, 1995, էջ 201-202:

³ Alma Johansson, *Ett folk i landsflykt. Ett år ur Armeniernas historia*, Stockholm, 1930; *Armenisk flyktingsliv*, Stockholm, 1931.

⁴ Վերահրատարակվել է Ուլիսալայի «Հյուսիսափայլ» տարեգրքում (Ալմա Յուհանսոն, Արքայալ ժողովուրդ մը, քարգմանեց Պետրոս Ջարդարյան, հրատարակիչներ՝ Պետրոս Արաջյան, Գասպար Սինարյան, 1995, Բ տարի, էջ 170-190): Ջարդարյանի քարգմանությունից Անահիտ Տեր-Սինայանը հատվածներ է քարգմանել ֆրանսերեն՝ ընդգրկելով իր «Մուշը 1915-ին ըստ Ալմա Յուհանսոնի» հոդվածում (տես Anahide Ter-Minassian, Mouch 1915 selon Alma Johansson, *Հայկական հայագիտական հանդես*, ԺԵ, 1995, էջ 57-83): Հայոց ցեղասպանության մասին Յուհանսոնի վկայությունները,

Ամայյա Լանգեն Յոուանտնի մարդասիրական գործունեության մասին գրել է իր «Արյուն հայոց պատմությունից» գրքույկում:¹ Այնա Յուանտնի հիշատակը մինչ օրս վառ է հայերի մեջ²:

Սկանդինավցի միսիոներուհիներից իր բացառիկ գործունեությամբ առանձնանում է Քարեն Եփփեն, որի անունը, հայտնի լինելով հատկապես Մերձավոր Արևելքի հայ սփյուռքում, ցավոք քիչ ծանոթ է Հայաստանում³: Այս մեծ մարդասեր դանիուհին ծնվել է 1876-ի հուլիսին, Լյունդերգ քաղաքում, ուսուցչի ընտանիքում: Նրա հայրը ցանկացել է դատերը բժիշկ տեսնել, սակայն Քարենը 1902-ին լսելով Օգե Մեյեր Բենեդիկտսենի դասախոսությունը հայոց կոտորածների մասին՝ վճռել է մեկնել աշխատելու նրանց մեջ: Ծնողները համաձայն չեն եղել՝ Քարենի առողջության պատճառով: Աղջիկը գիշերները չի բնել, որոշել է ամեն գնով մեկնել հայերի մոտ: Մեկ տարի է տևել, մինչև որ Եփփեի ծնողները տվել են իրենց համաձայնությունը: 23-ամյա Քարենը 1903-ին դարձել է Գերմանիայի Արևելյան միսիոներական ընկերության անդամ, որի նախագահն էր հայ ժողովրդի մեծ բարեկամ Յոուանտն Լեփսիուսը: Վերջինս էլ Քարենին առաջարկել է աշխատանքի անցնել Ուրֆայում: Այնտեղ օրիորդ Եփփեն ստանձնել է 1897-ին Գերմանիայի Արևելյան միսիոներական ընկերության հիմնած 250 մանուկ ունեցող որբանոցի տնօրինությունը: Կրոնական և դավանական նախապաշարմունքներից զերծ Քարեն Եփփեն ընդունել է հայ

լուսավորչական դավանանքը և կատարելապես յուրացրել հայոց լեզուն: Ուրֆայի շրջակայքում նա ամառանոցներ է հիմնել, ցորեն և խաղող աճեցրել, կազմակերպել արհեստանոցներ հայ աշխիների համար: Մի հարուստ դանիացի նրան օժանդակել է նյութապես՝ տարեկան 200 ոսկի նվիրելով: Եփփեն մարդկանց հետ շփվելիս եղել է շատ ճկուն և գործնական: Երբ 1915-ին արստրված զեյթունցիները եկել են Ուրֆա, Քարենը նրանց բժշկական օգնություն է ցույց տվել, 50 հայի ապաստանել իր տանը՝ վտանգելով սեփական կյանքը: Այս մասին հիշված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում. «Ուրֆայում չէ՞ր Քարեն Եփփեն, որն իր տանը փախստականների էր ապաստանել, ձեռքերը տարածած կանգնել դռան շենքին, զափթիեների դեմ, մինչև սրանք հեռացել էին, քանի որ չէին հանդգնել սպանել դանիացի կնոջը»⁴:

Քարեն Եփփեն 1917-ին վերադարձել է Դանիա՝ առողջական վիճակը բարելավելու, ապա 1920-ին՝ հաստատվել Հալեպում: Բազմաթիվ թղթակցություններով նա կապ է հաստատել եվրոպական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ապահովելու համար հայ գաղթականներին հատկացվող նյութական աջակցությունը: Այդպես ծնունդ է առել «Հայերի դանիացի բարեկամներ» (De Danske Armeniervenner) կազմակերպությունը, որը 1927–1936 թվականներին հրատարակել է «Արմենիերվներ» («Հայերի բարեկամներ») պարբերականը:

1920-ին, երբ Ֆրանսիայի քաղաքականության հետևանքով հայաթափ է եղել Կիլիկիան, 20 հազար հայ գաղթել է Սիրիա: Եփփեն կանանց հավաքել է և նրանց համար հնարավորություններ ստեղծել ձեռագործով ապրուստ վաստակելու: Մեկ տարվա մեջ նրան հաջողվել է 60 հայուհու ապահովել աշխատանքով: Երբ Ժնևում 1921-ին Ազգերի Լիգայի առաջին ժողովում դանիուհի օրիորդ Ֆորհամմերի առաջարկով հատուկ հանձնախումբ է ստեղծվել՝ առևանգված հայ կանանց և որբերին ազատելու նպատակով, այդ հանձնախմբի լիազոր կոմիսար է նշանակվել Քարեն Եփփեն: Ըստ այդմ Եփփեն ունեցել է գործելու ազատություն, ձեռք բերել նյութական խոշոր միջոցներ և

կատարված 1915-ի նոյեմբերի 20-ին, լույս են տեսել նաև ուսերեն բարգձմանությամբ (տե՛ս *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии*. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний Вардгес Микаелян. Ереван, 1995, стр. 255-262): Լուս Անգլեխումս 2000-ին լույս է տեսել «Այնա Յոուանտն, Մուշ – 1915 (օրագիր)» գիրքը: 2008-ին Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտը հրատարակել է Այնա Յոուանտնի «Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից» գիրքը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

¹ Amalia Lange, *Ett blad ur Armeniens historia*, Stockholm, 1920, s. 31-34.

² Ստոկհոլմի գերեզմանատներից մեկում գտնվող նրա շիրիմը ստոկհոլմաբնակ Հայկ Արամյանի հոգածո ուշադրության կենտրոնում է: Երևանում 1997-ի մայիսի 15-ին «Հայաստան-Շվեդիա» միությունը կազմակերպել է Յոուանտնի նվիրված ցերեկույր:

³ Եփփեի կենսագրական տվյալների մի մասը վերցված է՝ *Ալիս*, Նիլ Եորը, մարտ-ապրիլ, 1930, ք. 4, էջ 4-7:

⁴ Ֆրանց Վերֆել, *Մուսա լեռան քառասուն օրը*, Երևան, 1987, էջ 401:

մինչև անգամ՝ քաղաքական կշիռ, որ ամբողջապես օգտագործել է ի նպաստ Սիրիայում ապաստանած հայության: Նա կոչ է արել ամբողջ աշխարհին նվիրատվություններով սատար կանգնել իրեն, և նրա կոչին արձագանքել են մինչև անգամ Նոր Ջեռանդիայից: Եփիեի՝ լիազոր կոմիսարի պաշտոնում նշանակվելու առաջին երեք ամսում արլեն հանձնախմբին հաջողվել է հարյուր հայ կին և աղջիկ ազատել մահմեդական գերությունից: Եփիեն 1923-ի սեպտեմբերին Բրյուսելի համալսարանում բանախոսել է «Քրիստոնյա կնոջ դրությունն իսլամ Արևելքում» թեմայով, հայտնելով, որ իրեն հաջողվել է հարեմներից մոտ 400 հայուհու փրկել, ինչպես նաև նշել է, որ սիրիական անապատների վրանաբնակների մոտ և անապատում տակավին հազարավոր հայ կանայք են մնում¹: Հետագայում հարեմներից Եփիեի ջանքերով փրկված հայ կանանց թիվը հասել է երկու հազարի: Մահմեդական գերությունից հայուհիներին փրկելու դանիուհի մարդասերի այս առաքելությունն ավարտվել է 1926 թվականի դեկտեմբերի 31-ին²:

Քարեն Եփիեի միջամտությամբ «Հայերի դանիացի բարեկամներ» ընկերությունը և Յոհաննես Լեփսիուսի միսիոներական ընկերությունը որդեգրել են յուրաքանչյուրը 300 հայ որբի: Այդ դպրոցի հիման վրա ստեղծվել է Հալեպի Մահալյան վարժարանը: Եփիեն մեծապես օժանդակել է նաև այդ վարժարանին կից Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինությանը (1927–1933 թվականներ), հաստատել Ազգերի Լիգայի Հայ օգնության միությունը Հալեպում: Իսկ Ջերեջում դանիացի հայասերների ընկերությունը խնամել է 100-ի չափ որբերի, ինչպես նաև ունեցել են ցերեկային մի պատասպարան՝ աղքատ ընտանիքների զավակների համար³:

Բարոնուհի Օլգա Շաֆալիցկին՝ Գանիական կանանց առաքելական միության նախագահը, քարտուղար Ինգեր Քրիսթենսենի հետ միասին մի քանի ամիս անց է կացրել Սիրիայում և Պաղեստինում, ստուգել աշխատանքները: Կազմակերպության նախագահ Օգե Բենեդիկտսենը շվեդ գործընկերների հետ լրացուցիչ 40 հազար քրոն է հար-

¹ *Ապագայ*, Փարիզ, 6.10.1923:

² Dugué (médecin principal), La situation des réfugiés au Liban et en Syrie, *Revue des études arméniennes*, tome VIII, 1928, p. 54.

³ *Հայրենիք*, 14.01.1932:

վաքել՝ հայ երիտասարդների համար գաղթականացան ստեղծելու նպատակով, Քարեն Եփիեի ղեկավարության ներքո⁴:

Մրանից բացի, Եփիեի ջանքերով 1134 հայեր գտել են իրենց ազգականներին և միացել աշխարհի տարբեր երկրներում: 342 հոգու արհեստ է սովորեցրել, 66-ի հանձնել որբանոց: Բազում որբայրիներ աշխատանք են գտել ասեղնագործության աշխատանոցում (գործել է մինչև 1947-ը), նրանց գործած ժանյակները Եփիեն վաճառքի է հանել Եվրոպայում: Չեռք է մեկնել նաև սիրիական հյուղավանների՝ Թել Արմենի, Թել Սամենի, Պետրոսավանի հայ բնակիչներին, Խըրբեք էլ Ռըզ գյուղում բացել հայկական որբանոց, որ ղեկավարել է իր օգնականուհին՝ դանիուհի Ենի Ենսենը: Քարեն Եփիեն հայ գաղթականների մասին հողվածներով աշխատակցել է եվրոպական մասնույին⁵, ինչպես նաև հրատարակել երեք գրքույկ. շվեդերեն՝ «Եփրատի հովտի հայագաղութը» և գերմաներեն՝ «Փրկված մահմեդականությունից» և «Նոր հայեր Աբրահամի երկրում»⁶: Քարեն Եփիեն իրեն անվանել է «ազգասեր հայ մը»: Պարզևատրվել է ֆրանսիական «Պատվո լեգեոնի» առաջին կարգի շքանշանով:

Քարեն Եփիեի մասին արդեն իսկ նրա կենդանության օրոք առանձին գրքույկներով հանդես են եկել անգլիացիներ Սփաուր Հեբեն (1924) և Ք. Ուինթերը, դանիացիներ Ինգերորգ Մարիա Սիքը (Շքութգարդ, 1929) և Սվենո Սեդերգրին Բեքը⁷, իսկ Բեյրութում 1937-ին լույս է տեսել «Երկու Տանիմարբացի յոթելեարներ» գրքույկը: Մեր օրերում

⁴ ՀԱԱ, ՊՅՈՒՆ 409, ցուցակ 1, գործ 1318:

⁵ Karen Jeppe, *Kranken und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo, Mitteilungen über Armenien*, Bäle, 1931, nu. 52.

⁶ Karen Jeppe, *Erlöst von Mohammedanismus*. Potsdam, 1926; *Den armeniska Kolonisationen i Euftrat-trakten*. Stockholm, 1930; *Neu-Armenier in Abrahamsland*. Potsdam, 1930.

⁷ Maria Sick, *Karen Jeppe*, Stutgard, 1929. Chr. Winther, *Armenien og Karen Jeppe* [Copenhagen] 1936. Sven Cedergren Bech, *Hos et folk uden land, Karen Jeppe – Armeniernes ven*, տե՛ս վերջինի հայերեն թարգմանությունը՝ *Մի աներկիր ժողովրդի մոտ. Կարեն Եփիեի հայերի բարեկամ*, դանիերենից թարգմանեց Հասմիկ Գ. Կյուրեղյանը, Վանաձոր, 2000: Եփիեի սամոսիներից Ամնա Դարջյանը (Բարսումյան) հետագայում Երևանում 1958-ին գրել է «Հուշեր՝ որբանոցիական իմ կյանքից» չափածո ստեղծագործությունը, որը նվիրել է «հիմնամակարտուս և ողջ ազգիս դաժան օրերի մեծ բարերար Կարեն Եփիեի անմահ հիշատակին» (պոեմը լույս է տեսել 30 էջանոց գրքույկով. Հալեպի «Ոսկետառ» տպարանում, առանց հրատարակության բվականի):

Եփփեի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրությամբ հանդես է եկել Հակոբ Չոլաքյանը¹: 1928-ին Հալեպում տեղի հայ թեմի առաջնորդ Արտավազ վարդապետ Գալենտերյանի նախաձեռնությամբ նշվել է Եփփեի 25-ամյա գործունեությունը: «Տանիմարքացի այս օրիորդին ամուսնը մեծ հմայք ունի առհասարակ ընդհանուր Հայութեան մեջ, որուն անձնուէր մէկ անդամը եղած է բիրապատիկ աւելի քան բազմաթիւ Հայեր»²:

Քարեն Եփփեն մահացել է 1935-ի հուլիսի 7-ին և հայկական ծեսով թաղվել Հալեպի Շեյխ Մաքսուդի հայկական գերեզմանատանը, որտեղ մինչ օրս կանգուն է նրա շիրիմը՝ հայերեն և դանիերեն արձանագրություններով:

Հալեպում Քարեն Եփփեի հիմնած այրիանոցի տարածքը 1947-ին «Հայերի դանիացի բարեկամներ» ընկերությունը փոխանցել է Բերիո թեմի ազգային առաջնորդարանին. վերջինս այդ կալվածքը հատկացրել է նորաբաց մի դպրոցի, որ հետագայում պիտի կոչվեր «Քարեն Եփփե ազգային ճեմարան»: 1996-ին դանիացի թեմադրիչ Բենի Արոսը նկարահանել է «Այնքան բարձր մի ճիչ. «հայերի մոր»՝ Քարեն Եփփեի մասին» տեսաֆիլմը, որը Գանիայի եկեղեցական կազմակերպության, «Հայֆիլմի», Յուլինգի տեղական պատմության արխիվի և Գանիական ռադիո-հեռատեսիլի համատեղ արտադրություն է:

1907 թվականից հայերի մեջ գործել է նաև մեկ այլ անձնավեր դանիուհի՝ Մարիա Յակոբսենը (1887, Օրիուս–1960, Լիբանան), որի ազգանունը հայ շրջաններում գործածվել է Ջեյքքսըն ձևով: 15 տարեկանում նա ունկնդրել է բարոնուհի Քուրքի դասախոսությունը հայոց կոտորածների մասին: 1906-ին ավարտելով հիվանդապահուիյների դասընթացները՝ Յակոբսենը վճռել է մեկնել հայերի մեջ աշխատելու: Որպես դանիական «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության ներկայացուցիչ նա մինչև 1919 թվականն ապրել է աշխատել է Խարբերդում, որտեղ բացել է որբանոց, փրկել և օգնություն

¹ Յակոբ Չոլաքյան, *Քարեն Եփփե հայ գողգորային և վերածնունդին հետ*, Հալեպ, 2001:

² Հայկ-Արան Քիպարեան, Փարիզի Պուվատ ժուռնալին դեպի Արևելքի գաղթականները, *Կեանք և արուեստ*, Փարիզ, Ե. տարի, 1935, էջ 72:

ցույց տվել հայ մանուկների ու կանանց, ակնառես եղել Հայոց եղեռնի սարսափներին, որոնք արտացոլել է պատմական մեծ արժեք ներկայացնող իր օրագրում¹: 1922-ին հաստատվել է Լիբանանում և մինչև կյանքի վերջն ապրել Բիբլոսում: Այստեղ Յակոբսենը որբացած հայ մանուկներին հավաքել է մի հարկի տակ՝ այն անվանելով ոչ թե որբանոց, այլ «Թռչնոց բույն»: Հաստատությունն ունեցել է դպրոցի կարգավիճակ, որն առաջնորդվել է Բեյրութի տարրական դպրոցների ծրագրով: Աշակերտները եղել են մեծ մասամբ աղջիկներ²: «Թռչնոց բույնի» խնամակալն են դարձել Գանիայի Եկեղեցասեր տիկնանց միությունը և լիբանանահայ գաղութը: Որբերը նրան սիրով «մամա Յակոբսեն» են անվանել: Վերջինս իր որոշ աշակերտների ուղարկել է Գանիա՝ կրթություն ստանալու, որոնցից էր, օրինակ, Կիպրոսի Մելգոնյան վարժարանում և Սփյուռքի այլ հայկական կրթօջախներում սպորտի ուսուցիչ Հակոբ Աճեմյանը, որը տիրապետել է դանիերենին և հայության մի քանի սերունդների կրթել դանիական մարմնամարզության համակարգով³:

Մարիա Յակոբսենը, իր իսկ ցանկությամբ, թաղվել է «Թռչնոց բույնի» տարածքում, որտեղ մինչ օրս գտնվում է նրա շիրիմը՝ հայերեն և դանիերեն արձանագրություններով:

Ի դեպ, Լոնդոնում 2001-ին Մարիա Յակոբսենի օրագրության վերահրատարակման կապակցությամբ բացվել է դանիական միսիոներական արխիվներից բաղկած՝ հայությանը վերաբերող լուսանկարների ցուցահանդես, որտեղ ներկայացվել են 1900–1919 թվականների լուսանկարներ՝ Խարբերդից և Մեզրեից:

¹ Յակոբսենի օրագրությունը լույս է տեսել դանիերեն և անգլերեն (թարգմանիչ՝ Քիրսթեն Վինդ), երկու տպագրությամբ, երկրորդը՝ 2001-ին, «Կոմիտաս» ինստիտուտի հրատարակությամբ. Maria Jakobsen, *Diaries of a Danish Missionary, Harpoot. 1907–1919*, translated by Kirsten Vind, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2001: Ներքես նախակոպոս Բախտիկյանի և Սիիրան Սիմոնյանի արևմտահայերեն թարգմանությամբ նրա օրագրությունը լույս է տեսել 1979-ին, Անթիլիասում՝ դանիերեն ծեռագրի լուսապատճենով հանդերձ (Մարի Շեյքքապըն, Օրագրություն...): Հատվածաբար թարգմանվել է նաև արևելահայերեն («1915. պատառիկներ օրագրություններից», Երևան, 1995):

² Հ. Ա. Չազմագճեան, Գանիական Թռչնոց բույնը, *Հայաստանի կոչնակ*, 24.08.1940, ք. 34, էջ 838:

³ Տե՛ս Կարայիս Սուրենյան, *Հին պատմություն*, էջ 154:

Մարիա Յակոբսենի մահից հետո «Թռչնոց բույնի» տնօրեններ կամ պատասխանատուներ հաջորդաբար նշանակվել են բույրը՝ Աննա Յակոբսենը¹, Մագդա Սորենսենը, պատվելի Օլուֆ Փասսբեն և Յոն Մշյուրին: Լիբանանում ապաստանած հայերի մեջ աշխատել է նաև «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության հայկական կոմիտեի նախագահ Էլզա Վինդը (ծն. 1891), որը գրել է «Հայ երեխաները. Խարբերդից Լիբանան» գրքույկը² և նույն պաշտոնում նրան փոխարինած դուստրը՝ բույր Քիրսթեն Վինդը (ծն. 1919): Երբ «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպությունը 1970-ին որոշում է ընդունել «Թռչնոց բույնը» փոխանցել հայ հասարակությանը, այդ առթիվ Քիրսթեն Վինդը ժամանել է Լիբանան և բանակցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի հետ: Նույն թվականի հուլիսի 1-ից հաստատությունն անցել է Կիլիկիո կաթողիկոսարանի խնամակալության տակ: Քիրսթեն Վինդը բազմիցս այցելել է Լիբանան, ծանոթ եղել Կիլիկիո թեմի, այնուհետև՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ: Նա չորս անգամ այցելել է նաև Հայաստան (1979, 1983, 1993, 1995), հանդիպումներ ունեցել Էջմիածնում: Վինդը նաև դանիերենից անգլերեն է թարգմանել Մարիա Յակոբսենի «Օրագրությունը»: 2002-ին հրատարակած իր հուշագրքում Քիրսթեն Վինդը մանրամասն պատմել է «Թռչնոց բույն» կատարած իր այցերի և հայ ժողովրդի հետ ունեցած շփումների մասին³:

Մեզրեի հիվանդանոցում 1909 թվականից աշխատել է նաև մեկ այլ շվեդուհի՝ Քարեն Մարիա Փեդերսենը (1881), որը 1914-ին փոխարինել է Դանիա վերադարձած Վիլհելմին Գրյունհագենին: Փեդերսենը նամակներում բազմաթիվ սարսափազդու դրվագներ է նկարագրել հայոց ցեղասպանությունից: Հայուհի Վերգինեի ճակատագիրը պատ-

¹ Միլվա Կապուտիկյանը 1960-ականների սկզբին այցելելով Լիբանան՝ հանդիպել է «ախորժավոր հայերեն» խոսող Աննա Յակոբսենին («ափոտակամագ, գունատ և ազնիվ դեմքով տարեց» այդ կնոջը, որի հայերեն նամակը՝ «սիրտը սեղմելու չափ սիրելի բվացող տառապալաններով» նա պահել է որպես մասունք) և մասնակցել «Թռչնոց բույնի» նախակրթարանում ի պատիվ իրեն տրված աշակերտական հանդեսին (Միլվա Կապուտիկյան, *Զարավանները դեռ քայլում են*, Երևան, 1964, էջ 214-215):

² Elsa Vind, *Armeniske børn: Fra Harpoot til Libanon*. København, 1949.

³ Steu Kirsten Vind, *Aldrig feerdig – altid på vej*, Århus, 2002.

կերված է Ստոկհոլմում Փեդերսենի հրատարակած գրքույկում¹, որը լույս է տեսել նաև գերմաներեն²: Իսկ Մեզրեի «Էլիմ» դանիական որբանոցը ղեկավարել է վերոհիշյալ Ենի Ենսենը, որը 1918-ին, որբանոցը ռազմական հիվանդանոց դարձնելուց հետո տեղափոխվել և Քարեն Եփսեի հետ գործել է Միրիայում:

«Գերմանական Ռազմական Առաքելության» կազմում 1914-ի հոկտեմբերից մինչև 1915-ի ապրիլը Էրգրունում աշխատել է գերմանական Կարմիր խաչի հիվանդապահուհի նորվեգացի օրիորդ Թորա Ա. ֆոն Ուեդել-Յարլսբարգը, որի վկայությունները հայկական ջարդերի մասին հրատարակել է Շվեյցարիայի Հայանպաստ կոմիտեն «Որոշ փաստաթղթեր 1915-ին հայերի ճակատագրի մասին, հուլիսի 29, 1915» ("Quelques documents sur le sort des Arméniens en 1915, 29 Juillet, 1915") գրքույկում: Այն Երվանդ Ճյուղերյանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել արևմտահայ մամուլում, արտատպվել Թիֆլիսի «Մշակում»³: Ի դեպ, վերջինում վկայված է, որ օրիորդ Ուեդել-Յարլսբարգի վկայությունները հետագայում մտել են Ռեքնե Պինոնի գրքի մեջ. ամենայն հավանականությամբ նկատի է առնված «Հայերի ճնշումները. գերմանական մեթոդներ, բուրբակաճան աշխատանք» գրքույկը⁴:

Հայերին օժանդակած անձնվեր սկանդինավուհիներից էր նաև նորվեգացի բժշկուհի Բողիլ Բյորնը (1871–1960): Նա 1906–1916 թվականներին աշխատել է Մուշում և Մեզրեում, տիրապետել հայոց լեզվին: Եղել է Մուշի որբանոցի գլխավոր պատասխանատու⁵: Նրա հետ որբանոցում աշխատել է նաև մեկ այլ նորվեգուհի՝ բույր Քիրսթինեն⁶:

¹ Karen Marie Pedersen, *Digin Virginie: en armenisk kvinnas lidanden*, Stockholm, 1920.

² Karen Marie Pedersen, *Digin Virginie, die Leiden einer armenischen Frau*, Potsdam, 1926.

³ Գերման հիւանդապահուհիները կը պատմեն հայկական ջարդերը, *Մշակ*, 12.01.1917, էջ 1-2: Այստեղ օրիորդ Ուեդել-Յարլսբարգի անունը սխալմամբ նշված է Ֆյորա:

⁴ Renée Pinon, *La Suppression des Arméniens. Méthode allemande, travail turc*, Paris, 1916.

⁵ Dr. Johannes Lepsius, *Deutschland und Armenien*, Potsdam, 1919, S. 180–182.

⁶ Վահան Փափազյանը Քիրսթինենին հիշել է որպես գերմանուհի, իսկ Բողիլին՝ շվեդուհուհի, նրա անունն էլ գրել Բողլեր (Պողլեր) ձևով. «Այլի կ'իյնար նաև Շուտացի շուտաեր (գերմաներեն Schweseter՝ բույր – Ա. Բ.) Պողլեր՝ խելացի, լուրջ և պատ-

Ըստ Մարիա Յակոբսենի օրագրության՝ թուրքական իշխանությունները նրան վտարել են Մեզրեից, Բողիլը հայերի փոքր խմբով գնացել է Բիթլիս, որտեղ նրան ստիպել են թողնել հայերին և հեռանալ¹:

Բողիլ Բյորնը փաստորեն եղել է Մուշի կոտորածի միակ վկան: «Նորվեկիացի քոյրը հոն գտնուած և տեսած է, որ 1915 յուլիս 17-ին Խարբերդէն թնդանօթներ ուղղելով քաղաքի վրայ երեք օր թնդանօթով քանդած են ամբողջ հայկական տուներն ու հաստատութիւնները: Մէկ կողմէն ալ ջարդը շարունակած է քաղաքին մէջ իսկ. կիներ, մանուկներ, տղաքներ մոտակայ գիւղերու ախոռներուն և մարագներուն մէջ հաւաքելով՝ ամբողջովին այրած են: Ինք տեսած է, որ ոչ մէկ ապստամբական շարժում պատահած է Հայոց կողմէ, ընդհակառակը, երբ ինք կառավարիչ Սերվէթի գացած է իր մէկ քանի հայ պաշտօնեաներու համար, անիկա անդին իր գլխուն վրայ կախուած պատկեր մը ցոյց տալով ըսած է. «...Մակեդոնիոյ մէկ տեսարանն է այս, հոն ինչ որ ըրին քրիստոնէաները մեզի, մենք ալ նոյնը պիտի ընենք իրենց»²: Կոտորածից հետո քարայրերի մեջ թաքնված յոթ մարդու է կերակրել քոյր Բողիլը (հինգ կին, մեկ տղամարդ և մի երեխա), որոնք փրկվել են որպես նրա աշխատակիցները: Նորվեգուհին գնացել է Խարբերդ՝ ճանապարհին ակամատես լինելով սարսափելի տեսարանների. վերադառնալով Մուշ՝ մնացել է այնտեղ մինչև ռուսների գալը³: Քոյր Բողիլը Նորվեգիա է վերադարձել 1918-ին: Անտարբեր չմնալով հայ որբերի հանդեպ՝ 1922-ին մեկնել է Կոստանդնուպոլիս և աշխատել տեղի հայկական որբանոցներից մեկում⁴, իսկ այնուհետև՝ Խորհրդային Հայաստանում, աշխատելով Ալեքսանդրապոլի (Լենինական) որբանոցներում:

1926-ին Բողիլ Բյորնը տեղափոխվել է Սիրիա՝ շարունակելու աշխատանքը հայ գաղթականների մեջ¹:

Մինչև Առաջին աշխարհամարտը Մեզրեի աղջիկների վարժարանը տնօրինել է դանիուհի Հանսինե Մարշերը, որն աշխատել է գերմանական կազմակերպության հետ: Գերմանուհի քոյր Բլարա Փֆայ-ֆերի հետ Թուրքիայից հեռացել է 1916-ին՝ ակամատես լինելով իր աշակերտների արսուրդելուն, ճանապարհին տեսնելով կոտորածների սարսափները, Գիարբեքիրում հանդիպելով թուրքերի մոտ ստրկության վաճառված հայ մանուկների: 1919-ին Հանսինե Մարշերը հրատարակել է իր հիշողությունները՝ «Տառապանքներ մյուս կողմից» վերնագրով²:

Արևելյան Հայաստանում և Իրանում հայ գաղթականներին օգնություն է ցույց տվել շվեդ բողոքական քարոզիչ Էլին Շառլոտտա Մյունդվալը, որի մասին խոսք եղավ քարոզիչներին նվիրված գլխում: Հայերի մեջ աշխատել և հայանպաստ գրքույկներով հանդես են եկել նաև դանիուհիներ Հեդվիգ Անդրեն («Մանկան արցունքներ. մանուկների պատմություններ Հայաստանից») և արդեն հիշված Ենսինե Օրցը («Հայ նահատակներ»)՝ այս գրքույկները տպագրվել են Կոպենհագենում՝ առանց հրատարակման թվականի: Հայ որբերի մասին վերջին հրատարակությունը եղավ Աքսել Գրամի «Հայ գաղթականների մեջ Հունաստանում. հայերի մեջ գործած միսիոներուհի Մարգարե Եփսեցի հուշերի հետ միասին» (1953) գրքույկը⁴:

Ինչո՞վ բացատրել հայության մեջ գործած սկանդինավյան գրքության քոյրերի այսքան մեծ թիվը: Նկատի ունենանք, որ հայերի մեջ աշխատած մյուս ազգերի միսիոներուհիները, հիվանդապահուհիների մեջ մեծ մասամբ եղել են դարձյալ հյուսիսցիներ (անգլուհիներ, անձնվեր էստոնուհի Հեդվիգ Բյուլը), գերմանուհիներ, սակայն ոչ կենտրոնական կամ հարավային Եվրոպայի այլ ժողովուրդների ներ-

բաստում միսիոնարուհի մը, որ անգլահատեղի ծառայութիւն ըրա Մշոյ ժողովուրդին» (տե՛ս Վահան Փափազեան, *Իմ յուշերից*, հ. 2, Պէյրուք, 1952, էջ 347):

¹ Maria Jakobsen, *Diaries of a Danish Missionary...*, p. 133.

² *Ժողովրդի ծայրը - Ժամանակ*, Կ. Պոլիս, 22.1.1922:

³ Նույն տեղում:

⁴ Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում մենք հայտնաբերել ենք Բողիլ Բյորնի անգլերեն երկու նամակը՝ ուղղված լոնդոնաբնակ հասարակական գործիչ, բանասեր Արշակ Սաֆրաստյանին (ՀԱԱ, ՊՖոնդ 412, գործ 980, վավերագրեր 1, 2), որ հրատարակել ենք թարգմանաբար (տե՛ս Արծվի Բախչինյան, *Հայասեր նորվեգացի գրքության քոյրը*, *Նոր հորիզոն*, 2001, ք. 2, էջ 12-13):

¹ Մարի Ելյքոպսն. *Օրագրութիւն...*, էջ 132:

² Hansine Marcher, *Oplevelser Derovrefra*, København, 1919.

³ Hedvig Andrae, *Barnatårar. Barnberättelse från Armenien*; Hansine Marcher, *Oplevelser derovre fra*, København; Jensine Ørtz, *Armeniske martyrer*. København.

⁴ Axel Gram, *Blandt armeniske Flygtninge i Grækenland: med Erindringer af tidligere Armeniermissionær Margrethe Jepsen*. Herning, 1953.

կայացուցչուհիներ: Մի կողմ բողոքներով ստեղծված հատուկ կազմակերպությունների առկայությունը և հաշվի առնելով հանդերձ հյուսիս-եվրոպական երկրներում զարգացածության բարձր աստիճանը, հասարակական կյանքի կազմակերպվածության մակարդակը, բարեգործական հաստատություններում կանանց մասնակցության մեծ տոկոսը՝ կարևոր է նաև այն հանգամանքը, որ սկանդինավցիները, մյուս եվրոպական ազգերի համեմատ, բավական բարեպաշտ են, առաքինի, իրենց գործողություններում գործնական, և մանկուց նրանց ստացած քրիստոնեական դաստիարակությունը կրել է ոչ թե տեսական կրոնական-անհատապաշտական, այլ միանգամայն մարդասիրական բնույթ...

Միսիոներների վկայություններից բացի հայկական ցեղասպանության վերաբերյալ հատուկ արժեք են ներկայացնում նաև Օսմանյան կայսրությունում գործած սկանդինավցի ռազմական և պետական գործիչների գրությունները: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում Շվեդիայի դեսպան Քոսովա Անբարսվերդը և ռազմական կցորդ Էյնար աֆ Վիրսենի զեկուցագրերը նույնպես հաստատում են, որ Թուրքիայում ազգային փոքրամասնությունների և մասնավորապես հայերի հանդեպ կատարվածը եղել է ցեղասպանություն: Այսպես, Անբարսվերդը 1915 թվականի հուլիսի 6-ին Շվեդիայի արտաքին գործերի նախարար Քնյուս Վալենբարգին գրած նամակում նշել է, որ «օգտվելով արտաքին ճնշումների բացակայությունից, երիտասարդ թուրքերը մեկընդմիջտ վերջ են տալիս հայկական հարցին ամենապարզ միջոցով՝ բնաջնջելով (utrotandet) հայ ժողովրդին»: Մեկ այլ զեկուցագրում դեսպանն օգտագործել է «atplana» բառը, որը նույնպես նշանակում է բնաջնջել: 1917-ին Օսմանյան կայսրությունում համատարած սովի մասին գրելիս Շվեդիայի դեսպանատան կցորդ Ալգրենը նշել է աշխատուժի պակասի մասին, որը նա համարել է «հայկական ցեղի բնաջնջման հետևանք»: Ռազմական կցորդ Էյնար աֆ Վիրսենն իր «Հիշողություններ խաղաղությունից և պատերազմից» գրքում «Մի ազգի սպանությունը» գլխում ներկայացրել է հայոց ցեղասպանությունը:

Կոստանդնուպոլսում գործած դանիական դիվանագիտության դեկավար Կառլ Էլիս Վանդելը նույնպես իր զեկուցագրերում բազմիցս նշել է հայկական կոտորածների վերաբերյալ, այդ թվում՝ 1915-ին պոլսահայերի ձերբակալությունների և դեպի Փոքր Ասիա նրանց աքսորի մասին¹:

Առաջին աշխարհամարտի տարիներին Շվեդիայի տարբեր քաղաքներում տեղի են ունեցել հայությանը նվիրված զանազան միջոցառումներ, որոնց մասնակցել են տարբեր մասնագիտության անձնավորություններ՝ շվեդ հայագետներ Էվալդ Լիդենը (1862–1939), Հերբերթ Փեթերսոնը (1881–1927), տիկին Լիդիազենը, լեզվաբան, Լուդի համալսարանի հնդկագիտության ուսուցչապետ Էրբե Թյունելը (1877–1947), Ստոկհոլմում բնակվող ֆրանսիացի գնդապետ Միշուրը և բարոն դը Վոն, ինչպես նաև Սյոդերբերգը, Յ. Հիրնը, Ֆիշիերը²: Շվեդական մամուլը 1914–1920 թվականներին Հայաստանին անդրադարձել է ավելի քան 50 անգամ³:

1912-ին ստեղծված Հայ ազգային պատվիրակությունը, Հայկական հարցը եվրոպական երկրների համաժողովներում պաշտպանելու համար, ակտիվորեն համագործակցել է սկանդինավյան հայասերների հետ: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի կոնդակով պատվիրակության լիազոր ներկայացուցիչ է նշանակվել Պողոս Նուպար փաշան: Պատվիրակությունը կապեր է ունեցել Կոպենհագենի դանիահայկական ընկերության նախագահ Օգե Մեյեր Բենեդիկտսենի, Ստոկհոլմի գլխավոր թերթերից մեկի խմբագիր Ա. Բենեդիկտսենի և այլոց հետ⁴: Ֆիննական պատվիրակության ներկայացուցիչ Լյուսի Կառլտունենը նամակ է գրել հայկական պատվիրակությանը՝ հայկական հարցի նկատմամբ Ումբերտո Չանոտի Բիանկոյի վերաբերմունքի մասին⁵:

Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Գարիել Նորատունկյանը (1852–1936) 1920 թվականին Ֆրանսիայում

¹ Matthias Bjørnlund, Scandinavia and the Armenian Genocide...

² Paul Desfeuilles, Le mouvement proarménien en Scandinavie, նույն տեղում:

³ Sten Görän Gunner, Eric Lindberg, eds. *Längtan till Ararat...*, էջ 216-226.

⁴ ՀԱԱ, ՊՖՊՆՂ 430, ցուցակ 1, գործ 1126:

⁵ ՀԱԱ, ՊՖՊՆՂ 430, ցուցակ 1, գործ 1125:

գտնված ժամանակ Փարիզ-Մարսել ճանապարհի վրա ներկայացել է Ըվեդիայի քաղաքոր Գուստավ V-ին: Նրանք նախապես ծանոթ են եղել, երբ Նորատունկյանը դիվանագիտական պաշտոնով ժամանել է Ստոկհոլմ և շվեդ-օսմանյան միջպետական կապերի զարգացմանն իր քերած նպաստի համար ստացել շվեդական ամենաբարձր պատվանշանը: Նրանք երկար գրույց են ունեցել մասնավորապես Հայաստանի մասին. քաղաքորը ցանկություն է հայտնել, որ լիովին պսակվեն հայ ազգի բոլոր արդար բաղձանքները և այլևս վերջ գտնի նրա դարավոր մարտիրոսությունը¹...

Նույն 1920-ի հուլիսին Փարիզում կայացել է հայասերների միջազգային համագումարը, որի ժամանակ կազմվել է միջազգային խորհուրդ՝ 60 անդամով: Սկանդինավիայից այդ խորհրդին ընտրվել են Ինգա Նալբանդյանը Դանիայից, Մարիքա Շքյերնսթեդը և Յալմար Բրանքինգը Ըվեդիայից, Ֆրիտյոֆ Նանսենը և գեներալ Հոֆֆը Նորվեգիայից²: 1922-ին հիմնված Դանիայի «Հայկական առաքելություն» կազմակերպությունը հիմնականում զբաղվել է Հունաստանում ապաստանած հայ գաղթականներով՝ երիտասարդներին ապահովելով աշխատանքով:

«Դանակե արմենիերվեները» շվեդ բարեկամների հետ հանգանակել է 40 հազար շվեդական քրոն՝ Քարեն Եփփեի խնամակալության ներքո գտնվող երեխաների համար: 1924-ի մարտ-ապրիլ ամիսներին Դանիայում և Ըվեդիայում ներկայացվել է Մերձավոր Արևելքի Նպաստամատույց հանձնախմբի «Բավական է տեսնել՝ հավատալու համար» կինոնկարը³:

Նկատենք, որ սկանդինավյան կազմակերպություններն օժանդակել են ոչ միայն արևմտահայությանը: Այսպես, դանիական Կարմիր խաչը (որի ներկայացուցիչն է եղել Թադևոսյանը) 1919-ին Հյուսիսային Կովկասում հոգ է տարել 450 հայ գաղթականների, ծրագրել

առաջիկայում ստանձնել հազար գաղթականի խնամելու գործը¹, Նո-վոռոսիյսկում հոգացել գաղթականների ընդունման տարածքի հարցը:

Հարկ է նշել, որ XX դարի սկզբին սկանդինավյաները հայերի համար եղել են ոչ միայն անձնվեր գթության քույրեր և հումանիտներ, այլև հանրային տեսուչներ և կազմակերպիչներ: Այսպես, հայտնի է, որ 1914-ին, Օսմանյան կայսրությունում անցկացվող հայկական բարեփոխումների շրջանակներում, Արևմտյան Հայաստան են գործուղվել երկու եվրոպացի տեսուչներ՝ հոլանդացի Վեսթենենքը և նորվեգացի Հոֆֆը՝ ստուգելու համար հայության վիճակը: Նրանք 1914-ի մայիսին պայմանագրեր են ստորագրել ներքին գործերի նախարար Թալեաթի հետ: Հոֆֆը 1914-ի ամռանը հասել է Վան: Սակայն նրանք տակավին հաստատված չեն եղել իրենց տեղերում, երբ բռնկվել է առաջին աշխարհամարտը, և Օսմանյան կայսրությունը, նույնիսկ պատերազմի մեջ չմտած, չեղյալ է հայտարարել իր համաձայնագիրը և անմիջապես հեռացրել զխավոր տեսուչներին²:

Պետք է նշել, որ սկանդինավյանների վկայություններում հայերը միշտ չէ, որ ներկայացվել են որպես անդադար կոտորվող նահատակ մի ժողովուրդ: Ականատեսների աչքից չի վրիպել նաև հայ ազգին բնորոշ խիզախությունն ու անվեհերությունը: Այսպես, Առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիական բանակի օտարազգիների լեզեռնում է ծառայել նորվեգական բանակի սպա Անգելը, որը հետագայում իր հուշերում հիացմունքով է գրել հայ ռազմիկների մասին³: «Հայ ռազմիկը սովորաբար խոշոր է, ամրակազմ, բարեձև, դեմքին՝ լուրջ հայացք: Նրա սև աչքերը զրավում են ուշադրությունը: «Դու հա՞յ ես», - հարցրի մեկին: «Այո, իմ լեյտենանտ»: Ես սեղմեցի նրա ձեռքը և ասացի նրան. «Դու ոչ միայն լեզեռնի իմ ընկերն ես, այլև իմ եղբայրը: Ես այս լեզեռնում եմ նաև քո՝ ժողովրդի դատի համար»: Հայ զինվորների մասին բարձր կարծիքի են եղել նաև սպաները. «Գերազանց ռազմիկներ են... Նրանք միայն մեկ թերություն ունեն՝ շատ հաճախ ոչ անհրաժեշտաբար իրենց նետում են վտանգի մեջ: Սրանով է բա-

¹ Կոչնակ Հայաստանի, ք. 26, 26.06.1920, էջ. 830:

² Յառաջ, 21.10.1920:

³ Հայրենիք, 18.05.1924:

¹ Յառաջ, Թիֆլիս, 23.01.1919:

² Մ. Արզումանյան, Հայաստան. 1914-1917, Երևան, 1969, էջ 90-91:

³ Colonel Angell, Armenian soldiers, *The Armenian Herald*, Boston, 1919, February-March-April, p. 174-177.

ցատրվում նրանց հետ կատարվող դժբախտ պատահարների մեծ թիվը: ...Նրանք բարի են, վեհանձն և վատահեղի, սակայն մարտի ժամանակ կարծես վիշապներ լինեն: Ես տեսել եմ նրանց հողապատնեշների վրայով թռչելիս և փշալարերի ու հրանոթների դեմ վազելիս: Նրանք շատ համարձակ են»: Այս խոսքի վրա մեկ այլ սպա պատասխանել է. «Գա զարմանալի չէ: Եթե մենք հիշենք այս ժողովրդին բաժին ընկած ճակատագիրը, ի՞նչ արժեք կարող է ունենալ կյանքը նրանց համար: Նրանց ոչինչ չի մնացել՝ անխոհեմությունից և վրեժխնդրության հույսից բացի»: Մի նորվեգացի լեգեոնական էլ ասել է. «Նրանք բաջ են: Ես հիշում եմ դեպքեր, երբ նրանք գրոհել են առջևից և առաջինն են հասել օբյեկտներին, այն դեպքում, երբ շատերը վարանում էին»: Անգելը հիշել է նաև, թե ինչպես մի նորվեգացի ռազմական բժիշկ Կովկասի ռուսական ռազմաճակատից հետը բերել է մի սարսափելի հիշատակ՝ տանջանքի մի գործիք, որով թուրքերը խոշտանգել են մի հայ բժիշկ մայրոհի, պատմել, թե ինչպես էին հայ կամավորները բացում էր գրում տանող ճանապարհը ձյան և բքի միջով, որոնց խիզախությունը մեծանում էր այն գիտակցությամբ, որ թուրքերն իրենց պատրաստ են տանջամահ անել: «Խիզախ ժողովուրդը երբեք չի կորցնում հույսը», - եզրափակել է իր հողվածը նորվեգացի զինվորականը:

Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական բանակի կազմում ծառայել է շվեդ հարյուրապետ Գուստավ Էդվալդ, որը պատերազմից առաջ եղել է ժանդարմերիայի հրամանատար Պարսկաստանում: Բաղդադում ամուսնացել է մի հայ բժշկի դստեր հետ և նրան տարել իր ծառայության վայրը՝ Տեր Ջոր: Որոշ ժամանակ նրա բարգմանն է եղել հայ մեծ գրող Երվանդ Օտյանը, որը բազմիցս համակրանքով է հիշել այդ մոտ 45-ամյա, բարձրահասակ և կապուտաշյա շվեդին իր հուշագրության մեջ¹:

1917 թվականն առանձնահատուկ է եղել Շվեդիայում Հայկական հարցի համար: Ինչպես նշել է շվեդ հեղինակ Էրիք Լինդբերգը, «Այդ թվականին խաղաղության շարժումն իր գագաթնակետին էր և՛ ճնշման էր ենթարկվում հայկական քննարկումների ընթացքում: Հայ-

¹ Երուանդ Օտեան, *Անիծեալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ)*, Երևան, 2004, էջ 347:

կական հարցը այն հարցերից էր, որ կարող էր կորչել, երբ խաղաղությունը գար: ...Միաժամանակ, Հայաստանում կոտորածները շարունակվում էին»¹: Հայտնի է, որ Շվեդիան չեզոք դիրք է գրավել պատերազմի ժամանակ, սակայն գերմանամետ լինելով հանդերձ՝ որոշ շվեդական շրջանակներ անտարբեր չեն մնացել Գերմանիայի դաշնակից Օսմանյան կայսրությունում կատարված իրադարձությունների հանդեպ: Այդ թվականին Ուփսալայում կայացել է խաղաղության համաժողով, որի ծրագիրն ընդգրկել է 90 կետ՝ մի շարք ազգերի խաղաղության վերաբերյալ: 9-րդ կետը վերաբերել է Հայաստանի խաղաղությանը: Ցավոք, մեզ մանրամասներ հայտնի չեն այս իրողության վերաբերյալ: Նույն 1917 թվականին Ստոկհոլմում բողոքի ցույցեր են կազմակերպվել ի պաշտպանություն և ի համակրանք Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների: 1917-ի մարտի 27-ին կազմակերպված միտինգը նվիրված է եղել Հայաստանին: Նախաձեռնողներն են եղել քաղաքական գործիչ, Ստոկհոլմի քաղաքագլուխ Կառլ Լինդհագենը, սոցիալ-դեմոկրատների առաջնորդ, հետագայում Շվեդիայի վարչապետ Յալմար Բրանթինգը (1860-1925) և բարոնուհի, գրող Մարիքա Շքյերնսթեդթ-Նորդսթրյոմը (1875-1954)՝ «Հայերի սարսափելի վիճակը» (1917) գրքի հեղինակը: Ներկաների թիվը եղել է մոտ երկու հարյուր:

Բացման խոսքը կատարել է Բրանթինգը, որը խարանել է գերմանական վայրագությունները բոլոր գրավյալ երկրներում, նշավակել Գերմանիայի բարբարոս մեթոդները ծովի և ցամաքի վրա, պատմել Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների մասին: Նա հայերի կոտորածը բնութագրել է որպես «կազմակերպված և սխտեմատիկաբար իրագործված ցեղասպանություն», մեղադրել շվեդ մամուլին՝ հայերի եղեռնի վերաբերյալ երկար ժամանակ լռություն պահպանելու համար և նախատիմքի խոսք է ուղղել շվեդ կառավարությանը, որը երբեք չի բողոքել այդ բռնությունների դեմ: Բրանթինգը նշել է նաև, որ ինքը 1916-ին բանակցել է Շվեդիայի արտգործնախարար Քնյուս Վալենբերգի հետ, հույս ունենալով, որ վերջինս կարող է ազդել՝ դադարեցնելու համար հայերի ցեղասպա-

¹ Göran Gunner, Eric Lindberg, eds., *Längtan till Ararat*, s. 268.

նութունը, ինչը սակայն ամարդյունք է մնացել: Բրանքինգի ճառը հրատարակվել է «Մուսիալ-դեմոկրատներ» պարբերականում¹ և արտատպվել սկանդինավյան այլ թերթերում: «Կարելի՞ է արդեօք ակնկալել, որ մեր կառավարութիւնը, միայնակ կամ համերաշխ միս չէզոք կառավարութիւնների հետ միջամտել ուր հարկն է, որպէսզի ասպահովուի հայերի իրաւունքը – կեանքի, գոյքի և ազգայնութեան»²:

Միտինգում ելույթ է ունեցել նաև Մարիքա Շթերնսթեդը, որի ճառը տևել է երկու ժամ: Նա հասարակությանը հիշեցրել է 1894–1896 թվականների հայկական ջարդերը, նշել Հայկական հարցում Գերմանիայի դերը: Շթերնսթեդը մեջբերում է կատարել իր գործընկեր գրող Օսիանիլյսոնից, ըստ որի «Հայերի դեմ եղած գերմանա-թուրքական սև ցուցակները ստեղծվեցին հենց 1894-ին, ինչը թուրքական աշխատելակերպ ոճ չէր»³:

Ի վերջո միտինգն ընդունել է հետևյալ բանաձև-որոշումը. «Միտինգը յանուն մարդկայնութեան, բողոքում է այն սխտեմատիկ ճնշումների համար, որ թիրքերը գործ են դնում հայերի դեմ. հրաւիրում է շվեդ կառավարութեանը՝ միջամտելու, միայնակ կամ համերաշխ միս չէզոք պետութիւնների հետ, որպէսզի տրուի հայերին ասպահովություն կյանքի, գոյքի և դաւանանքի»⁴:

Ըստ Միքայել Վարանդյանի՝ «Երեկոյքը մխիթարական էր: Առաջին անգամը, մի հոյակապ ցոյց Շվեդիայի մայրաքաղաքում – դաշնակից պետութեանց դեսպանների ներկայութեամբ – ընդդէմ գերմանա-թիրք բարբարոսների և ի նպաստ հայ դատի: Առաջին անգամը նաև հարցապնդում պարլամենտի մէջ»⁵: Ի դեպ, Միքայել Վարանդյանը Բրանքինգի հետ ծանոթ է եղել տակավին 1909-ին, Բրյուսելում ընկերվարական միջազգային խորհրդաժողովից: Այդ ժամանակ արդեն Բրանքինգը համակրանքով է վերաբերվել հայ ժողովրդին: Ելույթ է ունեցել Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչը՝ խոսե-

¹ *Social-Demokraten*, Stockholm, 28.03.1917.

² Տե՛ս Մ. Վարանդեան, Նամակներ Երուսալից. հայոց հարցը Շվեդիայում, *Հոփզոն*, 16.07.1916:

³ Göran Gunner, Eric Lindberg, eds., *Längtan till Ararat*, s. 268.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

լով թուրքական հեղաշրջման մասին և ներկայացնելով հայության վիճակն Օսմանյան կայսրությունում և խորհրդաժողովի առջև հարց է դրվել՝ զատել տեսականապես հայությունը Օսմանյան կայսրությունից և Հայաստանին տալ ուրույն ներկայացուցչական իրավունք ընկերվարական ինտերնացիոնալի մեջ: Այդ առաջարկի օգտին առաջինը քվեարկել են Բրանքինգը և Լենինը: Վարանդյանը երկրորդ անգամ նրան հանդիպել է Ստոկհոլմի նրա բնակարանում՝ խորհելով հայ դատն արժարժել Շվեդիայում: «Չեմ մոռնար այն քնքոյշ վերաբերմունքը, որ կը ցուցնէր մեր ցաւերու եւ պահանջներու հանդէպ»: Այնուհետև ամեն առիթով պաշտպանել է հայ դատը՝ Լոնդոնում, Փարիզում, Ժնևում. Ժնևի կոնֆերանսում առաջարկել է, որ Հայաստանն անդամագրվի Ազգերի Լիգային¹:

Հարկ է նկատել, սակայն, որ շվեդ քաղաքական գործիչների մեջ տարբեր կարծիքներ են եղել հայկական հարցում Շվեդիայի դերի առնչությանը: Եթե Կառլ Լինդհագենը պահանջել է, որ շվեդական կառավարությունն ակտիվ լինի հայ ժողովրդի շահերի պաշտպանության գործում², ապա մեկ այլ քաղաքական գործիչ՝ Արվիլդ Լինդմանը, ժխտել է նրան, պնդելով, որ Շվեդիան չպետք է ներգրավվի օտար պետությունների գործերին: Ավելին, նույն ժամանակահատվածում հայոց եղեռնի մասին բարձրաձայն արտահայտվող շվեդների կողքին եղել են նաև այն ժխտողներ և կասկածողներ: Առաջին աշխարհամարտի տարիներին Իրանում ծառայած շվեդ զինվորական Յալմար Փրավիցը մամուլում հանդես է եկել Մարիքա Շթերնսթեդի դեմ հոդվածով («Հայերի վիճակը. շվեդ սպան քննում է տիկին Մարիքա Շթերնսթեդի հաղորդումները»)՝ կասկածի ենթարկելով հայկական կոտորածների իրողությունը³: Նույնը նա կրկնել է 1918-ին հրատարակած իր գրքում. «Մակայն այդ ժամանակ, մեկ ամիս ավելի ժամանակում, ես թուրքական հարձակումների ոչ մի նշան չտեսա, չհանդիպեցի դրանց ականատեսի, բայց լավ լսեցի մի երկու պատմություն երրորդ կամ չորրորդ բերանից, ուստիև ես պարտավոր եմ շատ կասկածամիտ

¹ Մ. Վարանդեան, Բրանքինգ (գաղափարի ցահակիր մը), *Հայրենիք*, 2.02.1926:

² Տե՛ս Carl Lindhagen, Sverige och Armeniens öde, *Dagens Nyheter*, 24.03.1917.

³ Hj. Pravitz, Armeniernas läge. Af en som varit med. En svensk officer skärskådar fru Marika Sjörnstedts uppgifter, *NDA*, 23.04.1917.

լինել այդ պատմությունների հանդեպ»¹: Շվեդ սպան երեք տարի մնացել է ոչ թե Օսմանյան կայսրությունում, այլ Իրանում, ուստիև բնական է, որ նա կարող էր և չտեսնել կոտորածների անմիջական ապացույցներ և չհանդիպել ականատեսների: Ավելին, իր թրքասիրությամբ հայտնի գրող Սվեն Հեդինը, 1917-ին վերադառնալով Արևելքից, սոցիալ-դեմոկրատներին հայտնել է Ստոկհոլմում, որ «Հալաժանք այլևս չկայ հայերի դեմ... Այստեղ Շվեդիայում անօգուտ է որևէ բան ձեռնարկել... Վերջապես հայերն իրենք յանցատուր են և այլն»²: Հեդինի նման հայտարարություններին «Սվեն Հեդին ջենթլմեն» վերնագրով պամֆլետով պատասխանել է գրող Կառլ Գուստավ Օսիանիլսոնը:

1917-ի ամռանը պատերազմում չեզոք երկրների (Շվեդիա, Նորվեգիա, Գանիա, Հոլանդիա) սոցիալ-դեմոկրատները Ստոկհոլմում գումարել են խաղաղության համագումար: Հայերից համագումարին մասնակցել են Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչներ Միքայել Վարանդյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմ), որոնք պատմել են Օսմանյան կայսրության հանդեպ հայերի ունեցած պահանջների մասին՝ կոչ անելով միջազգային սոցիալ-դեմոկրատների ղեկավարներին ակտիվ լինել՝ հայերի հալածանքները դադարեցնելու և հայկական գրավված տարածքները վերադարձնելու գործում: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը խոստացել է աջակցել հայկական պահանջներին³:

1917-ին թուրք սոցիալ-դեմոկրատները մասնակցել են Ստոկհոլմում կայացած սոցիալ-դեմոկրատական համաշխարհային համաժողովին, որի ժամանակ հայտարարել են, թե «հայերը միշտ եղել են հայրենիքի թշնամի»: Այդ առթիվ Փարիզի Հայ մտավորական միությունը ֆրանսիացի մի հայտնի և ազդեցիկ սոցիալ-դեմոկրատ գործչի միջոցով շվեդ սոցիալ-դեմոկրատների պարագլուխ Յալմար Բրանթինգին և ռուս սոցիալ-դեմոկրատ ղեկավարներին անհրաժեշտ տեղեկություններ է տվել սոցիալ-դեմոկրատական դիմակի տակ ծալոված թուրքա-

կան նոր մեքենայությունների մասին¹: Իսկ Ժնևի հայ սոցիալ-դեմոկրատների խումբը Ստոկհոլմի միջազգային համաժողովին հեռագիր է տվել՝ խնդրելով վերջ տալ այն նոր հայկական ջարդերին, որ տեղի ունեցան ռուսական զորքերի Հայաստանից հեռանալուց հետո: Յալմար Բրանթինգը Գերմանիայի երկու սոցիալ-դեմոկրատական խմբակցությունների հեռագրել է՝ խնդրելով ակտիվ կերպով միջամտել²:

Նմանապես 1917-ին Շվեդիայում հրատարակվել է չորս գիրք հայոց մասին. հատկապես արժեքավոր է կոտորածների ականատեսների վկայությունները պարունակող հատորը³: Նույն ժամանակ տարբեր հեղինակների հայապատում գործերի շվեդերեն քարգմանությունների շնորհիվ Շվեդիան կրկին իրագել է դարձել հայկական իրադարձություններին⁴: Հայության մեջ գործած քարոզիչ Լարս Էրիք Հյոգբերգն իր «Պարսկաստանի մահմեդականների մեջ» գրքում (1920) մի գլուխ նվիրել է առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի իրավիճակին, նկարագրել գաղթը և ջարդերը Տեր Զոր անապատում, հայ գաղթականների կյանքը Հալեպում⁵:

Անշուշտ, վերոհիշյալ գրքերի գրական արժեքը և մակարդակը հավասարարժեք չեն, սակայն դրանք բոլորն էլ կարևոր առաքելություն են ունեցել՝ շվեդ ընթերցողին ներկայացնել ճշմարտությունը հայոց եղեռնի վերաբերյալ:

1920-ին երեք մեծ կայսրություն՝ Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Օսմանյան կայսրությունն արդեն կազմալուծված էին: Վերջինից առանձնացել են Միրիան, Պաղեստինը, Իրաքը և Հայաստանը: Հայտնի է, որ Արևելյան Հայաստանի մի մասում անկախություն է հռչակվել, և Թուրքիան ճանաչել է դա, սակայն հետագայում, 1923-ի Լոզանի կոնֆերանսում, չեղյալ է հայտարարել: Ազգերի լիգան 1920 թվականին սահմանել է վարչական կառավարման համակարգ՝ «ման-

¹ Hj. Pravitz, *Från Persien – i stillte och storm*, Stockholm, 1918, s. 264.

² Տես Մ. Վարանդյան, Նամակներ Երուսալից...

³ Տես *Längtan till Ararat*, էջ 268.

¹ *Վերածնունդ*, 14.09.1917, էջ 87:

² Նույն տեղում, 14.02.1918, էջ 121:

³ G. Hawkins, *De armeniska fasorna. Ögonvittnens ovedersägliga berättelser*. Stockholm, 1917.

⁴ Arnold J. Toynbee, *Turkiska grynheter mot underkuvande folk*, Stockholm, 1917. Inga Nalbandian, *In i natten: Bilder från Armeniens undergång*, Stockholm, 1917. M. Piranjan, *Blod och tårar. Armeniernas lidanden i Turkiet*, Stockholm, 1918.

⁵ L. E. Högborg, *Bland Persiens muhammedaner*, Stockholm, 1920, s. 223-251.

դատի» անվան տակ, որ տարածվելու էր նաև Հայաստանի վրա: Ժնևի կոնֆերանսի ժամանակ Ազգերի լիգան կոչ է արել սկանդինավյան երկրներին մանդատավոր դառնալ Հայաստանի համար: Այս առթիվ շվեդ հասարակական գործիչ Նաթանայել Բեսքովը գրել է. «Մենք՝ սկանդինավյան ժողովուրդներս, ունեցել ենք և ունենք այն առավելությունները, որ տարբեր ձևերով կարողանանք օգնել պատերազմի զրկանքներից տուժածներին: Ոչ որ չի ցանկանում մանդատավոր լինել Հայաստանի համար, քանի որ, ինչպես ասվել է, «այնտեղ չկա նավթ, այնտեղ միայն հայեր կան»: Եվ այստեղ մենք՝ Սկանդինավիայի ժողովուրդներս, մի պարտականություն ունենք, որ մեզ է սպասում: Միջազգային համաժողովը Ժնևում Հայաստանի համար մանդատավոր գտնելու համար հատկապես դիմեց սկանդինավյան երկրներին: Դա մեծ պատիվ է մեզ համար... Մենք առանձնաշնորհ ենք ստացել մեծ մասշտաբով օգնելու համար մի տառապյալ ժողովրդի պատերազմի զոհերին»¹:

1920-ի հունվարին Հայաստանի Հանրապետությունը և Հայ ազգային պատվիրակությունը համատեղ դիմել են Նորվեգիայի նախարարների խորհրդին՝ հայ ժողովրդի շահերը խաղաղության համաժողովում պաշտպանելու համար²: 1920–1921 թվականներին սկանդինավյան երկրների խորհրդարաններում որոշ քննարկումներ են տեղի ունեցել՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվելիք օգնության հնարավորության վերաբերյալ: Շվեդիայի և Նորվեգիայի կառավարությունները հայտնել են, որ Հայաստանին պատրաստ են տրամադրել գյուղատնտեսական մեքենաներ և կենդանիներ (խոզեր և եզներ³): 1920-ին որոշ շվեդական և շվեյցարական ֆիրմաներ առաջարկներ են ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում կաքնատնտեսությունը զարգացնելու վերաբերյալ⁴:

Ինչը, սակայն, հատկապես կարևոր է. մի շարք շվեդ պատգամավորներ պնդել են, որ Շվեդիան մանդատավոր դառնա Հայաստանի

համար: Սակայն շվեդական կառավարությունը հետաքրքրված չէր նման լուծում գտնելու: Նրա պետական շահերը և թելադրել են Օսմանյան կայսրության հետ հարաբերությունները չվատացնելու համար մանդատ չտալ Հայաստանին: Օսմանյան կայսրությունում Շվեդիայի դեսպան Գուստավ Օսթար Վալենբերգը արշավ է սկսել հայերին աջակցելու Շվեդիայի ծրագրի դեմ: 1920-ի ապրիլի 26-ին նա նամակ է հղել Արտաքին գործերի շվեդական բաժանմունքին՝ առաջարկելով չվերցնել Հայաստանի մանդատը¹: Պատմաբան Էրիք Լինդբերգը Վալենբերգի վերաբերմունքը բացատրել է տնտեսական շարժառիթներով: Շվեդ քաղաքական գործիչը չի ցանկացել վնասել Շվեդիայի և Օսմանյան կայսրության միջև եղած բարեկամական հարաբերություններին, քանի որ Թուրքիան տնտեսապես կարևոր էր Շվեդիայի համար²:

1921-ի փետրվարի 9-ից 12-ը սկանդինավյան չորս երկրների ներկայացուցիչներ հանդիպել են Ստոկհոլմում՝ քննարկելու հայ ժողովրդին աջակցելու խնդիրը: Որոշվել է յուրաքանչյուր երկրում ստեղծել հանձնախմբի մեկական մասնաճյուղ: Նրանք որոշել են գործունեության երկու ուղի որդեգրել: Առաջին. ազդել սկանդինավյան քաղաքական ոլորտների վրա՝ մանդատավոր դառնալու Հայաստանի համար, երկրորդ՝ փրկել հայ կանանց և երեխաներին մահմեդական գերությունից: Հայկական հարցը քննարկման խնդիր է եղել նաև 1922-ի ամռանը Սոննթաքերգում Քրիստոնեական Միավորում շարժման հանդիպման ժամանակ, որի ընթացքում Շվեդիայի կողմից առաջարկվել է հայկական հարցի մասին հատուկ գրությանը դիմել Ազգերի լիգային: Սույն գրությունն անդրադարձել է Հայկական հարցի պատմությանը՝ 1878-ի Բեռլինի համաժողովից մինչև տվյալ փուլը, և ապա ներկայացվել են ապագա որոշակի անելիքներ՝ կապված հայկական գաղթականի ստեղծման հետ: Սույն հոդվածը ստորագրել են Նա-

¹ Natanael Beskow, *Ett martyrfolk i det tjugonde århundradet*, Stockholm, 1921, s. 11.

² ՀԱԱ, ՊՖՊՆ 430, ցուցակ 1, գործ 1124:

³ Աջակցության խոստումներ, *Մակառանարտ*, 17.07.1920, էջ 2:

⁴ Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, University of California Press, 1996, p. 271.

¹ Նամակի շարադրանքը տես «Längtan till Ararat», էջ 270-271:

² Այս մասին մանրամասն տես Էրիք Լինդբերգի «Շվեդիայի հայկական քաղաքականությունը» հոդվածում (նախորդ հղումը, էջ 264-276):

բանայել Բեսքովը, Քրիստոնեական շարժման խորհրդի նախագահ Հենրի Հոջքինը և գլխավոր քարտուղար Օլիվեր Դրայերը¹:

«Հայաստանի շվեդական հանձնախմբի» անդամներ են ընտրվել աստվածաբան Նաթանայել Բեսքովը (Դյուրսհոլմ), ուսուցիչ Դագնի Թորնվալը, պատուր Սամուել Թիսելը (Ստոկհոլմ), Մեֆոդիի աստվածաբանական դպրոցի ռեկտոր Յունաթան Յուլենը (Ուփսալա), եկեղեցական Հագբարդ Իսբերգը (Մալմյո), եկեղեցու պատմաբան Յալմար Հոլմբլիսը (Լունդ) և Յոն Վաքսբրյունը (Նուրբի): Նրանք «Փրկել Հայաստանը» վերտառությամբ հողվածով կոչ են արել շվեդ ժողովրդին օգնել հայ գաղթականներին՝ գրելով մասնավորապես հետևյալը. «Շվեդական հանձնախումբը ցանկանում է օրհնորեն դիմել շվեդ ժողովրդին, որ նա գործնականորեն տեղյակ պահի հայ ժողովրդին, որ Հյուսիսում բարեկամներ ունի, որոնք մարդկային համերաշխությամբ ցանկանում են նրանց կողքին լինել»²: Բազմաթիվ շվեդներ արձագանքել են կոչին, և մարտի 9-ից մինչև նոյեմբերի 21-ը շվեդական հանձնախումբը հավաքել է 11294 շվեդական քրոն³: Այս օգնությունը փոխանցվել է Հայաստանի սովյալների օգնության գերմանական հանձնախմբին: «Հայաստանի շվեդական հանձնախումբը» 1921-ին նաև հրատարակել է շվեդ և գերմանացի հեղինակների պամֆլետներ և բուկլետներ հայոց ցեղասպանության վերաբերյալ⁴:

Մոտ մեկ տասնամյակ Հայաստանը եղել է շվեդ ականավոր հասարակական գործիչ, աստվածաբան, Դյուրսհոլմի համալսարանի ուսուցչապետ Ֆրեդերիք Նաթանայել Բեսքովի (1865–1953) ուշադրության կենտրոնում⁵: Սկսած 1920 թվականից մինչև 1930-ականները

նա 15-ից ավելի հոդված է գրել Հայաստանի և հայ ժողովրդի մասին շվեդական մամուլում (մասնավորապես՝ իր և այլոց խմբագրած «Քրիսթեթ սամհելսիվ»-ում): 1924-ին Բեսքովը հայ որբերին օգնելու նպատակով հատուկ կոմիտե է հիմնել: Թերևս այս կոմիտեն է հղացել 3000 հայ գաղթականներին Շվեդիայում ապաստան տալու խնդիրը: «Բախտաւորութիւն մը պէտք է նկատել անշուշտ նաեւ այն, որ Շուետական կառավարութեան մօտ՝ իր երկրին մարդասիրական մէկ ընկերութեան կողմէ եղած առաջարկը՝ 3000 հայ գաղթականներ ընդունելու մասին, հետևանք չէ ունեցած դեռ: Ապահովաբար, այդ մարդասիրական ընկերութեան մտահոգութենէն վրիպած ըլլալու չէ Շուետի բնակիչներուն յարաճուն արտագաղթը դէպի Ամերիկա եւ այլուր, երբ Հիւսիսային անտառաշատ ցուրտ գաւառներուն մէջ մարդու սով կը տիրէ եւ կառավարութեան ընծայած բոլոր դիւրութիւնները չեն հրապուրէր իրենց հայրենակիցները՝ երթալու շէնացնելու համար Շուետի այդ ամայի երկիրները»¹:

1924 թվականի մարտի 19-ին Ստոկհոլմում կազմակերպվել է հայ ժողովրդին նվիրված երեկո՝ Նաթանայել Բեսքովի նախածնունդությամբ և պրոֆեսորներ Յուհան Ռոսվալի, Վիլհելմ Հարթևեդի և այլոց մասնակցությամբ: Ռոսվալը բանախոսել է հայ ճարտարապետության մասին և ցուցադրել հայկական հուշարձանների լուսապատկերներ: Ռոսաստանում երկար տարիներ բնակված կոմպոզիտոր Վիլհելմ Հարթևեդը (1859–1927) ներկայացրել է մի շարք հայ ժողովրդական երգերի նմուշներ, որոնք ինքը եվրոպական նոտագրությամբ գրի է առել Թիֆլիսում: Նրա կատարած հայկական երգերից էր Կորգանովի բայաթին: Իր զեկուցման մեջ պրոֆեսոր Բեսքովը ներկայացրել է հայ ժողովրդի պատմությունը, նշելով, որ նա, հակառակ դավաբան ստրկությանը և կոտորածներին, մինչև օրս պահել է իր յուրահատուկ ցեղային գծերը և քրիստոնեական կրոնը, մնալով եվրոպական մշակույթի առաջապահն Արևելքում: Այդ պատճառով, նշել է նա, եվրոպացիների պարտականությունն է պահել այդ ժողովրդի ֆիզիկական և բարոյական գոյությունը: Կոմիտեն նպատակ է դրել հիմնել հայ

¹ Skrivelse i armeniska frågan till Nationernas förbund, *Meddelanden från förbundet för Kristet Samhällsliv*, 1921, Stockholm, 1922, N 8-9, ss. 2-4.

² Rädde Armenien! *Meddelanden ...*, 1921, Stockholm, N 2-3, s. 10.

³ Նվիրատուների ցանկը տե՛ս *Meddelanden ...*, 1921, N 7-9, էջ 23:

⁴ Sten Johannes Lepsius, *Ett kristet folks undergång*; Natanael Beskow, *Ett martyrfolk i det tjugunde århundradet*; *Hur det gick till vid armeniernas deportation*; Martin Niepaga, *Vad en tysk lektor i asiatiska Turkiet upplevde år 1915* (Stockholm, 1921). Այս գրքույկները լույս են տեսել հայերեն, ժամանակակից Հայաստանի բարձրագույնագրական (տե՛ս «Հյուսիսափայլ» տարեգիրք, նշված հատորը, էջ 191-238):

⁵ Նաթանայել Բեսքովի արխիվից հայ գաղթականության հարցերին առնչվող վեց մասնակ մենք թարգմանաբար հրատարակել ենք Բեյրութի «Հայկազնան հայագիտական հանդեսում», 1999, ԺԹ, էջ 393-405:

¹ Ամերիկայի քոթան եւ Շուետ, *Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք*, 1925, կազմեց Յ. Խաչմանեան, Պոսթըն, 1924, էջ 42:

որքերի գաղութ, որտեղ նրանք կարողանան ապրել և զարգանալ որպես մարդ և հայ¹:

Եվ իսկպես, Սիրիայում 1920-ական քվականներին Նաբանայել Բեսրովի հետևողական ջանքերի շնորհիվ հիմնվել են Թել Արմեն և Թել Սամեն գաղթակայանները, որտեղ հավաքվել են եղեռնից որբացած բազմաթիվ հայ մանուկներ և այրիներ²: 1926-ին Բեսրովն ան-

¹ Տե՛ս *Stockholms-Tidningen*, 14.02.1924, նաև՝ Շուեռները եւ հայ որբերը, *Նոր արշալոյս*, Պուրբէշ, 20.04.1924, *Հայրենիք*, Պոսքըն, 15.05.1924:

Բեսրովը շվեդական գաղթակայանի մասին պատմել է հայ մտավորական Տիգրան Նազարյանին 1924-ին հղած մի նամակում, որը պահվում է Երևանի ԳԱԹ-ում: Ավելորդ չենք համարում այստեղ թարգմանաբար հրատարակել այդ նամակը:

«Դ-յուրսեռն» 19.05.1924

Պարոն Տիգրան Նազարյան

Մոնտե Կատո

Իմ անկեղծ շնորհակալությունները Ձեր սիրալիր նամակի համար: Հուսով եմ, որ Դուք կարդում եք գերմաներեն, բանի որ ես ֆրանսերեն բավականաչափ չգիտեմ՝ առանց դժվարության գրելու համար:

Այն, ինչ ձեզ պատմել են Շվեդական հանձնախմբի նախաձեռնության մասին, ապա դա շատ չափազանցված իրականություն է: Ես ընդամենը մի համեստ ձեռնարկություն է:

Մեր հանձնախմբը Հաշտության համաշխարհային լիգայի ներկայացուցիչն է, որն, անշուշտ, ունի բարոյական մեծ ուժ, սակայն քիչ դրամ: Հանձնախմբն աշխատում է մի դանիացի տիկնոջ՝ օրիորդ Քարեն Եփփեի հետ, որը Հալեպում (Սիրիա) ունի մի Տուն, որտեղ Ազգերի լիգայի անունից փորձում է հավաքել մահմեդական տներից փախտականների: Նա արդեն հարյուրավոր մարդկանց է փրկել: Մենք նրան առաջարկում ենք հիմնել իրենից ոչ հեռու, մի գյուղատնտեսական և արդյունաբերական գաղութ, որտեղ երիտասարդ հայերը և հայտիները կկարողանան տեսականորեն և գործնականորեն ձևավորվել, անշուշտ, որպես հայեր, բայց համաձայն Ազգերի լիգայի գաղափարի:

Ինչը մենք ցանկանում ենք անել, ըստ էության, ոչ թե մանկատուն է, այլ մի գաղութ, որտեղ չափահասները և մանուկները կկարողանան ապրել միասին. «փոքր» Հայաստանի պես մի բան:

Եվ ինչպես որ իրադարձություններն են զարգանում, մենք չենք էլ կարող մտածել այս նախաձեռնությունը կովկասյան Հայաստան տեղափոխելու մասին: Արդեն մոտ 30 հայ գյուղացի ընտանիքներ, որոնց վերջերս շշել են Ռուֆայի կողմերից և որոնք հանգրվանել են Հալեպում, հետաքրքրված են այդ ծրագրով:

Ինձ համար մեծ հաճույք էր լսել, որ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը դրական է: Բայց ես նաև կարծում եմ, որ նոր Հայաստանի վերականգնման համար աշխատանքը, որ մենք կնախաձեռենք, շատ օգտակար կլինի:

Վերջում, անչափ շնորհակալ եմ ձեր ուղարկած գրքույկների համար, բայց ցավում եմ, որ հայերեն չեմ կարդում:

Խորին հարգանքով՝

Նաբանայել Բեսրով (տես ԳԱԹ, Տիգրան Նազարյանի ֆոնդ, թիվ 596):

² Այդ գաղթակայանների մասին տե՛ս՝ *Այսպայ*, Փարիզ, 26.10.1929:

ձամբ այցելել է այդ գաղութը, որտեղ օգտաշատ աշխատանք էր կատարում իր համախոհ Քարեն Եփփեն: Այդ այցելությունից հետո Բեսրովը գրել է «Պաղեստինում և Սիրիայում» և «Մի շվեդական հողագործական գաղութ հայ գաղթականների համար» գրքույկները¹: Տարիներ անց նա շվեդ ընթերցողին ներկայացրել է ևս մի գրքույկ հայ գաղթականների մասին²: Նույն թեման արտացոլվել է նաև Ք. Ֆրիսի, Ա. Բաքմանի և Քարեն Եփփեի շվեդերեն հրատարակված գրքույկներում, որոնք եղան «Շվեդ կանանց քարոզչական ընկերության» վերջին հրատարակությունները³:

1925-ի օգոստոսի 24-ին Ստոկհոլմում կայացել է Միջին Արևելքի ընկերակցության ժողովը, որին մասնակցել են յոթ երկրների պատվիրակներ: Հայության կողմից ներկա են գտնվել Ալեքսանդր Խատիսյանը և Ադաթոն որդին: Մերձավոր Արևելքում հայ գաղթականների կացության վերաբերյալ զեկուցել է ՀՀ պատվիրակության ներկայացուցիչը և Պ. Բրաֆթ-Բոնարը⁴:

Թել Արմենի ն տրվող օժանդակությունը դադարեցվել է 1930-ականների սկզբին: Շվեդ քաղաքական և հասարակական գործիչները, որ ակտիվ էին 1917-ին, հետ են կանգնել հայկական խնդիրներից: Հայոց հարցը դարձել է պատահական, ժամանակավոր զբաղմունք նրանց համար, չնայած նրանցից ոմանք (Լինդհագեն, Բեսրով) շարունակել են հետաքրքրվել Հայաստանով: Անշուշտ, չի կարելի թերագնահատել «Հայաստանի շվեդական հանձնախմբի» գործունեությունը, որը որոշակիորեն բարձրացրել է շվեդական հասարակության կարծիքը հայերի վերաբերյալ:

Հայանպաստ դանիական կազմակերպություններն ավելի երկար են գոյատևել, ընդհուպ մինչև մեր օրերը: Դանիայի «Հայկական առաքելության» աշխատանքն ավարտվել է 1977-ին, իսկ կազմակերպության սեփականությունը հանձնվել է Անթիլիասի հայոց կաթողիկո-

¹ Natanael Beskow, *I Palestina och Syrien*, Stockholm, 1926; *En svensk jordbrukskoloni för armeniska flyktingar*, Stockholm, 1927.

² Natanael Beskow, *Armeniska flyktingar av idag*, Stockholm, 1936.

³ K. Fries, *Bland spillrorna av ett folk*, Ansgarius, 1926; A. Backman, *Från de armeniska flyktingren. Skildring av ett besök i Grekland*, Stockholm, 1928; Karen Jeppe, *Den armeniska kolonisationen i Eufrat-Trakten*, Stockholm, 1930.

⁴ *Svensk*, 30.08.1925:

տությանը: Մակայն Դանիայի «Հայկական առաքելությունը» շարունակում է ակտիվորեն համագործակցել Հայ առաքելական եկեղեցու հետ մինչ օրս՝ Հայաստան երկարատև աշխատանքի ուղարկելով իր ներկայացուցիչներին: Եթե «Կամանց առաքելության աշխատողները» տասնամյակներ շարունակ աշխատել է Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականների մեջ, ապա 1922-ի մայիսի 22-ին Օրիոսում հիմնված «Արյունաբերական առաքելություն Հայաստանում (օգնել ինքնօգնությանը)» կազմակերպությունն իր ուշադրությունը բևեռել է հյուսիսային Հունաստանում խմբված գաղթական հայերի վրա: Այս կազմակերպությունն ունեցել է սեփական կենտրոն (նախ Սալոնիկում, ապա՝ Աթենքում), բարեգործական հիվանդանոց¹, հայ գաղթականներին սովորեցրել ձեռագործություն՝ հնարավորություն տալով նրանց գումար վաստակել: 1920-ականներին հրատարակվել է «Ինդուսթրիմիսիոն ի Արմենիեն» պարբերաբերթը: Կազմակերպության աշխատողներն են եղել Ենսինե Օրցը (1922–1926), Մարգրեթ Եփսենը (1922–1936), Քարեն և Անդրեաս Հանսենները (1924–1934), Քայ Թորբյորնսենը (1934–1936?), Մարիե Փեթերսենը (1937–1945), Քարին և Իես Օլեսենները (1969–1972), Վերնա և Լարս Մեյեր Անդերսենները (1972–1977)²: Այս կազմակերպությունում ամենից երկարատև աշխատանքը կատարել է Մարի Օսթերգորը, որը 42 տարի (1927–1969) պաշտոնավարել է Աթենքում, թոշակի անցնելուց հետո էլ, մինչև 1988-ը բնակվել է Հունաստանում, մահացել է 1993-ին, Դանիայում³: 1977-ին կազմակերպությունը վերակազմվել է, վերանվանվել «Դանիական հայկական առաքելություն» և սկսել համագործակցել Հունաստանի Հայ ավետարանական եկեղեցու հետ: 1991-ից այն գործունեություն է ծավալել նաև անկախություն հռչակած Հայաստանում:

¹ Արձակագիր Կարպիս Սուրենյանը, ծնված Աթենքում, իր գրություններից մեկում հիշել է, որ մանուկ հասակում ինքը բժշկվել է այդ դանիական հիվանդանոցում (տե՛ս Կարպիս Սուրենյան, *Հին պատմություն*, էջ 154):

² Erik Reckweg, Sådan startede det, Dansk Armeniermission, informat ionsfolder, 1996, s. 2-4.

³ Frede Møller, Tilbageblik på 75 år, Dansk Armeniermission, N 3, maj, 1997, s. 6.

«Մկանդինավիան և հայկական հարցը» թեմայի հաջորդ փուլը վերաբերվում է XXI դարի սկզբին հատկապես Շվեդիայում սկսված հայոց ցեղասպանության ճանաչման նպատակով տարվող գործունեությանը:

2000 թվականի հունվարին Ստոկհոլմի ազգագրության ինստիտուտում պրոֆեսոր Օքե Դաունի և Հայոց ցեղասպանության հատուկ հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Մեծ եղեռնին նվիրված գիտաժողով: Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոնի նախաձեռնությամբ Ուփսալայում կազմվել է հայկական ցեղասպանության ճանաչման հանձնաժողով, որի հիմնական անդամներ են ընտրվել Օքե Դաունը, Նիլս Լյովը, Կարո Հակոբյանը, Փոլ Մինասյանը, Կարո և Անահիտ Մանուկյանները, Արամ Հելսթադիուս Քյուրբչյանը, Արմինե Մուբերգը, Վրեժ Քոսայանը, իսկ հանձնաժողովին օժանդակել են Շվեդիայի Խորհրդարանի ձախ կուսակցության ներկայացուցիչ Մուրադ Արթինը, Ռոզանա Շումեցը, Ժորժ Քարինյանը, տարբեր շվեդ գործիչներ:

Դարձյալ 2000 թվականի հունվարին Շվեդիայի վարչապետ Յոնան Փերսոնի ղեկավարությամբ Ստոկհոլմում կայացել է միջազգային գիտաժողով՝ նվիրված ցեղասպանության ենթարկված ժողովուրդներին, առաջին հերթին՝ հրեաներին: Այդ միջոցառմանը հայերը չէին հրավիրվել, ինչն արդարացի վրդովմունք է առաջացրել հայ ժողովրդի մեջ: Բազմաթիվ բողոքի նամակներ են հղվել վարչապետին: Մակայն գիտաժողովի ընթացքում մի քանի անգամ հիշատակվել է հայ ժողովուրդը. մասնավորապես հունվարի 28-ին Փերսոնը Թուրքիայի և բոլոր մասնակից երկրների ներկայությամբ տվել է Հայաստանի անունը: 2000 թվականի մարտի 29-ին Շվեդիայի խորհրդարանը՝ Ռիքսդագը, պաշտոնապես ճանաչել է հայոց հանդեպ Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը: Խորհրդարանն ունկնդրելով Արտաքին քաղաքականության հանձնախմբի՝ հայերի ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին զեկուցումը, մարտի 29-ին միսձայն ընդունել է հանձնախմբի պատրաստած բանաձևը¹: Բանաձևում մասնավորապես ասվել է.

¹ Տե՛ս *Նոր հորիզոն*, 2000, ք. 2-3, էջ 4:

«Անհրաժեշտ և հարկավոր է պաշտոնական բանաձևով ճանաչել հայերի դեմ կատարված ցեղասպանությունը: 1985-ին Միացյալ Ազգերի Կազմակերպությունը և Եվրոպական խորհրդարանը հաստատեցին, որ Օսմանյան կայսրությունը դարասկզբին հայերի դեմ ցեղասպանություն է իրականացրել: Արտաքին քաղաքականության խորհրդարանական հանձնախմբի կարծիքով Թուրքիան որքան բացահայտություն ցուցաբերի իր անցյալի նկատմամբ, այնքան ավելի ներդրում կանի երկրի ժողովրդավարական ինքնության ուժեղացման գործում: Ուստի կարևոր է հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանության կապակցությամբ անկողմնակալ անկախ միջազգային ուսումնասիրություն կատարել: Կարևոր ազդեցություն կունենա նաև այն հանգամանքը, եթե հնարավոր լինի առավել բացահայտություն և պատմական ըմբռնողություն 1915-ի և հետագա տարիների դեպքերի համար: Այսպիսով, որևէ բարելավում վստահորեն իր կարևորությունը պիտի ունենա բովանդակ Կովկասի կայունության և զարգացման համար նույնպես»:

Այս գործում մեծ է եղել Ռիքսդազի հայազգի պատգամավոր Մուրադ Արքինի (ծնունդով իրաքցի) նախաձեռնած բազմակուսակցական առաջարկը, որին միաձայն նեցուկ է եղել Արտաքին քաղաքականության հանձնախումբը:

Երկու տարի անց Եվրախորհրդարանում Հայոց եղեռնի պաշտոնական ճանաչման հարց է բարձրացրել շվեդական կանաչների խմբակցության անդամ Փեր Գարթոնը: 2002-ի հունիսին Շվեդիայի Ռիքսդազը կոչ է արել Թուրքիային և Ադրբեջանին վերացնել Հայաստանի շրջափակումը:

2008-ի հունիսի 11-ին աշխարհի 60-ից ավելի ճանաչված մտավորականներ, ցեղասպանության մասնագետներ, Շվեդիայի խորհրդարանին են ներկայացրել մի խնդրագիր՝ Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ: Այն ստորագրել են շվեդ և միջազգային կարևոր դեմքեր, այդ թվում՝ Օրե Գաունը, Քլաս Յորան Կառլսոնը, Անդերս Հյուլթգորդը, Իվ Թեռնոնը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Տիգրան Գույումճյանը, Ռայմոն Գևորգյանը և շատ ուրիշներ: Նույն 2008-ին Շվեդիայի հայկական միությունները համադ-

րող կենտրոնը հրատարակել է «Հայկական ցեղասպանություն – 1915. հարցեր և պատասխաններ» գիրքը շվեդերենով¹, որն ընդգրկում է Մեծ եղեռնի վերաբերյալ տարրական հարցեր՝ ներկայացնելով նաև թուրքական տեսակետը:

Շվեդիայի և հայկական հարցի վերաբերյալ վերջին իրողությունը վերաբերում է 2009-ի հոկտեմբերի 29-ին: Այս օրը տեղի է ունեցել Շվեդիայի սոցիալ-դեմոկրատների 36-րդ կուսակցական համագումարը, որի ժամանակ արժարժվել է նաև Օսմանյան կայսրությունում հայերի, ասորիների, քաղղեսացիների և պոնտոսցի հույների ցեղասպանության ճանաչման հարցը: Էթնիկ միավորումների և այլ կազմակերպությունների (ինչպես, Եղբայրության շարժման քրիստոնյա սոցիալ-դեմոկրատների) հետ երկարատև և ծանր աշխատանքից հետո Շվեդիայի սոցիալ-դեմոկրատների կուսակցությունն ընդունել է ցեղասպանության ճանաչման բանաձևը և նրա ճանաչման հարցը դրել Շվեդիայի կառավարության, Եվրոպական Միության և ՄԱԿ-ի առջև:

¹ Armeniska folkmordet 1915: Frågor och svar, Stockholm, 2009.

ԳԼՈՒԽ Ե

ՀԱՅԵՐԸ ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

(XIX–XX դարեր)

Շվեդիա

1888 թվականին Ստոկհոլմում ընդամենը երեք հայ է բնակվել, որոնցից երկուսը՝ ժամանակավոր: Նրանց մասին տեղեկացրել է քաղաքի մշտական հայ բնակիչը՝ Նորայր Բյուզանդացին մի նամակում. «Ի Ստոքհոլմ կայ Հայ երիտասարդ մի, ի Պաքու քաղաքէ, աշակերտ Արուեստական դպրոցի քաղաքիս, Տ. Արշակ Թոմայեանց: ...Կայ նաև Հայ Տիկին մի, ամուսին Մ. Շ. Barèrreի, որ է Պաշտօնեայ (Ministre) Գաղղիոյ Տէրութեան ի մայրաքաղաքիս: Տիկին Պառու է ի Տամատեան ընտանեաց Կ. Պոլսի (կաթողիկեայ Հայ)»¹: Բյուզանդացին նկատի ունի պոլսահայ Միհրան Տամատյանի դստերը, որն ամուսնացած է եղել ֆրանսիացի հայտնի դիվանագետ, Շվեդիայում և Իտալիայում Ֆրանսիայի դեսպան Կամիլ Բառերի հետ, որն իբրև դեսպանուհի մեծապես աջակցել է ամուսնուն և որպես հայ մշտապես բարձր պահել իր ազգի անունը: Տիկին Բառերը մահացել է 1936 թվականին²:

Շվեդիայի առաջին հայ բնակիչների շարքում պետք է հիշել նաև ոմն Պեյլեկճյանի, որի հետ նույնիսկ Նորայր Բյուզանդացին ունեցել է շվեդերեն նամակագրություն (քանասերի արխիվում գտնվում են նամակների սևագրությունները)...

Պատմաբան Թոմաս Համարի վկայությամբ՝ 1902–1903 թվականներին Շվեդիայի այլևայլ բնակավայրերում շրջել են հայ գաղթականների խմբեր: Նրանք այնտեղ են հասել Ֆինլանդիայի, Դանիայի և Ռուսաստանի վրայով, մեծ մասամբ եղել են Ուրմիայից, որտեղ գործել է գերմանա-հայկական որբանոց: Այս հայերը զբաղվել են մուրացկանությամբ և պետությունից մշտական կեցության թույլտվություն են խնդրել: Նրանցից ոմանք վզից կախել են այսպիսի մակագրություններով թղթեր. «Ես թուրքերի կողմից ավերված հայկական եկեղեցու քա-

հանա եմ. խնդրում եմ օգնել վերակառուցել այն» կամ «խնդրում եմ օգնեք ազատել իմ քրոջը մահմեդական գերությունից»: Այս հայ մուրացիկներից ոմանք բավական օգնություն են ստացել շվեդ հոգևորականներից և ժողովրդից: Սակայն քանի որ նման գործունեությունն արգելված է եղել Շվեդիայում՝ կառավարությունը նրանց վտարել է երկրից: 1900–1914 թվականներին Շվեդիան երկրի սահմաններից արտաքսել է ընդհանուր թվով 363 հայի¹ (1911–1912 թթ.՝ տարեկան միջինը 30 հայի):

1911–1915-ին պարսկական զինվորական ծառայության մեջ են եղել 60 շվեդներ, որոնցից մի քանիսն ամուսնացել են իրանաբնակ հայուհիների հետ և իրենց հետ տարել Շվեդիա:

1917-ի ռուսական հեղաշրջումից հետո Շվեդիա են ապաստանել քիչ թվով ռուսաբնակ հայեր: Նրանցից ոմանք հաստատվել են երկրում, ոմանք էլ տեղափոխվել տարբեր երկրներ (ինչպես, բաքվեցի մեծահարուստ Ստեփան Լիանոզովը, որը եղել է Էստոնիայի ռուսական կառավարության ղեկավարը, հետագայում տեղափոխվել է Ֆրանսիա)²: Ի դեպ, ըստ ԱՄՆ-ի Գաղութային գործավարության տվյալների՝ 1899–1923 թվականներին սկանդինավյան երկրներից Ամերիկա է գաղթել 18 հայ, որոնցից 13-ը՝ Նորվեգիայից, չորսը՝ Շվեդիայից և մեկը՝ Ֆինլանդիայից³:

1934-ին Փարիզի «Յառաջ» օրաթերթին ուղարկվել է մի թղթակցություն, ըստ որի Ստոկհոլմում յոթ հայ է բնակվում՝ հինգ կին և երկու տղամարդ: Հայուհիներից երեքն ամուսնացած են օտարազգիների հետ, տղամարդն էլ շվեդուհու հետ: Գոթենբուրգում էլ բնակվել է մի պարսկահայ տիկին: Բացի մի մայր ու աղջկանից՝ մյուսները կապ չեն ունեցել հայության հետ: Ստոկհոլմի հայերից մեկը մարմնակրթություն է ուսանել Արքայական ուսումնարանում⁴:

¹ Tomas Hammar, *Sverige åt svenskarna: invandringspolitik, utlämningskontroll och asylrätt 1900–1932*, Stockholm, 1964, s. 69–71.

² Նույն տեղում, էջ 255:

³ Ն. Լ. Մանկունի, Ամերիկահայ մարդահամարը, Թեղիկ, *Ամենուն տարեցոյցը*, Վենետիկ, 1926, էջ 586–587:

⁴ Տես *Հայրենիք*, 5.01.1935:

¹ Նորայր Բիզանդացի, *Նամակներ Վիեննայի Մոսկովյաններին*, էջ 15:

² *Արագ*, Պոսթիշ, 16.02.1936:

XX դարում առաջին անգամ սակավաթիվ հայեր Շվեդիայում մշտական բնակություն են հաստատել 50-ական թվականներին, մեծ մասամբ Թուրքիայից արտագաղթածներ և տարբեր մասնագիտական կրթությամբ անձինք (օրինակ, դեղագործ և ճարտարագետ): 1952-ի տվյալով՝ Շվեդիայում հազիվ տաս տուն հայեր կային, մեծ մասամբ մտավորականներ՝ ամուսնացած շվեդների կամ ռուսների հետ¹: Սրանից երեք տարի անց, 1956 թվականի տվյալով, Ստոկհոլմի հայերի թիվը տասնհինգ էր²:

1952-ին Փարիզի «Այսօր-Ապագայ» թերթում անանուն մի հոդվածագիր (հավանաբար Մուրեն Երզնկյան-Լորելլին) տեղեկացրել է Շվեդիայի հայերի մասին. «Շուեդիայի մեջ հազիւ տասը տուն հայեր կան: Մեծ մասամբ մտավորական են և կ'ապրին մեծ քաղաքներու՝ Սթոկհոլմի, Ուփսալայի և Լունդի մէջ: Գուրգէն Խունունց և Միքայէլ Խանտամիրեան երկուքն ալ ռուսահայեր են և նախկին սպաներ: Խանտամիրեան ռուսերէնի դասախօս է Լունդի համալսարանի մէջ: Պոլսեցի Ժիրայր Աճէմեան ատամնաբոյժ է Սթոկհոլմի մէջ: Տիկ. Պիրլինկ, Թարիզ ծնած, շուեդացի սպայի մը կինն է: Այս տիկինը և Խանտամիրեան ունին դուստրեր, որոնցմէ առաջինը ուսուցչուհի է, երկրորդը լրագրողուհի»³: Իրականում ուսուցչուհին երկրորդն է՝ Լունդի բնակչուհի, հայ-ռուսական ծագումով Իրինա Հանդամիրովը (ծն. 1917), որը երկար տարիներ աշխատել է դպրոցում, շվեդներին ուսուցանել շվեդերեն: Նա հեղինակել է նաև երկու դասագիրք՝ Էվերթ Սվերքմանի համագործակցությամբ⁴:

Լունդի համալսարանում մոտ 40 տարի ռուսաց լեզվի ուսուցիչ է եղել Միխայիլ Ֆրիդոնի Խանդամիրովը (1883–1960): 1900-ին ավարտելով ուսումը Թիֆլիսի գիմնազիաներից մեկում՝ Միխայիլ Խանդամիրովն ընդունվել է Մոսկվայի կադետական կորպուս: Որպես սպա 1904-ին ուղարկվել է Վարշավա՝ ծառայելու գվարդիական գնդում: Ծառայության հետ մեկտեղ 1908-ին Պետերբուրգի արխիվներում

գրադվել է գիտահետազոտական աշխատանքով և ունկնդրել Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական բաժնի դասախոսությունները: 1913-ին աշխատանքի է անցել Մոսկովյան շրջանի ռազմական դատարանում, նաև հաճախել մոսկովյան Շանյավսկու ժողովրդական համալսարանի մանկավարժական դասընթացներին: Առաջին աշխարհամարտի ժամանակ Միխայիլ Ֆրիդոնովիչը դարձել է գործող բանակի 13-րդ կորպուսի ռազմական դատարանի անդամ: Ռուսական բանակի՝ Արևելյան Պրուսիա կատարած արշավի ժամանակ, 1914-ի օգոստոսին, գերի է ընկել Ալլենշթայնի մոտ: Մոր ջանքերի և շվեդական Կարմիր խաչի նախաձեռնությամբ 1916-ին ազատվել է և տարվել Վեսերայթլանդ (Շվեդիա): Շվեդիայում Միխայիլ Խանդամիրովը պատահաբար ծանոթացել է Լունդի համալսարանի սլավոնական լեզուների դասախոս Միգուրդ Ագրելի հետ: Վերջինս հետագայում օգնել է վտարանդի հայորդուն ռուսերենի դասեր տալ համալսարանում: Մանկավարժական աշխատանքից բացի նա Ռուսաստանի մասին հոդվածներ է գրել շվեդական հանրագիտարանի համար, խմբագրել 1923-ին Մալմյոյում հրատարակված և մի քանի անգամ վերատպված Գոստոնսկու «Ապուշի» շվեդերեն թարգմանությունը և ծավալուն հոդված գրել ռուս մեծ գրողի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ: Շվեդ սլավոնագետներին Խանդամիրովի անունը հայտնի է ռուս գրողների հետ ունեցած նրա կապերի և Շվեդիայում ռուս գրականության նրա կատարած պրոպագանդի շնորհիվ: Խանդամիրովը հատկապես մեծ ջանքեր է գործադրել Իվան Բունինին Նոբելյան մրցանակի արժանացնելու գործում, բազմիցս դիմել Շվեդական ակադեմիային, հեղինակավոր պրոֆեսոր Միգուրդ Ագրելին ներգրավել այդ գործի մեջ: 1922-ի աշնանը Լունդի համալսարանում ստեղծված սլավոնագետների խմբակի անունից Խանդամիրովը գրություններ է հղել ռուս տարագիր գրողներին և նրանցից բազմաթիվ նամակներ ստացել: Այս նամակագրությունը հրատարակվել է Լունդի համալսարանի սլավոնագետների «Սլավիկա Լունդենսիա» տարեգրքում (1973): Խանդամիրովի ուսանողներից են եղել հայտնի շվեդ արևելագետ և դիվանագետ Գունար Յարինգը և ռուսերենի թարգմանչուհի Ռուք Վեդին-Ռուքսոյնը¹:

¹ Խանդամիրովի մասին մանրամասն տես մեր հոդվածում (Արշուի Բախչույան, Посла-

¹ *Չարթոնթ*, Պէյրուք, 01.10.1952:

² *Այց*, Պէյրուք, 08.02.1956:

³ *Ազդակ*, Պէյրուք, 13.09.1952:

⁴ Irina Handamirov, Evert Sverkmán, *Roligt att läsa*, 1959. Irina Handamirov, Evert Sverkmán, *Ensamhet och gemenskap: studieplan*, 1961.

Վերոհիշյալ Գուրգեն Մնացականի Խումունցը (Հոնունց, 1892, Շուշի–1976, Ստոկհոլմ) ուսանող տարիներից ծառայել է ռուսական բանակում, կռվել թուրքական ճակատում: Ծանր վիրավորվելով՝ արտագաղթել է Ֆրանսիա, այստեղ հանդիպել մի շվեդուհու, ամուսնացել նրա հետ և տեղափոխվել Ստոկհոլմ: Այս ինքնուսուցանող գեղարվեստական գրապիտակներ է ստեղծել շվեդական տարբեր հաստատությունների, գրադարանների, հրատարակչությունների համար: Նրա նկարած 84 տարբեր գրապիտակների հավաքածուն արխիվի ալ նյութերի հետ անցել է ամերիկյան մի գրավաճառական ընկերության: Նկարիչ է եղել նաև Գուրգենի եղբայրը՝ Ֆրանսիայում բնակված Հովհաննես (Վանյա) Խումունցը (1894–1977):

Թարգմանիչ Արթուր Մազնուտնի՝ Ուփսալայի համալսարանի գրադարանում պահվող արխիվում կա կտրոն 1953-ի շվեդական մամուլից (ամենայն հավանականությամբ՝ «Ստոկհոլմ դագբլադեթից»), որտեղ թղթակից Բեգուիները հարցազրույց է ունեցել Սուրեն Երզնկյան-Լորելիի հետ: Վերջինս շվեդահայերի մեջ հիշել է նաև Յոնշյոփինգում բնակվող ճարտարագետ Շերիջյանին:

Խորհրդային պետական գործիչ, հրապարակախոս, լրագրող Սուրեն Երզնկյան-Լորելի (1881, Թիֆլիս – 1963, Ուփսալա) կյանքի վերջին տարիներն ապրել է Ուփսալայում: 1901-ից իրավաբանություն է ուսանել Ժնևի համալսարանում, գտնվել դեմոկրատական գաղափարներով տարված հայ և ռուս ուսանողների շրջապատում: Նախապես եղել է հնչակյան կուսակցության անդամ, այնուհետև մտել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերը: Ժնևում 1902-ին ծանոթացել է Լենինի հետ: Այնուհետև մեկնել է Փարիզ և սովորել Մորբոնի համալսարանում, որն ավարտել է 1912-ին պատմագիտության դոկտորի աստիճանով: 1917-ին ավարտել է նաև Մոսկվայի համալսարանը: Վերադառնալով Թիֆլիս՝ Երզնկյանը զբաղվել է համայնավարական քարոզչությամբ, կուսակցական հանձնարարություններ կատարել, որի համար ձերբակալվել և որոշ ժամանակ բան-

տարկվել է Մետեխի բանտում: Ջբաղվել է նաև գրական-հասարակական գործունեությամբ: Եղել է Բաքվի Հայարտան հիմնադիրը, 1921–1926 թվականներին խմբագրել է Թիֆլիսի «Կարմիր աստղ» և «Մարտակոչ», Բաքվի «Վիշկա» պարբերականները, աշխատակցել նաև հայերեն և ռուսերեն պարբերականների: «Սար-Մար» անունով Երզնկյանը Թիֆլիսում ունեցել է սեփական հրատարակչություն, Թիֆլիսում և Բաքվում հրատարակել է մի շարք գրքույկներ, Մոսկվայում՝ «Մեր տարածայնությունները» (1928) գիրքը: 1928–1929 թվականներին և 1930-ի առաջին երեք ամիսներին Սուրեն Երզնկյանը եղել է ԽՍՀՄ առևտրի ներկայացուցիչը Ֆինլանդիայում: Չկամենալով ներքաշվել տխրահռչակ Յագոդայի Չեկայի մեքենայությունների մեջ՝ 1930-ին նա քաղաքական ապաստան է խնդրել Ֆինլանդիայում: 1934-ին Հելսինկիում շվեդերեն և ֆիններեն լեզուներով լույս է տեսել «Կամո, Լենինի ընկերը, Ստալինի մտերիմը և համերկրացին» գիրքը՝ Հ. Լորելիի ծածկանվամբ¹: 1938-ին Փարիզում ֆրանսերեն տպագրվել է Երզնկյանի «Ստալինի կյանքը» մեծածավալ աշխատությունը (416 էջ) Իման Ռագուզա ծածկանվամբ (1944-ին հրատարակվել է նույնի ֆիններենը): 1941-ին ֆիններեն լույս է տեսել ԽՍՀՄ-ի մասին նրա գիրքը,² 1943-ին՝ «Խորհրդային կովի պատմությունը» գրքույկը³: 1944 թվականին Հելսինկիում լույս է տեսել Երզնկյանի «Կովկասն իմ հայրենիքն է» գիրքը՝ շվեդերեն, որտեղ նա առանձին գլուխներով ներկայացրել է կովկասյան երկրները, անդրադառնալով դրանց հին ու նոր պատմությանը և մշակույթին: 1944-ի սեպտեմբերին Սուրեն Երզնկյանը, խուսափելով խորհրդային ներխուժման հեռանկարից, փախել է Շվեդիա: Այստեղ նրան է միացել հելսինկցի շվեդուհի Յոթա Ֆյելը, և նրանք ամուսնացել են Ուփսալայում: Հետագայում Երզնկյանը շվեդերեն տպագրել է «Կովկասի ժողովրդական հեքիաթներ» և «Ստալինը և Խորհրդային Միությունը» (երկուսն էլ՝ 1945, Ստոկհոլմ) գրքերը: Նամակագրություն է ունեցել սփյուռքահայ մտավորականների (Արշակ Չոպանյան, Կարապետ Միտալ, Վահե Հայկ և այլք) հետ: Շվեդիային

нец русского языка в Швеции, *Русские в Скандинавии: Дания, Норвегия, Швеция*. Таллин, 2008, стр. 195-198, նաև՝ *Редкостная для нашей интеллигенции закваска, Иные берега*, Москва, 2009, no 1 (13), стр. 56-59:

¹ H. Lorelli, *Kamo, tsarismens bekämpare. Lenins vän och lärjunge, Stalins kamrat och landsman*, Helsingfors, 1934, p. 62.

² Imam Raguz, *Sovietismen i Suur-Saksan iskuista*, Tekijä, 1941.

³ Imam Raguz, *Historien om den sovietiska kon*, Helsingfors, 1943.

և շվեդ-հայկական կապերին նվիրված հոդվածներով հանդես է եկել Նյու Յորքի «Նոր գիր» ամսագրում, Փարիզի «Արևմուտք» թերթում, Ստամբուլի «Երջանիկ» տարեգրքում, ինչպես նաև Հայաստանին վերաբերող ակնարկներ է տպագրել հայաստանյան կողմնորոշում ունեցող ամերիկահայ մամուլում («Պայքար», «Երիտասարդ Հայաստան», «Լրաբեր»): 1995-ին նրա այրին՝ Յոթա Ֆյելը, Ուփսալայում հրատարակել է ամուսնու «Հեքիաթներ Կովկասից» շվեդերեն գիրքը¹:

Այժմ Երզնկյանի հարուստ արխիվը պահվում է Օսլոյի համալսարանի գրադարանում:

Ֆինն պրոֆեսոր Կիննո Ռենտոլան իր մի աշխատության մեջ, հրատարակված Ֆիննական անվտանգության ոստիկանության կողմից, լույս է սփռում Սուրեն Երզնկյան-Լորելիի կյանքի և գործունեության վրա:

1956-ին «Այգ» թերթում լույս տեսած թղթակցության մեջ շվեդաբնակ հայերի մեջ հիշվում են Սոնիա Վարդանյանը՝ շվեդ լրագրող Քլասոնի կինը, դաշնամուրի ուսուցչուհի Ժերմեն Զարյանը (հավանաբար Ջարդարյան), փորագրիչ, բյուրեղակարիչ Բյուզանդ Քյուրքչյանը և ռադիոյի մասնագետ Անթուան Օրինյալը²:

Այս անունների վերաբերյալ գտանք հետևյալ տեղեկությունները: Սոնիա Վարդանյանը հավանաբար նույն Ռոզա Վարդանյանն է, որի անունը 1951 թվականի սփյուռքահայ մամուլում հիշված է որպես Ստոկհոլմի համալսարանի լրագրության բաժնի ուսանողուհի, որը հավանաբար եղել է իրանահայ, քանի որ նույն թվականին Ստոկհոլմում դասախոսություն է կարդացել Իրանի մասին³: Անթուան Օրինյալը (1917–1966), որ ծնունդով պոլսեցի էր, հայ-լեհական ընտանիքից, եղել է ոչ միայն ռադիոյի մասնագետ, այլ թուրքական «Ջունիորիեթ» թերթի թղթակիցը Շվեդիայում: Ծնունդով պոլսեցի էր փորագրանկարչությանը և բյուրեղակարչությանը զբաղված Բյուզանդ Քյուրքչյանը (1922–1999), որ 1940-ականների վերջին հաստատվել է Ստոկհոլմում: Նույն աղբյուրում նշված չէ ստոկհոլմահայ կյանքի հայտնի դեմքերից

¹ Յոթա Ֆյելի և Լորելի մասին մանրամասն տես մեր հոդվածում (Artsvi Bakhchinyan, An Armenian Saga: Sireli Gota..., Ararat, N 187, Summer, 2006, p. 26-28):

² Այգ, Պէյրուք, 8.02. 1956:

³ Տես Հայրենիք, 28.10.1951:

մեկը՝ ճարտարագետ, թարգմանիչ Պետրոս Ջարդարյանը (1925–1997. հավանաբար նա է եղել «Այգին» ինֆորմացիան տվողը): Ջարդարյանը հայերենից թուրքերեն է թարգմանել Կարո Սասունու՝ հայ-քրդական հարաբերություններին նվիրված գիրքը (1986-ին լույս է տեսել Ստոկհոլմում¹): Ջարդարյանի կինը՝ նույնպես պոլսեցի Ժերմեն Ջարդարյանը (ծնյալ Օրինյալ), եղել է դաշնամուրի ուսուցչուհի: 1999-ին Ստոկհոլմում հետմահու լույս է տեսել նրա «Թուրք ազգ մը գոյություն ունի» արդյոք» աշխատությունը:

Շվեդահայ համայնքը որպես ազգային քիչ թե շատ կյանքով ապրող կազմակերպված կառույց կազմավորվել է 1970-ական թվականների կեսին: Մյնչ այդ երկրում հաստատված մի քանի տասնյակ ընտանիքները համայնքային գործունեություն գրեթե չեն ունեցել: Հայ գաղթականների առաջին ալիքը հասել է լիբանանյան պատերազմի ժամանակ, որից հետո էլ սկսել են ձևավորվել առաջին ակումբները: 1976-ի տվյալով Շվեդիայում բնակվել է 300 հայ²: Շվեդահայության թիվը հատկապես մեծացել է 1979-ին Իրանի հեղափոխությունից հետո, երբ բազմաթիվ հայ ընտանիքներ լքել են Պարսկաստանը և հիմնավորվել Շվեդիայում: Տարեցտարի համայնքի անդամների թիվն ավելացել է՝ ի հաշիվ Շվեդիայում հաստատվածների կողմից անընդհատ հրավիրվող ազգականների: Արդեն 1970-ական թվականների վերջերին շվեդները հատուկ ուշադրություն են դարձրել հայերին՝ որպես իրենց երկրի էթնիկական և կրոնական փոքրամասնության. երեք շվեդ հեղինակներ գրել են այդ թեմայով գիրք: 1984-ին հայ մամուլը գրել է, որ շվեդահայ գաղութն ունի 1000 անդամ, երկու ժամ տևող ձայնասփյուռի հայտագիր և պարբերական մամուլ, նշել, որ Ստոկհոլմում ապրում են շուրջ 500 հայ, Ուփսալայում՝ 200, մնացածը՝ այլ քաղաքներում³: 1988 թվականի տվյալով շվեդահայության թիվը եղել է մոտ 1300 մարդ, որոնցից 500-ն ապրել են Ստոկհոլմում, 500-ը՝ Ուփսալայում, մնացածը՝ այլ քաղաքներում: 1991-ին Շվեդիայում ապրող հայերի թիվը հասել է 3000-ի, իսկ 1995-ին, մոտավոր հաշվումներով՝ շուրջ

¹ Karo Sasuni, *Kürt Ulusal Hareketleri ve Ermeni-Kürt İlişkileri (15 y. y. dan günümüze)*, 1986, Orfeus, Stockholm [Bedros Zartaryan, Memo Yetnik].

² ՀԱԱ, ՊՖինդ 857, ցուցակ 8, գործ 188, վավերագիր 6:

³ Արարատ, Պէյրուք, 27.09.1984:

3500-4000-ի: Նրանց 65 տոկոսն Իրանից գաղթածներ են, մնացած 35-ը՝ Սերձավոր Արևելքից և այլ երկրներից: Մայրաքաղաք Ստոկհոլմում և շրջակայքում (Վեսթերոս, Սյոդերթելյե, Ռինքեբի, Թենսթա, Հյուդդինգե, Հելենելուդ, Սոլենթունա) ապրում են ամենատարբեր գաղթօջախներից արտագաղթած հայեր, Մալմյոյում՝ Իրաքից և Սիրիայից եկածներ, Գյոթերորգում՝ Լիբանանից և Թուրքիայից, Ուփսալայում՝ Իրանից, Վեսթերոսում՝ Իրաքից և Իրանից, Նուրշյոփինգում և Յոնշյոփինգում՝ Թուրքիայից, Լինշյոփինգում՝ Իրաքից և Իրանից, Սանդվիքենում՝ Իրանից և Սիրիայից, Քնիվսթայում՝ Ռուսաստանից, Լունդում՝ Իրաքից և այլ երկրներից արտագաղթածներ: Իսկ Շվեդիայի հյուսիսային Ումեո և Լուլեո քաղաքներում եղել են մի խումբ հայ ուսանողներ¹: Հայերի մեծամասնությունը սեփական ռեստորաններ և սննդեղենի խանութների տեր է:

Հատկանշական է, որ Շվեդիայի ժողովրդավարական պայմաններում Թուրքիայից արտագաղթած թրքախոս և քրդախոս հայերին հնարավորություն է տրվել վերադառնալ արմատներին: Այս առումով հատկանշական է քրդերենի ուսուցիչ Իսա Բուրուրի ընտանիքի պարագան: Նա Հայաստան է մեկնել և ուսանել հայերեն, վերափոխել է անունը՝ կոչվելով Վրեժ Քոսայան, որոշ ժամանակ նախագահել Հայաստանին օժանդակող «Քոսայան հիմնադրամը», իսկ ներկայումս՝ Վեսթերոսի «Արարատ» միությունը: Ի դեպ, Վրեժ Քոսայանի դուստրը՝ Նուրսեն Քոսայանը, Վեսթմանլանդի մամուլում հանդես է եկել հայոց եղեռնի մասին հողվածով²: Շվեդահայ կյանքի ակտիվիստներից Հայկ Արամյանը նույնպես Շվեդիայի պայմաններում է կարողացել վերագտնել հայությունը. Ադանայում ծնված Սուլեյման Սուջուբջու անունով այս թուրքախոս հայը ազգային փոքրամասնությունների մշակույթը խրախուսող շվեդական հասարակության մեջ կարողացել է վերադառնալ իր արմատներին:

¹ *Det mångkulturella Sverige...*, s. 21.

² Sön Nursen Kosayan, 80 år efter den armeniska tragedin, *Vestmanlands Läns Tidning*, 24.04.1995.

1990-ականների վերջին շվեդահայ համայնքը մի կողմից ավելանում է՝ ի հաշիվ քաղաքացիություն ստացածների կողմից անընդհատ հրավիրվող ազգականների, մյուս կողմից որոշ ընտանիքներ երկրից հեռանում են հիմնականում ԱՄՆ՝ շղիմանալով կլիմայի խստությամբ և հայկական գաղթօջախի պասիվ կյանքին:

Ուփսալայում Շվեդիայի չորրորդ մեծ քաղաքում, բնակվում է շուրջ 1500 հայ: Ուփսալահայ համայնքը համեմատաբար ամենից աշխույժն է Շվեդիայում: Այստեղ գործում են «Հայաստան» համահայկական հիմնադրամի Շվեդիայի մասնաճյուղը, Հայ-շվեդական բարեգործական կազմակերպությունը, որը բավական նյութական օգնություն է առաքել Հայաստան և վերջում իր նյութական միջոցները տրամադրելով «Հայաստան» հիմնադրամի Շվեդիայի մասնաճյուղին՝ հարմար է գտել գործել հիմնադրամի կազմում: Միության հիմնական աշխատանքը կենտրոնացված է շաբաթօրյա հայ դպրոցի վրա, որտեղ աշակերտները սովորում են մայրենի լեզու, գրականություն և հայոց պատմություն:

1974-ին հիմնվել է հայկական ակումբ՝ «Ստոկհոլմի հայ մշակութային միությունը», նախագահն էր Շապուհ Գեդիզը (Կետիկյան, այժմ բնակվում է Ֆրանսիայում, Նիսում), քարտուղարը՝ Պետրոս Չարդարյանը, հիմնադրամը մասնակցել է նաև Էմիլ Մինասյանը: Այս ակումբն ունեցել է գրադարան և ընթերցասրահ՝ Հայաստանից ստացված գրքերով, գործել են հայերենի դասընթացներ, զեղարվեստական մի համեստ համույթ, քատերական խմբակ, ֆուտբոլի և սեղանի թենիսի թիմեր: Շվեդիայում ստեղծված առաջին հայկական միություններից է նաև Ուփսալայի Հայ մշակութային միությունը, հիմնադրված 1980-ին, որն ունի հավաքատեղի, շաբաթօրյա դպրոց, ժամանակին ունեցել է կարճատև գործունեություն ծավալած քատերախումբ, երգչախումբ, գրական խմբակ, մարզական թիմեր: Երկար տարիներ գործում է «Գայանե» հայ ժողովրդական պարի խումբը, որ ղեկավարում է Հայաստանում մասնագիտական կրթությունն ստացած պարուսույց Արմինե Չաքինյանը:

Կարճ ժամանակ հայկական ռադիոժամ է գործել Ստոկհոլմում և Ուփսալայում: Իսկ Ուփսալայի, Մյոդերթեյեի և Վեսթերոսի քաղաքային գրադարաններում հիմնվել են հայերեն գրքի բաժիններ:

1988-ին հիմնված Ուփսալայի «Արարատ» ֆուտբոլի թիմը պատկանել է Հայ մարմնակրթական ընդհանուր միությանը: 1994-ի մարտին հիմնվել է Ուփսալայի «Արարատ» հայկական մարզակումբը՝ բասկետբոլի և ֆուտբոլի խմբերով, որոնք մասնակցում են Ուփլանդս Վեսթի մարզի սպորտային մրցույթներին:

Համաձայն 1967-ին ընդունված պետական որոշման՝ Շվեդիայում ապրող ազգային փոքրամասնություններն իրավունք ունեն մայրենի լեզու ուսանել մանկապարտեզներում և միջնակարգ դպրոցներում: Շվեդիայում հայերենի առաջին ուսուցիչը եղել է Պետրոս Ջարդարյանը (1972-ից), երկրորդը՝ Լևոն Գեղարարյանը. տարբեր ժամանակներ Ստոկհոլմի և Ուփսալայի դպրոցներում հայ երեխաներին մայրենի լեզվի դասեր են տվել Արամ Համբարձումյանը, Հասմիկ Գալստյանը, Սամսոն Առաքելյանը, Նունե Հարությունյանը, Ջոկոնդա Միրզախանյանը և այլք: Հատկանշական է, որ Ստոկհոլմում ժամանակին օտարախոս հայ երեխաներին հայոց լեզվի դասեր է տվել շվեդ հոր և հայ մոր զավակ Իգա Լեյ Արմինե Մուրերգը: Այդուամենայնիվ, Շվեդիայում ծնված հայերի սերունդն ավելի լավ տիրապետում է շվեդերենին, ինչը նրանց փաստացի մայրենի լեզուն է:

2007-ին Ուփսալայի հայկական երկու միությունները և եկեղեցական խորհուրդը եկան համաձայնության, որ հայկական դպրոցներն այսուհետ պետք է աշխատեն միատեղ՝ եկեղեցու հովանու ներքո և մեկ անվան տակ: Սակայն 2009-ին «Րաֆֆի» միությունը նորից իր դպրոցն առանձնացրեց: Ստոկհոլմում իրավիճակն ավելի անմխիթար է. պարբերաբար դասընթացներից անդին կայուն դպրոցի հասկացություն գոյություն չունի:

1977-ի աշնանը և 1978-ի ապրիլին գերաշնորհ Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը Գյուտ սրբազան Նազգաշյանի ընկերակցությամբ այցելել է Ստոկհոլմ, որի Սուրբ Սոֆյա եկեղեցում, առաջին անգամ Սկանդինավիայում, հայկական պատարագ է մատուցվել: Այդ օրերին կազմակերպվել է ութ հոգուց բաղկացած Շվեդահայ զաղութի

ազգային-եկեղեցական մարմինը, որի նախագահ է ընտրվել Շապուհ Գեղիզը¹: Սկսած 1979-ից, Հայ առաքելական եկեղեցին իր ներկայացուցչությունը և եկեղեցական խորհուրդներն ունի Ստոկհոլմում և Ուփսալայում: Ստոկհոլմի հայ եկեղեցին գտնվում է Սքեփսհոլմում², հայ եկեղեցական արարողություններ են կատարվում նաև Շիսթայում: Ստոկհոլմի հայ առաքելական եկեղեցու վարչությունը մի կարճ ժամանակ ունեցել է սեփական երգչախումբ: Ստոկհոլմի եկեղեցական խորհրդի առաջին հոգևոր ներկայացուցիչը եղել է Անուշավան վարդապետ Ջղջանյանը (1931–1999): Ստոկհոլմի հայության հոգևոր առաջնորդը 1982-ին եղել է Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, որը կարգավորել է եկեղեցական աշխատանքները, Ուփսալայում վարձել շենք՝ եկեղեցական արարողությունների համար: Հայ եկեղեցական արարողություններ կատարվել են նաև Ուփսալայի հայաշատ Գոթսունդա քաղամասի եկեղեցում: Սկանդինավիո հայոց հոգևոր հովիվն է եղել նաև Բարսեղ ավագ քահանա Խաչերյանը (1931–1992): Շվեդիայում հայկական եկեղեցին վարչականորեն ենթարկվում է Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակությանը (նստավայրը Վիեննայում է): Գործում են Ուփսալայի, Ստոկհոլմի և Գյոթեբորգի եկեղեցական խորհուրդները, երկու հոգևոր հովիվ, որոնց վարձատրում է պետությունը:

Շվեդիայի հայության առաջին համագումարը տեղի է ունեցել 1989 թվականի դեկտեմբերին Մանդվիքեն քաղաքում, երկրորդը՝ 1990-ին, Ուփսալայում: Այս երկու համագումարների արդյունքում 1991-ին ստեղծվել է Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոն Ուփսալայում: Ողջ երկրի տարածքում անցած քսան տարիների ընթացքում գոյություն են ունեցել շուրջ քսանվեց հայկական կազմակերպություններ, որոնց մի մասը կարճ կյանք է ունեցել: Այդ միություններից են Ստոկհոլմի հայ-շվեդական մշակութային միությունը (ստեղծված 1985-ին) և «Արարատ» մշակութային միությունը (ստեղծված 1989-ին), Մանդվիքեն-Օբելբուի հայ մշակութային «Վան»

¹ ՀԱԱ, ՊՅՈՒՆ 875, ցուցակ 8, վավերագիր 46:

² *De kommer från öst... österländska och ortodoxa kyrkor i Sverige*, red. E. Lindberg, Stockholm, 1982, s. 10.

միությունը (ստեղծված 1989-ին), Ուփսալայի «Բաֆֆի» մշակութային միությունը (ստեղծված 1986-ին) և «Հայ մշակութային միությունը» (երկուսն էլ ունեցել են շաբաթօրյա դպրոցներ), Վեսթերոսի Հայ մշակութային միությունը (հետագայում տեղափոխվել է Սյոդերթեյն), Վաքսհոլմի «Մասիս» մշակութային միությունը, Ուփսալայի հայ առաքելական եկեղեցու խորհուրդը, Սկանդինավիայի հայ կանանց միությունը, Գոթլանդի հայ մշակութային «Արարատ» ընկերությունը և այլն¹: Շվեդիայում մասնաճյուղ ունի նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի նախագահն է բժիշկ Ռաֆիկ Բորոյանը: Շվեդիայի հայկական երկրորդ համագումարի պատվիրակությունը 1991 թվականի սկզբին Հայաստանի երկրաշարժի գոտի և Արցախ է հասցրել որոշ քանակությամբ դեղորայք և հագուստ: Շվեդահայության երրորդ համագումարը կայացել է 2001-ի նոյեմբերին, դարձյալ Ուփսալայում, իսկ 2002 թվականի հունիսին նույն քաղաքում կայացել է Եվրոպայի Հայկական միությունների ֆորումի չորրորդ հավաքը: 2002 թվականին Ուփսալայի Գոթլանդա հայաշատ թաղամասում Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոնի և Հայ մշակութային միության ջանքերով բացվել է մի նոր կենտրոնատեղի՝ ազգային, մշակութային և հասարակական աշխատանքների համար:

Շվեդիայում ցայսօր հրատարակվել են ութ հայերեն պարբերականներ. «Արագիլ» (Ուփսալայի Հայ մշակութային միություն, 1980, լույս է տեսել երեք համար), «Կռունկ» (Ստոկհոլմի Հայ մշակութային միություն, 1984), «Մեր կռունկը» (Ստոկհոլմի Հայ-շվեդական մշակութային միություն, 1985–1987), «Բալենի» (Ստոկհոլմի Հայ մշակութային կենտրոն, 1987–1989), «Հյուսիսսափայլ» (Ուփսալա, անկախ պարբերաբերք, 1986–1989), «Բաֆֆի» (Ուփսալայի «Բաֆֆի» մշակութային միություն, 1987), «Նոր հորիզոն» (Շվեդիայի Հայկական միությունները համադրող կենտրոն, Ուփսալա, ընդհատումներով 1994–2007) և «Արմեն» (Թրոլհեթենի Հայ մշակութային միություն, 1997) պարբերականները, որոնք մեծ մասամբ կարճատև կյանք են ունեցել: Մանդվիքենում և Ուփսալայում 1990–1991 թվականներին լույս է տեսել նաև «Չարենց» օրացույցը: Շվեդահայ հրատարակություններից

¹ Հայրենիքի ձայն, Երևան, 27.03.1991:

իր բացառիկ արժեքով և նյութերի հարստությամբ աչքի են ընկնում «Հյուսիսսափայլ» տարեգիրքը (Ուփսալա, 1994–1995, հրատարակիչներ՝ Պետրոս Աբաջյան, Գասպար Սինաբյան) և «Նոր հորիզոնը» (խմբագիր՝ Կարո Հակոբյան, մի քանի համարներ խմբագրել է Ջոկոնդա Միրզախանյանը): Բոլոր նշված հրատարակություններում առանձին նյութեր տպագրվել են նաև շվեդերեն լեզվով:

Ժամանակ առ ժամանակ Շվեդիայի տարբեր բնակավայրերում հայերը կազմակերպում են զանազան բնույթի միջոցառումներ, ցուցահանդեսներ, համերգներ և այլն: Այսպես, 1996-ի օգոստոսի 29-ին Ուփսալայի Ուփլանդս քանդարանում բացվել է հայկական ցուցահանդես, իսկ հոկտեմբերի 28–30-ը Ստոկհոլմում և Ուփսալայում կայացել են հայ մշակույթի օրեր, ելույթներ են ունեցել հայ և շվեդ երաժիշտներ (սրնգահար Գունիլլա Ֆոն Բար, դաշնակահար Արթուր Սհարոնյան)¹: Շվեդիայի հայերը տարբեր քաղաքներում 2001-ին նշել են Հայաստանի քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակը: Ուրախալի է, որ հայկական միջոցառումներին գնալով ավելի և ավելի շատ շվեդներ են մասնակցում, որոնցից են երգչուհի Անն Շառլոթ Մերիանսարը (Ուփսալայի Սթենհագեն եկեղեցում կատարել է Կոմիտասի և Արամ Խաչատրյանի երգերից), գրող և ասմունքող Սթիգ Լյունդսթրյոմը (արտասանել է թարգմանություններ հայ պոեզիայից) և այլն²:

Որոշ ժամանակ գործել են նաև հայ-շվեդական համատեղ ձեռնարկություններ, ինչպես՝ «Առագաստը», որը 1992-ին ֆինանսավորել է հայկական «Ռադիո Երևան» ֆիլմի արտադրությունը:

2007-ի փետրվարին ստեղծվել է Շվեդահայ ակադեմիկների միությունը՝ նպատակ ունենալով ոգևորել հայ պատանիներին ստանալ բարձրագույն կրթություն, օգնել հայ ուսանողներին ավելի արագ և դյուրին հարմարվելու ուսման գործընթացներին, ցույց տալ մասնագիտական օգնություն, կազմակերպել քննարկումներ, ձեռնարկել նախա-գծեր Հայաստանի հետ³:

¹ Տե՛ս *Ցամաք*, 19-20.11.1996:

² Տե՛ս *Նոր հորիզոն*, 2000, ք. 1, էջ 7:

³ Տե՛ս *Նոր հորիզոն*, 2007, ք. 2-3, էջ 7:

Ցավոք, պետք է նկատել, որ շվեդահայ համայնքն էլ գերծ չի մնացել ներկուսակցական պայքարից, ներքին հակասություններից և անախորժ պատմություններից, որոնց չենք անդրադառնում¹:

Անդրադառնանք շվեդահայ համայնքի համեմատաբար ակտիվ անդամներին:

Ռոզանա Շումեցը (օրիորդական անունով՝ Ռոզա Այվազյան, ծն. 1928, Թբիլիսի) 1934-ից ընտանիքով տեղափոխվել է Իրան, 22 տարի բնակվել Թեհրանում: 1963-ին տեղափոխվել է նախ Հայաստան, որտեղ 1968-ին ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների մասնաճյուղի անգլերեն լեզվի և գրականության բաժինը: 1970-ին ամուսնու և զավակների հետ տեղափոխվել է Շվեդիա և հաստատվել Ստոկհոլմում՝ դառնալով նրա նոր կազմավորվող հայ համայնքի ակտիվ գործիչներից մեկը: Ամուսինը՝ Էմիլ Մինասյանը, Ստոկհոլմում դարձել է 1974-ին հիմնված Շվեդիայի առաջին հայկական կազմակերպության՝ «Հայկական մշակութային միության» հիմնադիրներից մեկը և մինչև մահը՝ շվեդահայ համայնքի ակտիվ անդամներից մեկը: Իսկ Ռոզանա Շումեցի կյանքի գործը շվեդ ականավոր գործիչ Արն դը Գոթիայի մասին Յան Գիլյոյի եռագրության քարգմանությունն է:

Շվեդահայ գաղթօջախի ակտիվ գործիչներից Կարո Հակոբյանը (ծն. 1952, Թեհրան) նախնական կրթությունն ստացել Թեհրանում և Անթիլիասում (1963–1967), ապա ուսանել Թեհրանի պետական համալսարանի մաթեմատիկայի բաժնում՝ մասնակցելով նաև համալսարանի հայագիտական ամբիոնի դասընթացներին: Հայկական վարժարաններում դասավանդել է հայագիտական առարկաներ և մաթեմատիկա: Բանաստեղծական առաջին փորձերը կատարել է Լիբանանում՝ արևմտահայերեն: 1979–1986 թվականներին եղել է Իրանում ստեղծված «Հայ մշակութային կազմակերպության» հիմնադիր անդամներից և կազմակերպության խոսնակը: Իրանի իսլամական հեղափոխությունից հետո շուրջ երեք տարի հրատարակել է Իրանում առաջին ազատ մամուլը՝ վերոհիշյալ կազմակերպության օրգան «Նոր

¹ Այս մասին տես ՀԱԱ, ՊՖոնդ 875, ցուցակ 8, գործ 188, ցուցակ 13, գործ 181, 167, 194:

խոր» երկշաբաթաթերթը, «Ռոտ»-ը են հայկական ջարդերի գլխավոր պատճառները» հայերեն-պարսկերեն գրքույկը, խմբագրել «Չարենց» օրացույցների շարքը, աշխատակցել իրանական մամուլին: 1986-ին հաստատվելով Շվեդիայում՝ ուսանել է Ուփսալայի համալսարանի համակարգչային գիտությունների բաժնում, ապա միամյա դասընթաց անցկացրել նույն համալսարանի մանկավարժական բաժնում: Հակոբյանը մաթեմատիկա եւ համակարգչային ծրագրավորումներ է դասավանդում Ստոկհոլմի դպրոցներից մեկում: 1994–2005 թթ. խմբագրել է Հայկական միությունները համադրող կենտրոնի «Նոր հորիզոն» հանդեսը: 2000-ին Շվեդիայում լույս է տեսել Կարո Հակոբյանի «Գերված սրտեր» բանաստեղծությունների գրքույկը՝ տողերիս հեղինակի նախաբանով և նկարչուհի Թելմա Էմենի պատկերազարդումներով:

Մի շարք հայեր գործում են բուն շվեդական միջավայրում, հասկապես մանկավարժության, արվեստի և սպորտի բնագավառում:

Ճարտարապետ Պիեռ Տեր-Հակոբյանը (ծն. 1927, Լաքաբիա, Սիրիա) ուսանել է Բեյրութի ֆրանսիական համալսարանում, ապա՝ Փարիզի ճարտարապետության դպրոցում: Որպես ճարտարագետ աշխատել է Քուվեյթում, Սիրիայում և Լիբանանում: 1958-ին հաստատվելով Գյոթեբորգում՝ Տեր-Հակոբյանն ակտիվ մասնակցություն է ունեցել Ստոկհոլմի և Շվեդիայի այլ քաղաքների եկեղեցական շինությունների նախագծման աշխատանքներին: Իր գործունեության համար արժանացել է մրցանակների և համարվել Շվեդիայի լավագույն ճարտարապետներից մեկը: Որոշ ժամանակ եղել է աֆրիկյան Գաբոն պետության ներկայացուցիչը Շվեդիայում՝ շնորհիվ իր Փարիզի դասընկեր, Գաբոնի նախագահ Օմար Բոնգոյի: Ի դեպ, Տեր-Հակոբյանի նախագծով Շվեդիայում կառուցվել է մատուռ՝ հայ միջնադարյան ճարտարապետության տարրերով:

Լորան Լեքսելը (ծն. 14.12.1952, Լուդո) «Էլեկտա Էյ Բի» բժշկական տեխնիկայի ընկերության հիմնադիրը և ղեկավարն է: Հայրը շվեդ է, մայրը՝ Լյուդմիլա Սուրոտյանը (1918–1965), պարսկահայ:

Մալմյոյում բնակվող Գրեգ Դինգիզյանը (ծնունդով Իրաքից) «Գոթիկ» ընկերության փոխնախագահն է¹: Նա 1998-ից աշխարհի

¹ Նրա մասին տես Svenska dagbladet, 26.05.1997.

առաջին բուսակերային ռեստորանային ցանցի՝ «Meaning Green»-ի նախագահն է, որը հարյուրավոր ռեստորաններ է բացել Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում:

Մեզ հայտնի չէ, թե Գրեգ Գինգիզյանի հետ ինչ առնչություն ունի Էսաբել Գինգիզյան-Ռշտունին (ծն. 1962), որը շվեդական կանաչների կուսակցության ակտիվիստ է, 2006-ին ընտրվել է շվեդական խորհրդարանի՝ Ռիքսդագի անդամ: Նրանից բացի շվեդական խորհրդարանի պատգամավոր է ընտրվել արդեն երկու անգամ հիշված Մուրադ Արթինը:

Շվեդահայոց մեջ կան փոքրաթիվ գիտնականներ: Աշխարհագրագետ Մանուկ Սարգսյանը Շվեդիայի անտառների մասնագետ է: Մերժիկ Ջարգարյանը մաթեմատիկոս է և ֆիզիկոս, էլեկտրական և մագնիսական դաշտերի մասնագետ: Ֆիզիկոս Վլաչեսլավ Ավետիսովը աշխատություն է հրատարակել Լուսնում դիտրային լազերի սպեկտրոսկոպիայի վերաբերյալ¹: Ուփսալայի համալսարանի տնտեսագետներից է Հուլիկ Շահնազարյանը (ծն. 1965), որը հեղինակ է Շվեդիայի հարկային քաղաքականության մասին երկու անգլերեն աշխատությունների²: Իսկ Լուսնի համալսարանի տնտեսագիտության բաժնի գիտաշխատող Էլիաս Ղազարյանը աշխատություն է գրել Եգիպտոսի տնտեսության վերաբերյալ³:

Շվեդիայում գործում են նաև հայ մաթեմատիկոսներ: Նախկին երևանցի մաթեմատիկոս Արմեն Ասատրյանը (ծն. 10.07.1951, Ստեփանավան) ներկայումս աշխատում է Լինշյոֆինգի համալսարանի մաթեմատիկայի բաժնում: Ուսանել է Երևանի պետական համալսարանում, 1980-ին Մոսկվայի պետական համալսարանում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1976–1995 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում: 1992–1993 թթ. որպես հյուր դասախոս և հետազոտող աշխատել է Վաթերլոյի (Կանադա) և Թուենթի

¹ Viacheslav G. Avetisov, *High-sensitivity high-resolution diode laser spectroscopy in the near-infrared region*, Lund, 1995.

² Hovick Shahnazarian, *A theoretical evaluation of the Swedish corporate tax reform act of 1994*, Uppsala, 1994; *Three essays on corporate taxation*, Uppsala, 1996.

³ Elias Kazarian, *Finance and economic development: Islamic banking in Egypt*, Lund, 1991.

(Նիդեռլանդներ) համալսարաններում, իսկ 1993–1995 թթ. եղել Շվեդիայի հյուսիսային Ումեո քաղաքի համալսարանի հետազոտող: Ասատրյանը 1997-ին շվեդական հյուսիսի մեկ այլ քաղաքի՝ Լուֆեյի տեխնոլոգիայի համալսարանում ստացել է մաթեմատիկայի դոցենտի կոչում (2001-ից՝ պրոֆեսոր), իսկ 2003-ից Լինշյոֆինգի համալսարանի կիրառական մաթեմատիկայի պրոֆեսոր է: Արմեն Ասատրյանը համահեղինակ է երեք գրքի՝ հայերեն, անգլերեն և շվեդերեն¹:

2001-ից Ստոկհոլմի Տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտի պրոֆեսոր է մաթեմատիկոս Հենրիկ Շահոլյանը (ծն. 16.12.1960, Թեհրան): 1987–1991 թթ. ուսանել է այդ ինստիտուտում: Հեղինակ է 60 աշխատությունների՝ 2008-ին Թագավորական գիտությունների միությունը նրան արժանացրել է իր տարեկան մրցանակին՝ գիտության մեջ իր ձեռքբերումների համար: Ստոկհոլմի Տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտում Շահոլյանն ունեցել է հայ ուսանողներ: Նրանցից Արշակ Պետրոսյանը թեկնածուական թեզ է պաշտպանել 2000-ին), Նորայր Մաթևոսյանը՝ 2003-ին, իսկ Արամ Կարախանյանը՝ 2004-ին: Պետրոսյանն այնուհետև համատեղ աշխատություններ է հեղինակել Հենրիկ Շահոլյանի հետ:

Ինժեներ Պյոտր Ջարյանը (ծն. 1961, Բորովյանսկ, Մինսկի շրջան, Բելառուս) մինչև Ստոկհոլմում հաստատվելն ուսանել է Մինսկի ռադիոտեխնիկայի ինստիտուտում (1982–1989): Աշխատել է Սանկտ-Պետերբուրգի Արկտիկայի և Անտարկտիկայի գիտահետազոտական ինստիտուտում (1979–2005): 1986–1987 թթ. 17 ամիս մնացել է Անտարկտիդայում՝ որպես 31-րդ խորհրդային արշավախմբի անդամ, աշխատել որպես վերանորոգության ինժեներ և ռադիոսարքավորումների պատասխանատու: Ներկայումս Ջարյանն աշխատում է Ստոկհոլմի «Էրիքսոն» ֆիրմայում, զբաղվում է նոր բջջային հեռախոսների նախատիպերի արտադրության տեխնոլոգիաների սխալների վերլուծությամբ:

¹ Տես՝ Ա. Ասատրյան, Գ. Հակոբյան, *Գրաքննչի տեսության պրոբլեմներ և վարժություններ*, Երևան, 1985: A. S. Asratian, T. M. J. Denley and R. Häggkvist, *Bipartite graphs and their applications*, Cambridge Tracts in Mathematics 131, Cambridge Univ. Press, 1998: A. Asratian, A. Börn and B.O. Turesson, *Discrete mathematics*, Textbook, Linköping University, 2006.

Հումանիտար բնագավառից հիշենք հետևյալ անունները: Ծնունդով սյունեցի, քմեր և ռուսերեն լեզուների մասնագետ Լաուրա Մինասյան Դաունը (ծն. 1946, Բաքու) ակտիվորեն մասնակցում է հայ-չվեղական գործնական կապերի զարգացմանը: Ժամանակին շվեդական մամուլում լույս են տեսել Մինասյանի կատարած քմերական հեքիաթների թարգմանությունները: Շվեդերենից ռուսերեն է թարգմանել Ալմա Յուհանսոնի գրքույկները հայոց եղեռնի և գաղթականության մասին (լույս է տեսել 2008-ին, Երևանում): Ամուսնացած է Շվեդիայում ճանաչված ազգագրագետ, Ստոկհոլմի համալսարանի ազգագրության ինստիտուտի պրոֆեսոր, Հյուսիս-եվրոպական թանգարանի աշխատակից Օքե Դաունի հետ, որը մի քանի անգամ եղել է Հայաստանում, գրել հոդվածներ նաև հայոց ցեղասպանության մասին¹: Ծնունդով արցախեցի Կարինե Օրերման Սարգսյանը (ծն. 1956, Բաքու) ռուսերեն և իսպաներեն է դասավանդում Ուփսալայի համալսարանում: Նա կատարել է թարգմանություններ հայ բանաստեղծ Յուրի Մահակյանից: Ամուսնացած է շվեդ երկրաբան Քրիսթեր Օրերմանի հետ: Ստոկհոլմաբնակ, նախկին հայաստանցի բանասեր Ամալյա Խաչատրյանը աշխատակցում է հայ մամուլին, շվեդուհի Քրիսթինա Հալբեկի հետ հրատարակել է հայերենի դասագիրք (2001): Ստոկհոլմաբնակ Փոլ Մինասյանը կազմել է «Հայ-շվեդերեն արդի ուսումնական, գիտական և ընդհանուր բառարանը» (1991, Ստոկհոլմ), կատարել թարգմանություններ հայ գրականությունից: Ստոկհոլմում է բնակվում ռուսերենի մասնագետ Մաթենիկ Չմշկյանը, որն ավարտել է Սորբոնի համալսա-

¹ Տե՛ս հայկական բնատվով նրա հոդվածները՝ *Det nygamla folkmordet, Dagens Nyheter*, November 30, 1989 (co-author – Laura Daun Minasjan); *Armeniskt mynt och dess baksida TCO-tidningen*, 25 (1997); *Svärlösta svenska krav på Turkiet, Sydsvenska Dagbladet Snällposten* January 5, 2000; *EU som motkraft mot nya folkmord TCO-tidningen* 5 (2000); *Den armeniska frågan. Folklivsforskning – folkmoordsforskning, Tidskriften Kulturella Perspektiv* 4 (2000), *Armenien och Turkiet och värdet av nationell stolthet, Nor Horizon*, 3-4 (2003), *Armenisk diasporaidentitet. Invandrardebatt och fyra integrationsfilosofier. I: Innanför och utanför. Arv, identitet och nyorientering hos armenier och kopter i Sverige. Tro & Liv. Skriftserie nr 6 (Redaktör Sven Halvardson.) Svenska kyrkan. Teologiska högskolan Stockholm, 2009, s. 49-57*: Օքե Դաունի «Յեղասպանությունը՝ հասարակական վարքագիծ» հոդվածն Աշխեն Բախչինյանի թարգմանությամբ տե՛ս Հայաստանի *Երևանից*, Երևան, մայիս, 2001, էջ 52-54 և *Նոր հորիզոն*, 2002, ք. 1:

րանը և երկու տարի ուսանել Պետերբուրգի համալսարանում: Ուփսալայի համալսարանի սլավոնագիտության ինստիտուտի չեխերենի դասախոս է Նարեկ Կրժեհլան՝ չեխ հայագետ Բոհումիր Կրժեհլայի և Անահիտ Հովհաննիսյանի որդին: Երևանի համալսարանում է սովորել ազատ թարգմանիչ Ալեն Գազարյանը, որ կատարում է թարգմանություններ հայերենից շվեդերեն և հակառակը:

Երևանում ծնված, ներկայումս շվեդաբնակ Մառա Մարգարյանը Լուդոլֆի համալսարանում ուսանել է ասիական հետազոտությունների բաժնում՝ մասնագիտանալով ճապոնագիտության մեջ: Հանդես է գալիս հայերեն, ռուսերեն և անգլերեն բանաստեղծություններով:

Շվեդ նկարիչների շրջանում որոշակի ճանաչում ունի նաև Գևորգ Չարունյանը (ծն. 1933, Ալեքսանդրիա), որ 1958-ին Եգիպտոսից տեղափոխվել է Շվեդիա: 1958–1961 թվականներին գեղանկարչական կրթություն է ստացել Ստոկհոլմում: 1966-ից Չարունյանն անհատական ցուցահանդեսներ է ունեցել Շվեդիայի տարբեր քաղաքներում: Այժմ բնակվում է Լինդիգոյում: Հետաքրքրական է, որ իր բնանկարներում Չարունյանը ձգտում է միաձուլել ծննդավայր Եգիպտոսի և իր այսօրվա բնակավայր Շվեդիայի, մասնավորապես՝ Գոթլանդ կղզու բնությունը²: Ինքնատիպ նկարչուհի է նույնպես ծնունդով պուստիցի Թելմա Էմենը (ծն. 1945, Ստամբուլ, գրվել է նաև Էմեն-Կառլսոն): Ուսանել է Բանգալթիի Մյուխարյան վարժարանում և Ավստրիական լիցեյում: 1970–1973 թթ. ուսանել է Ստամբուլի Պոլտ Գեղարվեստից դպրոցում՝ աշակերտելով պրոֆեսոր Շերեֆ Աքթիբին: 1973-ին պատահականորեն հայտնվել է Շվեդիայում և հաստատվել այնտեղ: Այդ թվականից ի վեր Էմենը ունեցել է երեք տասնյակից ավելի անհատական ցուցահանդեսներ Ստոկհոլմում, ինչպես նաև Փարիզում և Ֆլորիդայում (ԱՄՆ): Մի շարք մեծակտավ, հիմնականում խորհրդապաշտական ոճի ստեղծագործությունների հեղինակ է: Ստոկհոլմում է բնակվում նաև Իրանից արտագաղթած Ռուբեն Արդալյանը, որի մի քանի գծանկարները տեսել ենք շվեդահայ մամուլի էջերում: Մեկ այլ հայ նկարիչ է Ավետիս Քալայանը, որ ծնվել է Իրաքում, կրթություն

² Տե՛ս նրա մասին Stig Johansson, *In i landskapets formöverflöd, Svenska Dagbladet*, Stockholm, 20.02.1993.

ստացել Հայաստանում և բնակվում է շվեդական Սյոդերթբյե քաղաքում:

1970 թվականից Ստոկհոլմի պետական սինֆոնիկ նվագախմբի և ֆիլհարմոնիայի մենակատար է դաշնակահարուհի, Մինեսոթայի (ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր Անի Կասեր Գազարյանը (ծն. 1943, Ստամբուլ), երաժշտական ընտանիքի զավակ, ութ տարեկանից ապրել է Փարիզում: 1970-ին ամուսնացել է շվեդ նվագավար Մաքս Լիլյեֆորսի հետ և տեղափոխվել Ստոկհոլմ: Հարյուրավոր համերգներ է տվել Ստոկհոլմում, Փարիզում, Մյունխենում, Վարշավայում, Մադրիդում՝ կատարելով հայ, ռուս և արևմտաեվրոպացի երաժշտաստեղծների երկերից: Այժմ բնակվում է Ֆրանսիայում: Ստոկհոլմում է բնակվում մեկ այլ հայ դաշնակահարուհի ևս՝ 1990-ին Երևանից արտագաղթած Կարինե Գևորգյան-Հելմանը, որը համերգներով հանդես է եկել Ֆրանսիայում, Դանիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, գրել երաժշտական ստեղծագործություններ: Փարիզում ներկայացրել է սկանդինավյան երաժշտության երեկոներ: Նա շվեդ արվեստագետների հետ կազմակերպում է ելույթներ՝ հայկական և շվեդական արվեստների փոխադարձ ծանոթացման և տարածման նպատակով¹:

Դաշնակահարուհի Ժաննա Մաթոն Մարկիսովան Շվեդիայում է բնակվում 1993-ից: Ռուսաստանում ծնված Ժաննան նվագել է վեց տարեկանից, հաղթել մի շարք մրցույթներում, հանդես եկել Մեծ քաղաքում որպես բալետային դաշնակահար: Շվեդիայում շարունակում է համերգային գործունեությունն ամուսնու՝ նույնպես դաշնակահար Ստեֆան Մաթոնի հետ միասին:

Ամերիկահայ խմբավար Վարուժան Քոջյանը (Գոնյան, 1932–1993) մի քանի տարի ղեկավարել է Ստոկհոլմի ֆիլհարմոնիկ նվագախումբը: Ստոկհոլմի օպերայի ջութակահարներից է եղել ծնունդով Ռոդոսթոյից Հրայր Աբելը (Տատըբոզյան): Բյուզանդ Քեշիշյանը նույնպես ջութակահար է և մանկավարժ: Նրա աշակերտներն են Չեկյուռ և Անի Բաղիկյանները, որոնք հայ երաժշտության համերգով

1997-ին հանդես են եկել Էսքիլսթունայի եկեղեցում¹: 1991-ին Մոցարտի մահվան 300-ամյակի առթիվ Ստոկհոլմում ներկայացված երաժշտական բեմադրության մեջ մանուկ Մոցարտի դերը կատարել է 11-ամյա հայ մանչուկ Արմեն Ռահսեփարի-Միրզայանը, որը հաջողությամբ շարունակում է հանդես գալ որպես դաշնակահար: Նա նաև մասնակցել է ամերիկյան հեռուստահաղորդումների և անիմացիոն ֆիլմերի շվեդերեն կրկնօրինակմանը: Շվեդական մամուլը գրել է նաև Եվլետում բնակվող երգչուհի Ծովինար Երանոսյանի (ծն. 1989, Արմավիր) մասին, որն օժտված է գեղեցիկ ձայնով և մանկուց հանդես է գալիս ելույթներով:

Ստոկհոլմի Թագավորական օպերայի զգեստաստեղծներից է ծնունդով լիբանանահայ Ժիրայր Արոյանը, որ 1980-ականներից սկսած բազմաթիվ զգեստներ է ստեղծել օպերային և բալետային ներկայացումների համար²:

Որոշ հայեր ընդգրկված են շվեդական շոու-բիզնեսում: Ստոկհոլմի երիտասարդ զգեստաստեղծ Մանուշ Միրզայանյանի անունը մի քանի անգամ երևացել է շվեդական մամուլում³: Քրիստիանստադի բնակչուհի, ծնունդով հայաստանցի Անահիտ-Վարդանը աշխատում է որպես մոդել:

Ստոկհոլմի տարբեր քաղաքներում պարային ձևավորումներ է կատարել Իրանի օպերայի և բալետի խմբի երբեմնի անդամ Վազգեն Ծառուկին: Ուսանել է Ստոկհոլմի պարի պետական բարձրագույն ուսումնարանում: Նրա ձևավորած ներկայացումներից են՝ «Օրլանդո», «Ուրախ այրի», «Իմ չքմաղ լեռին», «Լյուքսեմբուրգի կոմսը» և այլն: Վերոհիշյալ Թելմա Էմենի դուստրը՝ Մեդի Էմենը (ծն. 1966), Ստոկհոլմի հեռատեսիլի դիմահարդարուհիներից է:

Ծնունդով սիրիահայ Արո Պողոսն ավարտել է Երևանի գեղարվեստաբանական ինստիտուտի ռեժիսուրայի բաժինը: Հաստատվելով Շվեդիայի Վեսթերոս քաղաքում՝ չորս բեմադրություն է իրականացրել տեղի կիսապրոֆեսիոնալ, կիսասիրողական քաղաքում (Յու-

¹ Նրա մասին մանրամասն տես Սթիգ Լյունդսթրոմի «Բազմաշակութային Կարին Գևորգյանը» հոդվածը՝ մեր քաղաքացիությանը, *Հայ արվեստ*, 2006, ք. 4, էջ 26-27:

¹ *Eskilstuna-Kuriren med Strengnäs Tidning*, Eskilstuna, 25.07.1997, տես *Նոր հորիզոն*, 1997, ք. 2, էջ 3:

² *France-Arménie*, Paris, N 217; Decembre, 2001, p. 24.

³ *Dagens nyheter*, Stockholm, 01.06.1997; 29.06.1997.

ջին ՕՆՍիլի «Մերը ծփիների տակ», Էդուարդ Մուրլիի «Դեպք կենդանաբանական աշգուս», Գրիգորի Գորիսի «Մոռանալ Հերոստրատին» և Պուշկինի «Մոցարտ և Սալիերին»): 2007-ին Ստոկհոլմում լույս է տեսել Արո Պողոսի «Հայ-շվեդերեն բառարանը», որն ընդգրկում է 32 հազար բառ:

Դերասան Դերենիկ Քեշիշը մանկուց մասնակցել է քատերական ներկայացումների՝ հայերեն և շվեդերեն լեզուներով: Երեք տարի Շվեդիայում հետևել է դերասանական դասընթացների, առաջին անգամ պրոֆեսիոնալ բեմում հանդես եկել Գարսիա Լորկայի «Բեռնարդա Ալբայի տունը» պիեսի բեմադրությունում և «Մազեր» ռոք-օպերայում: Այժմ Քեշիշն աշխատում է Գլենդեյլի համայնքի «Գիլդ» քատրոնում:

Պարոզ և բալետի լուսանկարիչ Սերգեյ Էնդինյանը (ծն. 29.12.1982, Երևան) աշխատել է Կանադայում, ներկայումս՝ Շվեդիայում: 2006-ի օգոստոսից Սերգեյ Էնդինյանը որպես մենապարող հանդես է գալիս Ստոկհոլմի «Թագավորական շվեդական բալետ» խմբում՝ հանդես գալով ժամանակակից բալետներում: Էնդինյանը ճանաչված է նաև իր բարձրարժեատ բալետային լուսանկարներով: Շվեդիայի Թագավորական բալետի դպրոցում սովորում և միաժամանակ Թագավորական բալետի կազմում հանդես է գալիս Ավետիք Կարապետյանը (ծն. 30.08.1985, Երևան): 2006-ին հրավիրվել Շվեդիայի Թագավորական բալետ: Որպես Շվեդիայի ներկայացուցիչ, 2007-ին մասնակցել է ԱՄՆ-ում կայացած ութերորդ «Ջեքսոն բալետի մրցույթին»՝ իր պարընկերուհու հետ դառնալով գլխավոր արժաթե մրցանակակիր: Ստոկհոլմի օպերայում Ավետիք Կարապետյանը հանդես է եկել դասական և ժամանակակից բալետների բեմադրություններում: 2009-ին Հելսինկիում կայացած բալետի միջազգային մրցույթում Կարապետյանը գրավել է 2-րդ տեղը՝ արժանանալով 6000 եվրո դրամական պարգևի:

Սյուզան Խարտալյանը (ծն. 1956, Բեյրութ) ամուսնու՝ շվեդ կինոբեմադրիչ-վավերագրող, 30-ից ավելի կինոնկարների հեղինակ Փեյո Հոլմբլիսի ֆիլմերի խմբագիրը և համահեղինակն է, այդ թվում՝ հայկական թեմայով «Վերադարձ դեպի Արարատ» (1987), «Հաղորդում

Լեոնային Ղարաբաղից» (1990), «Նրա հայ ասպետը» (1994), «Ուր է իմ հաղթանակը» (2002) և այլն:

Շվեդաբնակ երաժիշտ և անկախ կինոբեմադրիչ Աշոտ Շիրոյանը (ծն. 1960, Երևան) 1978–1983 թթ. ռուսաց լեզու և գրականություն է ուսանել Երևանի Բրյուսովի անվան ինստիտուտում: 1992-ին տեղափոխվել է Շվեդիա: 1998-ին ընկերների հետ Սոլլենբլունայում (Ստոկհոլմի մոտ) հիմնել է «3K Ունիվերսալ» անկախ լսատեսողական ստուդիան, որտեղ սովորել է տեսամոնտաժ և ձայնագրում: Ստուդիան իրականացնում է կարճամետրաժ կինոնկարների և խտասալերի արտադրություն, մանուկների և պատանիների համար կրթական ծրագրեր, մշակութային փոխանակումներ, կինոցուցադրումներ: Ստուդիան համագործակցել է Հայաստանի, Շվեդիայի, Ռուսաստանի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի երաժիշտների և կինոգործիչների հետ: 2000-2001 թթ. Շիրոյանը նկարահանել է կարճամետրաժ երաժշտական և փաստագրական ժապավեններ: Նրա «Շվեդերենի անբավարար իմացություն» (2001) և «Եվ այլն» (2003) տեսաֆիլմերը ներկայացնում են ներգաղթածների հանդեպ խտրականությունը Շվեդիայում և նրանց՝ հասարակության մեջ ներգրավվելու խնդիրը: Ի դեպ, բոլոր ժապավենների երաժշտության հեղինակը Շիրոյանն ինքն է: Այժմ «Թրի Քեյ քրիեյթիվ քալչըր քրաֆթ» միջազգային մշակութային կազմակերպության նախագահն է: 2003 թ. լույս է տեսել Շիրոյանի երաժշտությունն ամփոփող «Լեոնաշխարհի հեքիաթներ» խտասանակը:

Գյոթեբորգում է բնակվում սփյուռքահայ բանաստեղծ Հարութ Կոստանդյանի թոռը՝ Փեր Վիքը: 1980-ից ուսանել է լրագրություն: Մինչև 2005-ը աշխատել է օրաթերթերում որպես փոխխմբագիր: Այժմ Գյոթեբորգի «Լիրա» երաժշտական հանդեսի թղթակիցն է, գեղարվեստական տնօրենը և նկարների խմբագիրը:

Շվեդական խաղարկային կինոյում երևացել է երկու հայկական ազգանուն: Դերասան Յակով Հակոբյանը (ծն. 31.05.1962, Լենինգրադ) նկարահանվել է շվեդ-նորվեգական «Համիլթոն» (զինվորականի դերում, 1998, բեմադրիչ՝ Հարալդ Չվարթ) և շվեդական «Հասել գրություն չկա» (2000, բեմադրիչներ՝ Միքայել Ռյուբբայ Հիլին) ֆիլմերում:

Իսկ շվեդական «Int-Arvet» կինոնկարի (2003) դերակատարուհիներից է Մարալ Մարյանը:

Լուսնո քաղաքում է ապրում լյուսերական քահանա Նիքլաս Քեթջյանը, որը ծնվել է Հարավսլավիայում: Նա հիմնականում աշխատում է քնրամոլների հետ: Շվեդական մամուլը մանրամասն անդրադարձել է Քեթջյանի մարդասիրական գործունեությանը¹:

Շվեդահայ մարզիկներից կարող ենք հիշել բուցքամարտիկներ Հմայակ Շահբազյանին և Արմինե Սինարյանին, արևելյան մարզածևեր (մասնավորապես՝ թեքվանդո) պարապող Լիլիթ Գրիգորյանին և Կամո Պողոսյանին, ֆուտբոլիստ Մայք Մարգարյանին (բուլոբը՝ ծնունդով իրանահայեր), ինչպես նաև ծնունդով հայաստանցի երկու ըմբիշներ Արա Աբրահամյանին (ծնունդով Գյումրիից) և Արա Գասպարյանին²:

Ասպարեզ իջած շվեդահայ նոր սերունդը համախմբման քայլեր է կատարում: 2001 թվականի նոյեմբերին Ուփսալայում տեղի ունեցավ շվեդաբնակ հայ երիտասարդության առաջին հավաքը: Շվեդիայում ծնված առաջին հայորդիներից են հայ-շվեդական ծագումով երկու հիշարժան անձինք՝ Արամ Հելսթրադիուս Քյուրբչյանը և Իգա-Լեյ Արմինե Մուրերգը: 1959-ին ծնված Արամը որդին է ծնունդով պոլսեցի, վերոհիշյալ Բյուզանդ Քյուրբչյանի և շվեդուհի Բարբարա Հելսթրադիուսի: Արամը դպրոցում հայերենի դասեր առած առաջին շվեդահայ աշակերտներից է: Հետաքրքրվելով հայոց պատմությամբ՝ նա տարիների ընթացքում հավաքել է հայությանն առնչվող բազմաթիվ գրքեր և արխիվային նյութեր, հայկական դրոշմանիշեր, հատկապես զբաղվել XIX դարի շվեդական արքունիքի գործիչ Օհան Գեմիրճյանով, որի կյանքի վերաբերյալ հարյուրավոր փաստաթղթեր է ժողովել շվեդական արխիվներից: Արմինե Մուրերգը ծանոթ անուն է հայկական

շրջանակներում: Շվեդ հոր և քեյրոսիցի հայ մոր զավակ Արմինեն իրեն առավել հոգեհարազատ է համարում հայ մշակույթը՝ ամենուրեք ներկայանալով որպես հայուհի: Տակավին 1984-ին եղել է Հայաստանում, սփյուռքահայ մանուկների ճամբարում: Ավարտել է Ուփսալայի համալսարանի աֆրո-ասիական լեզուների ինստիտուտը՝ արաբագետի մասնագիտացմամբ, սակայն դիպլոմային աշխատանք է գրել հայոց ցեղասպանության թեմայով: Արմինե Մուրերգն ակտիվորեն մասնակցել է Շվեդիայում կայացած հայկական ձեռնարկներին, երկու անգամ՝ Վենետիկի համալսարանի կազմակերպած հայագիտական խտացյալ դասընթացներին որպես օգնական ուսուցիչ¹: Նմանապես նույն սերնդին է պատկանում հայ հոր և շվեդուհի մոր զավակ Երազ Թոմասյանցը, ծնված Շվեդիայում, որն աշխատել է Իտալիայում և ԱՄՆ-ում նորածնության ասպարեզում, 2007-ից՝ ամերիկյան «STABIAE design» ընկերությունում:

Նշենք նաև, որ աշխարհի ամենատարբեր երկրներում և անգամ Հայաստանում կան հայ-սկանդինավյան ամուսնությունների բազմաթիվ փաստեր²:

¹ Նրանց մասին տե՛ս նաև *AGBU News*, 2000, February, էջ 5:

² Հարկ է նշել, որ հայ-սկանդինավյան ամուսնություններ և այդ ծագումով անձինք կան ոչ միայն սկանդինավյան, այլև ուրիշ երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում, Մեքսիկայում և Ռուսաստանում: XX դարասկզբին պոլսահայ Բարսեղ Էսեֆյանը Նյու Յորքում ամուսնացել է Շվեդիայի բազմաթիվ երրորդ (կամ չորրորդ) զարմուհու՝ Թորայի հետ: Շվեդ արձակագրուհի, կոմսուհի Ռայնիլդ Եյոնե դե Վալդհայմը (Countess Ragnhild Torcom-Schurer Von Waldheim) 1937-ին Հռոմում ամուսնացել է հայ ռազմական գործիչ, գեներալ Թորգոմի հետ և այդուհետև իր երկար ազգամուտը հավելել նաև Թորգոմ անունը (տես *Արագ*, 17.06.1937): 1941-ին ֆրանսերեն բարձրագույն ֆրանսիական Փարիզում լույս է տեսել նրա “Sur les pas de Jeanne d’Arc” գիրքը: Հայ հոր և շվեդ մոր զավակներ են ամերիկյան գրողներ Սատինան, Քերոլ Էդգարյանը և Քրիս Բոնչայանը: Վերջինս իր «Ընտանեկան լեգենդ» ակնարկում պատմել է իր հայ և շվեդական ծագման վերաբերյալ (տես մեր բարձրագույնումը՝ *Գարուն*, 2000, ք. 5, էջ 75-76): Ամերիկայում քնակվող անգլագիր և շվեդագիր գրող Սփինա Խաչատրյանն ազգությամբ ֆիննաշվեդ է, ամուսնացած է գրող, փիլիսոփայության դոկտոր Հայկ Խաչատրյանի հետ, հեղինակ է նաև հայաստանում գրքերի: Ֆրանսահայ դաշնակահարուհի Շուշանիկ Բաբայան-Լալուայի որդին՝ դիվանագետ Ժան Լեոնար Լաբուան, ամուսնացած է եղել նորվեգուհի Զարին Գյեթլանդի հետ և ունեցել յոթ զավակ: Հայի հետ է ամուսնացած ռուս-սկանդինավյան ծագումով իշխանուհի, լոնդոնաբնակ Հելենա Գազարիան-Մոբախյանը, որը տիրապետում է հայերենին և հանդես գալիս հայաստան գործունեությամբ: Նմանապես դանիա-հայկական ծագում ունի արվեստաբան Ստեֆան Քրիստենսենը, որը կնոջ՝ նկարչուհի

¹ *Hemmets journal*, Malmö, 10.04.1997, s. 8-9, 20.
² Կարող ենք հիշել նաև առնվազն երկու շվեդուհի գործիչների, որոնք կրում են իրենց հայ անունների ազգանունները: Նկարչուհի Մարթա Օրերբերգ Շիրմյանն ամուսնացած է եղել Աշոտ Շիրմյանի հետ, գործերը ցուցադրել է Ստոկհոլմի և Օրերբուրի ազգային բանգարաններում, ծրագրել է 1961-ին ցուցահանդես բացել Հայաստանում, ինչը չի իրականացել: Ուփսալայի համալսարանի աֆրո-ասիական լեզուների ինստիտուտում պարսկերեն է դասավանդում շվեդուհի Զարինա Ջահանին (ծնունդով իրանահայ Ռուբեն Ջահանիի կինը), որը բավականաչափ տիրապետում է հայերենին:

Դանիա

1969-ի տվյալով Դանիայում բնակվել է 40 հայ¹, 1975-ին նրանց թիվը հասել է 100-ի. մեծ մասը եղել են Թուրքիայի գյուղերից եկած անգղազետ քրդախոս կամ թուրքախոս հայեր:² Դանիահայերից են՝ Կոպենհագենում բնակված և Օսլոյում վախճանված արվեստաբան

Աննա Բարսեղյանի հետ բնակվում է Ժնևում (Շվեյցարիա), կապերի մեջ է Հայաստանի մշակույթի հետ: Ի դեպ, ժնևյի ֆրանսագիր բանաստեղծ Վահե Գոդեյի տիկինը ևս դանիուհի է, որի հետ երկու անգամ այցելել են Հայաստան: Սուդանահայ օդաչու Սարգիս Գոլանճյանը դանիուհի կնոջ և չորս զավակներով բնակվում է Մեծ Բրիտանիայի Էսեքս քաղաքում (Թորոս Թորանեան, *Ուղեորություն դեպի Թայլանդում Չինաստան*, Հալեպ, 2004, էջ 90):

Հետաքրքիր է Հայաստանում նույնպես բնակվել են սկանդինավյան ծագումով անձինք, և այսօր էլ հասանելի են հայաստանցիներ ունեն սկանդինավյան գեներ: Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը 1839-ին Թիֆլիսում անուանացել է ունեցի (այժմ Տալլինն) օրիորդ Յոհաննա Էմիլիե Լոոգեի (1819–1870) հետ, որն ունեցել է էստոնական, շվեդական և գերմանական արյուն (տես Խաչատուր Աբովյան, *Վերջ Հայաստանի, որը հայրենասիրի*, Երևան, 2004, էջ 342): Ըստ 1934 թվականի մի վիճակագրության Խորհրդային Հայաստանի բնակիչների մեջ, ի թիվս տարբեր ազգությունների, եղել են նաև հինգ ֆինն և մեկ շվեդ (տես «Հայաստանի մեջ... 47 տեսակ ազգեր», *Կենք և արտես*, Գ. տարի, 1934, էջ 110): Այդ մեկ շվեդը հավանաբար եղել է 1940-ականներին Սևանի շինարարության գլխավոր ճարտարագետներից «բանիմաց և խստապահանջ մասնագետ Նիկոլայ Տիդենը», որն արժանացել է բարձրագույն շքանշանի (Գրիգոր Մարտիրոսյան, *Սևան. հայրենագիտական ակնարկներ*, Երևան, 1998, էջ 146-147): Նիկոլայ Վաղիմիրի Տիդենը (1901, Կոստրոմա – 1966, Սվետլոլոդսկ, Ուկրաինա) 1939–1949 թթ. կնոջ հետ բնակվել է Սևանում, որտեղ ծնվել է նրա դուստրը, իսկ որդին բնակվել է Երևանում, այնուհետև որջ ընտանիքը վերադարձել է Ռուսաստան: (Սակայն ինչպես հաղորդել է մեզ Տիդենի բոլոր՝ նույնպես Նիկոլայ Տիդենը, 2009-ի սեպտեմբերի 17-ին գրած էլեկտրոնային մամուլում, մեծ հայրն իրեն համարել է շվեդ, սակայն իրենք արխիվային փաստաթղթերից պարզել են, որ վերջինիս պապը՝ Ռիզայում ծնված Էդուարդ Տիդենը, եղել է բարիական գերմանացի):

Երևանցի նկարչուհի Կարինե Մացակյանը մեզ տեղեկացրել է, որ իր նախահայրերից մեկը եղել է շվեդ, որը հավանաբար XIX դարի սկզբին Ռուսաստանից տեղափոխվել է Տաշիր և այնտեղ հիմնել պանրի գործարան: Ամուսնացել է հայուհու հետ, և նրա սերունդները հայացել են: Նրանց տոհմին Տաշիրում անվանել են Շքեթներ՝ ելնելով շվեդ բառից: Շվեդական հեռավոր արմատներ ունի նաև երիտասարդ դաշնակահարուհի Լիլիթ Չաբարյանը. ինչպես հաղորդեց մեզ նրա մայրը՝ Երևանի երաժշտանոցի կոնցերտմայստեր, ազգությամբ ռուս Ելենա Չաբարյանը, իր նախատատերից Եդվիգա Բրոուլը եղել է շվեդուհի: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գերմանացի ռազմագերիների հետ Հայաստան է եկել նաև դանիացի մի գույգ, որը հաստատվել է Երևանում և այդուհետ գրվել Դավիթյան ազգանվամբ: Դանիացի այս ամուսինները մահացել են Երևանում: Նրանց միակ որդին այժմ բնակվում է Ռուսաստանում, բոլոր՝ Հայաստանում:

¹ ՀԱԱ, ՊՖոնդ 872, ցուցակ 2, գործ 538, վավերագիր 42:

² ՀԱԱ, ՊՖոնդ 875, ցուցակ 8, գործ 186, վավերագիր 6:

Վահե Չաբարյանը (Կոստան Չաբարյանի որդին), որի տունը 1960-ականներին եղել է դանիաբնակ հայերի շաքաթական հավաքատեղի, Բյազերվելյուն հաստատված տիկին Լուիզա Շթյեդը (Եմիլկոմճյան) և ուրիշներ: 1960-ականներին դանիական մամուլին աշխատակցել է բանասեր Մեսրոպ Գրիգորյանը:

Մեր օրերում դանիաբնակ հայերի թիվը մոտ 3000 է, որոնք գաղթել են Մերձավոր Արևելքից, Իրանից, Իրաքից, Հայաստանից, Բուլղարիայից, Հունաստանից: Նրանց մեծ մասն արհեստավորներ և առևտրականներ են: Բնակվում են հիմնականում Օրիուսում, Կոպենհագենում և Օդենսեում: Դանիայում ևս ներկայացուցիչ ունի հայ առաքելական եկեղեցին. ներկայումս Կոպենհագենում գործում է Հայ քրիստոնեական մշակութային կենտրոնը: 2006-ին Դանիայի հայերը կազմակերպել են «Դանիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամը՝ Հայաստանի մարզերին օգնելու նպատակով:

Ծնունդով երևանցի մանկավարժ Աննա Սիմոնյանը 2001-ին Կոպենհագենում հիմնել և ղեկավարել է «Հայաստան» մանկական թատրոնը, ինչպես նաև հայ մշակույթի դպրոց, որտեղ երեխաներին բացի թատրոնից սովորեցնում են հայոց լեզու և հայկական երգեր: Սիմոնյանը, որն աշխատում է դանիական դպրոցի տարրական դասարաններում, դանիացի աշակերտների ուժերով բեմադրել է Հովհաննես Թումանյանի հեքիաթները:

Ծնունդով լիբանանահայ Ժոզեֆ Գաբայանը 1988-ից գլխավորել է հայ մշակութային միությունը Օրիուսում: Դանաչված նկարչուհի է Էլիզաբեթ Ռոմիլյոլը (Դավիդյան), ծնված 1960-ին, Ֆրեդերիքսբերգում (Դանիա), հայ հոր և դանիուհի մոր ընտանիքում: Մանկությունն անցել է հոր՝ Չավեն Դավիդյանի ծննդավայր Իրանում, իսկ ներկայումս Ռոմիլյոլը դանիացի ամուսնու հետ բնակվում է Բանգկոկում (Թաիլանդ): Նրա դանիուհի մայրը՝ ինքնուս նկարչուհի Գերդա Դավիդյանը, վարժ տիրապետում է հայոց լեզվին, մասնակցել է տարբեր բարեգործական ծրագրերի Ինդոնեզիայում, Բանգլադեշում, Հնդկաստանում, որտեղ մաս է կազմել մայր Թերեզայի առաքելության: Ինքնուս արվեստագետ է նաև Էլիզաբեթի եղբայրը՝ Հենրիկ Դավիդյանը, որը զբաղվում է մետաղալարերից արձանիկների պատրաստությամբ:

Ջութակահար Մերգեյ Ազիզյանը ծնվել է Հայաստանում, ուսանել Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայում (Ալեքսանդր Ֆիլչերի դասարան): Հանդես է եկել Պետերբուրգի ֆիլհարմոնիկ նվագախումբում: 1993-ին հաստատվել է Գանիայում, 2003-ին դարձել Գանիական երաժշտական կոնսերվատորիայի պրոֆեսոր: Կատարում է Բախի, Շուբերտի, Շնիտկեի, Շյոնբերգի, Գադեի ստեղծագործություններից: Հյուրախաղերով հանդես է եկել Գանիայի, Ռուսաստանի և Ճապոնիայի քաղաքներում: 2007 և 2008 թթ. Երևանում համերգներով հանդես է եկել դանիաբնակ դաշնակահարուհի Մարիաննա Շիրինյանը:

Գանիական «Ռանդերս» ֆուտբոլի թիմում 2009-ի դրությամբ հանդես են գալիս երկու հայ մարզիկներ՝ երևանցի Ռոբերտ Արզումանյանը և ԱՄՆ-ի բնակիչ Յուրա Մովսիսյանը (ծն. 1987, Բաքու):

Նորվեգիա

Թուրքական պետական գործիչ, հայորդի, ծնունդով արաբկիրցի Ֆ. Ժոզիքը (ծն. 1895) կես դարից ավելի առևտրական ասպարեզում մեծ ծառայություններ է մատուցել Նորվեգիային: 1963-ին Թուրքիայում Նորվեգիայի դեսպանը Ժոզիքին արժանացրել է սուրբ Օլաֆի շքանշանին¹:

1935-ին 31-ամյա ամերիկահայ օդաչու Փոլ Ոսկանյանը Արկտիկայի Գրենլանդիայի և Իսլանդիայի վրայով ուղիղ թռիչք է կատարել Նյու Յորքից Բերգեն (Նորվեգիա): Օդային ճանապարհով նա կրկնել է այն ուղին, որը նորվեգացիների նշանավոր նախնի Լեիվ Էրիքսոնը կատարել է առաջին անգամ 1000 թվականին՝ Նորվեգիայից հասնելով Լաբրադոր: Փոլ Ոսկանյանին ընկերակցել է դանիացի օդաչու Թոր Սուլբերգը: «Մենք շատ բժախնդիր և զգուշավոր էինք Սուլբերգի գործակցի ընտրության մեջ, որը ռադիոն պիտի գործածեր, բայց երբ ինձ ցանք, որ պարոն Ոսկանյանը հայ է, գրեթե անմիջապես վճիռ կայացրինք: Այն զգացումն ունեինք, որ այս ընտրությամբ գրեթե ապահովված է հաջողությունը», - գրել է նորվեգական գլխավոր «Նորդիսկ թի-

դեն» թերթի խմբագիր Մոյլանդը¹: Ամենադժվարին հատվածը եղել է թռիչքը Լաբրադորի և Գրենլանդիայի վրայով, երբ ութ ժամ անդադար թռել են մառախուղի միջով՝ չտեսնելով ցամաք, ջուր և երկինք: Մագնիսական բևեռի մերձավորությունը խափանրել է նրա կողմնացույցը՝ սխալվելով մինչև 40 աստիճան: Դամփորդության ժամանակ մի անգամ հարկադրված վայրէջք են կատարել երկու սառցակույտերի միջև²: Նրանց ընդունել է Նորվեգիայի Հոբան քաղաքը: Նորվեգական ընկերությունները և Նորվեգիայում բնակվող հայ առևտրականները խնջույքներ և ընդունելություններ են կազմակերպել օդաչուների պատվին³:

1947-ին ԽՍՀՄ-ում նորվեգական մշակույթի օրերի առիթով նաև Խորհրդային Հայաստան այցելած 6 հոգիանոց նորվեգական պատվիրակության անդամները (պատգամավորներ և ճարտարապետներ) հայտարարել են, որ Օսլոյում մեկ տասնյակ հայ է բնակվում⁴: Այս պատվիրակությունը հետագայում հանդես է եկել «Լենինգրադից Հայաստան. 1947-ին Խորհրդային Միություն կատարած մշակութային պատվիրակության ուղևորության ընկալումները և փորձառությունը» գրքով⁵:

1953-ի տվյալով՝ Օսլոյում ապրել են երեք հայ (հայտնի է, որ մեկը եղել է ժամկոչ): Հավանաբար նրանցից մեկը եղել է գրող Կոստան Ջարյանի վերոհիշյալ ուղիին՝ Վահե Ջարյանը (1913–1985): Վերջինս ուսանել է քաղաքական գիտություններ, նաև բժշկություն և արվեստ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաստատվել է Օսլոյում, ապա դանիոնի կնոջ հետ ապրել Կոպենհագենում, որտեղ զբաղվել է յոգայով և արևելյան բժշկությամբ: Հետագայում կապվելով նորվեգո-հու հետ՝ Ջարյանը հաստատվել է Օսլոյում: Վախճանվել է Օսլոյում.

¹ Արագ, 13.09.1935

² Արագ, 28.11.1935:

³ Արագ, 29.09.1935:

⁴ Լրաբեր, 8.07.1947:

⁵ Norske kulturdelegasjon. Fra Leningrad til Armenia; inntrykk og opplevelser fra Den Norske kulturdelegasjons reise i Sovjetsamveldet 1947. Oslo: Falken forlag, 1947.

¹ Ասպրեզ, 7.06.1963:

նորվեգական լրագրերը մահախոսականներ են տպագրել նրա մահվան առթիվ:

Ծնունդով քիֆլիսեցի, կովկասյան պարերի կատարող Երվանդ Ջանյանը Օսլոյում բացել է իր տեսակի մեջ Նորվեգիայում եզակի՝ կովկասյան պարի դպրոց, որը, տեղի մամուլի համաձայն, լավ ընդունելության է արժանացել, թերթերը հրատարակել են նրա լուսանկարը և գրել ներբողակից ստղեր¹: Ի դեպ, Ջանյանը նորվեգական մամուլում հրատարակել է հողվածներ՝ նվիրված հայ երաժշտությանը, պարին, թատրոնին, կրոնին, Խորհրդային Հայաստանին²:

Նորվեգիայում եղել են հայ-նորվեգական խառնամուսնությունների ծնունդ անձինք: Մոր կողմից հայ է եղել նորվեգացի չմշկորդ Կառլ Մատտիսենը (ծնված 1911-ին), որը լեգենդար մարզիկ, «բոլոր ժամանակների լավագույն չմշկորդ» Օսքար Մատտիսենի որդին էր: Կառլ Մատտիսենն իր հայ ծագումը հիշատակել է մի հարցազրույցում:

Նորվեգաբնակ հայերից հիշարժան է հատկապես Օսլոյի համալսարանի սկանդինավագիտության և համեմատական գրականության բաժնի աշխատող, լեզվաբան, մի շարք աշխատությունների հեղինակ Էրիք Փափազյանը (ծնված 1939-ին, Փարիզում): Հայրը եղել է բուլղարահայ, ծնունդով պոլսեցի: Փարիզում ամուսնացել է նորվեգուհու հետ Օսլոյից, ունեցել երեք զավակ: 1946-ին Փափազյանները հաստատվել են Նորվեգիայում: Էրիք Փափազյանը մասնագիտացել է սկանդինավյան լեզուների մեջ, հատկապես նորվեգերենի բարբառների: Որոշակի հետաքրքրություն ունի հայոց պատմության վերաբերյալ: Էրիք Փափազյանի քույրը՝ Միրեյ Կասպարին, թարգմանչուհի է, իսկ եղբայրը՝ Էյնար Կասպարի Փափազյանը, եղել է նկարիչ:

Նորվեգահայերից է նաև Յուսի Ֆլեմինգ Բյորնը, ծնված 1945-ին, Ստոկհոլմում, հայ հոր և ֆիննուհի մոր ընտանիքում: Նրա հորը, որ եղել է Մեծ եղեռնի որբերից, ժամանակին որդեգրել էր նորվեգացի բժշկուհի Բողիլ Ջաթարինա Բյորնը: Ֆլեմինգը բնակվում է Նորվեգիայի Թյոնսբերգ քաղաքում: 15 տարեկանից մասնակցել է նավագնացությունների: 1970-ից աշխատել է մասնավոր հիմնարկություններում:

¹ *Քույս*, 1.01.1956, էջ 21:

² *Նրևանի համալսարան*, Նրևան, 17.05.1968:

ում: 1983-ից որպես վաճառքի մենեջեր աշխատել է Hydro Texaco AS էներգետիկական ընկերությունում, այնուհետև որպես էներգետիկ բրոքեր՝ Նորվեգիայի էլեկտրական էներգիայի ազատ շուկայում: Նա ակտիվ է հայ-նորվեգական կապերի բնագավառում, հատկապես իր մեծ մոր՝ Բողիլ Բյորնի վերաբերյալ գործերում: 2006-ին նրա մասնակցությամբ նկարահանվել է «Քույր Բողիլ» փաստագրական կինոնկարը (բեմադրիչ՝ Մագնուս Սվերդ Յուրդիայմ, արտադրիչ՝ Բյել Էրիքսեն):

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Նորվեգիայում հաստատվել է ռազմագերի, ծնունդով կապանցի Թորոս Թումանյանը (–1996), որն ամուսնացել է նորվեգուհու հետ և ունեցել երեք զավակ, ապրել են Քենսբերգ քաղաքում: Թորոսն աշխատել է գործարանում: 1990-ին որդու՝ Սոլվեյգ Թումանյանի (ծն. 1951) հետ գրեթե կեսդարյա բաժանումից հետո այցելել է Հայաստան¹: Օսլոյում բնակվող նրա թոռներից Քաթրին Թումանյան Մորթենսենը ուսուցչուհի է, հետաքրքրվում է հայոց պատմությամբ: Ի դեպ, հայաստանցի կինոբեմադրիչ Հովհաննես Գալստյանի՝ հայ-նորվեգական համատեղ արտադրության «Խճճված գուգահեռներ» կինոնկարը (2009) ներկայացնում է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Նորվեգիայում հայտնված մի հայ ռազմիկի և նորվեգացի գեղջկուհու սիրտ պատմությունը:

Մտավոր հաշվումներով՝ 2009-ի դրությամբ, Նորվեգիայում բնակվում է հազարից երկու հազար հայ՝ Մերձավոր Արևելքից (Իրան, Լիբանան) և Հայաստանից արտագաղթածներ: Նրանց մեծ մասը (հիմնականում արիեստավորներ, ծառայողներ և մանր առևտրականներ) բնակվում է Օսլոյում:

Օսլոյում գործում է մեկ կիրակնօրյա հայկական դպրոց, ինչպես նաև Հայ-նորվեգական միությունը (նախագահ՝ Ֆրեդ Իսկանդարյան), որը ներկայացնում է համայնքը երկրի իշխանությունների առաջ: 2001 թվականին դիմել է Նորվեգական Խորհրդարանին, պահանջելով, որ Նորվեգիան պաշտոնապես ճանաչի 1915 թվականի հայոց ցեղասպանությունը, մի շարք հանդիպումներ ունեցել խորհրդարանական կառույցների հետ²:

¹ *Հայրենիքի ծայն*, 5.12.1990:

² Տե՛ս *Նոր հորիզոն*, 2001, ք. 1, էջ 3:

Օդեթ Նիկոլը (ծն. 1952, Իրան) նկարչուհի է, աշխատում է նորվեգական մուլտիպլիկացիոն կինոյում: 1987-ին տեղափոխվելով Նորվեգիա՝ Օդեթ Նիկոլը համակարգչային գծանկարչական դիզայն է ուսանել Թորնդհայմում: 1990-ին մասնակցել է երկու նորվեգական մուլտֆիլմի ստեղծմանը: 1992-ին դասավանդել է Գրագվալլ համալսարանում որպես գծանկարչական ձևավորման և պատկերազարդման ուսուցչուհի: 1994-ին Օսլոյում աշխատել է «Ֆիլմ Քամերատար» կինոստուդիայում՝ 75 րոպեանոց բազմանկարի ստեղծման համար: Նրա համակարգչային գծանկարները («Միմորդ թռչունը», «Ուրախ մաքրություն», «Միջավայր և բնություն») շրջում են տարբեր ցուցահանդեսներում¹:

Նորվեգաբնակ դաշնակահար և երգահան Բաֆֆի Մանուկ Ժամագործյանը ծնունդով բուլղարահայ է: 1979–1985 թթ. ուսանել է Սոֆիայի երաժշտական ակադեմիայում: Բուլղար հայտին երգչուհի Լիլի Իվանովայի հետ 1983-ին շրջագայել է վերջինիս հյուրախաղերի ժամանակ ԽՍՀՄ-ում և Թուրքիայում: Երաժշտություն է գրել, մշակել և ձայնագրել Նորվեգիայի, Գանիայի և Շվեդիայի քատրոնների և հեռուստահաղորդումների համար: Օսլոյի Բեմի և ստուդիայի նորդիկ ինստիտուտի համահիմնադիր է: Ժամագործյանը ելույթներ է ունեցել նաև Նորվեգիայի թագավորական ընտանիքի համար: 2006-ին հիմնել է սեփական երաժշտական ստուդիա Բերգեն քաղաքում:

Նախկին հայաստանցի լրագրող Վարազդատ Գրիգորյանը (ծն. 1958) Նորվեգիայում է հաստատվել 2000-ի ամռանը: Արդեն նույն տարվա ձմռանը հիմնել է "Nordlig Regnbue" («Հյուսիսային ծիածան») փոքր թերթը՝ որպես տեղական «Levanger-Avisa» թերթի ներդիր: Այսօր այն համարվում է Նորվեգիայի առաջին բազմամշակութային թերթը: Գրիգորյանն աշխատակցել է նաև նորվեգական կենտրոնական պարբերականներին: 2006-ին այս թերթն արժանացել է Թրոնդելագ մարզի տարվա լավագույն թերթի մրցանակին, նույն տարի Թրոնդելագի հումանիստական կազմակերպությունները Գրիգորյանին արժանացրել են մրցանակի: 2001-ից Գրիգորյանը Նորվեգիայի լրագ-

¹ Նրա մասին տես մեր Հայերը համաշխարհային կինոյում գրքում, Երևան, 2004, էջ 475:

րողների միության անդամ է: 2004-ին նորվեգերեն գրած իր «Ուրախ կարուսել. տարագիր Գլորուս Լիլոյանի արկածները Նորվեգիայում» գրքով, որտեղ հումորով պատմել է Նորվեգիայում իր առաջին օրերի փորձառության մասին: 2008-ին Նորվեգիայի հայ համայնքը Վարազդատ Գրիգորյանին պատվել է «հուրը կրծքում» մրցանակով, որը շնորհվում է առավել ակտիվ ազգային գործիչներին: Նույն թվականին լույս է տեսել Գրիգորյանի երկրորդ նորվեգերեն գիրքը՝ «Նորվեգիան մեր արևային ակնոցի միջով»:

Իսլանդիա

Դարեր շարունակ այս երկրում մշտական հայ բնակիչներ չեն եղել: Ինչպես նշվեց առաջին գլխում՝ XI դարում հեռավոր այս կղզին են այցելել երեք հայ վանականներ՝ քրիստոնեություն քարոզելու: Թերևս համիդյան կոտորածներից հետո հայերը հասել են նաև Իսլանդիա: Այս մասին վկայություն կա իսլանդացի մեծանուն գրող Հալդոր Լաքսնեսի «Նապոլեոն Բոնապարտը» պատմվածքում: Գործող անձերից մեկը, մի գեղջկուհի, նկատում է մի շրջմուլիկի, որը «սկսեց ինչ-որ բան մոթմոթալ, կինը չկարողացավ որևէ բան հասկանալ, և հանկարծ նա մտածեց, որ նա այն հայերից է, որոնք այստեղ ապաստան էին փնտրում՝ փրկվելով թուրքերից»¹:

1982 թվականից Ռեյկյավիկում շարունակաբար բնակվում է անգլերենի ուսուցչուհի, խորհրդական Բեթի Նիքուլասդոթիրը՝ ծնունդով Բեյրութից: Նրա հայկական անուն-ազգանունն է Պերճուհի Փափազյան: Ուսուցիչ է աշխատել ԱՄՆ-ում և Կանադայում, այնուհետև ամուսնացել Իսլանդիայի համալսարանի բնակչության գեներոլիկայի դասախոս, դոկտոր Էյնար Արնասոնի հետ: Պերճուհի Փափազյանն Իսլանդիայում սկսել է գրվել հոր՝ Նիկողայոսի անունից կազմված իսլանդական ազգանվամբ: Անգլերեն է դասավանդել Համրահիդլի Մեթաքսոլին դպրոցում: Բեթի Նիքուլասդոթիրը 2003 թվականի փետրվարի 22-ին մեզ ուղարկած էլեկտրոնային նամակում հետևյալն է գրել Իսլանդիայում հայերի ներկայության մասին. «Ես չեմ կարծում, թե ես Իսլանդիայում ապրող միակ հայն եմ: Թերևս ես միակն եմ, որն այս-

¹ Халлдор Лакнес, *Лилля*. Москва, 1955, с. 31.

տեղ է ապրում շարունակաբար: Կարծում եմ, որ որոշ հայեր կան Վրաստանից և հավանաբար մեկն էլ Լիբանանից: Ես չեմ հանդիպել նրանց, ուստիև շատ բան չգիտեմ նրանց մասին: Երկու տարի առաջ այստեղ մի երաժիշտ կար Իսլանդական սիմֆոնիկ նվագախմբում: Մեկ տարի անց նա տեղափոխվեց Պրահա: Այնուհետև երկու հայ կին կային, որոնք քաղաքական ապաստան էին խնդրում, սակայն իսլանդական կառավարությունը մեկ տարի անց հետ ուղարկեց նրանց: Մոտ տաս տարի առաջ էներգետիկայի ղեկավարությունը հայ երկրաբանների մի խումբ էր հրավիրել Իսլանդիա: Ինձ խնդրել էին քարզմանել նրանց համար: Այնուհետև երկրաբաններից ոմանք մեծ հետաքրքրություն ունեցան, և այդպիսով մենք կազմեցինք «Հայ-իսլանդական ընկերակցություն» անունով մի խումբ: Այնուամենայնիվ, հետաքրքրությունն անցավ որոշ ժամանակ հետո, և այժմ մենք դադարել ենք հանդիպել: Գլխավոր պատճառն այն է, որ մենք շատ կապեր չունենք Հայաստանի հետ և նոր «արյուն» չկար: Նաև տաս տարի առաջ մի հայ գույգ կար, որ մի քանի ամիս ապրեց այստեղ և ապա վերադարձավ Երևան...»:

2005-ի օգոստոսին Վենետիկում մենք ծանոթացանք մի իսլանդացի ընտանիքի հետ: Նրանք պատմեցին, որ Ռեյկյավիկում բնակվում է Երևանից արտագաղթած մի ընտանիք, որի անդամները այնքան վարժ իսլանդերեն են խոսում՝ իսլանդացիների պես...

Ֆինլանդիա

Հայերը Ֆինլանդիայի տարածքում առաջին անգամ հայտնվել են արդեն XVII դարում՝ ի դեմս ջուդահայ առևտրականների, որոնք Ռուսաստանից Ֆինլանդիայի ճանապարհով մեկնել են Շվեդիա: XIX դարում Ֆինլանդիան Ռուսական կայսրության մաս էր կազմում, այսինքն՝ Արևելյան Հայաստանի քնակչությունը և ֆինները հարյուր տարուց ավելի պատկանել են միևնույն վարչական համակարգին¹:

¹ Հետաքրքիր է, որ 1900 թվականին նորվեգական մի թերթ, գրելով հայկական կոտորածների մասին, գուցահեռ է անցկացրել՝ գրելով, որ «Ռուսները տանջում են ֆիններին և թուրքերը՝ հայերին» (*Nordlands Avis*, 4.10.1900, տես Matthias Bjørnlund, *Scandinavia and the Armenian Genocide...*, նույն տեղում):

Սկսած XIX դարի վերջից Պետերբուրգի և հարակից շրջաններում ուսանող և աշխատող հայերը հաճախ են այցելել Ֆինլանդիային պատկանող տարածքները, որտեղ նրանցից ոմանք ունեցել են ամառանոցներ: Ֆինլանդիայի ինքնավարության ժամանակաշրջանում քաղաքացիություն ստացած միակ հայ ընտանիքը եղել է վերոհիշյալ բողոքական պատվելի Աբրահամ Ամիրխանյանցի ընտանիքը, որ Ֆինլանդիայում բնակվել է 1889–1894 թթ.: 1900–1902 թթ. Ֆինլանդիայում է բնակվել հայ հեղափոխական շարժման ակամավոր գործիչ Վահան Փափազյանը (Կոմս, 1876–1973):

Ֆինլանդիայի Վիբորգ քաղաքում է ծնվել օպերային երգչուհի, Հայաստանի վաստակավոր արտիստուհի Մարիա Չմշկյանը (1916–2005): Անշուշտ, նրա հետ կապ ունի գորգագործ Վարդան Չմշկյանը (1881–²), որը նախկինում եղել է դաշնամուր լարող: 1938 թվականի հուլիսի 5-ին Չմշկյանին և նրա ընտանիքին շնորհվել է ֆիննական քաղաքացիություն: Վեց ամիս անց նրա դուստրը մեկնել է Էստոնիա՝ այցելելու քրոջը, սակայն Մերձբալթիկայի՝ խորհրդային բռնազավթման հետևանքով մնացել է այնտեղ և կարողացել է Ֆինլանդիա վերադառնալ միայն 1945-ի մարտի 28-ին¹:

Ինչպես ամենուրեք, Ֆինլանդիայում նույնպես հայտնվել են քախտախնդիրներ: 1908 թվականին Ֆինլանդիայում բանտարկության է ենթարկվել մի իրանահպատակ հայ՝ բանկային փաստաթղթեր կեղծելու համար²: Այս ժամանակահատվածում հիմնականում իրանահայեր Ֆինլանդիայի ճանապարհով են անցել Շվեդիա: Նրանք մեծ մասամբ եղել են թափառաշրջիկ մուրացկաններ: Ֆիննական անվտանգության ոստիկանության երբեմնի նախագահ Էսկո Ռիեկկին բացասական հիշողություններ է ունեցել հայերից: Նա նշել է, որ «Ֆինլանդիայում նույնպես նրանք երկար ժամանակ հայտնի էին որպես խորամանկ և անազնիվ սպեկուլյանտներ, մուրացկաններ, որոնք հա-

¹ Նույն տեղում:

² Antero Leitzinger, *Armenians are not just a distant people for Finland*, <http://www.migri.fi/netcomm/content.asp?article=3618>

սարակութեան գութն էին հայցում որպէս թուրքերի կողմից ճնշումների և բռնությունների, ինչպէս նաև երկրաշարժի գոհեր»¹:

Սակայն 1926-ի մայիսին ժնևում կայացած գաղթականության համաժողովում ֆիննական պատվիրակը տվեց «լիակատար ազատություն՝ քննարկելու համար հայ գաղթականների կողմից երկիր մուտք գործելու ցանկացած դիմում»²:

1917 թվականի ռուսական հեղաշրջման և քաղաքացիական պատերազմների պատճառով Ֆինլանդիա են մեկնել սակավաթիվ հայեր, որոնց մեծ մասը հետագայում տեղափոխվել է այլ երկրներ: Մինչև 1928-ը շատ հայեր Ֆինլանդիա ճամփորդել են Հայաստանի անկախ հանրապետության անձնագրերով: Ֆիննական անվտանգության ծառայությունների արխիվում նյութեր են պահպանվում 1930-ի հուլիսին Խորհրդային Միության Սոլովեցկի գուլագից Ֆինլանդիա ուղքով փախած չորս հայ դաշնակցական կալանավորների (Անուշավան Չատիկյան, Տիգրան Հարությունով, Ենոք Գրիգորյան, Ռուբեն Ալլահվերդով) մասին, որոնց ժամանակին անդրադարձել է ֆինն մամուլը: Անուշավան Չատիկյանը (1894–1934³, հայտնի նաև որպէս Անդրեյ Մկրտչյան) արժեքավոր տեղեկություններ է հաղորդել ֆիննական ռազմական վերնախավին և կազմակերպել հայ-մահմեդական միացյալ պարտիզանական դիմադրություն ընդդէմ Կովկասում խորհրդային իշխանության: Կապ հաստատելով Փարիզի դաշնակցականների հետ՝ Չատիկյանը և նրա խումբը սկսել են Ֆինլանդիայի ճանապարհով Խորհրդային Հայաստան ուղարկել զաղտնի գրականություն և զենք: Նրանք հետագայում տեղափոխվել են Ֆրանսիա, որտեղից Չատիկյանը նամակ է գրել ֆիննական ոստիկանությանը՝ իր երախտագիտությունը հայտնելով իրենց բարեհաճ ընդունելություն ցուցաբերած ֆինն ժողովրդի մասին³: Այս գործիչների մասին տեղեկությունները ֆիննական աղբյուրներում հայտնաբերել և հրապարակումներ է կատարել ֆինն պատմաբան Անտերո Լեյցինգերը:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Antero Leitzinger, Who was Anushavan Zatikyan? *Ararat*, autumn, 1996, New York, p. 25–26. Նույնի, Lessons from integration of aliens in Finland 1917–1944, *The Eurasian Politician*, 2, October 2000.

1940-ի հունվարի 9-ին ֆիննական քաղաքացիություն է շնորհվել շվեյցարացի ուսանող Գորդոն Մաքսիմիլիան Դոլոլիանյանցին (1912–⁴): 1946-ին երկու խորհրդահայեր դիմել են ֆինլանդահպատակ դառնալու համար:

Այս ժամանակաշրջանում Ֆինլանդիայի տարածքում հայկական որոշ ներկայություն է եղել խորհրդա-ֆիննական՝ 1939–1940 թթ. հիմնգ աճիս տևած պատերազմի ընթացքում: Խորհրդային բանակի կազմում այս պատերազմին մասնակցած հայորդիների թիվը եղել է շուրջ 16 հազար: Նրանցից մոտ երկու հազարը զոհվել է¹: Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցել է հայազգի ռուսական գրող Լյուսյա Արգուտինսկայան (Արդուբյան, 1897–1968), այդ մասին գրել իր ստեղծագործություններում:

Հետագա տասնամյակներին Ֆինլանդիայում հայ բնակիչներ գրեթե չեն եղել մինչև 1990-ականների սկիզբը: Աշխարհի տարբեր երկրներից շատ քիչ թվով հայեր են ուսանել այս երկրում, ինչպէս՝ հորդանանցի Աբրահամ Թերզիբաշյանը, որը 1970-ականներին Հելսինկիում ուսանել է հնագիտություն և ամուսնացել ֆիննուհու հետ²: Այժմ նա զբաղվում է պատի պատասխանների դիզայնով: Տարբեր երկրների հայեր ժամանակավորապես պաշտոնավարել են Ֆինլանդիայում, ինչպէս՝ Ենգիբարովը, որը 1960-ականներին ղեկավարել է խորհրդային ինքնաշարժերի առևտրով զբաղվող մի ֆիրմա Հելսինկիում³:

1991–2007 թթ. ժամանակահատվածում 40 հայաստանցիների տրվել է ֆիննական քաղաքացիություն: Ներկայումս Ֆինլանդիայում բնակվում է մոտ քառասունհինգ հայ ընտանիք (նաև՝ Հայաստանից արտագաղթածներ), որոնք կենտրոնացած են Հելսինկի, Տամպերե, Տուրկու և Հյուվինկա քաղաքներում: Նրանց թվաքանակը տատանվում է 200-ից մինչև 500: 2008-ի վերջին ֆինլանդաբնակ հայաստանցիների թիվը եղել է 73, Ֆինլանդիայում ծնված հայերի թիվը՝ 58, իսկ

¹ Այս մասին մանրամասն տես՝ Կլիմենտ Հարությունյան, *Հայ ռազմիկների մասնակցությունը խորհրդա-ֆիննական պատերազմում (30.11.1939–13.03.1940)*, Երևան, 2008:

² ՀԱԱ, ՊՖՊՈՂ 875, ց. 2, գ. 518:

³ Сурен Арутюнян, О прошлом и настоящем, Москва, 2009, стр. 28.

հայախոս բնակիչները 199 են: 1990-ականների սկզբի հետ համեմատած՝ հայերի թիվը տասնապատկվել է Ֆինլանդիայում:

Հայ առաքելական եկեղեցին ունի իր ներկայացուցիչը Ֆինլանդիայում՝ ի դեմս Խաժակ Ազիզյանի: Ֆիննահայերը հոգևոր մեծ վերելք են ապրել Հելսինկիի «Արվեստ և դիզայն» թանգարանում կայացած «Մուրք Խաչ» խորագրով Հայ եկեղեցու զանգեղի ցուցահանդեսի շնորհիվ, որ գործել է 1998-ի նոյեմբերի 11-ից մինչև 1999-ի հունվարի 24-ը¹:

Ֆինն լուսանկարիչ Յասկկո Հեիկկիլայի հետաքրքրություններն ընդգրկում են նաև հայ ժողովուրդը և Հայաստանը: 2004-ին նա այցելել է Հայաստան, այնուհետև հայկական հանդիպումներ ունեցել Լոս Անջելեսում և Վենետիկում: 2006-ին Հեիկկիլան հրատարակել է «Հայաստան. չխոսվող ճակատագրեր» լուսանկարչական ալբոմը՝ նվիրված հայոց ցեղասպանության հիշողությանը: Ներկայացված աշխատանքների միջոցով նա ներկայացրել է բռնության, տառապանքի, փախստականների և մշակութային ինքնության թեմաները:

Ֆինլանդիայում բնակվող հայազգիների մեջ կան սակավաթիվ մտավորականներ և արվեստագետներ: Յուվասկյուլայայի համալսարանի ֆիզիկայի բաժանմունքի նաև գիտության կենտրոնի գլխավոր գիտաշխատող է Կոնստանտին Հարությունովը: Իսկ հայ արվեստագետներից կարող ենք նշել մեկ նկարչի, մեկ կոմպոզիտորի և մեկ երգչուհու անուն: Նկարիչ Արամայիս Ավետիսյանը ծնվել է Գյումրիում, Երևանի գեղարվեստի ինստիտուտն ավարտելուց հետո նա մոտ երկու տասնամյակ բնակվել է Մոսկվայում: Ամուսնանալով ֆիննուհու հետ՝ 1987-ին տեղափոխվել է Հելսինկի: Ընտրվել է Ֆինլանդիայի նկարիչների միության անդամ: Հելսինկիում մի անգամ կազմակերպել է ցուցահանդես, որին մասնակցել է Ավետիսյանը, եղբայրը, քույրը և եղբորդիին, որին պատահաբար ներկա է եղել նաև Հայաստանից եկած պաշտոնական մի պատվիրակություն՝ ֆիննական կողմի հրավերով: Այն հարցին, թե Ֆինլանդիայում կա՞ հայ համայնք, Ավետիսյանը պատասխանել է. «Փորձում ենք ստեղծել, բայց կա հոգեբանական մի դժվարություն, որը չենք կարողանում հաղթահարել:

Մեծ հայություն չկա, երևի մի քանի հազար, բայց նրանք հավաքվել են աշխարհի զանազան հայաշատ վայրերից և ինչ-որ տեղ տարբերվում են իրարից՝ սովորությամբ՝ մտածելակերպով, նկարագրով»¹: Անշուշտ, ֆինլանդաբնակ հայերի՝ մի քանի հազար լինելը չի համապատասխանում իրականությանը:

Ֆինլանդիայի Տուրկու քաղաքում բնակվող երգչուհի Մաթիլդա Մետտալան ծնվել է 1970-ին, Մալմյոյում (Շվեդիա), Դինգիզյան ընտանիքում: Հայտնի է դարձել ԱՄՆ-ում տված համերգներով, հատկապես «Ներված աշխարհ» երգով: Լուսնի համալսարանի արվեստի և երաժշտության ինստիտուտում 2007-ին դիպլոմային է պաշտպանել «Ալան Հովհաննեսը և նրա հայկական հայտնագործության որոնումը» (շվեդերեն), որտեղ Հովհաննեսի ստեղծագործության հայկականությունից գատ նա մասնավորապես քննել է ամերիկահայ կոմպոզիտորի և ֆինն նշանավոր երաժշտաստեղծ Յան Սիբելիուսի ստեղծագործական առնչությունները: Մետտալան տիրապետում է հայոց լեզվին, 2007-ին այցելել է Հայաստան:

2009 թվականին Ֆիննական Ազգային օպերայում մեկ համերգաշրջանում հանդես է եկել հայաստանցի օպերային երգչուհի, այժմ գերմանաբնակ Կարինե Բարաջանյանը:

Կոմպոզիտոր Վլադիմիր Ագոպովը ծնվել է 1953-ին, Լուզանսկում (Ուկրաինա): Երաժշտական կրթությունն ստացել է Մոսկվայում՝ աշակերտելով Արամ Խաչատրյանին և Էդիսոն Դենիսովին: 1978-ից բնակվում է Ֆինլանդիայում: 1978–1985 թթ. ուսանել է Սիբելիուսի անվան երաժշտական ակադեմիայում՝ աշակերտելով ֆինն կոմպոզիտոր Պասավո Հեինինենին: 1982-ից նա Սիբելիուսի անվան երաժշտական ակադեմիայում դասավանդում է երաժշտության տեսություն: Գրել է տարբեր ստեղծագործություններ՝ սոնատ կլառնետի համար (1981), երկու լարային կվարտետը (1982–1989, 1988), "Tres viae" թավջութակի կոնցերտը (1984) և այլն:

2003-ին ֆինն-ռուսական առևտրի պալատը հրատարակել է «Ռուսական սովորույթները ֆիններին» գիրքը, որի երեք ֆինն հեղինակներից մեկը Քիրսի Մուրադյանն է:

¹ Տ. Ներսիս արեղա Խալաթյան, «Մուրք Խաչ» հայ եկեղեցու զանգեղի ցուցահանդեսը Հելսինկիում, *Էջմիածին*, Ա, 1999, էջ 106:

¹ Ազգ, 21.09.2007:

Շվեդիա

Երկրորդ համաշխարհային պատերազմի մախօրեին Հայաստանը դարձյալ գրեթե անծանոթ էր Շվեդիայի հասարակությանը, ինչպես XIX դարում: Երբեմն-երբեմն այդ երկիր են այցելել հայեր տարբեր պետություններից: Այսպես, 1935-ին Մտոկհոլմում կայացել է սկաուտների միջազգային հավաք, որին մասնակցել են 30 ազգեր ներկայացնող 5000-ի չափ սկաուտներ: Այս հավաքին մասնակցել է նաև հայ սկաուտների մի խումբ Եգիպտոսից¹: Նույն 1935-ին նկարիչ Մարգիս Խաչատուրյանը մեծ ցուցահանդեսներ է ունեցել Օսլոյում և Մտոկհոլմում, որոնց բազմիցս անդրադարձել է տեղի մամուլը²: Նրա «Խոջա Պետրոսը իր եվրոպացի հյուրի հետ» կտավը գտնվում է Մտոկհոլմի պետական թանգարանում³:

Խորհրդային Հայաստանը առանձնահատուկ կապեր չի ունեցել սկանդինավյան երկրների հետ: Հայ կենսաբան, Երևանի պետական համալսարանի բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Հովակիմ Բեդեյանը (1874–1940), ի քիվս աշխարհի տարբեր երկրների, աշխատել է նաև Գանիայում, Կոպենհագենում, արդյունքներն ամփոփել իր ֆրանսերեն և գերմաներեն աշխատություններում⁴: 1930-ականներին Երևանի բնապատմական թանգարանի հետ կապի մեջ է եղել շվեդ բուսաբան պրոֆեսոր Մուրբերգը (հավանաբար Մուրբերգ), որ հետաքրքրվել է հայկական բուսատեսակներով և նյութեր է ուղարկել փոխանակման համար⁵: 1937-ին շվեդական «Դագենս նյուհեթերի» թղթակիցը այցելել է խորհրդային տարբեր հանրապետություններ, նաև Հայաստան, և մի գովաբանական հոդված գրել Խորհրդային Հայաստանի մասին: Նա 15 օրում շրջել է ամբողջ հանրապետությունում, հանդիպել քաղաքացիների և գյուղացիների, որոնք բո-

¹ Արագ, 18.08.1935:

² Տես ԳԱԹ, Մարգիս և Վավա Խաչատուրյանների արխիվ, տպագիր նյութեր:

³ Արագ, 17.05.1936:

⁴ «Խորհրդային Հայաստան», 18.02.1926:

⁵ Արևեկ, 26.03.1934:

լորն էլ գոհունակություն են արտահայտել իրենց վիճակից (քնականաբար, ժողովուրդների բանտ ԽՍՀՄ-ում արյունոտ 1937-ին նրանք այլ բան չէին կարող ասել)¹:

Շվեդական հատուկ պատվիրակություններ և հատուկներ մտավորականներ կարճատև այցելություններ են կատարել Խորհրդային Հայաստան: 1951-ի հուլիսի 7-ին Երևան են ժամանել մի խումբ շվեդ մտավորականներ: Նրանց մեջ է եղել ճարտարագետ Հարի Կառլսոնը, որն այցելել է Երևան, դիտել Վահրամ Փափազյանի Օբեկոն, եղել Գվինում և Էջմիածնում: Իր հիացմունքը նա արտահայտել է շվեդական մամուլում: Մասնավորապես իր զարմանքն է արտահայտել Հայաստանում կին պրոֆեսորների մեծ քվի կապակցությամբ, նշելով, որ Շվեդիան իր ողջ գոյության ընթացքում երեք կին պրոֆեսոր է ունեցել: «Ուրիշ որևէ ժողովրդի չի կարելի բաղդատել հայերի՝ այդ ստեղծագործ և շինարար ժողովրդի հետ», – եզրափակել է Կառլսոնը:

1953-ի նոյեմբերին Հայաստան է ժամանել Խաղաղության պաշտպանության շվեդական հանձնախմբի պատվիրակությունը: Նրանց հետ է եղել ֆինլանդաբնակ գրող և արվեստաբան Յորան Շիլդթը (1917–2009), հայտնի իր ուղեգրություններով: Վերադառնալով՝ «Մվենսքա դագրլադեդ» օրաթերթում նա հրատարակել է «Ողիսևսի շավդի մեջ» ուղեգրությունը: Շիլդթը հակադրել է հայերի հյուրասիրությունը ռուսականին, նշելով, որ «Օտարականը բաց սրտով է ընդունվում Հայաստանում, և սրա պատճառը թերևս այն է, որ հայերն աշխարհի մյուս մասերի հետ շատ ավելի հարաբերություններ են ունեցել, քան Խորհրդային Միության մյուս ժողովուրդները»: Շիլդթը բացառիկ հիացմունքով է խոսել Գոհար Գասպարյանի երգեցողության, հայ ճարտարապետության մասին, արձանագրել է բնակչության աճի փաստը և այլն:

Ուլիդ մեկ տարի անց, 1954-ի նոյեմբերին, Հայաստանում հյուրընկալվել է շվեդ ուսուցիչների պատվիրակությունը: 1956-ին Հայաստան է այցելել Շվեդիայի վարչապետ Թագե Էրլանդերը (1901–1985):

¹ Յակոբ-Գրիգոր, Երջանիկ Հայաստանը, Հայաստանի կոչնակ, 7.08.1937, էջ 770: Տես նույնը՝ Յակոբ-Գրիգոր, Երկիրու հատարածոյ, Փարիզ, 1981, էջ 123-124:

1961-ին Հայաստանում հյուրընկալվել է շվեդ գիտնական Գունար Սվանսթրյոմը, որը գրել է. «Գրքերից ես գիտեի հինավուրց Հայաստանի՝ հազարամյա մշակույթ ունեցող այդ երկրի մասին, բայց գալով ձեզ մոտ, ես տեսա միանգամայն այլ երկիր, երիտասարդ, բարգավաճ հանրապետություն: Գուք կարող եք հպարտանալ ոչ միայն ձեր նախնիների գործերով, այլ էլ ավելի ձեր իսկ սեփական՝ հոյակապ գործերով: Երևանը միանգամայն նոր քաղաք է: Լավ կլիներ հին քաղաքի մի փոքր մասը պահպանել, որ երիտասարդությունը և ինձ նման օտարերկրացիները կարողանային հինը համեմատել նորի հետ»¹: Հետագա տարիներին Հայաստանում եղել են նաև շվեդ գիտնականներ աստղաֆիզիկոս Ստենֆլոն (1965), Էվերտ Կառլսոնը (1980), Սվեն-Էրիք Քոբսենը, Լարս Բյոնիգսոնը (1981) և այլք:

1966-ի հուլիսի 5-6-ին Հայաստանում է եղել Շվեդիայի թագաժառանգ Բերտվիլը (1913-1997): Նրան ողջեցել են Շվեդիայի Ռիքս-դագի (խորհրդարանի) պատգամավոր Հենրի Ալարդը, ԽՍՀՄ-ում Շվեդիայի դեսպան, արևելագետ Գունար Յարինգը, Շվեդիայի սպորտի միության նախագահ Բու Բենգսոնը, Շվեդական օլիմպիական հանձնախմբի փոխնախագահ Բու Էրեյունդը, Ստոկհոլմի քաղաքապետի Ալան Նորդենսանը, բարգմանիչ Յորան Լյունդսթրյոմը, ինչպես նաև հինգ հոգի խորհրդային կողմից²: Պատվիրակությունն այցելել է Մատենադարան, Սևան: «Մբանչելի ժամանակ են անցկացնում: Գոհ են իմ կարճատև այցելությունից: Մեծ հաճույքով մի անգամ էլ կգամ այս հիասքանչ երկիրը», - ասել է թագաժառանգ Բերտվիլը³:

Շվեդիայի Խորհրդարանի անդամ և արտաքին հարաբերությունների հանձնախմբի փոխնախագահ Օլե Դալենը 1972-ին եղել է Հայաստանում, այցելել կաթողիկոսին⁴:

1950-ականներից սկսած հայկական պատվիրակություններ և հյուրեր այցելել են Շվեդիա: 1956-ին Շվեդիա է այցելել Արամ Խա-

չատրյանը, որը Ստոկհոլմում հյուրընկալվել է Արքայական երաժշտական ակադեմիայում, հանդիպումներ ունեցել շվեդ ականավոր երաժշտաստեղծներ Կ. Մ. Աբերերգերի, Լ. Յ. Լարսոնի, Էրիք Յոնանսենի հետ: Նորգեթինգում հանդիպում է ունեցել սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտների, ինչպես նաև նվագավար Հերբերթ Բլունսբեդի հետ: Նորգեթինգում, ընդառաջելով Արամ Խաչատրյանի՝ երգեհոնային երաժշտություն ունկնդրելու ցանկությանը, եկեղեցիներից մեկի երգեհոնահարը մի քանի ժամ նվագել է հայ կոմպոզիտորի համար¹: Հետագայում հայ կոմպոզիտորներից Շվեդիա և մյուս սկանդինավյան երկրներ այցելել է Էդգար Հովհաննիսյանը (1960 և 1962):

1958-ին Ստոկհոլմում կայացած բժշկական մեծ համագումարին մասնակցել են Հայաստանի ներկայացուցիչ բժիշկներ Ա. Ալեքսանյանը և Հ. Փանոսյանը²:

Գրող Նաիրի Չարյանը Շվեդիա կատարած այցելությունից հետո, խորհրդային գրողի դիրքերից գրել է հետևյալը. «...հավակնություն չունեմ բացատրելու, թե ինչու Շվեդիայում այդքան շատ են տարածված հոգեկան հիվանդություններ: ...Հարուստ է այստեղ բնությունը: Ամենուրեք ջուր և կանաչ: Կլիման չափավոր է: Ժողովուրդը արտաբնական առողջ և գեղեցիկ: Շվեդիայի բանվոր դասակարգը նվաճել է ամենաբարձր կենսամակարդակը բուրժուական Եվրոպայում: Ուրեմն ինչու՞մ է բանը: Բանն այն է, որ ամենաբարեկեցիկ երկիրն անգամ կապիտալիստական կարգերում չի կարող ապահովել մարդկանց համար իսկական երջանկություն»³:

Խորհրդային Հայաստանը որոշ մշակութային և մարզական կապեր է ունեցել Շվեդիայի հետ: 1958-ին Շվեդիայի «Սունդսվալ» ֆուտբոլի թիմը Երևանում խաղացել է տեղի «Սպարտակի» հետ⁴: 1966-ին Երևանում հյուրախաղերով հանդես է եկել Ստոկհոլմի Արքայական քաղաքի մեներգչուհի Էլիզաբեթ Սյոդերսթրյոմը, որը կատարել է Վիոլետա Վալերիի դերերգը «Տրավիատա» օպերայում⁵: 1987-ին

¹ Հայաստանը օտարերկրացիների աչքերով, *Սովետական գրականություն*, 1965, ք. 4, էջ 154:

² ՀԱԱ, ՊՖՅՈՂ 326, ցուցակ 2, գործ 107, վավերագիր 4:

³ Այս և նախորդ կարծիքները քաղել ենք ժամանակի խորհրդահայ մամուլից, ցավոք, չնշելով աղբյուրները:

⁴ *Էջմիածին*, 1972, հունիս, էջ 35-37:

¹ Արամ Խաչատրյան, *Նամակներ*, կազմ. Մ. Հարությունյան, Երևան, 1995, էջ 192-193:

² *Հայաստանի կոչնակ*, 6.12.1958, էջ 1170:

³ Նաիրի Չարյան, *Երկերի ժողովածու վեց հատորով*, հատոր 6, Երևան, 1964, էջ 271:

⁴ *Սովետական Հայաստան*, Երևան, 1959, ք. 5, էջ 47:

⁵ *Սովետական արվեստ*, 1966, ք. 4, էջ 62:

Երևանում հնչել է շվեդական երաժշտություն, որին ներկա է եղել կոմպոզիտոր Ս. Շյոնբերգը, իսկ Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը դեկավարել է նվագավար Հանս-Իոսահիմ Ռիփսը:

Շվեդիայից Խորհրդային Հայաստան ներգաղթել են ընդամենը երկու հոգի՝ 1980-ի հունիսի 26-ին, որմնադիր Հայրապետ Վասիլի Մանուկյանը (1904-ի ծնված) և կինը՝ Մարիամ Օհանի Ստեփանյանը (ծնված 1907-ին), որոնք բնակություն են հաստատել Մասիսում¹:

Շվեդիայում 1987-ին կազմակերպվել է հայ մշակույթի փառատոն: Խորհրդային Հայաստանից մի շարք արվեստագետներ հանդես են եկել 32 քաղաքներում, ամենահարավային Մալմյոյից մինչև ամենահյուսիսային Քիբունան: Այդ արվեստագետների մեջ են եղել ջութակահար Ռուբեն Ահարոնյանը, երգչուհի Արաքս Մանսուրյանը, Կոմիտասի անվան լարային քառյակը, Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի համույթը², նկարիչներ և այլք:

Հայաստանի 1988-ի երկրաշարժի առաջին իսկ օրերից Շվեդիայի կառավարությունը և ժողովուրդն իրենց օգնությունն են ցուցաբերել աղետի ծանր հետևանքները հաղթահարող Հայաստանին: Շվեդական «Էրիքսյելֆեն» բարեգործական միությունն ակտիվ գործունեություն է ծավալել Հայաստանում (Արթիկում կառուցել է մանկապարտեզ, Աշոցքում՝ բնակելի թաղամաս, որ տեղացիները կոչում են «շվեդական գյուղ»³): Ի դեպ, «Էրիքսյելֆենի» նախագահ Ռոնալդ Նելսոնը գիրք է գրել այդ կազմակերպության գործունեության վերաբերյալ՝ մի գլուխը նվիրելով Հայաստանին⁴: Այստեղ նա պատմել է, թե ինչպես իր մոտ սկսված քաղցկեղը Գեղարդի վանքում բուժել է երևանցի Թինա Բելոուսովայի աղոթքը (վերջինս, ի դեպ, տարիներ շարունակ եղել է Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության «Հայաստան-Շվեդիա» ընկերության համակարգողը):

¹ ՀԱԱ, ֆոնդ 362, ցուցակ 13, գործ 39, էջ 194:

² Այս համույթի ելույթների մասին լուսանկարներով հանդերձ տես՝ Anki Hällberg, Vilda män och sirliga kvinnor, *Borlänge Tidning*, 22.10.1987:

³ *Veitlanda-posten*, 27.05.1995:

⁴ Ronald Nelsson, *Vidare med Erikshjälpen. Normans Förlag*, Stockholm, 1995, s. 123-132:

Շվեդիայի Էդա քաղաքի «Լև» բարեգործական միությունը Գոթանսկում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսարանի միջնորդությամբ երկրաշարժից տուժածներին փոխանցել է երկու կոնտեյներ հագուստ¹: Հօգուտ երկրաշարժից տուժածների բարեգործական համերգներով հանդես են եկել թավջութակահար Լարս Ի. Բյերլեսթամը և դաշնակահարուհի Ուլրիքա Հեբբեն և այլք: Հայտնի շվեդ երգիչ անուսիններ Միա Մարիաննը և Փեթ Ֆիլիպն իրենց երգացանկում ընդգրկել են նաև հայկական երգեր, իրենց թողարկած «Արագիլ» ծայներիզից ստացված հասույթը տրամադրել են երկրաշարժից որբացած հայ երեխաներին:

Ուփսալա քաղաքի Մայր տանարի հսկայական դահլիճում տեղի է ունեցել բարեգործական համերգ հօգուտ Հայաստանի՝ Կարմիր խաչի Ուփսալայի բաժանմունքի և տեղի հայ մշակութային միության նախաձեռնությամբ: Համերգը բացել է ինճամյա Արմեն Միրզայանը՝ կատարելով Անոն Բաբաջանյանի գործերից, ելույթ են ունեցել «Մենտիրե» գործիքային եռյակը, երգեհոնահար Գունար Իդեսթամը, օպերային երգիչներ Էքլանդ Հագեգորդը և Քրիսթինա Հեգմանը: Կարմիր խաչի շվեդական ազգային հանձնախումբը, ըստ քարտուղար Քրիսթեր Օքվիսթի, Հայաստանի օգնության համար տրամադրել է ութ միլիոն քրոն²:

Երկրաշարժից անմիջապես հետո Շվեդիայի հայ համայնքը ևս մի քանի միլիոն շվեդական քրոնի հասնող օգնություններ է հավաքել և ուղարկել Հայաստան: Շվեդաբնակ բժիշկ Վահան (Օհան) Վարդանյանի և Շվեդիայի հայ մշակութային միությունները համադրող կենտրոնի նախաձեռնությամբ հավաքված օգնությունները Հայաստան են հասցվել Շվեդիայի Կարմիր խաչի միջոցով: Շվեդիայի օգնությունը կազմել է ավելի քան հինգ միլիոն ամերիկյան դոլար³: Երախտապարտ հայ ժողովուրդը երկու խաչքար է նվիրաբերել Շվեդիային, որոնցից մեկը 1991-ին տեղադրվել է Վեթլանդայում, մյուսը՝ 1993-ին,

¹ Nu går armenier i kläder från Eda, *Arvika nyheter*, 23.01.1989:

² *Армения, декабрь 88*, авторы-составители Л. Ф. Григорова и др., Ереван, 1990, стр. 378:

³ ՀԱԱ, ֆոնդ 396, ցուցակ 9, գործ 298, վավերագիր 10:

Եվլեի Սուրբ Երրորդություն եկեղեցում (քանդակագործ՝ Մերգեյ Դանիելյան):

Սկսած 1989 թվականից մինչ օրս Մարգարետա և Ուլֆ Սթրյոմբերգները Յոնշյոփինգից ֆինանսական և նյութական օգնություն են ցուցաբերում Երևանի «Հայկ» բժշկական կենտրոնին: Օգնության 80 տոկոսը տրամադրում է Շվեդական պետական SIDA ծրագիրը, իսկ 20 տոկոսը կազմում են շվեդական եկեղեցու խորհրդի անդամների նվիրատվությունները և բարեգործական հանգանակությունները: Թեև Սթրյոմբերգները ներկայացնում են «Քրիստոնեական առաքելության օգնություն» կազմակերպությունը, սակայն ամուսինների անհատական նպաստն ու նվիրվածությունն այնքան մեծ է, որ «Հայկ» բժշկական կենտրոնում բացվել է նրանց անունը կրող մանկական թունաբանության բաժանմունք:

1990-ին անկախություն հռչակած Հայաստանի Հանրապետությանը Շվեդիան պաշտոնապես ճանաչել և դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 1992-ի հունվարի 20–21-ին: Առաջին իսկ տարիներին Հայաստան են այցելել և հայ քաղաքական գործիչների հետ հանդիպումներ են ունեցել մի շարք շվեդ գործիչներ, ինչպես՝ հումանիստ Մալթե Փաուլսենը, շվեդական Ռիքսդագի նախկին անդամ Օսքար Լինդբլիսթը, պատգամավորներ Թունե Թինգսգորդը (Ռուսաստանի համալսարանի սլավոնական լեզուների ինստիտուտի դասախոս, որը որպես դիտորդ մասնակցել է Հայաստանի 1996 թվականի նախագահական ընտրություններին) և Անդերս Լագոն, արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Մարգարետա աֆ Ուզլասը, հասարակական գործիչներ Մայվոր Էլիզաբեթ Կառլսոնը, Բիրգիթ Մարգարետա Բուրիյոյը, Աննա-Քարեն Բիրգերսոնը, լրագրող Լեննա Ջալկեն և շատ ուրիշներ: Հայաստանի կառավարությունը Սյոդերթեյլեի «Արարատ» միության նախագահ Մայվոր Կառլսոնին իր հայանպաստ գործունեության համար 1995-ին արժանացրել է պարգևի¹: Շվեդիայի կառավարությունն իր հերթին 1993-ին Ուլոֆ Փալմեի անվան խաղաղության մրցանակով էր պարգևատրել թարգմանչուհի, հանրային գործիչ Անահիտ Բայանդուրին՝ իր խաղաղասիրական գործունեության

¹ Նրա մասին տե՛ս *Södertälje Länsstidningen, Södertälje*, 21.11.1995.

համար: Վերջինս, ի դեպ, Աշխեն Ջրբաշյանի հետ միասին հայերեն է թարգմանել Սթիգ Հադենհուսի «Շվեդական քաղաքականությունը XX դարում. կոնֆլիկտ և համաձայնություն» գիրքը (Երևան, 1999):

Երևանում Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և համագործակցության ընկերությունում 1994-ին հիմնադրվել է «Հայաստան–Շվեդիա» հասարակական կազմակերպությունը, որի առաջին նախագահ է ընտրվել բանաստեղծ Հենրիկ Էդոյանը, երկրորդը, 1997-ից՝ արվեստաբան Հասմիկ Փիլիպոսյանը: 1999-ին Ստոկհոլմի Բարձրագույն կրթության ազգային գործակալության «Տեմպուս» ծրագրի Շվեդիայի տնօրեն Սթեֆան Մելվիզի նախաձեռնությամբ Երևանում բացվել է Շվեդական տունը, որը գործել է մինչև 2001 թվականը: Այնտեղ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, սեմինարներ, հաճախորդներին տրամադրվել են գրքեր և լատենտոդական նյութեր Շվեդիայի վերաբերյալ: 2000-ի հունիսի 9–12-ին Երևանում անց են կացվել Շվեդիայի մշակույթի օրեր՝ Հայաստանում և Ռուսաստանում Շվեդիայի դեսպանատան նախաձեռնությամբ: Շվեդական միջոցառումների կազմակերպման հայաստանյան պատասխանատուն էր Շվեդական տան նախագահ Լանա Կառլովան: Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել նկարչական ցուցահանդես, համերգ և շվեդական կինոնկարների ցուցադրություն, ինչպես նաև «Շվեդ-հայկական կապեր. փորձ և հեռանկարներ» թեմայով սեմինար:

Վլադիմիր Կարմիրշայանը (ծնված 1952-ին) 2000-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության դեսպան Շվեդիայում, Նորվեգիայում, Դանիայում և Ֆինլանդիայում: Նույն թվականի հոկտեմբերին Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը պաշտոնական այցով եղել է Շվեդիայում և Նորվեգիայում՝ տեղի կառավարության անդամների հետ քննարկելով այդ երկրների հետ Հայաստանի հնարավոր համագործակցության հարցը: 2006-ից Սկանդինավիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանն է Արա Այվազյանը (նստավայրը՝ Երևան): Շվեդիան նմանապես Հայաստանում ներկայացնում է նստավայր չունեցող դեսպանը Ստոկհոլմում (Արտաքին գործերի նախարարությունում, Հանս Գուննար Ադե-

նը, 2009-ի դրությամբ) և պատվավոր հյուպատոսը Երևանում (Էդիթ Խաչատրյան, 2009-ի դրությամբ):

Եսքիլսթունա քաղաքում 2002-ին նախաձեռնվել է «Անի-Արմենիա» ծրագիրը, որի նպատակն է նոր կապեր ստեղծել Հայաստանի և Շվեդիայի միջև առևտրի, գրոսաշրջության, աշխատանքի, սոցիալական ապահովության, մշակույթի և կրթության բնագավառներում: Վերջին տարիներին Հայաստանում հիմնվել են միկրոծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստել փոքր տնտեսությամբ զբաղվող ֆիրմաների զարգացմանը և ինքնաֆինանսավորմանը: 2002-ի դրությամբ՝ սույն ծրագիրը բացել է գրասենյակ Երևանում¹:

Դանիա

Թուրքիայի դիվանագիտական գործիչ Րաֆֆի Թընգըրը (1890–1952) 1919–1940 թվականներին պաշտոնավարել է Թուրքիայում Դանիայի դեսպանատանը, արժանացել է բարձր պարգևների:

Առաջին դանիացին, որ այցելել է Խորհրդային Հայաստան, քերևա եղել է 1946-ին Երևանում հյուրընկալված Կոպենհագենի համալսարանի ուսուցչապետ Ալբերտ Էլզերը: Հավանաբար նրա հետ է ճանապարհորդել նաև Ազնետե Օլսենը, որը 1947-ին Կոպենհագենում հրատարակել է «Մոսկվայից Արարատ» գիրքը²: 1966-ին Հայաստանում է եղել «Լանդ օգ ֆուրե» քերթի խմբագիր Փոուլ Թոմսոնը, վերադառնալուց հետո դրվատական հոդված հրատարակել հայ ժողովրդի և երկրի մասին, ելույթ ունեցել Կոպենհագենի ռադիոկայանից՝ «Խորհրդային Հայաստանն այսօր» թեմայով³: 1969-ի նոյեմբերին Հայաստան է այցելել Դանիայի արտգործնախարար Փոուլ Հարթինգը:

1988-ի հայաստանյան երկրաշարժից հետո Դանիայի կառավարությունն աղետյալների հիմնադրամին տրամադրել է 1,2 միլիոն ամերիկյան դոլար, նրան պատկանող Ֆառերյան կղզիները՝ 45,5 հազար, իսկ Գրենլանդիան՝ 15,1 հազար դոլար: Դանիական տվյալնե-

րով՝ ընդհանուր օգնությունը կազմել է 3,2 միլիոն ամերիկյան դոլար¹: Հայաստանին տրամադրած դանիական օգնությունը համադրել է արտաքին գործերի նախարար Ուֆֆե Էլլենան-Ենսենը: Դանիան Գյունթիում կառուցել է 29 տնակ և 3 մանկապարտեզ: Հայաստանի աղետյալ գոտուց դանիական մամուլի համար ռեպորտաժ են պատրաստել «ԱՕԳ» քերթի խմբագիր Թրիլլե Բյոքչեր-Հանսենը և լուսանկարիչ Սթիգ Ստասիկը: Երկրաշարժից տուժած հայ երեխաների մի խումբ հանգստացել է Դանիայում²: Երևանում գրասենյակ ունեցող դանիական «Միսիոն օսթ» կազմակերպությունը 1992-ին բացել է «Դենմարք» հիվանդանոցը Սիսիանում, օժտել այն սարքավորումներով, մի շարք բժիշկներ վերապատրաստում են անցել Դանիայում:

Դանիան առաջին հյուսիս-եվրոպական պետությունն էր, որը պաշտոնապես ճանաչել է Հայաստանի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ է հաստատել նրա հետ (1991-ի դեկտեմբերի 31–1992-ի հունվարի 14):

2005-ի օգոստոսին Դանիայի Եկեղեցական գործերի նախարարությունը ճանաչել է հայ առաքելական եկեղեցին Դանիայում որպես իրավական իրավունքներ ունեցող հաստատություն: Հայ համայնքի հոգևոր կարիքները հոգում է Շվեդիայի հայ համայնքի քահանան: Դանիայի հայ համայնքը տակավին չունի եկեղեցի, ուստիև հայկական ժամերգություններ կատարվում և պատարագ մատուցվում է Կոպենհագենի, Օրհուսի և Օդենսեի դանիական եկեղեցիներում: Առհասարակ, հայ առաքելական եկեղեցու և Դանիայի ավետարանչական լյութերական եկեղեցու միջև գոյություն ունեն հնուց եկող ամուր կապեր: 1922-ից մինչ օրս գործում է «Դանիական հայ առաքելություն» կազմակերպությունը (նախագահ՝ Յորգեն Յորգենսոն)՝ աշխույժ համագործակցություն ծավալելով Հայ առաքելական եկեղեցու և Դանիայի ժողովրդական եկեղեցու միջև: Այն իր գործունեությունը սկսել է նախ Հունաստանի հայ գաղթականների շրջանում, իսկ Հայաստանի անկախացումից հետո՝ նաև Հայաստանի հանրապետությունում: Կազմակերպությունը հրատարակում է «Դանսկ արմենիերամիսսիոն»

¹ Նոր հորիզոն, 2002, ք. 4, էջ 7:

² Agnete Olsen, *Fra Moskva till Ararat*, København, 1947.

³ Թորոս Թորանյան, *Ուր կտանին ճամփաները*, էջ 57:

¹ ՀԱԱ, ֆոնդ 396, ցուցակ 9, գործ 295, վավերագիր 15:

² Հայրենիքի ձայն, 6.12.1989:

պարբերականը՝ երկու ամիսը մեկ հաճախականությամբ, խմբագիրն է Մարիա Մողե Յորգենսոնը, և ուղարկվում է դանիացի երկու հազար ընտանիքների:

1993-ին կազմակերպության նախագահ Յորգեն Յորգենսոնը և Ֆրեդե Մյոլլերն այցելել են Հայաստան՝ ուսումնասիրելու գործելու պայմանները և իրենց ներկայացուցիչներին աշխատանքի ուղարկելու: Հաջորդ տարին իսկ Հայաստանում «Դանիական հայ առաքելությունն» ունեցավ իր մշտական ներկայացուցիչներին՝ ի դեմս ամուսիններ Միքայել և Մոնա Ուեսթի ներկայության: Հայերենին հիանալի տիրապետող այս ամուլը 1994-ից մինչ 2003-ը բնակվել և գործել է Հայաստանում: Օրինուսի համալսարանում աստվածաբանության քենաձուխ աստիճանի արժանացած պաստոր Միքայել Ուեսթը (ծն. 1958) Էջմիածնի ճեմարանում դասավանդել է «Գործք առաքելոց» առարկան, կազմել է դասընթացի համար հատուկ դասագիրք: Գասախոսություններ է կարդացել նաև Սևանի ճեմարանում և Երևանի պետական համալսարանի աստվածաբանության բաժնում: Միքայել Ուեսթը հայ եկեղեցու մասին հողվածներով հանդես է եկել «Ինդրե միսիոնս քիդենդե», «Թիլ բրու», «Իհիթուս» հանդեսներում և «Դանսկ արմենիերամիսսիոն» պարբերաբերքում: Նույն թերթի էջերում Մոնա Ուեսթը (որը եղել է «Դանիայի հայ առաքելության» գործավարուհին), որպես կազմակերպության հայաստանյան թղթակից, լուսաբանել է Հայաստանում առաքելության գործունեությունը: Ուեսթ ամուսինները ստեղծել են սեփական ինտերնետային էջը (www.2westh.org), որտեղ դանիերեն հողվածներ են գետեղում ոչ միայն իրենց գործունեության, այլև Հայաստանի, հայ եկեղեցու, հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ի դեպ, «Դանիական հայ առաքելության» հավաքած գումարով վերանորոգվել է Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցին: Միքայել և Մոնա Ուեսթ ամուսինները տարբեր քաղաքներում հրապարակային ելույթներով պատմում են Հայաստանի և այնտեղ իրենց կատարած աշխատանքների մասին: Անցած տարիների ընթացքում կազմակերպության համար Հայաստանում ժամանակավորապես աշխատել են նաև մի քանի դանիացի կամավորներ:

Ուեսթ ամուսիններին նույն պաշտոնում փոխարինել են Փեր Դամգար և Աննա-Բաթարինա Փեդերսեն ամուսինները, որոնք 2004-2009 թթ. չորս զավակների հետ ապրել և աշխատել են Երևանում: Փեր Փեդերսենը նույնպես դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

«Դանիական հայ առաքելություն» կազմակերպությունը միաժամանակ Հայաստանում իրականացնում է դանիական տարբեր կազմակերպությունների որոշ ծրագրեր: Այսպես, «Դանիական քարոզչական խորհուրդը» վերանորոգել է Երևանի «Կոզեռն» մշակութային կենտրոնը, իսկ «Ժողովրդական եկեղեցու կարիքների օգնություն» կազմակերպությունը տարեկան 22 հազար ամերիկյան դոլար է տրամադրում Հայաստանին՝ զանազան բարեգործական նախագծերի համար (կազմակերպել են զոհված ազատամարտիկների համար ամառային ճամբար, հաշմանդամ երեխաներին համակարգչի և անզլերենի ուսուցում):

Կազմակերպությունն ավանդաբար իր գործունեությունը շարունակում է նաև Հունաստանում, կազմակերպում է աստվածաշնչյան կրթություն, մանկապարտեզ, ամառային ճամբարներ, հանդիպումներ կանանց և երիտասարդների համար, պատարագ են մատուցում Աթենքի և Կոկինիայի հայկական եկեղեցիներում, օգնում Հայաստանից նոր արտագաղթած հայերին և այլն:

Նորվեգիա

1934-ին հայ մամուլում բուրգիկ նշվել է, որ Նորվեգիա մրցումների պետք է մեկնի հայաստանցի բոնցքամարտիկ Անդրանիկ Պապյանը, ինչը բացառիկ բան էր երկաթի վարագույրից անդին գտնվող Հայաստանի համար¹:

Առաջին նորվեգական պաշտոնական պատվիրակությունը Հայաստան է ժամանել 1947 թվականին՝ Նորվեգա-խորհրդային միության նախագահ Հարալդ Հալսի գլխավորությամբ: Այս այցի արդյունքում լույս է տեսել «Լենինգրադից Հայաստան. նորվեգական մշակութային պատվիրակության 1947-ին Խորհրդային Միություն կատարած

¹ Արևելք, 27.09.1934:

այցելության տպավորությունները և փորձառությունը» նորվեգերեն գիրքը¹:

Հայաստանի 1988 թվականի երկրաշարժից երեք օր անց, դեկտեմբերի 10-ին, Օսլոյից Երևան է ժամանել Նորվեգական Կարմիր խաչի ինքնաթիռը՝ բերելով սնունդ և արյան շիճուկ: Դեկտեմբերի 15-ին Սպիտակում արդեն նորվեգացիները տեղադրել են 100 տեղանոց հոսպիտալ: Նորվեգական Կարմիր խաչը հավաքել է 10 հազար ամերիկյան դոլար: Մթորոթինգը (խորհրդարանը) տրամադրել է երեք միլիոն, Նորվեգիայի «Ազգային օգնություն» կազմակերպությունը՝ 450 հազար, կառավարությունը՝ 300 հազար ամերիկյան դոլար: Հայաստանի օգնության կազմակերպման գործում մեծ է եղել Նորվեգիայի թագուհի Սոնյայի դերը, որն այդ ժամանակ եղել է Նորվեգիայի Կարմիր խաչի փոխնախագահուհին: Նորվեգական «Կուպակ», «Էդ-Հենրիկսեն» և «Ռիմե Կոնսո Հուս» շինարարական ձեռնարկությունները, Նորվեգական Կարմիր խաչի նախագահ Վադիմ Օլսենի ղեկավարությամբ ինն ամիս աշխատել են աղետի գոտում²: Գյումրիում Նորվեգիայի «Ազգային օգնությունը» կառուցել է երկու մանկապարտեզի շենք, Սպիտակում՝ հիվանդանոց, որի բակում դրված է Նանսենի կիսանդրին: Ի դեպ, այնտեղ ծնված առաջին երեխային անվանել են Նանսեն. հաջորդ օրը նրա ծնողներին զանգահարել է բևեռախույզի թողը՝ Էյզգիլ Նանսենը, հայտնելով, որ դառնում է երեխայի կնքահայրը և որ այցելելու է Սպիտակ³... Նորվեգիայի օգնությունը Հայաստանի երկրաշարժից տուժած գոտուն կազմել է 16 միլիոն դոլար (միջին հաշվով Նորվեգիայի յուրաքանչյուր բնակչից չորս դոլար)⁴: Հեննեդաուի գյուղական մի դպրոցի 70 աշակերտներ Հայաստան են ուղարկել 90 ծանրոց⁵:

Նորվեգական պաշտոնական մի պատվիրակություն Մթորոթինգի նախագահ Յուգեն Բենքովի գլխավորությամբ 1990-ի սեպտեմբերին

¹ Norske kulturdelegasjon. *Fra Leningrad til Armenia; inntrykk og opplevelser fra Den Norske kulturdelegasjonens reise i Sovjetsamveldet 1947*, Oslo, 1947.

² Հայրենիքի ժայռ, 5.12.1990:

³ Նույն տեղում:

⁴ ՀԱՄ, ֆունդ 396, ցուցակ 9, գործ 294, վավերագիր 11, 59:

⁵ Լեռնածնված Հայաստան, 1989, ք. 4, էջ 22:

այցելել է Երևան: Պատվիրակության կազմում են եղել նորվեգական Կարմիր խաչի նախագահ Բյորն Բրուվանդը, գլխավոր քարտուղար Օդդ Գրաննը, Հայաստանի օգնության ծրագրի ղեկավար Ուլե-Յակար Էքոնրյոտը և ԽՍՀՄ-ում Նորվեգիայի դեսպան Դագֆին Սթենսերը: Նորվեգիան Հայաստանի անկախությունը պաշտոնապես ճանաչել և դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 1992-ի հունվարի 22-30-ին: Ըստ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնյա Էյվին Հուրշլեթենի՝ նախկին խորհրդային երկրներից Ռուսաստանից և Ուկրաինայից հետո Նորվեգիայի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանը¹: 1994-ից Այսրկովկասի հանրապետություններում սկսել են գործել 1946-ին Օսլոյում հիմնված «Նորվեգական փախստականների խորհուրդ» կազմակերպության մասնաճյուղերը, երևանյան գրասենյակը (ղեկավար՝ Թիմ Մթրեյթ) գործունեություն է ծավալում Ադրբեջանից գաղթած հայերի շրջանում: Ի դեպ, Երևանում հաստատված ծագումով ամերիկացի Թիմոթի Մթրեյթը ներկայումս Հայաստանում Նորվեգիայի եւ Ֆինլանդիայի պատվավոր հյուպատոսն է:

Իսլանդիա

Հայաստանը, որպես Խորհրդային Միության անդամ, մաս է կազմել իսլանդա-խորհրդային միջոցառումներին, եղել են որոշ փոխայցելություններ: 1956-ին Հայաստանում եղել է Իսլանդիայի մշակույթի գործիչների պատվիրակությունը, որի նախագահ Հեգլի Գուդմունդսոնն ասել է. «Նախքան Իսլանդիայից մեկնելը եթե մեկն ինձ ասեր, թե Հայաստանը 36 տարվա ընթացքում ձեռք է բերել այսքան մեծ նվաճումներ, ես խիստ թերահավատությամբ կվերաբերվեի դրան, բայց երբ այդ բոլորն իմ աչքով տեսա, ինձ ապշեցրեց շինարարության վիթխարի ծավալը, տնտեսության և կուլտուրայի աննախընթաց վերելքը»²:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Իսլանդիան չի անտեսվել նորաստեղծ պետության տեսադաշտից: Հայաստանի

¹ ՀԱՄ, ֆունդ 396, ցուցակ 9, գործ 294, վավերագիր 12:

² Մոլիտական Հայաստան, 6.01.1957:

խորհրդարանում ստեղծվել է «Հայաստան-Իսլանդիա» միջխորհրդարանական խումբ: Եվրոպական այդ երկիր է այցելել լրագրող Պապ Ասլանյանը և հարցազրույց ունեցել երկրի նախագահ տիկին Վիգդիս Ֆիննբոգադոթիրի հետ¹:

2000-ին «Հայկական ավիատոլիները» չարթերային բռնիք է կատարել Երևանից Ռեյկյավիկ՝ տանելով Հայաստանի ֆուտբոլի հավաքանին Իսլանդիայի թիմի հետ մրցելու:

Ֆինլանդիա

1917-ի հոկտեմբերյան հեղաշրջումից հետո մի շարք հայեր Ռուսաստանից փախել են ռուս-ֆիննական սահմանի մոտ գտնվող Տերիոկի փոքր քաղաքը՝ այնտեղից Արևմտյան Եվրոպա մեկնելու նպատակով: Նրանց օգնություն ցույց տալու համար հարկ է եղել ունենալ հյուպատոս: 1920-ի ապրիլին Հաշտարար կոնֆերանսի մոտ ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը Միքայել Ասատրյանին (Միխայիլ Տեր-Ասատուրով) նշանակել է Հայաստանի ընդհանուր հյուպատոս Հելսինգֆորսում: Պատվավոր հյուպատոս է նշանակվել Մխանկովը²: Ֆինլանդիայից Ասատրյանի բացակայության ժամանակահատվածում նրան փոխարինել է քարտուղար, Տերիոկիում ծնված Վարդան Չմշկյանը: Սակայն ֆիննական իշխանությունները հրաժարվել են ռուսական անձնագրերով հայերին թույլատրել մեկնել եվրոպական երկրներ՝ չճանաչելով փոխհյուպատոսի հաստատած անձնագրերը: Այդպիսով Ֆինլանդիայում հայտնված շատ հայեր (նրանց մեջ և՛ հայագետ Նիկողայոս Ադոնցը) հայտնվել են անելանելի դրության մեջ. նրանք չեն ցանկացել վերադառնալ Ռուսաստան, իսկ Եվրոպա մեկնելն անկարելի է եղել: Իրավիճակը փոխվել է, երբ 1920-ի հոկտեմբերին Ֆինլանդիան ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը՝ ցանկություն հայտնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Այնժամ Հելսինկիում և Տերիոկիում մնացած հայ փախստականները կարողացել են մեկնել Ֆինլանդիայից³:

¹ Հայաստանի հանրապետություն, 23.05.1991:

² Հայաստանի Ազգային Արխիվ, ՊՖՈՆԴ 200, ցուցակ 1, գործ 610:

³ Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, 1996, p. 391-393.

1935 թվականի հուլիսին Խորհրդային Հայաստան կատարած այցելությունից հետո Ֆինլանդիայով ԱՄՆ է վերադարձել Վիլյամ Սարոյանը: Այստեղ նրան բախտ է վիճակվել հանդիպել ֆինն մեծանուն կոմպոզիտոր Յան Սիբելիուսին և այդ այցելությանն անդրադարձել է 1935-ին Հելսինգֆորսում գրած «Ֆինլանդիա» պատմվածքում (ընդգրկվել է «Ներշնչել և արտաշնչել» ժողովածուում), այնուհետև՝ «Յան Սիբելիուսը Յասարվենպայայի իր տանը» ակնարկում (տեղ է գտել «Որդիները գալիս-գնում են, մայրերը մնում են նույն տեղում» ժողովածուում)¹: Նրանից քսան տարի անց, 1955-ին Ֆինլանդիա կատարած այցելության ժամանակ Յան Սիբելիուսին է այցելել Արամ Խաչատրյանը:

1952-ին Հելսինկիում կայացած օլիմպիական խաղերին առաջին անգամ մասնակցություն է ունեցել Խորհրդային Միությունը, որտեղ բրոնզե մեդալի է արժանացել Արտյոմ Տերյանը:

Ժամանակ առ ժամանակ փոխայցելություններ են եղել Խորհրդային Հայաստանի և Ֆինլանդիայի մտավորականների և քաղաքական գործիչների միջև: Առաջին ֆիննական պատվիրակությունը Երևան է ժամանել 1957-ին, Տոյվո Գիլմարի ղեկավարությամբ, որն ասել է, թե մանկուց հետևել է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայությանը բաժին հասած իրադարձություններին²: Երևանում հյուրընկալվել են Ֆինլանդիայի արտգործնախարարության պետքարտուղար Մարտին Տուավիները (1975), ԽՍՀՄ-ում Ֆինլանդիայի դեսպան Աարնո Կահիլոն (1987) և այլք:

Ֆիններն ակտիվորեն են մասնակցել 1988 թվականի Հայաստանի երկրաշարժի վերականգնողական աշխատանքներին. Սպիտակում կառուցվել է ֆիննական պոլիկլինիկա, իսկ երկրաշարժից հետո Ֆինլանդիայի ցուցաբերած օգնությունն ընդհանուր թվով կազմել է երկու միլիոն ամերիկյան դոլար³:

Ֆինլանդիան Գանիայից հետո երկրորդ հյուսիս-եվրոպական պետությունն էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը և դիվա-

¹ Տես այս երկու ստեղծագործությունները մեր բարձմանությամբ՝ *Արտասահմանյան գրականություն*, 2005, ք. 1, էջ 72-81:

² Հայ ազգային կյանք, *Հայաստանի կոչնակ*, 14.12.1957, էջ 1196:

³ ՀԱԱ, ֆոնդ 396, ցուցակ 9, գործ 296, վավերագիր ք. 17:

նագիտական կապեր հաստատեց նրա հետ (1992 թվականի հունվարի 14-15-ին):

2001 թվականի մարտի 13-ին ՀՀ նախագահին իր հավատարմագիրն է հանձնել Հայաստանում Ֆինլանդիայի դեսպան Թիմո Լաեել-մանը (նստավայրը՝ Հելսինկի): Նույն թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը Երևան է այցելել Ֆինլանդիայի Խորհրդարանի փոխնախագահ տիկին Սիրկա Լիսա Անտիլայի գլխավորած պատվիրակությունը:

Այժմ՝ սկանդինավյան երկրներում բնակվող հայության թվաքանակի մասին: 1997-ին հայ մամուլում տեղ էր գտած վկայություն, ըստ որի Գանիայում ապրում է 1500, Նորվեգիայում՝ 2000, Ըվեդիայում՝ 4500 և Ֆինլանդիայում՝ 1700 հայ¹: XXI դարի սկզբին սկանդինավյան երկրներում բնակվող հայերի թվաքանակի մասին տվյալները հակասական են: Ակնհայտորեն չափազանցված է համաճանցային Վիքիփեդիա հանրագիտարանի տվյալները, ըստ որի Ըվեդիայում բնակվում է 8000-12000, Գանիայում՝ 4300 հազար, Նորվեգիայում՝ և Ֆինլանդիայում՝ 1000-2000 հայ²: Ըստ Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարության www.armeniadiaspora.com կայքէջի՝ 2002-ին Սկանդինավյան երկրներում բնակվող հայերի թիվն ունեցել է հետևյալ պատկերը. Գանիա՝ 3000, Նորվեգիա և Ֆինլանդիա՝ 1000, Ըվեդիա՝ 5000³: Առավել համոզիչ է Ռուսաստանի հայերի միության բերած տվյալները, որը տալիս է հետևյալ պատկերը՝ Ըվեդիայում և Գանիայում՝ 3000, Նորվեգիայում և Ֆինլանդիայում՝ 1000-ական հայ⁴:

¹ Տե՛ս Манук Манукян, Армяне живут в 101 стране. А есть ли они в Полнезии? *Анелик*, 1997, н.1, էջ 3:

² Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Armenian_diaspora:

³ Տե՛ս Հովսեփ Խորշոռյան, Սփյուռքահայ գաղթօջախների և համայնքների կապիտալի. ինովացիոն-տեխնոլոգիական եւ մտաւոր ներուժի հաշվառում, քարտեզագրում և դասակարգում, *Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն*, Երևան, 2002, էջ 365:

⁴ <http://www.sarinfo.org/1/index.htm>

Այսպիսով, սկանդինավյան երկրների և Հայաստանի միջև տակավին նորագույն ժամանակներում որոշ զարգացում ունեցած պատմամշակութային աղերսներն այսօր էլ շարունակվում են և անկախություն ձեռք բերած Հայաստանի պայմաններում քակախել են նոր փուլ: Մի կողմից շարունակվում է հայերի արտագաղթը Հյուսիսային Եվրոպայի երկրներ, մյուս կողմից սկանդինավյան երկրների քաղաքական շրջանակները որոշակի հետաքրքրություն են ցուցաբերում Եվրախորհրդի նոր անդամ, վաղնջական մշակույթ կրող Հայաստանի նկատմամբ...

Ինչ վերաբերվում է գաղութի դերի գնահատականի հարցին, ապա սկանդինավահայ համայնքները, հատկապես Ըվեդիայինը, որպես նորակազմ հայազաղութներ, հար և նման են եվրոպական նորակազմ փոքրաքանակ, երկրորդական գաղթավայրերին՝ ազգային կյանքի ժամանակ առ ժամանակ աշխուժացմամբ և հիմնականում պասիվ կեցությամբ, եթե ոչ նահանջով, մտավորական կյանքի պակասությամբ, առանձին անհատների՝ հիմնականում հայկականից կտրված գործունեությամբ, ազգային մշակույթը տեղի ժողովրդին և տեղական մշակույթը հայկականին ներկայացնելու անկազմակերպ, անհատական ջանքերով, վերջին տարիներին՝ հատկապես հայաստանցիների անօրինական ներթափանցումով և այնտեղից այլ երկրներ տեղափոխումով: Այս հիմնականում ոչ դրական երևույթների կողքին նշենք մաև Հայաստանի հետ համագործակցության որոշակի ձգտումը: Սկանդինավյան երկրներում բնակվող հայերի և տարբեր կազմակերպությունների մոտ վերջին տասնամյակում սկսվել է գործնական հետաքրքրություն Հայաստանի հանդեպ, որն արտահայտվում է տարբեր ոլորտներում իրականացվող նախագծերով և ծրագրերով:

Տարեցտարի խորանում են Հայաստանի Հանրապետության կապերը սկանդինավյան պետությունների հետ, հյուսիս-եվրոպական երկրները, որպես քաղաքացիական հասարակության լավագույն մոդել, լավագույնս նպաստում են Հայաստանի հետ փորձի փոխա-

նակման և երկխոսություն հաստատելու գործընթացներին, ինչն իր հերթին մոտ ապագայում կարող է նպաստել Հայաստանի եվրոինտեգրման գործընթացի կայացմանը: 2010 թվականին Հելսինկիում (Ֆինլանդիա) նախատեսվում է բացել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն բոլոր սկանդինավյան պետությունների համար:

Նշված բոլոր իրողությունների համատեքստում այդ երկրներում հայկական համայնքների պատմության, առկա մշակութային հին և նոր առնչությունների և ներկա փուլի ուսումնասիրությունն ակադեմիական աշխատանքի շրջանակներում որպես առանձին թեմա արդիական է և միանգամայն արդարացի:

Հայերեն

Արեղեան Արտաշես, Սկանդինավյան հայազետներ, «Համագային տարեգիրք», Գահիրե, 1936:

Ալիշան Դևոնդ, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895:

Աղանեանց Գիտ, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911:

Աճառյան Հրաչյա, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:

Ամերիկայի քօթան եւ Շուէտ, Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, կազմեց՝ Յ. Խաչմանեան, Պոսթըրն, 1924:

Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979:

Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկիոյ և Ամերիկոյ: Աշխատասիրութեամբ Գերապատիւ Տեառն Տեառն Ստեփաննոսի Գիպլէր Ազոնց Վարդապետի, մասն երկրորդ, հատոր Ա, 1802, Վենետիկ:

Բայբուրդեան Վահան, Համաշխարհային առևտուրը և իրանահայութիւնը 17-րդ դարում, Թեհրան, 1996:

Բաշալեան Լևոն, Նորավէպեր և պատմուածքներ, Փարիզ, 1944:

Բարխուդարյան Վլադիմիր, Պատմագիտության հարցեր, Երևան, 2008:

Գելցեր Հ., Համառոտութիւն բիզանդական կայսրերի պատմութեան, Վաղարշապատ, 1901:

Գրիգորյան Վարդան, Հովհաննես Այվազովսկին Ստոկհոլմում, «Սովետական արվեստ», Երևան, 1964:

Գեմոյան Հայկ, Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2009:

Գիլիփիտ Գեորգ, Արեւելք եւ քրիստոնէական արուեստը, «Բազմավէպ», Վենետիկ, 1927, ք. 2:

Ջարդարեան Պիմէն, 250 տարի առաջ հայ ուսանող մը Բարիզի մէջ, «Տրջանիկ տարեգիրք», Իսթանպուլ, 1950:

Ջարյան Կոստան, Դեպի Արարատ, Երևան, 2001:

Էջեր հայ գաղթավայրերի պատմության, խմբ. Վ. Բարխուդարյան, Ջ. Եկավյան, Երևան, 1996:

Խաչիկեան Շուշանիկ, 1667 թ. հայ-ոսմանական առևտրական պայմանագիրը և Նոր Ջուղայի ինքնավար մարմինները, «Հայկազեան հայագիտական հանդես», հտ. Ը, Պէյրուք, 1980:

Կյուլպենկյան Ռ. Վ., Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1986:

Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, I, Երևան, 1932:

Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:

Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ (1621–1640 թվականներ), հտ. Բ, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978:

Հայերու ազդեցությունը շուեղներու վրայ, «Յառաջ», Փարիզ, 24.02.1966:

Հովհաննիսյան Աշոտ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երևան, 1959:

Դուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ՝ կշոոյ՝ թոյ եւ դրամից բոլոր աշխարհի, 1699, Ամստերդամ:

Ռոպերտ Ճեպեճեան, Ինքնակենսագրություն. յուշեր և գործունեություն, Հալեպ, 1999:

Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Բ, Երևան, 2004:

Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Դ, Երևան, 2008:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973:

Մինասեան Մարտիրոս, Նորայր Բիզանդացու կեանքը, հրատարակությունների և դիւանի ցանկը, «Բազմավեպ», ք. 1-4, 1983:

Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983:

Յովհաննիսյան Պետրոս, Հենրիկոս Բրենները և Մովսէս Խորենացու «Հայոց Պատմության» լատիներեն համառոտագրության

առաջին քարգմանությունը, «Հայկազեան հայագիտական հանդես», հտ. ԺԹ, Պէյրուք, 1999:

Յուզբաշյան Կարեն, Արիստակես Լաստիվերոցու «Պատմության» մի տարընթերցվածքի մասին. վրանգք և ոչ փրանգք, «Բանբեր Մատենադարանի», 1958, ք. IV:

Նահապետեան Հ. Գ., Քրիստոնեական ճարտարապետություն. պատմական հետազոտություններ, «Բազմավեպ», 1933, ք. 6:

Չազմագճեան Հ. Ա., Դանիական թռչնոց բոյնը, «Հայաստանի կոչնակ», 24.08.1940:

Չոլաքեան Յակոբ, Քարեն Եփփե հայ գողգոթային և վերածնունդին հետ, Հալեպ, 2001:

Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերոցոյ, Թիֆլիս, 1912:

Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ. Յարութիւնէ ք. տէր Յովհաննեանց, հտ. Ա, Նոր Ջուղա, 1880:

Ս. Լորեյլի, Սկանտինավեան արձագանգներ, «Նոր գիր», 1950, ամառ, ք. 2:

Սիմեոն դպրի Լեհացոյ Ուղեգրություն, տարեգրություն և յիշատակարանք, ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1936:

Ուղևորություն Փիրգատի Գափանեցոյ, «Բազմավեպ», 1882, ք. 4:

Սուրենյան Կարայիս, Հին պատմություն, Երևան, 1999:

Մ. Վարանդեան, Նամակներ Երուսալից. հայոց հարցը Շվեդիայում, Հորիզոն, 16.07.1916:

Փափազյան Վահրամ, Երկեր 5 հատորով, հատոր 1, Երևան, 1979:

Փափազեան Վահրամ, Մեր, սեր, սեր, Պէյրուք, 1962:

Քոսյան Արամ, Արմենոլոգները Արևմտյան Եվրոպայում, «Իրան-նամէ», Երևան, 1993, ք. 3, էջ 13:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ճիրանածին, Երևան, 1970:

Арешян Г. Е., Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия до н. э., Вестник древней истории, Москва, 1988, н. 4.

Армяно-русские отношения. Сборник документов, т. I, Армяно-русские отношения в XVII веке, ред. В. А. Парсамян, Ереван, 1953.

Армяно-русские отношения. Сборник документов, т. II, Армяно-русские отношения в первой трети XVIII века, под ред. А. Иоаннисяна, Ереван, 1964.

Архепископ Августин (Никитин), Армянская христианская община Петербурга, Нева, Санкт Петербург, 1996, н. 10.

Восканян В., Ново-торговый Устав и договор с Армянской торговой компанией в 1667 г., «Տեղեկագիր ՀՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ», 1947, ք. 6:

Еремян С., Юрий Боголюбский в армянских и грузинских источниках, Научные труды Ереванского государственного университета, т. XXIII, Ереван, 1946.

История Швеции, ред. А. С. Кан и др., Москва, 1974.

Маркарян Самвел, По поводу личности предводителя дружины викингов на Кавказе в XI веке, «Պատմա-րաիւսաիրական հանդես», Երևան, 2000, ք. 1:

Фабрициус Людвиг, Краткая реляция о трех совершенных мною путешествиях, [1679—1682], Восточная литература (<http://www.vostlit.info/Texts/rus5/Fabricius/frametext1.htm>)

Штакельберг Р. Р., Ирано-финские лексикальные отношения, Москва, 1893.

Юзбашян К. М., Варяги и прочия в сочинении Аристакееса Ластивертци, Византийский временник, 1958, ք. XVI.

Արևմտաեվրոպական լեզուներով

Alcock, D. Vid Eufrats stränden. Ett blad ur armeniernas lidandes historia. 1931.

Anderson, T. Svenska missionsförbundet: dess uppkomst och femtiåriga verksamhet: Yttre missionen. Stockholm: Svenska Missionsförbundets Förlag, 1928.

Anholm, Maria. Det dödsdömda folkets saga. Nordiska öretsbiblioteket 8. Stockholm, 1906.

“Armenien anropar de allierade om hjälp mot Ryssland.” Dagens Nyheter, 22.10.1920.

“Armenien måste räddas.” Dagens Nyheter, 22.11.1920.

Arne, Ture J. La Suède et l’Orient: études archéologiques sur les relations de la Suède et de l’Orient pendant l’âge des vikings. Uppsala: K.W. Appelberg, 1914.

Arne T. J., Rus’ erövning av Berda’a år 943. Ibn Miskaweichs berättelse om ett vikingatåg, Fornvännen, 1932.

Arne, Ture J. Svenskarna och Österlandet. Stockholm, 1952.

Avedian Vahagn, The Armenian Genocide 1915: From a Neutral Small State’s Perspective: Sweden, Master Thesis Paper in History, Uppsala, 2008.

Backman, A. Från de armeniska flyktinglägren. Skildring av ett besök i Grekland. Stockholm, 1928.

Berberian, Minas. “Kuvauksia Armeniasta.” Valvoja, 1907.

Berrättare från Armenien. Introduction and translation by Carl Elof Svenning. Lindigö, Internationella bokklubben, 1968.

Beskow, Natanael. Armeniska flyktingar av idag. Stockholm, 1936.

Beskow, Natanael. “Den armeniska kolonisationen i Syrien.” Kristet samhällsliv 11, no. 4-5 (1930).

Beskow, Natanael. “Internationella försoningsförbundets Armenkoloni”, Stockholm, 1924.

Beskow, Natanael. “Internationella försoningsförbundets Armenkoloni i Tel-Samen.” Kristet Samhällsliv 5, no. 10 (1924).

Beskow, Natanael. I Palestina och Syrien. Stockholm: Birkagården, 1926.

Beskow, Natanael. Ett martyrfolk i det tjugonde århundradet. Stockholm: Birkagården, 1921.

Beskow, Natanael. "Rädda Armenien!" Meddelanden från förbundet för Kristet samhällsliv 2, no. 2-3.

Beskow, Natanael. En svensk jordbrukskoloni för armeniska flyktingar. Stockholm: Birkagårdens förlag, 1927.

Beskow, Natanael. "Tel Armen." Kristets samhällsliv 6, no. 9-10 (1925).

Beskow, Natanael. "Verksamheten för Armenien." Kristets samhällsliv 6, no. 4-5 (1925).

Björnlund Mattias, "Scandinavia and the Armenian Genocide." The Armenian Weekly, 26.04.2008.

Björkman Walther, Die Schwedisch-Türkischen Beziehungen bis 1800, Festschrift Georg Jacob, Leipzig, 1932.

"Blodbad i Minoere-Asien." Aftonbladet, 14.11.1894.

The book of the Icelanders (Íslendingabók). Ed. and trans. by H. Hermansson. Ithaca, NY: Cornell University Library 1930; London: H. Milford, Oxford University Press, 1930; repr., New York: Kraus Reprint, 1966.

Cormack Margaret, Irish and Armenian Ecclesiastics in Medieval Iceland, West Over Sea: Studies in Scandinavian Sea-Borne Expansion and Settlement Before 1300, ed. Beverley Ballin Smith, Simon Taylor and Gareth Williams, 2007.

Borevi, Karin and Svanberg Ingvar, eds. Ethnic Life and Minority Cultures. Uppsala multiethnic papers 28. Uppsala: Center for Multiethnic Research, Uppsala University, 1992.

Borevi, Karin and Svanberg Ingvar. Uppsala som invandrarstad. Uppsala: Kommitten för utgivandet av Uppsala stads historia, 1993.

Dachkévitch, Yaroslav R. "Les Arméniens en Island (XI^e siècle)." Revue des Etudes Arméniennes, n. 20 (1986-1987).

De kommer från öst... österländska och ortodoxa kyrkor i Sverige; red. E. Lindberg, Stockholm, 1982.

Desfeuilles Paul, Le mouvement proarménien en Scandinavie, La Voix de l'Arménie, N 2, 15.01.1918.

Djehanjanj, Abraham. "Missionen i Kaukasien." Missionsförbundet 15.12.1908.

Ekegård, Einar. Studier i svensk handelspolitik under den tidigare frihetstiden. Uppsala, 1924.

Ekman, E.J. Illustrerad Missionshistoria: Efter nyaste källor. Stockholm: E.J. Ekmans Förlagsexpedition, 1890.

Ellis Davidson H. R., The Viking Road to Byzantium, London, 1976.

Eneman, Michael. Resa i Orienten 1711-1712, publ. by K. U. Nylander: Förra delen, Mindre Asien och Egypten [Part: Asia Minor and Egypt]. Uppsala: W. Schultz, 1889. 246 pp. Senare delen, Sinai Halfön och Palestina [Part: Sinai Peninsula and Palestina], Uppsala, 1889.

Fjärssyner: Några öfvertryck ur tidskriften Evangelisk kristendom. Säljes till förmon för de nödlidande i Armenien och Indien. [Long-sighted: some reprinting from the periodical "Evangelistic Christianity" for needy people of Armenia and India] Ekenäs, 1897.

Fridtjof Nansen Brev, publ. by Nansen Foundation by Steinar Kjørheim, 4, 1919-1925, Trondhjem, 1966.

Fries, K. Bland spillorna av ett folk. Ansgarius, 1926.

Garswell John, New Julfa: the Armenian Churches and Other Buildings, Oxford, 1968.

Godet, G. Forfølgelseme i Armenien. Ed. by Carl Joh. Tolstrup. Copenhagen, 1897.

Gram, Axel. Blandt armeniske Flygtninge i Grækenland: Med Erindringer af tidligere Armeniermissionær Margrethe Jepsen. Herning, 1953.

Dett Grønlandske chronica. Copenhagen, 1608.

Gunner, Göran. "Armenier": in Det mångkulturella Sverige: en handbok om etniska grupper och minoriteter, ed. I. Svanberg and H. Runblom, Stockholm, 1988.

Godet G., Forfølgelseme i Armenien. Ed. Carl Joh. Tolstrup. Köbenhavn, 1897.

Godlunds; Centrum för multietnisk forskning vid Uppsala universitet, 1988.

G:son Uggla Gustaf, Olympiska spelen i Stockholm, Stockholm, 1912.

Gunner, Göran and Eric Lindberg, eds. Längtan till Ararat: en bok om Armenien och Armenisk identitet. Religionshistoriska studier 1. Gothenburg: Förlagshuset Gothia, 1985.

Hammar, Tomas. Sverige åt svenskarna: invandringspolitik, utlämningskontroll och asylrätt 1900-1932. Stockholm, 1964.

Hasselquist, Fredrick. Iter Palaestinum eller resa til helige landet, förrättad ifrån år 1749 til 1752, med beskrifningar, rön, anmärkningar, öfver de märkvärdigaste naturalier. Ed. by C. Linnæus. Stockholm: Trykt på L. Salvii kåastnad, 1757; repr. Stockholm, 1969.

[Hawkins, G.] De armeniska fasorna. Ögonvittnens ovederläggliga berättelser. Stockholm, 1917.

Hedin, Sven A. Bagdad, Babylon, Ninve. Leipzig: F.A. Brockhaus, 1918.

Hedin, Sven A. Genom Persien, Mesopotamien och Kaukasien Reseminnen. Stockholm: Albert Bonniers Förlag, 1887.

Heikel Ivar A., Helsingfors universitet 1640-1940, Helsingfors, 1940.

Hodjkin, Henry, Dryer Oliver, Beskow Natanael. Skrivelse i armeniska frågan till Nationernas förbund... Kristet samhällsliv, Årg. 2, 1921, N:r 8-9.

Richard G. Hovannisian, The Republic of Armenia, vol. III, 1996.

Hultvall John, Mission och vision i Orienten, Stockholm, 1991.

Hur det gick till armeniernas deportation. Skrifter 3. Trans. from the German. Stockholm, 1921.

Högberg, L.E. Bland Persiens muhammedaner: minnen och hågkomster från Svenska missionsförbundets arbete i Persien. Stockholm, 1920.

Högberg, L.E. Skuggor och dagar från missionsarbetet i Ryssland. Stockholm, 1914.

Ihrmark, Axel and Karlgren Anton. Bilder ur missionshistorien: jämte missionshistoriska öfversikter på uppdrag af studentmissionsföreningen i Uppsala. Lund, 1907.

Jakobsen Maria, Diaries of a Danish Missionary, Harpoot, 1907-1919. Translated by Kirsten Vind, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2001.

Jeppe, Karen. Den armeniska Kolonisationen i Euftrat-trakten. Stockholm, 1930.

Jeppe, Karen. Erlöst von Mohammedanismus. Potsdam, 1926.

Jeppe, Karen. Neu-Armenier in Abrahamsland. Potsdam, 1930.

Johansson, Alma. Armenisk flyktingsliv. Stockholm, 1931.

Johansson, Alma. Ett folk i landsflykt. Ett år ur Armeniernas historia. Stockholm, 1930.

K.M.A. s Komite for Armenien. Meddelelser fra Armenien. [Copenhagen,] 1901.

Lang David Marshall, Armenia, cradle of civilization, London, 1970.

Lange, Amalia. Ett blad ur Armeniens historia. Stockholm, 1920.

Larsen, H. Fra blodets og tåremes land. En reyseberetning fra Armenien. Copenhagen, 1900.

Larsen, H.L. Blodets og Taarenes Land i Europa: En Orientreise. Aarhus: Industrimissionen i Armenien [1922].

Larson, Mats G. Väringar: nordbor hos Kejsaren i Miklagård. Stockholm: Atlantis, 1991.

Larsson, A.P. Tjugofem år i Ryssland: Missionär N.F. Höjers erfarenheter och äfventyr under sin verksamhet bland ryssar, tatarer, armenier, kurder, perser, turkar, kineser m. fl. österns folk. Stockholm, 1906.

Larsson, Erik John. Vid Ararats fot. Skildringar från Svenska missionsförbundets 35-åriga verksamhet i Kaukasien. Stockholm: Svenska missionsförbundets förlag, 1919.

Larsson, E. John. Förföljeserna och blodbadet i Armenien särskildt från år 1894 till år 1897. Helsingborg, 1897.

Lárusson, Mágnus Már. "On the so-called "Armenian" bishops." In Nokkrar athuganir á rithætti Þjóðsagnahandrita í safni Jóns Árnasonar. Studia Islandica 18. Reykjavik: Leiftur, 1960.

Lehmann, E. Ruiner. Skildringer of armeniske forhold of tilstande. Copenhagen, 1906.

Leitzinger Antero, Armenians are not just a distant people for Finland, <http://www.migri.fi/netcomm/content.asp?article=3618>

Leitzinger Antero, "Who was Anushavan Zatikyan?" Ararat, autumn, 1996.

Leitzinger Antero, Lessons from integration of aliens in Finland 1917–1944, The Eurasian Politician, 2, October 2000.

Lindhagen, Carl. "Sverige och Armeniens öde." Dagens nyheter, 24.03.1917.

Lorelli, S. "Armenisk kultur och svensk forskning." Svenska dagbladet, 23.01.1951.

Löwenhielm, Carl Gustaf. Minnen. Vol. 2. Trans. by Natalie Rosensvärd. Stockholm, 1927.

Lundwall, Sam J. Frukost bland ruinerna. Bromma, 1988.

Lundwall, Sam J. Vasja Ambartsurian, en promenad i labirinten. Bromma, 1990.

Macler, Frederick. "Arménie et Islande (Missionnaires arméniens)." Revue de l'histoire des religions 87 (1923).

Marcher, Hansine. Oplevelser derovrefra. Copenhagen, n.d.

Meyer Benedictsen, Åge. Armenien. Et Folks Liv og Kamp gennem to Aartusinder. Köbenhavn, 1925.

Meyer Benedictsen, Åge. Armenien: en folkeskæbne. Köbenhavn, 1927.

Nalbandian, Inga. In i natten: Bilder från Armeniens undergång. Stockholm, 1917.

Nansen, Fridtjof. Armenia and the Near East. London, 1928. 324 pp.

N. de Byzance, Norayr. "Blodblad i Minoere-Asien." Aftonbladet, 14.11.1894.

N. de Byzance, Norayr. "Om de nyaste blodbaden i Armenien." Aftonbladet, 21.11.1894.

N. de Byzance, Norayr. "Slutet av en nation" Aftonbladet, 19.12.1894.

Nelsson, Ronald. Vidare med Erikshjälpen. Stockholm, 1995.

Nylander K. U., Orientalistkongressen i Stockholm-Kristiana: några skildringar från utlandet, Upsala, 1890.

Ørtz, Jensine. Armeniske martyrer. Copenhagen, n.d.

Pedersen, Karen Marie. Digin Virginie: en armenisk kvinns lidanden. Stockholm, 1920.

Pehrsson, Per. Armenierna och deras nöd. Uppsala, 1896.

Pravitz Hj., Från Persien – i stiltje och storm, Stockholm, 1918.

Sarwe, Wilhelm. Bland Rysslands folk: i missionens och Röda Korsets tjänst 1882-1922. 3 vols. Stockholm, 1927-1929.

Semi-Gotha Från Ghetton till Riddarhuset En studie i förjudningen av det ledande, svenska överskiktet med förord av Elof Eriksson, Stockholm, 1939.

Sohrabi Bahram, "Early Swedish Travellers to Persia," Iranian Studies, vol. 38, no. 4, December 2005.

Stiernstedt, Marika. Armeniernas fruktansvärda läge. Stockholm, 1917.

Strandman Barbro, Över-Järva: en gammal solnagårds historia, Solna, 1969.

Sturve, Britt, Sunnerstam Reidar, Sönergren Ebon. Armenierna som etnisk och religiös minoritet i Sverige. Uppsala, 1980.

Svanberg, Ingvar. Invandrare från Turkiet: etnisk och sociokulturell variation. Uppsala, 1985.

"Sverige önskar ej mandat över Armenien." Dagens Nyheter, 23.04.1920.

Święcicka Elżbieta, "Zachariasz Gamocki. A Polish Nobelman in Swedish Service." Allvarlig debatt och rolig lek. En festskrift tillägnad Andrzej Nils Ugglå, Uppsala Univesitet, 2000

Tornberg, Carolus Johannes. Numi cufici regii numophilacii holmiensis. Uppsala, 1848.

"Ett världslån för Armeniens upprättande. Mandat till Sverige." Dagens Nyheter, 15.04.1920.

Vind, Elsa. Armeniske børn: Fra Harpoot til Libanon. Copenhagen, 1949

Werner, N. "Blodbaden i Armenien och de svenska missionsvänerna." Missionsförbundet, 15.02.1898.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Արաջյան Պետրոս - 201
Արքա - 34
Արղայան Ռուբեն - 207
Արղուլ Համիդ - 122, 135, 151
Արղուլ Մեջիդ 122
Արել (Տատըրոզյան) Հրանտ - 208
Արելյան Ալեքսանդր - 104, 133, 143
Արեղյան Արտաշես 10, 82, 85
Արնուս Լեոնիկ - 122
Արոյան Կարինե - 146
Արովյան Խաչատուր 110, 113, 214
Արրահամյան Արա - 141
Արրահամյան Մեղեա 212
Արու ալ-Քասիմ - 66
Արու-լ-Ֆիդա - 21
Ազաթանգեղոս - 33, 108
Ազոնց - 31, 138
Ազոպով Վլադիմիր - 227
Ազրել Միգուրդ - 191
Ազիզյան Խաժակ - 226
Ազիզյան Սերգեյ - 216
Աթրքերգեր Կ. Մ. - 231
Ալգրեն - 168
Ալեքսանյան Ա. - 231
Ալեքսանյան Նելսոն - 146
Ալեքսեյ Միխայլովիչ - 37
Ալի Նուրի Բեյ - 151
Ալիշան Դեռնդ - 11, 12, 32, 112, 139
Ալլահվերդով Ռուբեն - 224
Ալխազյան Հովհաննես - 144
Ալպոյանյան Արշակ - 32
Ալիմյան Ներսես - 17, 18
Ահարոնյան Ավետիս - 142, 242
Ահարոնյան Արթուր - 201
Ահարոնյան Ռուբեն - 232
Ահոյ Յուհաննի - 144
Աճառյան Հրաչյա - 4, 13, 14

Աճեմեան Ժիրայր - 190
Աճեմյան Հակոբ - 163
Ամիրդովլար Ամասիացի - 92
Ամիրխանյանց Արախամ - 75, 76, 104, 122, 141, 223, 353
Ամիրխանյանց Նաթան - 141
Ամիրով Բոգդան (Ամիրյան Աստվածատուր) - 46
Ամիրով Պյոտր (Ամիրյան Պետրոս) - 46
Այվազյան Աղասի - 135
Այվազյան Արա - 235
Այվազովսկի Հովհաննես - 104, 123, 124
Անանիա Շիրակացի - 16, 20
Անանյան Ժ. - 32
Անանյան Վախթանգ - 145
Անգել - 171, 172
Անդերսեն Հանս Քրիստիան - 126, 129, 184
Անդերսեն Մարտին Ներսես - 130
Անդերսոն Ն. - 15
Անդրե Հեդվիգ - 167
Անդրե Կասպար - 48
Անդրոնիկոս Կոմնենոս - 24
Անիով Մարիա - 79, 150
Անմեղյան Պիեռ - 150
Աննա - 20
Անտիլա Միրկա Լիսա - 244
Անուշյան Մելիք (Անուշով Մելիք-նա) - 44
Անրարսվերդ Քոռավա - 168
Ապրեսով Սամսոն - 80
Առաքելյան Հակոբ - 143
Առաքելյան Սամսոն - 198
Առաքելյան Սեդրակ - 125
Ասատրյան Արմեն - 204, 205
Ասատրյան Միրայել (Տեր-Ասատուրով Միխայիլ) - 242
Ասլանյան Պապ - 242

Ասմուսան Իես Փեթեր - 89
Ավանիսով (Իվանով) Սինանկա (Հովհաննիսյան Սինան) - 47
Ավանիսով Լաչինկան (Խաչիկ) 47
Ավգուստին (Նիկիտին) - 38
Ավդալյան Սիմեոն - 46
Ավեդիկով (Ավետիքյան) Աղաջան - 47
Ավետարանյան Հովհաննես - 76, 77
Ավետիսյան Արամայիս - 226
Ավետիսով Վյաչեսլավ - 204
Ավետյան Վահագն - 148
Ատամանով Լև - 131
Արաբանես - 30
Արազյան Արուս - 67
Արամյան Հայկ - 196
Արաստակետով Գրիշկա - (Արիստակետյան Գրիգոր) 48
Արզումանյան Լյուսյա - 225
Արեշյան Գրիգոր - 11
Արզումանյան Ռոբերտ - 216
Արթին Մուրադ - 185, 186, 204
Արիստակես Լաստիվերոցի - 22
Արղության Հովսեփ - 96
Արնաստն Էյնար - 221
Արնե Թուրե - 4, 25, 33, 134
Ափիան Փոփ Արթուր - 26
Արթիք Շերեֆ - 207
Աֆ Սիլեն Արրահամ Վիլհելմ - 33, 55
Աֆ Վիրսեն Էյնար - 168
Աֆ Ուզլաս Մարգարետա - 234

Բաբախանյան Արմեն - 141
Բաբայան-Լալուա Շուշանիկ - 213
Բաբաջանյան Անոն - 146, 233
Բաբաջանյան Կարինե - 227
Բաբուժանով Ստեֆկա (Ստեփան Բաբուջանյան-Բաբաջանյան) 48
Բադիկյան Անի - 208
Բադիկյան Ջեմյուռ - 208
Բալիցկա-Վիտակովսկա Էվա - 88, 92

Բախչինյան Աշխեն - 118, 206
Բախտիկյան Ներսես Եպիսկոպոս - 163
Բաղդասարյան Սմբատ - 77
Բայանդուր Անահիտ - 234
Բայար դը Վուրիկուր Ամելի - 59
Բայրուրյան Վահան - 32, 37, 52
Բանտիշ-Կամենսկի Նիկոլայ - 49
Բաշայան Լևոն - 3, 107, 143
Բառեր Կամիլ - 188
Բասկակով Սաֆար - 48
Բարխուդարյան Վլադիմիր - 5
Բարսեղյան Աննա - 214
Բարր Քայ - 82
Բարման Ա. - 183
Բեգուին - 192
Բեդելյան Հովակիմ - 228
Բելլուովա Թինա - 232
Բելլերյան Արթուր - 157
Բենգթուն Բու - 230
Բենգթուն Օրսենսիերնա Բենգթ - 97
Բենգելիուս Էրիք - 83
Բենրով Յուզեֆ - 240
Բեսով Նաթանայել - 129, 178, 180, 181, 182, 183
Բերբերյան Արսեն Եպիսկոպոս - 199
Բերբերյան Մինաս - 142
Բերգսթյուն Յալմար - 115
Բերգսոն Տոուրի - 135
Բերգելիուս Յոնս Յակոբ - 63, 64
Բերովիլ - 230
Բիդսթրոմի Հերլուֆ - 131
Բիրգերսոն Աննա-Քարեն - 234
Բլեք - 156
Բլումսթեդ Հերբեր - 231
Բյերլեսթամ Լարս Ի. - 233
Բյորշեր-Հանսեն Թրիլե - 237
Բյորնյունդ Մարիաս - 90, 147
Բյորնսոն Բյորնսթյերնե - 133, 134, 150, 151
Բյորքլունդ Ուլֆ - 88

Բյուզանդացի Նորայր - 70-72, 84, 86, 109, 123, 148, 149, 188, 229
Բողոքանով (Աստվածատրյան-Բողոքանյան) Գրիգոր - 47
Բողոքանով Նիկիտա (Միկիտկա) (Աստվածատրյան-Բողոքանյան Սկրախ) - 47
Բողոքանով Պաշկա - 47
Բողոքանով Պետրուշկա - 47
Բոհջալյան Քրիս - 213
Բոնգո Օմար - 203
Բորգսբրյուն Ֆերդինանդ Լյուդովիկ - 84
Բորոյան Ռաֆիկ - 200
Բրանդես Գեորգ - 130, 133, 134, 151, 153, 154
Բրանքինգ Յալմար - 148, 170, 173-177
Բրեմեր Ֆրեդրիքս - 102
Բրեններ Հենրիկ - 82-84, 108
Բրուլանդ Բյորն - 241
Բուզգե Սոֆոս - 17, 82, 89
Բուդալյան Աննա - 144
Բուդոյ Իսա տե՛ս Քոսայան Վրեժ Բունին Իվան - 191
Բուռնազյան Աննա - 123
Բուրիյոյ Բիրգիթ Մարգարետա 234

Գարայան Ժոզեֆ - 215
Գազարինա-Մութաֆյան Հելենա - 214
Գալենտերյան Արտավազդ վարդապետ - 162
Գալլո Գ. - 93
Գալստյան Հասմիկ - 198
Գալստյան Հովհաննես - 219
Գամոցկի Ջակարիաշ - 56, 57
Գասպարյան Արա - 212
Գասպարյան Գոհար - 229
Գարեգին Ա - 164
Գարթոն Փեր - 186
Գեղիգ Շապուհ - 197, 199
Գեյ-Լյուսակ - 64

Գիլմար Տոյվո - 243
Գյանջյան - 80
Գյեբլանդ Քարին - 213
Գյեֆսեն Դահլ Մադս - 91
Գողել Վահե - 214
Գոլանճյան Սարգիս - 214
Գրամ Արսել - 167
Գրանն Օդդ - 241
Գրիգ Գերդա - 137
Գրիգոր Բակուրյան - 24
Գրիգոր Տաբակաչի - 92
Գրիգոր Տոա - 16, 94
Գրիգորյան Ենոք - 224
Գրիգորյան Լիլիթ - 212
Գրիգորյան Կամսար - 126
Գրիգորյան Մեսրոպ - 215
Գրիգորյան Վարագդատ - 220, 221
Գրիգորյան Վարդան - 123
Գրիգորե Ազազարկո (Գրիգորյան Աղազար) - 48
Գրիգորե (Գրիգորյան) Արուտինկո (Հարություն) - 48
Գրիգորե (Գրիգորյան) Բաղդասար - 48
Գրիգորե Գրիշկա - 48
Գրիգորե (Գրիգորյան) Կալուցկա - 48
Գրիգորե Մանացականկո (Գրիգորյան Մանացական) - 48
Գրիգորե Մանասկան (Գրիգորյան Մանաս) - 48
Գրիկորով - 103
Գրյունհագեն Ջիգրիդ - 156
Գրյունհագեն Վիլհելմին - 156, 164
Գունարսոն Գունար - 86
Գոստավ V - 170
Գուրունյան Հակոբ - 139
Գևորգյան-Հելման Կարինե - 208
Գևորգյան Ռայմոն - 186
Գևորգյան Գրիգոր - 77

Դալեն Օլե - 230
ԴԱլեսասանդրի Վինչենցո - 34

Դալսգոր Մարիուս - 130
ԴԱնաստագի Ջովաննի - 65-67
Դաշկևիչ Յարոսլավ - 9, 28
Դավթյան - 214
Դավիդյան Գերդա - 215
Դավիդյան Ջավեն - 215
Դավթյան Հեղինե - 135
Դավիդյան Հենրիկ - 216
Դավիդով Յակով (Դավթյան Հակոբ) - 47
Դավիդով (Դավթյան) Բանամենտուրա - 48
Դավիդով Գրիգորի (Դավթյան Գրիգոր) - 47
Դավիդով Յակով - 47
Դավիդով Տավելկա (Թավաքալ) - 47
Դավիդով Բադուս - 47
Դավիդով Նազարկա (Նազար) - 47
Դավիթ Բ Շինարար - 22
Դարջյան (Բարսամյան) Աննա - 161
Դատն Օրե - 185, 186, 206
Դեղարարյան Լևոն - 198
Դեմիրճյան Դեբենիկ - 109
Դեմիրճյան Ստեփան - 67
Դեմիրճյան Օհան - 9, 67-70, 212
Դեմիտով Էդիսոն - 227
Դը Ջադլի (Ջադլու, Մանիս) Ֆիլիպ - 49-51, 49
Դը Վիլֆրուս Գիյոն - 100
Դը Վո - 169
Դիլոն Էմիլ - 90
Դինգիզյան Գրեգ - 203, 204
Դինգիզյան-Ռշտունի Էսաբել - 204
Դյու Ման Ռաֆայել - 35
Դյուբյուկտ Ժորժ (Գեորգ) - 25
Դյուլորին Էդուարդ - 94
Դոլովսանյան Գորդոն Մաքսիմիլիան - 225
Դրայեր Օլիվեր - 180
Դուրյան Եղիշե - 144

ԴՕսոն Արրահան Իգնատիուս - 61-63

Եղիզարյան Արշ. - 133
Եզյան Կարապետ - 104
Եզնիկ Կողբացի - 85
Ենգիբարով - 225
Ենիկոնճյան - 215
Ենսեն Ենի - 161, 165
Երանոսյան Ծովինար - 209
Երեմյան Ս. - 116
Երեմյան Սուրեն - 22
Երզնկյան Յուրի - 138
Երզնկյան Ռուբեն - 138
Երզնկյան Սուրեն (Ս. Լորեյի) - 72, 110, 112, 116, 117, 119, 190, 192-194
Երսիդ Պ. Ս. - 118
Եփան Հանա Լունգվյու - 130, 184
Եփան Մարգարեթ - 167
Եփրեմյան Ավագ - 117
Եփան Քարեն - 82, 154, 158-162, 165, 170, 183

Ջարունյան Գևորգ - 207
Ջալե Լենա - 234
Ջահրատ - 117
Ջատիկյան Անուշավան - 224
Ջարգարյան Սերժիկ - 204
Ջարդարյան (Անթուան) Ժերմեն - 194
Ջարդարյան Պետրոս - 157, 195, 197, 198
Ջարդարյան Ռաֆայել - 115, 117
Ջարդարյան Ռուբեն - 73, 136
Ջարյան Կոստան - 3, 130-33, 205, 215, 217
Ջարյան Նաիրի - 231
Ջարյան Պյոտր - 205
Ջարյան Վահե - 215, 217
Ջաքարյան Ելենա - 214
Ջաքարյան Լիլիթ - 214
Ջաքինյան Արմինե - 197
Ջենյան Գեյվիդ - 6

Ջետերստենն Կարլ - 84, 92
Ջիզմունդ (Սիզիզմունդ) - 95, 96
Ջոջանյան Անուշավան վարդապետ - 199
Ջոհրապ Գրիգոր - 110
Ջորյան Ստեփան - 110
Ջորյան Ստեփան (Ռոստոմ) - 176
Ջվարթ Հարալդ - 211
Ջուհրապ Պոլ - 101
Ջևակին - 45

Էգգե Քլաուս - 138
Էդգարյան Քերոլ - 213
Էդգրեն-Լեֆլիեր Աննա-Շառլոտա - 113
Էդիուդ Էդուարդ - 67
Էդոյան Հենրիկ - 235
Էդվալ Գուստավ - 172
Էդուարդս Արթուր - 33
Էերո Ալաի - 142
Էլգեր Ալբերտ - 236
Էլիաստն Գիրդլի - 140
Էլինգեր Նիլս տես Նալբանդյան Ինգա
Էլենամ-Ենսեն Ուֆֆե - 237
Էմեն (Էմեն-Կառլսոն) Թելմա - 203, 207, 209
Էմեն Մեդի - 209
Էնգելս Ֆրիդրիխ - 130
Էնդինյան Սերգեյ - 210
Էմենան Միրայել Օլոֆսոն - 53, 98, 100
Էմֆիանյան Հ. - 81
Էսաբալ Պոլ (Էսաբայան Պողոս) - 86
Էսեֆյան Բարսեղ - 213
Էսեֆյան Թուրա - 213
Էդդան - 63
Էրիքսոն Թոր Էրիք - 142
Էրիքսեն Քյել - 219
Էրլանդեր Թագե - 229
Էրեգորդ Էյնար - 33
Էրեկունդ Բու - 230
Էրորնրյուդ Ուլե-Յակար - 241

Ընսեթ Սիգրիդ - 135

Թադևոսյան - 170
Թալեսա - 171
Թառայան Պատվական - 76, 77
Թեյսեն Սյորեն - 90
Թերզի Փեմբե 67
Թերզի Օհան - 67
Թերզիբաշյան Աբրահամ - 225
Թերլենեյան Փանոս - 130, 144
Թընգրդ Բաֆֆի - 236
Թընգրդ-օղլու Ազուր 101
Թիգիանյան Հ. - 133
Թինգսգորդ Թունե - 234
Թիսել Մամուել - 180
Թիքքանեն Յուհան Յակոբ - 143
Թյունելդ Էրբե - 169
Թոմայեանց Արշակ - 188
Թոմասյանց Երազ - 213
Թոմսոն Փոուլ - 236
Թոռնիկ - 24
Թորանյան Թորոս - 130
Թորբյորնսեն Քայ - 184
Թորգիլսոն Արի - 27
Թորգոմ - 213
Թորիսդորթի Ինգիբյորգ - 91, 140
Թորնվալ Դագնի - 180
Թովայան Բյուզանդ - 131
Թովչյան Ստեփան - 47
Թրաինսոն Հերման Թոր - 91
Թրանսբրյոմեր Թումաս - 118
Թումանյան Հովհաննես - 71, 109-111, 215, 219
Թումանյան Թորոս - 219
Թումանյան Մորթենսեն Քաբրին - 219
Թումանյանց Եսայի - 76
Թումայանց - 47
Թուրբյորնսոն Թուրե - 86
Թուրմբերգ Կարլ Յուհան - 22

Ժամագործյան Բաֆֆի Մանուկ - 220
Ժոզիք Ֆ. - 216

Իբն ալ-Աբիր - 21
Իբն Միսբավեյիս - 21
Իբսեն Հենրիկ - 68, 131-134, 136
Իդեսթամ Գունար - 233
Ինգեման - 112
Ինճիճյան Դուկաս - 61
Իսահակյան Ավետիք - 75, 104, 109, 110, 116, 130, 139, 145
Իսահակյան Վիգեն 104, 124
Իսբերգ Հագրարդ - 180
Իսլեիֆ - 27
Իսկանդարյան Ֆրեդ - 219
Իսմայիլ փաշա - 68
Իսրայել Օրի - 96
Իվանիսով Դավիդ (Հովհաննիսյան Դավիթ) - 47
Իվանով Բոգդաշկա (Հովհաննիսյան Աստվածատուր) - 48
Իվանով Դավիդկա (Հովհաննիսյան Դավիթ) - 48
Իվանովա Լիլի - 220
Իուլանեն Հելենա - 146

Լագերլոֆ Մելմա - 114-116
Լագերկվիստ Պեր - 114, 116-118
Լագո Անդերս - 234
Լահելման Թիմո - 244
Լալուս Ժան Լեոնար 213
Լամպինյեն Ռայնե - 145
Լանգե Ամալյա 158
Լանգե Թոր - 125, 126
Լարսեն Հ. - 150
Լարսոն Էրիք Յոն 78, 87, 152
Լարսոն Լ. Յ. - 231
Լարուստն Մագնուս Մար - 17, 28
Լարսենս Հալդոր Կիլյան - 139, 140, 221
Լեկույն - 26
Լեման Հեննից Յ. - 90
Լեյցինգեր Անտերո - 91, 224
Լենին - 175, 192, 193
Լենկթեմուր - 63
Լեո - 145

Լեուպարդ Կ. - 113, 114
Լեսեպս Ֆերդինանդ - 67
Լեսֆսիուս Յոհաննես - 158, 160
Լեսսել Լորան - 203
Լիանդով Ստեփան - 189
Լիդեն Էվալդ - 82, 85, 169
Լիդրվիսթ Հերման - 121
Լիթթե Էմիլ - 70
Լիլլեֆորս Մաքս - 208
Լինդբերգ Էրիք - 4, 172, 179
Լինդգրեն Աստրիդ - 114
Լինդման Արվիդ - 175
Լինդրվիսթ Օսթար - 234
Լիպարիտ Բազվաշի - - 23
Լիպոյեն - 50
Լիսթանդեր Կլաուս Քրիստոֆերսեն - 28, 29
Լյով Նիլս - 185
Լյունդման Բ. - 10
Լյունդսթրյոմ Յորան - 230
Լյունդսթրյոմ Սթիգ - 201, 208
Լոոգե Յոհաննես Էմիլիեն - 214
Լովենհիլմ Կարլ Գուստավ - 101
Լուկասով (Դուկասյան) Միրզաբեյ - 49
Լունդալ Յո. Է. - 77
Լունդվալ Մեն Ջ. - 119
Լուսիկյան (Լուսիկենց, Լուսիկով) Գրիգոր - 36
Լոն Նայիրցի - 144
Լոնյան Գարեգին - 104, 143
Լոնյան Սարգիս - 76
Լոռնցո - 61

Խանդամիրով Միխայիլ - 190, 191
Խաչատրյան - 80
Խաչատրյան Ամալյա - 206
Խաչատրյան Արամ - 201, 227, 228, 231, 243
Խաչատրյան Էդիք - 203
Խաչատրյան Կարինե - 146
Խաչատրյան Հայկ - 213
Խաչատուրյան Սարգիս - 125, 228
Խաչատուրյան Սթինա - 145, 213

Խաչատուրյանց - 140
 Խաչերյան Լևոն - 18
 Խաչերյան Բարսեղ ավագ քահա-
 նա - 199
 Խաչիկյան Շուշանիկ - 32
 Խառատյան Ռուդոլֆ - 141
 Խատիսյան Ալեքսանդր - 183
 Խարտալյան Սյուզան - 210
 Խմելնիցկի Բոգդան - 56
 Խորեն Ա - 164
 Խուլելի Աբրահամ - 59
 Խուլելի (Կուլելի) Եվա - 59
 Խունունց Գուրգեն - 190, 192
 Խունունց Հովհաննես - 192

 Ծառուկի Վազգեն - 209
 Ծատուրյան - Ալեքսանդր - 144
 Ծովիանյան - 80

 Կահիլո Աարնո - 243
 Կամո - 193, 212
 Կայինե Կլարա - 144
 Կապուտիկյան Սիլվա 164
 Կառլ XI - 40, 43, 49
 Կառլ X - 56
 Կառլ XII - 57, 83
 Կառլ XV - 68-70
 Կառլաքսեն Օլաֆ - 139
 Կառլովա Լանա - 235
 Կառլսոն Էվերտ - 230
 Կառլսոն Հարի - 229
 Կառլսոն Մայկոր Էլիզաբեթ - 234
 Կառլսոն Մարիա - 88
 Կառլսոն Քլաս Յորան - 88, 186
 Կառլտունեն Լյուսի - 169
 Կառվարենց Գևորգ - 114
 Կասեր Ղազարյան Անի - 208
 Կասպարի Սիրեյ - 218
 Կարախանյան Արամ - 205
 Կարապետյան Ավետիք - 210
 Կարմիրշալյան Վլադիմիր - 235
 Կեպպեն Օ. - 15
 Կինրկեզոր Սյորեն - 130
 Կյարսզոր Դանի - 129

Կյուլպենկյան Ռոբերտո - 32, 50
 Կյուրեղյան Հասմիկ - 128
 Կոմիտաս - 137, 138
 Կոնկև Յուհաննի - 145
 Կոնտի (Գարագոչյան) Անիտա -
 140
 Կոստանդին Ծիրանաձին - 23
 Կոստանդյան Հարութ - 211
 Կորգանով - 181
 Կրասինսկա Մարիա - 69
 Կրժեհլա Բոհուվիր - 207
 Կրժեհլա Նարեկ - 207
 Կրուկֆորշ Յալմար - 145
 Կուկանովա Ն. Գ. - 32
 Կուտալուս (Գուստավ) - 112

 Հաաբոն - 30
 Հաբիբ բեյ տե'ս Դեմիրճյան Օհան
 Հագեզորդ Էբլանդ - 233
 Հագեթր Սվետլանա - 146
 Հաղեմիուս Սթիգ - 235
 Հալբեկ Քրիսթինա - 206
 Հալբերգ - 57
 Հալս Հարայդ - 239
 Հակոբյան Ժանետ - 180
 Հակոբյան Կարո - 118, 185, 201-
 203
 Հակոբյան Յակով - 211
 Հակոբյան Նարինե - 122
 Հակոբյան Պիոն - 113
 Համբարձումյան Արամ - 198
 Համբարձումյան Սարգիս - 74
 Համմար Ֆրեդրա - 155
 Համմեր Քրիսթա 155, 156, 157
 Համսուն Քնյուս - 134-136, 138
 Հանդամիրով Իրինա - 190
 Հանսեն Անդրեաս - 184
 Հանսեն Թուրքեն - 90
 Հանսեն Քարեն - 184
 Հասելյուիսթ Ֆրեդերիք - 100
 Հարդման - 138
 Հարբլինգ Փոուլ - 236
 Հարբենդ Վիլհելմ - 181

Հարությունյան Նունե - 198
 Հարությունով Տիգրան - 224
 Հարությունով Կոնստանտին - 226
 Հատորթ - 63
 Հեբբե Ուլրիքա - 233
 Հերե Սփաուր - 161
 Հեգ Ինգա Բրիթա - 57
 Հեգենսբիերն - 131
 Հեգման Քրիսթինա - 233
 Հեդին Սվեն - 102, 103, 176
 Հերում Ա - 63
 Հեիկկիլա Յասկկո - 226
 Հեիմինեն Պասվո - 227
 Հելսթադիուս Քյուրթյան Արամ -
 185, 212
 Հելսթադիուս Բարբարա - 212
 Հեպեր Ուլե - 111
 Հիլին Միքայել Ռյուրթայ 211
 Հիտլեր - 135
 Հիրն Յ. - 169
 Հյոգբերգ Լարս Էրիք - 177
 Հյոգլյունդ Լենա - 90
 Հյուլբգորդ Անդերս - 87, 186
 Հյուսեն Ռոբերտ - 16
 Հոգբերգ Լարս Էրիք - 74, 75
 Հոյեր Նիլս Ֆրեդրիք - 74, 76, 151
 Հոյերգ - 112
 Հոլմբլիսթ Յալմար - 180
 Հոլմբլիսթ Փեյո - 210
 Հոջբին Հենրի - 180
 Հովհաննես Անկյուրացի -
 (Ջուաննի Մոլինո) - 31, 88
 Հովհաննես Երզնկացի - 29
 Հովհաննես Կամեմացի - 96
 Հովհաննիսյան Արգար - 104
 Հովհաննիսյան Անահիտ - 207
 Հովհաննիսյան Էդգար - 231
 Հովհաննիսյան Հրաչյա - 145
 Հովհաննիսյան Ռիչարդ - 7, 186
 Հով Սիմբեն - 136
 Հոֆֆ - 170, 171
 Հուսեյն Ա - 45
 Հուտուն-Շինդլեր Ալբերտ - 67

Հուրշլեբեն Էյվին - 241

 Զանոլլի Ա. - 86
 Զանոտի Բիանկո Ռոմբերտո - 169

 Ղազարյան Ալեն - 207
 Ղազարյան - Էլիաս 204
 Ղուկաս Վանանդեցի - 39

 Դամնիողլո (Դամնյան) Հակոբ -
 58
 Դյուեերյան Երվանդ - 165

 Մագնուսոն Արթուր - 109, 110, 192
 Մագիրյան Լևոն - 123
 Մաքսոն Ստեֆան - 208
 Մաքսոն Մարկիտովա Ժաննա -
 208
 Մաքսոսյան Հրանտ - 136
 Մաքսոսյան Նորայր 205
 Մախոխյան Վարդան - 124
 Մակարս Վասկա (Մակարյան
 Բարսեղ) - 47
 Մակլեր Ֆրեդերիկ - 92
 Մանաս (Մանասե) Սեպուհ - 122
 Մանթաշյան Ալեքսանդր - 80
 Մանսուրյան Արաքս - 232
 Մանսուրյան Տիգրան - 129, 138
 Մանուկյան Անահիտ - 185
 Մանուկյան Արմեն - 18
 Մանուկյան Կարո - 185
 Մանուկյան Հայրապետ - 232
 Մանուկյան Սերովբե արքեպիսկո-
 պոս - 198
 Մասթեոս Ուեհայեցի - 22, 24
 Մատիսեն Էսկե Կ. - 129
 Մատիսեն Կառլ - 218
 Մատիսեն Օսքար - 218
 Մարգարյան Մայր - 212
 Մարգարյան Սառա - 207
 Մարթին Ֆրեդրիք - 26, 86, 92
 Մարթինոն Հարի - 118
 Մարկոսյանց Իս. - 76
 Մարշեր Հանսին - 167

Մարտիրոսյան Արտաշես - 18
Մարտիրոս Ավետիք - 47
Կարինե Մացակյան 214
Մելեկանդեկով Ավանիսկա (Մելիք-սեդեկյան Հովհաննես) - 48
Մելվիզ Ստեֆան - 235
Մեյեր Անդերսեն Վերնա - 184
Մեյեր Անդերսեն Լարս - 184
Մեյեր Բենեդիկտսեն Օգե - 148, 152, 158, 169
Մեսրոպ Մաշտոց - 17
Մետտալա (Դինգիզյան) Մաթիլդա - 227
Մերհամմար Անն Շադոթ - 201
Մերլենբերգ - 62
Միխայլով (Միրայելյան) Խաչիկ - 48
Մինասյան-Դաուն Լաուրա - 206
Մինասյան Էմիլ - 197, 202
Մինասյան Փոլ - 111, 185, 206
Միշով - 169
Միրզախանյան Մանուշ - 209
Միրզախանյան Ջոկոնդա - 198, 201
Միրզայան (Ռահսեփարի-Միրզայան) Արմեն 209, 233
Միրզոյան (Միրզոն) Հովհաննես - 80
Միրայելյան - Մերգեյ - 138
Մխիթարյաններ - 61, 70, 108, 109
Սկրտչյան Անդրեյ տե՛ս
Ջատիկյան Անուշավան
Սկրտչյան Կարո - 125
Սկրտչյան Սկրտիչ - 106
Մյուլեր Ֆրեդե - 238
Մոդոսի Էյվազ Մարգիս 77
Մովսես Դասխուրանցի - 20
Մովսես Կաղանկատավացի - 20
Մովսես Խորենացի - 33, 56, 82, 83, 108
Մովսիսյան Յուրա - 216
Մորենո Ի Լանդաբուրի Խոսե - 64
Մսերյանց Լևոն - 78
Մուրերգ - 228

Մուրերգ Օլգա - 78, 79
Մուրերգ Իզա-Լեյ Արմինե - 185, 198, 212, 213
Մուհամեդ Ալի - 65
Մուրադյան Արման - 117
Մուրադյան Գոհար 83
Մուրադյան Քիրսի - 227
Մուրատնայան Հովհաննես - 58
Մուրացան - 73
Մուրաջա դ'Օստոն Իգնատիոս - 9, 58-61, 64
Մուրաջա դ'Օստոն (Պալին) Լյուսի Կլեր - 64, 65

Յագոդա - 193
Յակոբսեն Աննա - 164
Յակոբսեն Մարիա - 130, 161-164, 166
Յակոբսոն (Նորայր) Մելնա - 70, 71, 123
Յալոյան Արտաշես - 117, 136
Յարինգ Գունար - 191, 230
Յովհաննիսեան Պետրոս - 83
Յորգենսոն Մարիա Սողե - 237, 238
Յուզբաշյան Կարեն - 22, 23
Յուլեն Յունաթան - 180
Յուհանսեն Էրիք 231
Յուհանսոն Ալմա - 157, 158, 206
Յուսուֆյան Պողոս - 66
Յուրդիայն Մագնուս Սվերդ - 219
Նազգաշյան Հայկ - 107
Նազգաշյան Գյուտ սրբազան - 198
Նաես Ռազմար - 91
Նազարբեկյան Մարո - 104
Նազարյան Տիգրան - 104, 182
Նալբանդյան (Քոլլին) Ինգա - 115, 127-129, 134, 170
Նալբանդյան Մարտիրոս - 127
Նալբանդյան Սվեն - 129
Նանսեն Էյզգիլ - 240
Նանսեն Ֆրիտյոֆ - 10, 18, 138, 147, 170, 240

Նապոլեոն Բոնապարտ - 65
Նար-Դոս - 110
Նեդրեսո Թուրքորգ - 136
Նելսոն Ռոնալդ - 232
Ներսես Շնորհալի 108, 109
Ներսիսոն Սեֆիր տե՛ս Վասիլ Մաֆար
Նիքերգ Հենրիկ Սամուել - 82, 85
Նիլսոն Արեվուս - 91
Նիլսոն Իրմա - 136
Նիկանդեր Կառլ Ավգուստ - 108
Նիկոլ Օդեթ - 220
Նիքուլասդորֆ Բեթի - 221
Նյուտոն Իսահակ - 58
Նորել - 79, 80
Նորատունկյան Գաբրիել - 169, 170
Նորդենսթամ Ալան - 230
Օբյերնսբերգ-Նորդսթրյոմ Մարիա - 170, 173-175
Օահ Աբբաս Ա - 34
Օահազիզ Սմբատ - 126
Օահրազյան Հմայակ - 212
Օահրոյան Հենրիկ - 205
Օահնազարյան Հենրիկ - 204
Օահումյան Ստեփան - 114, 144
Օամպոլյոն Ժան-Ֆրանսուա - 66, 67
Օանթ Լևոն - 113
Օապուի Բագրատունի 23
Օարպանտիե Կառլ Հելլեն Ռոբերտ Թուսենտ 82, 86
Օաֆալիցկի Օլգա - 160
Օեհրիմանյան Ջաքար - 36
Օերիջյան - 192
Օբյեդ (Ենիկոնջյան) Լուիզա - 215
Օիլթ Յորան - 229
Օիոֆինգ Մաթսոն - 97
Օիրինյան Աշոտ - 212
Օիրինյան Մարիաննա - 216
Օիրոյան Աշոտ - 211

Օիրվանգադե Ալեքսանդր - 73, 74, 110, 132, 145
Օյոեր դե Վալդիայն (Թորգոն) Ռայնիլդ - 213
Օյոնբերգ Ս. - 232
Օվինցիցկա Էլժբետա - 56, 88
Օուսկի Օգյուստ - 26, 27
Օուսեց Ռոզաննա - 117, 185, 202
Օուշանյան Վազգեն - 135

Ռականյան Վ. - 37
Ռականյան Փոլ - 216

Չարենց Եղիշե - 111, 200, 203
Չերեկով Մատվեյ - 48
Չենբերլեն Օքսոլդ Վանդա - 155
Չիչերին - 129
Չիֆթե-Մարաֆ Օննիկ - 113
Չմշկյան Մարիա - 223
Չմշկյան Սաթենիկ - 206
Չմշկյան Վարդան 223, 242
Չոլախյան Հիպիթիկ - 143
Չոլաքյան Հակոբ - 162
Չոպանյան Արշակ - 85, 110, 133, 193

Պաժի Կլեր - 59
Պալին Նիլս Գուստավ - 64
Պասայան Անդրանիկ 239
Պասայան Հովհաննես - 139
Պաստակյան Վարդան - 93
Պատկանյան Քերովրե 90
Պարոնյան Հակոբ - 110
Պաուլսոն (Պողոսյան) - 44
Պեյլեկճյան - 188
Պետրոս Մեծ - 44-47, 83
Պետրոսյան Արշակ - 205
Պետրով Ջախարկա (Պետրոսյան Ջաքար) - 48
Պետրով Ռակել (Պետրոսյան Առաքել) - 48
Պինոն Ռեմե - 165
Պիրլինկ - 190

Պոլովոյ Ն. Յա. - 21
 Պողոս Արո - 209
 Պողոսյան Կամո - 212
 Պոյաճյան Ջապել - 125

Ջահանգիր Ռուբեն - 212
 Ջահանգիր Քարինա - 212
 Ջահուկյան Գևորգ - 15
 Ջանյան Երվանդ - 218
 Ջեհանյանց Աբրահամ - 76, 77
 Ջուլենյան - 63
 Ջրբաշյան Աշխեն - 235

Ռազին Ստեփան - 37
 Ռամադանսկի Ստեփան (Մովսիսյան Ըռամադանենց Ստեփան) - 36
 Ռաշիդ աղ Դին - 63
 Ռասկ Ռասմուս - 83, 84
 Ռավենս Էրլինգ - 89
 Ռենտոլա Կիմոն - 194
 Ռիսկի Էսկո - 223
 Ռից Յուհաննես Էռնստ - 84
 Ռիփա Հանս-Իռահիմ - 232
 Ռմբադատ - 24, 25
 Ռոքշիլդ - 80
 Ռոմանուս Ա Լակարենոս - 23
 Ռոմիլիդ Էլիզաբեթ - 215
 Ռոսվալ Յուհան - 181
 Ռուդոլֆ - 27
 Ռունբլոմ Հարալդ - 4
 Մագակով Յարաչկա (Սահակյան Ծառա) - 48
 Մադոյան Էդուարդ - 138
 Մահակյան Յուրի - 112, 206
 Մանդան Լիլիուս Իրմելին - 145
 Մանտեր Ինգման - 142
 Մասունի Կարո - 195
 Մավելով Ավետ - 49
 Մատինա - 213
 Մարգարյան Ազատ - 125
 Մարգարյան Ջուրաբ - 76
 Մարգարյան Մանուկ - 204
 Մարյան Մարալ - 212

Մարյան Մարտիրոս - 124
 Մարոյան Վիլյամ - 91, 140, 243
 Մարվե Վիլիելմ - 79, 103
 Մարրե Ֆ. - 86
 Մաֆրաստյան Արշակ - 166
 Մեղերգրին Բեթ Սվենդ - 161
 Մելիմ - 60
 Մեմյոնով Բարունկո - 48
 Մեմյոնով Ավանիսկա (Սիմոնյան Հովհաննես) - 48
 Մեյրանյան Լուսինե - 117
 Մետայլա Էմիլ Նեստոր - 15
 Մերգել (Մարգարյան) Մավկա - 48
 Մերզով Հակոբ - 47
 Մերվեթ - 166
 Մթենսեթ Դագֆին - 241
 Միգուգորդ Իենա - 130
 Միմեոն Լեհացի - 95
 Միմեոն Մետաֆրաստես - 84
 Մրրեյթ Թիմ - 241
 Մթրինդերգ Ավգուստ - 114, 117
 Մթրյոմբերգ Մարգարետա - 234
 Մթրյոմբերգ Ուլֆ - 234
 Մթուրլուսոն Սնորրի - 13, 139
 Միրելիուս Յան - 227, 243
 Միգիզմունդ - 95, 96
 Միգուգորդ Իենա - 130
 Միմոնյան Աննա - 215
 Միմոնյան Կարեն - 111
 Միմոնյան Հարություն - 125
 Միմոնյան Միրան - 163
 Միմոնյանց Նիկողայոս - 47
 Միմոնով Ռուբեն - 105
 Մինարյան Արմինե - 212
 Մինարյան Գասպար - 201
 Միտալ Կարապետ - 193
 Միտնիկով - 242
 Միրաս Հմայակ - 145
 Միրաքյան Նվարդ - 115
 Միք Ինգեբորգ Մարիա - 82, 161
 Մյոդերբերգ - 169
 Մյոդերսբերգ Էլիզաբեթ - 231
 Մյունդվալ Էլին Աննա Շառլոտա - 78, 167

Մյուրմեյան Լեոն-Ջավեն - 117
 Մուլբերգ Թոր - 216
 Մոյլանդ - 217
 Մորենսեն Մագդա - 164
 Մվանբերգ Ինգվար - 4
 Մվանսբրյոմ Գունար - 230
 Մվենն Վեդե - 91
 Մվեննիկո Կառլ Էդոն - 110, 111
 Մվեննիկո Ռայնհիլդ - 111
 Մվերքման Էվերթ - 190
 Մտալին - 119, 193
 Մտենֆլո - 230
 Մտեպանով Պավել (Պողոս Մտեփանյան) - 48
 Մտեփանյան Լիլիթ - 146
 Մտեփանյան Մարիան - 232
 Մտեփանոս Օրբելյան - 23
 Մուրոտյան Լյուդմիլա - 203
 Մուլեյման - 41
 Մունչբերկով Մատվեյ - 48
 Մուջուբջու Մուլեյման տես Արամյան Հայկ
 Մուրենյան Կարպիս - 130, 138, 154, 184
 Մփարե Աբսել - 57
 Մփիեգելթալ Ֆ. Վ. - 92
 Մրյուրի Յոն - 164
 Մրոգեսթալ Թորմոդ - 137
 Մրոգեսթալ Թորմոդ - 137

Վալենբերգ Գուստավ Օսթար - 179
 Վալենբերգ Բենյուր - 168, 173
 Վալենիուս Իվար Ուլրիք - 84
 Վալյո Փեր - 114
 Վան Գրովեստիմի Լուվիսա Սիդոնիա Սիրտենմա - 62
 Վանդել Կառլ Էլիս - 169
 Վասիլ Բ Բուլղարասպան - 20
 Վասիլ (Բարսեղյան-Ներսիսյան) Մարտին - 44, 45, 47
 Վասիլ Մինասկա (Մինաս) - 44
 Վարանդյան Միքայել - 174, 175, 176

Վարդանյան Մարինե - 122
 Վարդանյան Ռոզա - 122
 Վարդանյան Սոնիա - 194
 Վարդանյան Վահան - 122
 Վարդանյան Օհան (Վահան) - 233
 Վարդանով (Վարդանյան, Վեթերսոն) Անուշ - 44
 Վարտիո Մարիա Լիզա - 145
 Վաքսբրյոմ Յոն - 180
 Վեդին-Ռոսսբրյոն Ռուր - 191
 Վեսթենենթ - 171
 Վերմիշ Լեքսանդր - 141
 Վերներ Ն. - 152
 Վերֆել Ֆրանց - 159
 Վիգերյուստ Վեգարդ - 136
 Վիդեգրեն Յեո - 85
 Վինդ Էլզա - 155, 164
 Վինդ Քիրսթեն - 155, 163, 164
 Վիր Փեր - 211
 Վիքսանդեր Սթիգ - 12, 13, 82, 85
 Վլադիմիր Սվյատոսլավիչ - 20
 Վլադիսլավ - 95

Տալկվիստ Յառլ Ուոլֆ - 145
 Տամատեան (Պառեո, Բառեթ) - 188
 Տավեռնիե Ժան-Բատիստ - 34, 53
 Տարասով Նիկոլայ (Թորոսյան Նիկողայոս) - 47
 Տարասով Ջարեչկա (Թորոսյան Սիրգաբեկ) - 47
 Տեր-Ասատրյան Մարգար (Տեր-Ասատրով Մարգարա) - 75, 76, 77
 Տեր-Աստվածատրյանց Հայկ - 32
 Տեր-Հակոբյան - 80
 Տեր-Հակոբյան Պիլեո - 4, 8, 9, 203
 Տեր-Հովհանյանց Հարություն - 32
 Տեր-Մարտիրոսյան Հովհ. - 134
 Տեր-Մարտիրոսյանց Ս. - 80
 Տեր-Մինասյան Անահիտ - 157
 Տեր-Սկրոտյան Գալուստ - 103
 Տեր-Յովհաննիսեանց Ն. - 133

Տեր-Սահակեան Ստեփան - 96
Տերյան Վահան - 104, 126, 135,
144, 243
Տիդեն Նիկողայ - 214
Տոպեյիուս Ջ. - 142
Տուավինեն Մարտին - 243
Տուրիլ - 23
Տումնիասյու Սինի - 146

Յելսի (Յելսիուս) Ուլոֆ - 83, 108

Ուեսթ - Միքայել - 238, 239
Ուեսթ Մոնա - 238, 239
Ուինթեր Ք. - 161
Ուսպենսկի Ֆ. Բ. - 28

Փաուլսեն Մայրեն - 234
Փափազյան Պերճուհի տե՛ս
Նիքոլաստրոփի Բեթի
Փափազյան Էրիք - 218
Փափազյան Կասպարի Էյնար -
218
Փափազյան - Վահան 165
Փափազյան - Վահրամ
(դերասան) - 105, 136, 144
Փափազյան Վահրամ (մարզիկ) -
106, 150
Փափազյան Վրթանես - 142
Փասսքեն Օլոֆ - 164
Փանոսյան Հ. - 231
Փեդերսեն Հոլգեր - 82, 89
Փեդերսեն Աննա-Քարարինա -
239
Փեդերսեն Փեր Դանգար - 239
Փեդերսեն Քարեն Մարիա - 164,
165
Փեթերսեն Մարին - 184
Փեթերսոն Հերբերթ - 85, 169
Փերսոն Փեր - 78
Փերսոն Յորան - 185
Փիլարտոս Վարաժնունի - 24
Փիլիկյան Հովհաննես - 140
Փիլիպոսյան Հասմիկ - 235
Փիրանյան Մ. - 79

Փիրգատն Դափանցի - 30, 95
Փրավից Յալմար - 175
Փֆայֆեր Քլարա - 167

Քալայան Ավետիս - 207
Քայգեր Ռայնհարդթ - 131
Քանաբանյան Արմինե - 122
Քարինյան Ժորժ - 185
Քեթեջյան Նիքրաս - 212
Քելեկյան Տիգրան - 92
Քեշիշ Դերենիկ - 210
Քեշիշյան Բյուզանդ - 208
Քիլդիսի Յ. Յ. - 156
Քլասոն - 194
Քլեմինգ Գուստավ Էդվարդ - 84
Քյոնիգսոն Լարս - 230
Քյուրտյան Հարություն - 32, 33
Քյուրբյան - Բյուզանդ 194
Քոջյան Վարուժան - 208
Քոսայան Նուրսեն - 196
Քոսայան Վրեժ - 185, 196
Քորմար Սարգարեր - 28
Քորսեներ Էրիք - 230
Քվիսիլինգ - 138
Քրաֆթ-Բոնար Պ. - 183
Քրիսթենսեն Ա. - 89
Քրիսթենսեն Ինգեր - 160
Քրիսթենսեն Ստեֆան - 214
Քրոուլ Եդվիգա - 214
Քուրք Ջիգրիդ - 155, 162

Օդրեն Լեո - 145
Օլենսեն Իես - 184
Օլենսեն Քարին - 184
Օլսեն Ազնեստ - 236
Օլսեն Վադիմ - 240
Օհանյան Մելիք - 140
Օհանյան Ք. - 143
Օչական Վահե - 89
Օշին - 30
Օսթերգոր Մարի - 184
Օսթրյուփ Յոհաննես - 127
Օսիանիլսոն Կառլ Գուստավ -
174, 176

Օսկանյան Վարդան - 235
Օստոն տե՛ս դ'Օստոն
Օսքարսոն Օսքար Արնի - 140
Օտյան Երվանդ - 110, 172
Օրինյալ Անթուան - 194
Օրց Ենսինե - 156, 167, 184
Օրսենսփերնա Բենգթ Բենգթսոն -
97
Օրերբերգ Շիրինյան Մարթա - 212
Օրերման Սարգսյան Կարինե -
112, 206
Օրերման Քրիստեր - 206
Օրվիսթ Քրիստեր - 233

Ֆարրիցիուս Լյուդվիգ - 40, 41, 43,
45, 50, 56, 82
Ֆագերգրեն Կոնրադ - 67
Ֆարմանյան Ֆելիքս - 117
Ֆելսոներ Մ. Վ. - 32
Ֆիննրոգադոթթիեր Վիգդիս - 140
Ֆիշեր Հանս - 152
Ֆիշեր Ալեքսանդր - 216
Ֆիշեր - 169
Ֆլեմինգ Բյորն Յուսսի - 218
Ֆյել Յորա - 193, 194
Ֆոն Բրինքման - 62
Ֆոն դեր Լիպպե Ֆրից - 137
Ֆոն Համմեր-Փուրգսթալ Յ. - 63
Ֆոն Հեյդենսթամ Կառլ Պետեր -
102
Ֆոն Ուեդել-Յարլսթարգ Թորա Ա.
- 165
Ֆրեդերիկ Կազիմիր - 51

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

- Ադանա - 196
Ադրբեջան - 121, 186, 241
Ադրիանապոլիս - 24
Աթենք - 184, 239
Ալեքսանդրապոլ (Ալեքսոլ) - 76, 78, 142, 145, 166
Ալեքսանդրիա - 65, 66, 100
Ալլենշթայն - 191
Ադվանք - 20, 21
ԱՄՆ - 60, 145, 156, 189, 197, 204, 207, 208, 210, 213, 216, 221, 227, 243
Ամստերդամ - 31, 38, 39, 63, 66, 93
Այսրկովկաս - 20, 21, 73, 74, 77, 78, 90, 111, 241
Անատոլիա - 119
Անգլիա (Ինկլեզաց երկիր) - 17, 30, 35, 67, 140
Անթիլիաս - 183, - 202
Անձիա - 24
Անտարկտիդա - 205
Անտարկտիկա - 205
Անտիոք - 24
Աշխաբադ - 77
Աշոցք - 232
Ապահունիք - 24
Առաջավոր Ասիա - 14
Առանձակ Ուտիք - 14, 21
Ասիա - 25, 60, 111, 119, 173
Աստրախան - 38, 44, 46, 96
Ավատրիա - 62, 211
Ավատրո-Հունգարիա - 177
Արարատ - 4, 20, 78, 79, 97, 102, 112, 120, 145, 196, 198-200, 210, 234, 236
Արարս - 11, 128, 232
Արթիկ - 232
Արխանգելսկ - 37, 39, 40, 41, 44, 45
Արկտիկա - 216, 205
- Արմավիր - 209
Արջհովիտ - 23
Արցախ - 21, 78, 87, 200
Արփաշայ - 145
Աֆրիկա - 173
- Բաբելոն - 97
Բագարան - 26
Բագել - 74
Բաբունի - 79, 153
Բալթիկա - 18, 28
Բաղդադ - 97, 172
Բանգլադեշ - 215
Բանգկոկ - 215
Բասեն - 23
Բարու - 76, 77, 80, 103, 114, 116, 133, 142, 188, 193, 206, 216
Բելառուս - 205
Բելյոսք - 107, 121, 161, 163, 203, 210, 221
Բեշ-Չինար - 157
Բեռլին - 62, 64, 124, 125, 179
Բերգեն - 138, 216, 220
Բիրլուս - 163
Բիթլիս - 166
Բիրքի - 26
Բլեքինգե - 18
Բյակերվե - 215
Բոռնհոլմ - 124
Բոսթոն - 76, 156
Բորովյանսկ - 205
Բրյուսել - 66, 153, 160, 174
Բուլղարիա - 75, 77, 141, 215
Բուխարա - 77
Բուդղանիա - 34
- Գաբոն - 203
Գաղղիա - 25, 188
Գդանսկ - 233
Գերմանիա - 16, 17, 25, 35, 28, 31, 39, 62, 76, 158, 173, 174, 177

- Գյոթերորգ - 72, 86, 93, 105, 112, 124, 196, 199, 203, 211
Գյումրի - 212, 237
Գրենբլի - 122
Գրենլանդիա - 28, 29, 31, 140, 216, 217, 236, 431
Գորլանդ - 39
- Դալարնա - 26
Դակիա - 16
Դամասկոս - 65
Դանիա (Դանիմարք) - 3, 9, 10, 17, 28, 30, 31, 35, 39, 50, 52, 56, 82, 83, 95, 105, 124-127, 129, 130, 149, 152, 153, 155, 151, 153, 155, 156, 159, 161-164, 170, 176, 183, 184, 188, 208, 214-216, 220, , 228, 235, 236, 236-238, 243, 244
Դանցիգ (Տանցիգ) - 39, 50, 60
Դիարբեքիր - 92, 167
Դյուսլերկ - 42
Դյուրսհոլմ - 180
Դվին - 22, 229
Դրեզդեն - 68
- Եգիպտոս - 53, 58, 65-68, 72, 97, 98, 100, 204, 207, 228
Երովպիա - 107
Ելզավա - 50
Եմիա - 16
Եվլե - 209, 234
Եվրոպա - 9, 10, 16, 18, 25, 30, 31, 33-37, 38, 41, 45, 49, 50, 52, 54, 55, 56, 59, 60, 62, 63, 70, 79, 85, 94, 101, 105, 106, 111, 113, 120, 119, 125, 144, 151, 155, 161, 167, 173, 186, 187, 199, 200, 204, 231, 242, 245
Երուսաղեմ - 94, 97, 100, 101
Երևան - 6, 47, 52, 72, 76, 78, 79, 114, 120, 122, 129, 137, 138, 145, 146, 152, 201, 202, 204, 206-209, 210, 211, 216, 222, 226, 228, 229,

- 230, 231, 232, 234-236, 238, 239, 240, 241-244
Եփրատ - 161
- Ջեյլանդ (Ջելանդիա) - 39
Չմյուռնիա - 53, 58, 71, 92, 93, 98, 101
- Էմմաուս - 156
Էջմիածին - 8, 26, 76, 78, 79, 103, 164, 229, 238, 239
Էսթիլսթունա - 209, 236
Էստոնիա - 48, 189, 223
Էրզրում - 102, 119, 165, 172
Էրնլանդ - 27, 28
- Թաիլանդ - 215
Թավրիզ - 34, 35, 38, 74, 190
Թբիլիսի տե՛ս Թիֆլիս
Թել Արմեն - 161, 182
Թել Սամեն - 161, 182
Թեհրան - 67, 202, 205
Թենսարա - 196
Թերեք - 45
Թիֆլիս - 71, 74-76, 78, 81, 113-115, 120, 129, 131, 133, 134, 142, 153, 165, 181, 190, 192, 193, 202
Թյունսբերգ - 218
Թորնդիայն - 220
Թրիալեք - 11
Թուենթե - 204
Թրոլիենեն - 200
Թրոմսյո - 5
Թրոնդելագ - 220
Թրրահայաստան - 87
Թուրքիա - 37, 50, 100, 119, 135, 151, 167, 168, 177, 179, 185, 186, 190, 196, 214, 216, 220, 236
- Ժնև - 151, 159, 175, 177, 178, 192, 224
- Իգդիր - 79
Իբերոն - 109

Ինդոնեզիա - 215
Իշկոցաց երկիր (Շորլանդիա) - 30, 31
Իռլանդիա (Իռլանտա) - 4, 26
Իսլանդիա (Իսլանդ, Իսլանտա) - 3, 4, 9, 27-29, 30, 31, 91, 138, 139, 140, 141, 216, 221, 222, 241, 242
Իսպանիա (Սպանիա) - 25, 30, 59, 62, 64, 211
Իտալիա - 24, 25, 37, 66, 88, 93, 124, 188, 213
Իրան - 15, 19, 33, 34, 39, 40, 41, 45, 46, 52, 53, 56, 61, 67, 73, 78, 85, 96, 102, 152, 167, 175, 176, 194, 195, 196, 202, 207, 209, 215, 219, 220
Իրաք - - 177, 196, 203, 207, 215
Իֆլանտ - 95

Լաբարիա - 203
Լահեյ - 63
Լայպցիգ - 113
Լապլանդիա - 107, 125
Լատվիա - 49
Լեհաստան - 35, 49, 50, 56, 95
Լեմբերգ - 56
Լեմվիա - 156
Լեյդեն - 66
Լենինական - 166
Լենինգրադ - 211, 217, 239
Լիբանան - 162, 163, 164, 184, 196, 202, 203, 219, 222
Լիդո - 124
Լիեպո (Լիեպայա) - 49-51
Լինդիգո - 207
Լինդիագեն - 169, 173, 175, 183
Լինշոփինգ - 196, 204, 205
Լիվանիա (Լիտվա) - 50
Լյուբեկ - 42, 48, 50
Լյուբերգ - 158
Լոգան - 127, 177
Լոնդոն - 66, 163, 149, 175
Լոս Անջելես - 226 -
Լվով - 56, 95

Լուգանսկ - 227
Լուլեո - 196, 205
Լուոն - 64, 84, 85, 88, 169, 180, 190, 191, 196, 203, 204, 207, 212, 227

Խարբերդ - 24, 155, 156, 162, 163, 164, 166
Խարիլատս - 157
Խարման Քյոյ - 157
Խեյմաեյ - 139
Խոփին - 96
Խորհրդային Միություն, ԽՍՀՄ - 140, 193, 217, 220, 224, 229, 230, 233, 239, 241, 243

Կահիրե - 67, 72, 100
Կանադա - 204, 210, 221
Կարելիա - 129
Կարս - 76
Կիևյան Ռուսիա - 20
Կիլիկիա, Կիլիկյան Հայաստան - 24, 30, 63, 159, 164
Կիպրոս - 10, 163
Կիրովական - 120
Կլոմի - 25
Կոկինիա - 239
Կոպենհագեն (Կոպենհագ) - 39, 50, 90, 104, 125-127, 127, 131, 150, 151, 154, 167, 169, 217, 228, 236, 237
Կոստանդնուպոլիս - 17, 19, 20, 25, 34, 57-59, 62, 64, 70, 71, 92, 93, 97, 100, 101, 102, 104, 114, 123, 126, 127, 135, 152, 157, 166, 169
Կոստրոնա - 38
Կովկաս - 19, 74, 76, 78, 83, 87, 91, 102, 145, 170, 172, 186, 193, 194, 224
Կրոպին - 51
Կուռլանդիա - 49-51

Հաագա - 62
Հալեպ - 33, 81, 159, 160, 162, 177

Հալմսթադ - 8
Համրահիլդ - 221
Հայաստան - 3, 5, 6, 8, 9, 11, 18, 19, 20, 22, 24-26, 27, 29-30, 35, 46, 53, 55, 56, 63, 68, 73-79, 83, 85-88, 90, 97, 98, 100, 103, 109-111, 118-121, 123, 128, 129, 130, 134, 138, 140, 141, 142, 145-147, 150-152, 158, 164, 166, 167, 169, 170, 171, 173, 175, 177-181, 183-186, 194, 196, 197, 200-202, 206, 208, 211, 214-219, 222-246
Հայֆա - 100
Հանագոզկա - 125
Հանովեր - 52
Հաշթարիսան - 39
Հարավսլավիա - 212
Հաֆթան - 78
Հելենելյունդ - 196
Հելսինկի, Հելսինգֆորս 50, 75, 84, 141-144, 193, 210, 225, 226, 242-244, 246
Հենսեդաու - 240
Հյուդդինգե - 196
Հյուվինկա - 225
Հնդկաստան - 37, 46, 103, 215
Հոլանդիա - 35, 38-41, 46, 50, 62, 176
Հոոն - 4, 103, 113
Հունաստան - 155-157, 167, 170, 184, 215, 237, 239

Ղարադաղ - 74
Ղարադալա - 76
Ղզըլչախչախ - 145
Ղրիմ - 52

Ճապոնիա - 216

Մագնիտոգորսկ - 120
Մադրիդ - 62, 208
Մալթա - 156
Մալմյո - 104, 180, 191, 196, 203, 227, 232

Մակեդոնիա - 166
Մանագլեբո - 24
Մասիս - 232
Մարաշ - 155
Մարսել - 70, 99, 170
Մեզրե - 156, 157, 163-167
Մեծ Բրիտանիա - 9, 11, 211
Մեմել - 62
Մերձբալթիկա - 49, 51, 52, 223
Միլան - 105
Մինեսոթա - 208
Մինսկ - 205
Միջին Ասիա - 76, 119
Միքլագորդ (Միքլիգորդուր) - 19
Մյունխեն - 86, 208
Մոլդովա - 35
Մոսկվա (Մոսկով) - 35, 36, 38-40, 44-46, 47, 48, 50, 71, 105, 111, 126, 138, 140, 190, 192, 193, 204, 226, 227, 236
Մոդա - 26
Մարդամ (Եգիպտոս) - 39
Մուշ - 155, 157, 165, 166

Յոնշոփինգ - 57, 192, 196, 234
Յուլինգ - 162
Յուվասսկյուլա - 226
Յուտլանդիա - 10

Նարվա - 41-42, 44-45
Նիագոսլայ - 39
Նիդեռլանդներ - 205
Նիդեռլանդներ - 28
Նիս - 197
Նիլդմպերկ (Նյուրմբերգ) - 54
Նյու Յորք - 6, 115, 139, 194, 216
Նովգորոդ (Նիժնի Նովգորոդ) - 39, 41, 42, 44-46, 80
Նովոռոսիյսկ - 171
Նոր Ձեյլանդիա 160
Նոր Նախիջևան - 29
Նոր Ջուրա - 34-36, 38, 41, 51, 52, 56, 82
Նորգեբինգ - 231

Նորվեգիա - 3-5, 16, 17, 27-29, 30, 31, 65, 67, 68, 82, 89, 122, 124, 125, 127, 131, 134, 136-138, 166, 170, 176, 178, 189, 208, 216-221, 235, 240, 241, 244
Նորբի - 180
Նորշվեդիա - 196

Շամախի - 38, 74, 76
Շառլոտենբուրգ - 152
Շրոթգարդ - 161
Շիսթա - 199
Շիրազ - 67
Շոբլանդիա - 31
Շվեդիա (Շրվետագ երկիր, Շվեդոց երկիր, Սվեցիա) - 3-6, 8, 9, 17, 22, 25, 26, 29, 30, 31, 35-49, 50, 52, 55-58, 62, 64, 65, 66-68, 70, 71, 76, 80, 81-83, 85, 88, 91, 94-97, 100, 101, 104-109, 111-113, 117, 118, 123-125, 147, 148, 151, 157, 168, 169, 170, 172, 173, 175, 177, 178, 179, 181, 185-191, 193, 194-213, 220, 222, 223, 227-237, 244, 245
Շվեյցարիա - 127, 165
Շուշի - 76, 79, 192

Պաղեստին - 100, 160, 177, 183
Պարսկաստան - 25, 35, 36, 44, 45, 53, 55, 74, 82, 97, 102, 151, 152, 172, 177, 195
Պարտավ (Բերդա) - 21, 22
Պեսթ - 50
Պետրոզավոդսկ - 129
Պետրոսավան - 161
Պոլտավա - 57
Պրահա - 222
Պրանտրպուրկ (Բրանդենբուրգ) - 50
Պրուսիա - 52, 62, 191
Պուատյե - 24
Ջեքսոն - 160
Ջելալօղլի - 145

Ռեյկյավիկ - 139, 140, 221, 222, 242
Ռիգա - 49, 55, 103
Ռինքերի - 196
Ռոդոսթր - 208
Ռուզոլ - 45
Ռումինիա - 77
Ռուսաստան (Ռուսիա) - 8, 9, 16, 19, 20, 25-27, 32-39, 41, 42, 44-47, 50, 52, 55, 73, 79, 80, 83, 96, 103, 108, 115, 138, 143, 145, 153, 177, 181, 188, 191, 192, 196, 208, 211, 216, 222, 235, 242, 241, 244
Ռենկ - 42

Սալմաստ - 78
Սալոնիկ (Թեսալոնիկ) - 156, 157, 184
Սանահին - 121
Սանդվիքեն - 196, 199, 200
Սանկտ Պետերբուրգ - 38, 60, 66, 138, 146, 190, 191, 205, 207, 216, 223
Սասուն - 24
Սարմատիա - 16
Սարսոնիա - 52
Սերաստիա - 127
Սիրի - 75
Սիսիան - 237
Սիրիա - 159, 160, 165, 167, 177, 182-184, 196, 203
Սիցիլիա - 23, 24
Սկալանովա (Քուշադա) - 100
Սկանդե, Սկանդիա - 16
Սկանդինավիա - 6, 9, 13, 15, 19, 25, 27, 30, 34, 36, 40, 49, 50, 52, 53, 71, 82, 123, 147, 170, 178, 185, 198-200, 235
Սմոլենսկ (Էսմոլենցկ) - 39, 50
Սյոդերբլե - 196, 198, 200, 208, 234
Սոլլենբրունա - 196, 211
Սոֆիա - 220

Սպահան - 34, 38, 41, 82
Սպիտակ - 240, 243
Ստամբուլ - 60, 61, 194, 207, 208
Ստեփանավան - 204
Ստոկհոլմ 39, 42, 43, 44, 49, 56, 57, 64, 66, 68, 71, 72, 75, 80-82, 88, 93, 101, 106, 108, 111-113, 123-125, 148, 149, 150, 155, 165, 169, 173, 175, 176, 177, 179, 181, 183, 185, 188-190, 194, 195-203, 20-211, 218, 228, 230, 231, 235
Սուեթիա (Սվեդիա) - 113
Սևան - 87, 230, 238
Սեիլիա - 62

Վաթերլո - 204
Վան - 78, 102, 120, 155, 171, 199
Վառնա - 75
Վարշավա - 96, 190, 208
Վարսիոլմ - 200
Վեդրե - 127
Վերլանդա - 233
Վենետիկ - 54, 61, 70-72, 99, 100, 108, 124, 132, 213, 222, 226
Վենեբուրգ - 57
Վերսալ - 67
Վեսերլոթլանդ - 191
Վեսերոս - 122, 196, 198, 200, 209
Վեսթմանլանդ - 196
Վերսյո - 118
Վիբորգ - 143, 223
Վիննա - 60, 62, 71, 109, 199
Վիսինգսբորգ - 97
Վիտեբսկ - 50
Վրաստան - 20, 121, 222

Տամպերե - 225
Տայր - 20
Տերիոկի - 242
Տիգրանակերտ - 20
Տուպենահ - 50
Տուրկու - 225, 227
Տուրոբերան - 24
Տրասպիգոն - 35

Ուրիքսդալ - 69
Ուկրաինա - 125, 227, 241
Ումեո - 196, 205
Ուտիք - 21
Ուրմիա - 120, 188
Ուրֆա - 158, 159, 182
Ուփլանդս Վեսթի - 198, 201
Ուփսալա - 4, 5, 6, 53, 58, 62, 64, 72, 78, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 91, 93, 98, 100, 101, 110, 117, 122, 148, 173, 180, 190, 192-201, 203, 204, 206, 207, 212, 213, 233, 234

Փարիզ - 59, 62-64, 66, 71, 140, 154, 157, 170, 175, 176, 189, 190, 192-194, 203, 207, 208, 218, 224
Փոքր Ասիա - 10, 19, 53, 98, 120, 169

Քենսերթ - 219
Քիրունա - 232
Քյորփալու - 103
Քնիվսթա - 196
Քրդստան - 87
Քրիստինեհամն - 75
Քուվեյթ - 203

Օդենս - 215, 237
Օյլանդ - 39
Օսլո - 91, 136, 137, 194, 215, 218-220, 228, 240, 241
Օսմանյան կայսրություն - 34-36, 45, 52, 53, 56, 58-61, 65, 73, 77, 78, 87, 92, 97, 102, 127, 147, 148, 151, 152, 168, 169, 171, 173, 175-177, 179, 185-187
Օվեր-Յարվա - 69
Օրենբուրգ - 75
Օրիոս - 89, 90, 162, 184, 215, 237, 238
Օփփեյիտ - 138
Օրելո - 199

Ֆառերյան կղզիներ - 236

Ֆիլադելֆիա - 60
 Ֆինլանդիա - 3, 31, 38, 91, 95, 107,
 122, 141, 143-146, 156, 188, 193,
 208, 189, 222-227, 235, 241-244
 Ֆլորիդա - 207

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Գլուխ Ա	
Շփումներ վաղ միջնադարում	8
Գլուխ Բ	
Շփումներ XVIII-XIX դարերում	
Ջուդահայ առևտուրը	32
Շվեդիայի առաջին հայ բնակիչները	56
Շվեդ քարոզիչները և հայերը	73
Գլուխ Գ	
Գրական-մշակութային առնչությունները	
Հայագիտությունը Սկանդինավիայում	82
Գրական վաղ կապերը	93
Հայերը շվեդ հեղինակների ուղեգրություններում և հակառակը	97
Այլ գրական կապեր	112
Հայկական թեման շվեդ գրականության մեջ	118
Մշակութային կապեր	122
Գլուխ Դ	
Հայկական հարցը և Սկանդինավիան	147
Գլուխ Ե	
Հայերը սկանդինավյան երկրներում	188
Գլուխ Զ	
Միջպետական հարաբերություններ	228
Ամփոփում	245
Օգտագործված գրականություն	247
Անձնանուններ	259
Տեղանուններ	273

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Հայությունը Սկանդինավյան երկրներում.

հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները
(սկզբից մինչև մեր օրերը)

ARTSVI BAKHCHINYAN

Armenians in Scandnavian Countries:

Armenian-Scandinavian Historical and Cultural Relations

(From the Beginning to Our Days)

Էջադրող՝ Գայանե Բորոխյան

Սրբագրիչ՝ Հեղինե Մուրադյան